Հայ գրականություն, Վեպ, Արձակ

13+

Մուրացան

Լուսավորության կենտրոնը

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ա

ՆՈՐԱՎԱՐՏ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ

188* թվականի հունիս ամսում Վահան Սարյանը յուր ընկերակիցների հետ միասին ստացավ թեմական դպրոցից ավարտման վկայականը: Այժմ արդեն նա ազատ մարդ էր, և եթե ինքն իրեն հավատար, մի փոքր էլ ուսումնական: Այդ երկու առավելություններով ապահովված նա մտնում էր սովորական մարդկանց աշխարհը: Ինչե՞ր պիտի պատահեին իրեն այնուհետև, ի՞նչ բախտ և ճակատագիր էր սպասում նրան՝ նա չգիտեր և դրա մասին էլ չէր մտածում, բայց թե ինչե՛ր պիտի գործեր ինքը, ահա այդ խնդիրը զբաղեցնում էր նրան:

Աշխուժոտ ու կրակով լի երիտասարդ, աշխատելու ծարավ, նեղություններից չվախեցող, հայրենակիցների սիրույն անձնվեր, նրանց հառաջադիմությանը նախանձախնդիր, նրանց վշտերին կարեկից — այդ Վահան Սարյանն էր: Նրա ականջների մեջ դեռ հնչում էին սիրելի տեսչի մեղմ ձայնով խոսած վերջին խրատները. — «Ուր որ գնաք, ուր որ լինիք, սիրելիներս, մի՝ մոռանաք, որ դուք ամենքդ հարազատ եղբայրներ եք ու զավակներ մի թույլ և ուժազուրկ ծնողի, որը նոր շունչ ու կենդանություն ստանալու համար՝ կարոտում է ձեր երիտասարդ ուժերին: Ձեզանից յուրաքանչյուրի վրա սրբազան պարտք կա յուր բարոյական աշխատանքը եթե ոչ ավելի՝ գեթ տասանորդ հանել այդ ուժասպառ ծնողի համար, որովհետև նրա կենդանությունը ձեր կյանքն է, իսկ մահը՝ ձեր կորուստը...»:

Եվ այդ երիտասարդը պատրաստ էր ամեն ինչ զոհեր յուր սիրելի մոր ուժերը կազդուրելու համար: Նա չէր խնայիլ ո՛չ յուր մարմնական աշխատությունը, ո՛չ մտավոր կարողությունը և ո՛չ սրտի կորովը: — Գործ և աշխատություն. եթե դրանք ավելի ծանր լինեին քան լեռան կողերը պատող ժայռերը, դարձյալ նա փախուստ չէր տալ դրանցից:

Բայց որտե՞ղ գտնել գործը, որտե՞ղ սկսել աշխատությունը, երիտասարդ Սարյանը մտածում էր դրա վրա:

Սկզբներում նա գրեթե միշտ յուր ընկերների հետ էր լինում: Ամառային գեղեցիկ օրերը խմբում էին նրանց միասին, երբեմն քաղաքի պարտեզներում, երբեմն կանաչ դաշտերի վրա, և շատ անգամ քաղաքից հեռու, կարկաչախոս գետակների ափին կամ հորդաբուխ աղբյուրի մոտ, ուր նրանք վառում էին «չոլի կրակը», կտրտում հոնի շամփուրները, շարում նրանց վրա պարարտ ոչխարենին սմբուկի և ոսկեխնձորի հետ. բոլորում էին սեղանը հովանավոր ծառերի տակ, ուտում, խմում և երգում էին, և ապա այդ բոլորը պսակում իրենց ոգևորված ճառերով: Եվ ինչե՛ր, ինչե՛ր չէին խոսում նրանք, ի՛նչ հույսեր, ի՛նչ ակնկալություններ չէին ոգևորում նրանց... Երջանի՛կ

հասակ, երջանի՜կ ժամանակ, որ ապրում է վարդագույն հույսերով անծանոթ աշխարհի վշտերին...

Ընկերական կյանքը, հարկավ, դատարկ չէր անցնում նորավարտների համար: Նրանք լրջորեն մտածում էին նաև գործի վրա: «Այստեղ, մեր հայրենի քաղաքում ևս հասարակական շահերը պետք ունին մեր խնամքին, — ասում էին նրանք. — նվիրվենք այդ շահերին, ինչպես և որքան կարող ենք: Մեր առաջ դրված է մի ազգային դպրոց, ուր մեր ապագա հասարակությունն է կրթվում և այդ դպրոցն օրինավոր եկամուտ չունի: Մեր առաջ կանգնած է ազգային եկեղեցին, մեր կենդանության հույսն ու ապավենը, որ մեր ցանկացած պաշտոնյաները չունեն: Մեր առաջ ապրում է մի ժողովուրդ, որ տգիտության ու նախապաշարմունքների գերին է դարձած և նա դրանցից ազատվելու կարիքը չէ զգում միով բանիվ, ուր որ նայում ես, «հունձք բազում են և մշակք սակավ»: Դառնանք անձնվեր մշակներ այդ ժողովրդի համար. գործենք նրա մեջ. ջերմացնենք նրա սիրտը դեպի յուր դպրոցը, սովորեցնենք նրան պաշտպանել յուր փրկության այդ զինարանը, օգնենք նրան հաստատել յուր եկեղեցում արժանավոր պաշտոնյաներ, որոնք կարող լինին զարգացնել ժողովրդի մեջ գերագույն առաքինություններ, հիմնենք կիրակնօրյա լսարան և դասախոսություններ կարդանք այդտեղ, շինենք թատրոնական բեմ և ներկայացումներ տանք, այսպիսով մենք աստիճանաբար կմեղմենք ժողովրդի տգիտությունը, կցրենք նրա նախապաշարմունքները և նոր սերնդի հառաջադիմության համար ճանապարհը հարթենք... Սրանք այնպիսի գործեր են, որոնց որտեղ և սկսելու լինինք, միշտ բարի արդյունք կտան, և, իհարկե, ավելի լավ է սկսել մեր հայրենի քաղաքում...

Այս և սրա նման շատ բաների վրա էին նրանք խոսում, դատում, վիճում, ծրագիրներ խմբագրում: Բայց երբ գործ սկսելու ժամանակը հասավ, և նրանք իրենց աշխատությունները փորձեցին, այդ ժամանակ միայն երևան եկավ մի նոր, անծանոթ և իրենց կողմից չնախատեսված արգելք, որ նրանց բոլոր աշխատությունները, ծրագիրները, ընդնմին և նրանց հույսերը ցնդեցին օդի մեջ:

Այդ մեծ արգելքը նրանց անփորձությունն էր:

Բայց թերևս դուք կամենաք լսել մի քանի բան այդ նորավարտների կատարած գործերից. ես կպատմեմ:

Երևակայեցեք ձեզ մի խումբ, մոտ տասնհինգ հոգուց բաղկացած երիտասարդներ, որոնք երբեմն միասին, երբեմն երկու խմբի բաժանված՝ մտնում են «Հայոց շուկան»:

Ետ ընկած գավառական քաղաք, նոր լուրերի կարոտ, հարկավ, տեսնողները հետաքրքրվում և իրար հարցնում են, թե ո՞ւր է շտապում այդ խումբը: Բայց մեր հերոսները որոշել են ամեն պատահողին իրեն միտքը չհայտնել, հետև այդ կարող է խանգարել իրենց գազանի նպատակը, որ էր՝ հայոց դպրոցի հոգաբարձության համար պատրաստել մի սյուրպրիզ. և սյուրպրիզը պետք է լիներ 3—4 հազարից բաղկացած մի գումար, որը նրանք կամենում էին հավաքել վաճառական հայերից դպրոցի օգտին: Եվ ահա՝ կանխավ որոշված պայմանի համաձայն, խումբի անդամները բաժանվում են զանազան կողմեր և նրանցից յուրաքանչյուրը մտնում է մի առևտրականի խանութ:

Հեշտ է երևակայել, թե ի՞նչ ճառեր էին խոսում մեր **առաքյալները** հայոց շուկայում: Նրանցից յուրաքանչյուրին պատիվ ունի լսելու հազիվ «գրի սևն ու սպիտակը ջոկող» մի խանութպան և ի՞նչ նորություններ չէ լսում:

Իհարկե, նրան դեռ անհայտ է այցելուի բուն նպատակը, որ է՝ համաձայն խմբի որոշման՝ ջերմացնել յուր սիրտը դեպի դպրոցը և մի օժանդակություն ստանալ

իրենից: Բայց որքան մեծ էր լինում մեր առաքյալների զարմանքը, երբ նրանք տեսնում էին, թե իրենց ճառերը բնավ չէին ջերմացնում խանութպանների ո՛չ սիրտը և ո՛չ հոգին, այլ միայն շարժում էին ոմանց ծիծաղը, ոմանց անօգուտ հետաքրքրությունը, իսկ շատերի զայրույթն ու դժգոհությունը:

Այսպես, օրինակ, մինը յուր այցելուին համբերությամբ լսելուց հետո գլուխը շարժում և ասում էր. «Շատ լավ ես ասում, որդի. դպրոցին որ օգնենք, լավ կլինի, բայց փող ո՞վ ունի, դու գտիր՝ ես առնեմ տամ»:

Մի երկրորդը թե՝ «քեզ շատ պատվեցի, որ մինչև վերջը լսեցի, թե չէ շատ խոսող ու ապրանք չառնող մարդկանց մենք դուրս ենք անում»:

Մի երրորդը շատ հավանելով ճառախոսի առաջարկությունը, մեծ **մյուննաթով** մեկ ռուբլի է ստորագրում: Նրա հարևանը յուր եռանդն արդեն քառապատկելով 25 կոպեկ է նվիրում: Մի ուրիշը շատ մեծ գաղտնիք նշմարելով յուր հետ խոսակցողի առաջարկության մեջ, հետաքրքրվում է իմանալ, թե ո՞վ է ղրկել նրան յուր մոտ, արդյոք սրբազա՞նը, տեսո՞ւչը, հոգաբարձունե՞րը, թե՞ ավագ եկեղեցու երեցփոխը: Եվ երբ տեսնում է թե ո՛չ մեկն է և ո՛չ մյուսը, խստությամբ նկատում է. «Այդպես բաների խառնվիլը քեզ չի վայելիլ, որդի, փող ուզելը խաչագողի ու բոշայի գործ է. գնա՛ տանդ նստիր. գիրք կարդա, խելք սովորի, «բազար» մտնելը ի՞նչ քո գործն է...»:

Այս և սրա նման պատասխաններ ստանալով մեր առաքյալները դուրս են գալիս շուկայից գլխակոր: Այնուհետև դուք կարող եք պատկերացնել ձեր առաջ նրանց հանդիպումը: Ձեռնունայն, հոգվով չափ վիրավորված նրանք հավաքվում են ժամադիր տեղին, և պատմում միմյանց իրենց առաքելության հետևանքները:

Հերոսներից նրանք, որոնք փոքրիշատե խելոք էին, ծիծաղում էին գործի ծաղրալի հետևանքի վրա, իսկ մյուսները, որոնց մեջ և Վահան Սարյանը՝ բարկությունից ու զայրույթից կատաղում էին: Վերջինս, մանավանդ, չէր կարողանում հասկանալ, թե ինչպես այդ՝ մարդու պատկեր ու հոդի կրող արարածներն անտարբերությամբ էին նայում իրենց վրա, չէին գրավվում, չէին հուզվում իրենց խոսքերով, իրենց սրտաշարժ ճառերով, մինչդեռ իրենք, քիչ էր մնում, որ նույնիսկ այդ ճառերն արտասանելիս արտասվեին...

Բայց, որովհետև նրանք երդվել էին ոչ մի արգելքից չվախենալ և ոչ էլ երբեք վհատվել, ուստի առանց երկար ու բարակ մտածելու որոշում են այժմ էլ տները ման գալ և ընտանիքներում քարոզել:

Տներում, արդարև, լավ էին ընդունում մեր առաքյալներին. քաղաքավարի էին խոսում նրանց հետ, և շատ տեղ էլ մինչև անգամ թեյ, սուրճ կամ նախաճաշ էին հրամեցնում: Բայց նյութական օժանդակության գալով, բոլորն էլ միատեսակ մերժում էին: Միայն մի հարուստ այրի, որ իսկապես չէր ըմբռնել իրեն ներկայացող առաքյալի առաջարկության միտքը, երեք ռուբլի էր նվիրել նրան խստիվ պատվիրելով, որ այդ փողով միրգ կամ խաղալիք չառնե, այլ գրքեր գնե և կարդա:

Սրանով էլ պսակվել էր մեր գործողների առաքելության վախճանը:

Այսուամենայնիվ, առաջին ձեռնարկության անհաջողություն չէր վհատեցնում մեր գործողներին, նրանց ապագա գործունեության ծրագիրը բավական ընդարձակ էր: Եվ ահա դպրոցի ապահովության գործն առժամանակ թողնելով՝ նրանք որոշում են իրենց ուշադրությունը դարձնել եկեղեցիների բարեկարգության վրա: Գործը կանոնավոր ճանապարհով սկսելու համար նրանք բաժանվում են չորս խմբակների, որոնցից յուրաքանչյուրը պարտավորվում է ամբողջ մի շաբաթ, առավոտ և երեկո, հաճախել

քաղաքի մի եկեղեցին, և այդտեղի պաշտոնյաների կողմից կատարված ամեն մի անկարգություն և օրինազանցություն գրի առնելով՝ շաբաթվա վերջին ներկայացնել ընկերական Ժողովին:

Այդպես էլ անում են: Ժողովի ժամանակ կարդացվում են բավական հետաքրքիր տեղեկություններ քաղաքի չորս եկեղեցիներում կատարված զանազան զանցառությունների և նշանավոր ու աննշան անկարգությունների մասին:

Որոշվում է գործել:

Հետևյալ օրը, որ կիրակի է, մեր գործողները դարձյալ չորս խմբակի բաժանված գտնվում են քաղաքի չորս եկեղեցիներում: Նրանցից յուրաքանչյուրի պարտավորությունն է: ժամերգությունը վերջանալուց ետ աղմուկ հանել, ժամավորները գլխներին հավաքել և տեղի ունեցած զանցառությունների և անկարգությունների մասին բարձրաձայն խոսելով ու զանցառության հեղինակներին պախարակելով, կարգը վերականգնելու համար միջոցներ առաջարկել:

Գործողների նպատակն է ժամավորների մեջ գրգռել նախանձախնդրություն դեպի եկեղեցվո բարեկարգությունը ու պայծառությունը, իսկ պաշտոնյաներին ստիպել արի ու զգաստ լինել իրենց պաշտոնին և հավատարիմ իրենց սրբազան կոչման:

Մի՞թե հարկավոր է ասել, որ հենց առաջին փորձի ժամանակ մեր հերոսները անհաջողության հանդիպեցան: Խմբակներից մինը, որ մայր եկեղեցումն էր յուր քաջագործությունն սկսել, բացի ժամավորներից նախատինք կրելուց, քահանաներից էլ հայհոյվել էր: Երկրորդ խմբակը, որի մեջ էր մեր վեպի ապագա հերոս պ. Սարյանը, քիչ էր մնացել, որ տիրացուներից ու ժամհարներից ծեծվեր: Երրորդ խմբակը մեծ աղմուկ ու շփոթ հանելուն համար մատնվել էր ոստիկանության. իսկ չորրորդ խմբակի անդամները, որոնց հաջողվել էր արհեստավորների մի խումբ քարշ տալ իրենց հետևից մինչև քաղաքի հրապարակը, հայտնի չէ, թե նրան ի՞նչ դաս խոսելու համար, լսելով երրորդ խմբակի գլխին հասած չարիքը, փախել թաքնվել էին իրենց տներում:

Մի երկու օրից ետ, երբ մեր երիտասարդ գործողները հավաքվեցան իրենց ժողովատեղին և քննեցին իրենց գործունեության հաշիվը, տեսան, որ հետևանքը ոչ միայն անօգուտ, այլև ցավալի է եղած:

— Պարոններ, այդպես գործել չի լինիլ,— բացականչեց ընկերներից մինը մենք միայն աղմուկ ու շփոթ ենք հանում: Սկսենք այնպիսի գործ, որը թե՝ օգուտ կարողանա բերել և թե՝ մտքեր չգրգռե:

Առաջարկված խորհուրդը բանավոր էր: Բայց ի՞նչ գործ պետք է սկսեն, այդ հարցի վրա խումբը սկսեց լրջորեն մտածել: Ապա եկավ այն եզրակացության, որ ամենից օգտավետը կլինի հիմնել կիրակնօրյա լսարան, ուր հասակավոր հայերին հավաքելով, հերթով դաս կխոսեին նրանց մի օր հայոց լեզվից, մյուս օր ազգային պատմությունից, մի ուրիշ օր բարոյագիտությունից և այլն: Այս ճանապարհով նրանք կարող կլինեին պատրաստել ժողովուրդն այնքան, որ որոշ ճշմարտությունները նա կարողանար ճանաչել և պաշտպանել:

«Գեղեցիկ, հրաշալի...»,— բացականչեցին ամեն կողմից երիտասարդ գործողները և սկսան դասախոսության ծրագիրը կազմել:

Մի շաբաթից ետ ամեն բան պատրաստ էր: Ընկերներից մինը յուր տան դահլիճն է տվել, մյուսը նստարաններն էր հոգացել, երրորդը մի ուրիշ կարիքը, իսկ մնացյալները դասախոսելով ժամանակն ու առարկաներն էին բաժանել իրենց մեջ: Առաջին կիրակի լսարանի դահլիճում բավական ունկնդիրներ կային, որովհետև խմբի անդամներից

յուրաքանչյուրը հավաքել էր այդտեղ յուր հարևաններին: Այդ օրը մեր գործողները մի-մի դաս խոսեցին կրոնից, հայոց լեզվից և պատմությունից և ապա հավատալով, որ մեծ տպավորություն թողեցին լսողների վրա, ցրվեցան:

Երկրորդ կիրակի միայն մի քանի հոգի ներս մտան լսարան և, ավա՜ղ, դրանք էլ կարծես իրենց բերած նորություններով մեր գործողներին վշտացնելու համար:— Քաղաքում խոսում են թե՝ դուք լութերականություն եք քարոզում,— ասացին նրանք դասախոսներին.— այդ պատճառով ոչ ոք չէ կամենում մտնել այստեղ, իսկ արհեստավորները պատրաստվում են խմբով դալ և ձեր լսարանը ցրվեր:

Մի՞թե հարկավոր էր սպասել, որ այդ անպատվությունը մարմին առնե. մեր գործողները անմիջապես լսարանը փակեցին:

Այսուամենայնիվ, նրանք դարձյալ չվհատեցան. գործերի անհաջողությունը չսառեցրեց նրանց եռանդը և ոչ էլ սրտերի կորովը թուլացրեց: Նրանք դարձյալ ժողովում էին միասին, խոսում, դատում ու խորհում էին թե ուրիշ ի՞նչ օգտավետ բան կարող են անել:

Եվ ահա՛, դարձյալ մի գեղեցիկ միտք հղացավ.— «Օգտավետը և զվարճալին միացնել»: Երիտասարդները որոշեցին թատրոնական ներկայացում տալ թեմական դպրոցների օգտին: Այս միտքը հիացրեց նրանց և գործելու նոր եռանդ ու ոգևորություն ներշնչեց:

Որոշեցին խաղալ «Վարդան Մամիկոնյան» և անմիջապես դերերը բաժանեցին իրենց մեջ: Մի քանի օրվա մեջ գործողներից յուրաքանչյուրը յուր դերը այնպես գիտեր, ինչպես «Հայր մերը»: Թատրոնի համար հարմարեցրին իրենց լսարանի դահլիճը. իսկ հին դյուցազունների հագուստները, սաղավարտները, զենքերը, զրահները, դրոշակներն և այլն պատրաստում էին իրենք: Բայց ի՜նչ եռանդով ու աշխատասիրությամբ... էլ ո՞րի աչքն էր հաց ու ջուր գալիս, ո՞վ էր ճաշի և ընթրիքի վրա մտածում: Աշխատության ժամանակ մի կտոր հաց ու պանիր ուտելով քաղցերնին անց էին կացնում ու իսկույն գործեք սկսում:

Ցանկալի օրը մոտենում էր. ամեն ինչ պատրաստ էր, միայն տոմսակներից շատ քիչ էր վաճառված: Չնայելով որ իրենք խաղացողները շատ աշխատեցին դրա մասին, խանութները ման եկան, տներն այցելեցին, ամեն տեղ և ամենքին պատմեցին, բացատրեցին, որ ներկայացումը թեմական դպրոցի օգտին է, որ նա շքեղ ու փառավոր պիտի լինի, որ ներկայացման ժամանակ զինվորական երաժշտություն պիտի նվագե և այլն, այլն, այնուամենայնիվ նրանց աշխատանքն ապարդյուն անցավ, շատ Հարգեցին հարգերին նրանց խնդիրը, այն էլ գլխավորապես աղքատ ու անկարող մարդիկ, իսկ հարուստ դասակարգը ոչ միայն ոչնչով չօգնեց, այլև «աֆարմասան» ծաղրական անունով մկրտեց նրանց:

Երիտասարդները համբերությամբ տանում էին այս բոլոր տհաստությունները՝ հույսերը դրած ներկայացման երեկոյի վրա:

«Երբ երաժշտությունը նվագե, ժողովուրդը կհավաքվի, — սիրտ էին տալիս միմյանց: Ներկայացման երեկոն հասավ, երաժշտությունը սկսեց նվագել և յուր որոտալիք աղմուկով գավառական քաղաքի խաղաղանիստ թաղը թնդացնել: Տան բակը հետզհետե ժողովրդով լցվեցավ. մի վայրկյան մեր թատերասերները սկսեցին ուրախանալ, կարծելով թե ներս խռնվողները տոմսակ գնողներ են. վերին դստիկոնից նրանք հետաքրքրությամբ և սրտատրոփ դիտում էին մտնողներին, բայց ոչ ոք բակից չէր բարձրանում դեպի վեր: Դժբախտաբար դրանք բոլորը հետաքրքիր անցորդներ կամ թաղի պարապորդ մարդիկ էին, որոնք ներս էին խուժել երաժշտության անսովոր

աղմուկի վրա և այժմ հանգիստ կանգնած զվարճանում էին, որ ձրիաբար զինվորական երաժշտություն են լսում:

Վերջապես ներկայացման ժամը հասավ և մեր թատերասերները հուսահատ ու կոտրված սրտով դուրս եկան բեմ քսան կամ քսանևհինգ հոգու առաջ խաղալու համար: Խաղը լավ անցավ, քսանևհինգ հոգին ծափահարեցին նրանց, մինչև անգամ հետևյալ արարվածների ժամանակ ծափահարողների թիվը կրկնապատկվեցավ, որովհետև բակի այցելուներն օգուտ քաղելով դռնապանի թուլությունից, բարեհաճել էին ներս խուժել առանց տոմսակի և իրենց ներկայությամբ խրախուսել մեր թատերասերներին... Բայց երբ ամեն ինչ վերջացավ, և թատերասերները սկսեցին իրենց եկամուտը հաշվել, ցավելով տեսան, որ վաճառված տոմսակների գինը հազիվ է բավականանում երաժիշտներին վճարելու: Իսկ իրենց արած ծախսերը յուրաքանչյուրի շլինքին մի կլորիկ գումար վճարելի պարտք է գնում:

Հիասթափումը և նրան հաջորդող հուսահատությունը մեծ էր. մանավանդ որ բոլոր խաղացողները գրեթե աղքատ ընտանիքի զավակներ էին. որտեղի՞ց պիտի կարողանային կրած վնասը ծածկել:

Այս անաջողությունը վերջին հարվածը տվավ նորավարտ գործողների ընկերական գործունեությանը: Նրանք հուսահատվեցան և սկսեցին աննպատակ քաղաքի փողոցներն ու շրջակաները թափառել, առանց մի նոր գործ սկսել կարողանալու:

Եվ որքա՜ն էին վշտանում խեղճ երիտասարդները տեսնելով, թե ինչպես իրենց ոսկի երագները, իրենց գեղեցիկ հույսերն առանց մարմին առնելու ցնդեցան օդի մեջ...

Բոլոր այս տքնություններից, բոլոր նեղություններից միայն մի բան մնաց նրանց, այն է՝ «ֆարմասոն» ծաղրական անունը, որով կանչում էին նրանց զվարճասեր խանութապանները, երբ նրանք անցնում էին խանութների առջևից: Մի երկու ամիս անցնելուց հետո մեր «նորավարտ գործողների» ընկերությունը ցրվեցավ: Նրանցից շատերը գնացին օտարության՝ բախտ ու պաշտոն որոնելու, և քչերը միայն մնացին քաղաքում՝ հանձնելով իրենց ճակատագրի քմահաճ կամքին:

Այդ քչերի թվին պատկանում էր Վահան Սարյանը: Նա չէր կամենում ո՛չ բախտի և ոչ պաշտոնի հետևից գնալ, որովհետև չէր կամենում միայն յուր գոյության մասին մտածել, «այդ անում են մինչև անգամ անդամալույծները», — մտածում էր նա, հետևապես որքան էլ ընկերների հետ ունեցած իրենց գործունեությունն ապարդյուն և հուսահատական եղած լիներ, այսուամենայնիվ նա դեռ չէր կամենում վհատվիլ. դեռ հույս ուներ, թե կարող է պիտանի լինել այն ազգին, այն հասարակությանը, որին պատկանելու պատիվն ունի և որին դեռ կարող է ծառայել, քանի յուր բազուկներում ուժ և սրտի մեջ կորով ունի: Նա այն եզական անձինքներից էր, որոնք ավելի ուժ ու քաջություն են ստանում, երբ միայնակ են մնում և ավելի են արիանում, երբ բախտը սկսում է նրանց հալածել:

Բայց և այնպես յուր և ընկերների կրած մեզ ծանոթ անհաջողությունները եթե չվհատեցրին նրան, գեթ լրջորեն մտածել տվին, թե արդյոք նա յուր հայրենի քաղաքո՞ւմ պիտի մնա, թե՞ ուրիշ կողմը պիտի տեղափոխվե: Երկար, շատ երկար մտածելուց ետ՝ նա վերջապես յուր հիշատակարանի մեջ հետևյալ որոշումն արձանագրեց.

«188* օգոստոս 30. Համոզվեցա, որ միայն այս քաղաքը չէ, ուր կարող եմ գործել, կան և ուրիշ տեղեր, ուր ապրում են իմ հայրենակիցները, և ուր իմ գործունեությունը կարող է պիտանի լինել: Թողնեմ ուրեմն այս երկիրը, ուր կոպտության ժայռերի մեջ հազիվ է բացվում աշխատության ծաղիկը, ուր նրա քնքուշ ընձյուղները խամրում են

ցրտաշունչ հողմերի սաստկությունից: Երթամ գործելու այնտեղ, ուր պարարտ է հողը և առատ ջրերը, ուր քաղցր է արևը և հեզիկ հովերը: Երթամ այնտեղ, ուր չեն հալածում մարդուն, երբ նա կամենում է գործել, և մեծարում են նրան, երբ նա ազնվությամբ է գործում»:

Եվ այսպես Վահան Սարյանը որոշեց թողնել յուր ծննդավայրը: Բայց նրա դիտավորությունը մի որևէ գավառական քաղաք գնալ չէր. նա կամենում էր դիմել դեպի Թիֆլիս դեպի կովկասյան հայոց լուսավորության կենտրոնը:

Բ

Գավառական կարծիքը

Վահան Սարյանի բազմաթիվ բարեկամների շրջանում միայն մի ընտանիք կար, որին երիտասարդը սրտանց սիրում և հարգում էր և որի հետ բաժանում էր նա հասարակական նորությունների առթիվ զգացած յուր ուրախությունն ու տխրությունը:

Դա այրի տիկին Գոհար Երեմյանի ընտանիքն էր, որի հետ ծանոթացել էր, տիկնոջ դստեր համար իբրև ուսուցիչ հրավիրված ժամանակ: Այդ ծանոթության առաջին օրից սկսած տիկին Երեմյանի տունը երիտասարդ Սարյանի աչքում երևեցավ իբրև ամայի անապատում գտնվող մի օազիս, որ պասքյալ ու վաստակաբեկ ուղևորին զովարար ջուր ու հանգիստ է մատակարարում, երբ նա մոլորված ու անհույս թափառում է ավազուտում:

Եվ, արդարև, այդ ետ ընկած, տգիտության մեջ խարխափող և ազնիվ ու վեհ գաղափարների անծանոթ գավառական քաղաքում տիկ. Երեմյանի ընտանիքը միակն էր, որ հետաքրքրվում էր ազգային և աշխարհի նորություններով, հետևապես և այդ աշխարհին պատկանող ու նրա բախտով հետաքրքրվող այցելուին կարողանում էր գոհություն պատճառել թե՛ ընտիր կարծիքների փոխանակությամբ և թե՛ այն սրտագին հետաքրքրությամբ, որով վերաբերվում էր նա դեպի յուր ազգայինների հեղհեղուկ բախտն ու վիճակը:

Տիկին Գոհարը, որ դեռ մանկության հասակից յուր ողջամիտ ծնողաց շնորհիվ ընտիր կրթություն էր ստացել, ամուսնական կյանքում անհաջող բախտի հանդիպելով և երիտասարդ հասակում այրիանալով յուր միակ ուրախությունն ու սփոփանքը գտավ յուր դեռահաս աղջկա խնամատարության և նրան կրթելու քաղցր պարտավորության մեջ: Նյութական անզոր վիճակը, որ շատ անգամ արժանավոր և առաքինի անձինքները թողնում է անհայտության ու մոռացության մեջ, տիկին Գոհարին, հասարակության աչքից չկարողացավ ծածկել: Նա յուր անբիծ և առաքինի վարքով, խնայասեր տանտիկնությամբ և որդեսեր գորովով արժանավոր հայ կնոջ կատարելատիպն էր ներկայացնում. իսկ ուսումնասեր բնավորությամբ, զավակը կրթելու ու լուսավորելու մասին ունեցած բուռն տենչով նմանում էր զարգացած երկրներում ապրող ընտիր կանանց: Այրի տիկնոջ այս առավելությունները հարգելի դարձրին նրան շատերի աչքում, թեպետ շատ նախանձոտ կանանց էլ թշնամությունը գրգռեցին:

Այսուամենայնիվ, եթե առաջինների համակրությունը խրախուսում էր նրան՝ վերջինների թշնամությունը չէր թուլացնում յուր հաստատամտությունը, որի շնորհիվ նա առաջին կինը հանդիսացավ այդ գավառական քաղաքում, որ յուր աղջկանը տվավ օրինակելի կրթություն՝ ներշնչված ազգասիրական զգացմունքներով և հայրենասիրական հոգվով:

Երիտասարդ Սարյանը, որ օրիորդ Աշխենի հայոց լեզվի և պատմության ուսուցիչն էր, քիչ երախտի՛ք չուներ օրիորդի զարգացման գործում: Այն օրից սկսած, երբ նա ծանոթացել էր տիկին Գոհարի հայրենասիրական ձգտումներին, նա ամեն ջանք գործ էր դրել, որ յուր աշակերտուհին կրթվի ու զարգանա մոր հազվագույտ ցանկությունների համաձայն. այսինքն որ նա արժանավոր հայ աղջկա մի կատարելատիպ հանդիսանա:

Տիկին Գոհարի համար այս աշխատասեր երիտասարդ ուսուցիչը հետզհետե մի եղբոր և որդու չափ սիրելի դարձավ, ինչպես և ինքը երիտասարդի համար՝ մի հարազատ մոր համահավասար պաշտելի: Նրանց երկուսի ունեցած կարծիքների, համոզմունքների և հայացքների նմանողությունը մի քաղցր և հարգելի մտերմություն էր ծնեցրել նրանց բարեկամության մեջ: Երիտասարդ Սարյանը հաճախ այցելում էր այդ ընտանիքին երբեմն նրան ազգային ուրախություններ հայտնելու, երբեմն յուր ցավերը պատմելու և շատ անգամ՝ ծանոթ շրջանների կողմից՝ այրի տիկնոջ կրած բարոյական զրկանքների պատմությունը լսելու: Վերջին դեպքերում, մանավանդ, նրանք միմյանց խրախուսում և մխիթարում էին և վշտերի փոխադարձ բաժանումը շատ անգամ մոռացնել էր տալիս նրանց նույնիսկ վշտերի գոյությունը:

Այսպիսի բարեկամական հարաբերությանց մեջ, ինչպես որ բնական է, փոքրիշատե ծանրակշիռ մի գործ սկսելու ժամանակ նրանք միմյանցից խորհուրդ էին հարցնում և միմյանց տված այդ խորհուրդներով օգտվում: Այդ պատճառով էլ Վահան Սարյանը Թիֆլիս ուղևորվելու մասին նախագծած յուր որոշումը իրագործելուց առաջ շտապեց այդ մասին նաև յուր բարեկամներին հայտնել և նրանց խորհուրդը հարցնել:

Ամառային գեղեցիկ երեկո էր: Լուսինը յուր աղոտ շողերը սփռել էր փոքրիկ, սիզավետ պարտեզի վրա, ուր երեկոյի զովարար հովը մեղմով ծառերի ճյուղերը շարժելով խորհրդավոր և ախորժելի շրշյուն էր հանում նրանց մեջ: Ծերունի տանձենու տակ փռած գորգի վրա նստած հյուսում էր տիկին Գոհարը, և խոսակցում էր յուր դստեր հետ իրենց ներկա և ապագա վիճակի մասին: Մանկամարդ աղջիկը — գեղեցիկ աչքերը լուսնին հառած և ձեռքը ծնոտին հենած նստած էր մոր հանդեպ, փոքրիկ աթոռակի վրա: Նա թե՛ պատասխանում էր մոր խոսքերին և թե՛ լուսնի ընթացքը. դիտում, որը կարծես յուրմով լուսավորված ամպերի մեջ լողում ու զվարճանում էր:

— Ինչպե՛ս գեղեցիկ է այս երեկո լուսինը մայրիկ,— բացականչեց հանկարծ օրիորդը, մոր խոսակցությունն ընդհատելով.— ինչպե՛ս կուզեի ես նրա տեղը լինել...

— Լուսինը միշտ գեղեցիկ է լինում, սիրելիս,— նկատեց մայրը,— մենք ենք, որ չենք կարողանում նրան միշտ գեղեցիկ տեսնել, որովհետև վատ տրամադրության ժամանակ ամեն ինչ մեր շուրջը տխուր և տգեղ է երևում: Բայց դու ինչո՛ւ համար ես կամենում լուսնի տեղը լինել:

— Ա՛խ, մայրիկ, չէ՞ որ նա շատ երջանիկ է:

— Երջանի՛կ, ինչ կնշանակե այդ,— հարցրեց մայրը հետաքրքրությամբ:

— Այո՛, մայրիկ, նա երջանիկ է, որովհետև գտնվում է այսպիսի բարձրության վրա: Ապրում է մաքուր, տարածության մեջ, միայնակ, ազատ և ինքնիշխան: Աշխարհի անախորժ աղմուկը չէ անհանգստացնում նրան, և ոչ էլ չարասեր հոգիների բարբաջանքը խոժոռում է նրա պայծառ ճակատը...

— Սխալվում ես, որդի,— ժպտալով նկատեց մայրը,— նույնիսկ լուսինն յուր այդ բարձրության վրա, այդ անսահման մաքուր տարածության մեջ ազատ չէ չարասեր ոգիների պատճառած նեղություններից: Նայի՛ր, տես. չէ՞ որ այս սև ու գորշագույն

ամպերը շարունակ հետևում են նրան, որպեսզի խեղճի պայծառ պատկերը ծածկեն, չէ՞ որ շատ անգամ կատաղի մրրիկները խանգարում են նրա հանգստությունը և ո՞վ գիտե, դեռ ուրիշ ի՞նչ ցավեր ունի նա, որոնց մասին մենք ոչինչ չգիտենք և չենք էլ կարող գիտենալ:

Օրիորդը մոր նկատողությունն իրավացի գտավ և խորասուզվեց մտածության մեջ:

— Ա՞յժմ ինչի վրա ես մտածում, Աշխե՜ն,— հարցրեց մայրը:

— Նրա վրա, որ ամբողջ տիեզերքում, ուրեմն, ո՛չ հանգստություն կա և ո՛չ երջանկություն:

— Հանգստությունն էլ, երջանկությունն էլ գտնվում են անընդհատ գործելու և անընդհատ աշխատելու մեջ,— հանդիսավոր եղանակով հարեց երիտասարդ Սարյանը, որ այդ միջոցին մորից ու աղջկանից աննկատ մտել էր պարտեզ:

— Համաձայն եմ ձեզ հետ.— ծիծաղելով վրա բերավ տիկին Գոհարը և սեղմեց յուր բարեկամի ձեռը:

Օրիորդ Աշխենը թեթև շառագունելով բարձրացավ տեղից և ողջունելով երիտասարդին՝ յուր աթոռակն առաջարկեց նրան:

— Ո՛չ, հին հայկական եղանակով նստելն ավելի լավ է,— ասաց նա ծիծաղելով և ապա ծառի տակ փռած գորգի վրա ծալապատիկ նստելով ավելացրեց.

— Այսօր եկա ձեզ մի կարևոր նորություն հայտնելու:

— Ի՞նչ նորություն,— հետաքրքրությամբ հարցրին մայր ու աղջիկ:

— Երկու օրից ետ հեռանում եմ այստեղից,— հայտարարեց երիտասարդը: — Երկու. օրից ե՞տ, և ո՞ւր,— զարմացած հարցրեց տիկին: Գոհարը:

— Թիֆլիս:

— Թիֆլի՞ս. դա արդարև մեզ համար նորություն է:

— Այո՛, Թիֆլիս, — կրկնեց երիտասարդը:

— Եվ ինչո՞ւ համար:

— Գնում եմ, որ հանգստություն և երջանկություն ձեռք բերեմ այնտեղ:

— Թիֆլիսո՞ւմ...— խորհրդավոր եղանակով հարցրեց օրիորդ Աշխենը:

— Այո՛, օրիորդ. ես կարծում եմ, որ այդ երկու բարիքը կարելի է ձեռք բերել միայն այնտեղ:

— Շատ հետաքրքիր է իմանալ, թե ինչո՞ւ անպատճառ այնտեղ,— նկատեց օրիորդը:

— Որովհետև այնտեղ միայն կարելի է անընդհատ գործել և անընդհատ աշխատել:

— Այո՛, մոռացա, որ փոքր առաջ դուք նկատեցիք, թե հանգստությունն ու երջանկությունն անընդհատ գործելու և աշխատելու մեջն են գտնվում,— խոսեց օրիորդը:

— Այո՛, այժմ էլ նույնն եմ ասում,— հարեց երիտասարդը:

— Իսկ ես կարծում եմ, որ գործելու և աշխատելու մեջ հանգիստ ու երջանկություն որոնողը պետք չունի անպատճառ Թիֆլիս դիմելու,— ծանրությամբ նկատեց տիկին Գոհարը,— որովհետև մեր երկրում էլ կարելի է նույն չափ եռանդով ու տոկունությամբ աշխատել, որքան և օտարության մեջ:

— Օ՜, ոչ, սխալվում եք, տիկին, չարաչար սխալվում եք,— եռանդով խոսեց երիտասարդ Սարյանը,— ցանկացած ծաղիկն ամեն հողում չես կարող տնկել և աճեցնել:

— Դուք կարծում եք, որ մեր երկրի հողը ոչինչ սնունդ չի՞ կարող տալ յուր մեջ տնկած ծաղկին,- ժպտալով հարցրեց տիկինը:

— Մեր երկրի հո՞ղը, ո՛չ, տիկին, հազար անգամ ո՛չ, մեր երկրի հողը թույն է պարունակում յուր մեջ, նա չի կարող ծաղիկներ բուսցնել, նա չի կարող պտուղներ հասցնել. շատ-շատ գուցե միայն մոլեխինդ ու տատասկ աճեցնե...— դառնացած խոսեց երիտասարդը, հիշելով այն բոլոր նեղությունները, որ նա յուր ընկերների հետ միասին կրել էր հայրենի քաղաքում:

Եվ որովհետև տիկին Գոհարը ծանոթ էր այդ պատմություններին և լավ հասկանում էր, որ երիտասարդի այլաբանական ակնարկությունները վերաբերում են հայրենի քաղաքում կրած յուր անհաջողություններին, ուստի հարցրեց.

— Ի՞նչ ապացույցներ ունիք, որ Թիֆլիսի հողն ավելի պարարտ և պտղաբեր է, քան մեր երկրինը. ինչո՞ւ համար եք կարծում, որ ձեր գործունեությունն այնտեղ էլ նույն անհաջողություններին չի պիտի հանդիպի, ինչին որ հանդիպեց այստեղ: Չէ՞ որ այնտեղ էլ նույն հայերն են ապրում, չէ՞ որ այնտեղ էլ ձեր գործունեությունը նույն հայերի շահերին պիտի նվիրված լինի:

— Ապացույցների մասի՞ն եք հարցնում, տիկին. իսկույն ես ապացույցները բերեմ.— խոսել սկսեց երիտասարդը,— նախ ասացեք ինձ, ո՞ր հողի մասին մենք կարող ենք ասել թե պարարտ և պտղաբեր է, ա՛յն, որ միայն փուշ ու տատասկ է բուսցնում, թե՞ այն, որ ծաղիկներ է պճնում, թփեր ու ծառեր է բուսցնում, անտառներ է աճեցնում, այգիներ ու արտորաներ է հասցնում...

— Իհարկե վերջինը. ի՞նչ խոսք կա դրան:

— Դե, ուրեմն, թվեցեք դուք ինքներդ, ի՞նչ լավ բան ունի մեր այս խեղճ քաղաքը:

— Այսինքն, ի՞նչ կկամենայիք որ ունենար:

— Շատ բան չեմ ուզում. հենց գոնե մի բարեգործական հաստատություն, մի հիվանդանոց, մի աղքատանոց, մի խեղճ լրագիր, մի խրճթանման թատրոն:

— Է՜հ, բարեկամ. դուք արդեն շատ եք պահանջում, մի գավառական ետ եկած քաղաքի համար,— ժպտալով նկատեց տիկին Գոհարը:

— Հավատացեք, տիկին, շատ չեմ պահանջում, մինչև անգամ, որ նա իմ հիշած — բարենպաստ հաստատությունները մինչև այժմ ունենար, որովհետև, քանի որ հիմնարկող ուժեր չեն եղած, հիմնարկություններն իրենք իրենց չէին կարող բուսնել, բայց չէ՞ որ մենք կամեցանք աշխատել հիմնել, ստեղծել, և մեզ խանգարեցին, մեր ձգտումներն ու ցանկությունները նույնիսկ երկունքի մեջ խեղդեցին. ախր սա երկիր

չէ, սա դժոխք է...— վրդովված խոսեց երիտասարդ Սարյանը և թաշկինակը հանելով սրբեց ճակատը, որ ոռպեական հուզմունքից քրտնել էր:

— Իսկ Թիֆլիսի մասին ի՞նչ էիք կամենում ասել,— մեջ մտավ օրիորդ Աշխենը, չկամենալով, կարծես, որ երիտասարդը խոսելուց դադարի:

— Հա, Թիֆլիսի՞... Օ՛, նրա մասին շատ բան կարելի է խոսել: Երևակայեցեք ձեզ, մի քաղաք, որ հարյուր հազար և ավելի բնակիչ ունի և, դրանց մեջ ձեր ազգակիցները ահագին մեծամասնություն են կազմում: Բայց ի՞նչ մեծամասնություն. խելոք, ընտիր լուսավորված: Արդեն այդպիսի մարդկանց հետ լինել, նրանց կյանքով ապրելը, նրանց հասարակական գործունեության մասնակցելը՝ կես երջանկություն է: Ինձ համար գոնե այդպես է: Այնուհետև երևակայեցեք, որ այդտեղ մարդիկը բնավ չեն նմանում մեզ մոտ եղող խրտվիլակներին. այլ որ դրանք իսկապես մարդիկ են, որոնք խոսածդ ըմբռնում են, զգացմունքներդ հարգում են, անկեղծությանդ հավատում են, ձեռք են մեկնում քեզ՝ երբ նրանց «եղբայր» ես անվանում, խրախուսում են քեզ՝ երբ դու դեպի բարին, գեղեցիկը և վսեմն ես ձգտում...

Գործել այդպիսի ժողովրդի մեջ, աշխատել թեկուզ գիշեր և ցերեկ և հավատալ, որ այդ աշխատության համար թափվող քրտինքը ընկնում է մի հողի վրա, որ մեկի փոխարեն տասնապատիկ պիտի պտղաբերե — դա արդեն մի կատարյալ երջանկություն է:

— Եվ դուք կարծում եք թե՝ այդ քաղաքում ամեն ինչ ձեր երևակայած չափ գեղեցիկ ու վարդագո՞ւյն է, — հարցրեց տիկին Գոհարը ժպտալով:

— Ես ոչ թե կարծում, այլ հաստատապես հավատում եմ. և դրա համար անհերքելի փաստեր ունիմ:

— Օրինա՞կ:

— Օրինակ, ա՛յն բարենպատակ հաստատությունները, որպիսիք են հիվանդանոցը, աղքատանոցը, որբանոցը...

— Դրանք արդեն քաղաքի ընդհանուր բնակիչներին վերաբերյալ բաներ են,— ընդհատեց տիկին Գոհարը երիտասարդին,— դուք ձեր ազգակից հայերի մասին խոսեցիք: Թեպետ ես համոզված եմ նույնիսկ այդ հաստատություններն իրենց գոյությամբ պարտական են գլխավորապես իմ ազգակիցներին, որովհետև բնակիչների մեծամասնությունը նրանք են կազմում. այսուամենայնիվ, եթե նույնիսկ այդ ժխտենք, դարձյալ նրանք առանձին իրենց համար այնքան լավ գործեր ունեն կատարած, այնքան բարենպատակ հաստատություններ ունեին հիմնած, որոնք թվելն արդեն բավական է թիֆլիսեցի հայի մեծագործությունն ապացուցելու համար:

Հապա, ասացեք, մեր հայաբնակ կենտրոններից ո՞րն ունի Թիֆլիսի չափ ծաղկած դպրոցներ: Միմիայն նրա Ներսիսյան թեմական դպրանոցը տարեկան վաթսուն հազար ռուբլի ծաղք է անում և գրեթե ամբողջ նահանգի արժանավոր քահանաները և ուսուցիչներ է մատակարարում: Գայանյան և Հովնանյան միջնակարգ դպրոցները նույն չափով վարժուհիներ են տալիս ազգին: Դրանց հետ միասին զույգ Մարիամյան-Շուշանիկյան, Զրկինենց, Ջգրաշենի, Շամքոռեցվոց, Էջմիածնեցվոց, Աստվածածին և այլն բազմաթիվ թո՛ տղայոց և թո՛ օրիորդոց դպրոցները, որոնց անունները չեմ հիշում, բայց որոնց մասին միշտ կարդում եմ լրագիրներում և որոնք հազարավոր հայ մանուկներ են կրթում ու դաստիարակում, դրանք բոլորը չէ՞ որ թիֆլիսեցի հայի լուսավոր մեծագործության սահմանն են որոշում:

Իսկ նրանց հռչակավոր Կովկասյան Բարեգործական, Կանանց Բարեգործական, Գրքերի հրատարակության և այն ընկերությունները. դրանց մասին արդեն չեմ խոսում, բայց գիտե՞ք, թե ի՜նչ հաստատություններ են դրանք. ի՜նչ մեծ գործեր են կատարում... Ինչպիսի՜ բարեգործություններ են անում. որքա՜ն դպրոցներ են պահում, որքա՜ն ուսանողների են օգնում... Եվ, վերջապես, դուք մի երևակայեցեք դրանց ժողովները, այդ ժողովների ճառախոսները, նրանց վիճաբանությունները.., օ՜հ, չէ՞ որ կատարյալ երջանկություն է այդ կյանքով ու կրակով լի աշխարհում ապրելը...

— Ա՜խ, պարոն Սարյան, դուք այնպիսի լավ գույներով եք նկարագրում այդ բոլորը, որ ես փափագում եմ թևեր ունենալ և թռչել դեպի այդ երանելի երկիրը,— խորը զգացված խոսեց օրիորդ Աշխենը, որը մինչև այն լուռ ու հետաքրքրությամբ լսում էր երիտասարդին:

— Ես դեռ բոլորը չասացի,— հարեց իսկույն Սարյանը,— դեռ ոչինչ չհիշեցի այդտեղ հրատարակվող հայոց լրագիրների մասին: Չէ՞ որ բուն լուսավոր, զարգացած և իմաստուն գլուխներն այդ լրագիրների շուրջն են խմբված: Երևակայեցեք մի վայրկյան, որ դուք մի բախտավոր առիթով ծանոթանում եք այս ինչ թերթի խմբագրի հետ և կարողանում եք մտնել նրա խմբագրությունը: Այդտեղ նստած են գիտնական և լուսամիտ մարդիկ. խոսում ու դատում են զանազան խնդիրների վրա: Դուք լսում եք նրանց. ծանոթանում եք նոր խնդիրների, նոր մտքերի, նոր հայացքների հետ. որոշ գաղափարներ եք կազմում ձեզ ծանոթ այս և այն հարցի մասին: Ծանոթանում եք գրական աշխարհի և նրա գործողների հետ, սովորում եք նրանցից գործարել ձեր ուժերը, ձեր աստվածատուր շնորհը այնպես, որ աշխարհը ձեզ տեսնե, ճանաչե, գնահատե... միով բանիվ ապրում եք ճշմարտապես աստուծո պատկերը կրող մարդկանց շրջանում և սովորում եք նրանց նմանել...

— Օ՜հ, պարոն Սարյան, գնացե՛ք, ի սեր աստուծո, գնացե՛ք, մի՛ մնաք այս խավար, այս անիծված երկրում,— հուզված բացականչեց օրիորդ Աշխենը,— թողեք, որ մենք մնանք այստեղ, մենք ողորմելի կանայքս, որ ստեղծված ենք միմիայն անհայտության մեջ ապրելու և մեռնելու համար...

— Սխալվում ես, սիրելիս, սխալվում ես. կինն անհայտության մեջ ապրելու ու մեռնելու համար չի ստեղծված,— նկատեց աղջկան տիկին Գոհարը.— կինն էլ կարող է գործել, կինն էլ կարող է պիտանի լինել հասարակությանը, ինչպես և տղամարդը, միայն թե աստծուց իրեն ուժերի չափով:

— Այո՛, օրիորդ, տիկնոջ նկատողությունը իրավացի է,— հարեց երիտասարդը.— ձեզ ապացույց Թիֆլիսի կանայք. չէ՞ որ նրանք էլ ունեին փառավոր ընկերություն, նրանք էլ գործում են նույնչափ հաջողությամբ, ինչպես այնտեղի տղամարդիկ:

— Այո՛, Թիֆլիսի կանայք և ո՛չ թե մենք, այո անհայտ անկյունում ապրողներս,— դառնությամբ նկատեց օրիորդը:

— Մի օր էլ դուք կարող եք գնալ, եթե տիկինը կամենա,— ասաց երիտասարդը:

— Ես ձեր գնալուն էլ հակառակ եմ, ո՞ւր մնաց թե մենք գայինք,— ծանրությամբ նկատեց տիկինը:

— Ինչո՞ւ:

— Շատ պարզ պատճառով, եթե յուրաքանչյուր գավառական քաղաքից յուր հասունացած ուժերը հետզհետե դեպի մայրաքաղաք հեռանան և նրանց տեղը տգետ գյուղացիները բռնեն, էլ գավառական քաղաքը ինչպե՞ս կարող է լուսավորվել: Գործելու ուժ ու եռանդ թե ունիք, ինչպես փոքր առաջ էլ ասացի, գործ դրեք ձեր

հայրենի քաղաքում, որն ավելի կարիք ունի ձեր օգնության, քան թե Թիֆլիսը, ուր ձեզանից լավերը բազմաթիվ են:

— Փոքր առաջ ես էլ ասացի ձեզ, տիկին, որ մենք ամենից առաջ այստեղ սկսեցինք գործել, որովհետև մեր նպատակն ամենից առաջ մեր հայրենի քաղաքին ծառայելն էր: Բայց հայրենի քաղաքը մեզ չկամեցավ ճանաչել և մեր հույսերը կործանեց...

— Ո՛չ այնքան հայրենի քաղաքը, որքան ձեր անփորձությունը,— նկատեց տիկին Գոհարը ժպտալով:

— Իրավունք ունիք. ես էլ ձեր կարծիքի եմ: Ուրեմն այո դեպքում իմ հեռանալն ավելի ևս անհրաժեշտ է: Որովհետև այստեղ մնալով չեմ կարող ո՛չ փորձառություն ձեռք բերել և ո՛չ ունեցածս մտավոր պաշարը հարստացնել՝ մինչդեռ ինձանից ավելի խելոք ու փորձված մարդկանց մոտ գնալով՝ թե՛ խելք կսովորեմ նրանցից և թե՛ պատշաճավոր ձևով գործելու եղանակը: Ես կարծում եմ, որ միայն այսպիսի պատրաստությամբ վերադառնալուց ետ կարող եմ պիտանի լինել իմ հայրենակիցներին:

— Այդ պայմանով միայն ձեր Թիֆլիս գնալն անհրաժեշտ է,— ասաց տիկին Գոհարը:

— Այդ պայմանով էլ մենք կարող ենք գնալ, մայրիկ, այնպես չէ՞,— ժպտալով հարցրեց Աշխենը:

—Ո՞վ գիտե, գուցե բախտը մի օր հաջողի,— պատասխանեց մայրը:

— Եվ աստուծով կհաջողի. հարկավոր է միայն կամենալ և աշխատել,— հարեց երիտասարդ Սարյանը և տեղից բարձրացավ:

Լուսինը բավական բարձրացել էր, և երեկոյի հովը տեղի էր տալիս գիշերային ցրտության:

Երիտասարդն յուր բարեկամուհիների հետ միասին դուրս գալով պարտեզից՝ բարի գիշեր մաղթեց նրանց և հեռացավ:

Իսկ տիկինն ու աղջիկը լուռ ու մտախոհ քաշվեցան տուն:

Գ

ԳԱՂՏՆԻ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Բարեկամներից բաժանվելուց ետ երիտասարդի սիրտն սկսեց ճնշել մի ինչ որ նոր, կարծես օտար, բայց հետզհետե ընտանի դարձող մի զգացմունք:

Հազիվ հասել էր փողոցի այն տեղը, ուր Երեմյանների պարտեզն էր վերջանում. նա կանգ առավ, մոտեցավ ցանկապատին և նայեց այն կողմը, ուր մի քանի րոպե առաջ նստած էին իրենք:

Լուսինը դարձյալ լուսավորում էր, և այս անգամ ավելի պայծառ. գիշերային հովը դարձյալ օրորում էր պարտեզի ծառերը, և մեղմ շրշյունը դարձյալ լսվում էր ինչպես մենավոր ճգնարանի հեզաձայն մեղեդի:

Երիտասարդի ոտքերը գամվեցան գետնի վրա. նա չէր կարողանում տեղից շարժվել և ինքն էլ, գուցե, չգիտեր թե ինչո՞ւ շարունակ նայում էր պարտեզին: Այն միտքը, թե

նա հեռանում է այդտեղից, թե նա այլևս չպիտի տեսնե յուր բարեկամներին, չպիտի ունենա մեկը, որին յուր ցավերն ու վշտերը պատմել կարողանա— ամեն ինչ նորեն քաղցրացնում էր յուր աչքում:

Նա հավատում էր, որ այն քաղաքում, ուր ինքը պիտի պանդխտեր, Երեմյանների ընտանիք չի կարող լինել: Իհարկե, կգտնվեին տիկին Գոհարի պես խելոք, առաքինի, ծանրաբարո և զգաստասեր կանայք, կգտնվեին օրիորդ Աշխենի նման քնքուշ, պարկեշտ, բարեսիրտ և ազնիվ զգացմունքներով ոգևորվող աղջիկներ, բայց որ ինքը չէր կարող նրանց մոտենալ, որ նրանք յուր հետ չէին մտերմանալ այն աստիճան, որ այստեղի բարեկամուհիներին փոխանակեին— այդ հաստատ էր: Եվ ահա այդ պատճառով նա կամենում էր մի փոքր ավելի վայելել ա՛յն բոլորը, ինչ որ մինչև այն յուր համար, թեպետ քաղցր, բայց սովորական էր եղած, իսկ այժմ նրանցից հեռանալու պատճառով, դառնում է քաղցրագույն և հազվագույտ:

Այս մտածմունքների մեջ երիտասարդի աչքն ընկավ պարտեզի վարդենիներով պատած փոքրիկ ծաղկածուին, ուր շահոքրամի, նարնջածաղկի և նարգիզի թփերի վրա կարծես իշխանաբար ծածանում էին նորաբաց և ձյունափայլ շուշանները, որոնք լուսնի խորհրդավոր լույսի առաջ մի տեսակ գրավիչ և կախարդող տեսք էին ստացել: Հանկարծ նա հիշեց օրիորդի մի քանի օր առաջ իրեն ասած խոսքը թե՝ «Որովհետև դուք բոլոր ծաղիկներից ավելի սպիտակ շուշաններն եք սիրում, ուստի ես նրանց տնկել եմ ծաղկածուի առաջին կարդում, որպեսզի պարտեզ մտնելուն պես ամենից առաջ նրանց նայեք...»:

Ո՞վ գիտե, որքա՛ն անկեղծությամբ, որքա՛ն պարզությամբ էին ասվել այս խոսքերը, չէ՞ որ մի երախտավոր ուսուցչի համար միշտ երախտագետ սիրտ է ունենում աշակերտուհին: Բայց երիտասարդ ուսուցիչը, որ մի քանի օր առաջ մանկամարդ աղջկա այդ խոսքերը իբրև քաղաքավար հաճոյախոսություն էր ընդունել, այժմ խորհրդավոր բացատրությունների առարկա էր դարձնում նրանց: Նա կամենում էր հավատալ, թե օրիորդի սրտի խորշերը սպրդել էին թաքուն զգացմունքներ և թե նրա այդ խոսքերը նույնիսկ այդ զգացմունքների գոյությունն էին ապացուցանում:

Մինչև այդ րոպեն նա գիտեր միայն, որ օրիորդ Աշխենը պարկեշտ, բարեսիրտ և ազնիվ աղջիկ է. այժմ նա պատկերացնում է յուր առաջ նաև նրա սիրուն հասակը, գեղեցիկ գլուխը, թիկունքի վրա ծածանող հարուստ մազերը, կյանքով ու կրքով լի աչքերը, վարդի պես գեղանի դեմքը, միշտ ժպտող շրթունքները... հիշում է նրա մուզիկայի նմանող ձայնը, նրա արծաթահնչյուն ծիծաղը, նրա թրթռուն շարժվածքը, մտաբերում է նրա երբեմն ուրախ կատակները և հաճախ խելոք և նրբամիտ զրույցները... և զգում է թե ինչպե՜ս ծանր և ինչպե՜ս դժվար է այսպես շուտ հեռանալը նրանից:

Իսկ եթե դուք գաղտնապահ լինեք, ես ձեզ կասեմ, որ նա նոր չէր օրիորդի այդ առավելությունները տեսնում, վաղուց այդ սիրուն աղջիկը երիտասարդի մտքերը զբաղեցնում և սիրտը հուզում էր: Շատ անգամ էր նա կամեցել սևեռել յուր հայացքն օրիորդի կրակոտ աչքերին և լռիկ նայվածքով ասել ու պատմել նրան այն բոլորը, ինչ որ կատարվում էր յուր հոգեկան աշխարհում, յուր սրտի թաքուն խորշերում... Բայց նա ուսուցիչ էր. հա՛յ ուսուցիչ, և այն՝ հայի պարկեշտ ընտանիքում: Նա պարտավոր էր լինել համեստ, ազնիվ և առաքինի, եթե սերը մինչև անգամ դժոխք վառեր յուր սրտում, նա պարտավոր էր նրա բոցերը սառնամանիքով պատել: Այդպես էր հասկանում երիտասարդ Սարյանն ուսուցչի կոչման նշանակությունը: Եվ այդ էր պատճառը, որ տիկին Գոհարն անպայման հավատում էր նրան իբրև յուր հարազատ եղբոր:

Իսկ այժմ, երբ արդեն որոշված է, որ նա հեռանում է այստեղից, երիտասարդը կարծես իրավունք է տալիս վաղուց ճնշված յուր զգացմունքներին նորից շարժվել, կենդանանալ և մինչև անգամ յուր սիրտն ու հոգին ալեկոծել:

Երկար պարտեզի վրա նայելուց և մոտիկ անցյալի զանազան հիշատակներ յուր հիշողության մեջ նորոգելուց նա սկսեց դիտել Երեմյանների տունը և այն սենյակը, ուր սովորաբար պարապում էր օրիորդը և որն այդ րոպեին լուսավորված էր:

«Նա երևի կարդում է և, իհարկե, ինձ վրա չէ մտածում...,— շշնջաց ինքն իրեն երիտասարդը և ապա աչք ածեց տան նեղ և երկար պատշգամի վրա, որը նույնպես լուսավորված էր լուսնի կաթնագույն լույսով:

Հանկարծ մի սպիտակ շրջազգեստ երևաց պատշգամում. դա ինքն օրիորդն էր, օր համր քայլերով առաջանալով եկավ կանգնեց լուսնի հանդեպ և պատշգամբի սյունի վրա կռթնելով՝ սկսեց դեպի պարտեզը նայել: Այդ անշարժ դիրքի մեջ նա նմանվում էր մի մարմարիոնե արձանի, որով բանաստեղծության սիրահար հարուստ իշխանները երբեմն իրենց պալատների սարավույթներն են զարդարում:

Երիտասարդը հիացմունքով և անթարթ աչքերով դիտում էր այդ գիշերային խորհրդավոր երևույթը, նրա սիրտը հետզհետե հուզվում և անհանգիստ տրոփում էր: Կարծես սիրո բարերար ոգիներից մինն էր, որ այդ րոպեին բերավ և կանգնեցրեց նրա առաջ յուր գաղտնի սիրո առարկան: Երիտասարդը երկար նայեց նրա վրա, հիացավ, զմայլվեցավ և ապա ձեռքերն օդի մեջ տարածելով հոգեկան հափշտակության մեջ շշնջաց.

«Սիրում եմ, սիրում եմ...». հետո կարծես վախենալով, որ յուր աշակերտուհին կարող է լսել կամ ցանկապատի մոտ նշմարել իրեն նա կամացուկ հեռացավ այդտեղից և նեղ ու մութ փողոցի մեջ անհայտացավ:

Իսկ ինքն օրիորդն ինչո՞ւ այդ րոպեին դուրս էր եկել պատշգամբ ինչո՞ւ շարունակ դեպի պարտեզն էր նայում, ո՞ւմն էր պտրտում այնտեղ:

Այդ դժվար էր գուշակել:

Երիտասարդ, բայց խորագետ աղջկա սիրտը ծովի նման խոր և գիշերի պես անթափանցելի է:

Իզո՞ւր հոգեբանը նրա հայացքը քննում, ժպիտը չափում և շառագունելուց ենթադրություններ է անում: Միայն թեթևամտությունը և հիմարության հասցրած պարզամտությունն է, որ յուր տիրոջ զգացմունքները մատնում է: Աշխենն այդ աղջիկներից չէր. աղավնու սիրելի միամտության հետ միասին նա օձի անհրաժեշտ խորագիտություն էլ ուներ. նրա ժպիտն ու հայացքն ա՛յն ժամանակ միայն կարող էին յուր սրտի թարգմանը լինել, երբ ինքը կամենար, որովհետև յուր զգացմունքների կառավարը խելքն էր և ոչ թե սիրտը:

Երբ մայրն աղջկա ուշանալը տեսնելով դուրս եկավ պատշգամ, Աշխենը դեռ անշարժ կանգնած էր սյունի մոտ: Յուր ետևում ոտնաձայն լսելով նա աչքերը պարտեզի վրայով հեռացնելով ուղղեց լուսնի վրա:

— Ի՞նչ ես շինում այդտեղ, Աշխեն, չէ որ զով քամի է փչում,— հարցրեց մայրը, կարծես թափանցելով աղջկա սրտի անհայտ գաղտնիքների մեջ:

— Դիտում եմ լուսնի ընթացքը, գիշերվա լռությունը... — անփույթ եղանակով պատասխանեց աղջիկը:

— Ցուրտ է, կմրսես, ներս գնանք:

— Գնա՛նք, մայրիկ. բայց ինչպե՛ս սիրուն գիշեր է. ափսոս որ ամառը վերջանում է...

— Ինչ որ սկսվել է, պիտի վերջանա, որդի, ի՞նչ կա ափսոսալու:

— Կյանքն էլ սկսվում ու վերջանում է, մայրիկ, բայց մի՞թե կգտնվի մարդ, որ յուր վերջացող կյանքը չափսոսե:

— Ինչո՞ւ չէ. չի ափսոսիլ նա, որի կյանքն անօգուտ և աննպատակ է անցնում:

— Սխալվում ես, մայրիկ, հենց այդ տեսակներն են որոնք իրենց կյանքը շատ թանկ են գնահատում:

— Ուրեմն չեն ափսոսում նրանք, ո՛րոնք ինքնակամ զոհվում են կամ մի մեծ գործի, կամ հայրենիքի համար:

— Այդպիսիների կյանքն էլ մենք ենք ափսոսում:

— Ուրե՞մն:

— Ուրեմն չկա մի վերջացող կյանք, որ յուր ափսոսողները չունենա:

— Ճիշտ է, որդի, գնանք.— համաձայնվեց տ. Գոհարը և աղջկա հետ միասին մտավ տուն: Ընթրիքի ժամանակ մայր և աղջիկ լուռ էին. երկուսի լեզուներն էլ կարծես կապել կաշկանդել էր միևնույն հոգսը մայրն աղջկանն էր սպասում, որ լռությունը խլե, իսկ աղջիկը՝ մորը:

Վերջապես տիկին Գոհարը առաջինը խոսեց.

— Ես կարծում էի, թե աշխարհում մենք իրավունք չունինք մի բարեկամից ավել ունենալու, այժմ տեսնում եմ, որ այդ մեկն ունենալու իրավունքից էլ զուրկ ենք:

— Ինչպե՞ս, մայրիկ,— հետաքրքրությամբ հարցրեց օրիորդը:

— Իհարկե, որդի, մի հատ բարեկամ ունեինք, որ մեր միայնությունը սփոփում էր, նա էլ այժմ հեռանում է:

— Այդ էլ մի սկսված բան է, որ վերջանում է, չէ՞, ի՞նչ կա ափսոսալու,— ժպտալով նկատեց Աշխենը:

— Դու չե՞ս ափսոսում:

— Իհարկե ոչ. լավ կաներ, եթե մնար, բայց գնում է, ավելի լավ է անում:

— Այդ ի՞նչ է նշանակում:

— Այդ նշանակում է այն, որ եթե պ. Սարյանը մնար այստեղ, մեզ համար լավ կլիներ, որովհետև մենք մի ընտիր բարեկամ կունենայինք: Բայց, որ գնում է ավելի լավ է անում, որովհետև Թիֆլիսի նման լուսավորված քաղաքում նա կարող է առաջ գնալ, ավելի զարգանալ, հասունանալ և մի ընտանիքի փոխարեն՝ շատ ընտանիքների օգտավետ լինել:

— Այսուամենայնիվ, դու հո կցանկանայի՞ր, որ նա վերջ ի վերջո գար այստեղ:

— Ե՛ս, ինչո՞ւ համար անպատճառ ես,— մորը չհասկանալ կեղծելով հարցրեց Աշխենը:

— Այսինքն... այսինքն նրա համար, որ դու երևի կցանկանայիր, որ նա ավելի մեր քաղաքին պիտանի լիներ:

— Ա՛խ, այդ միևնույն է. Թիֆլիսի հայը նույնչափ սիրելի է ինձ համար, որչափ և իմ այստեղի հարևան հայը: Բոլորի համար էլ ես հավասար բախտ և հավասար երջանկություն եմ ցանկանում:

Տիկին Գոհարը լռեց: Վաղուց նա յուր սրտում փայփայում էր ապագային վերաբերող մի սիրելի միտք, որի իրագործման, կարծում էր, յուր աղջիկն անշուշտ փափագող է: Այս երեկո, դեպքից օգուտ քաղելով, նա կամեցավ հավաստիանալ: թե որքա՞ն ճիշտ էին յուր ենթադրությունները դստեր վերաբերմամբ: Նա անհանգստանում էր մինչև անգամ, թե չլինի երիտասարդ Սարյանի հեռանալը գաղտնի վիշտ պատճառե յուր սիրելի աղջկան. մանավանդ որ նա ինքն էլ Թիֆլիս գնալու փափագ հայտնեց այդ երեկո: Սակայն Աշխենի՝ յուր մոր խորհրդավոր հարցերին տված սառն և անտարբեր պատասխանները համոզեցին նրան, որ աղջիկն այդ. տեսակ սիրելի մտքեր չունի, որ նրա սերն ու հարգանքը դեպի Սարյանը լոկ աշակերտական է եղել: Հետևապես նա հանգիստ սրտով քաշվեց չոր ննջարանը, հավատացած լինելով, որ աղջիկն էլ իսկույն պիտի քնե յուր սովորական հանգիստ քնով:

Բայց սովորական քունը շատ ուշ մոտեցավ նորատի օրիորդի աչքերին: ճշմարիտ է, նա յուր խոսքերով հանգստացրեց մորը. բայց հետո միայնակ մնալով՝ շատ երկար զբաղվեց իրեն միայն հայտնի սիրելի մտքերով:

Դ

ՀԱՅՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վահան Սարյանի ծնողները հարուստ չլինելով հանդերձ՝ աղքատ էլ չէին:

Նրա հայր Հովսեփը թեպետ հիսունն անց՝ սակայն ի բնե ամրակազմ, դեռ բավական առողջ և վերին աստիճանի աշխատասեր մի մարդ էր: Նա պարապում էր ոչ շատ ընդարձակ գյուղատնտեսությամբ, այն է խնամում էր յուր ձեռքով տնկած չափավոր մեծությամբ խաղողի մի այգին, որից տարեկան մի երկու հարյուր ռուբլի եկամուտ էր ստանում և վարել էր տալիս սեփական աշխատանքով գնած մի քանի օրավար հողը, որից և հայթայթում էր յուր ոչ բազմանդամ ընտանիքի տարեկան հացը:

Նրա մայրը՝ Մարթան, քառասունհինգի մոտ, ամուսնու նման առողջակազմ, համակրելի դեմքով, բարեբարո և ժրագլուխ մի կին էր: Նահապետական հայ կնոջ հատուկ տնարար աշխատասիրությամբ նա յուր ամուսնու չափավոր եկամուտը կարգավորում էր այնպես, որ թե՛ ընտանիքը ապրում էր անկարոտ և թե՛ սև օրվա համար մի փոքրիկ խնայողություն էր մնում:

Բացի Վահանը, որ այս ամուսինների անդրանիկ զավակն էր, նրանք ունեին նաև Վարդուհի անունով մի գեղեցիկ և համեստ աղջիկ, որը տասնևհինգ տարեկան էր և ծնողների հաշվով արդեն հարսնացու: Եղբայրը նրան գրական արվեստի ուսում էր տալիս, իսկ մայրը տնարարական և տանտիկնության: Տասնևհինգ տարեկան հասակում այդ աղջիկն ավելի բան գիտեր տանտիկնության վերաբերմամբ, քան թե շատ ամուսնացած կանայք իրենց երեսնամյա հասակում:

Վահանի ծնողները թեպետ կրթություն չէին ստացած, բայց բնական խելքի և առողջ դատողության տեր անձինք էին: Մանավանդ հայրը մեծ համակրություն էր վայելում ծանոթների և բարեկամների շրջանում յուր ճարտար խոսելու, գեղեցիկ տրամաբանելու և առողջ դատելու շնորհունակության պատճառով: Ինքը թեպետ հին սերնդին պատկանելով միայն գրել-կարդալ էր սովորել, բայց ի բնե ուսումնասեր լինելով, որդուն զարգացնելու համար կարողության չափ աշխատել էր, այսինքն ամեն դյուրություն տվել էր նրան, որպեսզի հայոց թեմական դպրոցն ավարտել կարողանա: Զարգացման այն պաշարը, որ թեմական դպրոցն էր տալիս, նրա կարծիքով, շատ բավական էր յուր որդու համար: Իսկ ինչ դստերն էր վերաբերում, նրա ուսման չափը որոշեց այնքան, որքան եղբայրը կարող էր ավանդել: Մի երկրորդ ուսուցչի միջամտությունը նա անպայման ավելորդ էր համարում, որովհետև հարսնացու աղջկա համար, նրա կարծիքով, հինգ աստիճան պարկեշտություն, հինգ աստիճան տանտիկնության հմտություն և միայն մի աստիճան գրական ուսում էր հարկավոր:

Հովսեփը երբ դրսի կալվածներից վերադառնում էր տուն, սիրում էր կարդալ հայոց լրագիրները, որոնցից երկուսը ստանալու համար նա շարունակ զոհում էր 20 ռուբլի, ասելով, որ միայն այդ փողն է, որ կորցրած չէ համարում ինքը: Իսկ երբ յուր բացակայության ժամանակ հավաքված այդ լրագիրները կարդում, վերջացնում էր, սկսում է կարդացածների մասին փիլիսոփայորեն դատել ու վիճել որդու հետ: Այս վերջինը, մանավանդ, նրա սիրելի զբաղմունքն էր: Եվ թեպետ յուր կարծիքները միշտ որդու կարծիքներից տարբեր էին լինում և շատ քիչ անգամ էր նա նրա հետ համաձայնվում, բայց և այնպես կոշտ, կոպիտ հայրերին հատուկ համառությամբ չէր ստիպում որդուն ընդունել յուր կարծիքը կամ համակերպել յուր հայացքներին: Ամեն տարակարծիք վիճաբանությունից հետո նրա վերջին խոսքը լինում էր.— «Էհ, որդի, մենք աշխարհն այսպես ենք ճանաչել, աստված տա որ ձեր ճանաչածը լինի ուղիղ. մենք գնացողներն ենք, դուք մնացողները»:

Այսուամենայնիվ, լուրջ և կշիռ. ունեցող հարցերի ժամանակ մանավանդ երբ դրանց լուծումից կախված էր լինում ընտանեկան այս կամ այն գործի որոշումը, Հովսեփը համառում էր յուր համոզմունքների մեջ:

Սակայն Վահանը բոլոր նորավարտ ուսանողներին հատուկ մեծամտությամբ վերջին տարին արդեն խույս էր տալիս հոր հետ վիճաբանության բռնվելուց, որովհետև շատ քիչ նշանակություն էր տալիս անուսում մարդու փորձառության: Զանազան խնդիրների առթիվ հոր հայտնած կարծիքները նրան թվում էին հնացած և անգործադրելի: Բայց այն օրից արդեն, որ ընկերների հետ սկսած յուր գործունեության վերաբերմամբ հոր արած գուշակություններն արդարացան, նա սկսեց ավելի ակնածությամբ վերաբերվել դեպի հոր փորձառությունը և որոշեց առանց նրա խորհրդին ոչինչ չսկսել:

Թիֆլիս գնալու մասին էլ նա արդեն յուր դիտավորությունը հայտնել էր հորը և իր նպատակը բացատրել նրան: Հայրը չէր ընդդիմացել որդու դիտավորության, բայց նպատակն անգործնական էր համարել: Վերջին կետի վերաբերմամբ դեռ մնում էր նրանց համաձայնություն կայացնել:

Երեմյանների տնից վերադառնալուց երիտասարդն արդեն յուր վերջնական որոշումը կայացրել էր, այն է չկանգնել ոչ մի արգելքի առաջ, ո՛չ սիրո վրա մտածել, ո՛չ ծնողական ընդդիմության վրա, այլ ուղղակի դեպի ցանկալի նպատակը դիմել: Հասնելով տուն, նա գտավ յուր հորն անհամբերությամբ իրեն սպասելիս:

— Երկու օրից ետ Թիֆլիս գնացող ընկերներ կան,— ասաց նա որդուն,— սպասում էի քեզ» որ որոշումդ իմանամ. եթե գնում ես, պետք է հայտնենք նրանց, որ ընկերացնեն քեզ:

— Անպատճառ գնում եմ, հայրիկ, հայտնեցեք, բայց ովքե՞ր են դրանք

— Բարի մարդիկ. նրանց դու կտեսնես, բայց դեռ ինձ այն ասա՛, ընդունեցի՞ր իմ խորհուրդը, թե ոչ:

— Ոչ, հայրիկ, ես ծառայության մտնել չեմ կարող, ես պետք է ազատ լինեմ, որպեսզի, ինչպես ասացի, ամբողջապես նվիրվեմ իմ ազգին:

— Շատ լավ ես մտածել, որդի, բայց դու կարողացա՞ր գտնել այն միջոցը, որով մարդիկ առանց ուտելու և հագնելու կարողանում են նվիրվել ազգին:

— Այդ միջոցը որոնելու հարկ չկա: Մի կտոր ցամաք հաց և մի շալե չուխա միշտ և ամեն տեղ կարելի է գտնել:

— Ես այդ գիտեմ, բայց քո գործի օգտի համար, գոնե, դու պետք է անկարոտ կյանք ունենաս, Եթե մինչև անգամ մի կտոր ցամաք հացը դու բավական համարես աշխատության մեջ վատնած ուժերդ կազդուրելու համար, այսուամենայնիվ մի շալե չախով քեզ իրավունք չեն տալ մտնել այնտեղ, ուր որ կամենում ես կամ ուր որ պետք է գործես:

— Սխալվում ես, հայրիկ, լուսավորված երկրում ձեզ նման չեն մտածում:

— Չգիտեմ, գուցե, բայց ես կարծում եմ, որ ամեն երկրում էլ կարոտությունը ճնշում է մարդկանց և նրանց առաջ գնալու ճանապարհները փակում է:

Որպեսզի խոսքդ նշանակություն ունենա, որպեսզի քեզ չծաղրեն, որպեսզի քայլերիդ դեմ քար չնետեն, ամենից առաջ պետք է, որ անկախ մարդ լինես, իսկ անկախ լինելու համար պետք է անկարոտ լինես, ուրիշները եթե քեզ վրա հույս դնեն, դու երբեք ուրիշների վրա հույս չպիտի դնես. իսկ այդպիսի անկախություն ձեռք բերելու համար դու դրամ պետք է ունենաս: Եվ որովհետև հայրդ քեզ այդ դրամը չի կարող տալ, որովհետև չունի, ուրեմն, դու նրան պիտի ստանաս արդար վաստակով, իսկ արդար վաստակը՝ ծառայելը, տքնելը և շարունակ չարչարվելն է:

— Եթե մեր երիտասարդական ուժն ու կորովը դրամ վաստակելու աշխատության մեջ վատնենք, էլ այնուհետև ի՞նչը պետք է նվիրել մեր ազգին. մի՞թե մեր անկարող ծերությունը,— վրդովված նկատեց Վահանը:

— Ոչ, ձեր փորձառու ծերությունը, այդ գուցե ավելի օգուտ կբերի: Բայց և այնպես ինչո՞ւ ծերության սպասել, մի կողմից աշխատեցեք ձեր անձնական անկախության համար, իսկ մյուս կողմից՝ ազգի հառաջադիմության համար:

— Երկու տիրոջ անկարելի է ծառայել. մինին սիրելով՝ մյուսին պիտի ատես:

— Այդ Քրիստոսի խոսքն է: Բայց ես չասացի թե երկու տիրոջ ծառայիր, ես չասացի թե քո անձդ մի ջոկ տեր շինիր քեզ համար, տերդ թող ազգը լինի, իսկ անձդ զորացրու նրան լավ ծառայելու համար: Կույր ու կաղ ծառաներն ի՞նչ բանի են պետք և ի՞նչ կարող են շինել մի տիրոջ համար:

— Բոլորը խո փողով չի պիտի ծառայեն ազգին, մեկը փողը կտա՛, մյուսը՝ անձը, երրորդը՝ խոսքը, չորրորդը՝ գրիչը...

— Ճիշտ ես ասում որդի: Բայց փողն ու անձը տվողներն այնքան քիչ են՝ և խոսք ու գրիչ տվողներն այնքան շատ, որ ես կցանկանայի դու առաջին կարգին պատկանեիր:

Տեսնո՞ւմ ես, ես չեմ ասում չարչարվիր փող աշխատիր և փողը կուռք շինիր քեզ համար, այլ ասում եմ՝ աշխատիր, որ փող ունենաս և նրա շնորհիվ ուզածդ գործը անարգել առաջ տանես: Ճշմարիտ է, ինձ հայոց դպրոցից վկայական չեն տվել, բայց իմ ծնողները ինձ էլ այնպես հայ են ծնել, ինչպես և քեզ քո ծնողները: Չկարծես թե ես, որ ոտանավորներ չեմ գրում, քեզանից պակաս եմ իմ ազգը սիրում, ընդհակառակը, դեռ ավելի եմ սիրում: Այդ պատճառով էլ, խորհուրդ եմ տալիս քեզ, նախ պատրաստվել և ապա նվիրվել ազգիդ, իսկ այդ պատրաստությունը պիտի լինին փորձառություն և դրամական ուժ ձեռք բերելու: Առանց քեզ էլ, ինչպես ասացի, խոսքով ազգասերները շատ են, դու նրանց թվին մի՛ ավելանար:

Վահանը լռեց և սկսեց մտածել: Հոր խոսքերը նա մերթ իրավացի էր գտնում և մերթ յուր սկզբունքներին հակառակ: Երկար մտածելուց ետ նա վերջապես առերես համաձայնվեց նրա հետ: Առ երես ենք ասում, որովհետև նրա հոգին չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, թե նա կարող է երբեվիցե նյութական ապահովության համար յուր ձեռքերն ու ուղեղը աշխատեցներ:

Այսուամենայնիվ ապագայում յուր հոր սխալ կարծիքները ջրել կարողանալու համար, նա յուր հիշատակարանի մեջ կարևոր համարեց հետևյալ տողերը արձանագրել:

«188* սեպտեմբեր 6. Հայրս այն կարծիքի է, որ առանց նյութական ուժ ունենալու անկարող պիտի լինիմ ցանկացածս չափով ծառայել ազգիս: Չեմ ընդունում այս կարծիքի ճշմարտությունը և հավատում եմ, որ մարդ կարող է ծառայել յուր ազգին և մեծ օգուտներ տալ նրան նաև առանց նյութական ուժ ունենալու կամ, նույնիսկ, հետին չքավորության մեջ գտնված ժամանակ: Եվ ես այդ կապացուցանեմ, եթե բախտն ինձ չի հալածիչ»:

Երկու օրից ետ ամեն ինչ պատրաստ էր: Վահանը տեղացի մի քանի վաճառականների հետ միասին ֆուրգոնով պետք է ճանապարհվեր Թիֆլիս:

Նա գնաց յուր վերջին հրաժեշտը տալու տիկին և օրիորդ Երեմյաններին:

— Ձեր հեռանալը մեզ տխրություն պիտի պատճառե,— ասաց տիկին Գոհարը,— որովհետև սովոր էինք ձեր ազնիվ ընկերակցությանը: Ձեզանից ետ մենք գրեթե միայնակ ենք մնում, որովհետև ձեզ նման ընկեր էլ չենք կարող գտնել մեր ծանոթների շրջանում:

— Ես էլ ձեզ չափ վշտանում եմ,— պատասխանեց երիտասարդը,— որովհետև հաստատ գիտեմ, որ ուր էլ գնամ, ում հետ էլ որ բարեկամանամ, այսուամենայնիվ, Երեմյանների ընտանյաց բարեկամությունը չի պիտի վայելեմ:

— Սխալվում եք, դուք այնպիսի տեղ եք գնում, ուր մեզանից ավելի լավ մարդիկ շատ կան,— նկատեց տիկին Գոհարը:

— Եթե մինչև անգամ բոլոր ինձ պատահածները ձեզանից տասն անգամ ավելի լավերը լինին, դարձյալ ես ձեզ մոռանալ չեմ կարող:

— Այո՛, մի՛ մոռանաք և շարունակ նամակ գրեցեք,— ասաց տիկին Գոհարը,— հայտնեցեք մեզ, տեսնենք թե Թիֆլիսը ո՞ր աստիճան ձեր երևակայածի և ճաշակի համաձայն գտաք, թե այնտեղի հայերը և ազգային հաստատությունները ո՞ր աստիճան արժանի են իրենց համբավին, թե ձեր գործունեության համար ի՞նչ ճանապարհ ընտրեցիք:

— Իսկ դուք, ոչինչ չունի՞ք ինձ ասելու,— ժպտալով դարձավ երիտասարդը օրիորդ Աշխենին, որ նուրբ և խորհրդավոր ժպիտը երեսին՝ անխոս կանգնած լսում էր իրեն:

— Ե՞ս. ոչ մի առանձին ասելիք չունիմ,— պատասխանեց օրիորդը խաղաղ ժպտալով.— միայն ձեզ բարի ճանապարհ և ձեր գործերին անվերջ հաջողություն եմ մաղթում: Ուրախ եմ, որ գնում եք, թեպետ տխրելու էլ իրավունք ունիմ, որովհետև բաժանվում եք մեզանից: Բայց որ գնում եք գործելու, գնում եք ազգային անդաստանում աշխատելու, ուրախությունս ավելի մեծ է: Հոգ չէ թե մինչև անգամ մեզ մոռանաք: Այդ մոռացումը, ճշմարիտ է, մեզ վիշտ կպատճառե. բայց թե օգտավետ գործերով զբաղված լինելու պատճառով մոռանաք, այդ մեզ կմխիթարե:

— Եթե ճշմարիտ է, որ ես անկարող եմ իմ քրոջն ու ծնողներին մոռանալ, ապա ճշմարիտ է և այն, որ ես չեմ կարող մոռանալ նաև ձեզ,— ջերմությամբ պատասխանեց երիտասարդը:

— Խոստացեք, ուրեմն, որ ազգային բոլոր գործերին ու գործողներին ծանոթանալուց ետ, եթե նրանց շրջանի մեջ գտնեք մի անկյուն, որ իմ գործունեությունս կարող է պիտանի լինել, դուք այդ կհայտնեք մորս:

— Ամենայն ուրախությամբ. բայց նպատակի պիտի ծառայե այդ հայտնությունը:

— Այն ժամանակ ես կաշխատեմ, որ իմ Աշխենը բերեմ Թիֆլիս,— հարեց իսկույն տիկին Գոհարը, դստեր միտքը հասկանալով.— եթե նա կարող է գործել, ես արգելք չեմ լինիլ նրան:

— Ազնիվ և բարի մայր եք,— ոգևորված բացականչեց երիտասարդը,— ուրեմն կաշխատեմ, որ ձեր այդ գեղեցիկ ցանկությունն իրագործվի» — Եթե աշխատեք, շնորհապարտ կլինեմ ձեզ, ինչպես որ էլ եմ իսկապես,— անուշ ժպտալով պատասխանեց օրիորդը:

— Անպատճառ կաշխատեմ,— ասաց երիտասարդը և ապա յուր հրաժեշտի ողջույնը տալով, որդիական սիրով համբուրեց տիկին Գոհարի աջը և ջերմությամբ օրիորդի ձեռքը սեղմելով՝ հեռացավ:

Մի քանի քայլ փոխելուց ետ, երբ նա գլուխը դարձրեց, որ վերջին անգամ յուր բարեկամուհիներին ողջունե, տեսավ, որ օրիորդի աչքերում թաքչող արտասուքի կաթիլներ են փայլում...

Երիտասարդի սիրտը հուզվեց. քիչ էր մնում, որ նա ոտքերը կասեցներ կամ մի անպատեհ շարժումով սրտի հանկարծական հուզումը հայտներ, բայց խելքը հաղթող հանդիսացավ, և նա միայն մի քաղցր ու խորհրդավոր ժպիտով պատասխանեց թաքչող արտասուքին և հեռացավ:

Ե

ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱ

Մեղմով փչող քամուց կտավե ծածկոցներն ուռցրած, ինչպես փոքրիկ առագաստավոր մակույկներ, շարունակ օրորվելով, դանդաղելով և ամեն մի քար ու խճի պատահելուց բարձրանալով ու գետնի վրա թրխկալով՝ առաջ էին գնում Բեյլուցի թուրքերի ապրանքով և ուղևորներով լի ֆուրգոնները (բեռնակառք): Քառալուծ ձիերի վզերից ու քունքերից կախված բազմաթիվ բոժոժներն անվերջ ու միատեսակ ղողանջում էին՝ ուղևորներից ոմանց ձանձրույթ և շատերին հաճույք պատճառելով: Ագահ կառատերերը, վստահանալով ձիաների ուժին, այնքան էին բարձել կառքերը, որ նրանց մեջ ուղևորների համար գրեթե ազատ տեղ չէր մնացել: Նրանցից շատերը

նստած էին կռացած և շարունակ զգուշանում էին, որ բեռնակառքի օրորվելու ժամանակ՝ գլուխները նրա ծածկարանի վանդակներին չդիպչեն և գագաթներն ուռուցով ու պալարներով չպատեն: Խեղճերի դրությունն անտանելի էր լինում, մանավանդ, երբ ծանրամարմին բեռնակառքերն անցնում էին գետերի կամ ցամաքած հեղեղատների միջով, որոնց անկողինը, ինչպես հայտնի է, խճողված է լինում լպրծուն ու ջրամաշ քարերով: Այսպիսի ժամանակ ֆուրգոնները ոչ թե օրորվում, այլ ուղղակի ոստոստում էին, և ա՛յն այնպիսի անհանգստացնող տատանումներով, որ ուղևորն յուր չարատանջ մարմինն անկարող էր լինում կառավարել: Որովհետև երկու ձեռքով փորն ու կողերը բռնելով՝ բնականաբար, անխնամ էր թողնում գլուխը, որն յուր կարգին աջ ու ձախ տատանելով՝ զարկում էր մերթ ծածկարանի վանդակներին և մերթ հարևան ուղևորի նմանաչարչար գլխին: Իսկ սրա դերը, նայելով թե հարվածողն է ինքը, թե՞ հարված ընդունողը, կամ ծիծաղում և կամ վշտահար հեծում էր: Ըստ որում ընդհարման բնական օրենքով երկու իրար զարկող գլուխները միատեսակ չեն զգում ցավը: Միշտ պինդ զարկողը, իբրև հարվածող, ազատ է լինում ցավից, ուստի և ծիծաղում է. մինչդեռ հարված ընդունողը ստիպված է լինում հեծել: (Ասենք թե միայն նեղ ֆուրգոններում չէ այդպես, նույնիսկ մեր ընդարձակ աշխարհում՝ լաց լինելու և ծիծաղելու համար՝ մարդիկ միշտ միևնույն օրենքներին են ենթարկվում...):

Այս անհանգստացնող հանգամանքները շատ անգամ զրկում էին ուղևորին նաև ճանապարհի վրա հանդիպող բնության գեղեցիկ տեսարանները դիտելուց: Իսկ այդպիսի տեսարանները բազմաթիվ էին: Որովհետև երկարաձիգ խճուղին, որի վրայից դղրդալով ու գրգռալով առաջանում էին ֆուրգոնները, անցնում էին մերթ լայնանիստ և ուղղատարած դաշտերի միջով, որոնց աշնանային տամուկ եղանակները նորից կանաչեցրել ու գեղեցկացրել էին, մերթ մռայլ ու բարձր լեռների ստորոտով, որը ծածկված էր լինում ծառախիտ անտառով, և մերթ քերում էր բլուրների կողերը կամ գետերի ու ձորակների եզերքը, որոնք պատած էին լինում գորշ-կանաչագույն կամ արդեն դեղնող մացառուտներով: Մի տեղ լսվում գետի կարկաչը, մյուս տեղ ջրվեժի սիրուն շառաչը, իսկ մացառուտներում՝ թևավորների երգն ու աղմուկը:

Այսուամենայնիվ, մեր ծանոթ Վահան Սարյանը, որ յուր ընկերակիցների հետ միասին ֆուրգոններից մեկի մեջ էր գտնվում, չէր նեղանում բեռնակառքի պատճառած անհանգստություններից: Նրա համար ամեն ինչ նոր էր, հետևապես դեռ հետաքրքրական: Նա դրանից ավելի հանգիստ կառքերով չէր ճանապարհորդել, ուստի չէր էլ գանգատվում յուր վիճակից, ինչպես և առհասարակ չեն գանգատվում այն աղքատները, որոնք իրենց բոլոր կյանքում միշտ միևնույն խրճիթումն են ապրում և միևնույն ցամաք հացով ու ջրով սնանում առանց փարթամության ճաշակը երբևիցե առնել կարողանալու:

Բացի այդ, երիտասարդ Սարյանը դեռևս զբաղված էր յուր սրտին ու հոգուն ավելի մոտ և ավելի սիրելի մտածմունքներով: Ինչպես որ բեռնակառքի ոստյունները չէին նեղացնում նրան, այնպես էլ շրջապատող բնության գեղեցկությունները չէին զվարճացնում: Նա դեռևս հոգով յուր հայրենի քաղաքում, յուր սիրելիների մոտ էր գտնվում: Չնայելով որ վաղուց քաղաքի պարիսպներն ու աշտարակները ծածկվել էին նրա աչքերից, վաղուց ծանոթ դաշտերն ու լեռները անհետացել, այսուամենայնիվ նա հաճախ հանում էր գլուխը բեռնակառքի ծածկարանի վանդակներից և կտավե ծածկոցը բարձրացնելով, նայում էր դեպի այն ճանապարհը, որն անցել էին, դեպի այն բլուրներն ու լեռները, որոնք հայրենի քաղաքը ծածկում էին յուր աչքերից:

Բայց մի՞թե նա քաղաքի պարիսպներն ու աշտարակներն էր որոնում, հին դարերի ռազմական այդ տխուր մնացորդները. իհարկե ոչ. նա որոնում էր նրանց մեջ այն տունն ու տանիքը, ուր յուր մանկությունն անցուցել, ու ծնողական սերն ու գգվանքը վայելել, ուր շատ անգամ տխրել և շատ անգամ ուրախացել էր և որից այժմ արագ-

արագ հեռանում էր: Նրա աչքի առաջ դեռ կանգնած էր հայրը յուր բարձր հասակով, հանգիստ ու ակնածալի դեմքով, քաղցր ու համոզկեր ձայնով. նա մտաբերում էր նրա խրատները, նրա խորհուրդները և մի քանի ժամ առաջ, արտասուքի մեջ խեղդվող ձայնով, իրեն տված հրաժեշտի ողջույնը: Նրա առջևն էր ժիր ու աշխատասեր մայրը, միշտ ուրախ ու ժպտող երեսով, շարունակ գործի ետևից, երբեմն կռները սոթտած տան տնտեսական մասում, երբեմն կարուձևի առաջ նստած՝ անընդհատ աշխատելիս: Նրա աչքի առջևն էր քնքուշ ու գեղեցիկ քույրը, ամաչկոտ աչքերով, միշտ շիկնող դեմքով, մերթ գիրք կարդալիս, մերթ անկված գործելիս և շատ անգամ մոր գործին օգնելս: Նա հիշեց հանկարծ և յուր հեռանալու րոպեին նրանը թափած արցունքները, նրանց հեկեկանքը, նրանց ջերմ և սրտագին գրականությունը և յուր աչքերն էլ արտասուքով լցվեցան: Բայց ուղեկիցներից ամաչելով երեսն ուրիշ կողմը շրջեց և սկսեց հեռու հորիզոնը դիտել, մինչև որ հոգեկան հուզմունքն անցավ:

Բայց հազիվ թե նրա աչքից հայրենական տան ու ընտանիքի պատկերը հեռացավ, և ահա նրան մի ուրիշը հաջորդեց: Նրա առաջ արձանացավ օրիորդ Աշխենը յուր նազելի հասակով, յուր սիրուն դեմքով և հրաժեշտի րոպեին արտասվող աչերով: Երիտասարդին թվում էր, թե դեռ լսում է Նրա քնքուշ ձայնը. յուր ականջներին դեռ հնչում էին նրա խոսքերը. «Ձեզ բարի ճանապարհ և ձեր գործերին անվերջ հաջողություն... տխրելու իրավունք ունիմ, որովհետև բաժանվում եք մեզանից... եթե մեզ մոռանաք, պիտի վշտանանք, բայց եթե օգտավետ գործերով զբաղված լինելու պատճառով մոռանաք՝ այդ մեզ կմխիթարե...»:

Այս և սրանց նման խոսքերը նա մտաբերում, որոճում, քննում և նրանց նշանակության մասին զանազան ենթադրություններ էր անում: «Իսկ այն վերջին հայացքը, նրա աչքե՞րը... չէ՞ որ արտասուքով էին փայլում. — գրեթե հիացած մտածում էր երիտասարդը.— և այդ արտասուքը չէ՞ որ ինձ համար էր, իմ հեռանալուս համար... Օ՜հ, բայց եթե ես սխալված եմ... եթե իմ աչքերն ինձ խաբեցին... բայց ո՜չ, ո՜չ. ես պարզ տեսա, միայն թե կարողանայի գուշակել, թե ի՜նչ արտասուք էր նա, ի՞նչ զգացմունքների հայտարար...»:

— Սիրելիս, դու շատ ես տխուր, երևի մորդ շինած գաթաները միտդ են ընկել,— ծիծաղելով ու խռպոտ ձայնով դարձավ երիտասարդին ընկեր ուղևորներից մինը, որին շիրաջ-Մանաս էին անվանում: Սա թեպետ Վահանի հայրենակիցն էր, բայց ապրում էր Թիֆլիսում և պարապում գինեվաճառությամբ: Հաճախ վերադառնում էր հայրենիք գինի գնելու համար: Ինքն ուրախ, առողջ, կարմիր երեսով, հաստ փորով, կարճահասակ մի մարդ էր: Վահանի հայրը հանձնարարել էր նրան, որ ճանապարհին հոգածություն ունենա յուր որդու վրա, ինչպես մի փորձառու մարդ, և ահա նա կատարում էր հանձնված պարտավորությունը, աշխատելով զբաղեցնել երիտասարդին:

— Տխուր չեմ. միայն մտածում եմ,— պատասխանեց Վահանը թեթև շառագունելով:

— Է՜հ, հե՜ր օրհնած, ի՞նչ ունիս մտածելու, քառասուն տարի է ապրում եմ աշխարհում և ոչ մի անգամ չեմ մտածել,— ծիծաղելով վրա բերավ շիրաջը:

— Ինչպե՞ս անեմ, որ ես էլ կարողանամ չմտածել.—հարցրեց ժպտալով երիտասարդը:

— Կե՜ր, խմի՜ր, երգի՜ր, պարի՜ր,— պատասխանեց շիրաջը:

— Իսկ երբ արդեն կո՜ւշտ եմ լինում, և երգելս ու պարելս չի գալի՜ս:

— Այն ժամանակ քնիր:

— Իսկ եթե քունս չի՞ տանում:

— Էհ, այն ժամանակ էլ ո՞ւր ես ապրում, հեր օրհնած, գնա ջուրն ընկիր ելի,— վրա բերավ շիրաջը և ուրախ-ուրախ ծիծաղեց:

Վահանը և նրա ընկերները նույնպես ծիծաղեցին: Շիրազը տեսնելով, որ երիտասարդի տխրությունն անցավ, շարունակեց յուր կատակները:

— Տես, բարեկամ, այդպես կնճռած ճակատով Թիֆլիս չմտնես. այնտեղ մարդիկ ո՛չ տխրում են, ոչ էլ տխուր մարդկանց սիրում են: Քեզ որ այդպես տեսնեն, անցագրիդ ետքին կգրեն, թե այս մարդը նաս է ու կհանձնեն համքյարներին:

— Հետո համքյարներն ի՞նչ կանեն ինձ,— հարցրեց Վահանը ծիծաղելով:

— Առաջ կստիպեն, որ մի ամիս շարունակ օրական մի թունգի գինի խմես, եթե խմեցիր՝ լավ, եթե ոչ կհանձնեն պոլիցիային:

— Իսկ պոլիցիան ի՞նչ կանի:

— Ինչ պիտի անի. ետ կդարձնեն քեզ քո մոր մոտ, որ գնաս նրա թխած գաթաներն ուտես:

— Բայց դու Քուռն անցնելը մոռացար, պարոն Մանաս, — ակնարկեց շիրաջուն մի ուրիշ ուղևոր:

— Հա՛, իրավ, Քուռն անցնելը մոռացա, ինչ լավ եղավ, որ հիշեցրիք:

— Ինչպե՛ս թե Քուռն անցնելը մոռացար. պետք է սնցնեիր ու չանցա՞ր,— հարցրեց Վահանը ժպտալով:

— Չէ, հարցն իմ անցնելուն չի վերաբերում, այլ քո անցնելուն:

— Ինչպե՞ս թե իմ անցնելուն:

— Առաջին անգամ պետք է Քուռն անցնես, չէ՞:

— Այո առաջին անգամ:

— Դե, ուրեմն բանդ բուրդ է:

— Ինչպե՛ս թե բանս բուրդ է,— հարցրեց Վահանը կարծես մի փոքր վախենալով.

— Վա՛, հապա, կարո՛ղ ես Քռի այս ափից մինչև այն ափն անցնելը մեկ գլուխ ծիծաղել:

— Ի՞նչ հարկավոր է ծիծաղել:

— Էհ, որ չգիտես, ի՞նչ ասեմ, երևի դեռ ուսումնական էլ են անվանում քեզ:

— Իհարկե, ուսումնական եմ:

— Հապա, որ ուսումնական ես, քո գրքերում չես կարդացել, թե Քուռն ի՞նչ զորություն անի: — Ի՛նչ զորություն պիտի ունենա, եթե մեջն ընկնես, կքշի կտանի էլի:

— Էհ, ուրեմն, ամենից մեծ գիրքը մոռացել ես կարդալու:

——— Ուրիշ ինչ պետք է կարդայի,— հարցրեց երիտասարդը:

— Պետք է կարդայիր այն, որ Քռի մեջ մարդ կուլ տվող ձկներ կան, եթե Քռից անցնողն այս ափից սկսած մինչև մյուս ափը հասնելը մեկ գլուխ ծիծաղում է, նրան չեն մոտենում. իսկ եթե մի որպե լռում կամ քեզ պես տխրում է, իսկույն վրա են վազում ու կուլ տալիս նրան: Վահանը և ընկերները սկսեցին ծիծաղել:

— Այստեղ մի ծիծաղիր, բարեկամ, ծիծաղդ կվերջանա,— խոսեց կրկին շիրաջ-Մանասը:

— Դու որ ինձ հետ ես, չի վերջանալ,— պատասխանեց երիտասարդը:

— Իսկ եթե վերջանա, գիտե՞ս ինչ պիտի անես,— մեջ մտավ մի ուրիշ ուղևոր:

— Ոչ չգիտեմ:

— Պետք է ձեռքումդ մի իշի ծնոտ ունենաս, որ ձուկը վրա վազելուց բերանը խրես:

— Հա, հա, տղերք, մի իշի ծնոտ անպատճառ գտեք, որ մեր Վահանը Քուռն անցնելուց ձեռքումն ունենա,— վրա բերավ շիրաջը մի առանձին լրջությամբ:

— Գտեք, բարեկամներս, գտեք, իշի ծնոտը միշտ հարկավոր է, եթե Քռի վրա մարգ կուշ տվողներ չպատահեն, ուրիշ տեղեր անպատճառ կպատահեն,— փիլիսոփայորեն նկատեց Վահանը:

— Ա՛յ, հիմա հավատում եմ, որ ուսումնական ես,— ասաց շիրաջ-Մանասը.— երևի Սամփսոն մարգարեի պատմությունը կարդացել ես: Տեսնո՞ւմ ես, եթե նա էլ գրպանում իշի ծնոտ չունենար, փղշտացիները նրան կուլ կտային:

— Սամփսոնը մարգարե չէր. բայց դու որտեղի՞ց գիտես նրա ու նրա թշնամիների անունը,— հարցրեց Վահանը զարմացած:

— Հեր օրհնած, դու հենց կարծում ես թե իմ գինետնում տնում մենակ տգետ մարդիկ են գինի խմում, մի բարեկամ տերտեր ունեմ, որ ամեն երեկո մինչև ինձ մոտ երեք բաժակ գինի չխմի, ժամից տուն չի վերադառնալ. այ, նա է ինձ այդ բաները սովորեցնում:

Այս և սրա նման կատակներով ու զրույցներով մեր ուղևորները շարունակում էին իրենց երկար ճանապարհը: Օրը մի երկու անգամ կանգ էին առնում նախաճաշելու և ճաշելու համար: Երեկոյաններն իջնում էին զանազան գյուղերում կամ քարվանսարաներում գիշերելու համար: Ամեն տեղ էլ ուրախ ու զվարթ սրտով բանում էին պաշարները, ուտում, խմում, երգում և շատ անգամ էլ պարում էին:

Բաքու-Թիֆլիսյան երկաթ ուղին դեռ չէր բանում, գավառական քաղաքներից կառքերով ու ֆուրգոններով էին գնում Թիֆլիս: Միջին և աղքատ դասակարգի մարդիկ, մանավանդ, վերջին տեսակի բեռնակառքերն էին գերադասում, որովհետև նրանք ավելի աժան և ձեռնտու էին, ևս առավել մեծ ծանրություն ունեցող ուղևորի համար:

Մեր բարեկամ Վահանին, սակայն, այս ճանապարհորդությունն ավելի հետաքրքրեց, քան թե ինքը սպասում էր: Շուտով նա դադարեց մտածել հայրենի քաղաքում թողած սիրելիների մասին և շարունակ զբաղվում էր յուր ընկերներով, մանավանդ որ վերջիններս, իբրև ավելի հասակավորներ, առանձին ուշադրություն էին դարձնում նրան ուրախացնելու: Բացի այդ, երիտասարդին շատ զբաղեցնում էին գիշերային իջևանները: Այդ տեղերում նա ոչ միայն հետաքրքրության, այլև ուսումնասիրության

արժանի շատ երևույթների էր հանդիպում, որոնք նրան թե զվարճացնում և թե լրջորեն մտածել էին տալիս:

Ահա՛, օրինակ, օրը տարաժամել, մութը կոխել է: Հարթ ու սպիտակ խճուղին հազիվ է նշմարվում, ձիաները հոգնել ու քրտնքի մեջ կորել են. ուղևորները խոսելուց կամ կատակներ անելուց ձանձրացած ոմանք լուռ ու մունջ նստած են, ոմանք պայուսակների վրա կռթնած, ոմանք պառկած են կամ խոր քուն մտած: Կառավարը նույնպես երբեմն նիրհում և երբեմն սանձերը շարժում կամ մտրակով ձիերին խփում է. շատ անգամ սուլելով կամ թռչնի նման ճվճվացնելով սիրտ է տալիս նրանց: Իսկ բեռնակառքը միևնույն ծանրությամբ շարժվում, միևնույն դղրդյունով առաջանում է առանց յուր անիվների գրգռոցի վրա մի նոր ձայն ավելացնելու կամ եղածից մի բան պակասեցնելու:

Հանկարծ կարավանի առաջընթաց բեռնակառքից լսվում է թուրք կառավարի հաստ ու խռպոտ ձայնը. «հոլթ»: Սա կառքերը կանգնեցնելու նշանաբանն է, որը անտարակույս գերմանացի կառապանների գործածած halt (կանգնեցրու) բառն է: Ֆուրգոնները կանգնում են: Նրանք արդեն հասել են իջևանը: Բայց ներս մտնելու ճանապարհը փակել են բազմաթիվ սայլեր, կառքեր, ձիաներ. պետք է սպասել, մինչև որ բոլորը ներս մտնելով ճանապարհը բացվի: Վերջապես ամենքը շարժվում են աջ ու ձախ. ֆուրգոնների համար էլ ճանապարհ է բացվում, նրանք էլ ներս են մտնում:

Բայց ի՞նչ բան է այս ֆուրգոնների իջևանը:— Մի ընդարձակ տարածություն, բարձր ցանկապատով պատած, որի աջ կամ ձախ կողմի երկարությամբ շինված է լայն և երկար ծածկարան, ուր մտնում են ֆուրգոններն իրենց ձիաներով: Ցանկապատի տարածության մի ուրիշ մասի վրա շինված են մի քանի կրպականման սենյակներ, որոնց մեջ իջևանում են ուղևորները: Այդ սենյակներից ամենամեծի մեջ զետեղված է իջևանի խանութը, որը թե գինետուն է, թե՛ մառան, թե՛ զենարան և թե իսկապես մանրուքի խանութ: Այստեղ մի անկյունում դրված են գինու և օղիի տակառները, մյուսում դարսված է ուտելեղենի պաշարը, մի տեղ կախված են ոչխարի կիսաններ, մի ուրիշ տեղ շարված են ոգելից ըմպելիների շշեր, սրվակներ, ծխախոտի ու լուցկիների տուփեր, արկղիկների մեջ շաքար, թեյ, մոմ, սապոն, ճրագու, թել, իսկ ճանապարհորդի համար պիտանի ուրիշ շատ մանր ապրանքների հետ միասին նաև միրգ ու կոնֆետներ: Շատ բան, իհարկե, արդեն փոշոտված, շատ իրեղեններ ճանճերից կեղտոտած, բայց բոլորն էլ խանութատիրոջ և յուր հաճախորդների համար անպայման պիտանի:

Եվ ահա ուղևորները խռնվում են խանութպանի սեղանափակի առաջ և նրանցից յուրաքանչյուրը գնում որ իրեն հարկավոր իրեղենները, դրանց մեջ են ոչ միայն ֆուրգոնով եկողները, այլև սայլորդ, ձիավոր և հետիոտն ուղևորները, իրենց զանազանակերպ դեմքերով, ձայներով, նայվածքներով և բազմատարազ հագուստներով: Նրանցից ոմանք միս, գինի կամ օղի են գնում, ոմանք հաց ու պանիր, ուրիշները թեյ, շաքար, ծխախոտ և այլն: Քիչ ժամանակից ետ ինքնաեռները եռում, խորոված ները խորովում և սփռոցները բացվում են: Սկսվում է կեր ու խումը, խոսքն ու ծիծաղը, երգն ու պարը և երբեմն էլ տուրուդմփոցը:

Թուրք կառապանները ուղևորների հետ չեն: նրանք հավաքված ֆուրգոնների մոտ թե՛ պահպանություն են անում ապրանքին և թե՛ իրենց ծառաների հետ առանձին խումբ կազմած՝ վառում են մեծ ու չաղ կրակ, նստոտում են նրա շուրջը, երբեմն ծալապատիկ, երբեմն քարերի վրա կկզած և շարում կրակի առաջ ծխից ու մրից սևացած. պղնձե թեյնոցները (չայդան): Շուտով ջուրը եռում ու պլպլում է: Կառապանն առանձին հոգածությամբ բանում է փոքրիկ պայուսակը, հանում է թեյը և մի քանի պտղունց թափում թեյնոցի մեջ: Մինչև որ սա կպատրաստվի, սկսում է յուր ձեռքով կոտրտել նույն պայուսակում խնամքով պահված շաքարի փոքրիկ կտորը: Եվ ապա հիշելով, որ

յուր ստամոքսին ծառայելուց առաջ աստծուն պիտի գոհություն մատուցանե, շտապում է սովորական նամազը կատարել: Այնուհետև ժամեր են անցնում, մինչև որ դրանք ծանր ու բարակ խոսելով և չիբուխները փստացնելով ավարտում են իրենց սակավապետ ընթրիքը:

Ահա՛ հենց այդ միջոցներում, երբ կառապաններն առանձնացած՝ իսկ ուղևորներն աղմկարար ուրախությամբ կամ երգ ու պարով զբաղված են լինում, բակի մի ուրիշ անկյունում կամ ախոռների առաջ լսվում է տուրուդմբոցի շշուկը: Դրա պատճառը շատ անգամ լինում է այն, որ աղքատ ուղևորներից մինը գողանում է մյուսի ձիու, ջորու կամ իշի բաժին գարին և ածում է յուր գրաստի առաջ: Զրկանք կրողն յուր անասունի գլխին հասած չարիքն իմանալով՝ հետամուտ է լինում գողին և գտնում նրան: Եվ, ահա: աղբով ու ցեխով պատած բակի մեջ ըմբիշները սկսում են իրենց մենամարտությունը: Նախ ապտակներ է, որ տալիս են միմյանց, հետո կռուփներ են իջեցնում իրար մեջքի, կրծքի, գլխի կամ երեսի վրա: Ամենից վերջն իրար գրկելով ու մեկը մյուսին տապալել ճգնելով, երկուսն էլ գլորվում ու թավալվում են ցեխի կամ աղբի մեջ: Շրջապատողները, որոնք հետզհետե բազմանում են, մի որոշ ժամանակ հանդիսատես լինելուց և կռվողներին իրար դեմ գրգռելուց ետ՝ վերջապես բաժանում են նրանց:

Երիտասարդ Վահանը բոլոր այդ տեղերը շրջում, բոլոր խումբերին այցելում էր և երկար ամեն մեկի մոտ կանգնելով՝ լսում էր նրանց զրույցները, դիտում էր զվարճությունները, կամ վեճն ու կռիվը, և այդպիսով ծանոթանում կյանքի այնպիսի կողմերի հետ, որոնք մինչև այն անծանոթ էին իրեն:

Դժբախտաբար այդ ծանոթությունը տխրեցնում էր երիտասարդին: Նա ցավելով տեսնում էր, որ այդ բազմաթիվ և բազմազան հայ ուղևորների մեջ, չհաշվելով, իհարկե, գռեհիկներին, այլ նրանց, որոնք աշխարհ տեսած, հայտնի առևտրական կամ պաշտոնի տեր անձինք էին, չկա գոնե մեկը, որ մտածեր ու դատեր այնպես, ինչպես ինքն էր կամենում, կամ հետաքրքրվեր այն խնդիրներով, որոնք սիրելի էին իրեն: Բոլորի թե՛ խոսակցության և թե՛ վիճաբանության առարկան ամեն տեղ և ամեն ժամանակ նախ փուլը և ապա ստամոքսն էր: Նույնիսկ այդ մարդկանց ուրախությունն ու կռիվն այս երկու առարկաների շուրջն էին պտտում, քիչ չէր և նրանց թիվը, որոնք փողի և ստամոքսի մասին խոսելիս ոգևորվում և հափշտակվում էին:

Սակայն երիտասարդը հավատում էր, որ քանի լուսավորության կենտրոնին մոտենա, այնքան իջևաններում ավելի հասկացող, ավելի քաղաքակրթված և ավելի նրբաճաշակ մարդկանց պիտի հանդիպի:

Դժբախտաբար նրա այդ հույսը չարդարացրեց նույնիսկ հռչակավոր Սոզանլուխը, որ վերջին իջևանն էր: Այդտեղ նա պատահեց բուն թիֆլիսեցի լայն շալվարներով, արծաթյա հրեշավոր գոտիներով, մորթու գլխարկներ դրած, սրակրունկ կոշիկները հագած, արխալուղների կրծկապը ետ ծալած, թևքերնին սոթտած, տարօրինակ բարբառով ու շարժվածքով ճայերի, որոնք խանութների առաջ նստած դհոլ ու զուռնայով քեֆ էին անում, այսինքն քիչ ուտում, շատ խմում և շարունակ պարում էին:

Վահանն արդեն հետաքրքրությամբ դիտում էր քեֆ անողների պարը, երբ շիր շիաջ-Մանասը մոտենալով նրան ասաց.

— Հիշո՞ւմ ես, որ քեզ ասացի, թե թիֆլիսեցիք ուրախ մարդիկ են:

— Հիշում եմ,— պատասխանեց երիտասարդը:

— Ուրեմն սուտ չե՞մ ասել:

— Այդ մեկը ճիշտ ես ասել:

— Հապա ո՞րը չեմ ճիշտ ասել:

— Ա՛յն, որ ասացիր թե՝ Քռից մարդ կուլ տվող ձկներ պիտի դուրս գան, բայց դուրս չեկան,— ծիծաղելով նկատեց երիտասարդը:

— Սպասիր, բարեկամ, սպասիր. այդ ձկներն էլ դուրս կգան, միայն թե Թիֆլիսի միջից անցնող Քռից և ոչ ուրիշ տեղից,— խորհրդավոր ձևով գլուխը շարժելով խոսեց շիրաջը:

— Սրանք այն ձկներից չե՞ն,— ծիծաղելով մատնացույց արավ Վահանը քեֆ անողների վրա:

— Ափսոս չե՞ն, ի՞նչ ես ասում, դրանք Թիֆլիսի ծաղիկներն են, դարդիմանդ» տղերք են,— նկատեց շիրաջը, և դեռ խոսքը չէր ավարտել, որ քեֆ անողներից մի երկուսը տեսնելով նրանց՝ «օ՜, օ՜ , Մանասը բարով, Մանասը բարով» բացականչեցին և վազելով եկան նրան հրավիրելու: Չնայելով որ շիրաջը շատ ընդդիմացավ, բայց քեֆ անողները թե՛ նրան և թե՛ ընկերոջը զոռով քարշ տվին իրենց մոտ:

Շիրաջը իբրև գինեվաճառ, ի պաշտոնե ստիպված էր մի քանի բաժակ միմյանց վրա դատարկելու, բայց Վահանը հազիվ մեկը կիսեց: Երբ նրանք վերադարձան՝ ընկերներն արդեն ֆուրգոնում շարված սպասում էին իրենց: Ուղևորվելուց առաջ երիտասարդ Սարյանն անհրաժեշտ համարեց յուր հիշատակարանի մեջ հետևյալ տողերը արձանագրել.

«188* սեպ. 15. Ութ օր շարունակ ապրեցի ճանապարհին, ծանոթացա տեսակ-տեսակ մարդկանց հետ. դիտեցի նրանց մտածելու և գործելու եղանակը, որից եկա այն եզրակացության, որ փողն ու ստամոքսը նույնպես կուռքեր են, որոնք իրենց երկրպագուները ունին, միայն թե այնպիսի կուռքեր, որոնց եթե անարգես, բարեկամներդ կշատանան, եթե մեծարես՝ թշնամիներդ: Պատճառը պարզ է: Ոչ ոք չի կամենում, որ յուր բաժնի վրա ընկերոջ աչքը նայե, մինչդեռ ամենքը կամենում են, որ ընկերն յուր ունեցածն իրենց բաժանե: Ո՞վ ունի արդար իրավունք, իմ կարծիքով և ոչ մեկը»:

Զ

ԱՐԴԱՐ ՔՐՏԻՆՔՈՎ ԱՊՐՈՂՆԵՐԻ ԹԵՅԱՐԱՆԸ

Կովկասյան մայրաքաղաքի բնական առավելություններից ու դյուրություններից մեկն էլ այն է, որ ասիացի մարդը, եթե այդ քաղաքի մաքուր փողոցների վրա գտնվող շքեղ հյուրանոցներում կամ ապարանքներում ապրելուց ձանձրանա (որ շատ է պատահում ղարադաղցի, սալմաստցի կամ օրդուբադցի հանկարծ հարստացող և Թիֆլիս գաղթող հին փինաչիների հետ), այդպիսին կարող է մի քանի վայրկյանում տեղափոխվել յուր հայրենական ծննդավայրը: Դրա համար հարկավոր է միայն գնալ Թիֆլիսի հին քաղաքամասը, ուր հանքային բաղանիքներն են: Այդտեղ աջ ու ձախ անցնող փողոցների վրա ապրում է Պարսկաստանը յուր բոլոր ակնապարար հրապույրներով: Մի տեղ դուք կտեսնեք միաշար խանութներ, որոնց մեջ թավրիզցի թուրքերը գերծած գլուխներով, կեղտոտ գոգնոցներով, նարգիլեի պտուկը բերաններին, զանազան համադամներ են պատրաստում, ինչպես, օրինակ, փլավ, բոզբաշ, ղավուրմա, տոլմա կամ գլուխ գործոց լյուլաքյաբաբ: Այդ խանութները աշպազխանաներն են (խոհակերոց), ուր մոթալ փափախներով, շարիշար նստած,

վայելում են խորտիկները, սարըցի կամ թարաքյամա թուրքերը և նրանց հետ էլ երբեմն դուռնուկցի կամ բոլնիսցի հայեր:

Մի ուրիշ տեղ հացթուխները ծխից ու մխից սևացած կրպակներում, արյուն-քրտինք մտած խմոր են հունցում, լավաշներ են թխում և հարյուրներով կախում կրպակի առջևից կապած թոկերի վրա և կամ հետզհետե հավաքելով դարսոտում նրանց այլուրոտ ու փոշոտ թախչաների վրա:

Հենց այդ խոհակերոցների և հացթուխների արանքում զետեղված են սափրիչները, ածելած երեսներով, մեջքերին գոտիով պրկած և կապանների պոչանման թևերն ուսերի վրա: նրանց ամեն մեկի առաջ նստած է մի թուրք, կամ գեղջուկ հայ, որ կարմիր գոգնոցն առջևից կապած, օճառի փրփուրով երեսը պատած, սափրել է տալիս իրեն և ածելիի ամեն մի քերելուց հեծում ու մրմնջում է յուր մտքում շարունակ հայհոյում կոպիտ սափրիչին:

Դրանց դիմաց նստած են թուրք կոշկակարները կամ փինաչիները, որոնք զբաղված են քոշեր կարելով կամ կարկատան անելով:

Մեկը դաբաղի կաշին առջևը ձգած ձևում է, մյուսը կտրած քոշերին կաղապարներ է խփում, մի ուրիշը կաշվի կտորը մի կողմից ատամներով և մյուս կողմից ձեռքերով բռնած ձգում ու ձգձգում է, և ապա առաջը դրած կոճղի վրա ձգելով պղնձե թակով ծեծում է, աշխատելով երկարացնել կամ ամրացնել նրան:

Վերջապես այդտեղ են և պարսկական քաղցրեղեններ վաճառողները, իրենց նոնղուլների, հալվաների, արբինաբաթների և մաջյունների հարուստ, պաշարով:

Պակասը լրացնում են աթտարները (մանրավաճառ) և մսագործները, որոնց խանութների առաջ միշտ խմբված է լինում թե՛ քաղաքացի և թե՛ գեղջուկ հաճախորդների խայտաբղետ բազմություն:

Քաղաքի այս մասում ընդհանրապես մարդիկ ապրում են ավելի երջանիկ, քան թե ուրիշ մասերում, որովհետև ամեն ոք վարվում է յուր փողոցի հետ այնպես, ինչպես ինքն է կամենում: Իսկ սա քիչ բան չէ ազատասեր ժողովրդի համար: Օրինակ, խոհարարները փողոցի մեջ թափում են իրենց քուրաների մոխիրը կամ խոհանոցի կեղտը, կոշկակարը յուր կաշիների կեղտաջուրը, սափրիչներն իրենց լվացուկները, հացթուխը փայտ է կոտրում այդտեղ, քյարարչին օդն է ապականում յուր խորոված ների ծուխով, մսագործն յուր ավելցուկներն է շպրտում խանութի առաջ և այլն: Միով բանիվ ոչ ոք չգիտե այստեղ, թե ինչ բան է քաղաքային վարչությունը և ինչումն են կայանում նրա իրավունքներն ու պարտավորությունը, որովհետև նրա կամ նրա մարդկանց հետ ծանոթ լինելու դժբախտությունը չի ունենում:

Այս փողոցներից գլխավորի վրա, որին ժողովուրդը «Սատանայի շուկա» է անվանում, գտնվում է «Արդար քրտինքով ապրողների թեյարանը»: Խանութների մեջտեղում բացված մի նեղ և միադուռ անցք հանում է ձեզ կրպակավոր շինության վերին հարկը, որի ամբողջությունը բաղկացած է մի նախասենյակից, մի երկար և ընդարձակ դահլիճից և նեղ պատշգամից, որ ընկած է ամբողջ շինության երկարությամբ:

Դահլիճի մի անկյունում շինված է տձև վառարան, որի վրա բարձրանում է մեծ պղնձե կճուճ՝ կափարիչով և ծորակով: Դա թեյարանի հեշտաեռն է, որի մեջ եռում է թեյի համար անհրաժեշտ ջուրը: Վառարանից մի փոքր հեռու թեյարանի տիրոջ արճճապատ սեղանափակն է, որի վրա շարված են բազմաթիվ մեծ թեյնոցներ, իսկ նրանց ամեն մեկի վրա մի ուրիշ փոքրիկ թեյնոց: Սկուտեղների վրա դարսված են անթիվ բաժակներ, պնակներ և պնակիկներ: Սեղանափակի ետևում կանգնած է

թեյարանի տերը, մի հաստ, միջին հասակով առողջակազմ տղամարդ, ածելած և կոպիտ երեսով, մեծ ու հաստ ընչանցքով և հայկական քթով: Հագած ունի սև սատինի արխալուղ՝ կրծքին երկկարգ կոճակներ շարած և կրծկապը ետ ծալած. մեջքը կապած է լայն, արծաթակուռ գոտի, որի առջևից ցցվում են երեք ահագին բրգաձև գլուխներ, իսկ մեջտեղից կախված է փոքրիկ օղակավոր շղթա: Այդ ծանրակշիռ արծաթե գոտին նրա ապագա թաղման հոգեբաժինն է: Թիֆլիսի հասարակ դասի պարտաճանաչ երիտասարդը միշտ յուր աշխատանքից խնայողություն է անում այնքան, որ օր առաջ այդպիսի մի գոտի գնել կարողանա, որպեսզի յուր մահվան ժամանակ ազգականները վաճառելով նրա թաղման ծախսը հոգան:

Չոփուռի տղա Սանդրոն (այդ էր թեյարանի տիրոջ անունը) այդպիսի պարտաճանաչ երիտասարդներից մինն էր: Նրա առաջ կանգնած փոքրիկ ծառաները, որոնք սպասավորում էին հյուրերին՝ նրանց համար թեյ կամ նարգիլե տանելով, երանում էին այն օրին, երբ իրենք էլ այնքան գումար կաշխատեն, որ այդպիսի մի գոտի կարողանան գնել:

Առավոտյան ժամը տասն էր: Թեյարանի բոլոր սեղանները համարյա բռնված էին: Նրանց ամեն մեկի շուրջը նստած էին երկու-երկու, երեք կամ չորս հոգի, որոնք կամ թեյ էին խմում, կամ նարգիլե ծխում և կամ ստամոքսի պահանջը լցրած՝ խոսում ու կատակներ էին անում: Դրանք բոլորն էլ հասարակ դասին պատկանող մարդիկ էին, այսինքն արհեստավորներ, բանվորներ, մանրավաճառներ, բայց ամենից շատն անհայտ պաշտոնի կամ մութ պարապմունքի տեր անձինք, որոնք օրվա մեծ մասն անց էին կացնում այդտեղ կամ դատարկախոսությամբ և կամ գիշերային քաջագործություններ անելու համար ծրագիրներ կազմելով:

— Գարսո՛ն, ստոլ թավազա արա,— գոչեց հանկարծ Չոփուռի տղան և ծառաներից մինը վազեց դեպի տերը:

Սա թեյարանի առաջադեմ սպասավորներից մինն էր, որ տեսնելով թե շիրաջ-Մանասի հետ դահլիճի դռնից ներս է մտնում մի շենք ու շնորհքով և մաքուր հագնված երիտասարդ, իսկույն շուռ եկավ, դես ու դեն վազեց և բոլոր դահլիճն աչք ածելով վերջապես գտավ մի պարապ սեղան, որի վրա թեյարանի մշտական հաճախորդներից մինը, թեյը վերջացնելուց ետ, քաղցր քուն էր մտել: Դա մի գդակագործ էր:

— Վի կաց, տո՛ն, ի՞նչ քնելու տիղ է, — ասաց նա և արթնացնելով արհեստավորին, սեղանը քաշեց դեպի պարապ անկյունը:

— Ի՞նչ իս բլնցում (բոթում), տո՛ն, չի՞ս կանա էնենց զարթնեցնի,— հազիվ սթափվելով և աչքերը՝ տրորելով տրտնջաց արհեստավորը:

— Գնա՛ բանիդ, ախպեր, յիս կռվելու իշտահ չունիմ,— ասաց ծառան և սկսեց ղենջակով ջրոտ սեղանը մաքրել:

— Վո՞ւնց թե գնա բանիդ, ինձ ինչի՞ բլնցեցիր:

— Վա, խա՞թա է, բաս չի՞ պիտի գնացել էիր գործիդ:

— Քի՞զ ինչ, չիմ դնում:

— Չիս գնում, նստի ինչկլի իրիգուն:

— Պիտի նստիմ, բա՛ս, ինչի՞ բլնցեցիր:

— Վա՛, հորե՞ն, չի՞ս տեսնում, պատվավուր մարդ է էկի, ստոլ չկեր, պիտի տարել էի, չէ՞:

— Օ՛հ՛ո, վունց չէ, պատվավոր մարդ է. կուդին ու պալտոն վուր թազա է, գիդիս թե պատվավուր օքմին է. ա՛յ, միկիտան-Մանասն էլ կշտին, ան բիձու տղեն կուլի, ան մամիդի:

— Լավ, թե աստվածդ կուսիրիս, քոլ գլուխը չունիմ, — ասաց սպասավորը և հեռացավ:

Այդ միջոցին արդեն շիրաջ-Մանասը յուր հովանավորյալին ծանոթացրել էր Չոփուռի տղի հետ:

— Տես, Սանդրո, չմոռանաս. իմ լավ բարեկամն է, ամեն անգամ էստեղ գալուց ուրիշ հանդի պատիվ կտաս,— պատվիրում էր շիրաջը Սանդրոյին:

— Վա, Մանաս ջան, էդ ի՞նչ իս ասում, իմ ախպերն է. գլխիս վրեն տիղ ունե,— ասաց Սանդրոն և ապա դառնալով ծառային հրամայեց.— տո՛, Գարսո, ջա՛լդ, Պոպովի չավ չայեմեն դիվիր բի:

— Այ, Վահան ջան, եթե ուզում ես ամեն օր լավ ու տժան թեյ խմել, կգաս էստեղ.— խորհուրդ էր տալիս բարեկամին Մանասը.— հինգ կոպեկով կարող ես տասը բաժակ խմել:

— Իսկ ճաշի համար որտե՞ղ ասացիր,— հարցրեց երիտասարդ Սարյանը:

— Մեր իջած քարվանսարայի դիմաց. լավ խոհանոց կա էնտեղ, տասնուհինգ կոպեկով երկու տեսակ կերակուր են տալիս:

— Այ, հազիր միր դեմ ու դեմն ասի՞ս. էս թուրքերն էնենց լա՛վ փլավ, բոզբաշ, ղավուրմա ու լյուլաքյաբաբ ին ուտեցնում,— մեջ մտավ Սանդրոն:

— Լավ, ուրեմն, մի տեղ կճաշենք: Բայց ինչպե՞ս է ձեր թեյարանի անունը, ասացեք, որ երկրորդ անգամ գալիս չսխալվեմ:

— Ի՞նչ ասավ, թեյարա՞ն...— հարցրեց Սանդրոն Մանասին:

— Այո՛, թեյարան,— կրկնեց երիտասարդը:

— Կուբախշիս, լավ հայեվար չիմ իմացի. թեյարան ի՞նչ է:

— Տո, ձեր չայխանան է ասում, էլի՛. հայերեն չայխանին թեյարան են ասում:

— Վա, Մանաս, դո՞ւն էլ էտենց խուրը բաներեմեն խաբար ի՞ս,— ծիծաղելով հարցրեց Սանդրոն:

— Տո, ութ օր է միասին ենք գալիս, էնքան բաներ եմ սովորել որ...

— Թեյարան... թեյարան... ես ու իմ աստուձը, լավ անուն է:

— Հիմա խո իմացար, դե ասա:

— Ի՞նչ ասիմ, Մանաս ջան:

— Տո՛, մեր էս պարոնը հարցնում է, թե ձեր թեյարանի անունն ի՞նչ է, ասա, որ իմանա:

— Հա, էտենց ասա՛, Է՛. միր թեյարանի անումը, պարուն, դուն իմն իս, վրացեվար ասում ինք «Հալալ օփլիտ մցխովրեբլեբիս չայիս ադգիլի»:

— Ուզում է ասել՝ «Արդար քրտինքով ապրողների թեյարան»,— թարգմանեց շիրաջը:

— Լավ անուն է. շատ լավ անուն է. բայց այդ որտե՞ղ է գրած,— հարցրեց երիտասարդը:

— Ա՛յ, դրսևը, վիվեսկի վրեն:

— Հայերե՞ն:

— Չէ, ռուսեվար. մեկ էլ վրացեվար: — Ինչո՞ւ հայերեն չեք գրում:

— Տեղ չկա, պարոն ջան, վիվեսկեն նիղ է:

— Ուրեմն վրացերենի տեղ հայերեն գրեիք: — Չի՛ ըլի, միր մուշտարիքը հայեվար չին կանա կարթա:

— Իսկ ռուսերեն կարողանո՞ւմ են:

— Չէ. ռուսեվար էլ ղորդովոյնիրն ին կարդում, աս պրիստավնիրը:

Այդ միջոցին Գարսոն Պոպովի թեյի նոր կապուկը բերավ և տվավ տիրոջը: Սանդրոն բաց արավ, թեյի մի գդալ ածեց փոքրիկ թեյնոցի մեջ և դնելով եռացրած ջրով լցրած մեծ թեյնոցի վրա տվավ Գարսոյին: Վերջինս սկուտեղի վրա դնելով այդ երկվորյակ թեյնոցները, բաժակները և շաքարը, վազելով տարավ դեպի պատրաստ սեղանը:

— Առաջին անգամն եմ տեսնում այս տեսակ թեյի պատրաստություն.— նկատեց Վահանը Մանասի հետ միասին սեղանին մոտենալով:

— Հա՛, այս թեյարաններում այսպես են խմում: Ա՛յ, մեծ թեյնոցից ջուրը կածես փոքրիկի մեջ, հետո փոքրիկը մեծի վրան դնելով կսպասես մինչև որ թեյը գույնը տա. հետո կածես կխմես: Այս էլ ասեմ, որ թեյն ու շաքարը մի անգամ են տալիս, իսկ եփած ջուր՝ որքան անգամ ուզես:

Շիրաջն յուր բարեկամին Թիֆլիսում թեյ խմելու օրենքներին ծանոթացնելուց ետ կամենում էր հեռանալ, որովհետև շտապում էր գինետուն, Վահանը նրան բռնեց:

— Մանա՛ս, ինչպես տեսնում եմ, բոլորն էլ ստոր կարգի մարդիկ են. ուրիշ ավելի լավ տեղ չկա՞, որ այսուհետև այնտեղ գնամ:

— Ինչո՞ւ չկա, հեր օրհնած. բայց այնպիսի տեղերում թեյի բաժակը տասը կոպեկ արժե. դու այդքան փող կտա՞ս:

— Իհարկե ոչ:

— Է՛հ, ուրեմն այստեղ խմիր. բաժակը մեկ կոպեկից ավել չի նստիլ եթե շատ խմես: Այստեղ էլ լավ մարդիկ են. բոլորն էլ արդար աշխատանքով ապրող: Քեզ ի՞նչ, թե հագուստները կեղտոտ կամ պատռտած է:— Այս ասելով Մանասը ողջունեց բարեկամին և դուրս գնաց:

Վահանը լուռումունջ նստեց սեղանի մոտ և սկսավ նախ յուր շրջապատի հետ ծանոթանալ: Ապա կամաց-կամաց թեյը պատրաստելով և խմելով՝ սկսավ ականջ դնել յուր բազմատեսակ հարևանների խոսակցություններին, աշխատելով

ծանոթանալ այդպիսով նրանց աշխարհայեցողության հետ: Վահանի կարծիքով այդ մարդիկը պետք է որ շատ բանով բարձր լինեին յուր հայրենի քաղաքի նմանօրինակ դասակարգի մարդկանցից:

— Տո, Կակուլի, էրեդ վո՞ւրդի էիր, ինչկլի կես գիշեր քեզ էի մնում,— կամաց ձայնով խոսում էր մի երիտասարդ յուր սեղանակցի հետ:

— Չէի կանացի քիզ գթնի. տո՛, վո՞ւրդի էիր կորի:

— Վո՞ւնց թե վուրդի, չասի՞ թե Սաղի կուռն իմ գնում, դափնի կշտին սաղ իրիք սահաթ կանգնիլ էի:

— Իժո՞ւմ:

— Իժում տեսա վուր չեկար, յիս իմ բանը քութահ արի:

— Իքմին ճանգեցի՞ր:

— Չուրս փութ սուխ գուղցա:

— Վա, վա՛, թե ախպեր իս:

— Քու արիվը գիդենա:

— Իժո՞ւմ:

— Իժում էսօր առուտեհան Գեվոյի վրեն վից աբասով ծախեցի:

— Ղոչաղ տղա իս, յիս ու իմ աստուձը:

— Բաս ի՞նչ գիդեիր:

— Դե, բի՛, բի մե աբասի ինձ տու:

— Վա, ի՞նչ ի ասում. լոթի ի՞ս:

— Տոլ է՛լի, չաու փուղ չունիմ:

— Ինչի՞ կուտամ, տո՛. վուր էկիլ էիր մե մեշոկ կարտոփիլ կու թռցնեինք:

— Այ, էս գիշեր գուքամ էլի:

— Էլ ղափնումը իմքին չկա, ի՞նչ կու ճանգիս: Թե ուզում իս արի միր տան կուռը, չոլախ Պեպանի տղեն մե լավ օչխար ունե, ճանգինք. դուն առուտեհան ձիր տանը կու մորթիս ու իժում մետի յարմուկեն կու տանինք կու ծախինք:

— Լա՛վ, գուքամ:

— Ա՛յ հիմի կի աբասին կուտամ.—ասաց սոխի գողը և քսան կոպեկանոցը դնելով Կակուլու ձեռքում, ավելացրեց. — Էգուց պիտիս հիդ տա, ա՛յ:

— Վա՛, բաս հաշա կուտի՞մ,— ասաց Կակուլին և երկու ընկեր միասին վեր կացան տեղերից:

Այդ միջոցին դահլիճի դռնից ներս մտավ մի նոր հաճախորդ:

— Օ հո՛, Չաչանակ, բարով իս էկի. էստի արի, էստի:

— Չէ՛, չէ՛, էստի, միզ մոդ արի, միզ մոդ:

— Թե ախպեր իս, միր կուռն արի:

Այս խոսքերով մի քանի սեղաններից ձայն տվին դեպի նորեկը, բայց նա՝ «մուլափ տվեք, էստի դուրձ ունիմ» ասելով ուղղակի եկավ դեպի երիտասարդ Սարյանի կողմը և ողջունեց նրա հարևան գդակագործին, որի հետ սկզբում ծանոթացանք:

— Ոնց որ տեսնում իմ, Ծղալոբ ջան, ինձ վրա խիստ իս նիղացի, ուշացա չէ՞:

— Բաս չէ՞, իրիք սհաթ կուլի ինչ քիզ իմ մնում. ուզում էի, վուր չաու վրեն մեձրիլ էի: Տեսա վուր չեկար, լավ լազաթին չայս խմեցի ու գլուխս ստոլի վրեն դրի քնեցի:

— Քնեցի՞ր. տո, ի՞նչ քնելու վուխտ էիր գթի:

— Դուն ասա, թե վո՞ւնց էի քնի, է. հազիր մե լավ էրազ տեսա:

— Ի՞նչ տեսար:

— Արմանալու բան է, ա՛յ. դուն ասա էտենց էրազ ի՞փ իմ տեսի:

— Ձեր մե ասա, է՞, ի՞նչ տեսար:

— Տեսնում եմ, Սերգո ջան, վուր մինք Ձորաբաշի էգեղեցումն ինքն ու էնդի իրիցփուխ ինք ջոկում:

— Իժո՞ւմ:

— Իժում ասում ին, խոսում ին թե ո՞ւմը ննդրին, ո՞ւմը չննդրին, վիրջը դիփ մետի ասում ին էկեք Սոսոյի տղա Ծղալոյին ննդրինք:

— Քի՞զ:

— Մա՛շ:

— Իժո՞ւմ:

— Իժում կենճի ին գցում ու մե բաշ իրիցփուխ իմ դուս գալի: — Վի՞րջը:

— Վիրջը չկանացի թե տեսել էի:

— Ինչի՞. զարթեցա՞ր:

— Էս մարդիմազար բիճն էկավ ու զարթեցրուց:

— Ինչի՞:

— Աստուձ վուչ գիդե նրա գլուխն ու արիվը. պատվավուր օքմին է էկի, կոսե, ստոլդ պիտիմ տանի, կոսե: — Իժո՞ւմ, ո՞վ էր պատվավուր օքմինը:

— Ա՛յ, չի՞ս տեսնում միր հիդիվը նստած:

Վերջին խոսքերը Սոսոյի տղան այնպես արտասանեց, որ Սարյանը չլսեց:

Սերգոն, որին յուր շատախոսության համար «չաչանակ» էին անվանում, միջին հասակով, նիհար կազմվածքով, դեղնած երեսով, փոքր ու խաժակ աչքերով և մեծ բերանով՝ մոտ հիսուն տարեկան մի մարդ էր: Հագած ուներ սև մահուդից արդեն դեղնած մի կաբա, սև սատինի արխալուղ. կապած էր փոքրիկ արծաթե գոտի. գլխին ուներ նույն դեղնած մահուդից կարած կարտուզ, իսկ ձեռքում կարմիր «տերողորմյան», որը սովորություն ուներ միշտ ետքին բռնելու և այնպես համարելու:

Հետաքրքրությամբ ետ նայելով նա տեսավ նորեկ երիտասարդին և կամացուկ շշնջաց ընկերոջ ականջին.

— Խամ կուլի ա՛յ, թե չէ էստի ո՞ւր գուքեր:

— Միթոմ էստի ի՞նչ է. սրամեն պակա՞ս մարդ է մեր Մոմճին, վուր գալիս է միր կողքին նստում ու միզ հիդ էլ չայ խմում:

— Մոմճի չէ, տո՛, Մոմճյան ասա:

— Մոմճյան, հա՛:

— Մեր Մոմճյա՞նը, էլ ասում ի՞ս. օսկի է, օսկի. յիս նրա հոգուն մեռնիմ:

— Թե՞ ասիր, վուր քիզ հիդ պիտի գա:

— Գուքա, ջեր վաղ է: Ա՛յ, էրազն էլ տեսիլ իս. էրեգ խոսեցանք, վուր քիզ իրիցփուխ շինինք:

— Մոմճյանն է՞լ ասավ:

— Դիփունից առաջ նա ասավ էլի, թե ծղալոբի պես տղա չկա, կոսե. նրան պիտինք ջոկի, կոսե: — Վա՛յ յիս նրա հոգուն մեռնիմ, ի՛նչ դարդիմանդն է էլի, տո՛:

— Մա՛շ վուր յիս ասում էի: Դուն ինձ էն ասա, մարթիք գթա՞ր:

— Հիսուն հոգուց ավել ունիմ. ջեր մե հինգ հոգի էլ էստի հիդս իմ բերի:

— Վուր էտենց է, դու մե քիչ մուլափ տու, յիս տեսնիմ, թե էս տղեն ո՞վ է:— Այս ասելով չաչանակ Սերգոն վեր կացավ և մոտենալով երիտասարդ Սարյանին.

— Բարով ձիզ, անճանաչ ախպեր,— ասաց և աթոռը քաշելով սեղանի մոտ, առանց այլևայլության նստեց նրա կողքին:

— Բարով ձեզ,— պատասխանեց երիտասարդը:

— Ամոթ չլի հարցնիլը, հրամանքդ վուրտղանցի՞ իր:

Սարյանը ասաց իրենց քաղաքի անունը:

— Հա՞. մաշ մեկ էլ բարով, յիս էնդի էլիլ իմ.— այս ասելով Սերդոն ձեռքը մեկնեց Սարյանին և նրա աջն առնելով ամուր սեղմեց իբրև հին բարեկամ:

— Ե՞րբ եք եղել մեր քաղաքում:

— Շատ հնուց, քսանուհինգ տարի կուլի, ջեր էն վուխտը կուլի, վուր դուն ծնված էլ չէիր:

— Ա՛յո, ես դեռ այդ տարիքը չունիմ:

— Ամա, հախ աստծու, լավ իրգիր է. միսը էժան, լավ ապրելու տիղ է: Հիմի էլ էնենց էժանութի՞ն է էնդի:

— Այո՛, հիմա էլ աժանություն է:

— Աբա, միր քաղաքը վո՞ւնց հավնեցաք:

— Դեռ լավ չեմ տեսել, երեկ եմ եկել:

— Աբա դուն մե լավ բաբաթ ման արի, տիս թե ինչի՞ ր կա, ինչի՞ր պտիս տեսնի— մինձ-մինձ քուչեք, մինձ-մինձ ինձ տներ, լավ մաղազիեք, քարվանսարեք, մինձ-մինձ գաստինիցեք, էրկու իրեք թեատր, ցիրկ, մե թեատր էլ խո մեր հայերունն է:

— Գիտեմ, այդ բոլորի մասին լսել եմ:

— Լսիլը ջուգ բան է, պարուն ջան, աչքով տեսնիլը՝ ջուգ:

— Իհարկե:

— Միր քաղկի տղերանց հիդ էլ մե ծանոթվի, տես թե ի՛նչ տղերք ին:

— Իհարկե, կծանոթանամ:

— Բարեկամ, էստի խոմ չո՞ւնիս:

— Ոչ:

— Թե վուր ուՀիս, յիս քի հիդ ամեն տիզ կու ման գամ. դիփ տիղիրը կու շանց տամ, լավ մարդկերանց հիդ էլ կու ծանոթացնիմ:

— Դուք ուրեմն ծանոթ եք լավ մարդկանց հե՞տ,— կասկածելով Սերգոյի ճշմարտախոսության վրա, ժպտալով հարցրեց Սարյանը:

— Իմ դեղնած չուխին մի՛ մտիկ տա, ախպեր. էստի էնենց քաղաք չէ, վուր շուրին ան փողին մտիկ տան. ա՛յ, կու տեսնիս թե ինչ մարդկանց հիդ իմ ծանոթ:

Այս միջոցին դահլիճի դռնից ներս մտավ մի լավ հագնված երիտասարդ, միջին հասակով, առողջ ու հաստ կազմվածքով, թարմ ու գեր երեսով. խաժակ աչքերով և նրբամազ ու շեկ մորուսով, նա նախ մոտեցավ թեյարանատեր Սանդրոյին և ջերմությամբ ողջունելով նրան՝ առողջությունը հարցրեց:

— Քու դովլաթից սաղ սալամաթ ապրում ինք, Ակոր ջան. ի՞նչ կու հրամայիս բերիմ, չայ, զելտերսկի ան լիմոնադ:

— Շնորհակալ եմ, ոչինչ չեմ կամենում. Չաչանակն այստեղ չ՞:

— Վո՞նց չէ, հորեն էն տղի մոտ նստած է:

Երիտասարդը նայեց դեպի ցույց տված կողմը և տեսնելով Չաչանակին շնորհքով հագնված մի երիտասարդի հետ՝ վախեցած ձայնով հարցրեց:

— Այս ո՞ւմ հետ է նա խոսում, Սա՛նդրո:

— Ուրիշ օլքցի է, նուր է էկի:

— Ի՞նչ գիտես թե նոր է եկել:

— Գիդիմ:

— Սխալվում չլինիս, Սանդրո: — ինչի՞ կու սխալվիմ. միկիտան Մանասն էրի, նրա բարեկամն է:

— Մե՞ր Մանասը:

— Հա:

Այն միջոցին, որ երիտասարդը թեյարան մտնելով մոտեցավ Սանդրոյին և սկսեց նրա հետ խոսել, Սարյանը տեսնելով, որ իրենից զատ մի ուրիշ շնորհքով հագնված մարդ էլ մտավ այդտեղ, հետաքրքրությամբ հարցրեց Սերգոյին.

Ճանաչո՞ւմ եք այս երիտասարդին: — Վո՞ւնց չէ, իմ լավ բարեկամն է:

— Ո՞վ է:

— Կուլի վուր անումը լսած ըլիս, Հակոբ Մոմճյան:

— Հակոբ Մոմճյա՞ն. այո՛, այդ անունն ինձ ծանոթ է, սա ուրեմն պ. Մոմճյա՞նն է:

— Նա ինքն է. մինձ օջախի վուրթի է, մինձ էլ ուսումնական է:

— Գիտեմ, գիտեմ, նրա մասին կարդացել եմ:

— «Փնջիկ» գազեթի գլխավոր սարքողն է:

— Գիտեմ, ճանաչում եմ: Բայց դուք ծանո՞թ եք նրան:

— Ակի ասի իմ լավ բարեկամն է. թե գուզիս քեզ էլ հիդը ծանոթացնիմ:

— Շատ ուրախ կլինեմ:

— Պարունիս, հիմիսկևետ:

Բայց Մոմճյանը շարունակ մտատանջության մեջ էր. նա հավատացած էր, որ Սանդրոյին մոլորեցրել են և որ այդ նորեկ կոչվող երիտասարդն անպատճառ հակառակ բանակի մարդ է:

— «Անիծածները գլխի են ընկել, իրենք էլ են կամենում իմ պլանով գործել: Եվ տես, թե ումն է ճանկել, չաչանակ Սերգոյին, որ իմ աջ թևն է: Բայց ևս այդ թույլ չեմ տալ, թույլ չեմ տալ...»: Այսպես մտածելով, Մոմճյանը թողեց թեյարանատիրոջը, և հառաջացավ դեպի այն անկյունն, ուր գդակագործ Ծղալոբն էր նստած:

Սեղանների մոտ նստածներից ոմանք ողջունում էին Մոմճյանին, ոմանք էլ տեղերից բարձրանալով սեղմում էին նրա ձեռքը: Երիտասարդը չէր քաշվում մանրավաճառների, որմնադիրների կամ նույնիսկ կինտոների ողջույնն ընդունելուց կամ նրանց ձեռքը սեղմելուց: Մինչև գդակագործին հասնելը՝ չաչանակ Սերգոն բարձրացավ տեղից և ուրախ-ուրախ ընդառաջեց Մոմճյանին: Վերջինս, որ անծանոթ երիտասարդի հետ նրան տեսնելով տխրել էր, նորից հոգի առավ.

— Արի Է՛, Ակոբ ջան. քանի սհաթ է յիս ու Ծղալոբը քիզ ինք մնում. բարով, բարով. քեփդ վո՞ւնց է. էրեգվանից դեսը չիմ տեսի, սիրտս խիստ էր ուզում:

— Բարով, բարեկամս, ես լավ եմ, քո քե՞փը ոնց է:

— Փառք ստեղծող աստծուն, յիս էլ լավ իմ:

— Ծղալոբ ջան, դու ո՞նց ես. բան-ման շինեցի՞ր, թե ոչ,— կամացուկ հարցրեց երիտասարդը գդակագործին:

— Լավ իմ, աղա-ջան, դիփ հազիր է. արխեին կաց:

— Քանի՞ մարդ ունես:

— Հիսունից ավելի:

— Բոլորն էլ քեզ ձայն կտա՞ն:

— Ումիկ ունիմ, վուր չխաբին:

— Դուն արխեին կաց, Ակոբ ջան. Ծղալոբն իրիցփուխ է, վուր իրիցփուխ է. էս գիշեր էրազումն էլ տեսիլ է:

— Հա՞

— Մա՛շ:

— Էս գիշեր չէ, տո՛, Է՛ս օր, հենց էստի,— ուղղեց Սերգոյի սխալը գդակագործը:

— Վո՞ւնց թե էստի,— զարմացած հարցրեց Մոմճյանը:

Գդակագործը նրան էլ պատմեց յուր երազի պատմությունը նույն մանրամասնությամբ, ինչպես որ պատմել էր չաչանակ Սերգոյին:

— Օ՛, այդ լա՛վ երազ ես տեսել. ուրեմն գործդ կհաջողվի:

— Ումիկ ունիմ, վուր աջողի: Դուն էլ խոմ ուզում իս, չէ՞. Սերգոն էնենց ասավ:

— Իհարկե, բարեկամ, իհարկե. ասենք թե ես այդտեղ մի որևէ օգուտ չունիմ. բայց ազգի գործ է, լավ է որ արժանավոր մարդու ձեռքի լինի: Ես այդ բանի համար շատ եմ աշխատել. սրբազանի մոտ եմ գնացել:

— Վա՛յ յիս քու հոգուն մեռնիմ. սրբազանի մոդ էլ իմ անումը տվի՞ր:

— Բա՞ս:

— Իժում ի՞նչ ասավ:

— Արժանավոր մարդ է, ասում է. ես էլ եմ նրա անունը լսել:

— Վա, վա, Ակոբ ջան, քիմեն սավայի ո՞վ կուլի իմ անումը սրբազանի մոդ իշած:

— Յիս, յիս, Սերգո Ջարրաբովը, մեյդնի իգիթը,— պարծեցավ Չաչանակը:

— Վա՛յ յիս քու հոգուն մեռնիմ, դուն էլ իս հոգևոր տիրոջ մոդ գնո՞ւմ:

— Վո՛ւնց չէ, շարթենը մե ջեբ: Հախ աստծու, հոգևուր տերը շատ է սիրում ինձ. Սերգո ջան, ասում է, դուն վուր խոսում իս, քեփս գալիս է:

— Միթոմ ինձ վուր իրիցփուխ շինիք, յի՞ս էլ կանամ գնա:

— Իհարկե, դուք միշտ պիտի գնաք, ամեն կիրակի օր:

— Աղա ջան, վախում եմ լիզուս կապ ննգնի ու մե բաշ հոգևուր տիրոջ մոդ խոսիլ չկարենամ:

— Առաջին անգամները ես հետդ կգամ, միամիտ կաց:

— Հա, գեթազվա, հա. թե չէ իստակ բիաբուռ կուլիմ:

Ախար իմ օղորմածիկ հերս չուզից վուր ինձ կարդալ էր տվի. խիղճ մերս էնքան ասից, էնքան աղաչից թե՝ այ մարդ, բի միր Ծղալոբին մե քիչ էլա ուսում տանք, կուլի վուր սովդաքար դառնա, ախար սովդաքարին գրիլ-կարդալ գուզե. չելավ վուր չելավ: ճոն Մարտիրուսին խոսք իմ տվի, կասե, պիտի տանիմ տամ իրան: Ասավ ու արավ էլի. են օրվանից դեսը էսենց անբախտ մնացի:

— Էհ, վնաս չունի. այդպես էլ լավ է:

— Աղա ջան, բաս իրիցփուխին դիր ու դավթար չի՞ ուզի:

— Ոնց չէ. կուզի:

— Բաս յիս վուր գիր չի՞մ գիդի: Մոմճյանն սկսեց մի փոքր մտածել և ապա վճռական կերպով ասաց.

— Վնաս չունի, ես մի տղա կտամ, որ կօգնե քեզ:

— Վա՛յ յիս քու հոգուն մեռնիմ, աղա ջան, ի՞նչ դարդիմանդն իս էլի. տրախտիրում թե չէինք ըլի, էդ սիրուն ճակատիդ մե պաչ կոնեի:

— Չէ, ախպեր, ջեր պաչի վուխտը չէ,— խոսեց չաչանակ Սերգոն—իփոր, իրիցփուխ կու շինինք քիզ, էն չափը դուն Օրթաճալում ան Վերի բաղերում մե լավ ճաշ կու սարքիս, դուդուկով, ճիանուրով մե լավ լոքո ու արտալա կուտեցնիս. խորոված սուկին էլ վրեն. իմ մամիդ տղա Յականն էլ, խոմ գիդիս, լավ կարմիր գինի ունե. իստակ Կախեթու. խիստ հինն է. ավտաս իրիք տարվա ըլի. մի պստի կանաչ բոչկումն է, պադվլի թախչումը դրած. կուլի վուր տեսած ըլիս, ա՛յ նրանեմեն էլ մե հինգ-վեց թունգի կուտանինք, էն չախը պաչն էլ կուլի, սազ ու բաղն էլ:

— Հա ախպեր, դուք ինձ իրիցփուխ շինեցեք, իրիք թումնանոց ճաշն ինձ վրա:

Բոլոր այս խոսակցության ժամանակ Մոմճյանն անհանգիստ դրության մեջ էր. անծանոթ երիտասարդի անձնավորությունը նրան խիստ հետաքրքրում էր. երբեմն-երբեմն քննական հայացք էր գցում նրա վրա՝ իմանալու համար թե արդյոք որևէ մի տեղ տեսած չէ՞ր նրան: Վերջապես նա բավական համարեց գդակագործի ապագա երեցփուխության խնդրով զբաղվելը և հարցրեց Չաչանակին:

— Ո՞վ էր այդ երիտասարդը, Սերգո, որի հետ խոսում էիր

— Ուրիշ օլքցի է նուր է էկի:

— Որտեղացի՞:

Սերգոն տվավ Սարյանի ծննդավայր քաղաքի անունը:

— Անունն ի՞նչ է:

— Չեմ գիդի, մտես ննգավ թե հարցրել էի:

— Ի՞նչ էր խոսում քեզ հետ:

— Վունչինչ. յիս տեսա վուր ղարիբ օքմին է, գնացի հիդը ծանոթվեցա. ով որ վուր է, երևում է վուր լավ տղա է:

— Վաղո՞ւց է այստեղ է: — Չէ, էրեգ է էկի:

Մոմճյանը հանգստացավ: Ուրեմն յուր ենթադրությունները սխալ էին: «Ով որ է, պետք է հետը ծանոթանալ և չթողնել, որ անպիտան մարդկանց ցանցում բռնվի»,— մտածեց Մոմճյանը:

— Հա, մտես ննգավ թե ասիլ էի, էտ տղեն քեզ ճանչնում է:

— Ո՞նց թե ճանաչում է.— դարձ՛ալ անհանգստանալով հարցրեց Մոմճյանը:

Ճանաչնում է. բա՛ս. իփոր դուն տուն մտար ու Սանդրոյի հիդ խոսում էիր, նա հարցրուց թե՝ էս ջեհել տղեն ո՞վ է, իս կոսե. ասի Մոմճյանն է: Նա էն նմուտին ասավ թև լավ կուճանչնամ. նրա անունը լսի՞ր իմ թե կարթացել իմ, կոսե, չիմ գիդի:

— Ուրեմն իմ անունը լսել կամ կարդացե՞լ է...

— Հա, մա՛շ:

— Հասկանում եմ, կնշանակե ինձ հեռվից է ճանաչում,— ինքն իրեն մտածեց Մոմճյանը և հանգստացավ:

— Խնդրից վուր քիզ հիդ ծանոթացնիմ,— շարունակեց Չաչանակը:

— Մի՞թե,

— Հա, շատ խնդրից. յիս էլ ասի լավ կուլի:

— Դե, ուրեմն գնա՝ բեր և ծանոթացրու:

— Էս նիմուտին.— ասաց Չաչանակը և տեղից բարձրացավ:

Բոլոր այս ժամանակ երիտասարդ Սերյանը զբաղված էր յուր տեսածներն ու լսածները քննելով:

Սկզբում նա մտածում էր թեյարանի նորալուր անվան վրա, որը՝ նայելով նրա հաճախորդներին (որոնք, յուր կարծիքով, արդար քրտինքով ապրողներն էին), համարում էր խորիմաստ ու պատշաճավոր: Բայց հետո գիշերային քաջագործությունների մասին խոսող երիտասարդներին լսելով, նա այդ անունը գտնում էր խաբեական, կամ ծաղրական: Ապա չաչանակ Սերգոյի և նրա ընկերոջ խոսակցությունները լսելով, զարմանում էր, որ այդ հասարակ ամբոխի մեջ գտնվում են մարդիկ, որոնք հետաքրքրվում են հասարակական խնդիրներով, և սկսում էր յուր կարծիքը փոխել թեյարանի հաճախորդների մասին: Իսկ Մոմճյանի այդ թեյարանում երևալը, նրա այդ սինլքոր հաճախորդների հետ սիրով ու քաղաքավարությամբ

բարևելը և, վերջապես, Չաչանակի և գդակագործի հետ նստելն ու նրանց հետ սիրով և մտերմությամբ խոսակցելը նրան հիացրել էր:

«Ուրեմն ես չէի սխալվում, երբ ասում էի թե՝ Թիֆլիսում մարդիկ ավելի լուսամիտ և ավելի ազնվասիրտ են, քան իմ հայրենի քաղաքում, ապացույցներն արդեն տեսնում եմ, և, անկասկած, քանի ավելի բարձր շրջանները մտնեմ, այնքան ավելի պիտի հաստատվեմ թիֆլիսցիների մասին ունեցածս իմ կարծիքների և համոզմունքների մեջ...»: Այսպես մտածելով երիտասարդ Սարյանը պատրաստվում էր արդեն հեռանալ թեյարանից, երբ Չաչանակը մոտեցավ նրան:

— Աբա, արի ծանոթացնիմ քիզ միր Մոմճյանի հիդ:

— Ուրախությամբ,— ասաց երիտասարդը և հետևեց նրան:

— Պարոն Մոմճյան, կու խնդրիմ, վուր էս լավ տղի հիդ ծանոթվիք. ինքը անումով ձեզ ճանչնում է,— առաջարկեց Չաչանակը:

— Հակոբ Մոմճյան: Շատ ուրախ եմ ծանոթանալ ձեզ հետ:

— Վահան Սարյան. շատ հաճելի է ինձ ձեր ծանոթությունը:

Երիտասարդները փոխանակեցին միմյանց հետ այս խոսքերը և նստեցին:

— Անշուշտ առևտրական գործով եք եկել մեր քաղաքը,— առաջինը խոսեց Մոմճյանը, հավատացած լինելով, որ միայն առևտրական գավառցին կարող է այս թեյարանը մտնել աժան թեյ խմելու համար:

— Ոչ. ես առևտրական չեմ և, երևի, երբեք էլ չեմ լինիլ,— ժպտալով պատասխանեց Սարյանը:

— Լավ էլ կանեք. երիտասարդ մարդին ամենից ավելի քիչ պետք է գրավե այդ կոչումը:

— Մանավանդ հայ երիտասարդին: — Ինքնըստինքյան հասկանալի է, որովհետև մենք ավելի հասարակական քան անձնական շահերին նվիրված երիտասարդների պետք ունինք:

— Հենց այդ նպատակով էլ ես եկա Թիֆլիս:

— Անշուշտ հասարակական շահերին նվիրվելու համար:

— Այո՛, միմիայն հասարակական շահերին:

— Այդ պատիվ է բերում ձեզ, պ. Սարյան,— ասաց Մոմճյանը խորհրդավոր եղանակով գլուխը շարժելով:

— Պատվի վրա չեմ մտածում, այլ պարտավորությունս կատարելու վրա,— համեստությամբ նկատեց Սարյանը:

Այնուհետև Մոմճյանը սկսեց հարց ու փորձ անել նրան, թե որտե՞ղ և ե՞րբ էր ավարտել, թե Թիֆլիս գալու միտքը ո՞ր բարեհաջող հանգամանքներն են նրա գլխում ծնեցրել, թե ի՞նչ ճանապարհով է կամենում յուր նպատակին հասնել և այլն, և այլն:

Սարյանն ամեն ինչ պարզությամբ և մանրամասնաբար պատմեց այդ բոլորը Մոմճյանին:

Վերջինս անչափ ուրախացավ, տեսնելով, որ կարի պիտանի և յուր նպատակներին ծառայելու ամեն հարմարություններով օժտված երիտասարդի է հանդիպել:

— Եթե կամենաք իմ խորհուրդներից օգտվել, ես ձեզ ցույց կտամ գործելու ամենից հարմար ճանապարհը,— ասաց Մոմճյանը Սարյանին.— դուք այստեղ օտար եք և անշուշտ պետք ունիք մի ազնիվ առաջնորդի, որ այս քաղաքի լավ ու վատ շրջանների հետ ծանոթացնե ձեզ, առանց մոլորեցնելու:

— Որտե՞ղ կարող եմ ձեզանից լավ առաջնորդ գտնել: Շնորհ արեք, օգնեցեք ինձ ձեր խորհուրդներով և ես հավիտյան երախտապարտ կմնամ ձեզ,— խնդրեց Սարյանն անկեղծությամբ:

— Ամենայն սիրով: Վաղն եկեք մեր խմբագրատունը. այնտեղ հարկ եղածը կխոսենք և կտնօրինենք:

— Բայց ձեր խմբագրատունը ես չեմ ճանաչում:

— Դուք ուրեմն «Փնջիկ» թերթի խմբագրատունը չե՞ք ճանաչում : — Չէ՞ որ ես երեկ եկա և դեռ ոչ մի տեղ չեմ գնացել:

— Այո՛, ներողություն, ես մոռացա:

— Յիս կու շանց տամ էլի. հրամանքդ վո՞ւրդի իք կենում. ասացեք.— մեջ մտավ չաչանակ Սերգոն:

— Չոլախի քարվանսարայում:

— Վա, Չոլախի քարվանսարեն հորես էստի չէ՞. յիս խո ամեն օր էնդի իմ թրև գալի, յիս գուքամ կուտանիմ ձիզ, արխեին կացեք:

— Այո՛. պ. Սերգոն ձեզ կբերե. նա մեր խմբագրատունը ճանաչում է:

— Շատ շնորհակալ կլինեմ,— ասաց Սարյանը և չկամենալով այլևս խանգարել խոսակիցներին, ողջունեց նրանց և հեռացավ:

Մոմճյանը նույնպես շատ չուշացավ այդտեղ: Նա մի քանի տեղեկություններ հարցրեց գդակագործից, նրա բերած մարդկանց հետ ծանոթացավ և ապա գործելու համար զանազան հրահանգներ տալով թե՛ գդակագործին և թե՛ նրա բարեկամներին, դուրս գնաց թեյարանից:

Է

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Թիֆլիսի Վերա քաղաքամասում, մի փոքրիկ փողոցի վրա, գտնվում է մի ոչ շատ ընդարձակ շինություն, բաղկացած մի քանի փոքրիկ բնակարաններից: Նրա ներքին հարկի մութ ու խոնավ սենյակներում ապրում են ստորին դասակարգի մարդիկ, գլխավորապես արհեստավորներ, բանվորներ և լվացարար կանայք, իսկ վերին հարկում՝ զանազան ընտանիքներ և անհայտ կոչման ու պաշտոնի տեր անձինք:

Վերին հարկի բնակարաններից մինը, որ բաղկացած է մի նախասենյակից, երեք սենյակներից մի սեղանատնից և մի ընդարձակ հյուրասենյակից, պատկանում է հին թիֆլիսցի տիկին Մարթա Դաբաղյանին, որն ապրում է այդտեղ յուր մի հատ դուստր Շուշանի հետ: Տ. Մարթայի տանն ապրում են նույնպես երկու գավառացի

երիտասարդներ՝ Մանուկ Շաշյանը և Սարգիս Մովսիսյանը, որոնք վճարում են նրան թե՛ բնակարանի և թե՛ ուտեստի համար ամսական քսանհինգական ռուբլի:

Տիկին Մարթան բարձրահասակ, նիհար երեսով, արագաշարժ աչքերով, մեծ ու միշտ ժպտող բերանով, լեզվանի, շատախոս և վերին աստիճանի կենդանի մի կին է: Տարիքը քառասունհինգից ավելի չէ. բնավորությամբ լինելով բարեխառն, հաճոյախոս, ամենքին գգվելու և փաղաքշելու դյուրապատրաստ. նա շատ շուտ բարեկամանում է ամեն մի պատահողի հետ. լինի դա կին թե տղամարդ, աղջիկ թե երիտասարդ, տգետ թե ուսումնական, գավառացի թե քաղաքացի: Ամենքին գովելու և դրվատելու համար նրա ճարտարախոս լեզուն հարմար և պատշաճավոր խոսքեր ու դարձվածներ ունի: Ամենքի համար նա և՛ մայր է, և՛ քույր, և՛ հորաքույր, և՛ հոգացող, և՛ հովանավորող: Ով ինչ պետք ունի, նա կարող է լցուցանել. պաշտո՞ն եք պտրտում, նա պաշտոն տվող մարդկանց տեղը ձեզ կասե. կամենո՞ւմ եք ծանոթանալ այս ինչ պարոնի կամ տիկնոջ հետ, նա՞ դրա ճանապարհն էլ ցույց կտա. տեղեկությունն՞ եք ուզում քաղել այս կամ այն ընտանիքի մասին, նա ինքն այդ տեղեկությունները կտա կամ մի քանի ժամից կբերե. բարեկամդ խռովե՞լ է քեզանից, նա կարող է հաշտեցնել, մի խորհուրդ կամ ժողով ունիք անելու, որին կամենում եք մասնավոր կերպարանք տալ. նա յուր սարքած հյուրասենյակը կդնե ձեր տրամադրության տակ. հարկավոր է այս ինչ միտքը կամ լուրը տարածել հասարակ ժողովրդի կամ շատախոս կանանց շրջանում, դրա համար էլ նա պատրաստ է: Միով բանիվ տիկ. Մարթան ամենագետ և ամենակար մի կին է՝ ամեն դասակարգի և սեռի անձանց պիտանի: Միայն չարությունն է, որ նա չի կարող անել, որովհետև, ինչպես ինքն է ասում, աստված նրան բարի է ստեղծել:

Այս է պատճառը, որ տիկ. Մարթան մեծ ազգականություն չունենալով հանդերձ՝ բազմաթիվ և բազմատեսակ բարեկամներ ունի: Տգետ վաճառականից կամ գործակատարից սկսած մինչև հայոց գիտուն քահանաներն ու խմբագիրները՝ բոլորն էլ նրան ճանաչում են և բոլորի մոտ նրա խոսքը գին ու կշիռ ունի. (այս վերջին վկայությունը, իհարկե, ինքն է յուր մասին տալիս, իսկ մենք ճշմարտությունից հեռու չենք գտնում):

Ինչ օրիորդ Շուշանին է վերաբերում, նա էլ լավ աղջիկ է: ճշմարիտ է, շատ գեղեցիկ չէ. հասակը մոր նման բարձր և քայլվածքն ավելի քան կոպիտ է. բայց սիրուն աչքեր ունի, որոնց հովանավորում են բարակ ու թավամազ հոնքեր. հարուստ ու ալեծածան մազերը զարդարում են ճակատը: Բերանը փոքր ինչ լայն է, շրթունքները բարակ, որոնք երբեմն խիստ գեղեցիկ ժպտում են: Ձեռքերը միայն գեղեցիկ չեն, որովհետև շատ գործ շինելուց կոպտացել են: Բնավորությամբ մոր հակապատկերն է ներկայացնում: Խիստ համեստ է, ամաչկոտ և լռակաց, որի պատճառով ասում են թե նա ճիշտ յուր տկար հորն է նմանում, որ հին վարժապետներից մեկն է: Ճշմարիտ է, մորը հնազանդ է: Երբ հյուրեր են գալիս իրենց մոտ, մինչև անգամ այնպիսի շատախոս և պրտկերես երիտասարդներ, որոնք պատշաճից ամեն կարգ ու կանոն մի կողմ թողած բարձրաձայն խոսում, գոռում-գոչում են երբեմն էլ երգում կամ պարում են, նա դրանց էլ ընդունում է պատվով ինչպես հյուրերի. դրանց համար էլ հոժարակամ թեյ կամ սուրճ է բերում, բայց յուր սրտի խորքում ատելով ատում է այդպիսիներին և զայրանում յուր մոր դեմ, որ այդ տեսակ բարեկամներով շրջապատել է իրեն: Այդ առթիվ նա շատ անգամ էլ նկատողություններ է անում մորը, բայց վերջինս ավելորդ է համարում աղջկա խելքով շարժվել:

Սարյանի և Մոմճյանի ծանոթությունից մի օր հետո, տիկ. Մարթայի տանը մի ժողով կար: Դա ոչ թե հասարակ, այլ խմբագրական ժողով էր:

Ընթերցողներս գուցե հետաքրքրվեցան իմանալու, թև այդ ո՞ր տարօրինակ խմբագիրն էր, որ յուր խմբագրական ժողովը փոխանակ սեփհական խմբագրության մեջ՝ տիկին Մարթայի տանն էր անում:

Հարկավոր եմ համարում հայտնել, որ պ. խմբագիրը հենց տիկ. Մարթայի մոտ էլ ապրում էր: Դա պ. Մանուկ Շաշյանն էր: Ինքը գավառացի էր և հազիվ մի տարի կար ինչ գտնվում էր Թիֆլիսում: Ինչպես էր պատահել, որ նա այդ կարճ միջոցում խմբագիր էր դարձել, այդ մենք հետո կիմանանք, բայց թե ինչպե՞ս խմբագիր էր, որ մի փոքրիկ սենյակում էր ապրում և յուր խմբագրությունն այդտեղ էր ամփոփում, դրա պատճառը այն էր, որ նրա թերթը դեռ նոր էր. շատ բաժանորդներ չուներ, հետևապես դրամական դրությունն էլ նախանձելի չէր: Սկզբում, իհարկե, անհրաժեշտ էր, որ նա խնայողությամբ ապրեր, ուստի այդպես էլ անում էր, մինչև որ տեսներ թե բախտը ի՞նչ է հաջողում իրեն:

Բայց ժողովը խմբագրի ննջարանում չէր, այլ տիկ. Մարթայի ընդարձակ և ճաշակով սարքված հյուրասենյակում:

Սենյակի մեջ աչքի ընկնող զարդարանքը կազմում էին երկու մեծ հայելիներ: Հայելիների առաջ դրված էին երկու ընկուզյա կրկնածալ սեղաններ, որոնք հարկավորվում էին թղթախաղի ժամանակ և ծառայում էին տիկնոջ այն հյուրերին, որոնք խոսել չէին սիրում, բայց կռվել սիրում էին: Սենյակի մի անկյունում դրված էր մի մեծ հնատարազ բազմոց և նրա առաջ կիսաբոլոր շարված հինգ հատ բազկաթոռ: Դրանց մեջտեղում դրված էր բոլորիկ սեղան, ծածկված թավշյա սփռոցով, իսկ սեղանի վրա մեծ փորով և ավելի մեծ լուսամփոփով մի լամպար: Դրա կողքին գտնվում էր մի մեծ, ոսկեզօծ, բայց արդեն մաշված ալբոմ, որը լցված էր տիկ. Մարթայի երկու սեռի բարեկամների բազմաթիվ լուսանկարներով: Սենյակի մի ուրիշ անկյունում դրված էր թախտ, ծածկված ֆարահանի մի թանկագին գորգով: Սենյակի պարապ տեղերում, պատերի տակ, շարված էին Վիեննայի սև աթոռներ, իսկ անկյուններում և թախտի առաջ փոքրիկ կլորիկ սեղաններ:

Որովհետև ժողովի օր էր, ուստի սենյակի մեջտեղը դրված էր նաև մեծ սեղան, մոխրագույն սփռոցով ծածկած, որի վերևից կախվում էր մեծ լուսամփոփով մի լամպար:

Երեկոյան ժամը չորսն էր: Սեղանի մոտ նստած էր խմբագիրը: Դա միջին հասակով, ոչ շատ առողջ կազմվածքով, նիհար, երկար և մի փոքր սփրթնած դեմքով մեծ-մեծ աչքերով, որոնց մեջ խելքի արտահայտություն չէր նշմարվում և արագ-արագ, բայց թլվատ լեզվով խոսող մի երիտասարդ էր:

Նրա առաջ նստած էր Սարգիս Մովսիսյանը, որ նույնպես գավառացի էր և. Շաշյանի թերթի աշխատակիցը: Դա նույնպես միջին հասակով, մոտ քսանվեց տարեկան, նիհար, բայց կոպիտ կազմվածքով, վերին աստիճանի շարժուն և կենդանի, տգեղ, բայց արտահայտիչ դեմքով, շատախոս, դյուրաբորբոք, սակայն բարի և խառնվող երիտասարդ էր:

Սեղանից հեռու, բազմոցի և բազկաթոռների վրա նստած էին մի քանի ուրիշ երիտասարդներ և օրիորդներ, որոնք ցած ձայնով խոսակցում էին իրար հետ. իսկ սենյակի անկյունում դրված թախտի վրա՝ կուռը մութաքին հենած և ոտները ձգած պառկած էր մի փոքրահասակ, տգեղ դեմքով, մեծ և ծաղկատար քթով ու կարճ կտրած մազերով մի օրիորդ, որ ռուսերեն մի ինչ որ գիրք էր կարդում:

Ժողովը դեռ սկսված չէր: Պ. խմբագիրն ու աշխատակիցը մի-մի թերթ առջևները դրած խազխզում էին: Երևում էր, որ նրանք դարձյալ սպասում են մի մարդու:

Աշխատակից Մովսիսյանն երկար յուր թուղթը խազխզելուց և նրա վրա գիրք, սեղան, թռչուն, ձիու գլուխ և կոշիկներ նկարելուց հետո հանկարծ ընդհանուր լռությունն ընդհատեց:

— Կարծեմ մենք հարկ եղածից ավելի սպասեցինք, սկսենք մեր գործը։— Այս ասելով նա յուր հայացքն ուղղեց պ. խմբագրի և բազկաթոռների մեջ ձգված երիտասարդների վրա, սպասելով, թե նրանք ինչ պիտի ասեն։

— Սկսենք, եթե կամենում եք, — հարեց երիտասարդներից մեկը։

— Սպասեցեք, խնդրեմ, մի հինգ րոպե, իսկույն վերջացնում եմ, — խոսեց թախտի վրա պառկած օրիորդը և գրքի թերթը շրջեց։

— Դուք հետաքրքիր բան եք կարդում և ժամանակը ձեզ համար անզգալի է անցնում, օրիորդ. իսկ մենք ձանձրանում ենք, — պատասխանեց Մովսիսյանը։

— Ձանձրանո՛ւմ եք. ամոթ չէ՞, և օրիորդների առա՞ջ եք այդ խոսքերն արտասանում, — սուր ու ճնշող ձայնով նկատեց մի փոքրահասակ և փոքրիկ դեմքով օրիորդ, որ շարունակ շատախոսում էր յուր կողքին նստած երիտասարդի հետ։

— Օրիորդ, մի՛ նեղանաք, չգիտե՞ք որ պարոն Մովսիսյանն ասպետ չէ, — արդարացրեց երիտասարդին խմբագիրը և կամացուկ շշնջաց նրա ականջում, որ ներողություն խնդրե օրիորդից։

— Էհ, բան չունի՞ս. ներողություն չէ՞, ոտքերն էլ ընկնեմ. իհարկե ձանձրանում եմ, — բարկացավ Մովսիսյանը և բարձրանալով՝ մոտեցավ սենյակի պատուհանին։

Երիտասարդներն ու օրիորդները սկսեցին ծիծաղել, իսկ փոքրահասակ աղջիկը սրտնեղությունից մինչև ականջները շառագունեց։ Բայց որպեսզի ցույց տա թե Մովսիսյանի կոպտությունից չվիրավորվեց, նրա խոսքը կրկնեց.

— Եվ իրավ պ. Շաշյան, ինչո՞ւ չեք սկսում, գուցե պ. Մոմճյանը չէ գալիս։

— Եթե նա չգա, ես էլ հարցեր չի պիտի ունենամ առաջարկելու։

— Ինչպե՞ս, դուք չե՞ք խմբագիրը, ինչո՞ւ հարցերը պ. Մոմճյանը պիտի առաջարկե։

— Այսինքն ես այդ չկամեցա ասել. ես... հա, այն էի ուզում ասել, որ այսօրվա ժողովը նրա խնդրանոք եմ հրավիրել. նա ունի որոշ հարցեր, որոնց կամենում էր առաջարկել ձեր քննության։

Օհ, հրաշալի է, հրաշալի. ի՜նչ նկարագրություններ, ի՞նչ մերկացումներ։ Հանճար է, երկնային հանճար, — բացականչեց հանկարծ թախտի վրա պառկած օրիորդը և տեղից բարձրանալով փակեց ձեռքի գիրքը և փոքրիկ սեղանի վրա դնելով՝ մոտեցավ խոսողներին։

— Ո՞ւմ մասին եք խոսում, օրիորդ, ո՞վ է հանճար, — հարցրեց երիտասարդներից մեկը։

— Զոլան։ — Իհարկե, և ի՞նչ հանճար, — վկայեց պ. խմբագիրը։

— «Նանան» եք կարդում, այնպես չէ՞, — հարցրեց փոքրահասակ օրիորդը։

— Այո, միայն շորս գլուխ մնաց, որ ավարտեմ։

— Ես երկու անգամ միմյանց վրա կարդացել եմ և միշտ հիացմունքով։

— Այդպիսի գրվածքը հինգ անգամ էլ արժե կարդալ, — հարեց խմբագիրը։

— Իսկ դուք մի անգամ եք կարդացել, չէ՞, — հարցրեց նրան կարճ մազերով օրիորդը:

— Ո՛չ, ես դեռ չեմ կարդացել:

— Դու որ չես կարդացել, ի՞նչ ես խորհուրդ տալիս ուրիշներին, որ հինգ անգամ կարդան, — ծիծաղելով նկատեց Մովսիսյանը:

— Պ. Մոմճյանը կարդացել է, — ասաց խմբագիրը:

— Քե՞զ ինչ:

— Ինչպե՞ս թե ինձ ինչ. միևնույն գիրքը խմբագրության բոլոր անդամները հո չի պիտի կարդան. այնքան ժամանակ որտեղի՞ց է. մեկը կկարդա և բովանդակությունը մյուսներին կպատմե:

— Ուրեմն ձեր խմբագրության մեջ ամեն օր միայն մի մա՞րդ է հաց ուտում, մյուսները ծո՞մ են պահում:

— Ի՞նչ կնշանակե այդ:

— Կնշանակե թե՝ մեկը կուշտ փորով արտալա, բաստուրմա ու կոմպոտ է ուտում, մի շիշ էլ վրան գինի է խմում, և հետո մյուսներին պատմում է, որ ինքը կերել է և նրանք կշտանում են, այդպես չէ՞: Երիտասարդներն ու օրիորդներն սկսան ծիծաղել:

— Շատ տղայական համեմատություն եք անում, — վրդովված նկատեց խմբագիրը:

— Դրանից ավելի լավ համեմատություն չէի կարող անել, — հարեց Մովսիսյանը:

Այս միջոցին ներս մտավ ժողովականների մոտ պ. Հակոբ Մոմճյանը, որի հետ «Արդար քրտինքով ապրողների թեյարանում» ծանոթացանք: Ձեռքի թղթապանակն աթոռներից մեկի վրա դնելով՝ նա ծիծաղադեմ մոտեցավ ժողովականներին և քաղաքավարությամբ ողջունելով նրանց՝ նստեց խմբագրի կողքին:

— Ներեցեք խնդրեմ, որ այսքան երկար սպասել տվի ձեզ: Պիտի գիտենաք, որ ամենքիս համար կշիռ և նշանակություն ունեցող մի գործով էի զբաղված, — այս խոսքերով դարձավ երիտասարդը ժողովականներին և թաշկինակը հանելով սրբեց յուր քրտնած երեսն ու ճակատը:

— Օրիորդներն ու պարոնները ցանկանում էին, որ ժողովն ինքս բանամ, բայց ես հայտնեցի, որ այսօրվա առաջարկություններն իսկապես ձերը պիտի լինին, խոսեցեք ուրեմն, ժամանակն անցնում է, — հայտարարեց խմբագիրը:

— Կարծեմ ամեն խմբագրական ժողովներում առաջարկություններ անողը ես եմ, — խորհրդավոր ակնարկությամբ նկատեց Մոմճյանը և ժպտաց:

— Այդ միևնույն է, պարոն, գործին անցնենք, — ընդհատեց նրան երիտասարդ Մովսիսյանը:

— Իմ այսօրվա առաջարկությունը, պարոններ, ծանրակշիռ առաջարկություն է և խնդրում եմ, որ ամենքդ էլ պատշաճավոր ուշադրություն դարձնեք նրա վրա, — այս առաջաբանով սկսեց յուր խոսքը Մոմճյանը:

— Ձեզ հայտնի է, որ մեր թերթը թեպետ նոր, բայց արդեն հայտնի է դարձել: Այդ մենք պարտական ենք ոչ թե նրա ներքին բովանդակությանը, որի արժանիքը դեռ չէ կարող գնահատել մեր հասարակությունը, այլ ա՛յն ջանքերին, որ մենք գործ ենք դրել մեծ

թվով բարեկամներ վաստակելու և նրանց ձեռքով բաժանորդների թիվը շատացնելու: Սակայն այդ միջոցը մեզ օգնել է միայն հայտնի դառնալու, բայց նա, ինչպես այժմ տեսնում եմ, մեզ չի կարող հասցնել մեր բուն նպատակին, որ է՝ ստեղծել մեզ համար մի զորեղ կուսակցություն, որի շնորհիվ կարողանանք հասարակական որոշ գործեր մեր ձեռքն առնել: Մեր թերթը համեստ ծրագիր ունի, նա չի կարող հասարակական հարցեր շոշափել, մտքեր գրգռել, աղմուկ հարուցանել. հետևապես նա երբեք էլ մեզ համար հիշածս կուսակցությունը չի ստեղծիլ: Բայց մենք պետք է կուսակցություն ունենանք. մենք պետք է կուսակցության առաջնորդ ու պարագլուխ հռչակվենք, որպեսզի մեր որոշ ծրագիրներն առաջ տանել կարողանանք: Մի համեստ և մասնավոր թերթի հրատարակիչ կամ խմբագիր լինելը բավական չէ դեռ, որ մարդ հասարակության առաջ երևա:

— Ի՞նչ պետք է անել, ուրեմն, ձեր կարծիքով, — ընդհատեց Մոմճյանին խմբագիրը:

— Ի՞նչ պետք է անել, հապա ասացեք, — կրկնեց նույն հարցը Մոմճյանը, հարցական հայացք ձգելով ժողովականների վրա:

— Ի՞նչ պետք է անել. ասացեք, երևի դուք այդ մասին մտածել եք, — խոսեց կարճ մազերով և երկար քթով օրիորդը:

— Այո՛, ոչ միայն մտածել, այլև ահա՛ ամբողջ ամիս է, որ այդ նպատակով գործում եմ, և արդեն հասել եմ շատ արդյունավոր հետևանքի, — ինքնագոհ ժպիտով պատասխանեց Մոմճյանը:

— Բայց ի՞նչ եք մտածել և գործել, ասացեք, որ մենք էլ իմանանք, — անհամբերությամբ ընդհատեց Մովսիսյանը:

— Ահա թե ինչ. կուսակցություն, և այն հզոր կուսակցություն ստեղծելու համար մենք պետք է դիմենք ամբոխին և նրա հետ ձեռք ձեռքի տված գործենք:

— Նոր միտք, հրաշալի միտք, — բացականչեց խմբագիրը և հիացմունքով աչքերը սևեռեց Մոմճյանի վրա:

— Ամբոխի՞ն դիմենք, և այդ դո՞ւք եք ասում, պարոն Մոմճյան, — զարմացած բացականչեց երիտասարդ Մովսիսյանը, որ միշտ մի առանձին համակրությամբ էր նայել Մոմճյանի վրա իբրև մի շատ ազնիվ և բարձր գաղափարներով ապրող ու ոգևորվող մարդու վրա:

— Այո՛, ամբոխին, որովհետև նրա ուժը մեծ է, և եթե այդ ուժը մեր թիկունքում ունենանք, հավատացեք, որ մեր առաջ փակող բոլոր թումբերը կկործանենք:

— Եվ դուք ձեր ձեռքը կտա՞ք ամբոխի մարդկանց, որ նրանց հետ միանաք, — գրգռված հարցրեց Մովսիսյանը: — Եվ ինչո՞ւ չէ. կրթված և իսկապես ազատամիտ մարդն ինչո՞ւ պետք է խորշի ամբոխից, ինչո՞ւ չպետք է յուր ձեռքը մեկնե նրան:

— Կրթված և իսկապես ազատամիտ մարդը, այո՛, չպետք է խորշի ամբոխից և յուր ձեռքը պետք է պարզե նրան, բայց այն դիտավորությամբ, որ ամբոխին քայլ առ քայլ մոտեցնե լույսին, ճշմարտությանը, որ նրան ազատի կեղտից, անմաքրությունից և ոչ թե ձեռքը պարզե նրան այն նպատակով, որ Նրա վայրենի ուժից օգտվի, կամ ավելի լավ ասած, նրա հետ միասին ցեխի ու տիղմի մեջ թավալե...

— Դուք ինձ լավ չհասկացաք, պարո՛ն, և վիրավորական ակնարկություն եք անում իմ հասցեին, դուք իմ միտքը ձեր բացատրությամբ խեղաթյուրում եք, — իբրև թե

վրդովված նկատեց Մոմճյանը, աշխատելով Մովսիսյանի խոսքերի ժողովականների վրա արած ազդեցությունը նվազեցնել:

— Եթե լավ չեմ հասկացել, խնդրեմ նորեն բացատրեցեք:

— Այո՛, լավ չեք հասկացել, ես կամենում էի ասել, որ մենք շարունակ հեռու մնալով ամբոխից՝ օտարանում ենք նրանից և իրեն էլ օտարացնում մեզանից: Մենք պետք է մոտենանք նրան, նրա գործերով և կարիքներով հետաքրքրվենք և իրեն էլ փոխադարձաբար մոտեցնելով մեզ՝ մեր գործերին ու կարիքներին ծանոթացնենք...

— Եվ հետո՞...

— Եվ հետո նա՝ մեր իրեն ցույց տված բարեկամությունն ու եղբայրությունը գնահատելով՝ շատ գործերում մեզ թև ու թիկունք կլինի: Որտեղ մեզ ուժ է հարկավոր, ուժ կտա, որտեղ փող է հարկավոր, փող կտա...

— Դուք, պարոն, նոր բան չավելացրիք. դուք կրկնեցիք ա՛յն, ինչ որ առաջ էիք ասում, միայն թե այս անգամ ավելի բացահայտ բառերով:

— Սխալվում եք:

— Ոչ, չեմ սխալվում:

— Այո՛, ճիշտ է, միևնույն միտքը հայտնեցիք, — հաստատեց պ. խմբագիրը:

— Դո՞ւք էլ, — խորհրդավոր ձայնով դարձավ Մոմճյանը խմբագրին և աչքերը շարունակ նրա վրա սևեռած՝ ձեռքը տարավ դեպի ծոցը և այնտեղից մի ծալած թուղթ հանելով բացավ և գրած երեսը դեպի խմբագիրն ուղղելով՝ կոշտ ձայնով ասաց, — կարդացե՛ք, եթե ծանոթ չեք սրա բովանդակության հետ:

Խմբագիրը դժգոհությամբ աչքերը խոնարհեց և սկսեց առջևը դրած թղթի վրա նկարած թռչունի պոչը մատիտով սևացնել:

Մոմճյանը կարծես հաղթանակ տարած՝ աչքերը շրջեց դեպի օրիորդները, հպարտությամբ ժպտաց և թուղթը ծալելով դրավ ծոցի մեջ:

Մովսիսյանը, որ խիստ հետաքրքրությամբ նայում էր այդ խորհրդավոր տեսարանին, Մոմճյանի մնջակատակի նշանակությունը հասկանալով, և նրա հեգնական ժպիտը տեսնելով կատաղելու չափ վրդովվեց:

— Եվ դուք, պարոն, ձեզ կրթված և ազատամիտ մարդ եք համարում, հա՞, — վրդովված դարձավ նա Մոմճյանին:

— Ի՞նչ է պատահել ձեզ, պարոն, դուք այսօր ավելի քան կոպիտ և անքաղաքավարի եք, — նկատեց վերջինս:

— Կրկնում եմ, դուք ոչ կրթված եք և ոչ ազատամիտ, դուք արգելում եք ձեր ընկերին յուր կարծիքը հայտնելու, որովհետև այդ կարծիքն ընդդեմ է ձեզ:

— Պարոն, զգույշ կացեք. մենք ձեզ իրավունք չենք տվել մեր ներքին գործերի մեջ խառնվելու, — որոտալով բացականչեց Մոմճյանը և ձեռքը զարկեց սեղանին այնպես ամուր, որ նրա վրա դրված թանաքամանից թանաքի ցայտերը թռան մոխրագույն սփռոցի վրա:

— Եթե բանը գոռալուն գա, այնպես կգոռամ, որ ձեր ականջները կխլանան, — գոչեց Մովսիսյանը և տեղից բարձրացավ:

— Ի սեր աստուծո, պ. Մովսիսյան...

— Հանգստացեք. պ. Մոմճյանց...

— Եղբայր, կռվելու ի՞նչ ունիք...

Այս ու այն կողմից խոսեցին երիտասարդներն ու օրիորդները և նրանցից մինը բռնելով Մովսիսյանի ձեռքից նստեցրեց յուր կողքին:

— Ճիշտ է, պարոն, դուք մեր ներքին գործերին չպետք է խառնվեք, — դարձավ խմբագիրը Մովսիսյանին. — ինձ էլ շատ մի պաշտպանեք. այնպիսի խնդիրներ կան, որ միայն ինձ և պ. Մոմճյա... ոչ, այսինքն միայն պ. Մոմճյանին և մասամբ էլ ինձ են վերաբերում...

— Ցա՛ծ, ստո՛ր արարածներ, ձեր մեջ նստելն անգամ անպատվություն է... — զայրացած բացականչեց Մովսիսյանը և տեղից բարձրանալով ձեռքի մատիտը շպրտեց սեղանի վրա ու դեպի դուռը դիմեց:

— Վա՛, վա՛, ի՞նչ է պատահել, ո՞վ է քեֆիդ դիպել, Սարգիս ջան, — երիտասարդի առաջը բռնելով խոսեց տիկին Մարթան, որ այդ րոպեին ներս էր մտնում ժողովականների մոտ: — Արի, արի տեսնեմ. Շուշանը թեյ է բերում, արի թեյ խմիր, այդ ո՞վ է իմ սիրուն տղիս բարկացրել, ես նրա ցավը տանեմ, արի տեսնեմ...

— Թողե՛ք խնդրեմ, տիկին, ինձ մի՛ խանգարեք, — բարկացած խոսեց Մովսիսյանը և կամեցավ առաջ անցնել:

— Վա՛, դու կարծում ես թե բաց կթողնե՞մ. արի տեսնեմ, արի, հոգիս, ո՞վ է քու քեֆին դիպել, բոլորին դուրս կանեմ, Է՛յ, աղջկերք, դուք հո չե՞ք իմ տղիս նեղացրել. Շուշանիս արևը գիտենա, թե ձեզ մարդու տամ, այնպես կանեմ, որ պատռվեք, տանը մնաք...

— Մենք ոչինչ չենք արել, տիկին, ոչինչ չենք արել, — ճչալով խոսեցին աղջկերքը գրեթե միաբերան:

— Թողե՛ք խնդրում եմ. պիտի հեռանամ, չեմ կարող մնալ, — նեղացած խոսում էր Մովսիսյանը, բայց տիկ. Մարթան շարունակ աշխատում էր քարշ տալ նրան դեպի ընկերակիցները:

Այդ միջոցին ներս մտավ սենյակը օրիորդ Շուշանը թեյի սկուտեղը ձեռքին:

— Հիմա էլ չեք գա՞լ, — խորհրդավոր ձայնով հարցրեց Մարթան և ժպտաց:

— Հիմա հո ավելի չեմ գալ, — ասաց երիտասարդը բարկացած և ձեռքը Մարթայի ձեռքից խլելով դուրս գնաց սենյակից:

— Ի՞նչ է պատահել, ասացեք, ի սեր աստուծո, — մոտենալով ժողովականներին հարցրեց տիկ. Մարթան և նստեց նրանց մոտ:

Երիտասարդներից մինը համառոտ մի բան պատմեց տիկնոջը գոհացնելու համար:

— Վերցրեք ձեր թեյը խմեցեք, ես նրան կհաշտեցնեմ. այդպես բաներ շատ է պատահել, այս առաջին անգամը չէ. — մխիթարեց ժողովականներին տիկինը և թեյի բաժակները յուր ձեռքով վերցնելով բաժանեց նրանց:

— Նա այնպիսի համառն է, որ էլ չի վերադառնալ, — նկատեց երիտասարդներից մինը:

— Չէ, նա իմ ձեռքից չի պրծնիլ, ականջից բռնած կբերեմ, — պարծեցավ Մարթան:

— Մի՛ նեղանաք, տիկին, շատ էլ չենք կարոտում նրան, — հարեց Մոմճյանը և սկսեց յուր թեյը խառնել:

— Իհարկե, չենք կարոտում, — ավելացրեց խմբագիրը. — միայն թե մի անհարմարություն կա...

— Ի՞նչ անհարմարություն, — ընդհատեց Մոմճյանը:

— Այն, որ «Փնջիկ»-ը մենք հայերեն ենք հրատարակում..

— Ա՞յդ ինչ է նշանակում, հապա հայերի համար հրատարակվող թերթը թուրքերե՞ն պիտի հրատարակեիք:

— Իհարկե ոչ. բայց որովհետև հայերեն ենք հրատարակում, ուստի անհրաժեշտ էր, որ մեր խմբագրության մեջ գոնե մի հատ հայագետ աշխատակից ունենայինք: Պարոն Մովսիսյանն այդ պակասը լրացնում էր:

— Չգիտեմ, խոսածներդ հասկանո՞ւմ եք, թե՞ խոսում եք միայն խոսելու համար. — բարկացած, բայց քթի տակ շշնջաց Մոմճյանը:

— Այսինքն, ես... իհարկե, մի քիչ պարզ չհայտնեցի իմ միտքս: Ուզում էի ասել, որ դուք, պ. Մոմճյան, ռուսաց գիմնազիոնում միջոց եք ունեցել հայերենը լավ ուսումնասիրելու, բայց ես, խոստովանում եմ, ոչ մի տեղ կանոնավոր չեմ սովորել, թեպետ ինքս առանձին շատ պարապել եմ: Օրինակ, «Հյուսիսափայլ»-ի բոլոր հատորները կարդացել եմ, «Բազմավեպ»-ի...

— Ես էլ եմ «Հյուսիսափայլ»-ի մի հատորը կարդացել: Կարծեմ Նալբանդյանի հեղինակությունն է, այնպես չէ՞, — ընդհատեց խմբագրին փոքրադեմ և փոքրահասակ օրիորդը:

— Ո՛չ, Նազարյանցի, — ուղղեց օրիորդի սխալը մի երիտասարդ:

— Կարծեմ երկուսդ էլ սխալվում եք. «Հյուսիսափայլ»-ը մի առանձին դիրք կամ հեղինակություն չէ, այլ օրաթերթ է, — խոսեց մի ուրիշը:

— Ո՛չ, կարծեմ շաբաթաթերթ է, — հարեց երրորդը:

— Ո՛չ, ո՛չ, նա հայտնի հեղինակություն է, — պնդեց խմբագիրը, — ես լավ հիշում եմ, իմ կարդացածս առանձին-առանձին հատորներով էր կազմած:

— Տեր աստված, այսքան էլ տգիտություն, — կամացուկ շշնջաց մի լռակաց երիտասարդ, կարծելով թե ոչ ոք չլսեց իրեն, բայց Մոմճյանի ականջին հասավ այդ շշունջը.

— Բարեկամներս, — ասաց նա, — այսօր, ես այնքան եմ հոգնել և ուղեղս այնպես է լարված, որ ոչ դատելու և ոչ դատողություններ տալու ցանկություն ունիմ. թողեք ձեր հակաճառությունը, եթե կարելի է և մի փոքր էլ զվարճախոսությամբ զբաղվեցեք: Այս խոսքերով նա կամեցավ փակել անաջող սկսած վիճաբանությունը:

Բայց «Նանա» կարդացող օրիորդը դարձյալ ընդմիջեց. — այսուամենայնիվ, պ. Մոմճյան, ցանկալի էր լսել ձեր կարծիքը «Հյուսիսափայլ»-ի մասին:

— «Հյուսիսափայլ»-ը, ինչպես պարոն խմբագիրն ասաց, մի ամսաթերթ էր, որ հրատարակվում էր Մոսկվայում Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ:

— Պ. խմբագիրն այդպես չասաց, — ճչալով նկատեց փոքրադեմ և փոքրահասակ օրիորդը:

— Չգիտեմ, կարծեմ ես այնպես լսեցի:

— Այսինքն ես... այո՛, սխալվեցա. իմ խոսքն, իսկապես, «Բազմավեպ»-ի մասին էր. բայց երևի սխալմամբ «Հյուսիսափայլ» ասացի, — արդարացրեց իրեն խմբագիրը:

— «Բազմավեպ»-ի մասին... ի՞նչ բան է «Բազմավեպ»-ը, — հետաքրքրությամբ հարցրեց ճչող օրիորդը:

— «Բազմավեպ»-ը...

— Ի սեր աստուծո, վերջ տվեք այդ անօգուտ խոսակցությանը, — ընդհատեց Մոմճյանը խմբագրին՝ վախենալով թե գուցե նա նորեն մի անհեթեթ, խոսք ասե: Եվ որպեսզի զբաղեցնե ժողովականներին, նա դարձյալ յուր առաջարկած խնդիրն առաջ բերավ:

— Իմ առաջարկության վերաբերմամբ, պարոններ, դուք ձեր կարծիքը չհայտնեցիք, — ասաց նա:

— Մովսիսյանը, ինչպես տեսաք հակառակ կարծիք հայտնեց, իսկ դո՞ւք ինչ եք ասում:

— Ո՞ր առաջարկության վերաբերմամբ, — հարցրեց երիտասարդներից մինը:

— Ա՛յն, որ ասացի թե՝ հզոր կուսակցություն ստեղծելու համար ամբոխին պիտի դիմենք:

— Ա՛յո, հիշում եմ. բայց առաջ ասացեք թե մեր ինչի՞ն է պետք հզոր կուսակցությունը:

— Ո՛չ, առաջ բացատրեցեք թե ի՞նչ բան է հզոր կուսակցությունը, — ընդհատեց փոքրադեմ օրիորդը:

— Հզոր կուսակցություն, հարգելի օրիորդ, կնշանակե ունենալ քաղաքի մեջ հավատարիմ բարեկամների այնպիսի մի բազմություն, որը քեզ հետ համամիտ և համակարծիք լինի ամեն դեպքում: Այսինքն եթե դու ասես, որ մածունը սև է, նա էլ քեզ հետ միասին գոչե թե՝ այո՛, սև է. եթե ասես, որ մուրը սպիտակ է, նա էլ վկայե թե՝ այո՛, սպիտակ է: Իսկ թե մեր ինչի՞ն է պետք այդ տեսակ կուսակցությունը, բացատրեմ, երևակայեցեք, որ դուք, պարոն ուսանող, ավարտել եք ձեր ուսումը և իբրև բժիշկ վերադարձել եք այստեղ: Դուք նոր եք. ծանոթ ու բարեկամ չունիք, բայց դուք պատկանում եք մեր կուսակցությանը: Եվ ահա՛ մենք մեր բոլոր բարեկամներին առաջարկում ենք, որ հարկավոր դեպքում ձեզ դիմեն իբրև բժշկի և ոչ թե մի ուրիշին, և նրանք այո առաջարկությունը հարգում են: Ահա՛ ձեզ կուսակցություն ունենալու օգուտը: Այժմ ուրիշ օրինակ: Ենթադրենք, որ դուք, հարգելի օրիորդ, ավարտել եք գիմնազիոնը և կամենում եք հայոց այս ինչ դպրոցում պաշտոն ունենալ: Բայց այդ դպրոցի հոգաբարձուները ձեզ բարեկամ չլինելով, շեն էլ ընդունում ձեզ: Եվ ահա՛ նրանց պաշտոնավարության ժամանակը լրանում է և նոր ընտրություններ պիտի կատարվին: Իսկույն մեր կուսակցությունը խռնվում է եկեղեցին, ձեռք առնում ընտրությունը և հոգաբարձուներ է ընտրում այնպիսի մարդկանց, որոնք թե՛ ձեզ են պաշտոն տալիս և թե ձեր բարեկամին, որովհետև դուք էլ, բարեկամն էլ մեր կուսակցությանն ենք պատկանում: Ահա ձեզ մի ուրիշ օգուտ:

Դարձյալ մի օրինակ: Ձեզ հայտնի է, որ մենք ընկերություններ ունինք, որոնք հազարներ են ստանում ու բաժանում: Ո՞ւմ ձեռքով են անցնում այդ փողերը. իհարկե վարչությունների, բայց որո՞նց և ի՞նչ գործերի համար են վճարում այդ փողերը, մեզ հայտնի չէ: Իսկ եթե վարչություններ ընտրելու ժամանակ մեր հզոր կուսակցությունը մտնե ընդհանուր ժողովի դահլիճը և ձայների մեծամասնությամբ ընտրե վարչության անդամ ա՛յն մարդկանց, որոնց մենք են կամենում, հարկավ, մի գեղեցիկ օր այդ ընկերություններն իրենց դրամագլուխներով ու եկամուտներով մեր ձեռքում կլինին և մենք այդ եկամուտները կծախսենք այնպես, ինչպես որ արժանավոր կդատենք... Ահա ձեզ մի երրորդ օգուտ: Այսպես ես կարող էի դեռ ուրիշ շատ փաստեր առաջ բերել, բայց հիշածներս արդեն բավական են իմ առաջարկության օրինավորությունը հաստատելու համար:

— Հիանալի միտք, հրաշալի միտք, — բացականչեց խմբագիրը և ձեռքերը բարձրացնելով կամենում էր ծափահարել, բայց Մոմճյանը խանգարեց նրան:

— Թույլ տվեք, որ մյուս ժողովականներն էլ իրենց կարծիքը հայտնեն, գուցե նրանք իմ հայտնած մտքի հետ համաձայն չեն:

— Համաձայն ենք, համաձայն ենք. — գոչեցին ժողովականները գրեթե միաբերան:

— Եթե համաձայն եք, ուրեմն մեզ մնում է խմբագրել մի հրահանգ, որով ամեն մեկս պիտի առաջնորդվենք ամբոխի մեջ գործելու համար:

— Այո՛, այո՛, այդպիսի հրահանգ պետք է խմբագրեր: Ահա՛ թուղթ, ահա գրիչ. բայց կամենում եք մատիտո՞վ գրել, — հարցրեց խմբագիրը Մոմճյանին:

— Ոչ. այդ հրահանգը ես առանձին տանը կպատրաստեմ և կառաջարկեմ առաջիկա խմբագրական ժողովի քննության:

— Այո՛, այո՛, այդպես ավելի լավ է. այնպես չէ՞, պարոններ, — հարցրեց խմբագիրը:

— Այո՛, այդ հարցիդ հրահանգը պ. Մոմճյանը կարող է առանձին պատրաստել, իսկ մենք ապագա ժողովում կքննենք նրան, — հայտնեց յուր համաձայնությունը փոքրադեմ օրիորդը և ժողովականները միացան նրա հետ:

Որովհետև էլ ուրիշ առաջարկություն անող չեղավ, ուստի ժողովականները մի փոքր էլ տիկ. Մարթայի կատակները լսեցին և ապա ցրվեցան:

Երբ Շաշյանն ու Մոմճյանը միայնակ մնացին, վերջինս ծանր նկատողություններ արավ Շաշյանին նրա անտեղի միջամտությունների համար:

— Ձեզ հազար անգամ ասել եմ, որ այս հիմարների մոտ ոչինչ չխոսաք, կարծիքներ չհայտնեք և մանավանդ իմ ասածներին չհակառակեք:

Դուք, ընդհակառակը, ամեն հարցերի մեջ մտնում, ամեն խնդիրներում խառնվում եք: Այդ դեռ բավական չէ, դուք ինձ հակառակում եք այս հիմարների մոտ և նրանց էլ առիթ տալիս իրենց չվերաբերյալ հարցերին խառնվելու: Մի՞թե չգիտեք, որ դրանք միայն մի պարտավորություն ունին այստեղ կատարելու, այն է՝ լսել ինձ և շարունակել լսել:

— Իսկ եթե կամենան որևէ կարծի՞ք հայտնել:

— Դրան էլ ես կպատասխանեմ, դուք խառնվելու գործ չունիք:

— Է՛հ, լավ, մի՛ նեղանաք, եթե սխալ բան էլ խոսած լինիմ, նրանք չէին հասկանալ: Այսուհետև կաշխատեմ զգույշ լինել: Դուք այս ասացեք, թե ի՞նչ պիտի անենք, եթե Մովսիսյանն այսօրվա դեպքից հետո թողնե մեր խմբագրությունը: Արդյոք չպե՞տք է աշխատեմ հաշտեցնել նրան:

— Բնավ: Մովսիսյանի նման հակառակասեր մարդը մեզ հարկավոր չէ. ես նրանից ավելի հմուտ մարդ ունիմ պատրաստ: Apropos[1], այսօր այստեղ մի նոր երիտասարդ չէ՞ հարցրել ինձ:

— Ոչ. ո՞վ պիտի հարցներ:

— Մի նորեկ, որ Չաչանակի հետ պիտի գար:

— Ոչ ոքի չեմ տեսել:

— Ուրեմն վաղը կգա. եթե ես այստեղ չլինիմ, աշխատեցեք պատվով ընդունել, և սպասել մինչև իմ գալը, — ասաց Մոմճյանը և գդակն առնելով դուրս գնաց:

Խմբագիրը մինչև սանդուղքը ճանապարհ դրավ նրան և ապա վերադառնալով սկսեց ճեմել սենյակում և անհոգությամբ սուլել ու երգել:

Ը

«ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴԸ»

Հետևյալ առավոտ խմբագիր Շաշյանը մեծ մտատանջության մեջ էր մի նամակի պատճառով, որը հենց նոր էր ստացել մի պատահական թղթակցից. Ամբողջ կես ժամ սենյակի մեջտեղը կանգնած մտածում էր թե արդյոք դիմե՞ Մովսիսյանի օգնությանը, թե՞ Մոմճյանի հրամանը կատարե:

Խնդիրն ա՛յն էր, որ ստացված նամակը շատ հետաքրքիր տեղեկություններ էր պարունակում յուր մեջ և անհրաժեշտ էր իսկույն ևեթ ուղարկել տպարան, բայց նա գրված էր անգրագետ լեզվով և, ըստ երևույթին, շատ տառասխալներ էր պարունակում յուր մեջ: Վերջին հանգամանքը գուշակեց պ. խմբագիրը նրանից, որ նամակագիրը յուր գրության հենց առաջին տողում երեք հայտնի տառասխալներ էր գրել, այսինքն «մեծապատիվ խմբագիր» գրելու տեղ գրել էր «մեծաբատիվ խմպակիր»: Իսկ թե այդ բառերն, ինչպե՞ս Հին գրվում, պ. խմբագիրը լավ գիտեր, որովհետև սովորել էր արդեն և մինչև անգամ ինքը կարող էր ուղղել, բայց խնդիրը դրանով չէր վերջանում, նամակի մեջ կային և այնպիսի բառեր, որոնց բուն սխալները պ. խմբագիրը գտնել կամ ուղղել չէր կարող: Իսկ առանց ուղղելու անկարելի էր: Նա մնացել էր շվարած:

«Արի՛ այս անգամ Մոմճյանի պատվերն անուշադիր թողնեմ և դիմեմ Մովսիսյանին. գործն իմ թերթին է վերաբերում և ոչ թե Մոմճյանին», — մտածեց ինքն իրեն խմբագիրը և նամակը վերցնելով մտավ Մովսիսյանի սենյակը:

— Ի՞նչ եք կամենում, — հարցրեց վերջինս կոշտ ձայնով:

[1] Apropos — ի դեպ (Ծանոթ. խմբ.):

— Ա՞յդ ինչ ընդունելություն է: Մի՞թե երևակայում եք, որ արդեն խռովել եք մեզանից,— նկատեց Շաշյանը:

— Ինչ որ երևակայում եմ, այդ իմ գործն է. ի՞նչ եք կամենում, ասացեք:

— Հաշտվենք, բարեկամ, հաշտվենք, հակառակությունը լավ բան չէ:

— Հանգիստ թողեցեք ինձ, խնդրեմ:

— Հաշտվենք, ասում եմ:

— Այդ ես լսեցի, ուրիշ ի՞նչ ունիք ասելու:

— Մի նամակ կա:

— Ի՞մ հասցեին...:

— Ոչ, խմբագրությանն ուղղված:

— Ինձ ի՞նչ. այսօրվանից ես ձեր խմբագրության ոչ աշխատակից եմ և ոչ բարեկամ:

— Այդ ես գիտեմ:

— Ուրեմն ի՞նչ եք կամենում:

— Նամակը, երևակայեցեք, շատ անգրագետ լեզվով է գրած և տառասխալներով լիքն է:

— Ինձ ի՞նչ:

— Կամենում էի խնդրել, որ ուղղեք...

Հա՛, հա՛, հա՛, հա՛, կամենում էիք խնդրել, հա՛, հա՛, հա՛, հա՛... պ. խմբագիրը կամենում է խնդրել, որ ուղղեմ... հա՛, հա՛, հա՛...

— Ի՞նչ եք ծիծաղում, պարոն, ես ձեզանից վիրավորանք ստանալու համար չմտա այստեղ: — Ես չեմ վիրավորում, ես ծիծաղում հմա մի՞թե իրավունք չունիմ:

— Ոչ... ինձ վրա ծիծաղելու իրավունք չունիք:

— Ինչպե՞ս, իմ սենյակում ծիծաղելու իրավունք չունի՞մ...

— Դուք ինձ վրա եք ծիծաղում:

— Ուրեմն դուրս գնացեք այստեղից, ես կամենում եմ իմ ծիծաղը շարունակել, հա՛, հա՛, հա՛, հա ...

— Դուք մի ծաղրածու եք, պարոն,— բացականչեց Շաշյանը բարկացած և դուրս գնաց:

— Իսկ դուք կատարյալ խմբագիր եք,— հարեց Մովսիսյանը և յուր ծիծաղը շարունակեց:

Շաշյանը վերադառնալով յուր սենյակը, ձգեց սեղանի վրա դժբախտ նամակը և նստելով բազկաթոռի մեջ՝ ձեռքը դրավ ճակատին և սկսավ մտածել:

Հենց այդ միջոցին դուռը բացվեց և ներս մտավ չաչանակ Սերգոն պ. Սարյանի հետ:

— Աբա, տես թե քիզ համա ինչ բարեկամ իմ բերի, տեսնիմ թե ի՞նչ պտիս բախշի ինձ.— այս խոսքերով մոտեցավ Չաչանակը պ. Շաշյանին և ողջունելով նրան, ավելացրեց.— ձեր օլքցի է, ա՛յ. կուլի վուր ճանչնաս:

— Վա, Վահան. այս որտեղի՞ց. բարով, հազար բարով,— տեսնելով Սարյանին բացականչեց հանկարծ խմբագիրը և ուրախությամբ առաջ վազելով գրկեց նրան և համբուրվեց:

— Բարով, բարեկամ, բարով, մի՞թե դուք էլ այստեղ եք. չէի սպասում:

— Այստեղ եմ, այստեղ եմ ձեր բարի աղոթքով. դուք այն ասացեք, ե՞րբ եկաք, ինչպե՞ս պատահեց, ի՞նչ գործով, ի՞նչ դիտավորությամբ:

Սարյանը Շաշյանի հետաքրքրությունը գոհացնելու համար մի քանի համառոտ տեղեկություններ տվավ նրան և ապա հարցրեց.

— Որտե՞ղ է պ. Մոմճյանը, կամենում էի նրան տեսնել:

— Մոմճյա՞նը. մի՞թե դուք ծանոթ եք նրա հետ: — Վա, վունց չէ, էն օրը չայխանում մետի չէի՞ն, խոմյիս ծանոթեցրի դրանց:

— Դո՞ւ:

— Մա՛շ...

— Դո՞ւ որտեղից էիր ճանաչում պ. Սարյանին:

— Աբա քիզմեն չի՞մ արմնում: Սերգո Զարբաբովն ո՞ւմ հիդ չէ ծանոթ, ես սաղ աշխարքի հիդ էլ ծանոթ իմ. դիփունանց էլ կու ճանչնամ:

— Այդ գիտեմ, բայց իմ հայրենակցի հետ ինչպե՞ս կարող էիր ծանոթ լինել,

— Վա, ակի ասի ձիր քաղքումն էլիլ իմ:

— Ե՞րբ ասացիր տո՛:

— Մաշ չասի՞... չէ, չէ, յանղլիշ իմ, քիզ չէ, կուբախշիս. քիզ չէ, պ. Սարյանին ասի:

— Չեմ հասկանում, ուրեմն մե՞ր քաղաքումն ես Վահանի հետ ծանոթացել:

— Վա, էդ վո՞ւնց կուլեր, հեր օխնած. յիս սրամեն քսան ան քսանհինգ տարի առաջ իմ էլի ձիր քաղքումը, էն վախտը ձեր Վահանը իրա մոր փորումը կուլեր:

— Բաս ե՞րբ էս ծանոթացել, ա՛յ մարդ:

— Մեկել օրը, տո, էստի, միր քաղաքումը, Սանդրոյի չայխանումը:

— Դե այդպես ա՛ա, Է՛:

— Վա՛, բաս էտենց չասի՞:

— Լա՛վ, լա՛վ, քեզ չի կարելի հասկանալ, թող մի բարեկամիս քեֆը հարցնեմ: Ինչպե՞ս ես, Վահան ջան, մի ասա, Է՛, որքա՛ն ժամանակ է քեզ չեմ տեսել:

— Դեհ, հիմի կի դուք խոսեցեք, յիս կեհամ իմ գուրձին:

— Գնա, Սերգո ջան, գնա՛. շնորհակալ եմ, որ բարեկամիս բերել ես:

— Դատարկ շնորհակալութիւնն ի՞նչ կոնիմ. ճաշի վրա պիտիս մեձրի:

— Անպատճառ, անպատճառ:

— Մաշ գնամ քացախ խմիմ, վուր իշտահս բաց ըլի, ասաց Սերգոն ծիծաղելով և դուրս գնաց: — Հա՛, դե ասա, Է՛, Վահան ջան. ինչպե՞ս ես Թիֆլիսը հավանում:

— Ամենից առաջ դու իմ տարակուսանքս փարատիր, ոչինչ չեմ հասկանում...

— Ինչ տարակուսանք, ի՞նչ չես հասկանում:

— Սա քո բնակարա՞նն է, թե՝ «Փնջիկ»-ի խմբագրատունը:

— Իմ բնակարանն է, և միևնույն ժամանակ «Փնջիկ»-ի խմբագրատունը:

— Բայց ինչպե՞ս, դու քո բնակարանը վարձո՞վ ես տվել այդ խմբագրությանը:

— Ինչպե՛ս թե վարձով. խմբագրությունն իմը չէ՛, «Փնջիկ»-ի խմբագիրը ես չե՞մ:

— Ինչպե՛ս թե խմբագիրը դու ես,— հարցրեց Սարյանը կատարյալ զարմանքով:

— Վա, այ մարդ, աշխարհում չե՞ս ապրում. թերթի վրա իմ անունը չե՞ս կարդացել:

— Այո՛, կարդացել եմ «խմբագիր ու հրատարակիչ Մանուկ Շաշյան», բայց միշտ էլ կարծել եմ, որ դա մի ուրիշ Շաշյան է, և ոչ թե դու:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես չէի կարող երևակայել, թե դու երբեվիցե հայոց թերթի խմբագիր կդառնաս և այն էլ Թիֆլիսում:

— Է՛, բարեկամ, հենց Թիֆլիսումն է, որ ամեն բան կարող ես դառնալ՝ և՛ խմբագիր, և՛ գրող, և՛ վիպասան, և՛ տեսուչ, և՛ վարժապետ...

— Առանց ուրեմն այդ բոլորի համար պատրաստված լինելու:

— Իհարկե, իհարկե:

Շատ հետաքրքրական նորություններ ես հաղորդում. ուրեմն ամենից առաջ պատմիր տեսնեմ, թե ի՞նչ ձևով խմբագիր դարձար:

— Իսկույն, սիրելիս, իսկույն, բայց առաջ մի նեղություն տամ քեզ: Այս նամակը շուտով տպարան պիտի ուղարկվի, բայց նա անգրագետ լեզվով է գրված. նեղություն կրիր մի կարդա՛, տառասխալներն ու անկանոնություններն ուղղիր, մինչև որ ես էլ ուրիշ գործ ունիմ՝ նա վերջացնեմ հետո ամեն ինչ մանրամասն կպատմեմ:

— Ուրախությամբ, տվեք տեսնեմ ինչ նամակ է այդ: Պ. խմբագիրն ընթերցողներին հայտնի թղթակցությունը տվավ Վահանին, իսկ ինքը սեղանի մյուս կողմն անցնելով, սկսավ մի ինչ-որ թուղթ խազմզել, ցույց տալու համար թե խիստ կարևոր բան է գրում:

Երիտասարդ Սարյանը սկսեց կարդալ թղթակցությունը և հետզհետե ուղղել թե՛ տառասխալները, թե՛ լեզվի անկանոն դարձվածները:

Քանի դեռ երկու ծանոթները զբաղված են խմբագրական աշխատությամբ, մենք կարող ենք ծանոթացնել մեր ընթերցողներին պ. Մանուկ Շաշյանի անձնավորության և նրա ոչ շատ նշանավոր անցյալի հետ: Այս ծանոթությունը գուցե փարատե մեր ընթերցողների այս տարօրինակ խմբագրի վերաբերմամբ ունեցած տարակուսանքը:

Պ. Մանուկ Շաշյանը ծնվել է նույն քաղաքում, որտեղ և Վահան Սարյանը: Սկզբնական ուսումն ու կրթությունը ստացել է տեղական քահանաներից մեկի՝ մասնավոր ուսումնարանում: Հետո մտել է քաղաքային դպրոցը, ուր սովորել է երկու տարի: Համոզված լինելով, որ իրեն նման ընդունակ երիտասարդները դպրոցներում երկար չեն դեգերում, այլ առաջ գնալու համար շտապում են կյանքի մեջ մտնել, նա երկրորդ դասատան քննությունը տալուց ետ թողել է քաղաքային դպրոցը:

Այդ ժամանակ հայոց թեմական դպրոցը բարեկարգ վիճակի մեջ էր և վարժապետական ընտիր խումբ ունենալով հսկայաքայլ հառաջադիմում էր:

Մանուկը մեկ որոշեց մտնել հայոց դպրոցն ուսումը շարունակելու, բայց մտածելով, որ հայերեն չիմանալու պատճառով առաջին դասարանում պիտի ընդունվել (որպիսի հանգամանքը, հարկավ, կվիրավորեր յուր ինքնասիրությունը), նա թողեց այդ դիտավորությունը: Բայց որպեսզի իսպառ զուրկ չմնա հայերեն լեզվի գիտությունից, նա գեղեցիկ միտք հղացավ. այն է՝ ծանոթանալ հայոց դպրոցի վարժապետների հետ և շարունակ հարաբերության մեջ գտնվել նրանց հետ: Եվ որովհետև նա ի բնե քաշվելու և ակնածելու սովորություն չուներ, ուստի կարիք էլ չունեցավ մի բարեկամի, որ ծանոթացներ իրեն այդ ուսուցիչների հետ:

Չէ՞ որ նրանք ամեն տեղ էլ հասարակաց բարեկամներ են: Շաշյանն ամենին էլ զատ-զատ այցելեց և բոլորի հետ բարեկամացավ: Այնուհետև նա հայոց ուսուցչական խմբի անհրաժեշտ արբանյակը դարձավ: Եվ որովհետև այդ ուսուցիչները բոլորն էլ գրեթե օտարականներ էին, ուստի Մանուկը շատ բաներում օգնում էր նրանց:

Այսպես, օրինակ, եթե մեկը ծառա չէր ունենում, նա նրա համար գտնում էր. եթե ծառան շուտ չէր ճարվում, ինքը մի քանի օր բանը յոլա էր տանում՝ գնելով վարժապետի, համար հաց, միս, գինի և այլն: Շատ անգամ էլ մի թեթև խորոված էր անում կամ մի ձվածեղ պատրաստում (իհարկե ընկերաբար): Եթե հարկավոր էր լինում վարժապետի համար հագուստ, կոշիկ կամ մի ուրիշ բան պատվիրել, նա իսկույն գնում էր հրավիրելու քաղաքի ամենալավ դերձակին կամ կոշկակարին: Եթե վարժապետները ցանկանում էին մի օր ձի նստել և քաղաքի շրջականերում զբոսնել, նա վազում ու բոլորի համար ձիաներ էր վարձում. եթե կամենում էին մոտակա աղբյուրներում քեֆ անել, նա ամեն ինչ վաղ առավոտվանից պատրաստում էր և աղբյուրի հովանավոր ծառերի տակ սպասում վարժապետներին:

Պ. Շաշյանը մեծ ծառայություններ էր անում ուսուցչական խմբին մանավանդ, եթե վերջինս երբևիցե մտածում էր մի գրական երեկույթ կամ ներկայացում հաջողեցնելու վրա: Այդպիսի ժամանակ Շաշյանի եռանդը կրկնապատկվում էր: Նա վազում էր աջ ու ձախ, պատվերներ տալիս, պատվերներ էր ընդունում, հանձնարարություններ էր կատարում, անարգել և առանց քաշվելու մտնում էր ինչպես ծանոթի, նույնպես և անծանոթի տունը, ժամերով այս ու այն խանութի առաջ կանգնած խոսում, խնդրում, թախանձում էր և ամենքին անխտիր տոմսակ էր վաճառում: Շատ տեղերից նրան վռնդում էին, շատերը կռվում էին հետը և կամ հանդիմանում նրան, բայց նա այդ բաներից ոչ վրդովվում և ոչ հուսահատվում էր, այլ սկսածը տոկունությամբ շարունակելով՝ երեկոյան վերադառնում էր ուսուցիչների մոտ՝ վաճառած

տոմսակների գինը նրանց հանձնելու և ուսուցիչների գովության ու խրախուսանքին արժանանալու: Երբ տոմսակներն արդեն վաճառված վերջացած էին լինում, Շաշյանը հանձնարարում էր ծառաներից մեկին հայտարարությունների կույտը և նրա հետ միասին շրջելով քաղաքի փողոցները կամ շուկան, թե՛ բաժանում էր թերթերն անցորդներին և թե՛ յուր ձեռքով կպցնում էր պատերի վրա:

Եթե վարժապետները երբևիցե նկատում էին, որ պ. Շաշյանը շատ է ինքն իրեն նեղություն տալիս, և խնդրում էին, որ նա մի քիչ հանգստանա, նա իսկույն կրկնում էր յուր նախկին վարժապետ տեր-Օսեփից սովորած խոսքը թե՝ «Երբ գերեզմանում պառկենք, այն ժամանակ կհանգստանանք» և հետո իսկույն էլ ավելացնում էր դպրանոցի տեսչից լսած խոսքը թե՝ «Ազգային գործի համար նեղություն կրելն ինքնըստինքյան հանգստություն է»:

Շաշյանի այս բոլոր ծառայություններն արժանապես գնահատելու և նրան բարոյապես վարձատրելու համար՝ ուսուցիչներից ամենախորամանկը և զվարճախոսը նրա անունը դրավ «անհրաժեշտ մարդ»:

Չնայելով այս բոլորին, ուսուցիչներն առերես էին պատվում այդ «անհրաժեշտ մարդուն». նրանք նրան գովում ու փառաբանում էին, երբ իրենց խմբի մեջ էր գտնվում, բայց հենց որ հեռանում էր մի որևէ ծառայություն կատարելու, իսկույն սկսում էին ծաղրել նրան, իսկ խորամանկ վարժապետը խեղճ Շաշյանի խոսելու ու շարժվելու ձևերը ներկայացնելով՝ ընկերներին ծիծաղից թուլացնում էր:

Ուսուցչական խմբի այս երկդիմի վարմունքը նկատում էին նաև բարձր դասատան աշակերտները և իրենք էլ իրենց կողմից ծաղրում էին խեղճ Շաշյանին: Բայց նա ոչ միայն այդ բաները չէր տեսնում, այլև «անհրաժեշտ մարդ» տիտղոսին արժանանալուց ետ՝ սկսել էր ավելի հարգել ու սիրել այդ ծաղրող մարդկանց:

Եվ որովհետև նա ամենից ավելի հավատում էր խորամանկ վարժապետին, ուստի մի անգամ լսելով նրանից, որ ինքը մեծ մարդ կարող է դառնալ եթե գնա Թիֆլիս, առանց Ժամանակ կորցնելու պատրաստվեց, անցագիր առավ և մի գեղեցիկ օր ուղղվեցավ դեպի Վրաստանի մայրաքաղաքն՝ այդտեղի մեծ մարդկանց շարքը մտնելու համար:

Խորամանկ վարժապետը շատ վշտացավ, որ յուր անխորհուրդ կատակի շնորհիվ զրկեց թե՛ իրեն և թե յուր ընկերներին «անհրաժեշտ մարդու» շնորհալի արբանեկությունից, բայց բանը բանից անցած էր. «անհրաժեշտ մարդուն» այլևս անկարելի էր վերադարձնել:

Թե այնուհետև ի՞նչ արավ Թիֆլիսում մեր «անհրաժեշտ մարդը», որ հայոց մեծապատիվ խմբագիրների կարգն անցավ, այդ մասին կարող է պատմել մեզ ինքը պ. Շաշյանը, որ Վահանի ձեռքով ուղղած նամակը տպարան ուղարկելով, այժմ նստել է նրա կողքին և կամենում է հայրենակցի հետաքրքրությունը գոհացնել:

— Դու ինձ հարցնում էիր, սիրելիս, թե ի՞նչ ձևով ես խմբագիր դարձա: Այդ պատմությունը շատ էլ հետաքրքրական չէ, բայց ես կպատմեմ:

Նախ և առաջ պիտի ասեմ, որ խմբագիր դառնալու համար, որքան իմ փորձից կարող եմ դատել, մեծ դժվարություններ չկան: Սխալ է այն կարծիքը թե՝ դրա համար առանձին պատրաստություններ են հարկավոր, թե խմբագիր եղող մարդը պետք է անպատճառ բարձր կրթության տեր լինի, լուրջ և բազմակողմանի զարգացումն ունենա և այլն, և այլն: Ապացույցն ահա՛ ես. դրանցից և ոչ մեկն ունիմ, բայց և այնպես խմբագիր եմ: Ո՞վ կարող է հերքել կենդանի իրողությունը: Հիշածս պատրաստությունները կարող են հարկավորվել, այո՛, մի գրողի, մի վիպասանի,

դպրանոցի մի տեսչի, առևտրական տան մի կառավարչի և այլն: Իսկ խմբագրին, մանավանդ հայոց խմբագրին, միայն երկու բան է հարկավոր՝ նախ ճարպկություն և ապա փող. այդ երկուսն այնպիսի զենքեր են, որոնցով կարելի է մտնել հրապարակախոսական ասպարեզ ամենայն համարձակությամբ:

— Դու կարծեմ քո կարծիքների մեջ չափազանցության ես հասնում, բարեկամ, եթե խմբագիր լինելու համար հիշածդ պատրաստությունները չհարկավորվեին, խմբագիրներն այսքան մեծ պատիվ ու հարգանք չէին վայելիլ:

— Չեմ չափազանցնում, սիրելիս, կապրես Թիֆլիսում և կտեսնես:

— Բայց դու, որքան ինձ հայտնի է, ո՛չ փող ունեիր և ո՛չ ճարպկություն:

— Փող արդարև չունեի, բայց ճարպկություն ինչո՞ւ չէ. դա խո այնպիսի ընդունակություն չէ, որ մարդու ճակատի վրա լինի նկարված: Այսուամենայնիվ իմ խմբագիր դառնալուն այնքան իմ ճարպկությունը չօգնեց, որքան պատահականությունը:

— Պատահականությո՞ւնը... ուրեմն պատահականությո՞ւնն էլ է դեր խաղում խմբագիր դառնալու գործում:

— Օ, և ինչպես պատահականությունը չէ՞ որ մեր խմբագիրներից շատերին խմբագիր է դարձրել: Նրանցից մեկը, օրինակ, բարձր ուսում է ստացել և վերադարձել հայրենիք, որ պետական ծառայության մեջ մտնի, սակայն յուր անշնորհքության պատճառով ամեն հասարակություններից մերժվելով՝ ճարահատյալ սկսել է լրագիր հրատարակել: Մի ուրիշը հայոց դպրոցից կամ ճեմարանից վռնդվելով՝ եկել է Թիֆլիս գործ կամ պաշտոն գտնելու, բայց երբ նրան հասարակ գործակատարի պաշտոն էլ մերժել են, սկսել է լրագիր հրատարակել: Մի երրորդը դիցուք փաստաբան է եղել, բայց որովհետև յուր անհավատարմության և գործ դրած խարդախությունների շնորհիվ համարումից ընկել և դատարանից հեռացվել է, սկսել է լրագիր հրատարակել. այսպես իմա և շատերին:

— Այդ շատ ցավալի է:

— Ցավալի՞ ի՞նչ կա այստեղ ցավալի, լրագիր հրապարակելը ցավալի՞ բան է:

— Ոչ. ցավալի է ա՛յն, որ լրագիր հրատարակում այնպիսի մարդիկ, որոնց դու այս րոպեիս թվեցիր:

— Այդտեղ ցավալի ոչինչ չկա. մարդիկ մի գործով պետք է պարապեին, մի բանով պետք է կերակրվեին, և ահա՛ նրանք լրագիր են հրատարակում: Դրանով ո՞ւմ ինչ վնաս:

— Ոչ ոքին... խնդրեմ պատմությունդ շարունակիր:

— Հա, որտե՞ղ մնացի: — Այնտեղ, որ ասացիր թե՝ իմ խմբագիր դառնալուն ոչ թե ճարպկությունը, այլ պատահականությունն օգնեց;

— Հա, այդ էի ասում: Այժմ լսիր: Գուցե իմացած լինիս, որ ես Թիֆլիս եկա ձեր զվարճախոս, բայց իրոք խելոք, վարժապետի խորհրդով: Չես կարող երևակայել, թե քանի՛ քանի՛ անգամ ես օրհնել եմ այն րոպեն, երբ վարժապետն ինձ ասաց թե՛ «Մանուկ, գնա՛ Թիֆլիս. դու հասարակ մարդ չես և կարող ես պիտանի լինել ազգին»: Եթե խորհրդապահ լինիս, Վահան, ես քեզ կասեմ, որ նա այդ ժամանակ մի ուրիշ բան

էլ գուշակեց. «Դու կարող ես մեծ մարդ լինել, Մանուկ...»,— ասաց ինձ և այժմ ես տեսնում եմ, որ այդ մարդու մեջ մարգարեական հոգի է եղել:

-Ուրեմն դու արդեն քեզ մեծ մարդկանց կարգո՞ւմն ես երևակայում,— ծիծաղը զսպելով նկատեց Վահանը:

— Ոչ, բայց զգում եմ, որ վաղ թե ուշ այդ մարդկանց ընկերը պիտի լինիմ:

— Երջանիկ մարդ ես, Մանուկ, որ այդ հավատն ունիս քո մասին:

— Հենց այս հավատն էլ պիտի ուժ տա ինձ հասնել այնտեղ, ուր որ ձգտում եմ:

— Վե՞րջը:

— Վերջը, սիրելիս, եկա Թիֆլիս և ծանոթացա պ. Մոմճյանի հետ: Այս պարոնը, պետք է ասեմ, շատ եռանդոտ երիտասարդ է և մեր այժմյան գործողների մեջ պատվավոր տեղ է բռնում: Ինքը կատարելապես նվիրված է ազգային շահերին: Ափսոս որ մի փոքր խորամանկ է. կամենում է խաղ խաղալ ինձ հետ, բայց յուր հաշվի մեջ պիտի սխալվի:

— Այսինքն ի՞նչ խաղ է ուզում խաղալ. այդ ակնարկությունից բան չեմ հասկանում:

— Կհասկանաս, սիրելիս, կհասկանաս. այդ մասին դեռ ժամանակ կունենանք խոսելու, առայժմ պատմությունս շարունակեմ :

Հա՛, ա՛յն էի ասում, որ Թիֆլիս գալով պ. Մոմճյանի հետ ծանոթացա: Այդ պատահեց բոլորովին անակնկալ կերպով Թիֆլիս եկած օրերը բնակվում էի գավառացի մի ուսանողի հետ: Մի երեկո անսովոր տխրությունս ցրելու համար նա առաջարկեց ինձ գնալ յուր հետ մի երեկույթ, ուր հրավիրված էր ինքը:

Հակառակ սովորությանս ես ընդդիմացա՝ առարկելով որ հրավիրված չեմ: Բայց ընկերս հավատացրեց, որ դա այնպիսի երեկույթ է, որին ամեն ցանկացող երիտասարդ կամ օրիորդ կարող է մասնակցել: Այն ժամանակ, իհարկե, համաձայնվեցա: Ընկերս առաջնորդեց ինձ այս տունը, ուր այժմ բնակվում եմ: Այստեղ ծանոթացա մի քանի ազնիվ օրիորդների և երիտասարդների հետ, ի միջի այլոց և պ. Մոմճյանի հետ: Երեկույթը, որ գրական հանդեսով սկսվեց և պարերով վերջացավ, խիստ հաճելի տպավորություն արավ ինձ վրա: Այնպես որ, այդ տպավորության ներքո մի որպե ինքս ինձ մոռանալով, բարձրաձայն հայտարարեցի թե՝ այսուհետև այս ընկերության անբաժան անդամը պիտի լինիմ: Այս հայտարարությունն իբր կատակ ընդունեցին հյուրերը և շատ ծիծաղեցին: Բայց իմ բացականչությունն առանձնապես դուր եկավ պ. Մոմճյանին, որը, հենց այդ որպեից սկսած, չգիտեմ ինչ գրավիչ բան գտնելով իմ մեջ, զարմանալի բարեկամությամբ հետս կապվեցավ: Այնուհետև գրեթե միշտ հրավիրվում էի պ. Մոմճյանի ձեռներեցությամբ այս տան մեջ կազմվող երեկույթներին և գրական հանդեսներին: Մի օր էլ հրավիրվեցա մի ժողովի, ուր պ. Մոմճյանի նախագահությամբ բազմաթիվ օրիորդներ ու երիտասարդներ խորհրդակցում էին մի նոր հայերեն թերթ հրատարակելու համար: Այդ թերթը չի պիտի նմաներ մինչև այժմ մեր մեջ գոյություն ունեցող թերթերին: Նա պիտի ձգտեր ժողովրդի մեջ որոշ և բարձր գաղափարներ տարածելու. գաղափարներ, որոնք մինչև այն անծանոթ էին այդ ժողովրդին, բայց որոնք նոր թերթի շնորհիվ ըմբռնելի պիտի դառնային նույնիսկ մանկահասակ երեխաներին: Այս առթիվ խոսում էր պ. Մոմճյանը. նրա արտասանած ճառն ու բերած փաստերն այն աստիճան համոզող և գրավիչ էին, որ ժողովականներս հաստատապես որոշեցինք սկսել այդ անհրաժեշտ թերթի հրատարակությունը: Ամեն ինչ պատրաստ էր: Այսինքն աշխատակիցներ կային, համակրողներ անթիվ էին, իսկ ընթերցողներ հազարավոր կունենայինք. երկու բան

միայն անորոշ էր. ո՞վ պիտի լիներ խմբագիրը և ո՞վ պիտի հոգար թերթի սկզբնական ծախքերը:

Պետք է ասած, որ մեր ժողովին մասնակցող անձինքների մեջ այդ րոպեին միակ հարուստը ես էի...

— Դո՞ւ. մի՞թե. այդ ես չեմ իմացել: Չէ՞ որ այս րոպեին էլ ասացիր, որ փող չունեիր:

— Այսինքն սեփական փող չունեի, բայց միևնույն է, այդ րոպեին իմ գրպանում չորս հարյուր ռուբլի կար:

— Բայց որտեղի՞ց:

— Մի ամիս առաջ այրի մորաքույրս հինգ հարյուր ռուբլի էր ղրկել ինձ, որպեսզի այդ գումարով երկու վիճակահանության տոմսեր գնեմ յուր համար:

— Եվ դու չէի՞ր գնել:

— Ինչպե՞ս չէ. գնեցի, բայց որովհետև նա պատվիրել էր, որ այդ տոմսերը գնելուց ետ ավանդ դնեմ բանկերից մինում, ուստի ավանդ դնելու տեղ ես գրավ դրի:

— Հետո՞:

— Հետո գրավի փողերն ստանալով գրպանս դրի, իսկ տոմսերի գնման հաշիվը իրեն ղրկեցի:

— Ի՜նչ տարօրինակ մարդ ես դու. ինչպե՞ս կարողացար խաբել մի խեղճ կնոջ, որ իբրև քեռորդու հավատացել է քեզ:

— Առաջին՝ նա խեղճ չէ. լավ կարողություն ունի, իսկ ինքը ազնվական է: Երկրորդ՝ նրա համար միևնույն է թե յուր տոմսերը բանկում ավա՞նդ են դրված, թե՞ գրավ, բավական է, որ ապահով տեղ են գտնվում:

— Բայց չէ՞ որ դու նրանց արժեքն ստացել ես բանկից:

— Ա՜խ, դա իմ սեփական պարտքն է. ես մի օր էլ կվերադարձնեմ նույն բանկին:

— Հարցը հենց նրանում է, որ կարողանաս վերադարձնել:

— Իհարկե, կվերադարձնեմ. փառավոր լրագիր եմ հրատարակում, ահագին թվով բաժանորդներ ունիմ:

— Լավ. ուրեմն պատմությունդ շարունակիր:

— Իսկույն, բայց որտե՞ղ մնացի, չեմ հիշում:

— Ասում էիր, որ ժողովականների մեջ միակ հարուստը դու էիր:

— Հա՛ իմ նյութական իսկական կարողության մասին այդ մարդիկը որոշ գաղափար չունեին: Նույնիսկ իմ ընկերը մեծ հարուստի տեղ էր դնում ինձ, որովհետև մի քանի անգամ կարիք ունենալով իրենից պարտք վերցնելու, հավատացրել էի նրան, թե մեծ կալվածներ ունիմ և նրանց եկամուտովն եմ ապրում:

— Զարմանալի է. և չէի՞ր վախենում, որ մի օր սուտդ բացվի:

— Ինչպե՞ս չէ. բայց այդ կողմից իմ բախտը զարմանալի է. Հենց այն է, խայտառակվելու մոտ էի, որ մորաքրոջս հինգ հարյուր ռուբլին հասավ: Ընկերոջս հարցին թե՝ ի՞նչ փող է ստացածս, ասացի, որ կալվածներիս ամսական եկամուտն է:

— Զարմանում եմ. և ի՞նչ շահ ունեիր այդ ստախոսությունից:

— Շատ անփորձ մարդ ես. չե՞ս լսել, որ ասում են թե «սուտը ճշմարտի թևերն է. եթե սուտը չլինի ճշմարիտը չի կարող թռչել»: Բայց թե ի՞նչ շահ ունեցա, այդ դու կտեսնես:

Ասացի, որ ամեն ինչ պատրաստ էր՝ միայն երկու բան մնում էր անորոշ, առաջին՝ թե ո՞վ պիտի լիներ նոր թերթի խմբագիրը և երկրորդ՝ թե ո՞վ պիտի հոգար սկզբնական ծախքերը: Այդ հարցերը լուծելու համար ոչ ոք չէր կարողանում մի դրական առաջարկություն անել, ժողովը մնացել էր տարակուսված. հենց այդ հանդիսավոր վայրկյանին ես հարցրի. «որքա՞ն կլինին սկզբնական ծախքերը, պ. նախագահը»:

—Մոտավորապես երկու հարյուր ռուբլիս.— պատասխանեց Մոմճյանը: Իսկույն ձեռքս ծոցս տարա և փողերս հանելով— երկու ծիածանագույն հարյուրանոցներ դրի սեղանի վրա: Ժողովականները մնացին ապշած և բուռն ու աղմկալից ծափահարությամբ սենյակը թնդացրին:

— «Ես կարծում եմ հարցերից մեկի լուծվելով մյուսն էլ լուծվում է,— խոսել սկսեց պ. Մոմճյանը.— պ. Շաշյանը մեր թերթի սկզբնական ծախքը հոգալով մեզ վրա պարտավորություն է դնում բարոյապես վարձատրել նրան, այսինքն, եթե նա այդ սկզբնական ծախքի հետ միասին կկարողանա հոգալ նաև տարվա ընթացքում լինելիք հրատարակչական մնացորդ ծախքերը, որոնք իմ կարծիքով, շատ աննշան պիտի լինին, այդպիսով նա կլինի թերթի հրատարակիչը: Մի անգամ արդեն ինքը լինելով հրատարակիչը, անարդարություն է, որ խմբագիրն ուրիշը լինի: Ուրեմն համաձայնվենք, որ պ. Շաշյանը, նոր թերթի հրատարակիչ լինելով հանդերձ, լինի նաև խմբագիր: Մենք բոլորս, իհարկե, հավասարապես կօգնենք թերթին մեր գրավոր աշխատություններով և հավասար իրավունք կունենանք նրան ուղղություն տալու գործում, բայց հրատարակչի և խմբագրի անունը կվայելե պ. Շաշյանը»: Մոմճյանի այս առաջարկությունն ընդունվեցավ ժողովականներից ծափահարությամբ:

Մի ոոպե ես մնացի շփոթված և կամենում էի անկեղծորեն խոստովանել իմ անկարողությունը և անընդունակությունը խմբագիր-հրատարակիչ լինելու վերաբերմամբ: Բայց հանկարծ հիշելով ձեր զվարճախոս վարժապետի այն խոսքերը թե՝ «դու կարող ես մեծ մարդ լինել, Մանո՛ւկ...», լռեցի և ի նշան համեստ համաձայնության, աչքերս խոնարհեցի գետին:

Այնուհետև Մոմճյանը ամեն ինչ ինքն իրեն հոգաց:

Խնդիրը գրեց, ուղարկեց, հրատարակության իրավունքն ստացավ, ես ոչ մի բանի չէի խառնվում: Բայց չէ, ներողություն. խնդիրը ես ստորագրեցի: Հետո մի գեղեցիկ օր մեր բարեկամներից մի քանիսը Մոմճյանի առաջնորդությամբ եկան ինձ հայտնելու, որ արդեն իմ խմբագիր-հրատարակիչ լինելու իրավունքն ստացված է և շնորհավորեցին ինձ իբրև «Փնջիկ»-ի խմբագրին: Դրա փոխարեն էլ ես նրանց բիսկվիտով շոկոլադ խմացրի:

Ահա՛ այս է իմ խմբագիր դառնալու համառոտ պատմությունը:

Երիտասարդ Սարյանը բոլոր ժամանակ մտախոհ աչքերով դիտում էր Շաշյանին. բոլոր այս պատմությունը լսելով նա մնացել էր զարմացած, և չգիտեր հավատա՞ր յուր խոսակցին, թե ոչ: Ասենք թև նրա պատմածների մեջ մի հավատալի բան էլ չկար: «Փնջիկ»-ի վրա արդեն տպագրված էր Շաշյանի անունը և այդ փաստն ամեն

տարակույս փարատում էր: Բայց որ Մոմճյանը և նրա ընկերներն իրենց մեջ խմբագիր լինելու արժանավոր մարդ չգտնելով այդ պաշտոնը Շաշյանին էին հատկացրել, դա շատ խորհրդավոր երևույթ էր, որի էության բացատրությունն անհանգստացնելու չափ հետաքրքրում էր Սարյանին:

Այս միջոցին ներս մտավ Մոմճյանը և Սարյանին տեսնելով շատ ուրախացավ: Դրա պատճառն այն էր, որ խմբագրության միակ հայագետ աշխատակցին վիրավորած և հեռացրած լինելով՝ նա թերթի գործը դժվար դրության մեջ էր դրել: Այժմ Սարյանը կարող էր Մովսիսյանի տեղը բռնել (որովհետև Մոմճյանը թեյարանում արդեն յուր զգայուն հոտառությամբ այդ երիտասարդի ինչ բանի պիտանի լինելն իմացած էր), և գուցե նա Մովսիսյանից մի քանի աստիճան էլ ավելի հմուտ կերպով կտաներ գործը:

— Բարով, բարեկամ, մենք ձեզ երեկ էինք սպասում,— ողջունելով երիտասարդին, ասաց Մոմճյանը:

— Ուշանալու պատճառն իմ առաջնորդն էր. նա այսօր միայն եկավ ինձ բերելու:

— Այո՛, այո՛, հանցանքն իսկապես իմն է. մի փոքրիկ ընտրություն ունինք, որի առթիվ երեկ գործ էի հանձնել նրան կատարելու:

— Այսպես թե այնպես, այսօր բախտ ունիմ ներկա լինելու:

— Շնորհակալ եմ. վաղո՞ւց եք այստեղ:

— Կարծեմ երկու ժամ կլինի:

— Երկու ժա՞մ...— հարցրեց Մոմճյանը և սկսավ մտածել: Նա երևակայեց թե այդ երկու ժամում որքա՜ն անպատեհ բաներ կլիներ խոսած Շաշյանը յուր այցելուի հետ և ո՞վ գիտե, գուցե հայտնած լիներ նրան այնպիսի նորություններ, որոնք այդ նորեկի համար գաղտնիք պիտի մնային:

— Այո՛, երկու ժամ:

— Ուրեմն դուք մեր խմբագրի հետ ծանոթացաք առանց իմ միջամտության,— ասաց Մոմճյանը ժպտալով: — Այո՛, այո՛, առանց ձեր միջամտության,— հարեց խմբագիրը և ծիծաղեց:

— Ես վաղուց ծանոթ էի պարոն խմբագրի հետ, — նկատեց Սարյանը:

— Ինչպե՞ս, որտե՞ղ եք ծանոթացել:

— Չէ՞ որ նա իմ հայրենակիցն է:

— Ա՛... բոլորովին մոռացել էի. և, իրավ, դուք հայրենակիցներ եք: Զարմանալի է, ինչպես էի մոռացել:

Այս նորությունը կարծես Մոմճյանի սրտից մի ծանր բեռ վերցրեց: Մինչև այդ որպեն նա մտածում էր թե ինչ հնարներով պիտի ծածկե նորեկի աչքից յուր խմբագրի թերությունները. բայց այժմ արդեն որոշեց, որ ոչ միայն ավելորդ է Սարյանին իբր օտար ընդունել, այլև անհրաժեշտ է մտերմանալ նրա հետ և իրենց խմբագրության բոլոր հանգամանքներին իսկությամբ ծանոթացնելով նրան, առաջարկել գործել իրենց հետ իբրև աջակից բարեկամ:

— Ուրեմն դուք որ մեր խմբագրի հայրենակիցն եք, նրան էլ լավ ճանաչո՞ւմ եք,— խորհրդավոր եղանակով հարցրեց Մոմճյանը երիտասարդին:

— Ճանաչում եմ. շատ լավ եմ ճանաչում,— Մոմճյանի միտքը հասկանալով պատասխանեց Սարյանը և երկու երիտասարդների խորհրդավոր հայացքները միմյանց հանդիպելով՝ կարծես ամեն բան միմյանց պատմեցին և համաձայնվեց միևնույն կետի վրա:

— Այժմ դառնանք այն խնդրին, որ ձեզ համար թե՛ կարևոր և թե՛ առաջնական է: Որքան հիշում եմ, դուք ինձ հայտնեցիք, որ եկած եք Թիֆլիս ազգային-հասարակական գործերով զբաղվելու: —

— Այո՛:

— Եվ ես խոստացա ցույց տալ ձեզ նպատակին հասնելու դյուրին ճանապարհը:

— Այո՛ այդ պատիվն արիք ինձ:

— Դուք չե՞ք սիրում արդյոք հրապարակախոսական ասպարեզը:

— Ոչ միայն սիրում եմ, այլև ինձ թվում է թե՝ այդ ասպարեզի մեջ ես կարող եմ ավելի հաջողականությամբ գործել, քան թե ուրիշ ասպարեզներում:

— Եթե այդպես է, նվիրեցեք ձեզ լրագրական գործին: Չկա ավելի հաճելի և մխիթարական քան այն, երբ մարդ կարողանում է լրագրական խոսքի միջոցով յուր ազատ մտքերն ու կարծիքները հաղորդել աշխարհին: Չկա հաճելի քան այն, երբ հարուստն յուր ոսկիներով, իշխանն յուր հռչակով անզոր մի քանի տասնյակ մարդկանց իրենց ցանկացածն անել տալու, դու՝ աղքատ և անտոհմիկ, միայն քո գրչի ուժով ժողովուրդներ ես շարժում, հասարակության կարծիքն ու բախտն ես կառավարում:

— Ցույց տվեք ուրեմն, թե ի՞նչ ձևով նվիրեմ ինձ լրագրական գործին. ես պատրաստ եմ ամեն նեղություն ու աշխատանք հանձն առնելու:

— Եթե կամենում եք, մեզ մոտ ահա՛ գլխավոր աշխատակցի և քարտուղարի պաշտոնն ազատ է. ընդունեցեք այդ պաշտոնը և գործեցեք մեզ հետ միասին:

— Ուրախությամբ, բացատրեցեք միայն թե որո՞նք պիտի լինին իմ պարտավորությունները, որպեսզի անթերի կատարեմ նրանց:

— Գրեթե այն, ինչ որ մի ժամ առաջ կատարեցիք,— մեջ մտավ խմբագիրը:

— Ի՞նչ է կատարել,— հետաքրքրությամբ հարցրեց Մոմճյանը:

— Այսօր առավոտ մի թղթակցություն էի ստացել, որի մեջ հետաքրքիր նորություններ կային, բայց անգրագետ մարդու գրած էր, խնդրեցի Մովսիսյանին որ ուղղե...

— Ինչպե՞ս. խնդրեցիք Մովսիսյանի՞ն, ինչո՞ւ, չէ՞ որ ես ասացի, որ ոչ մի դեպքում չպետք է դիմեք նրան:

— Բայց միևնույն է. նա մերժեց և չկամեցավ ուղղել: «Օհ, այս մարդը կատարյալ ապուշ է»— շշնջաց ինքն իրեն Մոմճյանը և ապա Շաշյանին դառնալով հարցրեց.— հետո ի՞նչ արիք:

— Տվի պ. Սարյանին և նա մի քանի րոպեում ուղղեց կարկատեց և անշնորհք թղթակցությունից մի գեղեցիկ հոդված պատրաստեց, որը և ուղարկեցի տպարան: — Ի՞նչ եք այդպես գովում. ի՞նչ գեղեցիկ հոդված պիտի պատրաստեի, — համեստությամբ նկատեք Սարյանը:

— Գեղեցիկ էր. գեղեցիկ էր. ես շատ հավանեցի:

— Բայց չէ՞ որ իմ ուղղածը դուք առանք կարդալու ղրկեցիք տպարան:

— Այդ միևնույն է. ձեր գրչի շնորհքը ես ճանաչում եմ: Սարյանը նայեց Մոմճյանին, կարծես կամենում էր հարցնել նրան, թե ի՞նչ խորախորհուրդ գաղտնիք է այս, որ յուր նման խելոք մարդը, խմբագրի պաշտոնը Շաշյանին է հանձնել, իսկ ինքը, ըստ երևույթին, միայն աշխատակցի համեստ կոչումովն է բավականանում:

Մոմճյանը երիտասարդի նայվածքի նշանակությունը հասկացավ և ժպտալով ասաց.

— Թե որո՞նք կլինին ձեր պարտավորությունները և որո՞նք ձեր իրավունքները, այդ ես մանրամասն կբացատրեմ ձեզ առանձին: Բարեհաճեցեք շնորհ բերել այսօր իմ բնակարանը երեկոյան ժամը հնգին և մենք այդ բոլորի մասին հարկ եղածը կխոսենք:

— Ուրախությամբ. միայն թե ձեր հասցեն շնորհեցեք ինձ:

— Ի՞նչ հարկավոր է հասցեն, եկեք այստեղ, ես ինքս ձեզ կտանեմ,— մեջ մտավ Շաշյանը:

— Ո՛չ, ո՛չ, դուք մի՛ նեղանաք, ես ահա՛ իմ հասցեն կտամ,— դարձավ Մոմճյանը Շաշյանին և շտապով այցետոմսի վրա յուր հասցեն գրելով հանձնեք Սարյանին: Երիտասարդը խոստանալով, որ նշանակյալ ժամին Մոմճյանի մոտ կլինի, ողջունեց պ. խմբագրին և նրա խորհրդավոր աշխատակցին ու դուրս գնաց:

«ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴ»-Ի ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Վահան Սարյանը Մոմճյանի տունը եկավ նշանակված ժամից քսան րոպե առաջ: Վերջինը յուր արժանապատվությունը բարձր պահելու համար, ստիպեց երիտասարդին այդ քսան րապեներն անցցնել լուռ ու մունջ և սպասել, մինչև որ ինքը յուր կարևոր աշխատությունը կավարտեր: Այդ աշխատությունը, հավանական է, որ շատ կարևոր չլիներ, բայց Որպեսզի նորեկը համոզվի, որ Մոմճյանը միայն յուր գործովը չէ զբաղված, այլ նրա ժամերը ուրիշ շատ գործերի վրա են բաժանված, այդպես անելն անհրաժեշտ էր:

Սարյանն այդ անպետք րոպեներից օգուտ քաղելով, սկսեց դիտել Մոմճյանի բնակարանը: Դա էլ, Շաշյանի կացարանի նման բաղկացած էր մի սենյակից, որի աջ կողմը բռնած էր տանտիրոջ մահճակալը, իսկ ձախը՝ նրա աշխատության գրասեղանը: Դրա վրա առանձին խնամքով և համաչափությամբ, շարված էին բազմաթիվ մանր-մունր իրեղեններ, որոնց շատերի ինչ բանի պիտանի լինելը չէր կարողանում որոշել Սարյանը: Բայց բրոնզե գեղեցիկ աշտանակիկները և թանաքամանը (որի վերին աստիճանի մաքուրությունը ապացուցանում էր կամ տիրոջ մաքրասիրությունը, կամ նրա գրական աշխատությամբ պարապելու սեր չունենալը), սեղանի վրա գտնվում էին նաև բազմաթիվ քառակուսի, գլանաձև կամ անկյունավոր իրեղեններ, պնակիկներ, շնիկներ, թռչնիկներ, մոխրամաններ, մեծ ու փոքր տեսակի. տողաշարներ, գրչակալներ, գրիչներ, գույնզգույն մատիտներ, փոքրիկ երկրագունդ, կողմնացույց և այլն, և այլն. այնպես որ սեղանի վրա, իսկապես, թուղթ դնելու և գրելու համար շատ քիչ տեղ էր մնում:

Այս բոլորը տեսնողը կկարծեր, որ Մոմճյանը մանրասեր երիտասարդին մեկն է. բայց նրա արտաքինը հերքում էր այդ կարծիքը, մանավանդ, որ բոլոր այդ մանրակրկիտ հավաքածուների վրա իշխում էին սեղանին կից պատի վրա կախած պատմական երկու նշանավոր անձանց, այն է՝ Լութերի և Վոլթերի մեծադիր պատկերները:

Սեղանի վրա դրված էր մի եռաշար դարակ, որը ծայր ի ծայր լցված էր գեղեցիկ կազմած ռուսերեն գրքերով: Դրանց մեջ, իբրև բացառություն, երկու հայերեն գրքեր կային և դրանք Ռաֆֆիի «Փունջ»-երի առաջին և երկրորդ հատորներն էին, որոնք դրված էին դարակի աչքի ընկնող անկյունում: Սենյակի պարապ տեղերում շարված էին մի քանի հատ դեղին աթոռներ, իսկ մահճակալի մոտ՝ մի աղքատիկ լվացարան և մի փայտաշեն կախարան, որի վրա բարձված էին տանտիրոջ վերարկուն և հին ու նոր հագուստները:

Այս բոլորն աչքից անցցնելուց ետ՝ Սարյանը հիշեց չաչանակ Սերգոյի «Արդար քրտինքով ապրողների թեյարան»-ում իրեն ասածը թե՝ «Մոմճյանը մինձ օջախի վուրթի է» և զարմացավ, որ նրա բնակարանը բնավ մեծ օջախի որդուն վայել բնակարանի նման չգտավ:

— Հանցանքն իմս չէր, որ դուք քսան րոպե անօգուտ տեղը սպասեցիք,— աշխատությունը վերջացնելով ժպտադեմ դարձավ Մոմճյանը Սարյանին.— մեզ մոտ րոպեներն ու ժամերը հաշված են, և յուրաքանչյուր գործի որոշ ժամեր են հատկացված:

— Ներեցեք, որ առաջին անդամն եմ ձեր այդ գեղեցիկ կանոնի հետ ծանոթանում, մյուս անգամ կաշխատեմ ավելի ճշտապահ լինել,— պատասխանեց Սարյանը թեթև շառագունելով:

— Վնաս չունի, վնաս չունի. ես միայն ինձ կամեցա արդարացնել, այժմ գործին անցնենք: Խնդրեմ վերցրել աթոռդ և մոտ նստեցեք:

Սարյանը վերցրեց աթոռը և մոտեցավ:

— Այժմ բացատրենք, թե ձեր պաշտոնի վերաբերմամբ ի՞նչ պարտավորություններ և ի՞նչ իրավունքներ պիտի ունենաք,— խոսել սկսավ Մոմճյանը.— Դուք վաղվանից նշանակվում եք գլխավոր աշխատակից և իսկական քարտուղար «Փնջիկ» թերթի խմբագրության: Ձեր պարտավորությունը կլինի, առաջին՝ խմբագրության մեջ ստացված բոլոր թղթակցությունները, հոդվածները, բանասիրականները և տեղեկությունները կարդալ, ուղղել և կարգավորել, իսկ նրանց մեջ պատահած օտար և աղավաղյալ ոճերն ու դարձվածքները վերածել մաքուր և գեղեցիկ հայերենի, ինչպես և լրատուների բերած լուրերը լսելով՝ նրանց պատմածը գրի առնել մաքուր հայերեն լեզվով: երկրորդ՝ գրել զանազան նյութերի վերաբերմամբ հոդվածներ և եթե կարող եք՝ զրույցներ, պատկերներ, վիպակներ և ժամանակով, ո՞վ գիտե, գուցե կարողանաք գրել նաև ընդարձակ վեպեր: Երրորդ՝ վարել խմբագրության, այդպես ասած, դիվանական գործերը, որպիսիք են՝ նամակներ գրել զանազան անձանց, պատասխաններ կամ բացատրություններ տալ մեզ ուղղած հարցերին. հայտարարություններ ընդունել և այլն, և այլն: Այս բոլորի մասին, իհարկե, կանխավ ինձանից որոշ հրահանգներ կստանաք: Իսկ ձեր իրավունքները կլինին առաջին՝ ստանալ մեր թերթի զուտ եկամտից քսանևհինգ տոկոս և երկրորդ՝ իմ բացակայության ժամանակ վարել խմբագրական գործերը համաձայն ձեր բարեհայեցողության և Շաշյանից բոլորովին անկախ:

— Ինչ իմ պարտավորություններին է վերաբերում է կաշխատեմ անթերի կատարել: Զուտ աշխատակցության մասում, չգիտեմ, որքան պիտանի կլինիմ. բայց և այնպես կջանամ չգիտցածս սովորել և այդ մասի համար էլ արժանավորապես պատրաստվել:

«Իրավունքներիս գալով՝ թեպետ ինձ համար անորոշ է այն վարձատրությունը, որ դուք նշանակում եք իբր հատուցումն իմ աշխատության, այսուամենայնիվ պիտի ասեմ, որ նա իմ աչքում ոչ մի արժեք չունի. որովհետև մի անգամ արդեն նվիրելով ինձ ազգային շահերի ծառայության է ես իմ սեփական շահի վրա չեմ կարող մտածել: Ինձ տվեք միայն ապրելու համար մի սենյակ, քաղցից չմեռնելու համար մի կտոր հաց և ցրտից պաշտպանվելու համար մի հագուստ. և այդ արդեն ամենամեծ վարձատրությունը կլինի ինձ համար: Այնուհետև ամեն բանում ես ձեր խոնարհ ծառան եմ:

Բայց գալով խմբագրական մասում ինձ արտոնություններ տալուն այդտեղ ինձ համար անորոշ է մնում մի կետ, որի վերաբերմամբ ես կկամենայի իրավունք ունենալ ազատ խոսելու և անկեղծ բացատրություններ պահանջելու...

— Խնդրեմ, խնդրեմ, այսօրվանից մենք մտերիմ բարեկամներ ենք. խոսեցեք, ինչ կամենում եք, ես պարտավոր եմ բացատրություն տալ ձեր ամեն մի հարցին:

— Ասացեք խնդրեմ, «Փնջիկ» թերթի իսկական խմբագիրը և տերը ո՞վ է: Ինչո՞ւ համար եք հարցնում:

— Որովհետև չգիտեմ, իսկ ինձ հարկավոր է այդ գիտենալ, քանի դեռ իմ պաշտոնը չեմ ստանձնել:

— Խմբագիրը պ. Շաշյանն է. մի՞թե չեք կարդացել նրա անունը թերթի վրա,— ժպտալով պատասխանեց Մոմճյանը»:

— Կարդացել եմ, բայց չեմ հավատում:

— Կարդացել եք և չե՞ք հավատում, այդ ի՜նչ է նշանակում»:

— Ես անկեղծ մարդ եմ, պ. Մոմճյան, և ներեցեք, որ անկեղծությամբ պիտի խոսեմ» Շաշյանն իմ հայրենակիցս է. ես նրան ճանաչում եմ: Նա ոչ թե խմբագիր, այլ հազիվ խմբագրության մի սպասավոր լինելու արժանիք ունի: Արդեն երևում է, որ նա ձեր խմբագրության մեջ էր խրտվիլակի դեր է կատարում, իսկ ձեր այսօրվա մի քանի խոսքերից արդեն ես գուշակեցի, որ «Փնջիկ»-ի վերաբերմամբ գերակշռող ձայնն ու իրավունքը ձեզ է պատկանում: Արդ, ինձ անհանգստացնելու չափ հետաքրքրում է ա՛յն հանգամանքը թե՝ ինչո՞ւ թերթի խմբագիրը և հրատարակիչը Շաշյանն է, մինչդեռ բուն տերը, ես կարծում եմ, դուք եք:

Մոմճյանը սեղանի վրա դրած թուղթը խազխզում էր և չէր խոսում:

— Գուցե դա մի գաղտնիք է, որ ինձ անկարելի է հայտնել,— շարունակեց Սարյանը,— բայց ես էլ, թույլ տվեք ասել, չեմ կարող ծառայել այնպիսի մի խմբագրության, որի գլուխը Շաշյանն է:

— Որովհետև ես ձեզ «մտերիմ բարեկամ» անվանեցի, այդպես էլ պիտի ընդունեմ մինչև վերջ: Ուստի ձեզ, իբրև մտերմի, ամեն ինչ պիտի խոստովանեմ անկեղծությամբ:

Շաշյանին արդեն ճանաչում եք, և, անշուշտ, ավելի լավ, քան ես, որովհետև նա ձեր հայրենակիցն է և նրա անցյալին տեղյակ եք դուք»: Բայց թե ինչու նա «Փնջիկ»-ի խմբագիրն է, պատճառը հետևյալն է:

Պետք է ձեզ ասեմ, որ ես, առհասարակ, փառասեր չեմ: Շատ մտքեր ինքս հղացել, շատ գործեր ինքս ստեղծել և առաջ եմ տարել, բայց երբեք չեմ աշխատել, որ գործի հեղինակ կամ հիմնադիր հռչակվիմ: Բավական է, որ մի գործ իմ ձեռքով ծնունդ է առել, մեծացել ու բարգավաճել է. դրանով ևս ինձ արդեն վարձատրված եմ համարել, Այնուհետ և թեկուզ ուրիշները հափշտակել են ինձ հասանելի պատիվն ու փառքը, այդ ինձ չի վրդովել, որովհետև ինքս այդ բաները ստանալու չեմ ձգտել:

— Այդ մեծանձնությունը պատիվ է բերում ձեզ:

— Այո՛, բարեկամս, ինքս արդեն գոհ եմ լինում, երբ կարողանում եմ մեծանձնությամբ գործել:

Բայց դառնանք խնդրին:

«Փնջիկ»-ը հրատարակելու գաղափարն ես հղացա: Ինքս էլ, իհարկե, կարող էի այդ թերթի թե՛ հրատարակիչը և թե՛ խմբագիրը լինել: Բայց մտածելով, որ եթե գործն իմ անվամբ լինի, այնուհետև չպիտի կարողանամ նրա ապահովության համար ցանկացածս չափով աշխատել— որովհետև միշտ ավելի հեշտ է լինում ուրիշի, քան սեփական գործի համար բարերարներ գտնելը, նպաստ հավաքելը, օժանդակություն խնդրելը և այլն — ուստի որոշեցի, որ թերթի խմբագիրն ուրիշը լինի, որպեսզի ես եռանդով գործելու ազատություն ունենամ: Այդ ժամանակներում իմ գաղափարակիցներից մինն ապրում էր Շաշյանի հետ, որին և կալվածատեր հարուստի տեղ էր ընդունում, որովհետև Շաշյանն ինքն այդպես էր ցույց տվել իրեն: Երբ իմացա, որ այդ պարոնը, հարուստ լինելով հանդերձ, նաև ազգային գործերով հետաքրքրվող մեկն է, աշխատեցի ընկերոջս միջոցով գրավել նրան մեր կողմը: Եվ առաջին անգամ, պետք է խոստովանել, շատ ուրախացա արածս գյուտի վրա: Որովհետև այդ երիտասարդին գտա ըստ ամենայնի հարմար և պիտանի մեր շատ գործերի համար:

— Զարմանում եմ. մի՞թե առաջին անգամից իսկ չկարողացաք ճանաչել, որ դա ապուշին մեկն է:

— Ինչպե՛ս չէ. ճանաչեցի, բայց ինձ հենց այդ տեսակ մարդ էր հարկավոր:

— Ինչո՞ւ, չեմ հասկանում:

— Ահա՛ թե ինչու: Այդ մարդը վերին աստիճանի համարձակ, ակնածել չգիտցող, ամենքի հետ բարեկամացող, ամեն տեղ մտնող, ամենքին քսվող ու քծնող և դեպի պատվասիրության զգացումն անտարբեր մեկն էր: Փորձված է, որ առհասարակ այդ տեսակ մարդիկ ամենից ավելի լավ են գործիք դառնում կառավարելու ընդունակ առաջնորդների ձեռքում:

— Շատ բնական է:

Այո՛, և ահա՛ ես դրան ընդունեցի իբրև ամենալավ գործիք իմ ապագա գործունեության:

— Այսինքն, ի՞նչ պիտի կարողանար դա ձեզ համար անել:

— Շատ բան. երևակայեցեք, որ դուք կամենում եք արիստոկրատիայի այսինչ շրջանում ձեր թերթը մտցնել, այսինչ խմբի անդամներին ձեր մասին խոսել տալ. այնինչ օրիորդներին և երիտասարդներին ձեր կողմը գրավել, այդ բոլորի համար Շաշյանն անգին գործիք է:

— Ինչպե՞ս, ես չեմ հասկանում:

— Ինչու չեք հասկանում: Երևակայեցեք, որ դուք քաշվող և մանավանդ պատշաճավորությունը հարգող մարդ եք: Ձեզ համար դժվար է առանց հարգելի առիթի այսինչ հայ իշխանին կամ իշխանուհուն, այսինչ հարստին կամ պաշտոնյային գնալ այցելության, թե ինչ է՝ կամենում եք ծանոթանալ նրա հետ, իհարկե, ապագայում նրանից շահվելու մտքով: Բայց Շաշյանն այդ անում էր առանց քաշվելու: Նա այցելում էր և՛ իշխաններին, և՛ իշխանուհիներին, և՛ հարուստներին, և՛ անծանոթ օրիորդներին ու երիտասարդներին, միով բանիվ ում որ հրամայում էի, և ծանոթանում էր ամենքի հետ անխտիր:

Այդ ծանոթությունների արդյունքը լինում էր ա՛յն, որ զանազան հանդեսներում, երեկույթներում, թատրոններում և այլ այդպիսի հասարակական ժողովատեղերում Շաշյանն յուր ծանոթներին պատահելով՝ ծանոթացնում էր նրանց թե՛ ինձ և թե՛ իմ գաղափարակիցների հետ: Իսկ այնուհետև մենք սկսում էինք հաջորդաբար մշակել և պատրաստել այդ մարդկանց այնքան, որ նրանք թե՛ մեր գաղափարներն ընդունում էին և թե՛ իրենց ծանոթ շրջաններում տարածում:

— Այժմ հասկանում եմ. ուրեմն Շաշյանը կարողանում էր ծառայել ձեզ իբրև գործիք:
— Այո, իբրև անհրաժեշտ գործիք:

— Հենց նրա այդպիսի ընդունակության համար էլ մեր վարժապետական խումբը նրան «անհրաժեշտ» մարդ» էր անվանում:

— «Անհրաժեշտ մա՞րդ», օ՜հ, ի՜նչ հարմար անուն է, և իրավ որ նա մի անհրաժեշտ մարդ է — Լավ. ասենք թե այդ ծառայությունների համար Շաշյանն անհրաժեշտ էր, բայց ի՞նչ հարկ կար նաև խմբագրի պաշտոնը հանձնել նրան:

— Դրա պատճառն էլ իսկապես երկու էր. առաջին՝ որ մենք կարծում էինք, թե նա հարստություն ունի և հետևապես մեր թերթը նույնպես կապահովացնե. այդ կարծիքն իհարկե, սխալ դուրս եկավ և մենք «խորամանկ աղվեսի» նման երկու ոտքով որոգայթն ընկանք, երկրորդ՝ որ ես ում էլ որ հանձնեի խմբագիր-հրատարակչի պաշտոնը, իհարկե նրա անունով էլ պետք է թերթի հրատարակության իրավունքը ձեռք բերեի: Արդ, ով էլ որ լիներ այդ մարդը, անշուշտ ատամներ կունենար և երբևիցե ինձ խածանելով կստիպեր սիրածս գործից հեռանալ, իսկ ես օրենքով չէի կարող կռվել նրա հետ:

— Մի՞թե միևնույնը չի կարող Շաշյա՜նը անել:

— Ոչ. նա ոչ խածնող ատամներ անի և ոչ էլ փառասիրության զգացում: Բացի այդ, նա մինչև խմբագրի կոչումն ստանալը, պայմանագրով կապվել է ինձ հետ՝ հլու և հնազանդ լինել իմ հրամաններին: Նրա պարտավորությունը՝ անմռունչ հպատակվել:

— Շնորհակալ եմ. այժմ ամեն բան հասկանում եմ:

— Ուրեմն վաղվանից կստանձնեք ձեր պաշտոնը և կգործեք համաձայն այն պայմանների, որոնց հետ ծանոթացրի ձեզ:

— Այո՛, հարգելի պարոն. վաղվանից կստանձնեմ պաշտոնս և կաշխատեմ պիտանի լինել ձեզ: Այս ասելով Սարյանը ողջունեց Մոմճյանին և հեռացավ: Մի քանի օր էր, ինչ Վահան Սարյանը կանոնավորապես հաճախում էր «Փնջիկ»-ի խմբագրատունը և գործում այդտեղ իբրև գլխավոր աշխատակիր և քարտուղար»: Նա ուրախ էր: Նրա սիրտը լցված էր ներքին հրճվանքով և այդ ոչ թե նրա համար, որ պատվավոր և արդյունավոր պաշտոններ էր ձեռք բերել, այլ որովհետև հավատում էր, որ յուր ոտքը դրել է արդեն այն ճանապարհի վրա, ուր գործել և գործում էին ազգային շահերին նվիրված նշանավոր մարդիկ:

Այդ կողմից արդեն ապահովված համարելով իրեն՝ նա մտաբերեց այժմ հայրենի քաղաքում թողած սիրելիներին, որոնք յուր պանդխտության վերաբերմամբ տեղեկություններ էին սպասում իրենից»:

Առաջին նամակը, ինչպես վայել էր, նա գրեց ծնողներին»: Յուր ճանապարհորդության մանրամասն նկարագիրն անելուց ետ, նա տեղեկություններ տվավ նրանց նաև յուր ստացած պաշտոնների մասին: Եվ որովհետև հենց այդ ժամանակ նա մտաբերեց յուր հոր այն խոսքերը թե՝ «մի շալե շուխով քեզ իրավունք չեն տալ մտնել ուր որ կամենում ես» կամ թե «առանց նյութական ուժ ու անկախություն ունենալու՝ չես կարող ծառայել ազգիդ ցանկացածդ չափով» և այլն, ուստի կարևոր համարեց կցել յուր նամակին նաև հետևյալ նկատողությունը.

«Ձեր գուշակությունները, սիրելի հայրիկ, քիչ էր մնում, որ այդտեղ իմ եռանդը սառեցնեին և իմ հավատն ու վստահությունը՝ դեպի լուսավորյալ մարդիկը՝ խախտեին, ես վհատվելու մոտ էի: Բայց հաստատուն կամքը և համարձակ որոշումը փրկեցին իմ հավատը վտանգից»: Եվ ինչպես գոհ եմ, որ երիտասարդական անփորձությունը տեղի չտվավ այս անգամ խոհական փորձառության. հակառակ դեպքում ես տասնյակ տարիներով ետ կմնայի և գործելու գեղեցիկ ասպարեզը ընդմիշտ փակ կմնար իմ առաջ: Երբ դուք ինձ խրատում էիք՝ նախ անձնական անկախության և ապա թե ազգիս ծառայելու մասին մտածել, և հավատացնում էիք՝ որ ամեն տեղ էլ կարապետությունը ճնշում է մարդկանց և նրանց առաջ գնալու ճանապարհները փակում, ես, այսուամենայնիվ, աշխատում էի հերքել այդ կարծիքների ճշմարտությունը և հավատում, որ լուսավորված երկրներում, մարդիկ այդ ձևով չեն մտածում և չեն կարող մտածել: Եվ չսխալվեցա: Թիֆլիս մտնելու երրորդ օրն արդեն իմ առաջ բացվեցավ գործելու ասպարեզ և ընդհմին առաջարկվեց ինձ արդյունավոր պաշտոն: Իսկ դրա համար ես շատ չաշխատեցի. ինձ հարկավոր եղավ միայն հայտնել թե կամենում եմ գործել, թե կամենում եմ նվիրել ինձ ազգային ծառայության և ահա ազնիվ մարդիկ օգնեցին ինձ»:

Հոր նամակը յուր բոլոր մանրամասնություններով ավարտելուց ետ, երիտասարդը պատրաստվեց երկրորդ նամակը գրելու:

Բայց դրա համար նա երկար մտածեց:

Այդ նամակը նա կամենում էր գրել օրիորդ Աշխենին: Բայց մի՞թե կարող էր. մի՞թե իրավունք ուներ:

Արդարև, թե՛ օրիորդին և թե՛ մորը նա միաժամանակ խոստացավ տեղեկություններ հաղորդել Թիֆլիսից: Բայց պատշաճյա օրենքը պահանջում էր, որ այդ տեղեկությունները նա տիկին Գոհարին հաղորդե: Իսկ յուր նախկին աշակերտուհուն կարող էր միայն բարևել և այն՝ հարգանաց սառն խոսքերով:

Բայց մի՞թե կարելի էր գոհ լինել այդքանով. չէ՞ որ նա սիրում էր Աշխենին. չէ՞ որ գեղեցիկ աղջկա պատկերն ամեն րոպե հետևում էր իրեն: Եվ այդքան օրվա

անջատումից ետ, արդարև, քաղցր և հաճոյական էր գրել նրան մի նամակ՝ լցված գողտրիկ զգացումներով, համեմված սիրավառ խոսքերով... Եվ եթե նույնիսկ օրիորդը սպասում լիներ այդպիսի մի գրության, սպասում լիներ հեռացած ուսուցչի սիրո խոստովանության... և, դրա փոխարեն, ստանար հանկարծ սառն ու անկենդան զրույցների մի շարահյուսություն... Օ՜հ, չէ՞ որ սա կրկնակի զրկանք, կրկնակի դժվար պիտ լիներ յուր համար: Երիտասարդը մտածում էր երկար, հաշվում էր, կշռում էր և վերջ ի վերջո գալիս ա՛յն եզրակացության, որ իզուր է ինքն իրեն տանջում: Օրիորդի կողմից նա չունի մի առհավատչյա, որ իրավունք տար իրեն հավատալու, թե նա քնքուշ զգացմունքներ է տածում յուր համար, թե նա սպասում է սիրո խոստովանության: Հետևապես առանց այդպիսի առհավատչյայի նամակ գրել նրան և դեռ նամակի մեջ էլ գողտր զգացմունքների մասին ակնարկել, այդ կլինի ամենամեծ անպատեհություն, եթե չասե անպարկեշտություն: Այս պատճառով նա որոշեց օրիորդի մոր հասցեին ուղղել լուր նամակը, որի մեջ, ի միջի այլոց, գրում էր հետևյալ

«Ազնիվ տիկին.»

«Իմ վերջին հրաժեշտի ժամանակ պատվիրեցիք ինձ հաղորդել Ձեզ Թիֆլիսի մասին տեղեկություններ. հայտնել թե ո՞ր աստիճան այս քաղաքն իմ երևակայածի համաձայն գտա, թե տեղական հայերը և ազգային հաստատությունները ո՞ր աստիճան արժանի են իրենց համբավին և թե վերջապես իմ գործունեության համար ի՞նչ ճանապարհ ընտրեցի:

«Առաջին և երկրորդ կետերի վերաբերմամբ հաղորդելիքս թերի պիտի լինին, որովհետև հազիվ մի շաբաթ է ինչ գտնվում եմ այստեղ, հետևապես ամեն տեղ տեսնելու և ամեն ինչ հետազոտելու ո՛չ ժամանակ և ո՛չ հնարավորություն ունեի: Այսքանը միայն կարող եմ ասել, որ Թիֆլիսը իսկ և իսկ Կովկասի մայրաքաղաք է, որովհետև, որքան իմ տեսածով և լսածով կարող եմ դատել, նա ամփոփում է յուր մեջ այն ամենը, ինչ որ այդ երկիրն ունի իրեն սեփական՝ սկսած գեղեցկից, հաճոյականից և օգտավետից մինչև տգեղը, գարշելին և վնասակարը: Հետևապես բարվո և չարի ճանապարհներն իսկությամբ որոշել ցանկացող մի նորեկի համար միշտ դժվարություններ կան այստեղ: Անկարելի է առաջինը որոնելու ժամանակ երկրորդին չհանդիպել: Թիֆլիս մտնելուս երկրորդ օրը այնպիսի մի հասարակության մեջ էի գտնվում, որ շուրջս եղող մարդկանց խոսակցությունները լսելուց մի քանի վայրկյան ինքս ինձ ավազակների որջում երևակայեցի. հուսահատությունն ինձ տիրեց և ես անիծեցի ինձ Թիֆլիս գալու որոշումն անելուս համար: Բայց մի քառորդ ժամից ետ, հենց այդ ավազակների որջում ծանոթացա Թիֆլիսի երիտասարդության ընտրելագույն մի ներկայացուցչի հետ, որը և օգնեց ինձ իմ սիրած ու գուրգուրած նպատակին հասնելու ուղիղ ճանապարհը գտնելու:

«Ի՞նչ էր անում այն ընտիր հոգին ավազակների որջում, կհարցնեք դուք,— նա եկել էր այդ թշվառականների հետ բարեկամություն հաստատելու և այդ ճանապարհով նրանց բարոյական սկզբունքների հետ ծանոթացնելու...

«Սա բարձրագույն մարդասիրության մի գործ էր, որ կատարում էր Թիֆլիսի լուսամիտ երիտասարդության ներկայացուցիչը: Հավանում եք գործելու այս եղանակը, այնպես չէ՞,— անշուշտ, հավատացած եմ. և ահա՛, ես էլ գտնվում եմ այժմ այդ ճանապարհով գործող երիտասարդների շրջանում և աշխատում եմ նրանց հետ:

«Հիշյալ երիտասարդը, որի հետ ծանոթացա, պ„ Հակոբ Մոմճյանն էր: Նրան ի լրո ճանաչում եք դուք «Փնջիկ» թերթի առաջնորդ աշխատակիցն է, որի հոդվածները մենք շատ անգամ կարդում էինք միասին: Նրա շնորհիվ, ահա, հիշյալ թերթի խմբագրության մեջ, գլխավոր աշխատակցի և քարտուղարի պատվավոր պաշտոնն ստացա: Պիտի աշխատեմ խմբագրության ինձ վրա դրած հույսն արդարացնելու:

«Փնջիկ»-ի խմբագիրը ճիշտ որ մեր հայրենակից Մանուկ Շաշյանն է. այս մասին, հիշում եք, խոսում էինք այդտեղ և իհարկե հավատացած էինք, որ դա մի ուրիշ անձնավորություն է համանման անունով ու ազգանունով: Բայց սխալվել էինք. խմբագիրն իսկապես մեր հայտնի Շաշյանն է: Անշուշտ, Դուք զարմանում եք այս նորությունը լսելով: Ձեզ նման էլ ես զարմացա: Բայց պ. Մոմճյանի տված բացատրությունները համոզեցին ինձ, որ կարելի է տգետին մեկը խմբագիր շինել, եթե այդպիսով հարթվում է որոշ նպատակներ ու ծրագիրներ իրագործելու դժվարին ճանապարհը: Դա առաջադեմ աշխարհում «փոքրը մեծին զոհելու» ընդունված մի սկզբունք է: Այս մասին առայժմ որոշ բան գրել չեմ կարող, բայց եթե հանդիպենք մի օր, շատ ուշագրավ պատմություններ պիտի լսեք:

«Տեղական ազգային հաստատությունների կամ մյուս խմբագրությունների հետ դեռ չեմ ծանոթացել: Պ. Մոմճյանը, որին սիրում եմ իմ Մենտոր անվանել, տակավին թույլ չէ տալիս ինձ նոր շրջանների մեջ մտնելու: «Ձեզ կարող են մոլորեցնել և դեպի սխալ ճանապարհները առաջնորդել»,— ասում է նա, և ես հավատում եմ: Ուստի նրա խորհրդին հետևելով՝ պիտի մտնեմ այդ շրջանները ա՛յն ժամանակ, երբ նրանց ամեն մեկի մասին որոշ ծանոթություններ առած կլինիմ իմ հարգելի Մենտորից»:

Նամակի վերջում երիտասարդ Վահանը, սիրտը սեղմելով, հանձնարարում էր տիկնոջը՝ ողջունել օրիորդ Աշխենին: Այդ առթիվ նա մինչև անգամ մի սխալ արավ, որի պատճառով ստիպված էր յուր նամակը նորից արտագրելու, սխալը սրտի հանցանքն էր: Փոխանակ գրելու «մատուցեցեք օրիորդին իմ հարգանաց ողջույնը». գրել էր՝ «իմ սիրալիր ողջույնը»... Ո՛վ կներեր նրան վայելել այդ սխալանքի քաղցրությունը...

— Իհարկե ոչ ոք: Ուրեմն յուր նամակն արտագրելով՝ նա մի անհրաժեշտ պարտք կատարեց:

ԺԱ

Ո՞վ Էր Մոմճյանը

Նա բնիկ Թիֆլիսցի էր, հասարակ ծնողների զավակ: Հայրը, որ ուսում սիրող մարդ էր, կարողացավ յուր փոքրիկ խնայողությունից մասն հանել Հակոբի համար այնքան, որ նա գիմնազիոնի ուսումը կարողանա ավարտել: Երիտասարդը, որ ի բնե ուշիմ, ժրաջան և աշխատասեր էր, մեծ առաջադիմություն ցույց տվավ ուսման մեջ և հաջողությամբ էլ ավարտեց: Հայրը, որ հին հայերից լինելով հայերեն չգիտեր և չէր խոսում, վշտանում էր սակայն, որ գիմնազիոնավարտ որդին, իրեն նման, երկու հայերեն խոսք իրար հետ կապել չգիտե: Ուստի խորհուրդ տվավ նրան մի փոքր ժամանակ էլ հայերեն սովորել: Բայց որդին կարևորություն չտվավ յուր այդ թերությանը, անուշադիր թողեց նաև հոր խորհուրդը: Նա աշխատում էր առաջ գնալ, իսկ հայերենի համար ժամանակ կորցնել՝ այն ժամանակվա կարծիքով հետադիմել կնշանակեր:

Այդ պատճառով գիմնազիոնն ավարտելուց ետ, նա անմիջապես Ռուսիո հին մայրաքաղաքն ուղևորվեց, այնտեղի համալսարանը մտնելու համար:

Մայրաքաղաքի մեջ շուտով նա գտավ բարեսիրտ ընկերներ, որոնք նրա համալսարան մտնելու սկզբնական պատրաստությունների մասին հոգացին: Մոմճյանը մտադիր էր բժիշկ դառնալ, որովհետև Կովկասի երիտասարդության սիրած ու փայփայած իդեալը բժշկությունն էր. ըստ որում նա ճանաչված էր իբրև ամենից ավելի հաստատ հաց տվող մասնագիտություն:

Երիտասարդ Մոմճյանն այդ մասնագիտությունն էլ ընտրեց և ուշագրավ աշխատասիրությամբ հաճախում էր բժշկական կաճառի դասախոսություններին:

Սակայն, ա՛յն բարեսիրտ ընկերները, որոնք սկզբում նրա համար ամեն բան հոգացին, մինչև վերջն էլ ձեռքից չթողեցին նրան և իրենց պարզ բարեկամությունը հետզհետե փոխեցին ընկերական մտերմության: Իսկ այդ մտերմության արդյունքը եղավ այն, որ Մոմճյանը նրանց միջոցով հետզհետե ծանոթացավ նոր մտքերի, նոր գաղափարների և նորագույն իդեալների հետ: Նա հաճախում էր այդ մտերիմների ժողովներին, ուր խոսում, քարոզում էին նոր մտքերի մասին, ուր գովում, երկինքն էին բարձրացնում այդ մտքերի ապագայում մարմնանալիք արդյունքը և դրսևորում ու դատափետում էին այն բոլորը, ինչ որ կա, ինչ որ գոյություն ունի այսօր աշխարհում և ինչ որ մեր արդի կյանքն ու բախտը կառավարող ուժն ու զորությունն են կազմում:

Մտերիմների ժողովում, բոլոր ճառերն ու քարոզություններն այնքան գրավիչ լեզվով է, այնքան համոզկեր խոսքերով էին արտասանվում, որ երիտասարդ և մանավանդ անփորձ սրտերն անկարող էին լինում նրա թովիչ ազդեցության չենթարկվիլ:

Մոմճյանի արևելյան վառ երևակայությունը, զգայուն սիրտը, ուշիմ և թափանցող միտքը, որոնք զուրկ էին խոհական փորձառության խնամատար հսկողությունից, հափշտակվելով գրավվեցան նորագույն վարդապետության ցնորքներից. նա հավատաց, որ արդարև ապրում է դժոխային խավարի մեջ, հանցավոր սխալման ճանապարհի վրա և սոսկաց:

Այնուհետև նրա աչքում երկրորդական նշանակություն ստացան թե՛ յուր ընտրած մասնագիտությունը և թե՛ նրան ուսանելու համար գործ դրվելիք աշխատությունը: Նա մոռացավ մինչև անգամ յուր ծնողները և նրանց վճարելիք երախտագիտական պարտքը: Նա մոռացավ նույնիսկ յուր հայ լինելը, մի ընկած ու օգնության կարոտ ազգի պատկանիլը. միով բանիվ, նա մոռացավ այն ամենը, ինչ որ յուր մանուկ մտքերին սնունդ և երիտասարդությանն ուժ էին մատակարարել և ուշքն ու միտքն ամբողջապես մտերիմների նորագույն վարդապետությանը նվիրեց:

Այս բոլորի հետևանքը եղավ այն, որ երիտասարդ Մոմճյանը միայն երկու տարի կարողացավ հաճախել համալսարան, երկրորդ տարվա վերջում անհաջող քննություն տալով՝ համալսարանից դուրս եկավ:

Այնուհետև նա իրեն ազատ համարեց դեպի հին աշխարհն ունեցած բոլոր պարտավորություններից և նվիրվեցավ նոր աշխարհի շահերին: Նա կանոնավորապես հաճախում էր մտերիմների ժողովին, չգիտացածը սովորում, չհասկացածը քննում, և, մանավանդ, գործելու եղանակներն ուսումնասիրում էր:

Երբ արդեն ամեն բան սովորեց և նորագույն վարդապետության առաքյալի կոչումն ստացավ, նրան խորհուրդ տվին վերադառնալ շուտով հայրենիք. ըստ որում հակառակ դեպքում ստիպված պիտի լիներ չսիրած երկրում և անհաճո պայմանների մեջ ապրելու:

Եվ մի գեղեցիկ օր երիտասարդ Մոմճյանը վերադարձավ յուր հայրենի քաղաք՝ Թիֆլիս:

Այստեղ արդեն մարդիկ նրա աչքում ավելի փոքր, ավելի ողորմելի էին երևում, քան մայրաքաղաքում: Նրանց մտածելու և գործելու եղանակը, գոյության կռվի մասին ունեցած հասկացողությունը, կրոնական զգացումները, ընկերական հարաբերությունները, ընտանեկան սովորությունները և այլն, երիտասարդ ուսանողին համոզում էին, օր յուր հայրենակիցները շատ առաջ չեն գնացած

միջնադարյան կիսավայրենիներից: Հետևապես նա կարծում էր, որ մեծ կարիք կա եռանդով, հաստատակամությամբ այս ժողովրդի մեջ գործելու: Եվ որովհետև հույս չուներ առաջին անգամից իսկ հին սերունդի վրա ազդելու, ուստի որոշեց յուր բոլոր ուշադրությունը երիտասարդության վրա դարձնել: Նույնիսկ գործելու եղանակը որոշող հրահանգները, որոնց նա ստացել էր մտերիմները ընկերությունից, նույն խորհուրդն էին տալիս ամեն մի գործողի, այսինքն թե՝ մի նոր միտք կամ վարդապետություն առաջ տանելու համար՝ նախ պետք է քարոզել երիտասարդներին, տհասներին և տգետներին: Սա հին փորձառության խոսքն էր, որ նոր գործողների համար օրենք էր դարձել:

Այսուամենայնիվ, յուր նպատակին հասնելու համար Մոմճյանին պակասում էր ամենագլխավոր գործիքը, այն է լեզուն: Նա պետք է գործեր հայրենակից հայերի մեջ, իսկ նրանից շատերի հետ խոսեր մայրենի լեզվով, որը դժբախտաբար չգիտեր: Այժմ ճանաչեց նա յուր սխալը և խոստովանեց հոր խորհրդի բանավոր լինելը:

Այսուամենայնիվ, դեռ ուշ չէր. նա երիտասարդ էր և կարող էր շատ բան սովորել: Ուստի, որպեսզի յուր առաքելական գործունեությունն արգելքների չհանդիպի, նա սկսեց մի կողմից երիտասարդության հետ ծանոթանալ և մյուս կողմից հայերեն սովորել: Նրա իսկական վարժապետները եղան յուր հայախոս ծանոթները և տեղական հայ թերթերը:

Մոմճյանին, իհարկե, հարկավոր չէր հայոց լեզվի խորին հմտություն, այլ փոքր ի շատե ազատ խոսելու և գրական հասարակ լեզվով գրելու վարժությունը: Յուր ուշիմության շնորհիվ այդ էլ կարճ ժամանակի մեջ ձեռք բերավ նա և ամեն բանով դարձավ կատարյալ:

Այժմ մնում էր գործել:

Բայց ի՞նչ պիտի գործեր: Յուր նոր մտքերը, նոր գաղափարները հասկանալի էին լինում միայն նրանց, որոնք օտար հոգվով սնված, օտար զգացումներով զարգացած էին: Դրանց մեծ մասն ուսանողներ կամ օտարախոս օրիորդներ էին: Այդպիսիները սակավաթիվ լինելուց զատ՝ հայ ժողովրդի մեջ գործելու բարեմասնություններից էլ զուրկ էին:

Պետք էր, ուրեմն, ուրիշ շրջաններ մտնել: Եվ ահա Մոմճյանը մոտեցավ հոգվով ու սրտով հայ երիտասարդության: Դրանք գլխավորապես հայ ժողովրդի միջից եղած, հայ ծոցում մեծացած, հայության կյանքով ապրած գավառացիներն էին: Բայց երիտասարդ առաքյալը դժգոհությամբ տեսավ, որ սրանց էլ զբաղեցնում ու ոգևորում են ուրիշ մտքեր, ուրիշ գաղափարներ, ուրիշ իդեալներ, այսինքն այն բոլորը, ինչ որ համաշխարհաքաղաքացու համար վաղուց հնացած և արհամարած բաներ էին:

Այսուամենայնիվ, այդ երիտասարդությունն ուժ էր ներկայացնում: Նա խմբվում էր հայ եկեղեցու, հայ քահանայի, հայ վարժապետի և, նամանավանդ, հայ խմբագրությունների շուրջը, տալիս էր նրանց ինչ որ ուներ և ստանում էր նրանցից կարոտում էր: Այդ երիտասարդության հետ էր և ժողովրդի տգետ մեծամասնությունը, այդ երիտասարդության իդեալներով էր ոգևորվում և ամբոխը, որի ուժը միշտ պիտանի են համարել նորագույն վարդապետության բոլոր առաքյալները

Մոմճյանն յուր սուր հոտառությամբ հասկացավ, հնար է հին իդեալներով ոգևորվող այս երիտասարդության դեմ կռվել կամ գրավել նրան յուր կողմը՝ առանց նրա պաշտած աստվածների առաջ ծունկ խոնարհելու:

Եվ ահա՛, նա փոխեց յուր հոգվո կերպարանքը և դիմակ հագավ. նա ներկայացրեց իրեն իբրև մինն այն երիտասարդներից, որոնք հին իդեալներով են ոգևորվում և այդ իդեալներին են նվիրված:

Եվ նա յուր հաշվի մեջ չսխալվեցավ: Շուտով նրա շուրջը հավաքվեցան շատերն յուր ցանկացած մարդիկներից, որոնք մտերմացան նրա հետ, խորհուրդներ առին, խորհուրդներ տվին, գաղտնիքներ հայտնեցին և այլն:

Բայց որպեսզի յուր բարեկամներին ավելի սերտ կապե յուր հետ և նրանց թիվն ավելացնե, նա որոշեց հրատարակել նաև մի հայերեն թերթ, որն ապագայում ուրիշ նպատակների կարող էր ծառայել:

Սակայն յուր անցյալ և, ո՞վ գիտե, գուցե մոռացված, սխալանքների պատճառով, նա չէր կարող խմբագիր-հրատարակչի պատվին արժանանալ, այդ պատճառով հարմար դատեց նաև խմբագրի անուն կրող մի խրտվիլակ որոնելու, որը և գտավ մեր ընթերցողներին հայտնի Մանուկ Շաշյանի մեջ:

Թե այնուհետև ինչպես սկսեց գործել առաքյալ Մոմճյանը, մասամբ տեսանք և դեռ էլի կտեսնենք:

ԺԲ

ԱՆԼՈՒԾԱՆԵԼԻ ՀԱՆԳՈՒՅՑ

Երբ երիտասարդ Սարյանի փորձնական ծառայության առաջին շաբաթն անցավ, Մոմճյանը հանձնեց նրան «Փնջիկս»-ի խմբագրության գրական հարստությունը, որ բաղկացած էր բազմաթիվ հին ու նոր աշխատություններից՝ հոդվածներից, զրույցներից, պատկերներից, ոտանավորներից և այլն, և իրավունք տվավ նրան կարդալ այդ բոլորը, պիտանի գտածներն ուղղել ու հարմարեցնել տպագրության համար, իսկ անպետքները ձգել զամբյուղի մեջ: Երիտասարդը մի օր շարունակ ուշի ուշով կարդաց այդ աշխատությունները և նրանց մեջ պիտանի ոչինչ չգտնելով բոլորն էլ ձգեց զամբյուղի մեջ:

Մոմճյանը, որ կարծում էր թե մի քանի համարի արդեն նյութ ունի պատրաստ, զարմացավ՝ լսելով Սարյանից, որ առաջիկա համարը լցնելու համար նյութ չկա խմբագրության մեջ:

— Ի՞նչ եք ասում, իմ ձեզ տված նյութերը մի քանի համար կլցնեին, իսկ դուք առաջին համարի համար էլ չկարողացաք օգուտ քաղել նրանցից,— դժգոհությամբ բացականչեց Մոմճյանը:

— Այդ նյութերից անկարելի էր օգուտ քաղել,— սառնությամբ նկատեց Սարյանը:

— Ի՞նչ եք ասում, նրանցից շատերը հայտնի գրողների աշխատություններ էին:

— Իմ կարդացածները բոլորն էլ դպրոցական համբակների և անգրագետ մարդկանց անմիտ ու անբովանդակ գրվածքներ էին:

— Անկարելի է:

— Ի՞նչ է անկարելի, քանի որ այդպես էր:

— Սխալվում եք:

— Ո՛չ, չեմ սխալվում:

— Անպատճառ սխալվում եք, պարոն Սարյան, որովհետև նրանց մեջ իմ գրվածքներն էլ կային,— եռանդով բացականչեց խմբագիր Շաշյանը, որը նույնպես զարմացել էր Սարյանի զեկուցումը լսելով:

Երիտասարդ աշխատակիցը մի կարեկցական հայացք ձգեց խմբագրի վրա և ժպտաց: Իսկ Մոմճյանը նրա անտեղի միջամտության վրա բարկանալով՝ ի նշան դժգոհության՝ բռունցքը զարկեց սեղանին: Ապա դեպի Սարյանը դառնալով հարցրեց:

— Այսուամենայնիվ, այդ նյութերը հո չոչնչացրի՞ք:

— Համաձայն ձեր կարգադրության բոլորն էլ զամբյուղը թափեցի:

— Զամբյո՞ւղը թափեցիք: Օ՛, այդ արդեն չափազանց է. հեղինակությունների հետ այդպես անգթաբար չեն վարվում:

— Դուք, կարծեմ, այդպես կարգադրեցիք:

— Այո՛, բայց իմ կարգադրությունը միայն անպետքների մասին էր:

— Ես էլ միայն անպետքները թափեցի զամբյուղը:

— Իսկ պիտանիներ՞ն ինչ արիք:

— Պիտանիներ չկային:

— Ախ, պարոն Սարյան, ինչ եք ասում, մի՞թե կարելի է. ո՞ւր է. տվեք ինձ այդ նյութերը:

Սարյանը զամբյուղը Մոմճյանի առջևը դրավ:

— Հապա, կարդացեք. ինչ բանի մասին է գրված, օրինակ, հենց այստեղ:— Մոմճյանը ձեռքը զամբյուղը տանելով և մի հաստ տետրակ հանելով՝ տվավ այն Սարյանին:

— Սա իբրև թե մի վիպակ է:

— Ի՞նչ կնշանակե «իբրև թե»:

— «Իբրև թե»— կնշանակե այն, որ հեղինակը յուր գրվածքի անունը «Վիպակ» է դրել, իսկ նա մի տղայական, անմիտ, անճաշակ, հակասություններով լի և մանավանդ անճոռնի լեզվով դրված մի առասպել է:

— Շատ լավ. ձեր պաշտոնն էլ հենց այն է, որ անճոռնի լեզուն ուղղեք...

— Ենթադրենք թե լեզուն ուղղեցի, իսկ նրա անմիտ ու անճաշակ բովանդակությո՞ւնը, նրա հակասություններն ի՞նչ անեմ, ես խո չեմ կարող այդ թերություններն էլ ուղղել:

— Իսկ սա՞ ինչ բան է,— նորեն մի գրվածք հանելով զամբյուղից, հարցրեց Մոմճյանը:

— Սա էլ, իբրև թե, ոտանավոր բանաստեղծություն է:

— Դարձյա՞լ «իբրև թե», զարմանում եմ, եթե բանաստեղծություն է, ուրեմն բանաստեղծություն է:

— Այդպես է գրված ոտանավորի վերնագրի տակ, փակագծերի մեջ:

— Եթե այդպես է գրված, ուրեմն բանաստեղծություն է :

— Ոչ, պարոն. դա մի համբակի, կամ, գուցե, հայոց լրագիրներով հայերեն սովորող մի տիրացուի խելքի արտադրությունն է:

— Հապա կարդացեք լսենք:

— Լսեցեք, վերնագիրն է՝ «Խավարի թագավոր»: — Գեղեցիկ վերնագիր է,— վկայեց Շաշյանը:

— Այո՛, բայց շարունակությունն ավելի գեղեցիկ է,— ծաղրաբանեց Սարյանը և շարունակեց.

Արևի կարմիր ջահերը կախված
Սարերի տակին խավարը թաք կացած,
Ով որ անցնում էր, տեսնում էր հանկարծ,
Որ թռչունները երգում են կանգնած...

— Շատ սիրուն ոտանավոր է. շարունակեցեք,— նկատեց Մոմճյանը:

— Շարունակեցեք, դա մեր լավ բանաստեղծներից մեկի անդրանիկ բանաստեղծությունն է,— հարեց Շաշյանը:

— Դուք կամենում եք ինձ ծաղրել,— վրդովված նկատեց Սարյանը:

— Ծաղրե՞լ. ինչո՛ւ համար,— զարմացած հարցրեց Մոմճյանը:

— Երբ այս տեսակ գռեհիկ ու անճոռնի գրվածքները բանաստեղծություն եք անվանում, այդ նշանակում է, որ ինձ ծաղրում եք, որովհետև ես նրանց արժեքը չհասկանալով զամբյուղն եմ ձգել:

— Ընդհակառակը, այդ վարմունքը պատիվ է բերում ձեզ. կնշանակե դուք ավելի արժանավոր գրվածքներին եք նշանակություն տալիս: Բայց իբրև գաղտնիք պիտի նկատեմ, որ եթե մենք ձեզ նման վարվելու լինինք մեզ ղրկած բոլոր գրվածքների հետ և նպատակ շինենք մեզ համար՝ միմիայն շնորհալի և արժանավոր գրվածքները մեր թերթում զետեղելու, այն ժամանակ ստիպված պիտի լինինք երեք համարի փոխարեն մեկը հրատարակել:

— Կնշանակե ձեր ամեն մի թերթի երկու երրորդականն անպետք նյութերով պիտի լցնեք:

— Իհարկե, ուրիշ կերպ անկարելի է:

— Բայց այդ պատիվ չի բերիլ թերթին:

— Էհ, բարեկամ, հայերի մեջ «հաստ ու բարակ մի գին ունի, վա՛յ բարակ մտնողի»:

— Այդպես խոսում ու դատում են ամբոխի մարդիկ, տգիտության ստրուկները: Բայց խմբագրության առաջնորդողներին, գիտության ու լուսավորության զինվորներին վայել չէ կարծեմ այդ օրինակով խոսել,— համեստությամբ նկատեց Սարյանը:

— Այդ մենք էլ գիտենք, բայց անկարելին չեք կարող կարելի դարձնել. մեր ժողովրդի խելքն ու միտքը ամուլ է. նրա արտադրածն ահա՛ այս է, ինչ որ տեսնում եք: Մենք հո չենք կարող բոլոր թերթը մեր սեփական գրվածքներով լցնել:

Սարյանը լռեց և սկսեց մտածել:

— Ուրեմն առաջիկա համարի համար ընտրեցեք այս նյութերից մի քանի բան:

— Ցույց տվեք, որ առաջիկա համարի համար ինքս նյութ պատրաստեմ,— գեղեցիկ համարձակությամբ առաջարկեց Սարյանը:

— Դո՞ւք:

— Այո՛:

— Միայնա՞կ:

— Ա՛յո, միայնակ, կամենում եմ ուժս փորձել:

— Պատրաստեցեք, եթե կարող եք. դա մի սյուպրիզը կլինի մեր խմբագրության համար,— ասաց Մոմճյանը ծիծաղելով:

— Մանավանդ, եթե ձեր դրած ամեն մի հոդվածի տակ զատ-զատ ստորագրություններ դնեք,— նկատեց Շաշյանը:

— Ես հոդվածները կպատրաստեմ, իսկ պարոն Մոմճյանը թող հարմար դատած ստորագրությունները դնե,— պատասխանեց Սարյանը և նույն րոպեից էլ գործի սկսավ:

Երկու օրից ետ լույս տեսավ «Փնջիկի»-ի սպասված համարը, որի խմբագրականը միայն Մոմճյանինն էր, իսկ մյուս հոդվածները Սարյանինը: Համարն աղմուկ հանեց: Թե՛ բաժանորդները և թե՛ խմբագրության բարեկամները գոհությամբ նկատեցին թերթի մեջ եղած արժանավոր փոփոխությունը և համակրական խոսքերով ու նամակներով շնորհավորեցին խմբագրին, նրա նոր աշխատակիցների մասնակցությունը:

Մոմճյանն այս անգամ վերջնականապես համոզվեց, որ յուր գյուտն աննման և անզուգական է: Եվ վախենալով, թե մի՛ գուցե այնուհետև մյուս խմբագրությունները աշխատեին հեռացնել իրենից այդ տաղանդավոր երիտասարդին, որը օժտված էր հրապարակախոսական ասպարեզում գործելու ամեն բարեմասնություններով, մտածեց մի ամուր և անլուծանելի հանգույցով կապել նրան «Փնջիկ»-ի խմբագրության հետ: Դրա համար նա երկար չմտածեց: «Մտերիմների ընկերությունից» ստացած հրահանգի մեջ կային հոդվածներ, որոնք սովորեցնում էին նրան ցանկացած մարդուն «անլուծանելի հանգույցով» կապելու միջոցները: Նա թերթեց այդ հրահանգը և ընտրեց հարմարագույն միջոցը:

Բայց, իհարկե, այդ մասին ոչ ոքի ոչինչ չհայտնեց, որովհետև դեռ «Մտերիմների ընկերության» աշակերտ եղած ժամանակից գիտեր, որ մի բարեկամի գաղտնիք հայտնելը տասը թշնամու հայտնել կնշանակե:

Այսուամենայնիվ, որոշյալ միջոցը միայնակ գործադրել չէր կարող, նա ստիպված էր գոնե խմբագիր Շաշյանին գործակցության հրավիրելու: Այս պատճառով առաջարկեց նրան խոսել տանտիրուհու հետ, որ յուր բնակարանին կից սենյակը զիջանե Սարյանին:

— Այդ սենյակում Մովսիսյանն է ապրում և հազիվ թե տիկին Մարթան հեռացնե նրան,— ասաց Շաշյանը:

— Ի՞նչ կնշանակե հազիվ թե. չէ՞ որ նրա համար միևնույն է, թե ով է յուր սենյակում ապրում. բավական է, որ վարձը ժամանակին վճարե:

— Ոչ. միևնույն չէ. Մովսիսյանին նա մի փոքր առավելություն է տալիս:

—Պատճա՞ռը:

— Պատճառը այն է, որ օրիորդ Շուշանը սիրում է Մովսիսյանին:

— Մի՞թե:

— Ինչպես չէ:

— Իսկ տիկին Մարթան համակրո՞ւմ է այդ բանին:

— Անշուշտ: Չէ՞ որ մեր ասելով նա Մովսիսյանին հարուստ մարդու որդի է ճանաչում:

Մոմճյանը լռեց և ձեռքը դեպի ճակատը տանելով սկսեց մտածել: Նա կարծես աշխատում էր մտաբերել մի բան, որը վաղուց մոռացել էր:

— Չե՞ք հիշում, արդյոք, Մովսիսյանի մասին ե՞ս խոսեցի տիկին Մարթայի հետ, թե՞ դուք,— երկար մտածելուց հետո հարցրեց Շաշյանին:

— ինչպես չէ, հիշում եմ. Մովսիսյանի մասին ես խոսեցի տիկնոջ հետ:

— Իսկ ի՞նչ, խոսածներիցդ չե՞ք հիշում:

— Հիշում եմ. ասացի, որ ուսումնական երիտասարդ է, հարուստ մարդու որդի է, ազնիվ սրտի ու մաքուր վարք ու բարքի տեր է, միով բանիվ ասացի այն բոլորը, ինչ որ դուք այն ժամանակ թելադրեցիք ինձ:

— Բայց չե՞ք Հիշում արդյոք, ձե՞ր կողմից հաղորդեցիք այդ տեղեկությունները, թե՞ ասացիք, որ ինձանից եք լսել:

— Հիշում եմ. ինչպե՞ս չեմ հիշում. այդ տեղեկություններն իմ կողմից հաղորդեցի, այդպես էլ դուք այն ժամանակ պատվիրեցիք ինձ:

«Ուրեմն դեռ ուշ չէ, սխալը կարելի է ուղղել»,— շշնջաց ինքն իրեն Մոմճյանը և դիմեց տիկին Մարթայի մոտ:

Տիկին Մարթան Մոմճյանի ամեն մի առաջարկությունը սիրով կատարում էր, որովհետև այդ անօգուտ չէր անցնում յուր համար: Սակայն Մովսիսյանին հեռացնելու մասին արած առաջարկությունը դժգոհությամբ լսեց: Պատճառն այն էր, որ նա կարծում էր թե՝ այդ առաջարկությունը կատարելով վնաս կստանա: Իսկ այդ վնասը պիտի վերաբերեր ոչ թե նրա նյութականին, այլ այն ընտանեկան բախտին, որի վերաբերմամբ առհասարակ, զիջողություններ չեն անում:

— Ես մտածում էի հաշտեցնել ձեզ Մովսիսյանի հետ, իսկ դուք դեռ պահանջում եք, որ այստեղից էլ հեռացնեմ նրան,— հարցրեց նա Մոմճյանին:

— Ես այլևս չեմ կարող հաշտվել նրա հետ,— պատասխանեց վերջինս:

— Ինչո՞ւ:

— Որովհետև խիստ դյուրագրգիռ և հակառակասեր բնություն ունի, իսկ նրա այդ բնությունը վնաս է բերում մեր գործին:

— Այսքան ժամանակ աշխատում էիք միասին և, սակայն, ոչ մի անգամ դժգոհություն չհայտնեցիք: — Լռում էի գործի սիրույն համար, ապա թե ոչ նրա կոպտությունը վաղուց զզվեցրել էր ինձ:

— Ես այդ չգիտեի:

— Ինչո՞ւ չգիտեիք, ինքներդ հո մի քանի անգամ հաշտության միջնորդ եք եղել նրա և Շաշյանի մեջ:

— Այո՛, բայց Շաշյանը...

— Հասկանում եմ, կամենում եք ասել, որ Շաշյանը հիմարին մեկն է: Իրավունք ունիք: Բայց Մովսիսյանը նրանից ոչնչով ավելի չէ:

— Այդպես մի՛ խոսեք խնդրեմ, ես վիրավորվում եմ:

— Վիրավորվո՞ւմ եք... և ինչո՞ւ:

— Պատճառը գաղտնիք է:

— Այսուամենայնիվ ինձ նման բարեկամին կարող եք հայտնել:

— Եթե խոստովանանք պահեք:

— Ի՞նչ խոսք է այդ:

— Մովսիսյանը իմ փեսացուն է:

— Ձե՞ր փեսացուն:

— Այո՛:

— Օ՛, այդ նշանավոր գաղտնիք է. շնորհավորում եմ:

— Շնորհավորեցեք, բայց առանց կատակի:

— Շնորհավորում եմ առանց կատակի, բայց, ասացեք խնդրեմ, օրիորդ Շուշանը համաձա՞յն է ձեր ընտրությանը:

— Շուշանը սիրում է Մովսիսյանին:

— Անկարելի է:

— Հաստատ խոսք եմ ասում:

— Զարմանում եմ:

— Մովսիսյանն էլ Շուշանին է սիրում:

— Այդ, ասենք, զարմանալի չէ. ձեր աղջիկը այնպիսի առավելություններ ունի, որ Մովսիսյանից ավելի արժանավոր երիտասարդներ էլ կսիրեին նրան: Զարմանալին ա՛յն է, որ Շուշանը հավանել է Մովսիսյանին:

— Ինչո՞ւ չպետք է հավաներ:

— Ես ոչ ոքի մասին վատ խոսել չեմ կարող, բայց, իբրև ձեր տան բարեկամ, խորհուրդ կտամ, որ աշխատեք հեռացնել ձեզանից այդ երիտասարդին: — Պատճա՞ռը:

— Պատճառը գաղտնիք է:

— Բայց ինձ կարող եք ասել:

— Եթե խոստովանանք պահեք:

— Դուք էլ իմ խոսքն եք կրկնում. լավ, կպահեմ:

— Շուշանին կամենում եմ ավելի լավ երիտասարդի հետ ամուսնացնել:

— Եվ ո՞վ է դա:

— Մի երիտասարդ, որ Մովսիսյանից տասն անգամ ավելի գեղեցիկ, ավելի ուսումնական և ավելի հարուստ է:

— Բայց ո՞վ է դա վերջապես:

— Մի գավառացի:

— Անո՞ւնը:

— Վահան Սարյան:

— Ի՞նչ գործով է պարապում:

— Հարուստ տղա է, եկել է Թիֆլիս մեր սիրած գործերովն զբաղվելու: Բայց այստեղ, հո գիտեք, հազար տեղից կարող են քարշ տալ նրան: Այդ պատճառով ցանկանում եմ, որ բերենք քեզ մոտ և այստեղ մեր աչքի առաջ և մանավանդ ձեր հսկողության ներքո պահենք, մինչև որ բանը սարքենք:

Տիկին Մարթան, որ միշտ այն կարծիքին էր թե՝ յուր աղջկանը ուզող չի լինի և այդ պատճառով Մովսիսյանից պինդ էր բռնել, հարուստ և գեղեցիկ Սարյանի մասին լսելով սկսեց տատանվել: Եթե Մովսիսյանը մինչև անգամ նշանված լիներ Շուշանի հետ, այդ հանգամանքը դարձյալ չէր կարող ստիպել Մարթային, որ լավագույն փեսան ձեռքից թող տա: Սա ուշադրության արժանի խնդիր էր: Ուստի սկսեց երկար ու բարակ հարցափորձել Մոմճյանին յուր հիշած երիտասարդի համար, իսկ Մոմճյանը ամենալավ և գրավիչ գովեստները շռայլեց նրա մասին:

Եվ որովհետև Մարթան փորձով գիտեր, որ Մոմճյանի բոլոր առաջարկությունները կատարելով շարունակ օգուտ էր ստացել, ուստի որոշեց Մովսիսյանին հեռացնելու մասին արած առաջարկությունը ևս անհապաղ իրագործել: Բայց ամենից առաջ ցանկացավ ապագա փեսացուն տեսնել: Մոմճյանը խոստացավ բերել նրան: Նույն ավուր երեկոյան, տիկին Մարթայի մեզ ծանոթ հյուրասենյակում, սպասում էին պ. Սարյանին տանտիրուհին, յուր աղջիկը և խմբագիր Շաշյանը: Վերջինս վաղօրոք պատվեր էր ստացել Մոմճյանից այն եղանակով խոսել Սարյանի մասին, ինչ եղանակով որ ինքն էր խոսացել: Ուստի տիկ. Մարթան սրանից էլ նույնպիսի

գովություններ լսեց նորեկի մասին, ինչպես Մոմճյանից էր լսել: Այդ պատճառով սպասում էր Սարյանին գրեթե անհամբերությամբ:

Ինչ օրիորդ Շուշանին էր վերաբերում, նա առայժմ հանգիստ նստած և դեպի լսածները անտարբեր, մտածում էր միայն Մովսիսյանի մասին, որին համոզված էր թե սիրում է ջերմությամբ: Մոր այն հայտարարությունը, թե սպասում է լավագույն փեսայի, աղջկա սրտին ոչ մի հուզում չպատճառեց, որովհետև Շուշանը թեպետ մոր խոսքերը լսում և հրամանները կատարում էր, բայց յուր սրտում, ոչ հարգում էր նրան և ո՛չ նշանակություն էր տալիս նրա խոսքերին: Նա ուներ յուր սեփական աշխարհը, որի մեջ առանձնացած ապրում էր ինքը մեն-միայնակ: Վերջին ժամանակները միայն առ ի չգոյե մի սրտակցի նա սկսեց մտերմանալ Մովսիսյանի հետ և յուր սրտում ծածկած գաղտնիքները երբեմն-երբեմն բանալ նրան: Այդ գաղտնիքներից մինը օրիորդի դեպի Մոմճյանն ունեցած ատելությունն էր, որը գնալով սաստկանում էր և որից իսկապես գրգռված Մովսիսյանը, կռվեց Մոմճյանի հետ և «Փնջիկ»-ի խմբագրությունից հեռացավ:

Ի՞նչն էր պատճառը, որ օրիորդը արհամարհում էր մորը և ատում էր Մոմճյանին, դա էլ մի գաղտնիք էր, որը խեղճ աղջիկը թաքցնում էր յուր սրտում՝ առանց, նույնիսկ, Մովսիսյանին հայտնել կարողանալու: Վերջինը այսքան միայն գիտեր, որ Շուշանը ատում է Մոմճյանին և այն՝ այս ու այն սովորական պատճառներով, ուստի ինքն էլ սկսել էր ատել նրան. բայց թե օրիորդը մորն էլ արհամարհում էր, այդ չգիտեր որովհետև Շուշանը երդվել էր բուն գաղտնիքը ոչ ոքի չհայտնել և յուր հետ գերեզման տանել:

Մենք էլ, ուրեմն, նրա որդիական պատվասիրությունը հարգելով, կլռենք այս մասին, որովհետև տգեղ և ազնիվ ճաշակը վիրավորող նորություններն ավելի լավ է ծածկել, քան երևան հանել...

Վերջապես Մոմճյանը եկավ բերելով յուր հետ Վահան Սարյանին, որին և ծանոթացրեց թե՛ տանտիրուհու և թե՛ օրիորդի հետ:

Տիկին Մարթան Մոմճյանի պատմածից ավելի գեղեցիկ գտավ նորեկ երիտասարդին. իսկ Շուշանը գրեթե հիացած սկսեց դիտել նրա բարձր ու բարեձև հասակը, դեմքի առնական գեղեցկությունը, խելոք ու գրավիչ աչքերը, ազդու հայացքը, աղու ժպիտը, լայն ու ազնիվ ճակատը, բնիկ սյունեցու թուխ գանգրավոր մազերը և ի վերջո այն գրավիչ համեստությունը, որ կրկնակի փայլ ու շուք էր տալիս նրա ընդհանուր գեղեցկությանը:

Տիկին Մարթան յուր սովորական ճարտարախոսությամբ սկսեց զբաղեցնել հյուրին և խոսակցությունն ընդհանրացնել: Մոմճյանն յուր կողմից օգնում էր նրան, իսկ Շաշյանը աշխատում էր հիմար կարծիքներ չհայտնել: Ինչ օրիորդ Շուշանին է վերաբերում, նա դեռ շարունակում էր դիտել գեղեցիկ երիտասարդին և հիանալ նրանով. այդ հիացումը ավելանում էր, մանավանդ, երբ երիտասարդը սկսում էր խոսել յուր մեղմ ու համոզկեր ձայնով և խելոք ու հակիրճ պատասխաններ էր տալիս իրեն առաջարկված հարցերին:

Վերջապես տիկին Մարթան զրկեց Շուշանին նորեկ երիտասարդին շարունակ դիտելու հաճույքից, հրամայելով նրան թեյ բերել հյուրերի համար:

Օրիորդը շտապեց կատարելու մոր հրամանը, և այս անգամ առանց դժգոհության, որովհետև թեյ վայելողների մեջ կար գոնե մեկը, որին նա արժանավոր անձն էր համարում: Բայց այստեղ, յուր առանձնության մեջ, նա մտաբերեց հանկարծ Մովսիսյանին և դատապարտեց իրեն, որ մի անգամ արդեն այդ երիտասարդին

սիրելուց ետ՝ թույլ է տալիս իրեն մի ուրիշ երիտասարդի գեղեցկության վրա ուշադրություն դարձնելու, որը յուր կարծիքով, հանցանք գործելու հավասար է:

Այսուամենայնիվ, երբ նա թեյը ձեռքին նորից հյուրասենյակը մտավ, յուր աչքերն ամենից առաջ նորեկ երիտասարդի վրա ուղղվեցան, կարծես էլ ուրիշ ոչ մեկին տեսնելու պայմանով: Օրիորդը բաժանեց թեյը և հակառակ յուր դիտավորության, փոխանակ մյուս սենյակը վերադառնալու մնաց հյուրասենյակում և նստեց ուղիղ Սարյանի հանդեպ:

Տիկին Մարթան դիտում էր յուր դստեր շարունակ դեպի նորեկը ուղղվող հայացքները և զվարճանում, իսկ Մոմճյանը մոր և աղջկա դեպի յուր բարեկամն ունեցած այդ համակրությունը նկատելով, և այդ բանի մեջ յուր ծրագրի ապագա հաջողության գրավականը տեսնելով, ուրախանում և հրճվում էր:

Երբ հյուրասիրության վերաբերյալ ժամերը լրացան, տիկին Մարթան կամեցավ խոսք բանալ նորեկ երիտասարդին բնակարան տալու մասին՝ բայց որովհետև դեռ այդ առթիվ Շուշանի հետ չէր խոսել, ուստի կանչեց նրան մյուս սենյակը և նրա կամքը հարցրեց.

— Արա՛, ինչպես հարմար ես դատում,— ասաց նա,— այդ գործին ես խառնվել չեմ կարող:

— Բայց գործը իսկապես քեզ է վերաբերում նկատեց մայրը:

— Ինչպե՞ս թե ինձ է վերաբերում:

— Իհարկե, քեզ է վերաբերում: Ես հո սենյակը վարձով տալու մասին չեմ մտածում. թե խնդիրը միայն այդ լիներ, քեզ ի՞նչ ունեի հարցնելու, և մանավանդ թե՝ ի՞նչ հարկ կար Մովսիսյանին հեռացնելու, միևնույն վարձը, որ ուրիշը պիտի վճարե, նա արդեն վճարում է: Բայց բանն այն է, որ մեր սենյակում ապրող երիտասարդներից մինը քո ապագա ամուսինը պիտի լինի, այժմ ասա, որի՞ն ես ընտրում՝ Մովսիսյանի՞ն, թե՞ այս նոր երիտասարդին:

— Ոչինչ չգիտեմ,— աչքերը գետին խոնարհելով շշնջաց Շուշանը:

— Ինչպե՞ս թե ոչինչ չգիտես, քսան տարեկան աղջիկ ես և ոչինչ չգիտես. խոսիր էլի:

— Ի՞նչ խոսեմ:

— Իմ թույլտվությամբ դու Մովսիսյանի հետ բավական մտերմացել ես այդ գիտեմ. որ սիրում է քեզ, այդ էլ գիտեմ: Բայց խնդիրն այս է, որ նա դեմքով տգեղ, բնությամբ՝ անհամբեր, շուտ բարկացող, կռվասեր է. և թե պսակվես նրա հետ, կարող է պատահել, որ շատ նեղություններ պատճառե քեզ. դու նրա այժմվա վարմունքից մի խաբվիր. բոլոր երիտասարդները այդպես են. ամուրի ժամանակ մեղր ու շաքար են երևում, բայց հենց որ պսակվում են, լեղի ու քացախ են դառնում:

— Միևնույնն էլ այս պարոնը չի՞ դառնալ:

— Չէ. սրա դեմքից ու աչքերից երևում է, որ մեղր ու շաքար էլ կմնա, լավ տղա է. սրա մեկ բոյ ու բուսաթը տասը Մովսիսյան արժե: Դու էլ աչքեր ունես, տեսնում ես չէ՞:

— Դու հենց տղայի մասին ես խոսում, մի չես հարցնում թե քո աղջկան էլ հավանող կա՞, թե ոչ:

— Իմ աղջկան ո՞վ չի հավանիլ. փառք աստուծո, ի՞նչ պակասություն ունիս. թե մի տասից ցածր ես, քսանից էլ բարձր ես,— աշխուժով նկատեց տիկին Մարթան, բայց հետո ինքն յուր խոսքին կարծես չհավատալով նայեց աղջկան, համեմատեց նրան նորեկ երիտասարդի հետ և ընկավ մտածմունքի մեջ:

«Իրավ, այս բանի համար չխոսացինք,— մտածում էր տիկինը.— գուցե այդ տղան չհավանեց Շուշանիս, ինչո՞ւ Մովսիսյանին հեռացնեմ, թող առաջ Մոմճյանը հաստատ խոսք տա ինձ, որ յուր բարեկամը կուզե իմ աղջկան, այն ժամանակ Մովսիսյանին կհեռացնեմ...»:

Այս մտադրությամբ նա կամենում էր կանչել Մոմճյանին՝ մեկ էլ հանկարծ միտքը փոխեց.— «Ո՞վ կարող է իմ ձեռքից խլել այդ տղային, կամ ինչպե՞ս կարող է նա իմ ճանկերից ազատվել: Թող մի իմ տունը մտնի, թող ապրի ինձ մոտ մի ամիս, հետո տեսնեմ ինչպե՞ս չի ուզում իմ աղջկան...»,— մտածեց տիկին Մարթան և վերջապես որոշեց յուր աղջկա բախտը:

— Հա՛, հիմա ի՞նչ ես ասում,— դարձավ նա Շուշանին:

— Ի՞նչ պիտի ասեմ, իմ ասելիքս ասացի, առաջ տղայի կամքը պիտի հարցնես...

— Դրա մասին մի՛ մտածիլ. նա քո փեսացուն կլինի»— վճռաբար խոսեց մայրը: — Ուրեմն դո՛ւ գիտես, արա՝, ինչպես կամենում ես, ոչ մի բանում չեմ խառնվիլ,— ասաց Շուշանը և հեռացավ: Տիկին Մարթան նայեց աղջկա ետևից, մտածեց մի փոքր և ապա գլուխը խորհրդավոր եղանակով շարժելով ինքն իրեն շշնջաց.

— «Կհավանես, կհավանես, նրա պես տղին ո՞վ չի հավանիլ: Ուզում ես ասել «դեն ձգիր՝ ջեբս ձգիր», թող այդպես լինի, բայց մենք գնանք աղոթենք, որ տղան քեզ հավանի, թե չէ փեշերդ էլ են հոժար...»: Այս ասելով գնաց նա հյուրերի մոտ և Մոմճյանին առանձնացնելով հայտնեց նրան յուր համաձայնությունը՝ Մովսիսյանին հեռացնելու և Սարյանին ընդունելու համար:

Մոմճյանը սրտագին շնորհակալություն արավ տիկնոջը և ապա երկուսը միասին խորհրդակցելով Սարյանի՝ իրենց մոտ գալու օրը որոշեցին:

Եթե կան աղջիկներ, որոնք ազնիվ զգացումների գերի և գեղեցկի ու վսեմի երկրպագուներ են, որոնց գրավում է միայն կատարյալը և որոնք նյութականը գաղափարականին զոհելու մեջ հոգեկան հաճույք են զգում, կան նաև աղջիկներ, որոնք չնայելով, որ ստեղծված են նույնչափ քնքուշ ու բարի, որքան հիշյալները, սակայն հոգով ու սրտով հաշիվների գերի և հաջողության ու բախտի երկրպագուներ են. կատարյալի հետ միասին նրանց գրավում է նույնիսկ ոչնչությունը, եթե նա տեր է նյութական կարողության: Այդ տեսակները առհասարակ անվանվում են փորձառու կամ գործնական:

Օրիորդ Շուշանը վերջին տեսակի աղջկերանց կարգին էր պատկանում: Նրա բնավորության արտաքինը, թեպետ համակրելի, բայց ներքինը մոր հոգվո պատկերն էր կրում յուր վրա: Բոլոր մյուս աղջկերանց պես նա էլ ցանկանում էր ամուսնանալ և, իհարկե, արժանավոր երիտասարդի հետ: Իսկ արժանավոր նա համարում էր նրան, ով կարող էր ապրեցնել իրեն անկարոտ: Գուցե այն ընտանիքը կամ շրջանը, որի մեջ ապրում էր նա և որից օր առաջ կամենում էր ազատվել— այդ համոզմունքին էին բերել նրան, գուցե փորձառությունը, որ հարստության մեջ ծերերի, իսկ աղքատության մեջ նաև երիտասարդների բաժինն է, սովորեցրել էր այդ աղջկան թերահավատությամբ նայել դեպի սերը և քնքուշ զգացումները և հավատով միայն՝ դեպի նյութական

կարողությունը, այսպես թե այնպես նա ամուսնո արժանիքը նրա նյութական զորության մեջ էր որոնում:

Եվ որովհետև նա Մովսիսյանին, յուր տեսակետից նայելով, արժանավոր էր համարում, ուստի նրան էլ փեսացու ընտրեց: Բայց հետո, երբ հարցը եկավ Սարյանին, որի համար ասում էին թե առաջինից ավելի արժանավոր է, այսինքն հարուստ է, Շուշանը նրան գերադասեց, մանավանդ որ մայրն էլ այդ ցանկանում էր: Բացի այդ, Սարյանը Մովսիսյանից ավելի գեղեցիկ ու շնորհքով երիտասարդ էր. այդ հանգամանքը նույնպես օգնում էր Շուշանին, որ նա չզգա այլևս խղճի այն խայթը, որը տանջում էր նրան մի փոքր առաջ, Սարյանի գեղեցկությամբ գրավված ժամանակ:

Այս էր պատճառը, որ հետևյալ օրը, երբ տիկին Մարթան առաջարկեց Մովսիսյանին դատարկել յուր սենյակը, առարկելով նրան, որ շուտով պիտի ընդունե այդտեղ յուր հիվանդ քրոջը, օր. Շուշանը դուրս չեկավ յուր առանձնարանից և չկամեցավ գոնե մի քանի քաղցր խոսքերով ամոքել այն երիտասարդին, որին դեռ մի օր առաջ յուր փեսացուն էր համարում:

Իզուր Մովսիսյանը խնդրում էր տիկ. Մարթային թույլ տալ իրեն տեսնվել Շուշանի հետ, իզուր սպասում էր, որ գոնե նրա հրաժեշտի ողջույնը ստանա: Տիկինը հայտնեց, որ նա հիվանդ է, իսկ օրիորդը այդ իմանալով մնաց յուր թաքստի մեջ, մինչև որ խեղճ երիտասարդի վերջին իրեղենները դուրս հանեցին իրենց տնից:

Մովսիսյանը հեռացավ, բայց այն համոզմունքով ու հավատով թե՝ Շուշանը հիվանդացել է անշուշտ այն պատճառով, որ մայրը հեռացնում է իրեն յուր բնակարանից: Ուստի հույս ուներ, որ երբևիցե առանձին կտեսնվեր նրա հետ և, եթե մոր այս վարմունքի մեջ որևէ գաղտնիք թաքնված լիներ, անպատճառ կիմանար:

Երկու օրից հետո Վահան Սարյանը տիկ. Մարթայի տնկեցն էր և (մոր ու աղջկա կարծիքով) Շուշանի փեսացուն:

Այդ ժամանակից սկսած օր. Շուշանի համար սիրելի դարձան այն սենյակը, ուր երիտասարդ Սարյանն էր ապրում և այն ծառայությունները, որ նա անում էր նրան, աշխատելով ամեն դեպքում քնքուշ ու պատրաստակամ երևալ և հաճելի լինել նոր տնկեցին, որպեսզի այդպիսով նախ համակրությունը և ապա թե սերը գրավել կարողանա:

Ինչ տիկին Մարթային է վերաբերում, նա կրկնապատկել էր յուր հոգսն ու խնամքը երիտասարդի համար: Ամեն դյուրություններով նրան շրջապատելուց ետ, առանձին ուշադրություն էր դարձնում նաև նրա ճաշի ու ընթրիքի վրա. համեղ խորտիկներ էր ուտեցնում, անուշեղեններով ու ըմպելիքներով էր հյուրասիրում, և նայում էր նրա վրա ոչ իբրև տնկեցի, այլ իսկական փեսայի վրա, թեպետև զգուշանում էր, որ երիտասարդը այդ չիմանա:

Վահանը տեսնում էր այդ բոլորը և զարմանում, որ ամսական մի որևէ քսանհինգ ռուբլով այդքան դյուրություններով շրջապատել են իրեն և կամա-ակամա սկսում էր խորին հարգանք ու համակրություն տածել դեպի այն հաճելի և սիրելի ընտանիքը: Նա սրան համեմատում էր մինչև անգամ Երեմյանների ընտանիքի հետ և շատ նմանություններ էր գտնում այդ երկուսի մեջ: Այս հանգամանքը նույնպես նպաստում էր երիտասարդին անկեղծ բարեկամությամբ կապվելու յուր տանտիրուհու և նրա աղջկա հետ և Երեմյանների սիրելի բարեկամության կարոտը մասամբ սրանց բարեկամությունից առնելու:

Այսուամենայնիվ, տիկ. Մարթայի և նրա աղջկա աչառու վարմունքը պ. Շաշյանի աչքից չփախավ: նա տեսնում էր, թե ինչպես նրանք Սարյանին առանձին պատիվներ էին տալիս, գգվում ու փայփայում էին, մինչդեռ յուր վրա ուշադրություն անգամ չէին դարձնում, չնայելով որ բնակարանի և ուտեստի համար ինքն էլ նույնքան էր վճարում, որքան և Սարյանը: Նա նկատում էր, որ Սարյանի օրոք կերակուրները ավելի համեղ, ավելի բազմատեսակ են լինում, որ շաբաթվա մեջ մի քանի անգամ քաղցր խորտիկներ են պատրաստում, մինչդեռ դրանից առաջ այդպիսի արտակարգ դեպքեր հազիվ էին պատահում: Այս անարդարությունները Շաշյանի նախանձը և բարկությունը շարժեցին, նա մինչև անգամ որոշեց մի օր հանդիսավոր եղանակով սեղանի վրա հայտարարել թե՝ ինքը «Փնջիկ»-ի խմբագրապետն է, իսկ Սարյանը լոկ յուր աշխատակիցը, միևնույն է ասել թե յուր գործակատարը, որի ապրուստի փողն անգամ ինքը պիտի վճարե. արդ, ի՞նչ իրավունքով տիկ. Մարթան և օր. Շուշանը նրան այդքան պատիվներ են տալիս, իսկ յուր վրա ուշադրություն անգամ չեն դարձնում: Բայց հետո մտածելով, թե մի գուցե այդպիսով մի սխալ արած լինի և Մոմճյանի բարկությունը գրգռե, որոշեց նախ հայտնել նրան յուր դիտավորությունը, հապա թե գործադրել:

Բայց երբ Մոմճյանին պատահելով պատմեց տիկ. Մարթայի և յուր աղջկա վարմունքը և հայտնեց յուր դիտավորությունը, Մոմճյանը ծիծաղեց:

— Ինչո՞ւ համար եք ծիծաղում,— հարցրեց խմբագիրը:

— Քո միամտության վրա,— հարեց Մոմճյանը:

— Իմ ո՞ր միամտության վրա:

— Այն, որ քո օգուտն ու վնասը ճանաչել և միմյանցից զանազանել չես կարողանում:

— Իմ օգուտն այն է, որ իբրև խմբագիր ինձ անպատվե՞ն,— վրդովված հարցրեց Շաշյանը:

— Ո՛չ, քո օգուտն այն է, որ մեր աշխատակցին պատվեն այդ մարդիկը, որքան կարող են: Չէ՞ որ այդպիսով նրանք ծառայություն են անում մեզ, այսինքն կողմնակի կերպով օգնում են, որ այդ երիտասարդը մեր բարեկամության հարգը ճանաչե և գնահատե: Դու նախանձում ես, որ քո աշխատակցին երեք տեսակ կերակուր են ուտեցնում, որ նրա համար անուշեղեններ են պատրաստում, և կարծում ես, որ դրանով քո խմբագրական արժանապատվությունը վիրավորում են: Ես, ընդհակառակը, ընդունում եմ, որ այդ ընտանիքը ճանաչելով Սարյանի արժանիքը և մեզ պիտանի լինելը, աշխատում են գրավել նրան և պահպանել, որպեսզի մեր գործին ծառայեցնեն, ըստ որում իրենք էլ այդ գործի բարեկամներն են:

Մոմճյանը ուրիշ անգամ արժանի չէր համարիլ Շաշյանին այս տեսակ բացատրություններ տալու, բայց երկյուղ կրելով թե մի գուցե նա մի անտակտ վարմունքով յուր ծրագիրները խանգարե, ավելորդ չհամարեք այո մի քանի խոսքերը ասելու:

Պ. խմբագիրը ճակատը կնճռեց և գլուխը ձեռքերի վրա հենելով՝ սկսեք մտածել: Նրան այնպես էր թվում, թե յուր առաջ դրված խնդիրը մի մեծ փիլիսոփայական խնդիր է, որը պետք է զգուշությամբ լուծեր: Ուստի երկար մտածելուց և հարցը ամեն կողմից քննելուց ու քրքրելուց ետ, եկավ այն եզրակացության, որ արդարև Մոմճյանը արդար է նկատում, որ Սարյանին պատվելը իրեն անպատվել չի նշանակում, հետևապես տիկ. Մարթայի և նրա աղջկա վարմունքը իրեն տխրեցնելու փոխարեն պիտի ուրախացնե:

Խմբագիրը այս ճշմարտությունները հանդիսավոր եղանակով խոստովանեց Մոմճյանի առաջ: Վերջինս այս անգամ ծիծաղը զսպեց և խորհուրդ տվավ Շաշյանին

սիրալիր վարվել Սարյանի հետ. բացի այդ, պատվիրեց նրան ուշի ուշով դիտել նրա և օրիորդ Շուշանի հարաբերությունը և ամեն տեսածն ու լսածը մանրամասնաբար հաղորդել իրեն:

Մի երեկո Շաշյանը սրտատրոփ և շնչարգել ներս մտավ Մոմճյանի մոտ, գլխարկը շտապ ձգեց մահճակալի վրա և աթոռի վրա ընկնելով խիստ հոգածությամբ մի հառաչանք արձակեց:

— Ինչ է պատահել,— զարմացած հարցրեց Մոմճյանը:

— Օ՛հ, տխուր, խիստ տխուր բան,— գլուխը շարժելով շշնջաց Շաշյանը և ճակատի քրտինքը սրբեց:

— Ի՞նչ տխուր բան, հայտնեցեք էլի. դուք ինձ վախեցնում եք:

— Մեր պատվական աշխատակցին պետք է անպատճառ տեղափոխենք:

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել:

— Օ՜, շատ տխուր, շատ ցավալի բան:

— Բայց ասացեք վերջապես, համբերությունս հատեցրիք:

— Դուք ինձ պատվիրեցիք դիտել նրա և օր. Շուշանի հարաբերությունը, չէ՞:

— Այո՜, հետո՞: — Հետո այն, որ մենք վառոդը կրակին շատ ենք մոտեցրել:

— Ի՞նչ կնշանակե այդ:

— Այդ կնշանակե այն, որ մեր աշխատակցի և օրիորդի մեջ խիստ մտերմական հարաբերություններ են սկսվել:

— Մտերմական հարաբերությունն՞ե՞ր:

— Այո՜, որ շատ նման է սիրահարության, և ես կարծում եմ, որ այդ բանը էսօր-էգուց կնկատե տիկ. Մարթան և յուր աղջկա պատիվը վտանգից ապահովելու համար կստիպե Սարյանին հեռանալ յուր տնից:

Մոմճյանը ծիծաղեց:

— Ինչո՞ւ համար եք ծիծաղում, չե՞ք հավատում ինձ,— հարցրեց Շաշյանը:

— Ոչ, հավատում եմ, բայց ծիծաղում եմ նրա համար, որ մի կարծեցյալ սիրահարություն վախեցրել է ձեզ:

— Կարծեցյա՞լ. սխալվում եք. ես դիտում էի նրանց քայլերը ուշադրությամբ, իմ սրատես աչքերից ոչինչ չի թաքչիլ: Թե՛ ճաշի վրա և թե՛ թեյի ժամանակ օրիորդն ու Վահանը շարունակ միմյանց են նայում և այն սիրալիր աչքերով, քաղցր ժպտալով, անուշեղենները հրամեցնում են միմյանց. իրար հետ վերին աստիճանի քաղցր և քաղաքավարի են վարվում, վերջապես ո՞ր մեկն ասեմ:

— Դրանք դեռ սիրահարության ապացույցներ չեն, ուրիշ ինչ եք նկատել, պատմեցեք:

— Այսօր ճաշից ետ օրիորդը երգում էր յուր սենյակում, և ես նախասենյակից որոշակի լսեցի նրա երգի մեջ Վահանի անունը:

— Այդ էլ ոչինչ. ուրիշ ի՞նչ գիտեր:

— Ավելի վտանգավոր նորություն գիտեմ. Վահանը հաստատապես սիրում է օրիորդին:

— Ի՞նչ փաստ ունիք դրա համար:

— Երեկ ներս մտա Վահանի սենյակը և տեսա, որ նամակ էր գրում, այդ նամակի առաջին տողը աչքիս ընկավ, ուր գրված էր՝ «Ազնիվ օրիորդ»:

— Ի՞նչ դուրս եկավ դրանից:

— Հարցրի թե ո՞ւմն եք գրում, նա ծիծաղելով պատասխանեց թե՝ մի օրիորդի, որի հետ խոսել չեմ կարողանում, ուստի մտքերս նամակով եմ հաղորդում նրան:

— Եվ կատակ չէ՞ր անում:

— Ո՛չ. նա մինչև անգամ շառագունեց վերջին խոսքերը արտասանելու ժամանակ:

Մոմճյանը առհասարակ Շաշյանի հաղորդած նորություններին նշանակություն չէր տալիս, բայց այս անգամ նրա խոսածների մեջ ուշադրության արժանի կետեր նշմարեց. ուստի և ուրախացավ տեսնելով, որ յուր նախագծած ծրագիրն իրագործվում է. այսինքն Վահան Սարյանը ամենաբնական ճանապարհով սկսում է մտերմանալ օրիորդ Շուշանի հետ: Մոմճյանի նպատակն էլ այդ էր, որովհետև հենց այդ մտերմությունը պիտի կապեր այն հանգույցը, որին ինքը անլուծելի անունն էր տալիս, և որը Սարյանին պիտի ստիպեր Մոմճյանի ստեղծած շրջանում ապրելու:

ԺԳ

ԾՂԱԼՈԲԻ ԵՐԱՁԸ ԿԱՏԱՐՎԵՑ

Հակոբ Մոմճյանը գործի մարդ էր, ուստի ժամանակը անօգուտ վատնել չէր սիրում: Համոզվելով, որ երիտասարդ Սարյանը արդեն իրենց շրջանի մարդն է և յուր պատրաստած «անլուծանելի հանգույցովն» էլ կապված է, այնպես, որ հեշտությամբ իրենց ձգել ու հեռանալ չի կարող, ուստի որոշեց հետզհետե ծանոթացնել նրան յուր թաքուն նպատակների հետ և ըստ կարելվույն, ծառայեցնել նրա ուժերը այդ նպատակները իրագործելուն:

Այս դիտավորությամբ նա մի երկու անգամ հրավիրեց Սարյանին յուր բնակարանը և երկար խոսակցեց նրա հետ յուր հեռավոր նպատակների մասին: Իհարկե, նա դեռ չհայտնեց նրան այն գաղտնիքը, որ ինքը անդամ է «Մտերիմների» այն ընկերության, որի իդեալները տարբեր են հայ երիտասարդության իդեալներից, որը արհամարհում է ազգային նեղսիրտ հայացքները և ձգտում է առավել լայն համաշխարհային հայացքներ ստեղծելուն ու տարածելուն: Այդ տեսակ գաղտնիքներ հայտնելը դեռ վաղ էր. Սարյանի ստացած կրթությունը, զարգացումը և հայրենասեր հոգին «Մտերիմների» աշխարհայեցողությունը ըմբռնել և մարսել չէին կարող: Այդ հասկանում էր Մոմճյանը, այդ պատճառով էլ դեռ իրեն Սարյանի աշխարհայեցողության համակիր ոմն էր ներկայացնում:

Բայց ինչ վերաբերում է հասարակության մեջ գործելու եղանակներին, նա նրանց հետ ծանոթացրեց Սարյանին:

— «Մինչև այժմ մարդիկ համոզված էին, որ մեծ կամ դժվարին գործ առաջ տանելու համար անպատճառ պետք է ունենալ կամ փող, կամ զենքի ուժ,— ասում էր Մոմճյանը Սարյանին,— բայց արդեն խելոք գլուխները գիտեն, որ փողի ու զենքի ուժից առավել զորեղ մի ուրիշ ուժ կա աշխարհում, որը կարելի է հաջողությամբ գործադրել ամենամեծ և ամենադժվարին գործերն առաջ տանելու համար, այդ ուժը ժողովուրդն է, կամ ավելի ճիշտն ասած՝ ամբոխը, այդ ուժի առավելությունը իսկապես նրանումն է, որ փողը և զենքի ուժը ամեն մարդ ձեռք բերել չի կարող, մանավանդ խելոք գլուխները այդ բանին անընդունակ են, մինչդեռ ամբոխի ուժը կարող է ձեռք բերել ամեն մեկը, որ ունի փոքր ի շատե խելք, սուր հոտառություն և մանավանդ ճարպիկություն»:

Այս եղանակով խոսելով Մոմճյանը բացատրեց թե՝ ինչո՞ւ ինքը գտնվում էր «Արդար քրտինքով ապրողների թեյարանում» այն օրը, երբ իրեն՝ Սարյանի հետ ծանոթացավ:

— «Մի՞թե, կարծում եք, դուրեկա՞ն բան է.— ասում էր նա,— հաճախել այդ ապականության խորշը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ավազականոց, ձեռք մեկնել այդտեղ խլրտող փողոցային հերոսներին, նստել նրանց մոտ և ժամերով այդտեղի ապականված օդը շնչելով, լսել նրանց հիմարությունները, շատ անգամ և զզվելի հիշոցները և այդ բոլորը միայն նրա համար, որ կարողանաս այդ վայրենիներին ընտելացնել քեզ և վարժեցնել նրանց բարոյական խրատներ ու ճշմարտություններ լսելու: Այո՛, դուրեկան չէ. բայց ես այդ անում էի, որովհետև հույս ունեի, որ իմ կրած նեղության արդյունքը կրկնապատիկ հաճույք և ուրախություն պիտի պատճառե ինձ: Եվ չսխալվեցա: Այժմ ունիմ ինձ համար հպատակների մի ամբողջ խումբ, որոնց ընտրել եմ ամբոխի միջից և որոնք գործում են նույն այդ ամբոխի մեջ. նրանք կուրորեն կատարում են այն, ինչ որ ես հրամայում եմ. իսկ նրանց կատարած գործերը ծառայում են այն բարձր նպատակներին, որոնց ես կամենում եմ իրագործել»:

Սարյանը, որ բոլոր ժամանակ լուռ ու մունջ լսում էր Մոմճյանին, հետաքրքրվեց իմանալու թե՝ ամբոխի տգետ մարդը ինչպե՞ս կարող է ծառայել բարձր նպատակների, քանի որ նա կուրորեն է գործում:

— Այդ ես խոսքերով չեմ բացատրիլ, — ասաց Մոմճյանը, — որովհետև խոսքերը կարելի է խոսքերով էլ հերքել. բայց ձեզ ցույց կտամ մի կենդանի օրինակ, որը ամեն խոսքերից ավելի ճարտար կերպով կապացուցանե ձեզ, թե ամբոխի մարդը ինչպե՞ս կարող է բարձր նպատակների ծառայել առանց նույնիսկ այդ նպատակների մեծությունը ճանաչել կարողանալու:

Այս դիտավորությամբ նա պատվիրեց Սարյանին հետևյալ առավոտ այցելել իրեն, որպեսզի միասին գնային Հավլաբարի մի եկեղեցի, ուր «կենդանի օրինակ» պետք է տեսնեին:

Ընթերցողները անշուշտ չեն մոռացել «Արդար քրտինքով ապրողների թեյարանում» քնող և երազ տեսնող գդակագործ Ծղալոբին, որը պատմում էր չաչանակ Սերգոյին թե՝ ինչպես երազում տեսել էր, որ իրեն երեցփոխ էին ընտրել Ձորաբաշի եկեղեցում: Հենց այդ դեպքը պատմող գլխում մի քանի ակնարկություններ էինք արել մի ինչ-որ երեցփոխանական ընտրության մասին, որը այդ օրերը պետք է կատարվեր: Բայց ինչ-ինչ պատճառներով բարեկարգիչ քահանան ընտրությունը հետաձգել էր այն օրվան, որի նախընթացին Մոմճյանը խոստացավ Սարյանին բարձր նպատակների ծառայող ամբոխի գործունեության մի «կենդանի օրինակ» ցույց տալ:

Հիշյալ երեցփոխանական ընտրությունը, արդարև, պետք է կատարվեր Ձորաբաշի եկեղեցում: Մենք այդ եկեղեցին մանրամասն չենք նկարագրիլ, որովհետև կարիք չկա. Թիֆլիսցի ընթերցողները տեսած կլինեն նրան, իսկ գավառացիներին բավական է

միայն իմանալ, որ նա գտնվում է Թիֆլիսի պատմական Մետեխի բերդի մոտ, դեպի Հավլաբար

տանող մի զառիվայր ճանապարհի վրա: Շինությունը հին է, պարզ և աղքատ, այնպես որ շրջապատող տների մեջ եկեղեցի եղած լինելը չի նշմարվում: Սակայն հարավային կողմից գեղեցիկ դիրք ունի, որովհետև կառուցած է Քուռ գետի ձախ ափից լեռնաձև բարձրացող և Հավլաբարի բնական սահմանը կազմող պարեխավոր ժայռերի վրա, որտեղից բացվում են թե՛ գետի և թե՛ նրան շրջապատող հեռավոր թաղերի ու այգեստանների գեղեցիկ տեսարանները:

Օրը կիրակի էր: Առավոտյան ժամը տասից արդեն հավաքվել էին այդտեղ եկեղեցու թե՛ ծխականները և թե՛ ժամավորները (այդ ժամանակ դեռ վերջինների իրավունքը սահմանափակված չէր): Նրանք, մեծ մասամբ, աղքատ դասին պատկանող մարդիկ, արհեստավորներ և բանվորներ էին: Որովհետև պատարագը վերջացել էր, ուստի ծխական թե ժամավոր խռնվել էին եկեղեցու բակը և զանազան խմբակների բաժանված խոսում էին, ոմանք իրենց ցավերի վրա, ոմանք օրվա նորությունների վրա, իսկ ավելի երիտասարդները զվարճախոսում և ծիծաղում էին: Նրանք սպասում էին բարեկարգիչ քահանային:

Բոլոր ժողովականների մեջ միայն երեք հոգի կային, որոնք անհանգիստ դեմքով պտտվում էին խմբակների շուրջը, մոտենում էին այս ու այն ծխականին կամ ժամավորին, շշնջալով խոսում էին նրանց հետ, պատվերներ էին տալիս և ի վերջո խմբակներից հեռացնելով տանում էին նրանց եկեղեցու մյուս կողմը և մի-մի փոքրիկ քառածալ թղթիկներ ծածկաբար նրանց ձեռքը դնելով՝ հեռանում էին:

Այդ անհանգիստ դեմքով պտտողներից առաջինը չաչանակ Սերգոն էր, որը յուր անբաժան «տեր-ողորմյան» ետքին բռնած, գրեթե բոլոր Ժողովականների հետ անխտիր խոսում ու շաղակրատում էր:

Երկրորդը՝ գդակագործ Ծղալոբը, որը միայն յուր արհեստակիցներին և հավատարիմ բարեկամներին էր մոտենում: Նա թեպետ քաշվող մարդ էր, բայց այն օրից ի վեր, որ «Արդար քրտինքով ապրողների թեյարանում» երազ էր տեսել, էլ հանգստությունը կորցրել և քաշվելը մի կողմն էր դրել: Նա կամենում էր անպատճառ երեցփոխ դառնալ, որովհետև յուր երազը պատմել էր նաև կնոջն ու հարևաններին և ցանկանում էր, որ այդ երազը կատարվի:

Երրորդը մի երիտասարդ էր՝ միջին հասակով, ավելի կարճ քան երկար, առողջ կազմվածքով, թուխ ու կարմիր դեմքով և սև ու թավամազ մորուքով, որը խիտ ու կլոր ձևով պատում էր նրա ծնոտը և երեսի մեծ մասը այնպես, որ բերանը գրեթե չէր երևում: Նրա փոքրիկ և ծավի աչքերը, որոնք ոչ բարեկամ անձանց վրա կասկածով ու խեթով էին նայում, ծածկված էին թավամազ և միշտ խոժոռած հոնքերի տակ: Այդ երիտասարդը շատ չէր խոսում, բայց շարունակ պտտում էր և քառածալ թերթիկները, իսկապես ինքն էր բաժանում: Երբ պարապ էր մնում՝ ձեռքը տանում էր դեպի գլուխը և գլխարկը ծռելով քորում էր նրան: Այդ ժամանակ երևում էր յուր նեղ ու փոս ընկած ճակատը, որի վրա կարծես նկարված էր մոլեռանդություն և հանդգնություն:

Բարեկարգիչ քահանայից առաջ ներս մտան եկեղեցու բակը Մոմճյանը և Սարյանը:

Չաչանակ Սերգոն նրանց տեսնելով ընդառաջ վազեց և խիստ մեծարանքով ողջունելով յուր բարեկամներին հոգածու եղանակով հարցրեց:

— Էս ո՞ւր մնաց միր բարիկարգիչը. էրկու սհաթ կուլի ինչ պատարագը վիրջացավ. հիվանդացած չըլի՞:

— Բարեկարգիչը կգա. միամիտ կաց, դու ի՞նչ արիր, ա՛յն ասա, — հարցրեց Մոմճյանը:

— Դիփ հազիր է:

— Ուրեմն ամենքն էլ գիտեն, թե ո՞ւմ պետք է ձայն տան:

— Մա՛շ. էդ խոմ էնթի շաբթին գիտեին:

— Բայց ես այստեղ հակառակ մարդիկ էլ եմ տեսնում:

— Վա՛, հեր օխնած, հիսուն ոչխարի մեջ միթոմ վուր երիք իծանիր ըլին, ի՞նչ հաջաթ:

— ՈՉԻՆՉ. միայն թե գործը չխանգարեն: Բայց դու այն ասա, իմ գրած բոլոր թղթերը բաժանեցի՞ր:

— Չիմ գիդի, ա՛յ, Վանոյին կանչիմ հարցնինք, — այս ասելով նա ձեռքով նշան արավ մեր նկարագրած երիտասարդին: — Սերգո, այս տղան դեռ ջահել է, ինչպե՞ս կարելի է ամեն բան հավատալ նրան, — կասկածանքով հարցրեց Մոմճյանը:

— Ի՞նչ իք հրամանք անում, պարուն ջան, էնենց տղա է, վուր հատը չի ըլի. գանա յիս իմ մարդը չի՞մ ճանչնում:

Այս միջոցին մոտեցավ Վանոն և հարգանքով ողջունեց Մոմճյանին և նրա ընկերոջը:

Մոմճյանը բռնեց նրա ձեռքը, խիստ բարեկամաբար սեղմեց և ծանոթացրեց նրան Սարյանի հետ:

— Թիֆլիսի ինքնուս երիտասարդների տիպն է սա, — ասաց նա Սարյանին, — ծխական դպրոցից զատ, ուրիշ ոչ մի տեղ չէ կարդացել. բայց ինքն իրեն պարապելով շատ բան է սովորել. խոսում է գրական լեզվով, հայոց բոլոր լրագիրները կարդում է, Ռաֆֆիի վեպերը բերան գիտե, ռուսերեն էլ սովորում է: Բայց սրա ամենամեծ արժանիքը այն է, որ յուր մասնավոր գործից ավելի հասարակական գործերով է հետաքրքրվում ու զբաղվում, որ հազվագյուտ երևույթ է մեր մեջ:

— Բազազ Գարսոյի աշկիրտն է, ղորթ է. ամա՛ էնենց տղա է, վուր դիփունանք արիվովը օրթում ին ուտում, — շարունակեց Չաչանակը Վանոյի գովասանքը, — բազազնիրը, Հավլաբարի մեյդնի շիրաջնիրը, բաղալնիրը, զառափնիրը ինլկլի շալ ու յափունջի ծախող դերձկները դիփունանք էլ ճանչնում ին Վանոյին, դիփունանք էլ հիդը ախպեր ին: Ո՞վ է հարցնում, թե բազազի աշկիրտ է. մե խոսք, ան մե խնդիր վուր արավ, ան սհաթը կուկատարին: Ա՛յ, էսենց տղա է միր Վանոն:

— Այդքան մի՛ գովեք ինձ, ես արժանի չեմ, — վերջապես նկատեց Վանոն, ցույց տալու համար, որ այդքան առավելությունների հետ միասին համեստություն էլ ունի:

— Ո՛չ, դուք ավելի գովության եք արժանի, — նկատեց Մոմճյանը, — միայն թե չեմ կամենում հայտնել, որ ձեր համեստությունը չվիրավորվի: Այժմ գործին անցնենք: Սերգոյի տված թերթիկները ի՞նչ արիք:

— Բոլորն էլ բաժանեցի:

— Կարող է պատահել, որ բարեկարգիչը այդ թղթերը հավաքելով ուրիշ թերթեր բաժանե և ստիպե ժողովականներին նորից անուններ գրել:

— Այն ժամանակ, ինչպես պատվիրել եք, ինքս կգրեմ նրանց համար:

— Իսկ եթե ստիպե յուր ներկայությամբ գրե՞լ:

— Այդ դեպքում արդեն մեր մարդիկը գիտեն, թե ինչ պիտի պատասխանեն:

— Ապրիք. ուրեմն ամեն բան կատարել եք այնպես, ինչպես պատվիրել եմ:

— Այո, ամեն բան:

Այս միջոցին ներս մտավ եկեղեցու բակը բարեկարգի քահանան կարմրած ու քրտնած երեսով և շտապ խոսելով ներողություն խնդրեց ժողովականներից, որ ակամա սպասեցնել է տվել իրենց:

— Հակառակի պես, այսօր ննջեցյալ ունեի, ստիպված էի ուշանալ,— ասաց նա ժողովականներին. — բայց վնաս չունի. շուտ կավարտենք:

— Հաջաթ չէ, տերտեր ջան, հաջաթ չէ, մինք յոլա կեհանք, դուն սաղ ըլիս, — ձայն տվին այս ու այն կողմից ժողովականները:

Բայց Մոմճյանը առաջ անցնելով լուրջ ու կտրուկ ձայնով նկատեց.

— Արժանապատիվ հայր, ձեր վարմունքը օրինավոր չէ. ժամը 11-ին նշանակել ենք ընտրությունը, այդ ժամին էլ պետք է ներկա լինեիք, ծխականների կամ ժամավորների ինչ պետքն է, թե դուք ննջեցյալ ունեիք:

Բարեկարգիչ հայրը հանկարծակի եկածի նման սկսեց նայել Մոմճյանին և չգիտեր ինչ պատասխանել: Որովհետև յուր բոլոր պաշտոնավարության ժամանակ առաջին անգամս էր նա այսպիսի հարձակման ենթարկվում և այն խեղճ ու միամիտ ժողովրդի առաջ, որ յուր քահանայի վրա նայել էր միշտ հարգանքով և ակնածությամբ:

— Որդի, ննջեցյալին հո չէինք կարող եկեղեցում թողնել, պետք է տանեինք թաղելու, այդ պատ... — հազիվ բարեկարգիչը սկսեց արդարացնել իրեն և ահա Մոմճյանը ընդհատեց նրան: — Առաջ պետք է կենդանիների մասին մտածել, հետո ննջեցյալների:

— Եվ վերջապես, մենք ի՞նչ պարտավոր ենք մեր ժամանակը վատնելու մի ննջեցյալի պատճառով.— գլուխը խրտնած ձիու պես շարժելով ներս ընկավ գործիչ-Վանոն:

— Վա, էտենց խոմ չի իլի, տերտեր ջան,— վրա բերեց Չաչանակը.— էս ղադա խալխը էստի քիզ ին մնում ու դուն ասում իս ննջեցյալ ունեի. ախար մինք էլ մարթիկ ինք, ուտիլ կուզինք, խմիլ կուզինք. ննջեցելը խոմ միր փուրը չի կշտացնի...

— Ներողություն, որդիք, ներողություն,— վշտացած ու տխուր ձայնով ասաց բարեկարգիչը և ներս մտավ եկեղեցի: Մի քանի խեղճ բանվորներ գրգռվեցան խոսողների դեմ, բայց ոչ մի նկատողություն անել չհամարձակվեցան, որովհետև տեսան, որ խոսողների գլխավորը մաքուր հագնված, փայլուն գլխարկով և փղոսկրյա ձեռնափայտը ձեռին մի աղա մարդ է:

Մի ծերունի միայն գլուխը տմբտմբացնելով մոտեցավ Մոմճյանին և կորացած մեջքով յուր երկար ձեռնափայտի վրա հենվելով նայեց ուղղակի աղա մարդու աչքերին ու նկատեց.

— Պարոն ջան, էրեվում է, վուր խելոք տղա իս. կուլի վուր ունիվերստեմեն էլ եկած ըլիս. ամա դուն ոչ միր էգեղեցու ծխական իս, վունչ ժամավոր իս, վունչ էլ մի գամ յիս քիզ էստի տեհիլ իմ, չուն ամեն առտու ու իրիկուն յիս էստի իմ. Հիմի ամութ չըլի

հարցնիլը, դուն ի՞նչ դավա ունիս մեր էգեղեցու հիդ, ինչի՞ էս ղադա խալխի միջումը անպատիվ իս անում մեր գահանին:

— Ես ձեր իրավունքներն եմ պաշտպանում, խեղճ ծերուկ,— վրդովված պատասխանեց Մոմճյանը:

— Ի՞նչ...— հարցրեց ծերունին:

— Դա այդ տեսակ խոսքերը ի՞նչ է հասկանում,— շշնջաց Մոմճյանի ականջին գործիչ—Վանոն և ապա դառնալով ծերունուն բարձրաձայն ասաց,— այս պարոնին սրբազանն է ղրկել այստեղ, հասկանո՞ւմ ես, հոգևոր տերը:

— Հոգևուր տե՞րն է ղրկի...— զարմացած հարցրեց ծերունին: — Մա՞շ. հոգևուր տերը իրա մագիար ղրկիլ է էս պատվական մարթուն, թե գնա, տիս, վուր էնդի իրիցփուխ ջոկելու վուխտը խալթաբանդություն չանին. հիմի կի հասկացար, —բացատրեց չաչանակ Սերգոն:

— Հասկացա, հասկացար.— գլուխը տմբտմբացնելով խոսեց ծերունին դառնալով դեպի Մոմճյանը,— թե վուր հոգեվուր տերն է ղրկի, դրան խոսք չունիմ: Ամա պիտի ասի, վուր էգեղեցու օրենքին յիս էլ խաբար իմ. չունե մե դամ էստի իրիցփուխ էլիլ իմ: Էն վուխտը միր առաջնուրդը ողորմածիկ Սարգիս սրբազանն էր. լավ մարդ էր, խիստ կուսիրեր ինծ: Մակար սրբազանն էլ ինձ կուճանչնար: Դուն կուլի վուր, շատ բանի խաբար իս, կուլի վուր, էդեղեցուն էլ հավատում չրլիս, էդ քու բանն է. էս խալխի առչիվը խուսելու ի՞նչ ունիս. էս խիղճ ջեհիլները քիմեն ի՞նչ պտին սովրի. ախար բանող ու մշակ մարդիք ին, շկոլ չին տեսի, գիմնազ չին իմացի, մե աստուծ գիդին, մե լուսավորչի էգեղեցի ու մեկ էլ նրա գահանեն. հիմի դուն վուր էդ գահանին էլ նրանց առչիվը անպատիվ իս անում, էդ վո՞ւնց կուլի:

Մոմճյանն զգաց յուր սխալը և չկամենալով այլևս գրգռել ծերունուն՝ «ինձ չհասկացար, բիձա ջան, ինձ չհասկացար...» ասելով ետ քաշվեց և աչքով արավ չաչանակին:

Վերջինս առաջ անցավ և բացականչեց.

— Լավ, լավ, էրկան մասլահաթնիրու տիղ չէ էստի. գնանք, տեր-հայրը միզ է մնում.— այս ասելով նա Ժողովականներից մի քանիսին առաջ հրեց:

— Ի՞նչ եք կանգնել էստեղ, գնանք էլի,— խոսեց մյուս կողմից գործիչ-Վանոն և մի քանիսին էլ նա առաջ տարավ: Ժողովականները կամաց-կամաց մոտեցան եկեղեցու դռանը և մեկ-մեկ գլխարկները վերցնելով ու դռան խաչը համբուրելով՝ ներս մտան:

Նրանց հետ միասին ներս մտավ և ճոն Մարտիրոսը գրլուխը շարժելով և ինքն իրեն մրմնջալով՝ «տեր աստուծ, դուն ազատե միզ էս թավուր ալքիրեմեն...»:

Բարեկարգիչը նստած էր արդեն եկեղեցու մեջ դրված սեղանի առաջ և անունները գրելու համար թերթիկներ էր պատրաստում: Նրա կողքին նստել էր եկեղեցու տիրացուն և բարեկարգիչի թելադրությամբ գրում էր արձանագրության թերթը, Ծխականներն ու ժամավորները հետզհետե հավաքվելով շարժվեցան եկեղեցում դրված աթոռների վրա: Ներս մտան նաև Մոմճյանն ու Սարյանը և նստեցին բարեկարգիչ քահանայի հանդեպ:

Բարեկարգիչը թերթիկները պատրաստելով վեր կացավ տեղից և սկսեց բաժանել այն ժողովականներին:

— Ձեզանից ամեն մեկը թող յուր ասած թերթիկի վրա գրե երկու կամ երեք մարդկանց անուններ, և թերթիկը ծալելով հանձնե ինձ,— կարգադրեց բարեկարգիչը:

— Գուցե շատերը միայն մի մարդու են արժանավոր ճանաչում, ի՞նչ հարկ կա երկու կամ երեք անուն գրելու,— նկատեց բարեկարգչին Մոմճյանը:

— ճիշտ է ասում պարոնը, տեր-հայր,— ձայնակցեց Մոմճյանին Վանոն:— Ես, օրինակ, մեր ծուխի մեջ միակ արժանավորը ճանաչում եմ Սոսոյի տղա Ծղալոբին, մի՞թե չեմ կարող միայն նրա անունը գրել:

— իհարկե, կարող ես. ո՞վ է դրա դեմ,— պատասխանեց քահանան.— ով որ մի մարդ է ճանաչում, թող մեկի անունը գրե. ով որ երկու, երեք կամ ավելի մարդկանց է ճանաչում թող երկու, երեք կամ ավելի անուն գրե:

— Ուրեմն մեկ-մեկ անուններ կգրեք,— բարձրաձայն ասաց երիտասարդ Վանոն և մոտեցավ յուր բարեկամներին:

— Այ տղա, ի՞նչ շատ իս խոսում,— նկատեց երիտասարդին ճոն Մարտիրոսը.— քիմեն սավայի էլ մարթ չկա՞ էստի:

— Ինչ ե՞մ խոսում, ասում եմ, որ մեկ-մեկ անուն գրեն:

— Ի՞նչ դավա ունիս դուն. մեկը կուգրին թե տասը կուգրին. այ, բարեկարգիչը ինչ վուր ասավ, էնենց էլ կուգրին դուն խառնվիլու ի՞նչ ունիս:

— ճիշտ է ասում, վուրդի. դու քեզ համար գրիր. ուրիշների գործում մի խառնվիր,— նկատեց քահանան:

Վանոն հոնքերը կախելով և աչքերը խոժոռելով նստեց տեղը, բայց միայն մի րոպե, հետո կրկին վեր կենալով մոտեցավ այս ու այն ժողովականին և ինչ որ բաներ փսփսաց սրա կամ նրա ականջում:

— Ապա, տերտեր ջան, յիս վուր գիր չիմ գիդի, վո՞ւնց պիտիմ գրի,— տեղից վեր կենալով հարցրեց ժողովականներից մինը:

— Այ, ես կգրեմ քեզ համար,— մոտեցավ իսկույն Ժողովականին երիտասարդ Վանոն:

— Թող այդ երիտասարդը գրե,— միամտաբար համաձայներ քահանան:

Վանոն վերցնելով անգրագետից նրա թուղթը հարցրեց:

— Ո՞ւմ անունն ես կամենում, որ գրեմ:

— Դուն ո՞ւմը պիտիս գրի,— հարցրեց անգրագետը:

— Սոսոյի տղա Ծղալոբի:

— Ծղալոբի՞:

— Այո:

— Վա, մասխարա իս գցում. նա ի՞նշ խելք ունի վուր իրիցփոխ շինինք նրան:

— Ինչո՞ւ, լավ մարդ է:

— Վա, գանա յիս չիմ ճանաչում, էրկու իշի գարին չի կանա փայ անի:

— Ուրեմն ո՞ւմ անունը գրեմ:

— Այ, գրիր մեկ ճոն Մարտիրուսի անումը, մեկ էլ իմ բիձու տղա զարաֆ Արութինի անումը:

Երիտասարդը փոխանակ այդ անունները գրելու, գրեց Սոսոյի տղա Ծղալոբի անունը և թուղթը ծալելով տվավ անգրագետին:

Այս ձևով նա մոտեցավ և մի քանի ուրիշ անգրագետ մարդկանց և նրանց համար էլ միևնույն անունը գրեց:

Մի քանի հոգի այս ու այն կողմից բողոքեցին երիտասարդի վարմունքի դեմ և պահանջեցին բարեկարգչից, որ անգրագետներին բերել տա յուր մոտ և ինքը նրանց ցանկացած մարդկանց անունները գրե:

— նա գրած, թե սա գրած, միևնույն չէ՞,— մեջ մտնելով հարցրեց Մոմճյանը:

— Ոչ, պարոն, միևնույն չէ,— նկատեց գրագետ երիտասարդներից մինը: — Եթե միևնույն է, թողեք, որ քահանան գրե. ինչու ամենքին միևնույն երիտասարդն է կամենում ծառայել,—կասկածավոր եղանակով հարցրեց մի ուրիշը:

— Վա, լվութին անիլը մի՞ղք է. իրա հոքու համա է անում,— բացականչեց չաչանակ Սերգոն:

— Մի Վիճեք, որդիք, մի վիճեք. բերեք բոլորի համար էլ ես կգրեմ,— խոսեց բարեկարգիչը:

Քահանայի այս խոսքերի վրա անգրագետ ծխականներից մի քանիսը մոտեցան նրան:

— Հա, ո՞ւմ անունն ես կամենում, որ գրեմ,— Հարցրեց քահանան առաջին մոտեցողին:

— Ումը գուզիս գրե, տերտեր ջան,— միամտաբար պատասխանեց ծխականը:

— Իմ ուզածը չի լինիլ, դու պետք է ասես:

— Յես ի՞նչ ասեմ:

— Ո՞ւմը կուզես, որ երեցփոխ ընտրենք այս եկեղեցու համար:

— Իրիցփո՞ւխ:

— Հա:

— Այ, Արութին Գոզալովը լավ մարթ է. նրա անումը գրե: Քահանան գրեց և ապա նորեն հարցրեց:

— Գրեցի, էլ ուրիշ ո՞ւմ ես կամենում:

— Գանա քանի՞ իրիցփոխ պիտինք ջոկի,— զարմացած հարցրեց ծխականը:

— Մեկ. բայց կարելի է Հարություն Գոզալյանցը չդուրս եկավ. մեկ ուրիշի անունն էլ ասա:

— Մեկ էլ իմ անումը գրե:

—Քո անունը չի կարելի,— ժպտալով նկատեց քահանան:

— Ինչի՞, դանա յիս մարդ չի՞մ, հ այ քրիստոնյա չի՞մ,— միամտաբար հարցրեց ծխականը:

Ժողովականներից շատերը սկսեցին ծիծաղել: Իսկ քահանան բացատրեց, թե ինչո՞ւ ինքը չի կարող բացարձակ ձայն տալ իրեն: Այդ Միջոցին Չաչանակը միամիտ ծխականին մոտեցած փսփսում էր նրա ականջին, որ երկրորդ անունը Սոսոյի տղա Ծղալոբինը գրել տա: Ծխականը, որ մի երկրորդ անուն էր որոնում, որպեսզի գրել տա ու ազատվի, Ծղալոբի անունը լսելով նրա անունն էլ տվավ ու հեռացավ:

Սրա օրինակին հետևեցին և մի քանի ուրիշները:

Իսկ նրանք, որոնք առաջուց թերթիկներ էին ստացել Վանոյից, վերջինի խորհրդով ձևացնում էին, որ իբր թե անուններ են գրում, բայց իսկապես մատիտներ էին շարժում առանց թերթիկների վրա մի բան գրելու:

Երբ ամենքը վերջացրին, բարեկարգիչ քահանան կարգադրեց ժողովականներին բերել իրեն թերթիկները:

— Տեր-հայր, հրամայեցեք, որ երիտասարդներից մինը բոլորը հավաքե և միանգամից բերե, ինչ հարկ կա, որ ամենքըն էլ տեղերից վեր կենան ու խառնվին,— խորհուրդ տվավ Մոմճյանը:

— Լավ եք ասում. թող մեկը հանձն առնե այդ նեղությունը,— առաջարկեց քահանան:

— Այ, տերտեր ջան, յիս կու հավաքիմ,— ձայն տվավ չաչանակ Սերգոն և առաջ անցավ:

— Յիս էլ շատ կուխնդրեմ, տերտեր ջան, վուր հրամանք անիք ամեն մարթ ինքը բերե իրա թուղթը,— տեղից վեր կենալով խոսեց ճոն Մարտիրոսը:

— Ի՞նչ զանազանություն կա դրա մեջ, պարոն Մարտիրոս, միթե միևնույն չէ՞, թե բերողը մեկն է, թե՞ շատերը:

— Զանազանությունը էն է, տերտեր ջան, վուր կուլի մեկը մի խոսք ունի քեզ ասելու ան դուն ունիս հարցնելու, ո՞վ գիդա, ասիլ չի ըլի. ժողովուրդ ու գահանա մի իրար երես վուր տեհնիք լավ կուլի:

— Այդպես լավ է, այդպես լավ է,— ձայն տվին մի երկու հոգի էլ:

— Թող այդպես լինի,— համաձայնեց բարեկարգիչը և պատվիրեց, որ ամեն մեկը յուր թերթիկը ինքը ներկայացնե: Մոմճյանը այս բանին չընդդիմացավ, վախենալով, թե մի գուցե յուր ընդդիմությունը կասկած հարուցանե և գաղտնիքներից մեկը կամ մյուսը բացվի:

Երբ ժողովականները թերթիկները սկսան բերել, երիտասարդ տիրացուն նկատեց, որ թերթիկներից շատերը ավելի սպիտակագույն թղթից էին և բարեկարգչի ուշադրությունը հրավիրեց այդ հանգամանքի վրա:

Բարեկարգիչը համեմատեց և տեսավ, որ, արդարև, յուր բաժանած թերթիկների գույնը կիսասպիտակ էր, մինչդեռ ժողովականներից շատերի բերածի գույնը կատարյալ սպիտակ:

— Այս թու ղթը ո՞վ տվավ քեզ,— հարցրեց քահանան մի նոր մոտեցող արհեստավոր ծխականի:

— Դուն տվիր, ո վ տվավ,— պատասխանեց ծխականը:

— Ես չեմ տվել,— վճռաբար հայտնեց քահանան:

— Վա, տերտեր ջան, հիմի էս ղադա խալխի միջումը դուն չբաժանեցի՞ր, գանա գահ անեն էլ իրա արածը հաշա կուտի՞,— հանդգնությամբ խոսեց արհեստավորը:

— Տո, հաշա ուտող էլ ես, ստախոս էլ ես, իմ բաժանած թուղթը, այ, էս հասարակ թղթիցն էր, իսկ քո բերածը, թե ավելի սպիտակն է և թե լավ տեսակը,— բարկացած նկատեց քահանան:

Ծխականը մնաց շվարած և Վանոյի ու Չաչանակի աչքերին էր նայում:

— Տեր-հայր, գուցե ձեր բերած թղթերի մեջ սպիտակ թերթեր եղել են, ի՞նչ գիտեք,— հարցրեց Մոմճյանը:

— Ոչ, պարոն, թուղթը ես եմ գնել,— վկայեց տիրացուն.— երեք կոպեկ ավի մեր մոտիկ խանութպանին և վեց թերթ՝ ահա, այս հասարակ կիսասպիտակ թղթից գնեցի, կամենում եք, գնացեք, հարցրեք:

— Լավ, հիմա ինչի՞ վրա եք վիճում,— հարցրեց Մոմճյանը.— թուղթը սև է թե սպիտակ, այդ միևնույն է: Դուք կարդացեք, թե մեջը ի՞նչ է գրած, գուցե ծխականները իրենք իրենց տնից ընտրելիի անունը տանը գրել ու բերել են, ձեզ ի՞նչ:

— Ճիշտ է ասում, տեր-հայր, դուք այն հարցրեք, թե ո՞ւմն են ուզում, թե չէ թղթի սևն ու սպիտակը ինչների՞դ է պետք,— ձայնակցեց Վանոն:

— Տերտեր ջան, յիս իմը, միր տանը գրեցի ու բերի սրամեն խո զարար չունի՞ս,— վրա բերավ չաչանակ Սերգոն:

— Ի՞նչ իս ասում, տո, մի ասա յիս էլ լսեմ,— հարցրեց ճոն Մարտիրոսը Չաչանակին:
— Ասում վուր վուր իմ թապթը յիս մեր տանը գրեցի ու բերի:

— Դո՞ւն գրեցիր:

— Ցիս գրեցի, մաշ:

— Տո, դուն վո՞ւրդանցի գրող իս, գանա դուն գրել գիդիս սուտ ինչի՞իս խոսում:

— Գրիլ չիմ գիդի, դրուստ է, մագրամ իմ քվիր տղեն խիստ արմաղան է գրում. այ, նրան գրիլ տուի:

— Ցիս էլ իմ բիձու տղին գրիլ տուի,— վրա բերավ մի ուրիշը:

— Ինձ համար էլ իմ դեյդի տղեն գրեց, — հարցրեց մի երրորդը, և այսպես շատերը:

Բարեկարգիչը տեսնելով, որ աղմուկը հետզհետե մեծանում է, բոլորին էլ լռեցրեց: Ապա սկսեց թուղթ ներկայացնողներից մեկ-մեկ հարցնել, թե ումն է կամենում: — Ումը ուզում իմ, այ էդ թղթի մեջը գրած է,— ասաց ծխականին մեկը:

— Ո՞ւմն ես ուզում, բերնով ասա,— նկատեց քահանան:

— Կարդա էլի, թուղթը ձեռնումդ չի՞:

— Ես կարդալ չեմ իմ անում, ասա տեսնեմ, ո՞ւմ անունն ես գրել տվել:

— Իմ էլ մտեմես ննգավ, տերտեր ջան:

— Ուրեմն այս թուղթը կպատռենք. հիմա նորից ասա տեսնեմ, ո՞ւմն ես կամենում, ես քեզ համար կգրեմ:— Այս ասելով քահանան պատռեց ծխականի բերած թերթիկը և նորը վերցրեց գրելու:

— Տեր-հայր, այդ ի՞նչ եք անում,— մեջ մտավ Մոմճյանը,— ընտրությունը պետք է գաղտնի լինի և ժողովականներն էլ գաղտնի անուններ գրելով հանձնել են ձեզ. ինչու ստիպում եք նրանց ընտրելիների անունները ձեր և բոլորի առաջ նորեն արտասանելու: Գուցե նրանք չեն կամենում, գուցե քաշվում են, մարդիկ են, միմյանց հետ գործ ունին, հաշիվ ունին. ինչո՞ւ ստիպում եք, որ մի ընտրության պատճառով նրանք միմյանց վիրավորեն, միմյանց հետ թշնամանան:

— Այ որդի, բաս չիմանանք, թե ո՞վ ում է ուզում:

— Այ, կարդացեք բերած թղթերը, էլի՞: Դրանցով կիմանաք: Կամ ինչերի՞դ է պետք քննել, թե ո՞վ ում է ուզում, ձայները հաշվեցեք, ով որ շատ ձայն կլինի ստացած, նա էլ երեցփոխ կլինի:

— Ձայները հաշվեցեք, ձայները հաշվեցեք,— բացականչեց երիտասարդ Վանոն և մի քանի ուրիշներն էլ հետևեցին իրեն:

— Մի գոռաք, մի գոչեք, ի սեր աստծո, թողեք գործը օրինավոր ճանապարհով ավարտենք,— խոսեց բարեկարգիչը,— այստեղ ես պարզ տեսնում եմ, որ ծխականներից և Ժամավորներից շատերը ուրիշների պատրաստած թղթերն են ներկայացնում և իրենք մեջը գրած մարդու անունն անգամ չգիտեն. սա ընտրություն չէ, այլ ճարպիկ մարդկանց հնարած ու սարքած մեքենայություն, թույլ տվեք, որ այս թաքուն գործերի հեղինակը մի գտնենք:

— Ձայները հաշվեցեք, տեր հայր, ձայները հաշվեցեք,— գոռացին դարձյալ այս ու այն կողմից:

Այս անգամ արդեն ճոն Մարտիրոսի համբերությունը հատավ. նա գլուխը տմբտմբացնելով առաջ անցավ և երկու ձեռքով յուր անբաժան մահակի վրա հենվելով խոսեց.

— Ախպրտի՛նք. մե նիմուտ ինձ լսեցեք, երկու խոսք ունիմ, ասիմ ձիզ ու գնամ:

— Յիս, կուլի վուր իմացած ըլիք, իրիք քսան ու տասնը օխտը տարեկան իմ: Էս ղադա վուխտ էս էգեղեցու ծխական իմ. շատ ննդրությունիր ինք արի. շատ իրիցփոխնիր ինք ջոկի. ամա վունչ մե գամ էս թավուր բան յիս չիմ տեսի: Սուտ ինչի՞ ասիմ, հոգի ունիմ տալու. միր մեջ էլ խոսք ու ջուղաբ էլիլ է. ասիլ ինք իրիցփուխը լավ մարթ է, ինչի

մեկ էլ նուրը ճոկինք: Ամա, իսկի չիմ իմացի, վուր մեկը սուտ թղթեր շինե, սուտ անումնիր գրե ու թաքուն բաժնե մարդկերանց, թե ի՞նչ է էս մարթը ննդրվի ան մեկելը:

Մինք էնենց ինք իմացի, թե իրիցփուխ ջոկելը մե սուրփ գործ է. ով ումին լավ մարդ է ճանաչում, նրա անումն էլ պիտի տա. ամա էսօր տեսնում իմ, վուր չէ. էս սուրփ գործի մեջ էլ ղալթաբանդութին իք մտցրի, աստծու տան մեջ էլ սուտեր իր մոգոնում. խափեփայութիննիր իք անում... — Պարոն Մարտիրոս, դուք, կարծեմ, ավելորդ բաներ շատ եք խոսում,— ընդհատեց ծերունուն Մոմճյանը:

— Բավական է, բավական է, լռեցեք,— գլխարկը օդի մեջ շարժելով ձայնակցեց նրան երիտասարդ Վանոն:

— Վա, էստի էկիլ ինք ննդրություն անի՞նք, թե՞ քարոզ լսինք,— վրա բերեց Չաչանակը:

— Ուստա, դուն էլ պաովիլ իս ու խոսածնիդ լիս հասկանում,— խոսեց վերջապես Սոսոյի տղա Ծղալոբը:

Մի քանի ուրիշներն էլ միևնույն բացականչությունները արին:

ճոն Մարտիրոսը զայրացավ. նա մի քանի քայլ դարձյալ առաջացավ և յուր բարկությամբ լի աչքերը խոսողների վրա սևեռելով ազդու ձայնով բացականչեց:

— Գանա դուք ուզում իք, վուր ճոն Մարտիրոսը ձիր առջևը սուս կենա՞. ուզում իք, վուր յիս սուտն ու խափեբայութինը տեսնիմ ու չխոսի՞մ. էգեղեցին գա՞նա ձիր հոր մուլքն է, վուր ինձ միջիցը դուս անի՞ք. գանա յիս, վուր պառվիլ իմ, ուժեմես ննկի՞լ իմ, հինց գիդի՞ք, թե խելքս կորցրիլ ի՞մ, չէ, ախպրտինք, չէ, յանղլիշ իք: Դուք, կուլի վուր չիմանաք. ջեհիլնիր իք. ամա ձիր դեդեքն ու մամեքը լավ կուիշին, որ ճոն Մարտիրուզը էն Մարտիրուզն է, վուր քառասուն տարի առաջ Ֆարմասոն Ակոփին էս քարափեմեն դվիր գլորեց, ու Քուռումը խեղդից, չուն նա մեր լուսավորչի սուրփ էգեղեցին վատաբանիլ էր. ճոն Մարտիրուզը չի համփիրի, վուր ձիզ պես մարթիքը ձիր էս սուրփ էգեղեցու պատիվը չճանչնան ու էգեղեցու մեջը օյինբաղութիննիր սարքին...

— Վիրչն ասա, վիրչը, ուստա Մարտիրուզ, ախար ուշանում ինք,— ընդհատեց ճոնին մի արհեստավոր:

— Վիրչն էն տո օղորմելի, վուր ձիզ պես մարթկերանց էս շլապավուր ուսումնականնիրը ձեռք ին գցի. վիրչն էն է, վուր, ձիզ պես խեղճ, անմեղ ու քրիստոնյա փիշաքարներուն խելքերեմեն հանիլ ին ու վուր թենն ուզում ին էնդի ին քաշ տալի, ու դուք էլ մե չիք հարցնում, թե դժո՞ւղքն ին տանում ձիզ, թե արքայութինը: Ախար ո՞վ է տեսի, վուր էս սուրփ էգեղեցումը, էս սուրփ սեղանի առչիվը մշակ ու փեշաքար մարթը սուտ ասե ան սուտ մոգոնե... էս դիփ դուք իք արի, դու,— դարձավ ճոնը դեպի Մոմճյանը,— էս անմիղ քրիստոնյաներուն դուք իք ճամփից հանի, էս խեղճերու հոգին դուք իք սատանայի փայ արի: Ախար աշխրքից ի՞նչ պիտիք տանի. ասինք, թե էս խեղճերուն խափեցիք, ասինք, թե դիփ մարդկերանց խափեցիք, խոմ ստիղծող աստծուն չիք կանա խափի, խոմ մե օր նա ձիր դատաստանը կոնե...

— Տեր-հայր, այս մարդն արդեն չափն անցկացրավ ի՞նչ եք լռել, բարեկարգիչ եք,— զայրացած բացականչեց Մոմճյանը:

— Չափն յի՞ս անցրի. այ հառամ ըլի. ձիզ ձիր ուսումը, հառամ ըլի. աստծու տանը, որ էդ իք անում, յարաբ դսերումը ինչի՞ր չիք անի...— վրդովված սրտով խոսեց ծերունին և փայտի վրա հենած ու գլուխը տմբտմբացնելով դուրս գնաց եկեղեցուց: Նրա հետ դուրս եկան և մի քանի հոգի, որոնք համակրում էին ծերունու խոսքերին:

— Հիմի կի էդ գիժեմեն ազատվեցանք, տեր-հայր, բանը քութահ արեք,— գոռաց չաչանակ Սերգոն:

— Ձայները համարեցեք, տեր-հայր. ուշանում ենք, ժամը երեքը դառավ,— խոսեց Վանոն:

— Ձայները, ձայները,— գոռացին ժողովականներից շատերը:

— Որդիք, մի համբերեցեք, ախար այստեղ անկանոնություններ են կատարվել, պետք է քննենք, հետևենք...

— Անկանոնության բան չկա, մարդիկը կանոնավոր ընտրություն են արել, գործը մի ուշացնեք,— գլուխն ու բռունցքը շարժելով բացականչեց գործիչ-Վանոն:

— Տեր-հայր, ո՞վ էր այս ճոն Մարտիրոսը, խնդրեմ նրա մասին մանրամասն տեղեկություններ տվեք, նա, թե ինձ և թե այս ժողովականներին և՛ անպատվեց, և՛ վիրավորեց, ես պետք է դատ բանամ նրա դեմ,— գրգռված մոտենալով քահանային հարցրեց Մոմճյանը:

— ճոն-Մարտիրոս են ասում, որդի, ես էլ լավ չեմ ճանաչում :

— Էհ, բան չունի՞ս. գիժ է, խելքեմեն ելած է. քի պես պատվական մարթը նրա հիդ պտի գլուխ դնի՞,— առաջ անցնելով խոսեց Ծղալոբը: — Գիժ է, գիժ է, ի՞նչ ունիս նրա հիդ, դուն իրիցփուխի բանը քութահ արա,— խոսեցին ուրիշ մարդիկ:

—Դեհ, լավ, տեր-հայր, վերջացրեք, որ գիժ է՝ էլ ավելորդ է նրա հատ ընկերանալ, ձեր գործը վերջացրեք,— որոշեց Մոմճյանը:

— Բայց, որդի, ախար այստեղ անկանոնություններ կային...

— Ուրեմն չեք կամենում, կնշանակե ցանկանում եք ժողովականների կամքի հակառակ ընտրություն անել: Լավ. թողեք ուրեմն գործը մնա կիսատ. ես այսօր կերթամ և հարկ եղածը սրբազանին կպատմեմ. ինչ որ հարկավոր է, թող նա ինքը կարգադրե,— սպառնաց Մոմճյանը:

— Եթե բոլոր ժողովականները կամենում են, ես ընդիմանալու ի՞նչ ունիմ,— ասաց բարեկարգիչը, Մոմճյանի ըսպառնալիքից վախենալով:

— Կամենում ենք, կամենում ենք, վերջացրեք, շուտ արեք,— գոռացին, գոչեցին այս ու այն կողմից:

Բարեկարգիչ քահանան սկսեց կարդալ թերթիկները և տիրացուն ու Վանոն գրեցին ընտրելիների անունները: Երբ ընթերցումը ավարտեցին, սկսան ձայները հաշվել և տեսան, որ մի քանի հոգի երկու կամ երեք ձայներ են ստացել. մինչդեռ Սոսոյի տղա Ծղալոբը ստացել է հիսունևերեք ձայն:

Բարեկարգիչը հայտնեց, որ պարոն Ծղալոբը ընտրված է երեցփոխ:

Ընտրողներից շատերը շնորհավորեցին նրան, իսկ քչերը զարմացած հարցնում էին իրար թե՝ ինչպե՞ս պատահեց, որ Ծղալոբի պես անհայտ ու աննշան մարդը երեցփոխ ընտրվեց. բայց որովհետև դրանք էլ խեղճ ու միամիտ մարդիկ էին, ուստի շատ չերկարացրին. «Տերն իրանց հիդ» ասացին ու դուրս գնացին:

Բայց Մոմճյանն ու յուր արբանյակները գոհ էին, որ գործը, թեպետ մի փոքր դժվարությամբ և անհաջող միջադեպով, այնուամենայնիվ իրենց ցանկացած ձևով վերջացավ:

Ինչ նորընտիր երեցփոխին էր վերաբերում, նա այնքան ուրախ էր, որ քիչ էր մնում թե թևեր առներ ու թռչե: Երբ բոլոր ժողովականները հեռացան, նա մոտեցավ Մոմճյանին, որը կանգնած էր Սարյանի հետ, և շնորհակալություն արավ նրան յուր ընտրությունը հաջողացնելու համար:

Այդ միջոցին մոտեցավ և չաչանակ Սերգոն ու ժպտադեմ բացականչեց:

— Հը, վո՞ւնց է, լոթի, իրիցփուխ էլ շինեցինք քիզ, էրազդ խոմ կատարվի՞ց. հիմի կի իրիք թումանանոց ճաշը պիտիս սարքի:

— Իմ ջուխտ աչքի վրեն, իրիք թումանանոց չէ, հինդ թումանանոց պիտիմ սարքի, առջևներիս կիրակին Օրթաճալում իմ ղոնաղն իք քսանհինգ ան յարսուն մարթով,— պատասխանեց Ծղալոբը ծիծաղելով:

Երիտասարդ Սարյանը այս բոլորը տեսավ ու լսեց և խոր մտածմունքների մեջ հեռացավ եկեղեցուց:

ԺԴ

ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մինչև նախընթաց գլխում նկարագրած ընտրությունը, Վահան Սարյանը նայում էր Մոմճյանի վրա իբրև մի խելոք, ազնիվ, առաքինի և լուսավոր գաղափարներով հարստացած երիտասարդի վրա, որի միակ նպատակն էր ազնվությամբ և անխարդախ հոգվով յուր ազգին ծառայելը. նրա թե խոսքերի և թե գործերի մեջ նա շարունակ տեսնում էր նրա այդ արժանավորությունների ապացույցները: Մոմճյանին ընդունելով իբրև անկեղծ և անձնվեր հայրենասերի կատարելատիպ՝ նա ինքն յուր մեջ որոշել էր ամեն բանի մեջ հետևել և նմանիլ նրան: Այս էր պատճառը, որ Սարյանը նրան, մինչև անգամ, յուր մենտորն էր անվանում:

Բայց Ձորաբաշի եկեղեցում կատարված ընտրության ներկա գտնվելով և այդ ընտրության ժամանակ որոշ նպատակով գործ դրված զեղծումներին և անարդարության վկա լինելով և, մանավանդ, Մոմճյանին այդ զեղծումներին կուսակից և պաշտպան տեսնելով, Սարյանի վրա մի տեսակ հիասթափություն եկավ. նրա հոգվո աչքերը կարծես բացվեցան և նա սկսեց խիստ քննական աչքով դիտել ու զննել այն ամենը, ինչ որ կատարվում էր յուր շուրջը: Նրան թվում էր, թե բախտը դավաճանել է իրեն՝ մտցնելով գործողների այնպիսի մի շրջան, որից ինքը, իսկապես, պիտի փախչեր և որի դեմ մինչև անգամ պիտի կռվեր՝ երբ յուր գործելու ժամանակը հասներ: Այս պատճառով նա մտածեց, որ կարելվույն չափ շուտով հեռանա այդ շրջանից և փորձե ավելի ազնիվ և անկեղծ մարդկանց մոտենալու:

Բայց որովհետև Թիֆլիս մտնելու օրից սկսած նա մի քանի ուրիշ դեպքերի վերաբերմամբ էլ հիասթափվել էր, իսկ վերջը գործին տեղեկանալով՝ նախկին հիացման ու համոզմունքին էր եկել, ուստի որոշեց, որ այս առթիվ էլ դեռ մի առժամանակ սպասե:

— «Ով գիտե, գուցե, այս անգամ էլ սխալվողը ես եմ.—մտածում էր ինքն իրեն Սարյանը.— ինչո՞ւ շտապել: Գուցե Մոմճյանը ստիպված էր այդպես վարվելու. գուցե

ընտրության ժամանակ նկատածս զեղծումները անհրաժեշտ էին: Պետք է գործը ամեն կողմից քննել և հետազոտել. ապա թե ոչ հեռանալ ես ամեն րոպե կարող եմ. բայց պետք է հեռանամ այնպես, որ էլ զղջալու տեղիք չունենամ»:

Այս մտածմունքների հետ միասին տանջում էր Սարյանին և այն միտքը թե՛ ինչո՞ւ Մոմճյանն ու յուր համախոհները երեցփոխ ընտրեցին այն տգետ և ապուշ մարդուն, որի վրա «թեյարանի սպասավորն» անգամ արհամարհանքով է նայում: Մի՞թե Մոմճյանը այնքան խելք և ճանաչողություն չուներ, որ այդ մարդու ո՞վ և ի՞նչ լինելը չիմանար: «Անկարելի է. այստեղ թաքնված է մի գաղտնիք, որը, անշուշտ, արժանի է ուշադրության»,— մտածում էր երիտասարդը, բայց թե ի՞նչ գաղտնիք պիտի լիներ այդ, նա չէր կարողանում գուշակել և, միևնույն ժամանակ, չէր էլ կամենում Մոմճյանից բացատրություն պահանջել, որպեսզի նա պատրաստ պատճառաբանություններով յուր միտքը չպաշարե: Այլ որովհետև մի անգամ արդեն սկսել էր կասկածել այդ երիտասարդի անկեղծության և ազնվության վրա, ուստի որոշեց քայլ առ քայլ հետևել նրա գործողության և անձամբ համոզվել, թե որքա՞ն նա արժանի է այն համոզմունքին, որ ինքը նրա վրա ուներ:

Առիթը ինքն իրեն ներկայացավ:

Ընտրության հետևյալ օրը նշանակված էր խմբագրական ժողով, որին Մոմճյանը պիտի ներկայացներ «Ամբոխի մեջ գործելու եղանակները որոշող հրահանգը» ի քննություն:

Ընթերցողները, անշուշտ, հիշում են առաջին խմբագրական ժողովի մեջ կայացած այն վճիռը, որի հիման վրա Մոմճյանը պարտավորվել էր հիշյալ հրահանգը պատրաստելու:

Ժողովը տեղի ուներ դարձյալ տիկին Մարթայի կահավորված հյուրասենյակում:

Նշանակված ժամին «Փնջիկ»-ի թե խմբագիրը, թե աշխատակիցները և թե բարեկամները հավաքված էին այդտեղ: Ներկա եղողների մեջ օտարը իսկապես Սարյանն էր, որին Մոմճյանը ծանոթացրեց հին բարեկամների հետ, նախապես մի պատշաճավոր գովասանական ճառ խոսելով նրա մասին:

Խմբագրական ժողովի երիտասարդ անդամները առաջին անգամից իսկ հարգանքով և ակնածությամբ վերաբերվեցին դեպի երիտասարդ աշխատակիցը և մեծ գովություններով խոսեցին նրա այն աշխատությունների մասին, որոնք լույս էին տեսնում «Փնջիկ»-ի մեջ:

Ինչ վերաբերում է օրիորդներին, նրանք հարգանքից ու ակնածությունից զատ՝ մի ուրիշ բան էլ զգացին դեպի երիտասարդ գավառացին: Այդ այն էր, որ նրանք հիացան Սարյանի բարեկազմ հասակի և առնական գեղեցկության վրա:

Փոքրիկ դեմքով և հասակով օրիորդը, որ ներկայացավ երիտասարդին Էմմա Քանարյան ազգանունով, աշխատեց նստել ուղիղ Սարյանի հանդեպ և նայել նրա խելոք ու կենդանությամբ լի աչքերին, որքան որ կարող էր:

Կարճ հասակով և երկար քթով օրիորդը, որ իրեն Զարուհի Թեմուրյան անվանեց, ամեն միջոց գործ դրավ Սարյանի աթոռին կից տեղ որոնել, որովհետև հավատացած էր, որ կարիք կունենա այս և այն հարցի մասին յուր հետ առանձին խոսելու:

Օրիորդ Սառա Մամուլյանը, որ յուր անվան և Սարյանի ազգանվան մեջ զարմանալի նմանություն գտավ և բացատրեց նրան, որ ինքը երևի այդ պատճառով է սիրում, որ իրեն Սարա անվանեն և ոչ թե Սառա (նա ատում էր հայոց ռ տառը), նստեց

Քանարյանի կողքին, աշխատելով միևնույն գործով պարապել, ինչով որ դրացուհին էր պարապում, այն է՝ շարունակ նայել Սարյանի դեմքին:

Օրիորդ Լուսիկ Բարյանը միայն շատ հեռու նստեց, որովհետև եղածների մեջ նա ամենից գեղեցիկն էր: Ուներ գրավիչ աչքեր՝ երկար արտևանունքներով եզերված, լայն ճակատ և կամար հոնքեր, բարակ ու գեղեցիկ քիթ, փոքր ինչ մեծ, բայց անուշ ժպտող բերան, դեմքը թեպետ մաշված, բայց համակրելի, հասակը՝ բարեկազմ, ձայնը մեղմ և քնքուշ, միով բանիվ ներկա եղող օրիորդների ընդհանուր տգեղության ներդաշնակությունը խանգարող: Օրիորդի նպատակն այն էր, որ գեղեցիկ երիտասարդը մոտիկ եղող տգեղությունները տեսնելուց հետո նայե իրեն, որպեսզի յուր գեղեցկությունը կրկնապատիկ երևա նրան:

Սակայն տ. Մարթան, որ Շուշանի հետ միասին այս ժողովում էր գտնվում (Մոմճյանը առհասարակ սիրում էր, որ խմբագրական ժողովները բազմամարդ լինեն), ինքն յուր սրտում ծիծաղում էր օրիորդ-ժողովականների միամտության վրա: «Իզուր եք աշխատում հաճելի լինել,— մտածում էր ինքն իրեն,— Շուշանի փեսացուն ձեզ չի հավանիլ, նա յուր արժանավոր հարսնացուն գտել է արդեն...»:

Ինչ օրիորդ Շուշանին է վերաբերում, նա լուռ ու մտախոհ նստած, երբեմն միայն գողունի հայացքներ էր ձգում Վահանի վրա և ապա ներկա եղող օրիորդներին նայում՝ գուշակելու համար, թե արդյոք նրանք չե՞ն ծաղրիլ իրեն, եթե իմանան, որ Վահանի նման տղին յուր փեսացուն է համարում:

Մոմճյանը առանց ուշադրություն դարձնելու օրիորդների մտավոր աշխարհը հուզող և զբաղեցնող քնքուշ պատճառների վրա, ժողովը բացավ և հայտնեց, որ խոստացած հրահանգը արդեն պատրաստել, բերել է ժողովի քննության առաջարկելու: Բայց նախքան հրահանգի ընթերցումը նա կարևոր համարեց նախընթաց ժողովի արձանագրությունը կարդացվի, որպեսզի պ. Սարյանը, որ ներկա չէր եղել անցյալ ժողովին, ծանոթանա քննության առաջարկվող հրահանգը կազմելու շարժառիթների հետ: Ժողովականները սիրով համաձայնվեցին:

Խմբագիր Շաշյանը, որ առհասարակ, խմբագրական Ժողովներում մի դրական պաշտոն կատարելու մեծ ցանկություն ուներ, ձեռք առավ արձանագրությունը և սկսեց կարդալ.

«Թիֆլիս, 188* թ. սեպտեմբեր 17.

«Փնջիկ»-ի խմբագրատան մեջ կայացավ տասնհինգերորդ խմբագրական ժողովը, որին ներկա էին՝ տնօրեն և գործավար պ. Մոմճյան, խմբագիր-հրատարակիչ պ. Շաշյան, աշխատակից պարոններ՝ Մովսիսյան, Թաթուլյան, Վարդանյան, Արազյան, Ասլանյան և Հակոբյան. աշխատակից օրիորդներ՝ Էմմա Քանարյան, Լուսիկ Բարյան...

— Այդ ի՞նչ խավարամտություն է. օրիորդ աշխատակիցների անունները տղա աշխատակիցներից հետո՞ եք գրել.— սուր ու ճչող ձայնով ընդհատեց ընթերցումը օր. Քանարյանը:

— ԵՎ իրավ. այդ ի՞նչ միջնադարյան հնամոլություն է,— ձայնակցեց օրիորդին աշխատակից Թաթուլյանը:

— Այդ երևի մի սխալմունք է, վնաս չունի, հետո կուղղենք. շարունակեցեք,— խոսեց Մոմճյանը և խմբագիրը շարունակեց:

«Էմմա Քանարյանը, Լուսիկ Բարյանը, Զարուհի Թեմուրյանը, Սարա Մամուլյանը...»:

— Օ, հո, իմ անունը ամենից վե՞րջն եք գրել, երևի ես «Փնջիկ»-ի խմբագրության երկրորդական, երրորդական կամ. ով գիտե, չորրորդական և հինգերորդական աշխատակիցն եմ... խնդրեմ, խնդրեմ, իմ անունը ջնջեցեք,— քիթն ու պռունկը վեր քաշելով խոսեց օրիորդ Սարան և շուռ գալով մեջքը դեպի Շաշյանը արավ:

— Օրիորդ, ինչի՞ եք վիրավորվում. անունը առաջ գրած, թե ետ գրած միևնույն չէ՞,— նկատեց օրիորդ Բարյանը:

— Խնդրեմ, օրիորդ, թե որքա՞ն միևնույն է՝ այդ ես լավ գիտեմ:

Օրիորդ Բարյանը այս անսպաս հայտարարության վրա մինչև ականջները կարմրեց և սրտնեղությունից քիչ մնաց, որ լաց լինի:

Այս տեսակ նկատողություններ նա շատ էր լսել յուր ընկերուհիներից և երբեք էլ չէր վշտացել. բայց այս անգամ խմբագրական ժողովում և այն՝ նոր ծանոթացած երիտասարդի ներկայությամբ, իհարկե, լսել և տանել չէր կարող: Բայց մինչև որ նա մի պատասխան կտար, Մոմճյանը օգնության հասավ:

— Օրիորդ Սարա. դուք գործը սխալ եք հասկանում, ձեր համեմատությունն էլ անհաջող էր. անունները ետ ու առաջ գրելու մեջ տարբերություն չկա. օրիորդ Լուսիկի նկատողությունը իրավացի էր...

— Բայց ինչպե՞ս, դուք...

— Խնդրեմ, խնդրեմ, մի ընդհատեք ինձ. ես ոչ ոքի խոսք շեմ տալիս և շատ խնդրում եմ, ժողովականներից, որ ոչ ոք արձանագրության ընթերցումը չընդհատե. հակառակ դեպքում մենք ստիպված կլինենք ամբողջ մի ժամ ընթերցանության վրա կորցնելու: Շարունակեցեք պ. Շաշյան:

Խմբագիրը շարունակեց:

«...Զարուհի Թեմուրյան, Սարա Մամուլյան, Շուշան Մեհերյան և տիկին Մարթա Մեհերյան»:

— Տեսնո՞ւմ եք, օրիորդ, իմ անունը ամենից վերջն է գրված. բայց ես չեմ նեղանում, որովհետև գիտեմ, որ սեղանի վրա անուշ բաժինը ամենից վերջն են բերում,— ժպտալով խոսեց տ. Մարթան և ժողովականները ծիծաղեցին:

— Դուք էլ ուրեմն ինձ ընդհատեցիք,— նկատեց Շաշյանը

— Վնաս չունի. քեզ ընդհատեցի, բայց աղջկերանց սիրտը շահեցի, դա էլ հարկավոր էր.— փորձառու եղանակով պատասխանեց տ. Մարթան:

Խմբագիրը գլուխը շարժեց և նորից ընթերցումը սկսեց.

«...Ժողովի պարապմունքը տնօրեն Մոմճյանի՝ կուսակցություն կազմելու մասին արած առաջարկությունն էր, որը նա ամփոփում էր հետևյալ խոսքերի մեջ.— մեր բարձր նպատակներին հասնելու համար մենք պատրաստ ենք ստեղծել զորեղ կուսակցություն, որպեսզի նրա շնորհիվ հասարակական որոշ գործեր կարողանանք ձեր ձեռքն առնել—- Այդ նպատակին հասնելու միակ ճանապարհը պարոն Մոմճյանը գտնում է ամբոխի հետ ձեռք ձեռքի տված գործելու մեջ»:

ներկա եղող աշխատակիցներից պ. Մովսիսյանը, դեռ Մոմճյանի պատճառաբանությունները չլսած հակաճառեց նրա առաջարկությանը...

— Մովսիսյանի մասին գրվածը թողեցեք,— կարգադրեց Մոմճյանը.— կարդացեք իմ պատճառաբանությունները միայն:

— Բայց ինչո՞ւ չեք կամենում, որ բոլորը կարդամ, — հարցրեց Շաշյանը:

— Թե ինչո՞ւ չեմ կամենում, դրա պատասխանը հետո, կարդացեք այն, ինչ որ խնդրեցի:

Խմբագիրը Մոմճյանի ձայնի ելևէջներից արդեն գուշակեց, որ բարկացրեց նրան, ուստի շարունակեց ընթերցանությունը.

«... Օրիորդ Էմմա Քանարյանի այն հարցին, թե ի՞նչ բան է հզոր կուսակցությունը, պ. Մոմճյանը պատասխանում է.

—Հզոր կուսակցություն կնշանակե ունենալ քաղաքի մեջ հավատարիմ բարեկամների այնպիսի մի բազմություն, որը քեզ հետ համամիտ և համակարծիք լինի ամեն դեպքում, որին եթե ասես՝ մածունը սև է, նա էլ քեզ հետ միասին գոչե թե՝ այո, սև է, եթե ասես մուրը սպիտակ է, նա էլ գոռա ամեն տեղ թե՝ այո, սպիտակ է:

Գալով այն հարցին, թե մեր ինչի՞ն է պետք հզոր կուսակցությունը, պ. Մոմճյանը ասում է.— ենթադրենք, թե մեր բարեկամներից ոմանք ուսումը ավարտելով վերադառնում են հայրենիք. նրանցից մեկը բժիշկ է, մյուսը փաստաբան, երրորդը ճարտարապետ և այլն: Նրանք նորեկներ լինելով՝ հարկավ, հասարակությանն էլ անծանոթ կմնան: Բայց եթե մենք զորեղ կուսակցություն ունենանք, կառաջարկենք նրան հարկավոր դեպքում մեր նորեկ բարեկամներին դիմելու, և նա այդ կանե: Այսպիսով մեր բարեկամների առաջ գործելու ճանապարհ կբացվի, որոնք հասարակության մեջ մտնելով, իրենք էլ իրենց հերթում մեր կարծիքներին կծառայեն: Այս եղանակով կարելի է օգնել նաև մեր կուսակցության պատկանող դպրոցավարտ օրիորդներին, եթե նրանք վարժուհության կամ հասարակական ուրիշ պաշտոններ ստանալու ցանկություն ունենան: Որովհետև պաշտոն տվող հոգաբարձուները, տեսուչները, կառավարիչները և այլն, պիտի գտնվին մեր կուսակցության մեջ:

Կուսակցության համամիտ և համազոր գործողության շնորհիվ հնարավոր է նույնպես ձեռք առնել երեցփոխանական, հոգաբարձուական և հայոց ընկերական հաստատությունների բոլոր ընտրությունները և այդպիսով մտնել ամեն տեղ, տիրել ամեն գործի և հասարակական բախտի կառավար ու առաջնորդ հանդիսանալ...»:

«Սույն պատճառաբանությունները լսելով՝ խմբագրական Ժողովը միաձայն ընդունեց պ. Մոմճյանի առաջարկությունը և հանձնեց նրան՝ ամբոխի մեջ գործելու և ամբոխի առաջարկությամբ կուսակցությունը ստեղծելու միջոցները սովորեցնող մի հրահանգ խմբագրել և ներկայացնել այն հետևյալ խմբագրական ժողովին ի քննություն»:

Երբ Շաշյանը արձանագրության ընթերցումը ավարտեց, Մոմճյանը ժողովականներին դառնալով հարցրեց.

— Ձեզանից ո՞վ ինչ նկատողություն ունի անելու:

— Կարծեմ ոչ ոք,— լսվեցավ մի ձայն:

— Ուրեմն... բայց ոչ, դուք ի՞նչ նկատողություն ունիք անելու, պ. Սարյան:

— Ինչի՞ վերաբերմամբ:

— Մեր այս արձանագրության:

— Ես ներկա չեմ եղել ձեր ժողովին. հետևապես ձեր արձանագրության մասին էլ նկատողություն անել չեմ կարող:

— Նկատողություն չէ, բայց մի միտք, մի կարծիք խո կարո՞ղ եք հայտնել:

— Այսինքն ի՞նչ կարծիք կկամենայիք, որ հայտնեի:

— Օրինակ թե՝ իմ առաջարկած կուսակցությունը հարկավո՞ր է ունենալ, թե ոչ:

— Իմ կարծիքով ամեն լավ բան կատարելու համար ցանկալի է, որ մարդ ուժ ու կարողություն ունենա. եթե կուսակցությունը այնպիսի ուժ է, որ մեզ պիտի օգնե մեր բարի նպատակները իրագործելու, իհարկե, անհրաժեշտ է ունենալ նրան:

— Բրավո, բրավո, գեղեցիկ միտք, հրաշալի միտք,— բացականչեց խմբագիր Շաշյանը:

Մոմճյանը աչքերը խոժոռեց նրա վրա և քթի տակ շշնջաց:

— Հատկապես խնդրում եմ, որ մինչև ժողովի վերջը լուռ մնաք...

Շաշյանը մի կեղծ ժպիտ խաղացրեց դեմքի վրա և սկսեց մատիտով առջևը դրած թուղթը խազխզել:

— Իհարկե, կուսակցությունը հենց այն ուժն է, որ օգնում է մեզ մեր նպատակներին հասնելու,— հաստատեց Մոմճյանը:

— Բայց գլխավոր հարցը այն է, թե ո՞ր աստիճան մեր նպատակները բարի են,— նկատեց Սարյանը:

— Մեր նպատակների բարի լինելու մասին կասկածել ավելորդ է, մենք ծառայում ենք մեր ազգին և դիմում ենք դեպի առաջադիմություն: Ահա այս է մեր գործը և մեր նպատակը. սրանց մեջ չար բան լինել չէ կարող:

Սարյանը լռեց և չկամեցավ երկարացնել, որովհետև հասկանում էր, որ ցանկացած կարծիքները արտահայտելուց՝ հարցը կարող է վիճաբանության փոխվել. մինչդեռ ինքը, խմբագրական ժողովի ներկա եղող անդամների մասին մի գաղափար կազմելու համար՝ որոշել էր ոչ խոսել և ոչ էլ կարծիք հայտնել, այլ միայն լսել:

— Ուրեմն ես կարող եմ իմ պատրաստած հրահանգը կարդալ,— հայտարարեց Մոմճյանը:

— Կարդացեք, կարդացեք,— ձայն տվին այս ու այն կողմից:

— Իմ հրահանգը ընդարձակ չէ,— ասաց Մոմճյանը, հանելով ծոցից մի քառածալ թուղթ և բանալով նրան.— նա կազմած է ընդամենը տասը հոդվածներից, որոնք, սակայն պարունակում են իրենց մեջ այն ամենը, ինչ որ հարկավոր է մեզ գիտենալ զորեղ կուսակցություն կազմելու համար: — Կարդացեք, կարդացեք լսենք,— ձայն տվին Ժողովականները:

— Իսկույն.— և նա սկսեց կարդալ

«Հրահանգ համամիտ և համախոհ կուսակցություն կազմելու համար:

— Այդ վերնագի՞րն է, պ. Մոմճյան,— ճչալով հարցրեց օրիորդ Քանարյանը:

— Այո, վերնագիրն է, մի նկատողություն ունի՞ք անելու սրա մասին:

— Ոչ, ուզում էի ասել, որ գեղեցիկ վերնագիր է:

— Իմ կարծիքով լավ կլիներ, եթե վերնագիրը կոնսիստորի լեզվով գրեիք,— նկատեց աշխատակից Հակոբյանը, որ մի կարճահասակ, կոպիտ ու տափակ դեմքով և փոքրիկ տղա էր:

— Կոնսիստորի լեզուն ո՞րն է,— զարմացած հարցրեց, Մոմճյանը:

— Կոնսիստորի լեզուն չգիտե՞ք:

— Կոնսիստորի լեզուն ո՞րն է, այդ շատ հետաքրքրական է,— աչքերը մեծ բացած և ծիծաղադեմ հարցրեց օրիորդ Բարյանը:

— Այ, կոնսիստորի լեզուն այս է,— բացատրեց Հակոբյանը,— եթե կամենաք ասել <հրահանգ համամիտ և... մյուս բառն ի՞նչ էր...

—«Համախոհ»,— հիշեցրեց Սարյանը:

— Հա. «... համամիտ և համախոհ կուսակցություն կորզելու հա...

— «Կորզելու» չէ, տո, «կազմելու» ասա,— ուղղեց Մոմճյանը:

— Ներողություն... «կազմելու համար» պետք է ասեք. «Հրահանգ վասն կազմելոյ ի համամիտ և...» ֆու, էլի այն բառը մոռացա:

— «Համախոհ, համախոհ»,— Հիշեցրեց կրկին Սարյանը:

— Հա... «վասն կազմելոյ ի համամիտ և համախոհ կուսակցութիւն»:

— «Ի համամիտ» չէ, այլ «զհամամիտ և զհամախոհ կուսակցություն...»,— ուղղեց Սարյանը: — Այո, կարծեմ, այդպես է:

— Այդ ի՞նչ բարբարոս լեզու է. երևի գրաբար է,— հարցրեց օրիորդ Մամուլյանը:

— Այո, գրաբար է, և իմ հայրս սովորեցնում է ինձ այդ լեզուն:

— Դե, «գրաբար» կասեիք, էլ ի՞նչ եք «կոնսիստորի լեզու» ասում:

— «Գրաբար» բառը մոռացել էի, օրիորդ:

— Էլի քահանայի որդի եք, է, մի փտած կարծիք պիտի հայտնեիք,— նկատեց Մոմճյանը դեմքը խոժոռելով:

— Եվ այն էլ ի՞նչ քահանայի, կոնսիստորի անդամի,— հարեց Հակոբյանի ընկերը:

— Երևի նրա համար է գրաբարը «կոնսիստորի լեզու» անվանում,— նկատեց մի ուրիշը:

— Բավական է, պարոններ, մենք ժամավաճառ ենք լինում, լսեցեք կարդամ, վերջացնեմ:

— Կարդացեք, կարդացեք:

— Խնդրեմ ընդհատող չլինի:

— Միամիտ կացեք:

Մոմճյանը շարունակեց:

— «Հրահանգ համամիտ և համախոհ կուսակցություն կազմելու համար»:

«1—ին հոդված. Գործելու, հառաջադիմելու և մեր նպատակին հասնելու համար մենք կազմում ենք զորեղ միաբանություն, որ կոչվում է «Փնջիկի կուսակցություն»»:

«2—րդ հոդված. Մեր կուսակցության մեջ ընդունում ենք ամենքին, առանց խտրության կրոնի, սեռի, հասակի, վիճակի և այլն»:

— Ներողություն, պ. Մոմճյան, այդ հոդվածի միտքը լավ չեմ հասկանում, կարո՞ղ եք բացատրել,— ընդհատեց օրիորդ Թեմուրյանը:

— Այո, սրա միտքը այն է թե՝ մենք մեր կուսակցության մեջ պետք է ընդունենք և՛ հայադավաններին, և՛ կաթոլիկներին, և՛ լութերականներին, և՛ պրիգուններին (իհարկե, եթե նրանք հայ են), և՛ կանանց, և՛ տղամարդկանց, և՛ մեծին, և՞ փոքրին, և՛ հարստին, և՛ աղքատին, և՛ խելոքին, և՛ հիմարին, միով բանիվ նրանք բոլորին, որոնք երկու աչք ունին...

— Եվ մի ստամոքս, պ. Մոմճյան,— սրախոսեց օր. Քանարյանը:

— Այո, և մի ստամոքս: Ստամոքսը, օրիորդ, մեծ դեր է խաղում կուսակցության մեջ, այդ պետք է իմանաք:

— ճիշտ է, պ. Մոմճյան, շանը որ մի անգամ հաց ես տալիս, դռնիցդ չի հեռանում,— հաստատեց ուսանող Հակոբյանը:

— Այդպես է, բայց մենք շարունակենք:

«3-րդ հոդված. Փնջիկի կուսակցությունը զորեղացնելու համար մեր ամենամեծ ուշադրությունը դարձնում ենք տգետ և աղքատ դասակարգի վրա որը կազմված է արհեստավորներից, բանվորներից, անգործ ու անպաշտոն մարդիկներից և որը սովորական անունով կոչվում է ամբոխ»:

«4-րդ հոդված. Ամբոխի մեջ գործելու համար ընտրում ենք Ժիր ու գործունյա երիտասարդներ և օրիորդներ մեր հավատարիմներից ու մտերիմներից և, նշանակելով նրանց այս և այն շրջանի վրա, տալիս ենք նրանց նաև խոսելու, համոզելու և գործելու որոշ ծրագիրներ»

«5-րդ հոդված. Ամբոխի մեջ գործողը պետք է խտրություն չդնե ոչ անձի, ոչ տեղի և ոչ հանգամանքի մեջ: Նա ամենքին պիտի մոտենա, ամեն տեղ պիտի մտնե, ամեն հանգամանքներում պիտի գործե: Նա աղքատի սեղանին պիտի ընկերանա, արհեստավորի վիճակով պիտի հետաքրքրվի, բանվորի կրած նեղություններին պիտի վշտակցե, և նույնիսկ սրիկաների անբարոյական գործերին պիտի մասնակցեմ...»:

— Այդ ի՞նչ եք ասում, պ. Մոմճյան,— տեղից վեր թռչելով բացականչեց Սարյանը և մի զարմացած հայացք ձգեց Մոմճյանի վրա:

Ժողովականները, որ ուշադրությամբ չէին լսում «հրահանգի» ընթերցումը, կամ եթե լսում էին՝ շատ բան չէին հասկանում, Սարյանի բացականչության վրա ականջները

սրելով՝ սպասեցին Մոմճյանի բացատրությանը: Բայց վերջինս ավելորդ համարեց որևէ բացատրություն տալ, վախենալով, թե մի գուցե Սարյանը զորեղ կերպով ընդդիմախոսե և ժողովականների. առաջ յուր կազմած հրահանգի վարկը ձգե:

— Ես գիտեմ, թե ձեզ ո՞ր կետը անհանգստացրեց,— դարձավ նա Սարյանին քաղցրությամբ,—բայց այդ կետի մասին ես ձեզ առանձին բացատրություն կտամ:

Սարյանը լուռ ու մունջ նստեց տեղը, զղջալով յուր միջամտության վրա:

Մոմճյանը շարունակեց:

«6—րդ հոդված. Ամեն աշխատություն պետք է գործ դնենք մեզ հավատարիմ և մտերիմ դարձնելու այն անձինքներին, որոնք ընտանիքների մեջ հաճախելու պաշտոններ ունին: Այդ կարգին պատկանում են վարժուհիները, մանկաբարձուհիները, վարսավիրները, սափրիչները և լվացարարները»:

— Ասացեք խնդրեմ պ. Մոմճյան, մանկաբարձուհիները ի՞նչ ծառայություն կարող են անել մեզ,— հետաքրքրությամբ հարցրեց օր. Մամուլյանը:

— Մանկաբարձուհիներ՞ը, օ՜, նրանք մեծ ծառայություն կարող են անել: Երևակայեցեք, թե նրանք քանի՜ քանի՜ ընտանիքներ են մտնում, որքա՜ն կանանց հետ գործ ունին:

— Ի՞նչ գործ ունին, ծնվող երեխաներին են ընդունում: Նրանց հո մեզ կուսակից չի պիտի շինեն:

— Նրանց չեն շինիլ, բայց նրանց մայրերի հետ խոսելու շատ բան կունենան: Չէ՞ որ ծնող կանանց մոտ նրանք երկար ժամերով են նստում:

— Կարծեք թե ծնող կինը յուր ցավերի ժամանակ մանկաբարձուհու ճառերին ուշադրություն պետք է դարձնե:

— Նա չի դարձնիլ, բայց նրա մոտ այդ ժամանակ բարեկամուհիներ ու ազգականուհիներ շատ կլինեն, նրանք ուշադրություն կդարձնեն: Երբեմն քամին փոքրիկ սերմը թռցնում տանում է և նրանից անապատում մեծ ծառ է բուսնում: Այդ իմացեք:

— Իսկ սափրիչները ի՞նչ ծառայություն կարող են անել.— հարցրեց երիտասարդ աշխատակիցներից մինը:

— Սափրիչների ծառայությունն էլ նշանավոր է: Երևակայեցեք, որ դուք ոչ մի բանից տեղեկություն չունեցող մի վաճառական եք, բայց շաբաթը երկու անդամ ձեր ուռած թշերը թրաշել եք տալիս: Սափրիչը գալիս է ձեզ մոտ: Դուք, թե՛ պատրաստվում եք թրաշվելու և թե՛ նրան շոյելու համար հարցնում եք թե՛ «ի՞նչ նորություն գիտես, ուստա՛ Պեպան»

Նա ծանր ու բարակ, մի կողմից սապոնի փրփուրը երեսը քսելով, մյուս կողմից ածելին սրելով՝ պատմություններ է անում: Պատահում է երբեմն, որ երեսիդ կեսը թրաշած՝ մյուս կեսը թողնում է և ածելին հեռու բռնած հետաքրքիր նորություններ է հայտնում: Ուզեք, չուզեք պիտի լսեք, որովհետև ոչ կարող եք վեր կենալ, ոչ կարող եք բարկանալ: Ահա՛, եթե այդ սափրիչը մեր մտերիմը լինի, նա ձեզ կասե, կհայտնե ա՛յն, ինչ որ ես չեմ կարող ասել ու հայտնել, և դուք նրան մի չեզոք մարդ համարելով՝ նրանից լսածները ավելի սիրով կընդունեք:

— Ներեցեք, պ. Մոմճյան. չեմ կարող ինձ զսպել, գեղեցիկ և հրաշալի միտք հայտնեցիք,— բացականչեց Շաշյանը:

— Իսկ լվացարարնե՞րը, ինչ պիտի անեն, նրանք հո տանտիկինների կամ տանտերերի հետ չե՞ն խոսում,— հարցրեց օր. Բարյանը:

— Նրանք էլ աղախինների, ծառաների և խոհարարների հետ կխոսեն: Չէ՞ որ այդ վերջիններն էլ իրենց աշխարհն ունին և ամբոխի մեջ պատվավոր տեղ են բռնում:

— Իրավունք ունիք, իրավունք ունիք, շարունակեցեք.— խորհուրդ տվավ խմբագիրը:

Մոմճյանը շարունակեց:

«7-րդ հոդված. Պետք է պատրաստել այսպես անվանյալ «աղմկարարների խումբ», որը կազմված կլինի հայտնի շատախոսներից, շաղակրատներից, սոփեստներից, բամբասողներից, զրպարտողներից և, նամանավանդ, աներկյուղ ու համարձակ անվանարկողներից: Այս խմբին կաջակցեն նաև անգործ պտտվող շրջմոլիկները, որոնց ցույց տված ծառայությունը միշտ շահավոր է լինում»:

Այս միջոցին Սարյանը մի անհանգիստ շարժում արավ: Նա ցանկանում էր հարցնել Մոմճյանին թե՝ արդյո՞ք կատակ է անում, թե՛ իրոք այդ խոսքերը գրել է յուր հրահանգի մեջ: Բայց հիշելով, որ մի փոքր առաջ յուր այդպիսի միջամտության պատճառով նա լռեցրեց իրեն, այլևս ձայն չհանեց: Այսուամենայնիվ, աշխատակից Թաթուլյանը կարևոր համարեց մի հարց առաջարկել.

— Շատախոսների, բամբասողների և զրպարտողների ի՞նչ բանի պիտանի լինելը՝ հասկանալի է,— ասաց նա,— բայց «անգործ պտտող շրջմոլիկները» մեր ինչի՞ն են պետք:

— Մեր կուսակցությանը ամենալավ ծառայություն կարող են անել «անգործ շրջմոլիկները»,— պատասխանեց Մոմճյանը,— որովհետև փորձված է, որ գործ ունեցողը որքան էլ շատ խոսե, որքան էլ շատ քարոզե, դարձյալ չի կարող անգործ մարդու չափ օգնել գործին: Պատճառն այն է, որ որոշ պարապմունքի տեր մարդը, եթե օրվա մեջ մի ժամ ժամանակ մեզ նվիրե, տասնևմեկ ժամ իրեն պիտի նվիրե. ուրիշ կերպ անել չի կարող: Մինչդեռ անգործ մարդը բոլոր ժամերը կարող է նվիրել, որովհետև նա պարապությունից ձանձրացած միշտ մի զբաղմունք է պտրտում, իսկ մեզ համար խոսիլը, վիճելը, քարոզելը, ինքնըստինքյան մի զբաղեցնող գործ է նրա համար: Ա՛յ, ձեզ օրինակ մեր չաչանակ Սերգոն. որտեղ չկա նա, որտե՞ղ չէ մտնում, ո՞ւմ հետ չէ խոսում: Դուք նրան կարող եք պատահել և փողոցներում, և հրապարակներում, և՛ խանութներում, և՛ եկեղեցու բակում, ամեն տեղ էլ գլխին հետաքրքիր լսողների մի խումբ հավաքած, մեկին պատմում է, մյուսի հետ վիճում է, երրորդին համոզում է, չորրորդին խայտառակում է. և այսպիսով մեզ ու մեր մարդիկներին գովում ու երկինքն է բարձրացնում, իսկ մեր հակառակորդներին պախարակում ու դժոխքն է իջեցնում: Այս տեսակ մարդիկը, իսկապես, ինքնաշարժ հայտարարություններ են և ամեն մի կուսակցության կարի պիտանի:

— Եթե այդպես է, մեր կուսակցության անունով մի ընծա պատրաստենք և Չաչանակին նվիրենք,— ասաց Շաշյանը:

Ժողովականներից ոմանք ծիծաղեցին, բայց Մոմճյանը անուշադիր թողեց նրա խորհուրդը և շարունակեց.

8-րդ հոդված. Պետք է պատրաստենք այսպես անվանյալ «երկդիմիների խումբ», որի պաշտոնը կլինի մոտենալ մեր հակառակորդներին, նրանց կուսակից և բարեկամ

ձևանալ և ապա նրանց բոլոր մտքերին, գաղափարներին, համոզմունքներին և գաղտնիքներին հիմնովին տեղեկանալուց ետ՝ հրապարակով հեռանալ նրանցից և սկսել նույնիսկ իրենց կետերով մրոտել իրենց»:

«9-րդ հոդված. Պետք է աշխատել հարուստ մարդկանց, կանանց և, նամանավանդ, հարուստ այրիների բարեկամությունը վաստակել՝ ինչ ճանապարհով և գնով ուզում է լինի: Որովհետև ամբոխի ուժից հետո վճռական ձայնը պատկանում է փողին, իսկ այդ վերջինին միշտ կարիք ունին կուսակցությունները»:

— Բայց որո՞նք են, օրինակ, հարուստների բարեկամությունը վաստակելու ճանապարհները, դրանցից մեկին, գոնե, ես կկամենայի ծանոթ լինել,— ծիծաղելով հարցրեց աշխատակից պարոններից մեկը:

— Հարուստների բարեկամությունը վաստակելու ճանապարհները շատ են,— պատասխանեց Մոմճյանը,— բայց ամենից դյուրինը և գործնականը նրանց թուլություններից օգտվիլն է: Օրինակի համար՛ կան հարուստներ, որոնք փառամոլ են, պատիվ ու պարծանք են որոնում: Նրանց կարելի է հռչակել մեծագործ, բարերար, ազգասեր, հայրենասեր: Նրանց կարելի է ընտրել ընկերությունների պատվավոր անդամ, դպրոցների հոգաբարձու, եկեղեցու երեցփոխ, անկելանոցի խնամակալ և այլն: Կան հարուստներ, որոնք եսասեր, վրիժառու և հակառակորդների հալածող են: Նրանց կարելի է ծառայել տպագրական խոսքով, ինչպես այդ անում են Եվրոպայում, որտեղ publicite[2] կոչված լրագրական ծառայության համար հարուստները տասը հազարներ են վճարում: Կան հարուստ այրիներ, որոնք երևալու, փայլելու և երկրպագուներով շրջապատվելու կարիք են զգում: նրանց պետք է օգնել, որ իրենց անմեղ ցանկություններին հասնեն: Այսպես կարելի է թվել և ուրիշ շատ ճանապարհներ:

— Բավական հասկանալի է. այժմ կարդացեք 10-րդ հոդվածը,— խոսեց օրիորդ Քանարյանը:

— 10-րդ հոդվածը,— օրիորդ, վերաբերում է «խմբագրական խորհրդին», և նրա ներկայությամբ էլ կկարդացվի: Ժողովի քննության առաջարկելիքը այս ինը հոդվածներն էին, որոնց մասին կարող եք ձեր կարծիքները հայտնել: — Ցանկալի էր, որ ամենից առաջ պ. Սարյանի կարծիքը լսեինք այս հրահանգի մասին,— ասաց օրիորդ Քանարյանը, նայելով երիտասարդի աչքերին:

Սարյանը մի անհանգիստ շարժում արավ և կամենում էր պատասխանել, բայց Մոմճյանը առաջ անցավ:

— Պ. Սարյանը, օրիորդ, «խմբագրական խորհրդի» անդամ է,— ասաց նա,— և յուր կարծիքը միայն «խորհրդին» կհայտնե: Այժմ կարծիք հայտնել կարող եք միմիայն դուք, ժողովի անդամներդ:

Սարյանը հասկացավ, որ Մոմճյանը չէ կամենում, որ ինքը խոսե, ուստի ձայն էլ չհանեց:

Իսկ օրիորդ Քանարյանը տեղից վեր կենալով հայտարարեց ժողովի անդամներին թե՝

— Որովհետև պ. Սարյանը «խորհրդի» անդամ լինելով կարծիք չէ հայտնում, հարկավ, պ. Մոմճյանն ու Շաշյանն էլ չի. պիտի հայտնեն: Այդ դեպքում, ես կարծում եմ, մեզ

[2] Publicity — ֆր. ռեկլամ: (Ծանոթ. խմբ.):

մնում է համաձայնվել կարդացած հրահանգի ինը հոդվածների հետ և ստորագրել նրան, եթե հարկավոր է:

— Այո՛, ստորագրել հարկավոր է,— ասաց Մոմճյանը,—. բայց պետք է հարցնել, թե ժողովի մյուս անդամները ևս համաձա՞յն են, թե ոչ:

— Համաձայն ենք, համաձայն ենք,— ձայն տվին ժողովականները գրեթե միաբերան և մեկ-մեկ մոտենալով սեղանին ստորագրեցին Մոմճյանի խմբագրած հրահանգը, որի 10-րդ հոդվածը, սակայն, դեռ չէր արձանագրված:

ԺԵ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ

Խմբագրական ժողովի անգամները գոհ էին իրենց այդօրվա արած որոշումով: Միայն Սարյանը և Մոմճյանը մեծ մտատանջության մեջ էին և որպե և որպե սպասում էին ժողովի ցրվելուն: Առաջինը, նրա համար, որ Մոմճյանից բացատրություններ պահանջն այն բոլոր հարցերի մասին, որոնք Ձորաբաշի եկեղեցու ընտրության օրից սկսած մինչև այս ժողովի վերջին որպեն մտավոր տանջանք և հոգեկան վրդովմունք էին պատճառում իրեն, իսկ երկրորդը նրա համար, որ ժամ առաջ բացատրություններ տա Սարյանին հենց այն խնդիրների մասին, որոնք, ինչպես ինքը նկատում էր, անհանգստացնում էին երիտասարդին:

Երբ Ժողովականները սկսան ցրվել, Մոմճյանը խնդրեց խմբագիր Շաշյանին ընկերանալ օրիորդ Բարյանին մինչև յուր տունը, առարկելով, որ նա հեռու է բնակվում: Այս առարկությունը կարևոր էր երկու պատճառով, առաջին որ մյուս օրիորդները չգրգռվեն օրիորդ Լուսիկի դեմ և երկրորդ որ Շաշյանը ազատե յուր ներկայությունից Մոմճյանին, որ կարիք ուներ Սարյանի հետ առանց վկայի խոսելու:

Երբ վերջին երկուսը միայնական մնացին, Մոմճյանը առաջինը ընդհատեց լռությունը.

— Մենք այժմ բուն «խմբագրական խորհուրդն» ենք կազմում և կարող ենք ազատորեն խոսել,— ասաց Մոմճյանը ժպտալով,— դուք հարցեր ունեիք առաջարկելու, խնդրեմ այժմ առաջարկեցեք, որպեսզի հարկ եղած բացատրությունները տամ:

— Հարցեր, այո՛, շատ հարցեր ունիմ առաջարկելու. բայց այժմ դուք ժամանակ ունի՞ք նրանց պատասխանելու,— Հարցրեց Սարյանը:

— Այժմ ավելի՛ քան երբեք:

Սարյանը լռեց մի քանի որպե և ձեռքը դեպի ճակատը տանելով սկսեց շփել նրան, ցանկանալով կարծես որոշել թե՝ ո՞ր հարցից սկսե առաջ:

— Թույլ տվեք ինձ, պ. Մոմճյան անկեղծ լինել ձեզ հետ այնքան, որքան եմ իսկապես,— ասաց երիտասարդը,— հակառակ դեպքում ես լռելը գերադասում եմ:

— Խնդրեմ, խնդրեմ, ես ձեզ սիրում ու հարգում եմ գլխավորապես ձեր անկեղծության համար, և այդ է պատճառը, որ ես ձեզ մտերիմ բարեկամի տեղ եմ ընդունում:

— Շնորհակալ եմ. ուրեմն անկեղծությամբ էլ կխոսեմ: Այն օրից ի վեր, պ. Մոմճյան, որ ձեզ հետ ծանոթացա, շատ հավանեցի ձեզ և դեպի ձեր անձը մեծ հարգանք ու

համակրություն սկսեցի տածել: Անցան օրեր, և այդ հարգանքն՝ ու համակրությունը աճեցին: Ես ձեզմով հիանում և ոգևորվում էի. և այդ բանի համար ուրախ էի շատ, որովհետև կարիք ունեի, որ ձեզ նման մեկը իբրև կենդանի օրինակ՝ կանգնած լիներ իմ առաջ և խրախուսեր ինձ՝ առանց վհատելու դիմել դեպի այն նպատակը, որին ձգտում էի: Ես ուրեմն բախտավոր էի, որովհետև այդ օրինակը ունեի, այդ մասին մինչև անդամ գրեցի հորս ու բարեկամներիս, կամենալով նրանց ուրախացնել: Բայց... այո՛, իմ ուրախությունը երկար չտևեց: Նրան հաջորդեցին հոգսեր, մտատանջություններ...

— Եվ ե՞ս էի այդ հոգսերի ու մտատանջությունների պատճառը:

— Այո՛ դուք էիք:

— Ձեզ չեմ հասկանում:

— Գուցե մի փոքր հետո հասկանաք: Ես ձեզ ազնվասիրտ և ազնվահոգի երիտասարդ էի ճանաչում, ես կարծում էի դուք անկեղծ և անձնվեր հայրենասերի մի կատարելատիպն եք..

— Եվ այժմ ձեր կարծիքը փոխեցի՞ք իմ մասին:

— Ինչպե՞ս ասեմ... այո՛ և ոչ:

— Ավելի դրական և բնական կլիներ, եթե ասեիք այո՛ որովհետև հայերի մեջ առհասարակ հազվագյուտ են հաստատուն համոզմունք ունեցող մարդիկ և ես չեմ զարմանալ, եթե դուք ձեր երեկվա ազնիվ ճանաչված մարդուն այսօր անազնիվ անվանեք:

— Բայց եթե ես երեկ սխալված լինեմ և այսօր իմ սխալմունքը ճանաչե՞մ:

— Իսկ թե հենց այսօ՛ր լինիք սխալվո՞ւմ:

— Երանի՜ թե այդպես լիներ: Միթե կա՞ աշխարհում մարդ, որ յուր հավատը սասանված տեսնելուց ուրախանա:

— Ինչո՞ւ համար եք ձեր հավատը սասանում:

— Ես չեմ սասանողը, այլ դեպքերը, հանգամանքները, որոնց առաջ աչքերս փակել չեմ կարող:

— Ձեզ չեմ հասկանում, ավելի պարզ խոսեցեք:

— Ավելի պա՞րզ խոսեմ:

— Այո՛:

— Լավ. ուրեմն, ասացեք այժմ ինձ, պ. Մոմճյան, ո՞վ եք դուք և ինչ եք դուք,— հարցրեց Սարյանը ջերմությամբ և աչքերը սևեռեց Մոմճյանի վրա:

Վերջինս կարծես ընկճվեց նրա հայացքի առաջ, բայց վարժված լինելով թե՛ հաջող և թե՛ անհաջող դեպքում միատեսակ ժպտալու, այդ ժպիտով էլ յուր ներքին հուզմունքը վարագուրեց:

— Տարօրինակ մարդ եք և տարօրինակ հարց եք առաջարկում,— ասաց նա,— այսքան ժամանակ միասին ենք և նո՞ր եք կամենում ծանոթանալ ինձ հետ:

— Ես կարծում եմ ավելի հեշտ է տիեզերքի անսահման տարածությունը չափել, քան մարդկային սրտի խորքերը: Ինչ մեծ զարմանք է ուրեմն, որ ես այսքան ժամանակ ձեզ հետ լինելով կարողացած չլինիմ ձեզ ճանաչել:

— Ես ա՛յն եմ, ինչ որ էի մեր ծանոթության առաջին օրը, և ինչ որ ընդունել էիք մինչև այսօր:

— Ես ձեզ ազնիվ մարդ եմ ընդունել:

— ԵՎ չեք սխալվել:

— Ուրեմն բացատրեցեք, ի՞նչ բան էր Ձորաբաշի եկեղեցում կատարված ընտրությունը:

— Նա մի երեցփոխանի ընտրություն էր:

— Գիտեմ, բայց այդ ընտրության ժամանակ զեղծումներ և խարդախություններ գործ դրվեցան. մի խեղճ ծերունի բողոքեց այդ բաների դեմ, իսկ դուք, ընդհակառակը, պաշտպանեցիք:

— Այո՛, և այդ նրա համար, որ մեր ցանկացած մարդը երեցփոխ ընտրվի:

— Ուրեմն այդ զեղծումների և խարդախությունների հեղինակն էլ դուք էիք:

— Ոչ, իմ մարդիկը:

— Այդ միևնույն է, թե դուք չեք սպանել, այլ սպանողներ եք վարձել:

— Բայց ի՞նչ եք ուզում ասել դրանով:

— Ուզում եմ ասել, որ այդ տեսակ գործեր անող մարդը իրավունք չունի իրեն ազնիվ անվանելու:

— Ես ձեզ վրա չեմ բարկանալ, ինչ խոսքերով էլ որ չվիրավորեք ինձ. չեմ բարկանալ մինչև այն օրը, երբ դուք, վերջապես, կկարողանաք ճանաչել և գնահատել ինձ: Բայց այժմեն իսկ մի խորհուրդ կտամ ձեզ. մի՛ շտապեք վճիռներ արձակել և մի՛ դատապարտեք մարդկանց դեռևս նրանց լավ չճանաչած: Չէ՞ որ հենց այս րոպեին ասացիք թե՝ ավելի հեշտ է տիեզերքի անսահման տարածությունը չափել, քան մարդկային սրտի խորքերը:

— Օգնեցեք ինձ ուրեմն ճանաչել ձեզ. հասկանալ ձեր գործերը և գնահատել: Ձեր վերաբերմամբ ես թարթափում եմ մի մութ ու խավար մթնոլորտի մեջ. իմ աչքի առաջ զանազան երևույթներ են պատկերանում, ես ձեռքս պարզում եմ նրանց բռնելու և շոշափելու համար, սակայն նրանք անհետանում են անդարձ:

Մոմճյանը ժպտաց:

— Դուք գուցե ծիծաղում եք իմ միամտության վրա,— շարունակեց երիտասարդը,— բայց հավատացեք, որ ես ի սրտե վշտանում եմ, երբ ազնիվ ու բարի ճանաչածս մարդու անազնիվ ու չար լինելն եմ տեսնում:

— Գիտե՞ք, բարեկամ, իզուր են Լոյոլային վերագրում այն նշանավոր խոսքը թե՛ «նպատակը սրբում է միջոցը»: Աշխարհի ստեղծմանից մինչև այսօր բոլոր ազգերը, տերությունները, իշխանները, ժողովրդի պետերն ու առաջնորդները մեծամեծ գործեր կատարելու, մեծամեծ նպատակների հասնելու համար միևնույն մտքովն են

առաջնորդվել, միևնույն ծրագրով են գործել: Եթե պատմությունը թերթենք, հազարավոր օրինակներ կգտնենք, որոնք այս ճշմարտությունը կհաստատեն:

«Այս այսպես լինելուց ետ, շատ բնական է, որ մեզ նման աննշան մարդիկն էլ, որոնք կոչումն ունին մի ընկած ազգի հառաջադիմության համար գործելու և աշխատելու, միևնույն խոսքն ունենան իրենց նշանաբանը թե՝ «նպատակը սրբում է միջոցը»:

«Ի՞նչ է մեր նպատակը՝ զարգանալ, հառաջադիմել, բարօրության հասնել: Կարո՞ղ է ժողովուրդը ինքն իրեն հառաջադիմել. ո՛չ. նրան հարկավոր են առաջնորդներ: Բայց կարո՞ղ են այդ առաջնորդները գործել, օգտակար լինել ժողովրդին ա՛յն պայմանների և հանգամանքների մեջ, որոնցով շրջապատված է այն դարերից ի վեր. ո՛չ. այդ պայմաններն ու հանգամանքները պետք է կերպարանափոխվել կամ ոչնչացել: Բայց հնարավո՞ր է այդ միանգամից անել, ո՛չ, պետք է աստիճանաբար անել, կասեք դուք: Բայց նոր ժամանակի ոգին հնությունները կերպարանափոխելու դեպքում աստիճանաբար գործելը քնացնող, թմրացնող և կազմալուծող միջոց է համարում: Նոր Ժամանակի ոգին չի կամենում, որ մեզ նման երիտասարդ ուժերը անգործ ու անօգուտ նստեն՝ թմրած ժողովրդի արթնանալուն սպասելով: Ահա՛ այս պատճառով է, որ մենք գործում ենք «նպատակը սրբում է միջոցը» նշանաբանի համաձայն:

«Դուք, երևի զարմացաք, որ Ձորաբաշի եկեղեցում հիսուներեք հոգի միաձայն Սոսոյի տղա Ծղալոբին ձայն տվին. այսինքն զարմացաք և գուցե զայրացաք, որ մենք այդ մարդկանց պատրաստել էինք այդ ձևով գործելու: Դուք պատրաստության այդ ձևը, իհարկե, անվանում եք անազնվություն, խարդախություն և այլն, բայց նոր ժամանակի ոգին այդպես չէ հասկանում: Նա ասում է՝ մեզ հարկավոր էր, որ Սոսոյի տղա Ծղալոբը Ձորաբաշի եկեղեցում երեցփոխ ընտրվի: Մինչև որ մենք աստիճանաբար գործելով՝ կհասկացնենք նրա ընտրողներին մեր հեռավոր նպատակների զորությունը և գիտակցաբար գործել կսովորեցնեինք նրանց, տասնյակ տարիներ կանցնեին, Սոսոյի տղան կմեռներ, իսկ ընտրողները կթաղեին նրան: Բայց նոր ժամանակի հոգվով գործելով՝ մենք ընտրողներին գրավեցինք, ինչ միջոցով և ճանապարհով որ հնարավոր գտանք, նրանց մեր ձեռքի գործիքը դարձրինք և կատարել տվինք ա՛յն, ինչ որ մենք բարի և օգտակար էինք համարում: Դրա համար հարկավոր չեղան ո՛չ ժամանակի կորուստ, ո՛չ մեծ աշխատություններ, ոչ զոհաբերություններ:

— Բայց մի՞թե մի տգետ, մի ապուշ արհեստավոր երեցփոխ ընտրելով դուք բարի գործ կատարեցիք:

— Եթե հարցը արժանավոր երեցփոխ ընտրելուն է վերաբերում, ո՛չ. արժանավոր երեցփոխ չընտրեցինք, բայց ախար մեզ, նոր ժամանակի գործողներիս, երեցփոխի արժանավոր կամ անարժան լինելը չէ հետաքրքրում. մենք գլուխ չենք ցավեցնում այն բանի համար թե՝ եկեղեցին պայծառ են պահում: պահում, թև՞ խավար. թե ջահերը փայլո՞ւմ են, թե՞ ոչ. թե ժողովուրդը հաճախո՞ւմ է եկեղեցի, թե՞ սառել է նրանից և այլն: Մեզ հետաքրքրողը երեցփոխանի պաշտոնն է, որ կա և որին ոչնչացնել չի կարելի, այդ երեցփոխանը այս և այն հասարակական գործին միջամտում է, ազդեցություն ունի քահանաների և թաղական ժողովրդի վրա. հետևապես ցանկալի է, որ մեր կուսակիցը և բարեկամը լինի:

— Թող այդպես լինի. հենց այդ տեսակետից էլ նայեցեք գործի վրա. բայց արժանավոր, խելք ունեցող և գործել իմացող մարդ ընտրեցեք, որ թե ձեզ համար լինի օգտակար և թե եկեղեցու համար:

— Սխալվում եք, բարեկամ՝ խելք ունեցողը մեր մարդը չի լինիլ, այլ յուր անձի մարդը, նա մեր ցույց տված ճանապարհով չի գործիլ, այլ յուր կամեցածով: Միևնույն ժամանակ եկեղեցուն օգտակար մարդը մեզ չի կարող օգտակար լինել որովհետև շատ

դեպքերում մեր և եկեղեցու շահերն ընդհարվում են միմյանց: Մեզ հարկավոր էր մի Սոսոյի տղա և ահա՛ նրան էլ ընտրեցինք:

Սարյանը լուռ լսում էր Մոմճյանի բացատրությունները, բայց կարծես ոչինչ չէր հասկանում: Երբ վերջինս յուր խոսքն ավարտեց, Սարյանը դեռ ակնապիշ նայում էր նրան՝ սպասելով ուրիշ բացատրությունների:

Մոմճյանը, ընդհակառակը, կարծելով որ ամեն ինչ տեղն ու տեղը հասկացրեց և հավատալով, որ երիտասարդի լռությունը յուր համոզվելու նշանն է, ժպտալով հարցրեց:

— Այժմ արդեն գոհ եք իմ բացատրություններից, այնպես չէ՞:

— Ձեր բացատրությունների՞ց. ոչ. ես դեռ ոչինչ չեմ հասկացել,— պատասխանեց Սարյանը:

— Ոչինչ չե՞ք հասկացել,— զարմացած բացականչեց Մոմճյանը:

— Այո՛, ոչինչ:

— Այդ շատ զարմանալի է. պետք է կարծել ուրեմն, որ աշակերտ եղած ժամանակ շատ նեղություններ եք պատճառել ձեր վարժապետներին,— հեգնական ժպիտով նկատեց Մոմճյանը:

— Իմ վարժապետի՞ն. օ՛հ, ոչ: Իմ վարժապետին ես ոչ մի նեղություն չեմ պատճառել,— ջերմությամբ հարեց Սարյանը,— որովհետև նրա խոսքերը, նրա բացատրությունները միշտ իմ սրտին սիրելի, իմ հոգուն ընտանի են եղել: Որքան էլ նա խրթին բառերով, այլաբանական ձևերով և վարագուրված ակնարկություններով արտահայտեր յուր միտքը, այսուամենայնիվ ես կհասկանայի, որովհետև, ինչպես ասացի. նա իմ սրտի և հոգու հետ էր խոսում:

— Իսկ ե՛ս, իսկ իմ խոսքե՞րը...

— Օ՛յ, ձեր խոսքերը... թույլ տվեք ասել, պարոն, որ ձեր խոսքերը ինձ համար խորթ, օտար և անհարազատ մտքեր են պարունակում իրենց մեջ. ես նրանց հասկանալ չեմ կարող:

— Շատ բնական է, որովհետև գավառացի եք և հայոց թեմական դպրոցի աշակերտ: Ձեր վարժապետը, անշուշտ, խավար ժամանակի ծնունդներից է, մանավանդ, սխոլաստիկական փտած շկոլայի ստրուկներից մեկն է եղել: Նա չէր կարող ծանոթացնել ձեզ նոր ժամանակի ոգու և լուսավորության հետ. չէր կարող վարժեցնել ձեզ չփտած մտքեր լսելու և ըմբռնելու և, մանավանդ, հառաջադիմական ուղղության խորհուրդը հասկանալու: Բնությունը ձեզ շնորհք և ընդունակություն է տվել, բայց խավարի որդիքը արգելել են ձեզ այդ շնորհքից և ընդունակությունից օգտվելու, որովհետև ձեր ուղեղը լցրել են հին ու մաշված մտքերով, նախապաշարմունքներով: Ես սրտանց ցավում եմ ձեզ համար:

— Շնորհակալ եմ ձեր ցավակցության համար,— մեղմով ժպտալով պատասխանեց Սարյանը,— եթե, արդարև, իմ վարժապետը նկարագրածդ մարդն է եղել և յուր խավարամտությամբ արգելք է դարձել իմ մտքերի զարգանալուն, այդ իհարկե, ցավալի է: Բայց ես դեռ երիտասարդ եմ և կարող եմ շատ բան սովորել: «Լավ է ուշ, քան երբեք», ասում է առածը: Հետևապես ձեզ նման լուսամիտ երիտասարդների բարեկամությունից և խորհուրդներից ես դեռ կարող եմ օգտվել: Ասացեք ինձ ուրեմն,

որո՞նք են նոր ժամանակի ոգին, լուսավորությունը, ազատ մտքերը, հառաջադիմական ուղղությունը, որոնց ես չեմ կարողանում ըմբռնել:

— Արդեն բացատրեցի ձեզ:

— Բացատրեցի՞ք: Լավ: Կնշանակե նոր ժամանակի ոգի, լուսավորություն, ազատ մտքեր և հառաջադիմություն ասելով մենք պիտի հասկանանք մտածելու և գործելու այնպիսի եղանակ, որով մարդիկ որոշ նպատակների հասնելու համար բռնաբարում են ժողովրդի և անհատի կամքը, խիղճը, ազատությունը և արժանապատվությունը. խախտում են նրա հավատը դեպի աստված և մարդիկ, ապականում են նրա բարքը, վարքը և բարոյական սովորությունները...

— Ես այդպիսի բան չասացի:

— Դուք այդպիսի բան չասացիք, բայց այդպես գործեցիք և ձեր այդպիսի գործը նոր ժամանակի ոգու և լուսավորության արդյունք անվանեցիք:

— Տարօրինակ եզրակացության եք եկել:

— Ձեր գործը տեսնողը և բացատրությունները լսողը ուրիշ եզրակացության գալ չէր կարող:

— Բայց ինչո՞վ ենք մենք ժողովրդի խիղճը և ազատությունը բռնաբարում, ինչո՞վ ենք նրա հավատը խախտում կամ բարքը ապականում:

— Նրանով, որ օգուտ քաղելով ամբոխի տգիտությունից՝ պաշարում եք նրա միտքը սուտ և սխալ տեղեկություններով, ծածկում եք նրա աչքերից ճշմարտությունն ու արժանիքը, սիրելի եք դարձնում նրան անպիտանն ու վնասակարը և այդպիսով գործել և ընդունել եք տալիս նրան այն, ինչ որ ինքը չգիտե. չէ հասկանում, չէ ճանաչում: Այսպես վարվիլը արդյոք Ժողովրդի խիղճը և ազատությունը բռնաբարել չի՞ նշանակում:

«Այնուհետև այդ միևնույն ժողովրդին դուք սովորեցնում եք մտնել աստուծո տունը, այնտեղ, ուր նա սովոր էր մտնել ուղիղ սրտով, հավատով, երկյուղածությամբ, և կատարել եկեղեցու բարեկարգության վերաբերյալ մի գործ: Բայց ձեր ցանկության և պատվիրանի համաձայն նա այդ գործը կատարում է խարդախությամբ, ստելով, խաբելով, ուրանալով... Այդ հանցանքները ժողովրդի մարդը գործում է աստուծո տան մեջ ազատ-համարձակ, առանց նույնիսկ աստծուց վախենալու և մարդկանցից ամաչելու: Եվ այս երևույթը , որ բարեպաշտ ու բարոյական մարդկանց վրդովեցնում է, ձեզ, ընդհակառակը, զվարճություն է պատճառում:

«Արդ, այս օրինակ վարմունքը ժողովրդի հավատը կործանել, կամ նրա վարքն ու բարքը ապականել չի նշանակում»: Մոմճյանը մի քանի րոպե աչքերը սեղանին սևեռած մնաց լուռ, ապա գլուխը բարձրացնելով, ճակատը շփելով և անտարբեր եղանակով աթոռի վրա ձգվելով պատասխանեց.

— Եթե ձեր տեսակետից նայենք գործի վրա, մենք հանցավորներ ենք: Բայց վաղուց ձեր տեսակետն ու հայացքները հնացել են: Նոր ժամանակի ոգին ժողովրդի դրական բարօրության մասին է մտածում. հետևապես անօգուտ բարոյականը նշանակություն չունի նրա համար: Մենք էլ, նոր ժամանակի գործողներս, պարտավոր ենք նոր ժամանակի ոգուն հետևելու: Հին դարերում ժողովրդի բարոյականը պահպանում էին գերբնական հոգիների մասին ունեցած հավատալիքների զորությամբ, իսկ նոր դարում աշխատում են պահպանել դեպի եղբայրն ու ընկերն ունենալիք փոխադարձ սիրո և հարգանքի զորությամբ: Ո՞ր կրոնն է ավելի հարգելի. հի՞նը, թե՞ նորը: Գուցե

հինը սուրբ է ձեզ համար, բայց մենք նորին ենք հետևում: Երկու ճանապարհներն էլ դեպի Հռոմ են տանում: Զանազանությունն այն է, որ հին ճանապարհը շատ երկար է և ոլոր-մոլոր ուղղությամբ է առաջանում, մինչդեռ նորը՝ կարճ է և ուղիղ: Ամենահասարակ խելք ունեցողն էլ կասե, որ ավելի լավ է նոր ճանապարհով գնալ, քան հին:

— Այո՛ , ամենահասարակ խելք ունեցողը, որը պատրաստ խոսքերն ու մտքերն ընդունում է իբրև պատգամներ, առանց նրանց լավն ու վատը քննել կարողանալու: Բայց ընտիր խելք ունեցողը, զարգացած և ողջամիտ գլուխը կծիծաղե ձեր այդ վարդապետության վրա: Դեպի եղբայրն ու ընկերը սեր և հարգանք ունենալը հին կրոնի գլխավոր և ընտիր հավատալիքներից մեկն է:

«Սիրեսցես զընկեր քո, իբրև զանձն քո»,— ասում է տասնաբանյա պատվիրանը:

«Այս է պատվէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս», Յայսմ զիտասին ամենեքեան, թէ աշակերտ իմ էք, եթէ սիրեսցէք զմիմեանս», «Եւ որպէս կամէք թէ արասցէն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք և դուք նոցա»: Այս և սրա նման շատ պատվերներ էլ տալիս է մեզ եկեղեցու հիմնադիրը: Ուրեմն ձեր նոր ժամանակի ոգին նոր գյուտ չէ արել. նա կրկնում է հինը: Իսկ դուք, նոր ժամանակի գործողներդ՝ ժողովրդի տգիտությունից օգուտ քաղելով՝ հինը ծախում եք նրան իբրև նոր ապրանք:

Այդ մոլորեցնելու և հիմարացնելու մի ձև է, որին, ինչպես երևում է, այնքան եք վարժվել, որ ինձ նման մարդուն էլ կամենում եք սխալեցնել. չմտածելով թե՝ ախար մեր դպրանոցում թե ազատ մտքերի և հառաջադիմական ուղղության հետ ծանոթացրած չլինեին մեզ, գոնե ճշմարիտ քրիստոնեության հետ ծանոթացրած կլինեին: Ուրեմն ի՞նչ միտք ուներ կրոնի կամ բարոյականի անունով վարագուրել իմ առաջ ձեր վարմունքը:

— Ա՛յն, որ ձեր աշխարհայեցողությունը շարունակ այդ հին առանցքի շուրջն է պտտվում:

— Հասկանում եմ: Ուրեմն ես որ ասում էի թե՝ ձեր խոսքերը ինձ համար խորթ, օտար և անհարազատ մտքեր են պարունակում իրենց մեջ, ի նկատի ունեի հենց ձեր այդ մոլար, այլանդակ և անկերպարան վարդապետությունը, որով աշխատում եք գայթակղեցնել ամեն մի պատահողին: Բայց խնդրում եմ, մի՛ խոսեք, ինձ հետ այլևս կրոնի և բարոյականի մասին. մի՛ աշխատեք շփոթել իմ միտքը այդ բառերով: Ես արդեն հասկացել եմ ձեզ: Ձորաբաշի ընտրությունը, որին ականատես եղա, կուսակցություն կազմելու մասին ձեր խմբագրած հրահանգը, որը մի ժամ առաջ կարդացիք՝ արդեն համոզել են ինձ, որ դուք կրոնի և բարոյականի մասին մտածող ու հոգացող մարդ չեք: Անկեղծ եղեք ուրեմն և խոստովանեցեք ինձ. ի՞նչ է ձեր նպատակը, կամ դեպի ո՞ւր եք դիմում դուք:

— Ես արդեն ասացի ձեզ: Մեր նպատակը զարգանալ, հառաջադիմել և բարօրության հասնելն է: Այս նպատակին ձգտելով մենք դիմում ենք դեպի ցանկալի ապագան:

— Բայց ինչո՞ւ գործելու այս եղանակն եք ընտրել: Ինչո՞ւ Ժողովուրդը մոլորեցնելով, նրա բարքն ու վարքը ապականելով եք առաջ գնում:

— Որպեսզի այդ բարքի ու վարքի հետ միասին քանդենք, ավերենք և այն թումբերն ու պատվարները, որոնք արգելք են լինում ժողովրդի հառաջադիմության:

— Բայց Հին սերունդը ձեր երազած հառաջադիմությանը հասնել չէ կարող, նրա կյանքը կարճ է, ինչու՞ է իզուր տեղը խախտում եք նրա հավատը, հույսը, որոնք նրա կյանքի միակ լուսատու ճրագներն են եղած, որոնցմով նա ապրել, մխիթարվել է, որոնք

նրա կյանքի դառնությունները քաղցրացրել են և ձգում եք նրան խավարի և անհայտության մեջ:

— Եթե մենք ներկայումս ապրող հին սերնդի վախճանին սպասենք, նոր սերունդը կսկսի հնանալ, երկրորդ սերունդին սպասելով երրորդը կհնանա և այսպես մինչև վերջը: Բայց որպեսզի շուտով ցանկալի նպատակին հասնենք, մի սերունդի կրոնը, բարոյականը և ավանդական սովորությունները պիտի զոհենք ապագային:

— Բայց մի՞թե դրանք արգելք են լինում իրագործելու ձեր այն նպատակները, որոնց դուք ազատ, լուսավոր կամ առաջադիմական եք անվանում:

— Եթե հին խելքով և նախապաշարմունքով դատենք՝ ոչ թե ազատ ուղեղով և նոր ժամանակի հասկացությամբ դատենք՝ այո՛:

Սարյանը լռեց և էլ հարցեր չէր առաջարկում: Մենտոր-Մոմճյանը այժմ նրա աչքում երևում էր իբրև մի անխիղճ հերետիկոս, որից ժամ առաջ փախչելը նա անհրաժեշտ պարտավորություն էր համարում: Երիտասարդը մինչև անգամ մտածում էր հայտնել Մոմճյանին, որ ինքը հոգով, սրտով, հակառակ լինելով նրա գաղափարներին և գործելու եղանակին, այդ օրվանից իսկ հրաժարվում է իրեն գործակցելուց և թե «Փնջիկ»-ին աշխատակցելուց: Բայց իբրև հեռատես հայ, մտածելով, որ այդ հայտնությունը նյութականի կողմից ծանր կացության մեջ պիտի դնե իրեն (ըստ որում օտար քաղաքում գտնվելով և ունեցածը արդեն սպառած լինելով, ապրում էր խմբագրության հաշվով), որոշեց մի առ ժամանակ լռել և համբերությամբ հնազանդվել յուր ճակատագրին, մինչև որ մի որևէ հաջող հանգամանք օգներ իրեն ազատվելու այդ ատելի շրջանից, ուր ձգել էր իրեն յուր արդար միամտությունը:

Վերջին միտքը այնքան էր նախապաշարել Սարյանին, որ երբ Մոմճյանը նրա մտախոհ լռությունը տեսնելով հարցրեց թե՝ այժմ ի՞նչ կարծիք ունիք իմ հայացքների մասին, համաձայնո՞ւմ եք ինձ հետ, թե՞ ոչ, երիտասարդը մեքենայաբար պատասխանեց.

— Համաձայնվում եմ: Մոմճյանը ուրախությունից վեր թռավ աթոռից և բարեկամաբար նրա ձեռքը բռնելով բացականչեց.

— Շնորհակալ եմ. իմ հույսերը արդարացրիք: Ձեզ հետ միասին ես այսուհետև սարեր կշարժեմ:

Սարյանը գիտակցության եկավ, յուր սխալը հասկացավ, բայց չկամեցավ Մոմճյանի ուրախությունը խանգարել:

Վերջինս աթոռը առաջ քաշելով նստեց Սարյանի կողքին և մի տեսակ գգվող ու փաղաքշող ձայնով յուր խոսքը շարունակեց.

— Այժմ, սիրելիս, մեր խմբագրական խորհուրդը ավարտելու համար մնում է բացատրել երկու կետ. առաջին այն՝ թե ինչու ժողովի ժամանակ, երբ դուք խոսել սկսեցիք, ես դիտմամբ ընդհատեցի ձեզ և երկրորդ թե ո՞րն էր իմ խմբագրած հրահանգի 10-րդ հոդվածը, որը ես խմբագրական ժողովի առաջ չկարդացի:

— Եվ իրավ, 10-րդ հոդվածը խոստացաք ինձ հետ կարդալ կարծեմ,— քնից արթնացած խոսեց Սարյանը:

— Այո՛, իսկույն, իսկույն:

Բայց նախ առաջին կետի մասին խոսենք:

Ձեզ ընդհատելուս պատճառը, բարեկամ, այն էր, որ ես դեռ չէի ծանոթացրել ձեզ մեր ժողովի անդամների հետ այնպես, ինչպես որ վայել էր: Ամեն անգամ, որ նրանցից մեկը կամ մյուսը խոսում էր, ես տեսնում էի, թե ինչպես ծաղրական ժպիտները խաղում էին ձեր շրթունքների վրա: Ձեզ հետ միասին ծիծաղում էի և ես, բայց խոսելու և բացատրություններ տալու տեղը չէր: Այժմ ձեզ պիտի խոստովանեմ, որ այդ միամիտ, տգետ և անփորձ երեխաներին ես դիտմամբ եմ հավաքում այստեղ: Պատճառը հարգելի է: Նրանցից ամեն մինը յուր տգիտության համահավասար փառասիրություն ունի: Ես նրանց «Փնջիկ»-ի աշխատակիցներ եմ անվանում, թեպետ նրանցից և ոչ մեկը երկու տող բան գրել չէ կարող. բայց աշխատակից անունը գգվում է նրանց անմիտ փառասիրությունը. և նրանք թերթի համար խելագարի պես աշխատում են: Նրանցից յուրաքանչյուրը ունի ազգականների ու բարեկամների ահագին շրջան, որոնց միջից շարունակ բաժանորդներ են որոնում մեզ համար: Նրանք ունին և ընկերներ ու ընկերուհիներ, որոնց հետզհետե գրավում են դեպի մեզ և նրանց էլ նույն ծառայությունն են անել տալիս: Դրանք մեր ներքին կառավարության մեջ ձրիաբար գործակատարի պաշտոն են կատարում և միակ ռոճիկը, որ ստանում են, այդ աշխատակից անունն է, որ ես տալիս եմ նրանց:

Սարյանը ծիծաղեց:

— Հապա, այդ էր պատճառը, որ ես չկամեցա նրանց ներկայությամբ վեճի բռնվել ձեզ հետ: Ախար նրանք մեր խելոք մտքերի արժեքը չէին կարող հասկանալ. մեջտեղ այն վնասը կունենայինք, որ նրանց համարումը կպակասեր դեպի ինձ կամ դեպի ձեզ: Այժմ որ այս գաղտնիքը բացատրեցի ձեզ, հարկավ, էլ զգուշանալու կարիք չեմ ունենալ:

«Ինչ մեր հրահանգի 10-րդ հոդվածին է վերաբերում, այդ այն է, բարեկամ, որ թե՛ «Փնջիկ» թերթը և թե՛ նրա կուսակցություն ունին միայն մի առաջնորդ և մի դրոշակիր: Դրանց անպայման պիտի հետևեն և հնազանդե թե՛ թերթը յուր աշխատակիցներով և թե՛ կուսակցական մարմինը յուր բազմաթիվ ու բազմազան անդամներով:

— Ո՞վ է առաջնորդը և ո՞վ դրոշակիրը,— Հարցրեց Սարյանը:

— Առաջնորդը ես եմ, իսկ դրոշակիրը՝ դուք...

Մոմճյանը վերջին խոսքը հանդիսավոր եղանակով արտասանելուց ետ, հարցրեց՝ համաձա՞յն եք:

— Համաձայն եմ...— ասաց Սարյանը այնպիսի մի ձայնով, որ կարծես ատած փեսացուի հետ պսակվող հարսն էր խոսողը: Մոմճյանը մտերմաբար բռնեց յուր դրոշակրի ձեռը և ջերմությամբ սեղմելով բացականչեց:

— Ապրենք և գործենք միասին, ներկան թող մերը լինի, ապագան մեր հաջորդներինը:

Այս հանդիսավոր բացականչությունից հետո առաջնորդ Մոմճյանը ողջունեց յուր նորընծա դրոշակրին և հեռացավ:

ԺԶ

ԱՆԼՈՒԾԵԼԻ ՀԱՆԳՈՒՅՑԸ ԼՈՒԾՎՈՒՄ Է

Անցան մի քանի օրեր: Վահանը առաջվա պես աշխատում էր «Փնջիկ»-ի խմբագրատանը, բայց միշտ տխուր և մտախոհ: Տիկին Մարթայի գուրգուրանքը և

օրիորդ Շուշանի սիրապատար ծառայություններն անգամ անկարող էին լինում ցրել ա՛յն վիշտը, որը պատճառել էր նրա քնքուշ սրտին վերջին օրերի հիասթափությունը: Այն միտքը թե՝ յուր նյութական անապահով վիճակը ստիպում է իրեն դեռ երկար աշխատել յուր չսիրած շրջանում, ավելի ևս տանջում էր նրան:

Այժմ միայն նա խոստովանեց, որ յուր հայրը իրավունք ուներ խորհուրդ տալու իրեն նախ ծառայության մտնել՝ ասելով որ «կարոտությունը ամեն երկրում էլ ճնշում է մարդկանց և նրանց առաջ գնալու ճանապարհները փակում...»: Թեպետ դեռ ուշ չէր և այժմ էլ նա կարող էր ծառայության մտնել, բայց հորը գրած յուր այն նամակը, որի մեջ պարծենում էր թե՝ «գոհ եմ, որ իմ երիտասարդական անփորձությունը տեղի չտվավ ձեր խոհական փորձառության, հակառակ դեպքում ես տասնյակ տարիներով ետ կմնայի և գործելու գեղեցիկ ասպարեզը փակ կմնար իմ առաջ...», այն խոսքերը թե՝ «ես չսխալվեցա, Թիֆլիս մտնելու երրորդ օրն արդեն իմ առաջ բացվեցավ գործելու ասպարեզ և ընդնմին առաջարկվեց ինձ արդյունավոր պաշտոն և այլն», ստիպում էին Վահանին կրել և համբերել: Ներքին ինքնասիրությունը թույլ չէր տալիս նրան գործով խոստովանել յուր անփորձությունը և այն զղջումը, որին ենթարկվել էր այդքան կարճ միջոցում: Մի օր այս մտքերի մեջ խորասուզված նստած էր Վահանը յուր սենյակում, երբ օրիորդ Շուշանը ներս մտավ ձեռքին մի ծրար:

— Ձեզ մի նամակ եմ բերում,— ասաց նա,— որը անշուշտ կնոջ կամ աղջկա գրած է, եթե ձեր քույրը չլինի գրած, պետք է չարաչար...— օրիորդը չկարողացավ խոսքը ավարտել:

— Ո՞ւր է, տվեք տեսնեմ,— տեղից վեր թռչելով ասաց Վահանը և նամակը գրեթե խլեց օրիորդի ձեռքից:

— Կամաց. ի՞նչ եք շտապում. նամակ ստանալու մեջ է՞լ եռանդ է հարկավոր:

— Եռանդ ամեն բանի մեջ է հարկավոր. բայց այս նամակը... օ՜հ, շնորհակալ եմ, ինչպե՜ս անհամբերությամբ սպասում էի...— ասաց երիտասարդը և գրեթե դողացող ձեռքերով սկսեց ծրարը բանել:

— Ձեր քրոջից չէ՞,— հետաքրքրությամբ հարցրեց Շուշանը:

— Որտեղի՞ց գիտեք, որ աղջկա գրած է,— հարցրեց Վահանը աչքերը նամակի վրայից չհեռացնելով:

— Ծրարի վրա գրածից ճանաչեցի. աղջկա գրած տառերը հատ-հատ և նիհար են լինում:

— Այո՜, աղջկա գրած է, բայց իմ քրոջից չէ,— ժպտալով պատասխանեց Վահանը և շարունակեց նամակը կարդալ:

— Աղջկա գրած է, բայց ձեր քրոջից չէ՞...— հարցրեց կրկին օրիորդը և մի քայլ առաջանալով սկսեց նախանձոտ աչքերով դիտել նամակը, աշխատելով իմանալ, թե ո՞վ է այն աղջիկը, որ յուր փեսացուին նամակ է գրում:

Փակագծերի մեջ պիտի ասենք, որ վերջին օրերը օրիորդը կատարելապես համոզվել էր, որ Վահանը արդեն յուր սեփականությունն է, թեպետ երիտասարդը քնքուշ ու քաղաքավար հարաբերությունից զատ ուրիշ բանով առիթ չէր տվել օրիորդին այդ սիրելի համոզմունքին գալու:

— Այո՜, աղջկա գրած է...— մեքենայաբար կրկնեց երիտասարդը և շարունակեց ընթերցումը:

— Բայց ո՞վ է այդ աղջիկը, ձեր ազգակա՞նն է:

Երիտասարդը չպատասխանեց. նա զբաղված էր հետաքրքիր ընթերցանությամբ, որից յուր դեմքի գույնը զանազան փոփոխություններ էր ստանում. մերթ պարզվում, պայծառանում էր, մերթ մթագնում կամ թեթև շառագունում:

— Ուրեմն ինձ չե՞ք կարող ասել, թե ո՞վ է աղջիկը,— հարցրեց կրկին Շուշանը:

— Այս աղջի՞կը...— մեքենայաբար շշնջաց Վահանը՝ ընթերցումը շարունակելով:

— Այո՛, այդ աղջիկը:

Երիտասարդը լուռ էր:

— Հապա ասացեք, ո՞վ է այդ աղջիկը:

— Իսկույն:

Օրիորդը համբերությունից դուրս էր գալիս, բայց չէր համարձակվում ավելի թախանձել:

Վերջապես Վահանը նամակը ավարտեց և ուրախ ու ժպտադեմ ծալելով նրան ծոցը դրավ:

— Այժմ հո կարո՞ղ եք ասել, թե ով է այդ աղջիկը:

— Այո՛, այո՛, կարող եմ ասել, բայց դուք ինչո՞ւ այդքան հետաքրքրվում եք:

— Հետաքրքրվում եմ նրա համար, որ եթե... բայց ինչպե՞ս ասեմ, առաջ հայտնեցեք տեսնեմ, թե ո՞վ է այդ աղջիկը:

— Ենթադրենք թե անունը ասացի. դուք հո նրան չեք կարող ճանաչել:

— Բայց նա ձեր ազգակա՞նն է, թե օտար է:

— Ա՞յդ ինչու հարկավոր է ձեզ իմանալ:

— Եթե ձեր ազգականը չլինի...

— Ի՞նչ:

— Չարաչար կնախանձեմ...— արագ արտասանեց Շուշանը:

— Կնախանձե՞ք...— զարմացած, բայց լուրջ եղանակով հարցրեց երիտասարդը:

— Այո՛, կնախանձեմ. մի՞թե չգիտեք որ...

— Ի՞նչ:

— Որ ես...

— Դուք ի՞նչ:

— Բայց մի՞թե իրավունք կտաք ասելու:

— Խնդրեմ, խնդրեմ, խոսեցեք ազատ, ինչ կամենում եք: — Որ էս սիրում եմ ձեզ...— արտասանեց օրիորդը աչքերը գետին խոնարհելով և մինչև ականջները շառագունելով:

Վահանը մնաց ապշած և աչքերը օրիորդի վրա հառած՝ չգիտեր ինչ պատասխանել: Շուշանը նույնպես լուռ էր. նա սեղանի կողքին հենված մեքենայաբար քերում էր եղունգներով նրա երեսը կամ մահուդի վրա մատերով շրջանակներ էր նկարում: Երկար լռությունից հետո վերջապես Վահանը նկատեց:

— Ձեր հայտնությունը, օրիորդ, անսպաս նորություն էր ինձ համար:

— Նորությո՞ւն,— հարցրեց վերջինս աչքերը սեղանից չհեռացնելով:

— Այո, կատարյալ նորություն:

— Ցավում եմ. բայց ես կարծում էի, որ դուք այդ արդեն գիտեք:

— Ոչ, օրիորդ, եթե գիտենայի, անկեղծորեն կխնդրեի ձեզ, որ այդպիսի զգացմունքներ չտածեք ինձ համար:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես արժանի չեմ ձեր այդ օրինակ մտերմությանը:

— Թե որքան արժանի եք, այդ ինձ թողեք դատելու: Դուք բուն պատճառը հայտնեցեք, կեղծելը ձեզ չի սազում:

— Բուն պատճառը:

— Այո՛:

— Բուն պատճառը, օրիորդ, այն է, որ եթե դուք մինչև անգամ խելագարված սիրելու լինիք ինձ, դարձյալ ես չեմ կարող ձեր զգացմունքները բաժանել...

— Այ, հիմա անկեղծ եք խոսում: Արդարև, ձեզ կարող էր գրավել մի շատ գեղեցիկ, հարուստ, զարգացած և ամեն բանով երևելի աղջիկ, բայց ե՞ս... իհարկե, ինձ նման խեղճ աղջիկը ո՞ւմ կարող է գրավել...— այս խոսքերի հետ օրիորդի աչքերը արտասուքով լցվեցան և նա երեսը շուռ տվավ դեպի պատուհանը, որպեսզի երիտասարդը յուր արտասուքը չտեսնե:

— Սխալվում եք, օրիորդ, շատ եք սխալվում. դուք մի ազնիվ աղջիկ եք, և շատերը կարող են ձեզ սիրել: Ամենալավ երիտասարդի համար դուք արժանավոր հարսնացու եք: Ես ևս ինձ բախտավոր կհամարեի, եթե ձեզ սիրելու իրավունք ունենայի...

— Իրավո՞ւնք...

— Այո՛:

— Ո՞վ է այդ իրավունքը խլում ձեզանից հարցրեց օրիորդը աչքերը երիտասարդի վրա սևեռելով:

— Նա, ով այս նամակը գրել է ինձ,— պատասխանեց Վահանը ձեռքով ցույց տալով ծոցը, ուր գտնվում էր նամակը:

— Դուք ուրեմն նշանվա՞ծ եք:

— Ոչ. բայց եթե աստված կամենա, կնշանվենք:

— Ո՞վ է այդ աղջիկը,

— Մի ազնիվ հոգի, որ մի օր իմ աշակերտուհին էր:

— Դուք ուրեմն սիրում եք նրան:

— Ես նրան պաշտում եմ. նա իմ սրտի թագուհին է,— եռանդով պատասխանեց երիտասարդը:

— Օհ, մի՛ ասեք այդ բանը, գոնե մի տանջեք ինձ,— վշտահար նկատեց օրիորդը և երեսը շուռ տվավ նրանից:

Վահանը զգաց յուր սխալը, բայց էլ ուղղել չէր կարող:

— Ներեցեք ինձ, օրիորդ, ես ակամա ձեր քնքուշ սիրտը վշտացրի,— ասաց նա:

Շուշանը չպատասխանեց: Մի քանի րոպե մնաց անխոս և ապա հանկարծ դեպի երիտասարդը դառնալով ասաց.

— Գիտեի՞ք, ես ձեզ չեմ հավատում և կարծում եմ, որ սուտ պատճառաբանությամբ փախուստ եք տալիս ինձանից: Եթե անկեղծ մարդ եք, հապա, կարդացեք ինձ մոտ այդ նամակը, ձեր հարսնացուն հո այնպիսի գաղտնիքներ չի լինիլ գրած, որը դուք ձեզ սիրող մի աղջկա չկարողանաք հայտնել:

— Ես իմ կյանքում միշտ ատել եմ ստությունը, և այժմ էլ զուտ ճշմարտություն էր խոսածս: Բայց եթե դուք կասկածում եք, ես կկարդամ այս նամակը, նրա մեջ ծածկելու գաղտնիք չկա. լսեցեք:— Այո ասելով Վահանը ձեռքը ծոցը տարավ և նամակը հանելով սկսեց կարդալ: «Ազնիվ բարեկամ.

«Ձեր առաջին նամակին մայրս պատասխանեց, երկրորդին ես եմ պատասխանում, ըստ որում նա ինձ հանձնեց այժմ այդ պաշտոնը, առարկելով, որ աչքերի տկարությունը չի ներում իրեն գրությամբ զբաղվել: Թեպետ ցավ է ինձ համար տեսնել, որ մայրս դեռ առույգ հասակում տեսության տկարություն ունի, այսուամենայնիվ առանձին սիրով պիտի վարեմ այսուհետև ստանձնածս պաշտոնը, հուսալով, որ դրանով առիթ կունենամ ստիպել Ձեզ հաճախ մեզ հիշելու և նամակ գրելու:

Մայրս յուր նամակում չկամեցավ նկարագրել Ձեզ միայնության այն ծանր տխրությունը, որ պատճառեցիք մեզ Ձեր հեռանալով: «Չպետք է վատացնել նրա քնքուշ սիրտը»,— ասում էր նա: Բայց ևս կարծում եմ, որ Ձեզ համար հետաքրքրական կլիներ իմանալ, թե ի՞նչ չափով, արդյոք, զգալի դարձավ մեզ Ձեր բացակայությունը: Դժբախտաբար մարդկային լեզուն անկարող է լինում շատ անգամ զգացմունքների չափը սահմանելու, և եթե երբեմն կարողանում է, այսուամենայնիվ, չէ վստահանում գրչին հանձնելու: Ես ևս ավելին չասելու համար այսքանը միայն կնկատեմ, որ Ձեր անջատումը ամեն զրկանքներից ավելի ցավ պատճառեց մեր սրտին: Ի՞նչ է զգում հարուստը, երբ հանկարծ աղքատանում է, կամ ընկերասեր մարդը, որին փակում են մենավոր խուցում: Ահա՛, այդ զգացմունքն էր պաշարել և մեզ Ձեր հեռանալուց ետ: Անձամբ փորձեցինք, թե որքան դժվար է աշխարհում միայնակ մնալ: Ընկերներ, բարեկամներ, իհարկե, ամեն տեղ կան, բայց սրտի և հոգվո ընկեր, մտքի և գաղափարի բարեկամ որոնել այս քաղաքում՝ փշից խաղող սպասել կնշանակե: Այդ էր պատճառը, որ դժվարաթյամբ էինք հաշտվում մեր միայնության հետ:

Առանձին հաճույքով կարդում ենք Ձեր բարեկամ Մոմճյանի մասին գրածներդ, որին սիրում եք Ձեր Մենտորն անվանել: Երանի՜ Ձեզ, որ ապրում եք այնպիսի հասարակության մեջ, ուր առաջին քայլափոխում Մոմճյանի նման ազնիվ, լուսամիտ և հայրենասեր երիտասարդին եք հանդիպում. այնպիսի հասարակության, ուր Մոմճյանի նմանները բազմաթիվ են «և յուրաքանչյուր ցանկացող՝ մինին յուր համար Մենտոր, մյուսին՝ առաջնորդ կարող է ընտրել: Մենք, դժբախտաբար, մի հատ ունեինք այդպիսին՝ նրանից էլ զրկեցիք մեզ:

Բայց «Չիք չարիք՝ առանց բարեաց»,— ասում է առածը: Ձեր անջատումը մի այնպիսի հանգամանք առաջ բերավ, որը թե՛ մեր մենավոր կյանքի մեջ հետաքրքրական փոփոխություն մտցրեց և թե իմ անձնական հառաջադիմությանը որոշ օգուտ պիտի բերե: Այդ ա՛յն է, որ ես, վերջապես, ընդունեցի տեղվույս օրիորդական դպրոցի հոգաբարձության հրավերը, նույն դպրոցում հայոց լեզու դասախոսելու: Ինչպես գիտեք, այդ հրավերը մի քանի անգամ արդեն արել էին ինձ, բայց ամեն անգամ էլ դժվարացել էի ընդունելու՝ վստահ չլինելով իմ ուժերի վրա: Չնայելով, որ Դուք իրավացի կերպով նախատում էիք իմ երկչոտությունը և ստիպում ինձ աշխատել հեռացնել ինձանից այս անվստահության հոգին, ասելով, որ նա ապագայում շատ կարող է վնասել ինձ, այսուամենայնիվ, ես սիրտ չէի անում: Բայց հենց որ Դուք հեռացաք, հենց որ միայնությունը պաշարեց ինձ, ես այդ հրավերը ընդունեցի: Այս համարձակ քայլը անել տվավ ինձ Ձեր առաջին նամակը: Երբ իմացա, որ Դուք արդեն «Փնջիկ»-ի խմբագրության մեջ գլխավոր աշխատակցի և քարտուղարի պաշտոն եք ստանձնել՝ «ես ինչո՞ւ չգործեմ, ես ինչո՞ւ ուժերս չփորձեմ» — մտածեցի ինքս ինձ և ոգի առի: Երկու օրից ետ արդեն վարժուհու պաշտոնում էի:

Այս նոր պարապմունքս հոգեկան զվարճություն և սրտի անդորրություն է պատճառում ինձ: Մանավանդ երբ տեսնում եմ, որ ուժերս բավականանում են ոչ միայն ստանձնածս պաշտոնը արժանավորապես վարելուն, այլև պաշտոնակիցներիս օգնելուն: Մայրս նույնպես ուրախ է, որ ես վարժուհի եմ արդեն, որովհետև իմ այդ կոչումը՝ յուր մայրական ազնիվ փառասիրությունը գգվելուց զատ, այն օգուտն էլ ունի, որ շատ անգամ դպրոցից նորանոր տեղեկություններ եմ բերում իրեն, ուսուցչական կամ հոգաբարձուական նորությունների պատմություններն եմ անում և այդպիսով յուր մենավոր կյանքի տխրությունը մասամբ փարատում եմ: Վերջին հանգամանքը մանավանդ ինձ ներքին գոհունակություն է պատճառում:

Հույս ունիմ, Դուք ևս հաճույքով պիտի կարդաք Ձեզ հաղորդածս այս նորությունը, ըստ որում իմ վարժուհի լինելը Ձեր էլ ցանկությունն էր»:

Նամակի վերջում օրիորդ Աշխենը ողջունում էր Վահանին յուր և մոր կողմից և ավելացնում մի քանի տեղեկություններ իրենց ընտանեկան գործերի վերաբերմամբ:

Երբ Վահանը նամակի ընթերցումն ավարտեց, Շուշանը հարցրեց:

— Ա՞յդ է բոլորը:

— Այո՛, օրիորդ, այս է բոլորը:

— Տեսա՞ք. ուրեմն ես իրավունք ունեի կասկածելու ձեր ճշմարտախոսության վրա,— բացականչեց օրիորդը:

— Ինչպե՞ս.— զարմացած հարցրեց երիտասարդը:

— Դուք ասում էիք, որ այդ աղջիկը ձեր հարսնացուն է, որ դուք նրան սիրում եք և այլն: Բայց ո՞ւր է: Այդ ահագին նամակի մեջ սիրո մի խոսք անգամ չկա:

— Այս նամակի՞ մեջ. այո՛. սիրո խոսքեր չկան և չէին կարող լինել:

— Ինչո՞ւ. եթե այդ աղջիկը սիրում լիներ Ձեզ, ինչպե՞ս կարող էր յուր նամակի մեջ գոնե մի քանի սիրահարական խոսքեր չգրել:

— Այս օրիորդը Ձեր ճանաչած օրիորդներից չէ: Նա եթե խելագարվելու չափ էլ սիրահարված լիներ ինձ վրա, դարձյալ թույլ չէր տալ իրեն՝ սիրահարական զրույցներ գրելու յուր նամակում:

— Եթե խոսքով այդ զրույցներն անում է, ի՞նչ կա, որ նամակով էլ անե. մի՞թե սիրելը հանցանք է:

— Սիրելը հանցանք չէ. բայց այս օրիորդը նույնիսկ խոսքով չի արտահայտել ինձ յուր սերը:

— Հապա ինչպե՞ս իմացաք, որ նա սիրում է Ձեզ:

— Ես չասացի, թե նա սիրում է ինձ. այլ թե՝ ե՛ս եմ նրան սիրում:

— Ի՞նչ դուրս եկավ դրանից: — Այն, որ եթե իմ սիրտը նվիրված է նրան, ապա ուրեմն ուրիշին սիրել չէ կարող:

— Ի՞մ մասին է Ձեր խոսքը:

— Այո՛, օրիորդ:

— Եվ այդ Ձեր վերջի՞ն խոսքն է:

— Այո: Բայց խնդրում եմ, մի՛ նեղանաք ինձանից: Դուք մինչև անգամ շնորհակալ պիտի լինիք, որ ես ամեն ինչ անկեղծությամբ խոստովանում եմ Ձեզ: Մի ուրիշը, գուցե, ի չարը գործ դներ Ձեր մտերմական խոսակցությունը: Բայց ես այդ մարդիկներից չեմ: Ինչպես առաջ, նույնպես և այսուհետև ես պատիվ կհամարեմ ինձ լինել Ձեր անձնվեր եղբայրը, հարազատը: Սակայն փեսացու լինել անկարող եմ: Պատճառը Ձեզ հայտնեցի, և Դուք, հույս ունիմ, կհամաձայնվիք ինձ հետ:

Շուշանը լուռ և գլխակոր լսում էր երիտասարդին: Երբ նա ավարտեց, սա աչքերը վեր առավ, նայեց Սարյանի վրա մի այնպիսի հայացքով, որով կարծես կամենում էր ասել թե՝ ինչո՞ւ այդքան անգութ եք: Վերջը տխուր ձայնով խոսեց.

— Ուրիշ ի՞նչ կարող եմ անել՝ եթե չհամաձայնվեմ: Ես մի դժբախտ աղջիկ եմ և սիրելու էլ իրավունք չունիմ: Միայն թե խնդրում եմ, որ իբրև ազնիվ մարդ, պատվո խոսք տաք ինձ չհայտնել ոչ ոքի այն խոստովանությունը, որն արի Ձեզ, իբրև իմ սիրած երիտասարդին:

— Խոսք եմ տալիս, որ ձեր խոստովանությունը ինձ հետ միասին գերեզման տանեմ,— եռանդով պատասխանեց Սարյանը:

— Հավատում եմ ձեզ... շնորհակալ եմ.— ասաց օրիորդը նվաղած ձայնով և գլխակոր ու մոլար քայլերով դուրս գնաց երիտասարդի սենյակից:

Սարյանը մի քանի րոպե մնաց անշարժ և աչքը դռան վրա սևեռած: Ապա զարմացական եղանակով գլուխը շարժելով ինքն իրեն սկսեց մտածել թե՝ ի՞նչ տարօրինակ նորություն էր այս, որ այդ աղջիկը հաղորդեց իրեն: Նա երբեք չէր կարող երևակայել թե՝ Շուշանի նման համեստ ու լռակյաց աղջիկը, որի հետ հազիվ մի ամիս

էր ինչ ծանոթացել էր, և որին ինքը ոչնչով առիթ չէր տվել իրեն մոտենալու կամ մտերմանալու, հանկարծ սիրո խոստովանություն կաներ իրեն: Երիտասարդը զարմանում էր և ոչնչով չէր կարողանում արդարացնել նրա վարմունքը: Երկար մտածելուց ետ վերջը եկավ այն եզրակացության թե՝ երևի Թիֆլիսում, իբրև լուսավորված երկրում, այս տեսակ խոստովանություններ անելը ընդունված բան է: Եվ, ահա՝ հենց այս առիթով, նա նորից հիշեց օրիորդ Աշխենին, հիշեց, որ ինքը այնքան ժամանակ նրա հետ մոտիկ, մտերիմ էր եղած, բայց երբեք նրա շրթունքների վրա մի անտեղի կամ անհամեստ ժպիտ չէր նշմարած, երբեք այդ շրթունքներից մի անզգույշ խոսք չէր լսած: Հիշեց մի առ մի նրա կատարելությունները և համեմատեց նրան, այն գավառացի աղջկան՝ լուսավորված երկրում ապրող այս օրիորդի հետ... Աշխենը նրա աչքում երևաց իբրև մի հոյակապ հրաշակերտ, իսկ սա մի ողորմելի ոչնչություն, որի վրա մտածելն անգամ արժեք չուներ: Այս էր պատճառը, երևի, որ երիտասարդը նորից հանեց սիրած աղջկա նամակը, երկրորդ անգամ կարդաց և շրթունքների վրա սեղմելով կրկին և կրկին անգամ համբուրեց...

Հենց այն միջոցին, որ Սարյանի սենյակում օրիորդ Շուշանը յուր անհաջող սիրո խոստովանությունն էր անում, տիկին Մարթան յուր առանձնարանի թախտի վրա՝ ձեռքը մութաքին հենած՝ ձգված էր և զանազան ծրագիրներ էր կազմում յուր աղջկա ամուսնության գործը շտապեցնելու համար: — «Երիտասարդներ են,— մտածում էր նա ինքն իրեն,— լավ չէ որ երկար ժամանակ սիրահարված մնան: Ո՞վ գիտի, ի՞նչ կարող է պատահել, ժողովրդի խոսելու առիթ չդառնանք, թշնամիներին չուրախացնենք, կարող է պատահել, որ մինչև անգամ Վահանին մեր ձեռքից խլեն, մոցիքուլները ամեն տեղ մտնում, ամեն տեղից հոտ են առնում: Ուրեմն, քանի տղան մեր ձեռքումն է, գլուխը կապենք, վերջացնենք...»:

Դարձյալ փակագծի մեջ պիտի ասեմ, որ տիկին Մարթան նույնպես համոզված էր, որ Վահանը յուր աղջկա սիրով այրվում, տոչորվում է:

Թիֆլիսում արդեն այն սովորությունը կա, որ թե մի պսակվող երիտասարդ (գլխավորապես գավառացի), անզգուշություն է ունենում մի որևէ հարսնացուի մասին մեկից մի տեղեկություն հարցնելու և այդ լուրը հասնում է աղջկա ծնողների կամ ազգականների ականջին, իսկույն նրանք տակն ու վրա են լինում, այստեղ են վազում, այնտեղ են վազում, հարցնող երիտասարդի մասին մանրամասն տեղեկություններ են հավաքում, հրատարակում են թե՝ այո ինչ տղան մեր աղջիկն ուզում է. միջնորդներ են ղրկում փեսացուի մոտ հարցնելու համար, թե ի՞նչ ձևով է ուզում, որ պսակը կատարվի. արդյոք խնջույքը ի՞նքն է սարքում, թե՞ կամենում է, որ իրենք՝ աղջկա տերերը սարքեն և այլն և այլն:

Տեղեկություններ հարցնող երիտասարդը, մանավանդ եթե գավառացի է, մնում է ապշած, զարմացած և ինքն իրեն հարցնում է թե՝ արդյոք ե՞րբ է այս աղջկա ծնողներին առաջարկություն արել, երբ են նրանք իրենց համաձայնությունը հայտնել, ե՞րբ է ինքը նշանվել, որ այժմ էլ պսակվելու կամ խնջույք սարքելու հանգամանքներն են կամենում որոշել: Երկար մտածելուց ետ խեղճը երբեմն գալիս է այն եզրակացության թե՝ երևի այդ բոլորը կատարվել է, բայց ինքը մոռացության հիվանդություն ունի և չէ հիշում: Թիֆլիսցի փորձված երիտասարդները, իհարկե, այդպես չեն մտածում, նրանք կամ միջնորդների հետ առևտուր են անում, կամ նրանց ուղղակի դուրս են վռնդում տանից:

Եթե մի երկրում անմեղ տեղեկություն հարցնող երիտասարդին արդեն նշանված են ընդունում, մի՞թե տիկին Մարթան իրավունք չուներ Սարյանին յուր աղջկա սիրահարն ու նրա անբռնաբարելի փեսացուն համարելու, քանի որ այդ երիտասարդն ամբողջ ամիս էր ինչ ապրում էր իրենց տանը, ուտում, խմում էր, քաղցր զրույցներ էր անում յուր աղջկա հետ, իսկ այս բոլոր զվարճությունների համար նա դեռ կոպեկ չէր վճարել,

որովհետև տիկին Մարթան նրան յուր փեսացու հաշվելով՝ հարմար չէր գտել, որ մինչև պսակվելը բնակարանի կամ ուտեստի վարձ պահանջե նրանից:

Տիկինը դեռ այո մտածմունքով էր զբաղված, երբ Շուշանը հանկարծ սենյակի դուռը բանալով ներս ընկավ և յուր ետևից դուռը շրխկացնելով փակեց:

— Ի՞նչ է պատահել,— տեղից վեր թռչելով հարցրեց մայրը:

— Ի՞նչ չի կարող պատահել քո տան, այս քուչի ասա:

Շուշանը լուռ էր:

— Քեզ չե՞մ հարցնում,— կրկնեց մայրը:

— Ի՞նչ ես հարցնում:

— Հարցնում եմ, թե ի՞նչ է պատահել:

— Այն է պատահել, որ քո Մոմճյանը ավազակի մեկն է:

— Մոմճյանի հե՞տ ինչ ունիս:

— Նա չէ՞ր ասում, թե ինձ համար Հարուստ ու գեղեցիկ փեսացու է գտել:

— Հա՛, ի՞նչ կա որ...

— Ա՛յն կա որ, անամոթաբար խաբել է թե՛ քեզ և թե՛ ինձ:

— Ինչպե՞ս:

— Այնպես Է՛լի. խաբեց, որ Մովսիսյանին դուրս անենք այստեղից:

— Ինչե՞ր ես խոսում. հապա Վահանին նրա տեղ չբերե՞ց:

—Բերեց. ո՞վ է ուրանում. բայց Վահանը քո աղջկա վրան իսկի չէ էլ թքում:

— Ի՞նչ ես ասում:

— Ի՞նչ պիտի ասեմ: Նա արդեն սիրում է ուրիշ աղջկա և նրա վրան էլ պիտի նշանվի:

— Ո՛րտեղից գիտես:

— Հենց կես ժամ առաջ նրա մոտ էի. ինքս տարա այդ աղջկա գրած նամակը, բացավ, կարդաց, և ինչ որ հարկավոր էր, ինձ իմացրեց:

— Ինչպե՞ս կարող է համարձակվել... Ո՞վ բաց կթողնի նրան,— զայրացած բացականչեց տիկին Մարթան.— ինձ Սերոբենց Մարթա կասեն. դատարան քարշ կտամ նրան, բանտ կնստացնեմ...

— Կամաց, կամաց մի գոռար, դու նրան ոչինչ էլ չես կարող անել:

— Ոնց թե չեմ կարող անել:

— Իհարկե չես կարող և իրավունք էլ չունես:

Ինչպե՞ս թե իրավունք չունեմ:

— Այնպես էլի՛, իրավունք չունես. նա հո քեզ չէ ասել, թե աղջիկդ պիտի ուզեմ. նա հո քեզ ստորագրություն չէ՞ տվել:

— Մոմճյանը մեռե՞լ է, նրան չէ՞ միջնորդ ղրկել ինձ մոտ, նա՞ չէր որ ամբողջ ժամերով այստեղ նստած յուր գովասանքներն էր անո՞ւմ... Նա չէ՞ր, որ ասում էր թե՝ Սարյանը Մովսիսյանից տասն անգամ ավելի գեղեցիկ, ավելի ուսումնական, ավելի հարուստ է՞... ինչո՞ւ համար էր նա այս խոսքերը ինձ ասում:

— Նրա համար, որ քեզ գլխից հանե:

— Բայց ի՞նչ նպատակով:

— Այն, որ Մովսիսյանին հեռացնես:

— Սխալվում ես, աղջիկս, սխալվում ես. մինչև որ այդ տղան Մոմճյանին խնդրած, աղաչած չլիներ, նա չէր գալ և ինձ չէր ստիպիլ, որ ես Մովսիսյանին հեռացնեմ և դրան բերեմ այստեղ:

— Իսկ ես քեզ ասում եմ, որ Սարյանը իմ մասին ո՛չ Մոմճյանին խնդրել է, ոչ առաջարկություն է արել և ո՛չ էլ մինչև անգամ իմ վերաբերմամբ խոսել է նրա հետ:

— Սխալվում ես. երիտասարդների խորամանկությունը ինձ է հայտնի: Երևի մի հարուստ տեղից առաջարկություն են արել նրան:

— Քեզ ասում եմ, որ նրա նշանածի նամակը ե՛ս կարդացի:

— Այդ նամակը կարող էր սարքած լինել, նա ինձ խաբել չի կարող: Սպասի՛ր, ինքս կգնամ և կիմանամ:— Այս ասելով տիկին Մարթան պատրաստվեց երիտասարդի մոտ գնալու, բայց Շուշանը նրա առաջը բռնեց:

— Ո՞ւր ես գնում. նրա հետ խոսելու ի՞նչ ունիս. քեզ ասում եմ, որ այդ տղան այս գործում մեղ չունի: — Այդ իմ գիտենալու բանն է, թո՛ղ:

— Ախար ի՞նչ հարկավոր է բանը խայտառակության հասցնել: Նա ի՞նչ մեղավոր է, որ Մոմճյանի պես խարդախ մարդը նրա մասին գովասանքներ է խոսել, խոստումներ է արել:

— Այդ էլ իմ գիտենալու բանն է, թո՛ղ:

— Չեմ թողնիլ:

— Թո՛ղ ասում եմ, անզգամ, երևի մի խաղ ունի խաղացած, որ արգելում ես ինձ,— բացականչեց տիկին Մարթան բարկությամբ և մի կողմ հրելով աղջկանը՝ դուրս գնաց սենյակից:

— Գնա՛, գնա՛. Սարյանին զոռով փեսա կշինես...— դառն հեգնությամբ նկատեց Շուշանը մոր ետևից:

— Կշինեմ և դու էլ կտեսնես...— սպառնաց տիկինը և արագ քայլերով դիմեց դեպի Սարյանի կացարանը:

ՆԵՐՔԻՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն միջոցին, որ երիտասարդ Սարյանը Աշխենի նամակը համբուրելով ծոցը դրավ և մտածում էր, թե ի՞նչ պատասխան պիտի գրե նրան, սենյակի դուռը բացվեցավ և ներս մտավ տիկին Մարթան այլայլված դեմքով:

Վահանը սկզբում նրա այլայլությունը չնկատելով վեր կացավ տեղից և քաղաքավարությամբ աթոռ առաջարկեց նրան: Իսկ տիկինը առանց ուշադրություն դարձնելու երիտասարդի այդ ծառայության վրա, ուղղակի խոսել սկսեց, աշխատելով, սակայն հանգիստ պահել իրեն:

— Այս ի՞նչ եք անում, ո՛րդի. մի՞թե կարելի է... ես այդ հույսը չունեի ձեզանից...— լուրջ ու ծանրախոհ եղանակով ասաց նա:

— Ի՞նչ եմ անում, տիկին,— զարմացած հարցրեց Սարյանը: — Ի՞նչ պիտի անեք. աղջկան անունը խայտառակում եք. մի՞թե իմ լավության փոխարենը ա՞յդ պիտի վճարեիք:

— Ներեցեք, տիկին, ձեզ չեմ հասկանում, ի՞նչ ունիմ ես ձեր աղջկա հետ. ինչո՞ւ պետք է նրա անունը խայտառակեմ:

— Հապա որ նրան թողնում եք, այդ խայտառակել չէ՞ նշանակում:

— Ինչպե՞ս թե նրան թողնում եմ: — Թողնում եք Է՛լի. Շուշանը հայտնեց ինձ այդ նորությունը:

— Աստված վկա, տիկին, ձեզ չեմ հասկանում, պարզ ասացեք, ո՞ւմ եմ թողնում, ի՞նչ կնշանակե թողնել:

— Պարզ չասացի՞. հայերեն չե՞մ խոսում: Թողնում եք իմ Շուշանին, նրան էլ չեք ուզում, կամենում եք ուրիշ աղջկա հետ նշանվել:

Վահանը բարձրաձայն ծիծաղեց:

— Ի՞նչ եք ծիծաղում,— հարցրեց տիկինը:

— Ինչպե՞ս չծիծաղեմ. այնպիսի մի հանցանքի մեջ եք մեղադրում ինձ, որ ես ոչ գործել եմ, ոչ կարող եմ գործել, ոչ էլ մտածել եմ գործելու:

— Ինչպե՞ս, ուրեմն Շուշանին չե՞ք թողնում.— հարցրեց տիկինը կարծես նորից հույս առնելով:

— Տիկին, կատակ չե՞ք անում:

— Ինչպե՞ս թե կատակ, ինչո՞ւ պետք է կատակ անեմ:

— Հապա ես ի՞նչ ամուսնացող եմ, որ Շուշանին ուզեմ կամ մի ուրիշին:

— Եթե ամուսնացող չեք, ինչո՞ւ համար էիք խոսք տալիս:

— Խո՞սք... ո՞ւմն եմ խոսք տվել:

— Ի՛նձ:

— Ձե՞զ:

— Այո՛, ինձ. մի՞թե մոռացել եք:

— Ե՞րբ:

— Մի ամիս առաջ:

— Տիկին, ներեցեք, դուք ինձ զրպարտում եք. ձեր կամ մի ուրիշի աղջիկն ուզելու համար ես մի խոսք անգամ խոսած չունիմ ձեզ հետ: — Ուղղակի ինձ հետ չեք խոսել, բայց Մոմճյանի միջոցով թե՛ խոսել և թե՛ խնդրել եք իմ աղջկա ձեռը:

— Տիկին դուք ինձ խելագարեցնում եք, եթե ինքներդ չեք արդեն խելագարը: Այդպիսի զրպարտություն լսել ու տանել անկարող եմ ես,— զայրացած բացականչեց երիտասարդը և վեր թռավ տեղից:

— Ի՞նչ եք բարկանում, որդի. թե՛ խոսք տվողը, թե՛ ետ կանգնողը դուք եք. բարկանալու ե՛ս ունիմ իրավունք, և ոչ թե դուք:

— Բայց հավատացեք, վերջապես, որ ես Մոմճյանի մոտ ամուսնանալու մասին մի խոսք, մի բառ անգամ չեմ արտասանել, ուրեմն ինչպե՞ս կարող էր նա իմ կողմից գալ և ձեր աղջկա ձեռը խնդրել:

— Կամենում եք ասել, որ ես սո՞ւտ եմ ասում:

— Եթե դուք սուտ չեք ասում, կնշանակե Մոմճյանն է սուտ ասել:

— Նա էլ ստախոս չէ. ես նրան ճանաչում եմ ինչպես իմ հինգ մատերը:

— Տիկին, եթե դուք նրան ճանաչում եք, երևի նա էլ ձեզ է ճանաչում, իսկ ես երկուսիցդ ոչ մեկին էլ չեմ ճանաչում, բայ որովհետև ինքս ինձ լավ եմ ճանաչում, ուստի համարձակ կարող եմ ասել, որ ձեզանից մեկը կամ մյուսը անխիղճ ստախոս է: Ես ձեր աղջկա մասին չեմ խոսացել, ամուսնանալու վրա չեմ մտածել, հետևապես չէի կարող ո՛չ խոսք տվող լինել, ո՛չ էլ խոսքից ետ կանգնող:

— Հապա ի՞նչ եք շինում իմ տան մեջ:

— Ինչպե՞ս թե ինչ եմ շինում, վարձով ապրում եմ այստեղ:

— Վարձո՞վ:

— Հապա՞...

— Իսկ ձեր ապրուստի համար մինչև այսօր մի կոպեկ վճարե՞լ եք:

— Չեմ վճարել, բայց պիտի վճարեմ, ինչո՞ւ ավելի վաղ չէիք հիշեցնում ինձ իմ պարտքը: Այսօր ամբողջ ամսականը կտամ:

— Բայց մի կողմ թողեք ամսականը,— ձայնը մեղմացնելով խոսեց տիկինը.— ես ձեզ իմ տան փեսան էի համարում և չէի կամենում, որ ապրուստի համար փող վճարեք...

— Տիկին, դուք Էլի նույն հարցին եք գալիս: Լավ. ենթադրենք մի որպե, թե խոսք եմ տվել ձեզ և ձեր աղջիկն էլ առնում եմ ինձ կնության: Հապա ինչո՞վ պիտի պահեմ նրան: Այս խնդրի մասին դուք չե՞ք մտածում:

— Ինչպե՞ս թե ինչով, հապա ձեր հոր հարստությունը ո՞ւմ համար է:

— Իմ հոր հարստությո՞ւնը, հա՛, հա՛, հա՛, հա՛,— երիտասարդը սկսեց ուրախ-ուրախ ծիծաղել:

— Ի՞նչ եք ծիծաղում, ձեր հոր որդին չե՞ք. նրա հարստություն ձեզ չպիտի մնա:

— Իմ հայրը, տիկին, մի խեղճ գյուղատնտես է և հազիվ է կարողանում յուր ընտանիքի ամենօրյա հացը հայթայթել նրան ո՞վ է հարստություն տվել:

— Ինչպե՞ս թե ով է հարստություն տվել: Հապա նա ձեր քաղաքի ամենից հարուստ մարդը չէ՞, մեծ կալվածներ չունի՞ ահագին եկամուտ չէ՞ ստանում...

Երիտասարդը կրկին սկսեց ծիծաղել:

— Դուք էլի՞ ծիծաղում եք,— վրդովված հարցրեց տանտիրուհին:

— Ի՞նչ անեմ, որ չծիծաղեմ, տիկին, այնպես լավ բաներ եք պատմում իմ հոր հարստության մասին, որ քիչ է մնում ինքս էլ հավատամ, թե արդարև հարուստ մարդու որդի եմ: Չբարկանաք ինձ վրա, բայց հավատացեք, որ անկեղծությամբ եմ խոսում, այս րոպեին իսկ պատրաստ եմ ամուսնանալ ձեր աղջկա հետ, մի այն թե մեր այդ երևելի հարստության տեղը ինձ հայտնեիք,— ասաց Սարյանը ծիծաղելով:

— Եթե ձեր հայրը հարուստ չէ, որտեղից եք փողեր ծախսում...

— Ի՞նչ փողեր եմ ծախսում, տիկին, մի ամիս է, որ դուք եք ինձ կերակրում:

— Դրա համար հո պիտի վճարեիք:

— Այո՛. Մոմճյանից պիտի ստանայի ռոճիկս և վճարեի: Այնպես էլ պիտի անեմ:

— Մոմճյանի՞ց. ռոճի՞կ:

— Հապա՛. դուք կարծում եք թե առանց ռոճիկ՞ եմ գործ կատարում այստեղ:

Տիկին Մարթան լռեց է նա տեսավ, որ երիտասարդը անկեղծությամբ է խոսում և որ ինքը չարաչար խաբված է: Յուր կարծիքով այս առաջին անդամն էր, որ Մոմճյանը մոլորեցնում էր իրեն, բայց թե ի՞նչ նպատակով, նա չէր կարողանում գուշակել, Այս հանգամանքը ծանր վիշտ պատճառեց իրեն, Տիկինը մտածում էր:

Այժմ, իհարկե, նա այլևս չէր ցավում, որ Սարյանը թողնում է յուր աղջկան, որովհետև քանի որ նա աղքատ էր՝ էլ ի՞նչ միտք ուներ նրան փեսայացնել. բայց նա ցավում էր, որ Մոմճյանը խաբելով իրեն, հեռացնել տվավ Մովսիսյանին, որը հաստատ փեսացու էր յուր աղջկա համար: Սարյանը այժմ տիկնոջ աչքում, յուր բոլոր գեղեցկությամբ, մի քանի աստիճան ստոր էր կանգնած տգեղ ու խոշորադեմ Մովսիսյանից, որովհետև, վերջինս փոքր ի շատե կարողություն ուներ, մինչդեռ Սարյանը մի խղճուկ ռոճիկով պիտի ապրեր: Այժմ արդեն նա մտածում էր թե՝ ի՞նչ ճանապարհով հաշտություն կայացնե արտաքսված փեսացուի հետ:

Բայց այդ անելուց առաջ դեռ հարկավոր էր մի քանի բացատրություններ պահանջել Մոմճյանից՝ յուր սարքած խաղի համար: Այս նպատակով դուրս գնաց տիկինը Սարյանի սենյակից՝ առանց նրան մի նոր խոսք ասել կամենալու:

Վահանը մնաց սեղանի առաջ նստած, ձեռքը ծնոտին հենած և մտքերի մեջ խորասուզված: Տիկին Մարթայի՛ Մոմճյանի մասին խոսածները լսելուց ետ, նա այլևս չէր զարմանում ո՛չ Շուշանի սիրո խոստովանության և ո՛չ նրա մոր արած տարօրինակ

պահանջի վրա: Նա տեսնում էր, որ յուր դեմ շարվել է մի մեքենայություն, որի մեջ տիկին Մարթան և յուր աղջիկը միայն խաղացողների դերն են կատարում, իսկ մեքենայության լարերը գտնվում են Մոմճյանի ձեռքում:

Երիտասարդ Սարյանին այլևս չէր վշտացնում այն հանգամանքը, որ յուր իդեալ Մոմճյանը դարձել էր յուր աչքում մի անարգ մարդ, ստության բարեկամ և ստոր գործերի հեղինակ: Վերջին խմբագրական ժողովից ետ ինչ էլ որ պատմեին նրա մասին, ինչ խարդախության և դավադրության մեջ էլ մեղադրեին նրան, Սարյանը կհավատար, որովհետև փորձով տեսավ, որ այդ մարդը ամեն տեսակ նենգավոր ու խաբեական ճանապարհների ծանոթ, և շարունակ այդ ճանապարհներով ընթացող ու գործող մեկն է: Բայց թե ինչո՞ւ յուր դեմ մեքենայություն էր լարում, ինչո՞ւ յուր մասին սուտ խոստումներ էր արել, ինչո՞ւ իրեն իբրև հայտնի հարուստ և պատրաստ փեսացու էր ներկայացրել, այս բոլոր պատճառը գուշակել չէր կարողանում : Երկար մտածելուց ետ նա որոշեց գնալ Մոմճյանի մոտ և բացատրություն խնդրել նրանից այս տարօրինակ նորությունների մասին:

Օրիորդ Շուշանն ավելի կտրուկ ճանապարհ բռնեց: Վերջնականապես համոզվելով, որ Սարյանը յուրը լինել չէ կարող, նա որոշեց կրկին հին փեսացուին գրավել: Ուստի երբ մայրը տանից հեռացավ, մի համառոտ նամակ դրեց Սարգիս Մովսիսյանին և հայտնելով նրան այն հոգեկան տանջանքները, որոնց, իբրև թե, կրել էր ինքը յուր հեռանալուց ի վեր, հրավիրեց նրան գալ իրեն տեսնելու, հայտնելով միևնույն ժամանակ, որ ինքը միայնակ է, հետևապես յուր հետ ազատ խոսելու հարմարություն ունի: Փոքրիկ աղախինը յուր տիրուհու նամակը մի քանի րոպեի մեջ տեղ հասցրեց:

Հարկ չկա ասել, որ երիտասարդ Մովսիսյանը յուր սիրած աղջկանից այսպիսի հրավեր ստանալով գլուխը կորցրած և սրտատրոփ վազեց նրա մոտ:

Օրիորդը շատ սրտաշարժ ընդունելություն արավ նրան, գրկեց և մինչև անդամ (հույս ունեմ, դուք այդ ոչ ոքի չեք հայտնիլ) համբուրեց նրան: Եվ որովհետև նա այն աղջկերանցից էր, որոնք դյուրահոս արտասուք ունին և ուզած ժամանակ կարող են գրավիչ եղանակով արտասվել, ուստի յուր շառագունած դեմքի վրա մի քանի արցունքներ էլ վազեցրեց որով խեղճ Մովսիսյանի սիրտն ու հոգին այրեց, տոչորեց...

Երբ հուզման առաջին վայրկյաններն անցան, երկու սիրահարները (այսուհետև կարող ենք նրանց այդպես անվանել) կողքեկողք նստելով սկսեցին անցյալի սրտաշարժ պատմությունները անել: Մովսիսյանը, որ իսկապես շատ էր տանջվել սիրուհուց հեռու գտնվելու համար, ավելի քիչ էր խոսում, որովհետև իբրև տղամարդ կարողանում էր կրած ցավերի մեծ մասը ծածկել. նա ավելի միջոց էր տալիս խոսելու յուր սիրուհուն, որովհետև հավատացած էր, որ եթե նա յուր կրած բոլոր վշտերը չպատմե, սրտի հուզմունքը չի անցնիլ և դրանից խեղճ աղջիկը կարող է վնասվել:

Երիտասարդի այս տրամադրությունից օգտվելով, Շուշանը պատմեց նրան այն բոլորը, ինչ որ կանխավ պատրաստել էր պատմելու, այսինքն, թե ինչպե՞ս հիվանդացավ ինքը, երբ մայրը Մովսիսյանին հեռացնելու որոշումն արավ, թե ի՞նչ հոգեկան տանջանքներ կրեց, երբ սա իրենց տնից հեռացավ, թե ինչպե՞ս յուր վիճակից հուսահատված կամենում էր գնալ և Քռի մեջ խեղդվել և այլն: Վերջը պատմեց, թե այս բոլոր դժբախտությունների պատճառը Մոմճյանն էր, որը ցանկացել էր ամուսնացնել իրեն յուր մի նոր բարեկամի՝ Վահան Սարյանի հետ, թե այդ նպատակով էլ հաջողել էր նրան՝ Սարյանին բնակեցնել իրենց մոտ, թե յուր մայրը իսկապես մեղ չուներ այս գործում, այլ մոլորվել էր Մոմճյանի խոսքերից, ուստի վերջը յուր (Շուշանի) տանջանքները տեսնելով զղջացել էր:

Պատմեց նաև, իբրև գողտրիկ գաղտնիք, որ Սարյանը անտարբեր չէր դեպի ինքը, որ նա շատ էր աշխատում գրավել յուր սերը, բայց ինքը (Շուշանը) քաղաքավարությամբ հասկացրեց նրան, որ Մովսիսյանից ետ ուրիշ ոչ մի երիտասարդ չի կարող գրավել իրեն: Վերջը օրիորդը խնդրում էր Մովսիսյանին, որ նա հնար գործ դնե իրենից չհեռանալու. աշխատե մինչև անգամ Մոմճյանից վրեժխնդիր լինելու՝ հեռացնելով Սարյանին և նրա կացարանում ապրելով: (Միով բանիվ կատարե այն բոլորը, ինչ որ ձեռնտու էր իրեն, իբրև ամուսնանալ ցանկացող մի օրիորդի...):

Փակագծում դրած խոսքերը Շուշանի սրտի խոսքերն էին, բայց, իհարկե, նա նրանց չարտասանեց Մովսիսյանի մոտ:

Երիտասարդը, որ օրիորդի սրտաշարժ պատմությունը լսելով գորովվել և հուզվել էր, բռնեց նրա ձեռքից, մոտեցրեց յուր շրթունքներին և ջերմագին համբուրելով՝ բացականչեց.

— Վկա է այս համբույրը, որ սուրբ է ինձ համար, ես չեմ թողնիլ քեզ մինչև իմ մահվան վերջի՛ն րոպեն: Դու իմ հարսնացուն ես, և ոչ ոք քեզ ինձանից խլել չի կարող: Ես վրեժխնդիր կլինեմ նաև Մոմճյանից և կարտաքսեմ այստեղից այդ Սարյանին, որ համարձակվել է աչք տնկել իմ սիրած հարսնացուի վրա...

— Բայց, խնդրում եմ, ինչ որ անելու ես, խոհեմությամբ արա. չեմ կամենում, որ այս տան մեջ իմ պատճառով խռովություն ծագի.— թախանձեց Շուշանը, վախենալով, թե միգուցե Մովսիսյանը Սարյանի դեմ հարձակվելով գրգռե նրան և սա յուր խոստովանության գաղտնիքը երևան հանե:

— Քո պատճառով ո՛չ մի խռովություն չի ծագիլ,— ասաց Մովսիսյանը,— բայց ես, իբրև տղամարդ, պարտավոր եմ հաշիվ պահանջել Մոմճյանից իմ պատիվը վիրավորելու համար: Նա պիտի հասկանա, որ իրավունք չուներ փոխարինել Մովսիսյանին մի որևէ Սարյանով:

Օրիորդը տեսնելով, որ երիտասարդը գլխավորապես Մոմճյանի դեմ է գրգռված, այլևս չկրկնեց յուր խնդիրը:

Այն միջոցին, որ մեր երկու սիրահարները մտերիմ զրուցագրության մեջ էին, տիկին Մարթան Մոմճյանի սենյակում նստած բացատրություն էր պահանջում նրանից յուր գործած աներելի հանցանքի համար (տիկինը, առհասարակ, իրեն խաբելը աներելի հանցանք էր համարում):

Մոմճյանը յուր հաշիվներում սխալված տեսնելով իրեն, սկսեց խոսքը կատակի շրջել, որպեսզի այդ ճանապարհով տիկնոջ հարցադրումից խուսափի:

Բայց վերջինս տրամադիր չլինելով գործը կատակով ավարտելու, շարունակում էր յուր հարցապնդումը:

Մոմճյանը ստիպված էր բացատրություններ տալ:

Հենց այդ միջոցին Մոմճյանի նախասենյակը մտավ և Վահան Սարյանը, բայց ներսում տիկին Մարթայի խոսելու ձայնը լսելով, չվստահացավ ներս մտնել, որովհետև հավատացած էր, որ տիկնոջ ներկայությամբ Մոմճյանը անկեղծությամբ չի խոսիլ, ուրեմն ավելորդ էր նրանց խանգարելը: Երիտասարդը ուզում էր վերադառնալ, բայց հենց այդ միջոցին լսելով, որ Մոմճյանը սկսում է բացատրություններ տալ տիկնոջը, մնաց տեղը կանգնած և ինքն իրեն մտածեց:

«Այս մարդիկը ուրիշներին վնասելու համար ամեն խարդախություն գործ են դնում, ինչո՞ւ ես էլ իրենցից չսովորեմ օգուտ քաղել հանգամանքից՝ գոնե վնասից ու վտանգից ազատվելու համար»:

Այսպես մտածելով Վահանը առաջացավ փոքր ինչ դեպի դուռը և մեջքը պատին հենելով սկսեց լսել: Դռան փեղկը լավ չէր փակված, այնպես որ խոսակիցներին տեսնելու և մինչև անգամ, նրանց դիմաշարժը դիտելու չափ բացվածք էր մնում:

— Իմ նպատակս Շուշանին բարիք անելն էր,— խոսել սկսեց Մոմճյանը.— ճշմարիտ է, Սարյանը ինձ ոչ մի խոստում չէ արել, բայց ես մտածեցի թե՝ նա անփորձ գավառացի լինելով, շարունակ ձեզ մոտ կապրի և Շուշանին շենք ու շնորհքով աղջիկ տեսնելով, վերջ ի վերջո վրան կսիրահարվի: Որտեղից կարող էի գուշակել, թե նա ուրիշին է սիրում, կամ թե նշանված է:

— Լավ. դնենք թե այդ չգիտեիք, և Շուշանի բարիքն ուզելով կամեցաք Սարյանին սիրահարեցնել նրա վրա. բայց հո գիտեի՞ք, որ նա աղքատին մեկն է. ինչերի՞ս է պետք աղքատ փեսացուն. ո՞ւր էիք նրան մեր տունը մտցնում և Մովսիսյանի նման տղային հեռացնում:

— Բայց ախր Սարյանի շենքն ու շնորհքը տասը Մովսիսյան արժե, դուք նրա գեղեցկությանը գին չե՞ք դնում:

— Ինչի՞ս է պետք նրա գեղեցկությունը. աղջիկս որ քաղցած լինի, նրա գեղեցկությամբ հո չի՞ կշտանալ: Դու էլ ես շատ գեղեցիկ՝ իմ Շուշանին ի՞նչ օգուտ...

— Շուշանին ոչինչ, բայց նրա մորը հո օգուտ կա՞...— այս ասելով Մոմճյանը ժպտադեմ ձեռքը մոտեցրեց տիկնոջ ծնոտին, իսկ վերջինս խփեց նրա ձեռքին:

— Թող, թող, կատակի ժամանակ չէ,— ասաց տիկինը բարկացած:

Սարյանը, որին խիստ հետաքրքրեց թե՛ հարվածի ձայնը և թե տիկնոջ վերջին խոսքերը, գլուխը ծռեց և սկսեց դռան ճեղքով նայել դեպի ներս:

Մոմճյանը կրկին անգամ ձեռքը դեպի խոսակցի ծնոտը տարավ և ժպտադեմ ու կաթոտ աչքերով նայելով նրան՝ շարունակեց:

— Կատակի ժամանակը հիմա է. ես չեմ ուզում, որ դու բարկանաս... — Ինչ էլ որ անես, իմ սիրտը չես կարող շահեր ես արդեն բարկացած եմ,— ասաց տիկինը և Մոմճյանի ձեռքը բռնելով մի կողմ հրեց նրան և շարունակեց,— անպատճառ պետք է ինձ հայտնես, թև ի՞նչ նպատակով ես այս խաղը սարքել. հակառակ դեպքում ես քեզանից թե՛ կհեռանամ թե՛ կվնասեմ քեզ:

— Դու այդ չես անիր դու լավ կին ես,— ասաց Մոմճյանը նույն ժպիտով և նույն աչքերով նայելով նրան:

— Երդվում եմ, որ կանեմ, և դու շատ կզղջաս,— սպառնաց տիկինը:

— Ուրեմն թև հայտնեմ, բարկությունդ կանցնի՞:

— Այո՛:

— Լավ, դե լսի՛ր.— այս ասելով Մոմճյանը ավելի մոտեցրեց աթոռը տիկնոջ աթոռին և ձեռքը մտերմաբար նրա ուսի վրա դնելով շարունակեց.— այս երիտասարդի հետ ծանոթացա ես Մովսիսյանի հետ կռվելուց մի որ առաջ: Հենց առաջին

ծանոթությունից իմացա, որ խիստ ուշիմ և ընդունակ տղա է և մեր գործին կարող է պիտանի Լիներ:

Հրավիրեցի նրան ինձ մոտ, խոսացրի, քննեցի և տեսա, որ իսկ և իսկ մեզ համար չափած ու ձևած է, բայց վախենալով, թե չլինի ուրիշները ձեռք ձգեն, մտածեցի քո հսկողության ներքո պահել նրան: Այդ նպատակին հասնելու համար հարկավոր էր ներկայացնել Սարյանին իբրև հարուստ փեսացու. հակառակ դեպքում դու Մովսիսյանին չէիր հեռացնիլ: Մյուս կողմից էլ մտածեցի, թե այս տղան կարող է սիրահարվել Շուշանի վրա և այդպիսով ավելի ամուր կերպով կկապվի մեզ հետ: Երկու կողմից էլ օգուտը ակներև էր, բայց բախտը չհաջողեց և իմ կազմած հաշիվը սխալ դուրս եկավ: Այս անգամ ուզես չուզես պիտի ներես ինձ:

— Տո՛, չար սատանա, չէի՞ր կարող այդ բանը ինձ հայտնել. ինչո՞ւ էիր ինձ խաբում. Սարյանի նման տղին կապած պահելը ի՞նչ դժվար բան էր: Այնքան տղերանց ու աղջկերանց ես չե՞մ գլխիդ հավաքել:— Այս ասելով տիկինը քնքշաբար ապտակեց Մոմճյանին՝ կամենալով հասկացնել նրան, թե արդեն ներում է յուր հանցանքը: Մոմճյանը ավելի անպարկեշտ կատակով պատասխանեց տիկնոջ քնքշությանը:

Երիտասարդ Սարյանը լսեց և տեսավ, ինչ որ պետք էր իրեն թե՛ Մենտոր-Մոմճյանին կատարելապես ճանաչելու և թե՛ յուր դեմ լարված մեքենայության գաղտնիքը հասկանալու համար: Նա զզվանքով ետ դարձրեց երեսը և ինքն իրեն շշնջաց:

— «Գարշելի արարածներ... չէի կարող հավատալ, թե ընդունակ կլինեիք մինչև այդտեղ ստորանալու...»:

Այս ասելով նա կամացուկ դուրս գնաց նախասենյակից և իջնելով փողոց արագ քայլերով դիմեց դեպի յուր բնակարանը: Նրա հոգին վրդովված էր և սրտի ամենաքնքուշ զգացումները վիրավորված էին: Նա հույս ուներ գոնե յուր մենավոր բնակարանում հանգստություն գտնել. բայց հենց որ մոտեցավ նրան, ամբողջ տունը յուր աչքում թվեցավ իբրև մի դժոխք՝ չարության ոգիներով լցված:

Երիտասարդը կանգնեց տան մուտքի առաջ, մեքենայաբար ձեռքն առավ հնչակի դաստակը և սկսեց մտածել՝ «Ո՞ւր և ինչո՛ւ համար եմ մտնում այստեղ: Չէ՞ որ այս տանը ապրել այլևս չեմ կարող, գնամ գոնե մի կացարան որոնեմ ինձ համար»:— Այս ասելով նա թողեց հնչակը և հեռացավ, բայց ո՞ւր էր գնում, ինքն էլ չգիտեր: Անցավ հանդիպակաց փողոցի բոլոր երկարությունը, մտավ շուկան, հասավ մինչև յուր հին իջևանը, տեսավ ամենքին իրենց գործերով զբաղված, իրենց ապրուստի և աղքատության ետևից՝ և տխրությունը սկսեց ճնշել յուր սիրտը:

— «Ինչո՞ւ համար եկա այստեղ, ո՞ւր եմ գնում, ի՞նչ եմ կամենում...», մտածեց երիտասարդը: Բայց հանկարծ մտաբերելով, որ կացարան որոնելու նպատակով է եկել այդտեղ, փոքր ինչ ուրախացավ:— «Այո՛, կացարան, կացարան, պիտի գտնեմ, և այնպիսի տեղ, որ այդ չար ոգիներից հեռու լինեմ...», շշնջաց ինքն իրեն երիտասարդը, բայց մի վայրկյանից հետո մտածելով, որ կացարանի համար անգամ վճարելու փող չունի, ինքն իրենից կարծես, ամաչեց:

— Չէ. ճակատագիրը հալածում է քեզ. մի՛ փախչիր նրա երեսից.— կշտամբեց Վահանը ինքն իրեն.— դարձի՛ր քո բնակարանը և ապրի՛ր Շաշյանի ու Մոմճյանի հետ. եղիր նրանց ստրուկը և թավալիր բարոյական ապականության մեջ. խոնարհի՛ր ազատ ճակատդ ստորության առաջ, որովհետև պարծենում էիր թե քո երիտասարդական անփորձությունը տեղի չի տվել հայրական փորձառու խոհեմության, որովհետև չէիր հավատում թե կարոտությունը լուսավորված երկրում էլ կարող է ճնշել քեզ... Գնա՛,

այժմ ապաշխարի՛ր քո թերահավատությունը և սովորիր չպարծենալ երիտասարդական անփորձությամբդ...

Այսպես ինքն իրեն նախատելով դարձավ Սարյանը յուր բնակարանը: Սանդուղքների վրա պատահեց մի անծանոթ պարոնի, որը մի խրոխտ և սպառնալից հայացք ձգելով յուր վրա, քթի տակ մռմռաց:

— Հը՛մ... սպասիր. քեզ հետ էլ հաշիվ կտեսնենք...— Անծանոթը Մովսիսյանն էր:

Վահանը բարձրացավ դեպի վեր, առանց այդ պարոնի սպառնալից հայացքի և մռմռոցի պատճառը հասկանալու:

Նախասենյակում պատահեց Շուշանին, որը եկել էր Մովսիսյանին ճանապարհելու: Սա էլ արհամարհական հայացք ձգեց յուր վրա և ներս մտնելով սենյակի դուռը աղմուկով փակեց:

— Իրավունք ունիս. դու էլ իրավունք ունիս ինձ արհամարհելու, ողորմելի որդն...— մրմնջաց Վահանը և ներս մտնելով փակվեցավ սենյակի մեջ:

Ժամերն անցան, մութը կոխեց և նա դեռ տխուր մտքերի մեջ խորասուզված պառկած էր մահճակալի վրա:

Երբ փոքրիկ աղախինը ներս մտավ լամպարը վառելու, Վահանը տեղից վեր թռավ, կարծելով թե եկողը Շուշանն է, որովհետև այդ ծառայությունը միշտ օրիորդն էր անում, որպեսզի դրանով առիթ ունենան մի քանի վայրկյան ավելի խոսակցելու գեղեցիկ երիտասարդի հետ: Բայց որովհետև նրանից սիրվելու հույսը կորցրել էր այժմ, ուստի այդ պաշտոնը հանձնել էր աղախնին: Այդ բանը աննկատելի չմնաց Վահանից:

Բացի այդ, տիկին Մարթան ցանկանալով հասկացնել Սարյանին որ նա այսուհետև մի հասարակ տնկեց է և ոչ թե առաջվա նման հարգելի փեսացու, այդ երեկո թեյի չհրավիրեց նրան յուր մոտ, ինչպես միշտ անում էր, այլ մի բաժակ թեյ ածելով աղախնի ձեռքով ղրկեց նրան:

Վահանը զգաց, որ տանտիրուհին ցանկանում է դրանով վիրավորել իրեն, ուստի ետ դարձրեց թեյը, հայտնելով, որ խմել ու ախորժակ չունի:

Շաշյանը, որ Վահանի շնորհիվ նույն բախտին էր հանդիպել, բայց, իհարկե, յուր թեյը ետ չէր դարձրել, սրտատրոփ ներս ընկավ Սարյանի սենյակը իմանալու համար թե՝ ի՞նչ պատճառով արդյոք տանտիրուհին անբարեհաճ աչքով է նայում այսօր «Փնջիկ»-ի խմբագրապետի և նրա շնորհալի աշխատակցի վրա, բայց Վահանից պատասխան չստանալով մի քանի անգամ սենյակը չափեց, տրովադորից մի կտոր երգեց և ապա բարի գիշեր մաղթելով յուր աշխատակցին, դուրս գնաց:

ԺԸ

ՀԻԱՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Հետևյալ առավոտ Վահանը շատ ուշ զարթեցավ, որովհետև գիշերվա մեծ մասը անցրել էր մտատանջության մեջ, որի պատճառով շատ ուշ էր քնել: Առաջին անգամ երբ աչքերը բացավ, տեսավ, որ արևի շողերը ընկել էին յուր մահճակալի վրա: Այդ նշան էր, որ առավոտյան ժամերը անցել էին արդեն: Բայց և այնպես նա հագնվելու և

լվացվելու համար չշտապեց, որովհետև պարապելու ոչ սիրտ և ոչ տրամադրություն ուներ:

Չնայելով որ խմբագիր Շաշյանը ներս մտնելով գանգատվեց, որ առավոտյան ժամը ութից արդեն տպարանի ծառան նախասենյակում կանգնած նյութի է սպասում և սրտաշարժ ձևով նկարագրեց, թե ինչպես գրաշարները պարապությունից տպարանում նստած հեքիաթներ էին պատմում միմյանց և թե այդ բանը իրեն, խմբագրին, այնպես է զայրացրել, որ երեկ կամեցել է բոլորին էլ տպարանից արտաքսել, այսուամենայնիվ Վահանը չպատասխանեց նրան և մինչև անգամ գլուխը բարձի վրայից չբարձրացրեց:

— Հիվա՞նդ եք,— հարցրեց Շաշյանը,— թև հիվանդ եք, բժիշկ հրավիրենք:

Սարյանը չպատասխանեց:

— Դուք երեկվանից արդեն չեք խոսում, գուցե համրացել եք և չեք զգում,— աչքերը մեծ բանալով հարցրեց խմբագիրը:

Սարյանը ժպտաց:

— Հավատացեք, այդ կարող է պատահել. իմ հայրս, ասում են, ամբողջ մի շաբաթ համրացել էր և ինքը այդ չգիտեր:

— Հետո՞,— հարցրեց Վահանը:

— Հետո մեռավ:

— Մեռնելուց հետո է՞լ չզգաց յուր համրությունը:

— Կարծեմ չի զգացել,— լրջությամբ պատասխանեց խմբագիրը:

Սարյանը սրտանց ծիծաղեց, և այդ ծիծաղը կարծես զվարթացրեց նրան:

— Ուրեմն նյութ կուղարկեք տպարան, այնպես չէ՞,— սիրտ առնելով հարցրեց խմբագիրը:

— Ո՛չ

— Ինչպե՞ս. հապա ի՞նչ անեն գրաշարները:

— Թող էլի հեքիաթներ պատմեն:

— Խնդրում եմ, կատակը թողեցեք. վաղուց ձեզ սպասում է ծառան:

— Այսօր ես պարապել չեմ կարող:

— Բայց երեկ խո պարապել եք:

— Երեկ էլ չեմ պարապել:

— Իսկ անցյա՞լ օրը, անցյալի նախընթա՞ց օրը... վերջապես մի բան կունենաք, տվեք, որ ծառան ձեռնունայն չվերադառնա:

— Թերթի խմբագիրն եք, ինչո՞ւ մի բան էլ դուք չեք պատրաստում:

— Ո՞ւր է, կարողանում ե՞մ. մինչև ձեր գալը էլի վարժություններ անում էի. բաներ էի գրում: Մի անգամ էլ մի ոտանավոր գրեցի, ափսոս որ անիծած Մոմճյանը վեր առավ պատռեց. այնպես լա՛վ բան էր որ. կարծեմ կաչաղակների վրա էի գրել...

— Կաչաղակների վրա՞:

— Չէ, չէ մեղա աստուծո, ծիծեռնակների վրա, — ծիծաղը զսպելով հարցրեց Սարյանը.

— Գրել էի... լավ չեմ հիշում, թե ի՞նչ էի գրել, բայց կարծեմ այն միտքն էի հայտնում թե եթե ծիծեռնակները չլինեն, մենք չենք կարող իմանալ, թե գարունը գալի՞ս է, թե ո՛չ:

— Շատ լավ միտք եք հայտնել, ինչո՞ւ համար է պատռել այն հիմարը,— ասաց Վահանը ծիծաղելով:

— Նախանձից, հավատացնում եմ ձեզ, նախանձից:— Վահանը սկսեց ավելի բարձրաձայն ծիծաղել:

— Համրությունդ անցավ, ա՛յ, երախտիքս չեք իմանալ. դե, հիմա նյութը տվեք, որ տպարան ղրկեմ, ծառան սպասում է:

Վահանը ծիծաղը շարունակելով ձեռքը պարզեց դեպի սեղանը, որ մահճակալի մոտ էր դրված և մի քանի հատ ծալած թերթեր վերցնելով, նրանցից երկուսը ընտրեց, բաց արավ, ստորագրությունները ջնջեց և տվավ խմբագրին:

— Դրանք ձեր գրածներն են. ստորագրություններդ ինչո՞ւ եք ջնջում:

— Չեմ կամենում, որ այսուհետև իմ ստորագրությունները երևան «Փնջիկ»-ի մեջ:

— Ինչո՞ւ,— զարմացմամբ հարցրեց խմբագիրը:

— Դա գաղտնիք է. բայց եթե կամենում եք, ձեր ստորագրությունը կդնեմ այս հոդվածի տակ:

— Ծաղրո՞ւմ եք ինձ:

— Ոչ, ինչո՞ւ եմ ծաղրում:

— Ուրեմն կատա՞կ եք անում:

— Ոչ, կատակ էլ չեմ անում:

— Հապա, գրեք տեսնեմ:

Վահանը վերցրեց գրիչը և երկու հոդվածների տակ էլ «Շաշյան» ազգանունը գրեց:

— Ուրեմն այդպես էլ կթողնե՞ք որ մնա, — հարցրեց խմբագիրը: — Այո՛, այսպես էլ կմնա:

— Կնշանակե «Շաշյան» ազգանունն էլ պիտի շարվի:

— Այո՛, այո՛, պիտի շարվի:

Խմբագիրը ուրախությունից չգիտեր ինչ աներ:

— Որ այդպես է, պ. Սարյան, անունս էլ դրեք, թող «Մանուկ Շաշյան» լինի:

— Ի՞նչ հարկ կա:

— Հորեղբորս որդին էլ է Շաշյան, չէ՞ որ կկարծեն թե՝ նա է գրողը, բայց եթե «Մանուկ» անունն էլ լինի, այն ժամանակ հաստատ կիմանան, որ գրողը ես եմ:

— Թող այդպես լինի, — ասաց Վահանը և գրիչը վերցնելով «Մանուկ» անունն էլ ավելացրեց:

Շաշյանը վերցրեց հոդվածները, շնորհակալություն արավ աշխատակցին և ուրախ սրտով դուրս գնաց:

Վահանը դարձյալ հուզվեցավ և ընկավ մտատանջության մեջ:

— «Ո՞վ կարող է հավատալ, թե այս բոլորը կատարվում է. թե սրանք իրողություններ են, իհարկե ոչ ոք,— մտածում էր նա.— «Փնջիկ»-ը մի թերթ է, որ գոյություն ունի, տպվում է, տարածվում է ժողովրդի մեջ: Նա պարծենում է յուր խմբագրով, յուր աշխատակիցներով, յուր խմբագրական ժողովներով, և սրանք բոլորը կան, ո՞վ կարող է հերքել. բայց... տեր աստված, ինչպե՞ս հեշտությամբ խաբում, ստում ու կեղծում են, ինչպե՜ս անխղճաբար հարստահարում են մարդկանց հավատը, վստահությունը... Սակայն, ի՞նչ եմ ասում, չէ՞ որ ես էլ այդ խաբվողներից և հավատացողներից մեկն էի, չէ՞ որ ես էլ հիացած, հափշտակված որոնում էի ա՛յն մթնոլորտը, ուր հասարակական բախտը ստեղծող և կառավարող, ուր ժողովրդին խելք և առաքինություն սովորեցնող իմաստուն գլուխներն են ապրում... և հասա այդտեղ. մտա սիրածս ու գուրգուրածս մթնոլորտի մեջ և... ո՜վ զարմանք, հենց այդտեղ Շաշյանին ու Մոմճյանին պատահեցի... Իհարկե, եթե բախտը չարժանացներ ինձ նրանց աշխատակից լինելու պատվին, ես էլ ուրիշների նման Շաշյանին՝ հասարակաց ձայնի առաջնորդ և Մոմճյանին՝ ժողովրդի առաքինության ուսուցիչ պիտի ճանաչեի: Դժբախտաբար ճշմարտությանը հասու եղա ավելի շուտ, քան հարկավոր էր, բայց ավելի ուրախ կլինեի խաբված մնալ, քան հուսահատվիլ: Ի՞նչ են կորցնում նրանք, որոնք «Փնջիկ»-ը առաջնորդող թերթի տեղ են դնում, որոնք չգիտեն, թե նրա խմբագիրը ապուշին մեկն է, թե նրա աշխատակիցները համբակներ են, թե նրա խմբագրական ժողովները ծառայում են թերթուս երեխաների բարքն ու վարքը փչացնելուն, թե, վերջապես, այդ հրապարակախոսական մարմինը, որի շուրջը պտտում են համակրողներ, պաշտպաններ, պաշտողներ և այլն, որին ուժ կամ կուսակցության բերան են համարում, ոչ այլ ինչ է ամփոփում յուր մեջ, եթե ոչ մի խեղճ Սարյանի, սահմանափակ զարգացման տեր մի երիտասարդի «պարապորդ ժամերի» աղքատիկ արդյունքը... Ի՞նչ են կորցնում նրանք, որոնք այս բոլորը չգիտեն, իհարկե ոչինչ: Նրանք գոնե այն մխիթարությունն ունին, որ հավատում են, թե իրենց ազգը մի նշանավոր թերթ և մի քանի տասնյակ գործողներ ավելի ունի, իսկ ե՜ս, այդ հավատն էլ կորցրել եմ...

Այս մտածմունքների հետ միասին Վահանը արդեն հագնվել և լվացվել էր: Նա պատրաստվում էր դուրս գալ, երբ հանկարծ դրսի դռան հնչակը քաշեցին այնպես ամուր, որ զանգը ամբողջ մի քանի րոպե սկսեց տատանվել ու ղողանջել: Դուռը բացվելուն պես մեկը սանդուղքներով արագ-արագ բարձրացավ դեպի վեր և աղախնից բարկացկոտ ձայնով հարցրեց.

— Սարյանը տա՞նն է:

— Այո՛,— պատասխանեց աղախինը:

Եկվորը ոտքերը ամուր տրոփելով բարձրացավ, բայց հենց նախասենյակում մեկը նրա առաջը բռնեց հարցնելով.

— Ո՞ւր ես գնում:

— Սարյանի մոտ:

— Ի՞նչ ունիս նրա հետ:

— Ոչինչ. խոսելիք ունիմ:

— Թո՛ղ, հանգիստ թող նրան. նա ո՛չ մի բանում մեղավոր չէ:

— Անկարելի է. ես նրա հետ էլ պիտի հաշիվ տեսնեմ: — Հանգիստ թող նրան, ասում եմ, հաշիվ ունիս, Մոմճյանի հետ վերջացրու:

— Այդ էլ կանեմ, մի՛ շտապիր...

Այս խոսակցությունը, որ տեղի էր ունենում նախասենյակում, որոշակի լսվում էր Վահանի սենյակում: Երիտասարդը թե՛ հետաքրքրվեց և թե՛ զարմացավ: Նա դուռը բացավ տեսնելու համար, թե ո՞վ է այդ սպառնալիք կարդացող նորեկը և ի՞նչ հաշիվ ունի յուր հետ: Նորեկը Մովսիսյանն էր, որ նախընթաց օրը սպառնացող հայացք էր ձգել յուր վրա և որին, սակայն, Վահանը չէր ճանաչում, իսկ նրա հետ խոսողը օրիորդ Շուշանն էր:

Վահանին տեսնելուն պես Մովսիսյանը մի կողմ հրեց օրիորդին և խրոխտ քայլերով առաջացավ դեպի նրա մուտքը:

Վահանը քաղաքավարությամբ ներս հրավիրեց սպառնացող պարոնին և դուռը փակեց:

— Դո՞ւք եք պարոն Սարյանը,— կոշտ ձայնով հարցրեց Մովսիսյանը:

— Այո՛, ձեր խոնարհ ծառան,— առանց վրդովվելու պատասխանեց Վահանը:

— Իմ ծառան չեք կարող լինել, քանի որ գործով ձեզ ինձ հակառակորդ եք ներկայացնում:

— Ամենից առաջ, պարոն, խնդրեմ հայտնեք ինձ, թե ո՞ւմ հետ պատիվ ունիմ...

— Սարգիս Մովսիսյանի:

— Շատ բարի, պարոն Մովսիսյան, համեցեք նստեցեք:

— Ոչ. շնորհակալ եմ. կանգնած էլ կարող եմ խոսել:

— Ուրեմն խոսեցեք. ի՞նչ եք կամենում:

— Դուք, պարոն, իրավունք եք տվել ձեզ հետամուտ լինել իմ հարսնացուին...

— Ի՞նչ կնշանակե այդ:

— Այդ կնշանակե, որ դուք կամեցել եք խլել իմ ձեռքից այն աղջկանը, որ միայն ինձ է սիրում:

— Եվ ո՞վ է այդ աղջիկը:

— Օրիորդ Շուշանը:

Սարյանը ժպտաց: — Մի՛ ժպտաք, պարո՛ն, թե չէ ևս պատասխանատու չեմ լինի՛լ, եթե գրգռվիմ:

— Ամենից առաջ, պարո՛ն, հայտնեցեք ինձ, թե ինչո՞ւ համար եք մտել իմ սենյակը, ի՞նչ եք կամենում ինձանից, իսկ հետո ձեր գրգիռը զսպելու պարտքը թողեք ինձ վրա...

Այս խոսքերը, որոնք խրոխտ և սպառնացող ձայնով արտասանվեցան, Մովսիսյանի վրա զգալի ազդեցություն արին: Նա մի քանի աստիճան ձայնը նվազեցնելով՝ պատասխանեց:

— Ես, պարոն, մտել եմ ձեզ մոտ վարձատրություն պահանջելու ա՛յն վիրավորանքին, որ հասցրել եք ինձ՝ հետամուտ լինելով իմ հարսնացուին:

— Պարոն, ես կարող էի մինչև անգամ ներս չթողնել ձեզ իմ սենյակը և ոչ էլ կամենալ լսել ձեր հայտարարությունն ու սպառնալիքը, բայց որովհետև տեսնում եմ, որ ձեզ մոլորեցրել են, ուստի կարևոր եմ համարում հայտնել, որ ես ձեր հարսնացուին ո՛չ հետամուտ եմ եղել, ո՛չ աշխատել եմ խլել նրան ձեր ձեռքից և ոչ էլ մտածել եմ, թե այս տանը ապրում է մի աղջիկ, որի վրա արժե ուշադրություն դարձնել...

— Պարո՛ն, դուք այդ արհամարհական խոսքերով կամենում եք կրկնապատիկ վիրավորել ինձ. զգուշացեք, դուք կարող եք զղջալ,— գոռաց Մովսիսյանը:

— Չափավորեցեք ձեր ձայնը, թե չէ զղջացողը դուք կլինիք:

— Ես վարձատրություն եմ պահանջում ստացածս վիրավորանքի համար, հասկանո՞ւմ եք, վարձատրություն...— աստիճանաբար ձայնը բարձրացնելով գոռում էր Մովսիսյանը:

— Ի՞նչ վարձատրություն, խելագար, ասում եմ, որ ես ձեր հարսնացուի փանաքի գոյությունն անգամ չեմ նշմարել այս տանը, չե՞ք հասկանում:

— Ինչպե՞ս, իմ հարսնացո՞ւն... փանաքի՞... դուք համարձակվում եք...— այս ասելով նա բռունցքը շարժելով դիմեց դեպի Սարյանը:

Սյունեցի երիտասարդը ժամանակ չտվավ հակառակորդին յուր բռունցքը գործ գնելու և մի շեշտակի ապտակ չափեց նրա երեսին:

Այդ միջոցին ներս թափվեցան կռվողների մոտ օրիորդ Շուշանը, տիկին Մարթան, տան աղախինը և Շաշյանը, որոնք և մեծ դժվարությամբ ազատեցին Սարյանի ձեռքից խրոխտացող Մովսիսյանին, որին սյունեցի կտրիճը կամենում էր տեղն ու տեղը ջարդել:

Երբ մայր ու աղջիկ դուրս տարան Մովսիսյանին, Սարյանը շտապ-շտապ հագավ վերարկուն, ծածկեց գլխարկը և դուրս գնաց:

Տասը րոպեից ետ նա վերադարձավ յուր սենյակը երկու մշեցի մշակների հետ, որոնց և հրամայեց հավաքել յուր իրեղենները և կապկպել:

Շաշյանի հարցին, թե ինչո՞ւ իրեղենները կապում է, նա պատասխանեց՝ տեղափոխվում եմ ավելի ընդարձակ սենյակ, ուր կարողանամ բռունցքներս ազատ շարժել. այստեղ կանայք արգելում են:

Շաշյանը չվիրավորվեց, այլ դուրս վազեց հայտնելու տանտիկնոջը Սարյանի հեռանալու մասին, որպեսզի նա արգելե յուր աշխատակցին: Վերադառնալուց

պատահեց Մոմճյանին, որը եկել էր բացատրություն պահանջելու խմբագրից այն ստորագրությունների մասին, որոնք դրված էին Սարյանի ձեռքով գրած հոդվածների տակ և որոնց խմբագիրը ղրկել էր տպարան շարելու:

Շաշյանը ավելորդ համարեց առայժմ այդ ստորագրությունների մասին խոսել և հայտնեց Մոմճյանին այն ցավալի նորությունը, որ տեղի էր ունեցել Սարյանի սենյակում:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ էր շինում այստեղ Մովսիսյանը,— անհանգստությամբ հարցրեց Մոմճյանը և Շաշյանի հետ միասին մտավ նրա սենյակը:

— Ի՞նչ պիտի պատահեր. իմ գուշակությունը կատարվեց,— պարծեցավ Շաշյանը:

— Ի՞նչ գուշակություն,— հարցրեց Մոմճյանը զարմանալով, որովհետև հավատացած էր, որ Շաշյանը նախատեսելու այնքան շնորհք չունի, որ ապագա գալիքների մասին գուշակություն անե:

— Ես չասացի՞ ձեզ մի օր, թե մենք վառոդը շատ ենք մոտեցրել կրակին:

— Ի՞նչ առիթով էիք ասում, չեմ հիշում:

— Սարյանի սիրահարության:

— Հա. հետո՞:

— Հետո ա՛յն, որ ես խորհուրդ տվի հեռացնել այստեղից Սարյանին, թե չէ, ասում էի, մեծ վտանգ կտրող է առաջանալ:

— Այո՛, այո՛, հիշում եմ. այժմ ի՞նչ է պատահել:

— Այն է պատահել, որ Մովսիսյանը իմացել է այդ սիրահարության պատմությունը և եկել է այսօր յուր հակառակորդից հաշիվ պահանջելու:

— Եվ ի՞նչ հաշիվ էր պահանջում:

— Սիրահարները ինչպե՞ս հաշիվ կպահանջեն. եկել էր Սարյանին ծեծելու:

— Եվ ծեծե՞ց նրան:

— Ո՞նց չէ, ծեծե՞ց, կարծես թե իմ հայրենակցին հեշտ է ծեծելը: Ընդհակառակը, Վահանը այնքան տվավ Մովսիսյանին, որ խեղճի շունչը կտրվեց:

Մինչդեռ Շաշյանը յուր հայրենակցի քաջագործության պատմությունն էր անում, Սարյանը արդեն յուր իրեղենները կապել և մշակների շալակն էր բարձել: Հազիվ վերջիններս կամեցան ոտքերնին դուրս դնել սենյակից և ահա տիկին Մարթան վրա հասնելով ճչաց.

— Այդ ո՞ւր եք տանում, վայր դրեք:

— Տիկին, իմ իրեղեններն են. տեղափոխում եմ ուրիշ տեղ. արգելելու ի՞նչ ունիք,— առաջ անցնելով հարցրեց Սարյանը:

— Ձեր իրեղեններն է, կարող եք տանել, ես չեմ արգելում և արգելելու էլ իրավունք չունիմ. բայց առաջ այս տան մեջ ապրելուդ վարձը վճարեցեք: Այդպես թաքուն ու գողունի փախչելը պատիվ չէ բերում ձեզ և ես էլ թույլ չեմ տալ ձեզ այդպես վարվելու:

Սարյանը նոր զգաց յուր սխալը և մնաց կանգնած: Տանտիրուհին իրավունք ուներ: Ամբողջ ամիս էր, ինչ ինքը այդ կնոջ մոտ ապրում, ուտում և խմում էր, սեր, հարգանք և պատիվներ էր վայելում և, սակայն, այդ բոլորի փոխարեն դեռ մի որևէ փող չուներ վճարած: Այդ բավական չէ, նա առանց մի խոսք ասելու տանտիրուհուն, դուրս էր գնում նրա տնից: Չէ՞ որ տիկինը իրավունք ուներ նրան «թաքուն ու գողունի փախչող» անվանելու: Բայց մի՞թե խեղճ երիտասարդը դիտմամբ էր այդպես արել. չէ՞ որ նա յուր հուզման ժամանակ մոռացել էր ամեն բան. մոռացել էր յուր պարտքը, վայելած սերը, ստացած պատիվները և միայն հիշում էր մի բան, այն է — որ այդ տունը, ուր բնակվում էր ինքը, չարության ոգիների մի ժողովարան է, որտեղից ժամ առաջ փախչել հեռանալ թե՛ անհրաժեշտ էր և թե՛ կարի ցանկալի:

Բայց երիտասարդի անխորհուրդ կերպով շտապելը ծանր ճգնաժամի մեջ դրավ իրեն, նա պարտավոր էր վճարել տանտիրուհուն յուր պարտքը, և ա՛յն՝ հենց այդ միևնույն րոպեին: Բայց ո՞րտեղից վճարեր: Յուր ունեցած փոքրիկ գումարը մինչև այդ օրը ծախսել վերջացել էր: Նրան մնում էր նորեն ներս առներ յուր իրեղենները և այդպիսով արդարացնել տիկնոջ այն մեղադրանքը թե՝ ինքը թաքուն փախչել էր կամենում: Այդ միտքը խորը վիրավորեց երիտասարդի ինքնասիրությունը: Մի քանի րոպե նա մնաց լուռ արձանացած և չգիտեր ի՞նչ պատասխանել տանտիկնոջը: Բայց հանկարծ մի բախտավոր միտք ծագեց նրա գլխում, որ յուր կարծիքով պիտի փրկեր իրեն ներկա ճգնաժամին:

— Ներեցեք, տիկին, ձեր պարտքը վճարելու մասին, խոստովանում եմ, չէի մտածել: Այնքան հուզված էի, որ այդ բանը կարող էի մոռանալ: Բայց եթե սպասեք մի քանի վայրկյան, ես իսկույն կբերեմ:

— Մի ժամ էլ կսպասեմ, գնացեք և բերեք,— պատասխանեց տիկինը սառնությամբ, և երիտասարդը թողնելով նրան մշակների հետ, շտապ ներս մտավ Շաշյանի սենյակը:

Տեսնելով այդտեղ Մոմճյանին, Վահանն ուրախացավ, որովհետև նա թեպետ մտադիր էր Շաշյանից փող խնդրել, բայց կասկածում էր, թե գուցե նա չունենա, այժմ Մոմճյանին տեսնելով այդտեղ միամտվեց, որ ցանկացած գումարը անպատճառ կստանա:

— Ես արդեն հեռանում եմ այստեղից, բայց նախքան հեռանալս տիկնոջը փող պիտի վճարեմ, եթե կարող եք տվեք ինձ մի երեսուն ռուբլի իմ ռոճիկի հաշվից.— այս խոսքերով դիմեց Վահանը Մոմճյանին:

— Հեռանո՞ւմ եք. ինչո՞ւ,— հարցրեց Մոմճյանը զարմացած:

— Գլխավոր պատճառը գուցե ձեզ հայտնի է, մանրամասնության մասին հետո կխոսեմ:

— Պատճառը, այո՛, պարոն Շաշյանը մի հարևանցի պատմեց ինձ, բայց արժե՞ միթե մի որևէ Մովսիսյանի կողմից կրած վիրավորանքի պատճառով հեռանալ:

— Արժե՞ թե ոչ— հեռանում եմ. մնալ չեմ կարող. ձեզ միայն ա՛յն եմ խնդրում, որ միջոց տաք ինձ պարտքս վճարելու և այնպես դուրս գնալու:

— Չէ, անկարելի է. ես չեմ կարող տանել, որ մեր աշխատակիցը մի որևէ Մովսիսյանի վարմունքին այդքան մեծ նշանակություն տա. ձեզ չեմ թողնիլ: Սպասեցեք, ես տիկնոջ հետ կխոսեմ:— Այս ասելով Մոմճյանը կամեցավ դուրս գալ, բայց Սարյանը նրան արգելեց:

— Ո՛չ. ես արդեն վճռել եմ հեռանալ և կհեռանամ. տիկնոջ հետ խոսելու ոչինչ չունիք. տվեք ինձ խնդրածս գումարը և ես շնորհապարտ կմնամ ձեզ:

— Բայց եթե այստեղից հեռանաք, խմբագրության գործը կդժվարանա, մենք պետք է միասին լինենք: Արդյոք ամեն օր վաղ առավոտյան կարո՞ղ եք գալ այստեղ:

— երբեք էլ չպիտի գամ:

— Ինչպե՞ս թե չպիտի գաք,—զարմացած հարցրեց Մոմճյան:

— Այնպես էլի, չպիտի գամ. կարծեմ բավական պարզ եմ խոսում:

— Այո՛, պարզ եք խոսում, բայց և այնպես ինձ համար անհասկանալի է, թե ինչո՞ւ չպիտի գաք: Չէ՞ որ խմբագրատուն մտնել ձեզ չեն կարող արգելել ո՛չ տիկին Մարթան, ո՛չ Մովսիսյանը և ո՛չ ուրիշ մեկը:

— Նրանք, իհարկե, չեն կարող արգելել, բայց ես... ինչպե՞ս ասեմ, չգիտեմ:

— Շարունակեցեք, ի՞նչ էիք կամենում ասել:

— Կամենում էի ասել... բայց չէ՛, այս մասին հետո կխոսենք, տվեք ինձ խնդրածս գումարը, տիկինը սպասում է ինձ: — Տիկինը համբերող է, նա կարող է երկար սպասել մի՛ անհանգստանաք. ասացեք միայն ա՛յն, ինչ որ կամենում Էիք ասել:

-- Եթե միայն քաջություն կունենաք լսել և իրավացի համարել ինձ:

— Ամեն բան լսելու քաջություն ունիմ, բայց լսելուց առաջ իրավացի համարել ձեզ չեմ կարող. խոսեցեք տեսնենք:

— Ես, պարոն Մոմճյան, իսկապես հեռանում եմ ձեզանից:

— Ինձանի՞ց:

— Ոչ միայն ձեզանից, այլ ձեր ընկերներից, բարեկամներից, ձեզ հետևողներից, միով բանիվ ա՛յն շրջանից, որի մեջ ապրում և գործում եք դուք:

— Պատճա՞ռը, պարո՛ն:

— Պատճառը բացատրել չեմ կարող, բայց հավատացեք, որ հարգելի է:

— Որովհետև հրամայում եք, կհավատամ. գուցե այդ գոհացնե ձեր ինքնասիրությունը. բայց և այնպես դուք իրավունք չունիք ինձ վիրավորելու առանց ձեր «հարգելի» պատճառը բացատրելու:

— Հարգելի պատճառն այն է, պարոն, որ ես ճանաչել եմ ձեզ ավելի լավ, քան կարող եք կարծել և հենց այդ ծանոթության շնորհիվ անհամակրելի են ինձ ձեր անձնավորությունը, ձեր գործունեությունը, ձեր գաղափարները, ձեր հայացքները: Դուք բոլոր ժամանակ զբաղված եք ստելով, կեղծելով, դավեր լարելով, մեքենայություններ սարքելով, թե՛ թշնամիներիդ հավասարապես խաբելով:

«Ինչո՞ւ համար եք անում այդ բոլորը, չգիտեմ, գուցե ապագայում մեծամեծ բարիքներ եք սպասում այդ եղանակի գործունեությունից, ինչպես հաճախ կրկնում էիք դուք, բայց ես, ի՞նչ մեղքս թաքցնեմ, չեմ հավատում ձեզ և կարծում եմ, որ ձեզ դեպի այդ տեսակ գործեր մղողը ո՛չ թե ազգի ապագա երջանկության նախանձախնդրությունն

է, այլ մի չարության ոգի, որը, չգիտեմ ի՞նչ խորհրդավոր նպատակով, բնակալել է ձեր երիտասարդ սրտի մեջ:

— Պարո՛ն, պարո՛ն, չափավորեցեք ձեր հանդգնությունը...— ներքին վրդովմունքով բացականչեց վերջապես Մոմճյանը, որ մինչև այն համբերությամբ և մեծանձնություն կեղծելով լսում էր Սարյանին: իհարկե, նա կկամենար դարձյալ համբերել. նա կշարունակեր դարձյալ ժպտալ և մեծանձնություն կեղծել, որովհետև չէր կամենում Սարյանի նման պիտանի երիտասարդին հեռացնել իրենից, չէր կամենում յուր թաքուն նպատակներին ծառայող «Փնջիկ» թերթը զրկել այն անզուգական աշխատակցից, որը այդ անվան տակ բուն խմբագրի դերն էր կատարում: Սակայն Սարյանի նկատողություններն անցնում էին արդեն չափավորության սահմանը և շոշափում էին յուր արժանապատվությունը:

Մոմճյանը որքան էլ թանկ գնահատեր այդ երիտասարդի բարեկամությունը, այսուամենայնիվ, չէր կամենալ յուր պատվասիրությունը զոհել այդ բարեկամությանը, մանավանդ որ Սարյանի վերջին խոսքերից արդեն նա չափում էր այն անջրպետը, որը բաժանում էր իրեն այդ պահպանողական հոգով մեծացած երիտասարդից և նորից նրան գրավելու հույսը ի դերև էր հանում:

Մոմճյանի բացականչությանը Սարյանը ավելի մեղմ ձայնով պատասխանեց:

— Մի՛ վրդովվիք և թույլ տվեք, որ վերջացնեմ, որովհետև մի քանի րոպե առաջ ասացիք, որ քաջություն կունենաք ինձ լսելու, ուրեմն լսեցեք.

Ձեր մասին այս աստիճան վատթար կարծիք ունենալուս պատճառը ինքներդ եք: Ես միշտ ցանկացել եմ ազնիվ մարդ ճանաչել ձեզ. բոլոր ուժս գործ եմ դրել ձեր հայտնած տարօրինակ կարծիքները, բարոյական օրինաց հակառակ մտքերը, հայացքները և այլն հօգուտ ձեզ բացատրել. միշտ աշխատել եմ ինձ տգետ և ձեզ գիտնական ճանաչել, որպեսզի այդպիսով կարողանամ արդարացնել այն անճոռնի և անհեթեթ քարոզությունները, որ շարունակ անում էիք թե՝ ինձ և թե՛ ձեր շրջանի մարդկերանց: Ինձ համար ծանր էր հավատալ, թե արդարև դուք այն մարդն եք, ինչ որ երևում էիք. ցանկանում էի այդ դեպքում մինչև անգամ խաբվել... Բայց այս վերջին հայտնությունները հաստատապես համոզեցին ինձ, որ ես իզուր եմ մաքառում իմ խղճի և նախազգացման դեմ, որ ես, արդարև, չեմ կարող ապրել ու գործել ձեզ հետ, որովհետև ես ազնվության, անկեղծության և ճշմարտության սիրահարն եմ, իսկ դուք՝ ստության, խարդախության և անիրավության...

— Պարո՛ն Սարյան, բավական է վերջապես, դու փորձության եք ենթարկում իմ հարաբերությունը... ես կարող եմ ինձ մոռանալ,— որոտալով բացականչեց Մոմճյանը և բռունցքով զարկեց սեղանին, որի կողքին կանգնած էր ինքը:

— Լավ կանեք, որ ձեզ չմոռանաք, հակառակ դեպքում ինքս կհիշեցնեմ ձեզ ձեր գոյությունը,— սառնասրտությամբ, բայց, սպառնացող ձայնով պատասխանեց Սարյանը.— ես, պարոն, իմ ասելիքը արդեն ասել եմ: Մնում է խոստովանել ձեզ մի գաղտնիք, որը կարող է արդարացնել իմ ձեզ արած նկատողությունների խստությունը. այդ ա՛յն է, պարոն, որ ես երեկ կանգնած էի ձեր նախասենյակում և լսում էի այն անկեղծ խոստովանությունները, որ դուք իմ վերաբերմամբ անում էիք տիկին Մարթային՝ համեմելով նրանց մտերմական կատակներով...

— Դո՞ւք, իմ նախասենյակում, ի՞նչ իրավունքով...

— Ես էլ եկել էի բացատրություն պահանջելու ա՛յն ինտրիգայի մասին, որը սարքել էիք իմ դեմ, և որի վերջաբանը այսօր Մովսիսյանի հետ ավարտեցինք:

— Այդ ցածություն, այդ ստորություն է...— բարկությունից կարմրելով և խաժակ աչքերը յուղոտ կապիճների մեջ սպառնալից ձևով շրջելով բացականչեց Մոմճյանը:

— Ձեր ինձ քարոզած հարյուր ցածություններից մեկը միայն գործ գրի և այն, ոչ թե ուրիշին վնասելու, այլ ինձ վնասից ու վտանգից ազատելու համար և, տեսնում եք, ձեզ գրգռում է իմ վարմունքը: Հապա ի՞նչ կանեիք, եթե մնացյալ ինսուլինը ցածություններն էլ գործ դնեին ձեր դեմ... Այս փոքրիկ փաստը թող համոզե ձեզ, որ դուք անիրավության ճանապարհով եք առաջ գնում և որ ձեր ու ձեզ հետևողների վախճանը կորստյան անդունդն է:

Այս միջոցին սենյակի դուռը բացվեցավ և տիկին Մարթան գլուխը դռան միջից հանելով ճչաց. — Պարոն, ինչո՞ւ ինձ այստեղ սպասեցնել եք տալիս, բերում եք, բերեք փողը, թե չէ ես գործ ունիմ:

— Օհ, ներողություն, ներողություն, իսկույն, այս րոպեին,— ասաց Սարյանը և ապա դառնալով Մոմճյանին, ավելացրեց.— տվեք ինձ, խնդրեմ, իմ ռոճիկը, այդ կինը սպասում է:

— Ձեր ռոճի՛կը. ի՞նչ ռոճիկ ենք խոստացել ձեզ:

— Մոռացե՞լ եք:

— Ոչ չեմ մոռացել... բայց ինչպե՞ս ենք որոշել... խնդրեմ նայեցեք մեր հիշատակարանը,— դարձավ Մոմճյանը Շաշյանին:

— Ինքս կարող եմ հիշեցնել ձեզ,— ասաց Սարյանը,— դուք ինձ խոստացել եք իբրև վարձատրություն «Փնջիկ»-ի տարեկան զուտ օգտի քսանևհինգ տոկոսը:

— Այո՛, ես էլ այդպես եմ նշանակել այստեղ,— վկայեց Շաշյանը նայելով հիշատակարանին:

— Լավ, կնշանակե յուրաքանչյուր հարյուր ռուբլուց քսանևհինգ ռուբլի,— ասաց Մոմճյանը:

— Այո՛, ճիշտ այդպես,— հաստատեց Շաշյանը:

— Ուրեմն, նայեցեք հաշվեգրքին և տեսեք, թե մեր այս տարվա զուտ օգուտը որքա՞ն է, որպեսզի նրան ամիսների վրա բաժանելով, պարոնին հասանելիք ռոճիկի չափը որոշենք:

— Այս տարի մենք զուտ օգուտ չենք ունեցել. ընդհակառակը, ավելորդ ծախսերից առաջացած պարտք ունենք մոտ վեց հարյուր ռուբլի,— հաշվեգրքին նայելով հայտարարեց Շաշյանը:

— Կնշանակե յուրաքանչյուր ամիս վնաս ունենք հիսո՞ւն ռուբլի,— հարցրեց Մոմճյանը:

— Ճիշտ այդպես:

— Ուրեմն պարոն Սարյանի բաժինը կլինի 12 ռ. 50 կոպեկ,— հաշվեց Մոմճյանը:

— Ինչպե՞ս, ուրեմն մի ամսվա ծառայության համար միայն այդքա՞ն եք վճարում.— զարմացած հարցրեց Սարյանը, Մոմճյանի խոսքը չհասկանալով:

— Ոչ թե վճարում ենք, այլ պիտի ստանանք ձեզանից: 12 ռ. 50 կոպեկ, որովհետև այս տարի ձեր բախտից մենք ոչ թե օգուտ, այլ վնաս ունենք:

— Ի՞նչ եք ասում, ես չեմ հասկանում,— շփոթված հարցրեց Վահանը:

— Այն եմ ասում, որ մեր պայմանը ընկերական է եղել, այսինքն մեր թերթի զուտ օգտի քսանհինգ տոկոսը դուք պետք է ստանայիք, կնշանակե դուք մեր օգտի ընկերն եք եղել: Եվ որովհետև առևտրական օրենքով օգտի ընկերը վնասին էլ ընկեր է լինում, կնշանակե այս ամսվա համար փոխանակ մեզանից փող ստանալու, ինքներդ պիտի վճարեք մեզ 12 ռ. 50 կոպեկ, որը մեր կրած վնասի ձեր բաժին քսանուհինգ տոկոսն է կազմում,— ցինիկական լրջությամբ ասաց Մոմճյանը:

Սարյանը երկու քայլ ետ գնաց, խոժոռեց դեմքը և հրացայտ աչքերը Մոմճյանի շարժուն բիբերին ուղղելով, լուռ սրտմտությամբ նայեց նրան մի վայրկյան և ապա գլուխը շարժելով բարձրաձայն արհամարհանքով արտասանեց.

— Դուք կարող եք պարծենալ այն առավելությամբ, որ անամոթությունը ձեր պատկերով է շրջում մարդիկների մեջ... այդ պարծանքը կլինի նաև ձեր հասարակական գործունեության վարձատրությունը... իսկ ես գոհ եմ արդեն նրանով, որ այս փոքրիկ զոհաբերության գնով կարողացա վերջապես խլել ձեր երեսից ձեր մարդախաբ դիմակը...

Այս ասելով նա շուռ տվավ երեսը և առանց ուշադրություն դարձնելու Մոմճյանի հայհոյանքներին, դուրս գնաց նախասենյակը: Այստեղ սպասում էին նրան տիկին Մարթան, յուր աղախինը և երկու մշակները իրենց կապոցներով:

— Իմ հաշվի մեջ չարաչար սխալվեցա, տիկին,— ասաց Վահանը տանտիրուհուն.— հույս ունեի թե այս մարդիկներից ռոճիկ կստանամ և պարտքս կվճարեմ, բայց բանից երևաց, որ դեռ ես եմ իրենց պարտական... Ինչպես տեսնում եք, իմ բոլոր կարողությունը այս երկու կապոցներն են կազմում: Մեծի մեջ գտնվում են իմ անկողինը, ճերմակեղենը և իմ գրքերը, որոնք իմ գործածության համար անհրաժեշտ են. փոքրի մեջ՝ իմ նոր հագուստները: Վերջին կապոցը պահեցեք խնդրեմ ձեզ մոտ, իբրև գրավ, իմ պարտքի համար, իսկ մյուսը իբրև անհրաժեշտություն, թույլ տվեք տանելու:

— Համաձայն եմ,— ասաց տիկինը և հագուստների կապոցը տալով աղախնին՝ հրամայեց տանել յուր սենյակը:

Մյուս կապոցը Վահանը հանձնեց մշակներից մեկին և նրա հետ միասին դուրս գնաց իրեն այնքան վիշտ ու զրկանք պատճառող ատելի տանից:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՎԵՐՋ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Ա

Հին բարեկամը

Շատ անգամ սպառնացող վտանգից փախչելու ցանկությունը այնքան բուռն է լինում մարդու մեջ, որ ապավինելու տեղը և հանգամանքները չնախատեսելով՝ նա ավելի ծանր կացության մեջ է դնում իրեն վտանգից փախչելով, քան կարող էր դնել վտանգի դեմ խիզախելով:

Այսպես պատահեց և Վահան Սարյանի հետ:

Դուրս գալով տիկին Մարթայի տանից, նա արագ քայլերով առաջանում էր երկար և ընդարձակ փողոցի ուղղությամբ, առանց ետ նայելու և առանց ուր գնալը որոշելու: Նրա միակ ցանկությունն էր փախչել, հեռանալ այն տանից և մարդկանցից որոնք այնքան հոգս ու վիշտ պատճառեցին իրեն: Այս պատճառով «ո՞ւր գնալու» հարցը դեռ չէր զբաղեցնում նրան: Նա զգում էր, որ քանի հեռանում է Մարթայի տանից, այնքան ավելի թեթևանում և ազատ է շնչում: Նրան թվում էր, թե օդը որպե առ որպե ավելի թարմացնում ու կենդանացնում է իրեն. թե յուր ոտքերն ու թևերը հետզհետե ավելի ուժ ու կորով են ստանում. թե Թիֆլիս քաղաքը առաջին անգամն է սեփական աչքերով տեսնում, կամ կարողանում ազատ հայացքով աջ ու ձախ նայել, անցորդները դիտել, փողոցները քննել և գնալ՝ ուր որ կարողանում կամ կամենում է: Մի տեսակ գաղտնի երկյուղից թե՝ մի գուցե դեռ նոր զգալի դարձող այդ ազատությունը խլեն յուր ձեռքից, նա առաջ էր գնում հաստատուն քայլերով, համարձակ, և խրոխտաբար կարծես սպառնալով յուր դեմն ելնող ամեն մի արգելք բռունցքներով տապալելու:

Այսպես, շատ անգամ, պատահում է այն պարկեշտ, երկյուղած և, միևնույն ժամանակ, անփորձ երիտասարդների հետ, որոնք ի բնե ազնվասիրտ, հավատացող և գաղափարական (idcaliste) լինելով՝ մտնում են կյանքի հորձանքները առանց փորձառու առաջնորդի: Շարունակ դեպի բարին և գեղեցիկը ձգտելով, շարունակ ճշմարիտն ու ազնվականը որոնելով, նրանք չեն կամենում հավատալ թե՝ ճշմարտություն ու արժանիք որոնած տեղը կարող են հանդիպել նաև ստության ու կեղծիքների: Այս պատճառով ամեն մի համարձակ և խիզախող ուժի վրա նրանք նայում են ակնածությամբ: Այդ ուժը իբրև հեղինակություն ընդունելով, խոնհարվում են նրա առաջ, և այդ անում են անփորձության հատուկ այն հավատով թե՝ անարժանը չի կարող ասպարեզ իջնել արժանավորի անունով: Այդ հավատը, վերջ ի վերջո պատժում է ազնվասիրտ երիտասարդներին: Նրանք տեսնում և համոզվում են, որ ստությունը ավելի ճշմարտության, քան սեփական դեմքով է շրջում մարդկանց մեջ: Իսկության հասու լինելուց ետ, նրանց ցնցում է անողոք հիասթափությունը: Հիասթափությանը հաջորդում է կասկածը և հավատը կործանվում է երիտասարդ սրտերի մեջ՝ կործանելով յուր հետ երիտասարդական սրտի գերագույն հույսերն ու ակնկալությունները: Այդ ժամանակ, ահա, արդարասիրության հոգին ապստամբվելով պարկեշտության և երկյուղածության դեմ, խզում է համբերության կապանքները և դուրս է թռչում ազատ ոլորտի մեջ ազատ ապրելու համար: Այնուհետև այդ ապստամբ հոգին և՛ զգույշ, և՛ կասկածոտ է. նա նմանում է վիրավորված վարազի, որ որսորդը տեսնելուն պես՝ սպառնում է նրան արյունռուշտ աչքերով և կատաղի ժանիքներով...

- Թող մի անգամ էլ այդ տեսակ մարդիկ փորձեն ինձ խաբել , թող մի անգամ էլ համարձակվեն սևը սպիտակ ներկայացնել ինձ... այն ժամանակ... ա՛յ, սրանցով պիտի պատասխանեմ, սրանցով.— ինքն իրեն խոսում էր Վահանը, բռունցքները թափ տալիս և ճանապարհը շարունակում:

Երկար գնալուց ետ, վերջապես, մշեցի մշակի համբերությունը հատավ: Նա տեսնում էր, որ երիտասարդը առանց կանգ առնելու առաջ է գնում և այն էլ այնպիսի արագությամբ, որ ինքը հազիվ էր կարողանում ետևից հասնել: Ուստի մոտենալով հարցրեց նրան:

— Աղա՛, ո՞ւր պիտի գնանք:

Վահանը, որ մինչև այն միայնակ էր համարում իրեն, այս հարցի վրա ետ նայեց և տեսավ մշեցուն, որ իրեղենները շալակած հետևում էր իրեն: Այն ժամանակ միայն նա կարծես քնից արթնացած ինքն իրեն հարցրեց.— և իրավ, այս ո՞ւր եմ գնում:

Այս խոսքի վրա նա կանգ առավ մի րոպե. մտածեց և ապա մեքենայաբար հարցրեց մշակին:

— Լավ սենյակի տեղ չգիտե՞ս:

— Սենյակ վա՞րն է. օթախ գուզե՞ս,— հարցրեց մշակին:

— Այո՛, օթախ կուզեմ, տեղը գիտե՞ս:

— Օթախներ, ա՛յ, քարվանսերաները կան:

— Քարվանսարաներո՞ւմ...— հարցրեց երիտասարդը ինքն իրեն մտածելով:

— Հա՛, աղա՛. քարվանսերաները լավ օթախներ կան: Վահանի համար ծանր էր այնքան ժամանակ քաղաքի մեջ ապրելուց ետ նորեն քարվանսարաները վերադառնալ: Բայց ի՞նչ կարող էր անել: Փող չուներ, որ հյուրանոցում ապրեր. նա մտածեց, որ էլի քարվանսարաները կարող են յուր աղքատ գրպանների հետ հաշտվել, ուստի առաջին անգամ իրեն հյուրընկալող քարվանսարայի ճանապարհը բռնեց:

— Էլի մեզ մոտ էկար, աղա՛, խե՞ր ըլի,— ասաց քարվանսարայի սենեկապան մշակը, Վահանի ցանկացած սենյակի դուռը բանալով:

— Որ ձեզ մոտ եմ եկել՝ ձեզ համար խեր է ու խեր է,— ժպտալով պատասխանեց երիտասարդը: — Դուն ասա՛ քեզ համար խեր ըլի, թե չէ մեզ համար խերը միշտ կա. դուն չըլես, ուրիշը կգա:

Վահանը նայեց խոսող մշակի վրա. նրան այնպես թվաց, թե նա գիտե յուր արդի չքավոր դրությունը և կամենում է ծաղրել իրեն: Բայց վերջինս, իհարկե, չէր էլ մտածում յուր խոսածի վրա և զբաղված էր նոր հյուրի իրեղենները բանալով ու սենյակը կարգի բերելով:

Կես ժամից ետ Վահանը նոր բնակարանում միայնակ նստած, մտածում էր յուր վիճակի վրա, քննում էր մոտիկ անցյալը, անորոշ ներկան և ապագայի համար տխուր գուշակություններ էր անում:

«Ի՞նչ հույսերով, ի՞նչ ակնկալություններով մտա այս քաղաքը,— մտածում էր նա,— ինչպե՞ս քաղցր ժպտաց ինձ բախտը սկզբում, գործունեության ի՞նչ գեղեցիկ ասպարեզ բացավ իմ առաջ, ի՞նչ հուսածիծաղ ապագա էր խոստանում ինձ նա, և այդ բոլորը... ավա՜ղ, ինչպես շուտ, ինչպե՜ս աննկատ չքացավ իմ աչքերից: Կարծես թե այն բոլորը, ինչ որ տեսա, ինչ որ զգացի, ինչ որ իմ շուրջը կատարվեցան, ոչ այլ ինչ էին, եթե ոչ երազ, հուսախաբ ցնորք, որոնք արևը ծագելուն պես անհայտանալով աներևութացան...»:

Արևն ասացի, այո՛, ճշմարտության արևը, որ շատ անգամ ծածկվում է սևաթույր ամպերի ետևում, որ լույս չէ տալիս աշխարհի գիշերային թագավորության ժամանակ, բայց որը, այսուամենայնիվ, ապրում է որոշ ժամանակից ետ, ծագում և լուսավորում է աշխարհը յուր կենարար շողերով: Եվ սակայն յուր կարճատև բացակայության ժամանակ քանի-քանի մարդիկ մոլորվում են ուղիղ ճանապարհից, քանիսնե՞րը գլորվում են փոսերն ու խորխորատները, գիշերային խավարը որքա՜ն վնասներ է պատճառում անհայտության մեջ խարխափող արարածներին...

«Ինձ համար, փառք աստուծո, այդ արևը ծագեց ավելի վաղ, քան իրավունք ունեի սպասել: Այժմ արդեն ճանաչեցի, թե որտեղի՞ց են սկիզբն առնում մոլորության ճանապարհները, և որտե՞ղ են ծածկվում փոսերն ու խորխորատները... ճշմարիտ է, այդ ծանոթությունը ձեռք բերելու համար ՛ժամանակի հետ միասին զոհեցի նաև իմ քնքուշ զգացմունքներից. իմ քաղցր հույսերից շատերը, բայց և դրանով ապահովեցի ինձ անփորձության սխալանքների դեմ: Այդպես է: Աշխարհում առանց զոհաբերության ոչ մի բարիք չի ստացվում...»: Այս այլաբանական խորհրդածությունների ժամանակ, լսվեցավ սուրբ Գևորգ եկեղեցու զանգահարության ձայնը: Վահանը նայեց ժամացույցին և զարմացավ, տեսնելով, որ արդեն երեկոյան ժամը հինգն է: Օրը աննկատելի կերպով անցել էր, իսկ ինքը դեռ առավոտվանից անսվաղ էր:

— Այդ բոլորը լավ. բայց պետք է մտածել ապրուստի վրա. երկու օրից ետ հացի փող չեմ ունենալ գրպանումս, ո՞ւր և ո՞ւմ պիտի դիմեմ այն ժամանակ...»:

Այս մտածմունքը կարծես սարսափեցրեց խեղճ երիտասարդին և նա շտապավ տեղից վեր կենալով գդակը ծածկեց և դուրս գնաց:

Բայց ո՞ւր էր գնում, ինքն էլ չգիտեր: Վտանգը վերահաս տեսնելով նա կարծում էր թե՝ դուրս թռչելով կամ դես ու դեն վազելով կարող է փրկության ճանապարհ գտնել: Երբ իջավ քարվանսարի դիմացի հրապարակը, կանգ առավ այդտեղ:

Երեկոյան դեմ լինելով, անցուդարձը շատացել և հրապարակը կենդանացել էր: Մրգավաճառների բացականչությունները, կառքերի դղրդոցը, սայլերի ճռնչյունը, փողոցային տղաների աղաղակները և այլն, միախառնվելով բազմաթիվ անցորդների շարժման և շշուկի հետ, մի տեսակ աղմուկ ու ժխոր էին հարուցել այդտեղ:

Վահանը հուսալով, թե այդ անընդհատ անցուդարձի մեջ կարող է պատահել մի ծանոթ հայրենակցի, մի հին բարեկամի, կամ, ո՞վ գիտե, գուցե նաև մի մոռացված ազգակցի, որին կարող է դիմել խորհուրդ հարցնելու համար, ուշադրությամբ դիտում էր անցորդներին և լսում էր նրանց. բայց ամեն տեղ էլ օտար դեմքերի և անծանոթ ձայների հանդիպելով՝ երեսը դարձնում էր նրանցից:

Այդ հուսահատության ժամանակ հանկարծ անցորդներից մինը ձեռքը դրավ նրա ուսին և մտերմաբար հարցրեց:

— Վահա՜ն, ի՞նչ ես շինում այստեղ:

Երիտասարդը շրջեց իսկույն երեսը և տեսավ, որ յուր հետ խոսողը շիրաջ-Մանասն է, այն զվարճախոս ուղեկիցը, որ յուր հետ միասին հայրենի քաղաքից եկել էր Թիֆլիս: Վահանի համար կարծես մի նոր լույս ծագեց:

— Ա՜խ, բարեկամ, այս դո՞ւ ես, որքա՜ն ուրախ եմ, որ հանդիպեցի քեզ.— ասաց Վահանը գրեթե հիացած և հին բարեկամի ձեռքը առնելով, խիստ մտերմաբար սեղմեց նրան: — Ի՞նչ է պատահել, մի գործ ունի՞ս ինձ հետ. ասա՜, սիրով կկատարեմ:

— Գործ, այո՛, շատ կարևոր գործ ունիմ. բայց դու ժամանակ ունի՞ս ինձ լսելու:

— Ժամանա՞կ... հա՛, սիրելիս, եթե երկար խոսելու բան է, այս րոպեիս ժամանակ չունիմ, Հավլաբար գինի ունիմ գնած, գնում եմ ստանալու: Եթե կարող ես, երկու կամ երեք ժամից ետ արի մեր գինետունը, այնտեղ կխոսենք: Խո շտապելու բան չէ՞:

— Ո՛չ, շտապելու բան չէ: Բայց երկու կամ երեք ժամից ետ ձեր գինետունը փակ չի՞ լինիլ:

— Մեր գինետունը բաց է լինում մինչև գիշերվա տասն ու մեկ ժամը:

— Ուրեմն ժամը ութին ձեզ մոտ կլինեմ:

— Համեցեք, ժամը ութին կսպասեմ ձեզ,— ասաց շիրաջը և ողջունելով բարեկամին հեռացավ:

Վահանի վրայից կարծես մի ծանր քար ընկավ: «Շիրաջ-Մանասի ծանոթությունը կարող է փրկել ինձ»: Այսպես էր մտածում երիտասարդը և մինչև անգամ զարմանում, թե ինչո՞ւ ավելի վաղ չէ մտաբերել նրա մասին:

Այս հանդիպումը այն աստիճան հուսադրեց խեղճ տղային, որ նա մինչև անգամ մտաբերեց յուր անոթությունը և ուտելու ցանկություն զգաց: Ուստի առաջանալով դեպի հացագործը, գնեց նրանից հինգ կոպեկի հաց, իսկ դրացի խանութպանից հինգ կոպեկի պանիր և դիմեց դեպի յուր սենյակը:

Վահանի մնացորդ հարստությունը այն աստիճան փոքր էր, որ դրանից ավելի ծախսել չէր կարող: Այսուամենայնիվ այդ սակավապետ ճաշը նա այնպիսի ախորժակով կերավ, որ կարծես թե Լուկուլլոսի պատմական համադամներից էր նա կազմած:

Թիֆլիս մտնելու օրից սկսած այդ առաջին անգամ էր, որ նա այդքան ախորժակով և մանավանդ թե հանգիստ սրտով ճաշ էր վայելում:

«Ինչպե՜ս քաղցր, ինչպե՜ս սիրելի պիտի լինի արդար քրտինքով վաստակած հացը,— մտածում էր Վահանը յուր ճաշը ավարտելով.— իզուր են կարծում, թե աստված անիծելու մտքով ասաց Ադամին թե՝ «քո երեսի քրտինքովն ուտես քո հացը»: Այդ անեծք չէ. դա օրհնություն է: Կա՞ արդյոք աշխարհում ավելի քաղցր և սիրելի պատառ քան ա՛յն, որ մարդ ձեռք է բերում յուր ճակատի քրտինքով, առանց խաբելու, զրկելու, ստորանալու, առանց այդ պատառի մեջ ուրիշի արցունքը և յուր խղճի լեղին խառնելու...Եվ ահա ա՛յս պատառի մասին էր խոսում հայրս. այս արդար պատառն էր կամենում, որ ես ձեռք բերեմ, որպեսզի նրա պատճառով իմ անկախությունը անազնիվ մարդկանց չվաճառեմ: Իսկ ե՞ս… ո՞վ հիմարությանս, վիճում և հակառակում էի. դեռ աշխարհի չարիքները չտեսած կամենամ էի հաղթահարել նրանց...

«Չէ, իմ վիճակը որոշված է: Պետք է շնորհակալ լինել բախտից այն դառը դասի համար, որ նա տվավ ինձ. այդ դասը թե՛ կծառայե ինձ իբրև զգուշության խթան և թե՛ կօգնե ինձ ապագա գործունեությանս հիմքը հաստատուն հողի վրա դնելու: իմ գործը պիտի լինի նախ՝ գտնել արդար քրտինքով հաց վաստակելու ճանապարհը և ապա թե նվիրվել հասարակաց ծառայությանը: Իմ ունեցած ուժը կարող է դիմանալ մարմնական ամենածանր աշխատության. հետևապես, եթե այդ աշխատությունը հասարակ մշակություն էլ լինի, ես փախուստ չեմ տալ նրանից: Քար ու ջուր կրելը ավելի արդար և ազնիվ գործ է, քան թե մոմճյանների ու շաշյանների հետ միասին գերագույն նպատակների համար աշխատելը...»:

Այս խորհրդածություններով երիտասարդ Սարյանը յուր սիրտը հանգստացնելով՝ մինչև անգամ հոգեկան լավ տրամադրության մեջ մտավ. և սկսեց յուր նոր բնակարանը կարգավորել, նախ՝ տախտակե թախտի վրա յուր անկողինը փռելով, և ապա՝ պատուհանի մեջ գրքերը զետեղելով:

Երբ ժամը ութը լրացավ, նա դիմեց շիրաջ-Մանասի գինետունը, որ գտնվում էր Կոլոլ-թաղի նորաշեն տներից մեկի ընդարձակ նկուղում, բանուկ ճանապարհի վրա: Նկուղի դռան բարավորի վրա կախված էր շքեղ ճակատագիր (вывеска), որի վրա ոսկեզօծ տառերով և ռուսերեն Լեզվով մակագրված էր. «Իսկական Կախեթի գինիների պահեստ— Մանաս Թոփչյանի»: Վահանը կարդաց ճակատագիրը և ինքն իրեն

մտածեց. «Ամեն քայլափոխում ստության ես հանդիպում: Այս մարդը, յուր գինիների մեծ մասը իմ հայրենիքումն է գնում, բայց այստեղ հայտարարում է թե իսկական Կախեթի գինիներ է վաճառում: Արդյոք սա էլ խաբելու միջոց չէ՞, և տասը հաճախորդից գոնե հինգը չի պիտի խաբվին այս հայտարարությունից:

Քիչ էր մնում, որ այս փոքրիկ խորհրդածությունը ետ դարձներ միամիտ երիտասարդին դեպի յուր կացարանը. բայց նա շուտով խելքի եկավ. «Էհ, ի՞նչ իրավունք ունիմ ուրիշների գործը քննելու,— մտածեց նա,— բավական է որ ինքս չլինեմ ստողն ու խաբողը...»:

Այս ասելով նա քարե սանդուղքներից ներքև իջավ:

Գինետան մեջ խռնված էր խառնիճաղանջ մարդկանց բազմություն: Ոմանք սեղանների շուրջը նստած խմում ու երգում էին: Դրանք դրսերից եկած գեղջուկ հյուրեր էին, որոնց գինետան հատուկ գործակալները վաճառատեղիներում պատահելով գրավում ու բերում էին այդտեղ, որպեսզի մի շամփուր խորովածի հետ (որը գինեվաճառը ձրի էր տալիս) խմացնեն նրանց տասնյակ շիշ գինի, որը, իհարկե, ձրի չէր տրվում: Այդ կարգի հյուրերը մտնում էին այստեղ առավոտյան ժամը 10—12-ին և դուրս էին գալիս կես-գիշերին հարբած և նյութական ու ֆիզիկական ուժից ընկած:

Ուրիշները գինետան սեղանափակի (застойка) շուրջը խմբված հերթով մի-մի բաժակ գինի կամ օղի էին խմում և մի կտոր սև հաց, սոխ, կամ աղած վարունգ բերանները առնելով հեռանում էին: Դրանք մեծ մասամբ արհեստավորներ կամ բանվորներ էին, որոնք աշխատանքից վերադառնալով անհրաժեշտ պարտք էին համարում, ըստ սովորականին, պատվել Մանասի գինետունը իրենց այցելությամբ և մի-մի բաժակ կենաց ջուր կոնծել այդտեղ: Այդ, իսկապես, անհրաժեշտ էր նրա համար, որ տուն վերադառնալուց զվարթ տրամադրության մեջ լինին և շատախոս կնոջ կամ քրթմնջող մոր Ներկայությամբ կարողանան իրենց առնական արժան արժանապատվությունը բարձր պահել:

Այստեղ կային և ծառաներ, արհեստավորների աշակերտներ, աղքատ և ցնցոտիներ հագած փոքրիկ աղջիկներ, որոնք մի-մի շիշ ձեռքերին բռնած սպասում էին գինի կամ օղի տանելու, մինը՝ յուր տիրոջ, մյուսը՝ յուր վարպետի և երրորդը՝ պառավ տատի, ծերուկ պապի կամ խմելու սիրահար ծնողների համար: Շիրաջ-Մանասը արճճապատ սեղանափակի ետևը կանգնած աչալուրջ ուշադրությամբ դիտում էր գինետան բոլոր անկյունները, հրամաններ էր արձակում և կարգադրություններ էր անում: Նրա ժիր ծառաները ղաղաքի կոճկած արխալուղներով, արծաթե կամ կաշվե գոտիներով, լայն շալվարներով, որոնց ներքին մասը ամփոփվում էր կաշվե սռնապանների մեջ, փափուկ և անկրունկ ոտնամաններով, որոնք օգնում էին նրանց թե արագ և թե անձայն պտտելուն, աշխուժով դես ու դեն էին վազում և իրենց տիրոջ, հյուրերի և կամ հաճախորդների պատվերները կատարում:

Չորս մեծամեծ կանթեղներ, շրջանավոր լուսամփոփներով, որոնք կախված էին գինետան առաստաղից՝ մեկը մյուսից մի քանի գրկաչափ հեռավորությամբ, լուսավորում էին գինետունը յուր բոլոր պարունակությամբ. այն է՝ հյուրերով, հաճախորդներով, գինու կամ օղիի տակառներով, տավարի ուռած ու գինելի տիկերով և ուրիշ շատ մանրամասնություններով, որոնք այդ գինետան գեղագրական (իհարկե խմողների տեսակետից) ներդաշնակությունն էին կազմում: Վահանը, որ Մանասի գինետան կենդանությունը տեսնելով մի առժամանակ շվարել կանգնել էր սանդուղքների վերին աստիճանի վրա, շուտով արժանացավ հառաջադեմ ծառաներից մեկի ուշադրության:

— Աղա՛, ի՞նչ կուհրամայիք. համեցեք, խազեինը էստի է,— ասաց մոտեցող ծառան և առաջնորդեց նրան դեպի յուր տերը:

— Արի՛, Վահան ջան, ա՛րի. քեզ էի սպասում. տո՛ ստոլ թավազա արեք աղին,— բացականչեց շիրաջը Վահանին տեսնելով և քաղցր ժպիտով դեպի նրան մոտենալով:

— Այս ինչ ահագին ղալմաղալ է այստեղ, ամե՞ն օր է այսպես Լինում,— հարցրեց Վահանը, բարեկամի ձեռքը սեղմելով:

— Այո՛, համարյա թե ամեն օր: Դյուր չէ՞ գալիս քեզ, հա՞:

— Խոսքս ինձ համար չէ, դո՛ւք կարող եք ձանձրանալ:

— Չէ, Վահան ջան, ես էլ սովորել եմ արդեն, մի օր որ այս ղալմաղալը չեմ լսում, սիրտս նեղանում է: — Լա՛վ է: Երևի շատ պինդ ջղեր ունեք, իսկ ես մի օր անգամ խառնաշփոթության մեջ մնալ չեմ կարող:

— Ի՞նչ անենք, սիրելիս, դուք ուսում ու Գիտություն ունեք, կարող եք ձեր ուսումով հաց աշխատել, իսկ մենք, տգետ մարդիկ ենք, որ այս էլ չանենք, քաղցած կկոտորվենք:

— Ուսում ու Գիտությո՞ւն... էհ, դրանք էլ մի կոպեկ չարժեն, էլի ձեր արհեստը լավ է...— ասաց Վահանը հառաչելով:

— Ի՞նչ ես ասում, Վահան ջան, ափսոս չէ՞ ուսումը, հապա ես որ ուսում ունենայի՝ այս իշխանների հե՞տ կապրեի:

— Հապա ո՛ւմ հետ կապրեիր:

— Այ, քո բարեկամների նման տղերանց հետ:

— Իմ բարեկամները ովքե՞ր են:

— Վա՛, ա՛յ Մոմճյանը, նրա ընկերները, դու հո նրա՞նց հետ ես լինում, ես իմացել եմ:

— Այո՛, նրանց հետ էի լինում, բայց գիտե՞ս ինչ պիտի ասեմ քեզ:

— Ո՛չ:

— Քո այստեղի վերջին արբեցողները Մոմճյանից ու նրա ընկերներից ավելի լավ մարդիկ են:

— Վա՛, վա՛, Վահան ջան, էդ ի՞նչ ես ասում:

— Ինչ որ ասում եմ, ճիշտ եմ ասում:

— Է՞, էդ ո՞նց կլինի, երևի բարկացած ես նրանց վրա: Ի՞նչ է պատահել, սև կատու հո չի՛ անցել մեջերնիդ:

— Ինչպե՞ս չէ, այն էլ ոչ թե հասարակը, այլ մեծ արջակատու: — Դե էդպես ասա է. ախար զարմանում եմ, թե դու ինչի՞ պիտի էդպես խոսք ասես:

Վահանը մի կողմ քաշեց շիրաջին և համառոտ կերպով ու նրա հասկացողության մատչելի եղանակով պատմելով նրան յուր գլխին եկածը, հայտնեց նաև յուր արդի խեղճ դրությունը և խնդրեց նրան օգնել իրեն, որ կարողանա մտնել ծառայության մի որևէ ծանոթ վաճառականի մոտ:

Շիրաջին շատ վշտացավ Վահանի պատմությունը լսելով և մի քանի սրտաբուխ հայհոյանքներ արտասանեց պարոն Մոմճյանի, տիկին Մարթայի և նրա աղջկա և փեսացուի հասցեին: Գալով ծանոթ վաճառականի մոտ Վահանի համար պաշտոն գտնելուն, այդ մասին նա երկար մտածեց: Այսինքն մի առ մի մտաբերեց յուր բարեկամներին, ծանոթներին, դրացիներին և մինչև անգամ իրենից մշտապես գինի գնող հարուստներին, բայց ոչ ոքի մոտ պաշտոն գտնելու հույս չտածեց:

— Դուք գուցե մեծ շրջան չունիք, կամ չեք կարողանում մտաբերել, թե ո՞վ կարող է պաշտոն ունենալ,— խոսեց Վահանը,— բայց մտածեցեք, գուցե ձեզանից զատ գտնվի այստեղ մեր հայրենակիցներից այնպիսի մեկը, որ յուր ծանոթների շրջանում կարողանա մի պաշտոն գտնել ինձ համար:

— Այդպիսի մեկը... այդպիսի մեկը... սպասիր... իսկույն,..— սկսեց մտածել շիրաջը՝ մատը շրթունքների վրա դնելով և աչքերը հատակի վրա ուղղելով:

Մի քանի րոպեից ետ նա հանկարծ ճակատին խփելով բացականչեց.

— Ա՛յ, հիմա՛ր, հիմա՛ր, ինչպե՞ս մոռացել էի... Հապա մեր Թորոսյանը... դու էլ երևի չես մտաբերել:

— Ո՞վ է Թորոսյանը,— հարցրեց Վահանը հետաքրքրությամբ:

— Պետրոս Թորոսյանը, չե՞ս ճանաչում, մեր հայրենակիցն է. այստեղ հայտնի հարուստներից մեկն է. քեզ էլ, կարծեմ, հեռու-մոտիկ ազգական է, չգիտեմ մորդ, թե հորդ կողմից:

— Չգիտեմ. չեմ ճանաչում: — Ինչպե՞ս չէ. ազգական է: Ա՛յ, էգուց ժամը 10-ին արի այստեղ, ես քեզ կտանեմ նրա մոտ: Նա ինքը եթե յուր գործում պաշտոն չունենա, անպատճառ յուր ծանոթներից մեկի մոտ կգտնե:

— Հույս ունե՞ս:

— Ինչպե՞ս չէ. պատվական մարդ է. ահագին կարողություն ունի:

— Ասենք թե կարողությունը կապ չունի պատվականության հետ. կարող է հարուստ լինել, բայց պատվական չլինել:

— Չէ, չէ, հարուստ էլ է, պատվական էլ է: Դու առավոտը եկ այստեղ, ես նրա մոտ կտանեմ քեզ և կտեսնես, որ նա քեզ համար պաշտոն կգտնե:

Վահանը սրտագին շնորհակալություն արավ յուր շիրաջ բարեկամին և խոստանալով նրան որոշյալ ժամանակին ներկայանալ, դուրս գնաց գինետնից ուրախ և հուսալից սրտով:

Բ

ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ

Հետևյալ առավոտ, ճիշտ նշանակած ժամին, Վահանը մտավ Մանասի գինետունը: Շիրաջը նույն սիրով ու մեծարանքով ընդունեց նրան ինչպես ընդունել էր նախընթաց երեկոյան և աթոռ հրամեցնելով՝ խնդրեց սպասել մի քանի վայրկյան, մինչև որ յուր հաճախորդներից մեկի հետ ունեցած փոքրիկ գործը կավարտեր:

Երբ վերջինս դուրս գնաց, Մանասը մոտեցավ Սարյանին և նրա առողջությունը հարցնելուց ետ հոգածու եղանակով ասաց.

— Գործդ ձախ է գնում, այսօր ես չեմ կարող տանել քեզ Թորոսյանի մոտ:

Ինչո՞ւ, շա՜տ եք զբաղված:

— Ոչ, զբաղված չեմ, բայց... այնպես մի բան պատահեց որ...

— Եթե այսօր չեք կարող, վաղը տարեք, միևնույն է, ես մի օր կարող եմ սպասել,— ընդհատեց Վահանը շիրաջին:

— Բանն այդ է, որ վաղն էլ չեմ կարող:

— Իսկ մյուս օրը՞:

— Մյուս օրը... ինչպե՞ս ասեմ, մյուս օրը...

— Գուցե չեք կամենում տանել, կամ չեք կամենում պատճառ դառնալ ինձ:

— Ա՛յ, պարզն ասեմ էլի. ի՞նչ ունիմ քեզանից թաքցնելու: Երեկ երեկոյան հենց որ դու դուրս գնացիր, Մոմճյանը մտավ այստեղ: Դու նրան չտեսա՞ր:

— Ոչ. չտեսա, հետո՞:

— Նա քեզ տեսել էր: Մտավ ինձ մոտ և հարցրեց թե՝ այս տղան ձեզ մոտ ի՞նչ է շինում:

— Իսկ Մոմճյանի հետ ծանո՞թ եք դուք:

— Ինչպե՞ս չէ. վաղուց. մենք մինչև անգամ լավ բարեկամներ ենք:

— Մի՞թե, ես այդ չգիտեի:

— Հապա՛, լավ բարեկամներ ենք... Հարցրեց ինձ, թե այս տղան ի՞նչ էր շինում այստեղ: Մեկ ուզեցի ասեմ թե եկել էր գինի գնելու, մեկ էլ ինքս ինձ մտածեցի, թե ինչո՞ւ թաքցնեմ և քո գալու պատճառը հայտնեցի, բացի այդ, իրա հետ էլ սկսեցի կռվել և լավ խայտառակել, թե ինչո՞ւ քեզ նման խեղճ տղի գլխին այդ օյինները խաղացել են: Բայց նա երդվեց խաչով, ավետարանով, սուրբերով թե՝ ինչ որ դու պատմել ես, բոլորը սուտ է. թե իրենք քեզ չեն նեղացրել, թե, ընդհակառակը, դու ես նրանց խայտառակել, մեծ սկանդալ ես սարքել և էլ չգիտեմ թե ինչեր ես արել:

— Ե՞ս, ե՞ս եմ նրանց խայտառակել, ե՞ս եմ սկանդալ սարքել...

— Հապա՛:

— Բայց ի՞նչ եմ արել. չասա՞ց, թե ի՞նչ է արել...

— Ինչպե՞ս չէ, բոլորը պատմեց:

— Այսինքն ի՞նչ. մի երկու բան ասա տեսնեմ:

— Չէ, Վահան ջան. ի՞նչ հարկավոր է. իզուր տեղից սիրտդ պիտի նեղանա:

— Չէ, չէ. հատուկ խնդրում եմ, ասացեք տեսնեմ ի՞նչ է պատմել:

— Ապա ես կարո՞ղ եմ ասել, ինչո՞ւ ես ստիպում:

— Խնդրում եմ, աղաչում եմ. ասացեք: Ինչ որ ճիշտ լինի կասեմ, որ ճիշտ է. ես այստեղի խաբեբաներից չեմ. դուք ինձ լավ պետք է ճանաչեք. եթե ինձ չճանաչեք, հորս հո՛ ճանաչում եք. մեր տանը սուտ խոսելու սովորություն չկար, մի սուտ խոսքի համար հայրս կարող էր ինձ տանից արտաքսել...

— Վա՛. քո հորը չե՞մ ճանաչում, Հովսեփ ապերը ասիլ տղամարդ է: Մենք հո միշտ պարծենում ենք, որ նրա նման ազնիվ մարդ ունինք մեր հայրենիքում:

— Ուրեմն պիտի իմանաք, որ նրա որդին սուտ չի խոսիլ. ասացեք տեսնեմ ի՞նչ է պատմել իմ մասին Մոմճյանը: Ի՞նչ որ ճիշտ լինի, չեմ ուրանալ. եթե մի վատ բան արած լինեմ, կխոստովանեմ. ի՞նչ անենք, ամենքս էլ սխալական ենք. կարելի է ես էլ սխալվել, մի հանցանք եմ գործել:

— Հա՛, այդ է, էլի՞. նա էլ կարծում է, որ կարող ես սխալմունքով արած լինել:

—Բայց ի՞նչ եմ արել, ասացեք վերջապես, համբերությունս հատնում է:

— Ա՛յ թե ինչ. ասում է, որ ամբողջ ամիս Մարթայի մոտ ապրել ես, կերել ես, խմել ես և մի կոպեկ չես վճարել նրան...

— Ճշմարիտ է. այդ խո ես ինքս էլ պատմեցի ձեզ. փող չունեի, չվճարեցի. բայց հագուստներս գրավ դրի նրա մոտ:

— Ասում է, որ ռոճիկդ երկու ամիս առաջ ստացել ես և իրենց գործին միայն վեց շաբաթ ես ծառայել:

— Ե՛ս. ռոճի՛կ. այդպես բան նա ասո՞ւմ է...

— Այո՛, բայց, ասում է, այդ ոչինչ. դրա համար չեմ մտածում, ուրիշ ավելի վատ բան ես արել:

— Ի՞նչ...

— Ասում է, որ Մարթայի աղջկանը համբուրել եմ...

— Ե՞ս. Մարթայի աղջկա՞նը. համբուրե՞լ եմ…

— Եվ թե, ասում է, Մարթայի փեսացուն, պարոն Մովսիսյանը, այդ բանը իմանալով, եկել մեծ սկանդալ է սարքել և քեզ ծեծել ու դուրս է արել...

— Օ՛հ, տե՛ր աստված, մի՞թե մարդ արարածը կարող է այս աստիճան ստորանալ...— տեղից վեր թռչելով և գրեթե գոռալով բացականչեց Վահանը և Մանասի ձեռքից բռնելով ու քաշելով. — Գնա՛նք, գնա՛նք Մոմճյանի մոտ,— ասաց,— կամ այդ մարդը պետք է յուր բոլոր ասածները հաստատե, կամ թե չէ, ես նրան այս բռունցքներովս պիտի ջարդեմ:

— Երեխայություն մի՛ անիր, Վահան, տեղդ նստիր. ի՞նչ հարկավոր է ամեն խոսածի վրա ուշադրություն դարձնել,— համոզկեր ձայնով խոսելով սկսեց հանգստացնել երիտասարդին շիրաջը:

— Չէ. անկարելի է. այդ մարդը, վերջապես, պիտի հասկանա, որ ամենքին միատեսակ խաբել կամ զրպարտել չի կարող և որ վերջապես կգտնվի մեկը, յուր ստախոս ու զրախոս բերանը կջարդե...

— Իրավունք ունիս, Վահան, իրավունք ունիս. ես էլ քեզ տեղ լինեի, այդպես կվարվեի: Բայց հետևանքի մասին էլ մտածի՛ր, է : Դնենք թե գնացինք նրա մոտ. նա, իհարկե, յուր խոսածները չի հաստատիլ...

— Այն ժամանակ ես նրա գլուխը կջարդեմ...

— Լավ. դնենք թե նրա գլուխն էլ ջարդեցիր, հետո՞.

— Հետո էլ ի՞նչ, դրանով էլ բանը կվերջանա:

— Ներողություն, դրանով բանը չի վերջանա, այլ կսկսվի:

— Ինչպե՞ս թե կսկսվի:

— Հապա, կսկսվի. մի՞թե չգիտես. նա էլ հո սուս չի՞ կենալ:

— Նրան սուս կացնելը ինձ վրա թող. ես իմ բռունցքների ուժը ճանաչում եմ. ինձ Սարենց Վահան կասեն... — խրոխտաց երիտասարդը:

— Այդ չեմ ասում, Է՛ . մի լսի՛ր, եթե դու նրան ծեծես, նա իսկի չի էլ պատախանիլ քեզ, դրա համար պոլիցիա կա, դատարան կա, դատաստան կա, քեզ կմեղադրեն, բանտ կնստեցնեն, ծնողներդ լսեն ի՞նչ կասեն քեզ: Առաջին անգամ օտար քաղաք ես եկել, եթե հենց մի շաբաթ բանտ նստես, էլ այնուհետև ո՞վ կմոտենա քեզ, ո՞վ գործ կհանձնե. հետևանքը, որ ասում եմ, ա՛յ սա է: ճշմարիտ է, դու ուսումնական ես, բայց ինձ չափ փորձված չես. քսան տարի է Թիֆլիսում շիրաջություն եմ անում և շատ չար ու բարի եմ տեսել, ինչ որ ասում եմ, լսի՛ր և չես փոշմանիլ:

— Ի՞նչ չեմ փոշմանիլ, այ մարդ, եթե ես նրան իմ ձեռքի ուժը ցույց չտամ, նա այդ միևնույնն ուրիշ շատերին էլ կպատմի, չէ. այն ժամանակ արդեն ես ավելի կխայտառակվեմ, քան թե բանտ նստելով:

— Թող պատմե. ո՞վ է նրան հավատացողը:

— Քանի որ դուք իմ հայրենակիցն եք, ինձ ճանաչողն եք, հավատում եք, ուրիշները ինչպե՞ս չեն հավատալ:

— Ե՞ս. բնա՛վ. ես նրան չեմ հավատում:

— Եթե չեք հավատում, ինչո՞ւ խոստումներդ ետ եք առնում և չեք կամենում տանել ինձ Թորոսյանի մոտ:

— Դրա պատճառը, սիրելիս, այն չէ, որ ես Մոմճյանին հավատում ու քեզ վատ տղայի տեղ եմ ընդունում, չէ. պատճառը այդ չէ:

— Հապա ո՞րն է:

— Ա՛յն է, որ Մոմճյանը ինձ խնդրեց և համարյա՛ թե աղաչեց, որ ես քեզ համար գործ չգտնեմ, երևի այն պատճառով, որ դու երկար ժամանակ անգործ մնալով ստիպված լինես կրկին իրենց դիմելու:

— Ավելի շուտ դժոխքը կերթամ, քան թե նրանց կդիմեմ: բայց դուք այն ասացեք, մի՞թե խոստացաք նրա խնդիրը կատարել:

— Խոստացա, չէի կարող չխոստանալ:

— Ինչո՞ւ, ի՞նչ կապ ունիք նրա հետ:

— Պատճառը հետո կասեմ:

— Հիմա ասացեք, էլի՞. գոնե կլսեմ, կհանգստանամ:

— Պատճառը, սիրելիս, ա՛յն է, որ այդ մարդը իմ լավ բարեկամն է: Ճիշտ է, նրա՝ քո մասին պատմածները ես բանի տեղ չեմ դնում, գիտեմ, որ խոսածները բոլորը սուտ են. ես քեզ լավ եմ ճանաչում, բայց, ինչ մեղքս թաքցնեմ, խոստացել, եմ խնդիրը կատարել նրա համար, որ նա ինձ շատ լավություններ է արել և էլի անում է: Եթե նրա այդ խնդիրը չկատարեի, կարող էր ինձ վնասել:

— Ի՞նչ լավություններ է արել և ինչո՞վ կարող է վնասել:

— Լավություններն այն, է, սիրելիս, որ նա շատ ծանոթներ ու բարեկամներ ունի, բոլորին էլ խնդրել և համոզել որ գինին ինձանից գնեն. և նրանք էլ գնում են: ճիշտն ասած, ես էլ, նրա բարեկամներին լավ գինի եմ տալիս. բայց լավ գինի բոլոր շիրաջները կարող են տալ, գնող էլ պետք է լինեի: Տարեկան ամենաքիչը հինգ հարյուր կուժ գինի կծախեմ Մոմճյանի ցույց տված մարդկանը վրա:

«Մինակ նրա բարեկամի մի տրաքտիրը տարեկան երկու հարյուր կուժ գինի է մսխում: Չոփուռի տղա Սանգրոն, թեկուզ թեյարան է պահում, էլի տարվա մեջ մի հիսուն կուժ գինի է տանում ու թաքուն իրա մուշտարիներին խմացնում: Լավ ընտանիքներից էլ տանում են ու տանում: Այս բոլորի համար բավական փող են վճարում ինձ. իսկ այդ անում են Մոմճյանի շնորհիվ:

«Բացի այս, նա եկամտի մի նոր աղբյուր էլ է գտել ինձ համար, այնպիսի աղբյուր, որի նմանը ոչ մի շիրաջ չունի: Դու մի հարցրու, թե ի՞նչ աղբյուր»:

— Ի՞նչ աղբյուր:

— Ա՛յ, ասեմ, զարմացիր: Թիֆլիսում, ինչպես գիտես, անգործ աղքատ, բայց խմելու սիրահար մարդիկ շատ կան. ինչպես օրինակ, հին, դուրս արած չինովնիկներ, սնանկացած մանրավաճառներ, քելեխի ետքից վազող Հարբան-տիրացուներ և այլն. Մոմճյանը խորհուրդ տվավ ինձ այդ տեսակ մի տասը, տասնևհինգ հոգու սովորեցնել, որ ման գան քաղաք վաճառանոցները, կշռանոցները և խմելու ցանկություն ունեցող մարդկանց, գյուղացիներ լինին նրանք թե քաղաքացիներ, թրևելով բերեն այստեղ և խմացնեն: Ես Մոմճյանին լսեցի և այդ տեսակ մի քանի մարդկանց հետ կապվեցա: Դրանք, որոնց Մոմճյանը գինետան գործակալներ է անվանում, արդարև, այժմ մեծ գործ են կատարում ինձ համար: Մինակ չաչանակ Սերգոն, որին, երևի ճանաչում ես, տարվա մեջ հինգ հարյուր խմող կբերի այստեղ: Ամեն ներս գալով հետը ունենում է չորս-հինգ հոգի: Իսկ այդ չորս-հինգ հոգին գոնե վեց-յոթ շիշ գինի են կոնծում:

«Այսպես հաշվիր և ուրիշ գործակալներին և տե՛ս, թե տարվա մեջ ի՛նչ մեծ օգուտ կտան նրանք իմ գինետանը:

— Իսկ իրենք, գործակալները, ի՛նչ օգուտ են ստանում:

— Ոչինչ, նրանց օգուտն այն է, որ բերած հյուրերի հետ ձրի գինի են խմում, և մի-մի անգամ էլ ինձանից պապիրոսի փող են ստանում:

— Իսկ Մոմճյանը ի՞նչ օգուտ ունի ձեզանից, որ այս տեսակ լավություններ է անում ձեզ:

— Ոչինչ:

— Անկարելի է. նա չի կարող առանց մի որոշ օգտի կամ նպատակի բարիք անել ուրիշին:

— Հավատացեք, որ ոչինչ: Միայն թե երբեմն-երբեմն գալիս է այստեղ և մեր գործակալների բերած մարդկանց հետ Նստում բաներ է խոսում, քարոզում, սովորեցնում...

— Ի՞նչ է խոսում:

— Ի՞նչ գիտեմ, ես հո ուշադրություն չեմ դարձնում: Մի-մի խոսքեր ականջովս ընկնում են. կարծեմ ազգի, ուսումնարանի կամ եկեղեցու մասին է խոսում: Չգիտես, կարելի է լութերական է, ու լութերականություն է սովորեցնում. ես այդ բաներումը չեմ խառնվում:

— Հը՛, հիմա հասկանում եմ,— ասաց Սարյանը, և ապա ինքն իրեն մտածեց. «Այդ մարդը, ուրեմն, սիստեմատիկաբար գործում է ամբոխի մեջ և յուր ծրագիրը առաջ է տանում... Ես կարծում էի, թե միայն թեյարաններումն է պտտում, բայց այժմ երևում է, որ գինետներն էլ է հաճախում, ճաշարանների հետ էլ գործ ունի, միով բանիվ սարդի ոստայնը ամեն անկյունների վրա տարածվում է...»:

— Այդպե՜ս, հա՞. ուրեմն Մոմճյանը ձեր երախտավորն է, դրա համար չեք ուզում խոսքիցն անց կենալ,— դարձավ նորեն Վահանը խոսակցին:

— Երախտավոր ինչո՞ւ է լինում, բարեկամ է, ասացի, չեմ ուզում թշնամացնել:

— ճիշտն ասած, ես էլ չեմ կամենում, որ նա իմ պատճառով թշնամանա ձեզ հետ. չարասիրտ ու չարագործ մարդ է: Ով գիտե, ի՞նչ վնաս կարող է հասցնել: Ինձ որ այդպես հալածում է, քանի որ լավությունից զատ ոչ մի չարություն չեմ արել նրան, ձեզ հո ավելի կհալածե՝ մտածելով, որ մեծ երախտիք ունի ձեզ վրա...

— Ես էլ այդ եմ ասում է. ա՛յ, ինքդ էլ լավ հասկանում ես:

— Այո՛, հասկանում եմ. բայց եթե մի քանի րոպեով ինձ հետ միասին մտնեք Թորոսյանի մոտ, կարծում եմ, նա այդ չի իմանալ:

— Օ՜, նա ամեն բան կիմանա, նա ամեն տեղ մարդիկ ունի: Տեսա՞ր, երեկ մի քանի րոպե չոլախի քարվանսարի առաջ խոսացիք ինձ հետ, իսկույն բազազ Գարսոյի աշկերտ Վանոն խաբարը տարել էր:

— Բազազ Գարսոյի աշակերտը ո՞վ է:

— Չե՞ս հիշում. այն թուխ ու մազոտ երեսով տղան, որ Ձորաբաշի եկեղեցում մեզ թղթեր էր բաժանում:

— Հա՛, հա՛, հիշում եմ, հետո՞:

— Հետո էլ ի՞նչ. նա խաբարը տարել էր: Մոմճյանն էլ եկավ քո բանը խանգարեց: Հիմա եթե նա իմանա, որ Թորոսյանի մոտ եմ տարել քեզ, թե՛ ինձ հետ կթշնամանա և թե՛ Թորոսյանի մոտ գնալով քո մասին կչարախոսե:

— Ուրեմն դուք Մոմճյանին չե՞ք հայտնել, թե մտադիր էիք Թորոսյանի մոտ տանել ինձ:

— Ո՛չ. այլ ասացի, որ կամենում եմ մի որևէ վաճառականի մոտ պաշտոն գտնել քեզ համար:

— Եվ նա հրամայեց, որ չգտնեք:

— Այսինքն, չհրամայեց, այլ խնդրեց:

— Կնշանակե դուք, մինչև անգամ չեք կարող տանել և ծանոթացնել ինձ Թորոսյանի հետ:

— Ոչ. չեմ կարող, սիրելիս. պատճառն էլ բացատրեցի: Բայց դու ինքդ կարող ես ներկայանալ նրան: Հարկավոր չէ, որ մեկ ուրիշը անպատճառ ծանոթացնե քեզ: Թորոսյանը նոր մարդկանցից չէ: Բավական է, որ հայտնես նրան, թե Սարենց Հովսեփի տղան ես. նա քո հորը ճանաչում է, քեզ էլ սիրով կընդունի: Եթե յուր գործում պաշտոն չունենա, ինչպես երեկ էլ ասացի, ուրիշի մոտ կգտնե, որովհետև ծանոթներ ու բարեկամներ շատ ունի:

Վահանը տեսավ, որ էլ թախանձելն ավելորդ է: Նա չգիտեր, իհարկե, թե շիրաջը, որքան էլ համակրեր և մինչև անգամ սիրեր իրեն, դարձյալ յուր անձնական օգուտը պիտի գերադասեր: Որովհետև առևտրական աշխարհում բարեկամի օգտի համար սեփական օգուտը զոհելու գաղափարն անծանոթ է, և անբնական կլիներ, եթե ծանոթ լիներ. ըստ որում, որտեղ երկու կողմի շահերի մրցումն է լինում, այնտեղ զոհելու մասին խոսք լինել չի կարող: Վահանը, անշուշտ այս ճշմարտությանն անտեղյակ էր: Բայց կարծելով թե շիրաջը իսկապես վախենում է Մոմճյանից, որովհետև մի զորեղ մարդու տեղ է դնում նրան, չկամեցավ այլևս հոգեկան անհանգստություն պատճառել նրան: Այլ մանրամասն տեղեկանալով Պետրոս Թորոսյանի առևտրական գրասենյակի տեղը, ողջունեց յուր երկչոտ բարեկամին և դիմեց դեպի անծանոթ վաճառականը՝ առանց հաջողության որևէ հույս ունենալու:

Գ

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՀՈՂԻ ՎՐԱ

Վերջին դեպքը Սարյանի վրա խիստ հուսահատական ներգործություն ունեցավ: նա տխուր ու գլխակոր շարունակում էր ճանապարհը և միևնույն ժամանակ մտածում.

— «Մոմճյանին ես մի վնաս չեմ տվել: Առանց որևէ վարձատրության ծառայել եմ նրա գործին. կարողությանս չափ օգուտ եմ տվել իրեն և փոխարենը զրկանք եմ կրել: Արդ, ինչո՞ւ դարձյալ հալածում է ինձ. ինչո՞ւ շարունակ աշխատում է վնասել: Գոնե պատճառը կարողանայի իմանալ. այդ մի փոքր կհանգստացներ ինձ...»:

Բայց պատճառը խեղճ Սարյանը չէր կարող իմանալ, ինչպես և Մոմճյանը չէր հայտնել ոչ ոքի: Դա նույնպիսի գաղտնիք էր, ինչպես և Մոմճյանի գործերից շատերը, որոնք կատարվում էին առանց իրենց նպատակը հայտնի կացուցանելու: Սակայն մենք կարող ենք այդ խորհրդավոր պատճառը բացատրել ընթերցողներին:

Մոմճյանի նպատակը, իսկապես, այն չէր, որ Սարյանին վնասե: Որովհետև վերջինս, ինչպես ինքն էլ ասում էր, բացի օգուտը՝ ոչ մի վնաս չէր պատճառել նրան. հետևապես, Մոմճյանը որքան էլ որ անսիրտ և չարասեր լիներ, դարձյալ չէր կարող այնքան կուրանալ, որ չտեսներ յուր անարդարությունը: գոնե այս վերջին գործի վերաբերմամբ: Իսկ անարդար լինել— առանց հարգելի պատճառի, կամ որոշ նպատակի նա չէր կամենում: Եթե նա խղճահարվելու թուլությունը չուներ, գեթ պատվասիրության զգացում ուներ. նա չէր ցանկանալ, որ Սարյանն անգամ դժգոհ լիներ իրենից ա՛յն բանի համար, որը իրեն, Մոմճյանին, մի հայտնի օգուտ չի պիտի բերեր: Հետևապես պետք էր կարծել, որ Մոմճյանը լոկ թշնամության համար չէր, որ հալածում էր Սարյանին, այլ ուներ հարգելի պատճառ, և այդ պատճառը այն էր, որ նա Սարյանին իբրև գործակից հրավիրելով յուր մոտ, մտերմացել էր նրա հետ, բացել էր նրան յուր գաղտնիքներից շատերը, ծանոթացրել էր նրան յուր գործելու եղանակների հետ, մերկացրել էր նրա առաջ (իհարկե ակամայից) «Փնջիկ» թերթի խմբագրության բոլոր ոչնչությունը... և այդ, այնպիսի մի լուրջ, խելոք, թափանցող, հաստատակամ և որոշ բնավորության տեր երիտասարդի առաջ, որպիսին Սարյանն էր: Այդպիսի մեկին հակառակորդ ունենալ, և այն՝ հիշյալ պայմաններում, կնշանակե պաշտպանվելու ամեն միջոցներից զուրկ լինել:

Եվ որովհետև գալիք չարիքներից ու վտանգներից ամեն մարդ կամենում է պաշտպանվել, իսկ Մոմճյանը Սարյանի գոյության կամ հաջողության մեջ յուր ապագա ծրագրների խանգարումն ու յուր գործունեությանց արգելքներն էր նշմարում, ուստի բնական իրավամբ հալածում էր նրան և, եթե կարողանար, նույնիսկ նրա գոյությունը կոչնչացներ, որպեսզի շարունակ այն երկյուղի մեջ չլիներ թե՝ կա մի մարդ, որ յուր բոլոր գաղտնիքները գիտե, և սակայն նա յուր հակառակորդն է, հետևապես կարող է հրապարակ հանել մի օր այդ գաղտնիքները և դրանով հարվածել այն շենքը, որ ինքը կամենում է կառուցանել:

Սարյանը, իհարկե, այս մանրամասնությունների մեջ չէր մտնում. նա յուր տխուր վիճակովն էր զբաղված և չէր կարող գուշակել, թե կգա մի օր, որ ինքը օգուտ կքաղե Մոմճյանի հետ ունեցած ծանոթությունից և կհարվածե նրան կամ նրա նմաններին այն զենքով, որը յուր ձեռքն էր տվել նույն ինքը Մոմճյանը: Այս պատճառով նա չէր էլ կարողանում վերջինի թշնամական հետապնդության պատճառը հասկանալ և նրա վարմունքը լոկ նրա չարասրտությանն էր վերագրում: Մոտենալով Թորոսյանի գրասենյակին, որը գտնվում էր «հայոց շուկայի» մեջ, նա կանգ առավ սալահատակ մայթի վրա, գրասենյակից մի քանի քայլ հեռավորությամբ, և սկսեց մտածել.

— «Զարգացած ու լուսավորված մարդկանց դիմեցի, հասարակական գործունեության նվիրվեցի, ազնիվ աշխատություն սիրեցի և, սակայն, հանդիպեցի անվանարկության, զրպարտության, կրեցի զրկանք ու հալածանք... Դիմեցի ծանոթ ու բարեկամ հայրենակցիս: Նա սեր ու մեծարանք ցույց տվավ, գեղեցիկ խոստումներ արավ, և, սակայն, կեսօրից ետ տմարդությամբ յուր խոստմանը դրժեց... Այժմ ո՞ւր եմ գնում այս անծանոթ մարդու մոտ: Գիտության աշակերտներից, լուսավորության բարեկամներից ի՞նչ բարիք կամ օգուտ ստացա, որ այս խավարասեր, մամոնայի երկրպագու արարածից ինչ ստանամ: Շիրաջ Մանասն էլ յուր տեսակում մի առևտրական է: Նա կեսօրվա մեջ ինձ խաբեց, սա էլ, շատ-շատ, մի շաբաթում կխաբե: Ի՞նչ միտք ունի արդյոք շարունակ հիասթափվելու համար փորձեր անելը: Ավելի լավ չէ՞ միանգամից այս անիծված կյանքից ազատվելը: Ինչո՞ւ իմ ողորմելի գոյությունը պահպանելու համար այս աստիճան ընկճել եմ ինձ մտատանջության, հոգսերի և հոգեկան վշտերի տակ. կարծես թե աշխարհը մեծ կորուստ կունենա, եթե ես ինձ Քռի ալիքներին հանձնեմ... Ո՞վ է մտածում իմ գոյության մասին, ո՞ւմ համար մի գրոշ արժեմ ես... ո՞ւմ համար...»:

Վերջին խոսքի վրա կանգ առավ երիտասարդը: Կարծես մի աներևույթ հոգի շշնջաց նրա ականջին. «Դու շատ բան արժես քո ծնողաց համար. քո սիրելի քրոջ համար... դու թանկ արժես և նրա համար, որ մի քանի օր առաջ գրել էր քեզ թե՝ «ձեր անջատումը ամեն զրկանքներից ավելի ցավ պատճառեց մեր սրտին...»:

Այս գաղտնի շշունջը երիտասարդի զգայուն սրտի ձայնն էր, որ կամենում էր ուժ ներշնչել վիատված հոգուն և խրախուսել նրան աներկյուղ առաջ գնալ դեպի կյանքի փորձությունները: Եվ իրավ, այդ ձայնը սթափեցրեց երիտասարդին, նա ոգի առավ և հաստատուն քայլերով առաջանալով՝ գրեթե լսելի ձայնով շշնջաց. — «Ո՛չ. չպետք է մեռնեմ, պիտի ապրեմ, որքան և ինչպես որ կարող եմ: Հեռո՛ւ ինձանից հուսահատություն, ես եզան պես կարող եմ աշխատել, և ո՞վ պիտի արգելե ինձ ամենամեծ լուծը կրելու...»:

Այս խոսքերի հետ միասին երիտասարդը հասավ Թորոսյանի գրասենյակին, կարդաց նրա դռան վրա կախած ռուսերեն և հայերեն ճակատագիրը և առանց տատանվելու կամ աջ ու ձախ նայելու՝ դուռը բացավ և ներս մտավ:

Թորոսյանի գրասենյակը մի ընդարձակ դահլիճ էր, կազմված երեք՝ միմյանց մեջ բացված կամարակապ կրպակներից, որով նա նմանվում էր փոքրիկ, անգմբեթ եկեղեցու: Դահլիճի վերին անկյունում դրված էր մի ընկուզյա, մեծ և հնատարազ սեղան, ծածկված կանաչ մահուդով: Նրա վրա գտնվում էին մի քանի փոքրիկ հաշվեմատյաններ, նամակներ, օրինակելու գրքեր, որոնց կազմերի վրա ոսկեզօծ տառերով մակագրված էին lettre a copie, ընկուզյա համարիչ և չուգունե թանաքամանի սարք, որի բազմամյա լինելը ապացուցանում էին թանաքամանի և մոմակալների մի քանի մասերի կոտրտված լինելը:

Սեղանի առաջ նստած էր Պետրոս Թորոսյանը և փոստից ստացած նամակներն էր կարդում: Դա մի բարձրահասակ, առողջ և խոշոր կազմվածքով, լուրջ և պատկառելի դեմքով, սուր ու թափանցող աչքերով և աղեբեկ (սպիտակախառն) մազերով ու մորուքով տղամարդ էր, մոտ 55 տարեկան:

Նրանից հեռու, դահլիճի մի կողմի ուղղությամբ դրված էին երկու ընկուզյա, գեղեցիկ հաշվեսեղաններ (конторка), որոնցից ամեն մեկի մոտ, բարձր աթոռակների վրա, կարծես թառած, նստած էին երկու երիտասարդներ, և առջևները մեծադիր ու հաստափոր հաշվեմատյանները դրած, գլխակոր գրում էին: Դրանք Թորոսյանի հաշվապահներն էին:

Դրանց հանդեպ գտնվող պատի տակ դրված էր մի ուրիշ՝ մեծ և հասարակ ձևի սեղան, չինարի դեղնագույն փայտից, որի վրա նույնպես աջ ու ձախ ընկած էին հաշվեմատյաններ, տետրակներ, նամակներ, օրինակելու գրքեր, համարիչ, սպունգաման, թանաքաման և այլն: Սեղանի կողքին դրված էր մի մեծ երկաթե պահարանաձև սնդուկ, մուգ-մոխրագույն ներկած: Դա Թորոսյանի գրասենյակի գանձարանն էր: Այս մեծ սեղանի և երկաթե սնդուկի մոտ նստած էր միջին հասակով, նիհար կազմվածքով, փոքր-ինչ դեղնած, բայց գրավի, դեմքով մի երիտասարդ, որը, ըստ երևույթին, Թորոսյանի գանձապահն էր, և այդ միջոցին զբաղված էր հաշվարարությամբ: Նա անընդհատ համրիչը շխշխկացնելով զանազան գումարումներ և հանումներ էր անում և արտադրությունները թղթի վրա մատիտով նշանակում:

Եթե հաշվի առնենք նաև այն հասարակ փայտե սեղանը, որի վրա ամրացված էր նամակներ օրինակելու մեքենան, փոքրիկ և նեղ պահարանը, որի մեջ շարված էին հին ու նոր հաշվեմատյաններ, վեց հատ Վիեննայի աթոռները, որոնք ծառայում էին գրասենյակը շնորհ բերող հյուրերին և պատերից կախած 10—12 հատ

թղթապանակները, որոնց մեջ պղնձե կարթերով ամրացված էին զանազան տեղերից ստացված հաշիվները, հաշվեցույցները, հաշվեկշիռները, ստացականները, շրջաբերականները և այլն, և այլն, դրանով նկարագրած կլինինք Թորոսյանի գրասենյակը յուր բոլոր պարունակությամբ:

Երբ Սարյանը ներս մտավ, գրասենյակի մեջ տիրում էր խորին լռություն, որն ընդհատվում էր, միայն, գանձապահի համրիչի և հաշվապահներից մեկի գրչի ձայներով: Պարոն Թորոսյանը, որ զբաղված էր նամակների ընթերցանությամբ և որը, առհասարակ, նեղանում էր եթե նամակներ գրելու կամ կարդալու միջոցին խանգարում էին իրեն և հենց այդ պատճառով էլ շատ անգամ ներս մտնողի վրա ուշադրություն չէր դարձնում և նույնիսկ նրա բարևը չէր ընդունում մինչև գործը չէր ավարտում, այս անգամ, դռան հանկարծական բացվելն ու ամուր փակվելը լսելով, գլուխը բարձրացրեց և խիստ ու անողոք հայացքով նայեց մտնողի վրա:

Թորոսյանը, առհասարակ, քաղցր աչքով չէր նայում յուր գրասենյակը մտնող օտար մարդու երեսին, եթե նա վաճառականի, կամ առևտրական աշխարհի հետ կապ ունեցող մարդու չէր նմանում. իսկ եթե նշաններից երևար, որ այդ օտարը, մինչև անգամ, գրական կամ ազգային շրջաններին պատկանող մարդ է, այդպիսին այնպիսի մի սառը և անհյուրընկալ ընդունելության կհանդիպեր, որ կարող էր մինչև անգամ կորցնել իրեն և ինչ բանի համար եկած լինելը մոռանալ: Թորոսյանի այդ վարմունքը նրա ծառայողները բացատրում էին նրանով, որ այդ մարդը ներքին բնազդմամբ զգալով, որ վերջին տեսակի մարդիկ չեն կարող իրեն օգուտ բերող մի գործի համար մտնել յուր գրասենյակը, այլ եթե մտնում են, անպատճառ մի բան դուրս տանելու համար են մտնում, ուստի չէր էլ կարողանում քաղցր աչքով նայել այդ տեսակ մարդկանց վրա կամ քաղցր լեզվով խոսել նրանց հետ, թեկուզ այդ մարդիկ նույնիսկ բոլոր հայերից հարգված մեծանուն գործիչներ լինեին: Դրա հակառակ, Թորոսյանը վերին աստիճանի սիրելի և քաղցրաբարո էր լինում մի ամենահասարակ մարդու, նույնիսկ մի շիրաջի գործակատարի հետ, եթե նա այնպիսի մի գործի համար էր գալիս յուր մոտ, որից ինքը թեկուզ ամենափոքրիկ մի շահ կարող էր ստանալ:

Այս բնորոշ գծից արդեն ընթերցողները կարող են հասկանալ, որ Թորոսյանը, չնայելով յուր հարստությանը և առևտրական աշխարհում ունեցած հռչակին, թե՛ վերին աստիճանի շահասեր և թե՛ դեպի հասարակական գործերն անտարբեր մեկն էր:

Հենց այս պատճառով էլ նրա աչքում, բոլոր աշխարհի մեջ, միակ արժանավոր բանը փողն էր, իսկ արժանավոր մարդը՝ միայն հարուստը: Երեկվա գյադան, որ ինչ-ինչ միջոցներով, կամ ո՞վ գիտե, բախտի ի՞նչ կատակով այսօր մի քանի հազար ռուբլու տեր էր դարձել, Թորոսյանի աչքում ավելի գին ու արժեք ուներ, քան ա՛յն մարդը, որ ուսում ու գիտություն էր ստացել, ազնվացել ու բարձրացել էր, անձնական օգուտը թողած՝ հասարակական շահերին էր ծառայում և, սակայն, այդ բոլոր առավելությունների հետ միասին, գրպանում փող չուներ: Վերջին հանգամանքի պատճառով այդ ուսումնականը, գիտնականը, հասարակական անձնվեր գործիչը յուր բոլոր արժեքը կորցնում էր Թորոսյանի աչքում:

Եվ սակայն, այս բոլորի հետ միասին, Թորոսյանը բնական խելք և առողջ դատողություն ուներ: Նա գեղեցիկ տրամաբանում և փիլիսոփայորեն խոսում էր: Միայն թե նա յուր այդ ընդունակությունը զարգացրել էր խիստ միակողմանի կերպով: Նրա տրամաբանական որոշումները և փիլիսոփայական հայացքները շարունակ պտտում էին առևտրի, փողի և հարստության շուրջը: Դրանցից դուրս նա աշխարհում էլ ուրիշ ոչինչ չէր տեսնում կամ ճանաչում: Հենց այս պատճառով էլ նա չէր կարողանում հարգել այն ուսումնականին, գիտնականին կամ հասարակական գործչին, որը յուր բոլոր զարգացումով հանդերձ՝ անկարող էր լինում աշխարհում

անկարոտ ապրել և շատ անգամ գյադաների օգնությանն էր դիմում և այդպիսով ուսման ու գիտության հարգը նվազեցնում:

Եթե մենք էլ բարոյական անձնվիրության տեսակետից չդատենք, իհարկե, չենք կարող Թորոսյանի հետ չհամաձայնվել, որովհետև նրա այս կարծիքը յուր որոշ հիմունքներն ունի: Սարյանի արկածներն ու դժբախտ կացությունը արդեն ապացույցներ են այդ կարծիքի գեթ պայմանական հիմնավորության:

Երիտասարդ Սարյանը, չնայելով յուր ամոթխածության, այսուամենայնիվ, չընկճվեց Թորոսյանի խիստ և անողոք հայացքի առաջ և մոտենալով՝ շնորհալի ձևով ողջունեց նրան:

— Ի՜նչ եք կամենում,— սառն ու կոշտ ձայնով հարցրեց Թորոսյանը:

— Եթե կբարեհաճեք ձեր թանկ ժամանակից մի քանի րոպե զոհելու...— ասաց Սարյանը քաղաքավարությամբ, կարծելով թե այդպիսով կմեղմե վաճառականի կոպտությունը:

Բայց վերջինս, որ երիտասարդի այգ ամոթխած քաղաքավարությունից արդեն գուշակեց նրա ինչ շրջանի մարդ լինելը, ավելի կոպտությամբ նկատեց:

— Ես ժամանակ չունիմ. տեսնո՞ւմ եք նամակներ եմ կարդում. նրանից հետո էլ նամակներ պիտի գրեմ... ի՞նչ ունեք, ասացեք:

— Կամենում էի խնդրել, որ ձեր գործում մի պաշտոն տաք ինձ:

— Պաշտո՞ն,— հարցրեց Թորոսյանը ձեռքի նամակը սեղանի վրա դնելով:

— Այո՛, գործակատարի, նամակագրի կամ հաշվապահի օգնականի... միով բանիվ ինչ պաշտոն որ ունիք:

— Որտեղացի՞ եք,— հարցրեց վաճառականը մի փոքր մեղմանալով:

— Ձեր հայրենակիցն եմ:

— Իմ հայրենակի՞ցը:

— Այո՛:

— Ո՞ւմ որդին եք:

— Սարենց Հովսեփի:

— Սարենց Հովսեփի՞:

— Այո՛:

— Վա՛, Սարեն Հովսեփը քեզ պես տղա ունի՞,— մտերմաբար և եզակի խոսելով հարցրեք Թորոսյանը:

— Ինչպես տեսնում եք:

— Լավ է, լավ է. աստված պահե. շատ ուրախացա, բաս ինչո՞ւ շուտ չասացիր, որ Հովսեփի տղան ես. ախար մենք ազգականներ ենք:

— Ես էլ լսել եմ. բայց իսկապես չգիտեմ, թե ի՞նչ ազգականներ ենք:

— Իհարկե, չէիր իմանալ. քո ծնվելուց առաջ եմ ես դուրս եկել մեր քաղաքից: Մարդ որ օտարանում է հայրենիքից ազգականներին և բարեկամներին էլ մոռանում է: Գործերս գոնե չեն ներում, թե մի-մի անգամ նամակ գրեմ հորդ: Հովսեփը իմ մոր եղբոր որդին է: Փոքր ժամանակներս դասընկերներ էինք, միասին էինք կարդում Ներսես վարդապետի մոտ: Բաս հայրդ իսկի չի՞ պատմել:

— Ոչ, առիթ չենք ունեցել:

Թորոսյանը մոռանալով, որ երիտասարդին ասել էր թե ժամանակ չունի, սկսեց երկար ու բարակ հարց ու փորձ անել նրան յուր հոր նյութական կարողության, ընտանեկան ապրուստի, յուր ուսումնառության և այլ խնդիրների վերաբերմամբ:

Երբ ավարտեց այն բոլոր հարցերը, որոնք անհրաժեշտ էին իրեն երիտասարդի անցյալին և նրա ընտանեկան հանգամանքներին ծանոթանալու համար, հարցրեց.

— Քանի՞ օր է, որ Թիֆլիսում ես:

— Վեց-յոթ շաբաթ կլինի:

— Վեց-յոթ շաբա՞թ, ի՞նչ էիր շինում այսքան ժամանակ. ինչո՞վ էիր պարապում,— հարցրեց Թորոսյանը հետաքրքրությամբ,

— Այստեղ գալուց «Փնջիկ» թերթի խմբագրատանը աշխատակցի և քարտուղարի պաշտոն ստանձնեցի. մինչև այժմ այնտեղ էի ծառայում,— ասաց Սարյանը, կարծելով, թե այդ հայտարարությամբ յուր վարկը պիտի ավելանա Թորոսյանի աչքում:

Բայց վերջինս դեմքը խոժոռելով և խիստ անախորժ արտահայտություն տալով նրան նկատեց.

— Այդպես դատարկ բաներով էլ ե՞ք զբաղվում: Սարյանը թափանցելով իսկույն խոսակցի հոգու մեջ և հասկանալով, որ հին սերնդի մի անողոք ներկայացուցչի հետ ունի գործ, խորամանկությամբ ավելացրեց.

— Այդ պաշտոնը հանձն առի առժամանակ. այսինքն, մինչև որ մի հաստատուն պաշտոն կգտնեի:

— Առժամանա՞կ. հա՛, առժամանակ կարելի էր: Ավելի լավ է մի բանով պարապել, քան թե անգործ նստել: Իհարկե քո ծառայության համար վճարում էին:

— Այսինքն պետք է վճարեին, բայց հետո...

— Ի՞նչ պատահեց, չվճարեցի՞ն:

— Այո՛, չվճարեցին, և ես հեռացա...

— Հա՛, հա՛, հա՛, չվճարեցին, իհարկե չէին վճարիլ, հա, հա՛, հա՛... հապա ի՞նչ էիր կարծել, հա, հա՛, հա՛:

... Երկար և բարձրաձայն սկսեց ծիծաղել Թորոսյանը և այդ սրտանց ծիծաղով կարծես կամենում էր ապացուցանել, որ ինքը երբեք չէր սխալվում բոլոր այդ «ազգասեր» և «գրական» անուն կրող մարդկանց ատելով և արհամարհելով:

— Եղբայր, քո հայրը խելոք մարդ էր,— դարձավ նա երիտասարդին,— ծիծաղելուց դադարելով,— այդ տեսակ գործի մտնելուց առաջ պետք է նրանից խորհուրդ հարցնեիր, ինչո՞ւ վեց-յոթ շաբաթներդ անօգուտ վատնեցիր:

— Սխալվեցա և ինքս էլ զղջացի, բայց արդեն ուշ էր:

— Զղջացի՞ր, հա՛. ուրեմն վնաս չունի, սխալվելը բոլոր երիտասարդներին է հատուկ, զգույշ կաց, որ այսուհետև չսխալվես:

— Եթե ձեզ նման փորձառու մարդիկ բարեհաճեն ինձ օգնել, հույս ունիմ, որ ես չեմ սխալվիլ:

— Ուրախությամբ, ուրախությամբ: Ես քո հորը շատ հարգում եմ և նրա պատվի համար էլ կցանկանայի, որ ինձ մոտ պաշտոն ունենաս:

— Ի դեպ, իմ հաշվապահի օգնականը ընտանեկան գործերի պատճառով թողնում է յուր պաշտոնը: Ինձ արդեն հարկավոր է մի ծառայող: Դու կարող ես նրա տեղը անցնել: Հայրդ պատվական մարդ է. գոհ կլինեմ, եթե նրա նման լինես:

Վահանը չէր ուզում հավատալ յուր ականջներին և ուրախությունից քիչ էր մնում վեր կենար և Թորոսյանի ձեռքերը համբուրեր:

— Եթե այդքան բարի կլինիք, ինձ այլևս ոչինչ չի մնալ ասել, եթե ոչ գործով ապացուցանել, որ ես արդարև արժանի եմ ձեր դեպի ինձ տածած վստահության:

— Այո՛, դուք կարող եք պաշտոնի մեջ համարել ձեզ այսօրվանից: Հաշվապահություն գիտե՞ք:

— Ոչ. հաշվապահություն չեմ սովորել, բայց եթե մի վարժապետ ունենամ...

— Գիտեմ, շուտ կսովորեք: Բայց տեսնո՞ւմ եք. ամենից կարևոր բանը չեն սովորեցրել և, սակայն, ավարտման վկայական են տվել ձեզ:

— Այո՛, հաշվապահություն սովորեցնելու վրա մեր դպրոցներում չեն մտածում:

— Բայց հաց ուտելու վրա մտածում են: Ա՛յ դրա համար է, որ ես ասում եմ, թե դպրոցներում միշտ այն են սովորեցնում, ինչ որ այս կյանքում պիտանի չէ մեր տղերանց: Եվ ես չեմ սխալվում: Դու առաջինը չես, որ հաստատ հաց աշխատելու ճանապարհը չգիտես:

— Ճշմարիտ է, իմ բոլոր ընկերները ոչնչով ավելի չեն ինձանից:

— Այդ պատճառով նրանք էլ քեզ նման կյանքի մեջ մտնելուց՝ առաջին պատահող սրիկայից պիտի խաբվին:

— Դժբախտաբար ինձ պատահողները սրիկաներ չէին...

— Օ՛, առաջին սրիկաները նրանք են: Եվ մեզ մոտ պաշտոն ստանձնելուց ետ այդտեսակ մարդիկներից հեռու պիտի լինիք: Դա մեր առաջին պայմանը պիտի լինի: Համաձա՞յն եք:

— Համաձայն եմ ի սրտե:

— Եթե այդպես է, կնշանակե խելոք տղա եք. ձեր սխալը ճանաչում եք աշխատում եք հաստատ հողի վրա դնել ձեր ոտքը: Այդ դեպքում ես էլ ձեռքիս եկած օգնությունը

կանեմ: Վաղվանից արդեն կարող եք ստանձնել ձեր պաշտոնը. իսկ այդ պաշտոնի վերաբերմամբ չգիտցածներդ կսովորեք մեր հաշվապահից:

Վահանը գրեթե հիացած Թորոսյանի բարեսրտությունից և խոստումներից, ջերմագին շնորհակալություն արավ նրան և հետևյալ օրը վերադառնալու խոստում անելով, ուրախ սրտով դուրս գնաց գրասենյակից:

Դ

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Անցան մի քանի ամիսներ: Վահան Սարյանը հավատարիմ մնալով յուր խոստմանը, բոլոր այդ ժամանակ հեռու պահեց իրեն ազգային շրջաններից և մեծ ուշադրությամբ նվիրվեց յուր ծառայությանը:

Թորոսյանը կամենալով օգնել յուր ազգակցին և նրանից մի հավատարիմ ծառայող պատրաստել յուր համար, բավարար ռոճիկ նշանակեց նրան և պատվիրեց հաշվապահին սովորեցնել նրան յուր ծառայության վերաբերյալ գիտելիքները: Կարճ ժամանակի մեջ Վահանը ավարտեց հաշվապահությունը, ծանոթացավ Թորոսյանի ընթացիկ գործերի հետ, ընտելացավ առևտրական աշխարհի կարգ ու կանոններին և շնորհքով և հմտությամբ յուր պաշտոնը վարելով՝ գրավեց Թորոսյանի սերը և յուր պաշտոնակիցների հարգանքը:

Բայց և այնպես երիտասարդը յուր գործունեության այդ նոր ասպարեզը չկարողացավ սիրել, որովհետև նա չգտավ այդտեղ մի բան, որ կարողանար յուր սիրտը գրավել, միտքը կերակրել կամ հոգին պարարել: Յուր շրջապատը դիտելով և որոշ գիտակցության գալով նա տեսավ իրեն տխուր ամայության մեջ, հեռու սիրած ու գուրգուրած նպատակներից...

ճշմարիտ է, նրա դրությունը այժմ ավելի ապահով էր, քան առաջ. նա վաստակում էր յուր հացը արդար քրտինքով, կարոտությունը այլևս չէր սպառնում նրան, նա հետզհետե ծանոթանում էր առևտրական աշխարհի նշանավոր մարդկանց հետ, իսկ այդ ծանոթությունը կարող էր ապահովել նրա ապագա բախտի հաջողությունը, այսուամենայնիվ, այս բոլոր առավելությունները չէին փակում այն անջրպետը, որ յուր սիրած, գաղափարական աշխարհը բաժանում էր առևտրական նյութապաշտ աշխարհից, որ օրըստօրե տխուր գիտակցության բերելով իրեն՝ թույլ չէր տալիս նրան սիրել այդ ասպարեզը:

Արդարև, գաղափարական աշխարհի մեջ էլ նա դեռ գրավիչ ու սիրելի ոչինչ չէր տեսել: Առաջին անգամից իսկ այդտեղ շրջապատել էին նրան ստություն, կեղծիք, խաբեբայություն և այլն, բայց նա համոզված էր, որ դա յուր երևակայած աշխարհը չէր եղած, որ նա սխալվել էր խաբեբաների մի շրջան մտնելով և այդ շրջանը դրական ու ազգային աշխարհ ճանաչելով: Նա հավատում էր, որ յուր երևակայած գաղափարական աշխարհը կա, գոյություն ունի, և որ ինքը մի օր կարող է ճանաչել նրան: Նա հավատում էր, որ այնտեղ ապրում ու գործում են դեռ ազնիվ և առաքինի մարդիկ, որոնց հետ մի օր նա կարող է ծանոթանալ...

Իսկ ինչ առևտրական աշխարհին էր վերաբերում, նա այժմ արդեն յուր աչքի առջևն էր: Երիտասարդը նրան տեսնում, քննում, ուսումնասիրում էր, և որքան որ ավելի մոտենում ու թափանցում էր նրա էության և գաղտնիքներին, այնքան ավելի հակակրում և արհամարհում էր նրան:

Եվ իրավ. ի՞նչ ձգտում և ի՞նչ աշխարհայեցողություն ուներ գործատեր առևտրականը և ի՞նչ նրա ծառայողները:

Առաջինը մտածում էր շարունակ փող վաստակելու, գանձ դիզելու վրա: Այդ նպատակին հասնելու համար նա ո՛չ միջոցների մեջ էր խտրություն դնում և ո՛չ աշխատության ծանրությունից էր փախչում: Վաղ առավոտից սկսած մինչև մութ երեկո անընդհատ գործում ու տնքում էր և յուր հետ միասին աշխատեցնում ստորադրյալներին: Օրերին հաջորդում էին շաբաթները և ամիսներին՝ տարիները. առևտրականի կյանքը բոլոր այդ ժամանակ հոսում էր միատեսակ: Փող, հաշիվ և շահ. ահա՛ միակ առանցքը, որի շուրջը պտտում էին նրա խելքն ու միտքը, խոսքն ու զրույցը, սիրտը և հոգին: Առևտրական մարդուն հասարակական խնդիրները չէին զբաղեցնում, ազգային նորությունները չէին հետաքրքրում, գաղափարական մտքերը չէին ոգևորում... Այդ բաների վրա նա ծաղրով կամ արհամարհանքով էր նայում. իսկ երբ տեսնում էր, որ դրանցով զբաղվում են յուր հարգած մարդիկ, նա նրանցից խույս էր տալիս գծուծ ճանապարհներով: Փախչում էր բարեգործական նպատակով փող հանգանակող մարդուց, երես էր դարձնում ազգային գործի համար յուր օգնությանը դիմող բարեկամից, անարգանքով հեռացնում էր կարոտյալին, նախատում էր աղքատի տկարությունը, ծաղրում էր բախտից հալածվածին... և յուր այս տմարդությունն ու անգթությունը արդարացնելու համար, իմաստակությամբ հերքում էր հասարակական շահերի մասին մտածելու ու գործելու կարևորությունը առարկելով թե՝ այդ ճանապարհով սովորեցնում են մարդկանց անգործության և ծուլության և մեռցնում են նրանց մեջ ինքնօգնության զգացումն ու գաղափարը:

Իսկ թե ինքը ի՞նչ նպատակով էր ոսկի դիզում, ո՞ր ապագայի մասին էր աշխատում, դրա համար նա ոչ ոքի հաշիվ չէր տալիս և համոզված էր, որ իրանից այդ տեսակ հաշիվ պահանջելու էլ իրավունք չանին, որովհետև նա աշխարհում ապրում էր յուր և ոչ թե ուրիշների համար:

Իհարկե, բոլոր առևտրականները միատեսակ չէին, ինչպես որ պարտեզի մեջ բոլոր ծառերը մի հասակ չունին, կամ ծառի վրա բոլոր պտուղները՝ մի գույն ու հասունություն: Կային դրանց մեջ մարդիկ, որոնք հետաքրքրվում էին հասարակական խնդիրներով կամ ազգային կյանքի բախտով, բայց դրանք էլ հետաքրքրվում էին այն չափով, ինչ չափով որ հետաքրքրվում է բարեպաշտ ժամավորը եկեղեցու դռանը մուրացող աղքատի վիճակով: Նրա ցնցոտիները և ողորմելի կերպարանքը շարժում են բարեպաշտի գութը և սա «ի յաւելուածոյ իւրոյ» մ սև փող դնելով նրա ափում՝ հեռանում է, կարծելով թե յուր բարոյական պարտքի մեծագույն մասը կատարեց Այսպես էին վերաբերվում դեպի հասարակական բախտը՝ լավագույնները առևտրականներից. իսկ վատթարագույնները այդ բախտով հետաքրքրվիլը արդեն հանցանք էին համարում:

Ինչ սրանց ստորադրյալներին էր վերաբերում, առևտրական աշխարհի այդ շարժուն, եռանդոտ և կենդանությամբ լի դասակարգին, դրանք նույնպես գրավիչ ու սիրելի կողմեր չունեին: Այդ երիտասարդ մարդիկ, արդարև, շատ կետերում զանազանվում էին գործատեր վաճառականից, նրանք ավելի դյուրազգաց, կարեկցող և բարիք գործելու դյուրապատրաստ էին, բայց այս առավելությունը իսկապես մի թերություն էր նրանց համար, որովհետև առաջ էր գալիս ոչ թե գիտակցության զորությունից, այլ բնավորության թուլությունից, Իսկ այդ թուլությունը նկատվում էր նրանց ամեն մի քայլափոխում:

Այդ երիտասարդները արտաքուստ ուրիշ մարդ էին ներկայանում, ներքուստ, ուրիշ: Նրանք հլու և հնազանդ էին գործատիրոջ, ինչպես խոհեմ որդիները իրենց հորը. նրա պատվերները կատարում էին խոնարհ պատրաստակամությամբ. նրա անիրավ պահանջների դեմ չէին տրտնջում: Համեստության մի վարագույրը ծածկում էր նրանց

դեմքը. կանգնելով ու քայլելու մեջ անգամ պարկեշտություն էին ցույց տալիս: Իսկ ուտելու և հագնելու մեջ այնքան չափավոր ու խնայող էին, որ շատ անգամ գործատերը գորովվում էր նրանց զրկանքները տեսնելով... Այս բոլորը, սակայն, արտաքին կողմն էր: Հետաքրքիր ներքինը միայն իրենց և մտերիմ ընկերակիցներին էր հայտնի: Այդ ներքինը ճանաչելու համար պետք էր նրանց ընկերանալ, որովհետև միայն այդ ընկերության մեջ էին մերկացնում նրանք արտաքինը և ապրում ու գործում իսկական կերպարանքով:

Այդ ընկերության մեջ պարկեշտ ու ամոթխած երիտասարդը դառնում էր հանդուգն ու համարձակ արարած. ծառայության լուծի առաջ խոնարհող գլուխը հրամայում էր իբրև ազատ իշխան. համեստ ժպտողը ծաղրում էր լրբաբար. գործատիրոջ անարդար պահանջները անտրտունջ կատարողը Հայհոյանքներ էր տեղում և խորհրդավոր սպառնալիքներ կարդում նրա հասցեին:

Իսկ ինչ նրանց չափավորության ու խնայողության էր վերաբերում, դրա ապացույցը կարելի էր տեսնել հասարակաց այն զբոսարաններում, ուր մտերիմ ընկերներից և գեղեցիկ ընկերուհիներից զատ ուրիշ ոչ ոք չէր ներկայանում: Այդտեղ նրանք ամբողջ գիշերներ էին լուսացնում ուտելով, խմելով և զվարճանալով: Անմիտ ու անհաշիվ կերպով ծախսում, շռայլում և ցրվում էին. ո՞ւմ հաշվից, ո՞ ր աղբյուրից, ոչ ոք չէր հարցնում : Որովհետև ինչպես որ գործատիրոջ ներկայությամբ սուտ պարկեշտ, սուտ հնազանդ և սուտ հավատարիմ ձևանալով միմյանցից չէին ամաչում այդ երիտասարդները. որովհետև այդպես վարվելը սովորական և մինչև անգամ անհրաժեշտ էր նրանց համար, այնպես էլ անհաշիվ ծախսելու և շռայլելու ժամանակ միմյանցից չէին քաշվում, որովհետև նրանցից յուրաքանչյուրին հայտնի էր, թե ո՞վ ինչ եկամուտ ունի և որքա՞ն կարող է ծախսել ընկերական սեղանի համար:

Ինչ վերաբերում է հասարական խնդիրներով կամ ազգայինների բախտով հետաքրքրվելուն, այդ կետում այս երիտասարդները նմանում էին իրենց տերերին, միայն մի տարօրինակ զանազանությամբ: Նրանք սիրով լսում էին ազգային նորությունները, կարեկցում էին արյունակիցների թշվառության և ուրախությամբ ստորագրում էին փող հանգանակողների թերթին, շատերը, մինչև անգամ, իրենց կաղությունից ավելի, բայց երբ հարցը տրվում էր այսպես, հասարակական գործին օգնե՞լ, թե՞ գիշերային զվարճության գնալ, վերջինը գերադասում էին: Կանաչազարդ հովանոցում նստած, գինու բաժակը ձեռին օրիորդ Կլարայի աչքերին նայելը և նրա կենացը դատարկելը նրանք չէին փոխիլ ոչ մի հասարակական գործի կամ խնդրի հետ: Մինչև անգամ եթե իրենցից մեկը թուլություն ունենար Կլարայի կենացը թողնելով, այդ տեսակ գործերի ետևից գնալու, նրան ազգասեր անվանելով կծաղրեին և շատ անգամ իրենց ընկերությունից կհեռացնեին, որովհետև փորձով գիտեին, որ այդ տեսակ զգացմունքների տեր երիտասարդը ուրախ և անհոգ տրամադրության խանգարող է լինում: Այս բոլորը երիտասարդ Սարյանը տեսնում, լսում, հետազոտում էր և խորը սրտից վշտանում:

Նա հիշում է, որ հայրենի քաղաքում գտնված ժամանակ Թիֆլիսի առևտրական դասակարգի մասին էլ մեծ կարծիքներ ուներ: Հավատում էր, որ նա է բոլոր մեծամեծ գործերին հոգի ու կյանք ներշնչողը: Որովհետև նյութական ուժը յուր ձեռքում ունենալով՝ բնական էր, որ հանրօգուտ հաստատությունների հիմնողն ու պահպանողն էլ ինքը լիներ: Բայց այժմ տեսնում էր, թև որքա՜ն սխալված է եղել: Համեմատում էր լուսավորված քաղաքի վաճառականը գավառական քաղաքի վաճառականի հետ և առաջինը ոչնչով բարձր չէր գտնվում վերջինից: Միակ տարբերությունը արտաքին փայլն էր, որ աչքի էր ընկնում առաջինների ընտանեկան նիստ ու կացի մեջ: Ինչ ներքին արժանավորությանն է վերաբերում, նա երկուսի մեջ էլ միևնույն աստիճանի վրա էր կանգնած:

Երիտասարդ Սարյանին ավելի վշտացնում էր առևտրական աշխարհում ծառայող երիտասարդության բարոյական նվաստությունը, որի պատճառը նույնիսկ իրենք գործատեր վաճառականներն էին: Որովհետև վարվելով ստորադրյալների հետ ոչ իբրև բարեկամ և մտերիմ, այլ իբրև տեր և իշխող, ակամա սովորեցրել էին նրանց ստել, կեղծավորել, դիմակավորել. այո՛ ասել այն ժամանակ, երբ նրանց սիրտը ոչ էր գոռում, խոնարհել գլուխը այն հրամանի առաջ, որի դեմ սիրտը ապստամբում էր...

Այս մտքերը սկսան զբաղեցնել երիտասարդ Սարյանին ա՛յն ժամանակ, երբ յուր պաշտոնի վերաբերյալ ուսումը ավարտելով՝ մտավ իսկական ծառայության մեջ. մանավանդ, երբ տեսավ, որ Թորոսյանի ներքին և արտաքին գործերում ծառայող բազմաթիվ երիտասարդների թվում չկա գեթ մեկը, որ գաղափարակից լիներ իրեն և յուր կարծիքներն ու զգացմունքները բաժաներ:

Երիտասարդը զգում էր իրեն գրեթե ամայության մեջ: Որքան որ այս հանգամանքը վշտացնում էր նրան, այնքան ավելի ուրախություն էր պատճառում Թորոսյանին: Որովհետև իմացած լինելով, որ Վահանը մի անգամ արդեն գրական և ազգային շրջաններին ծանոթ է եղել, կասկածում էր թե՝

չլինի նա դարձյալ մոտենա նույն շրջաններին (որոնցից ինքը փախչում էր իբրև ժանտախտից) և յուր գործին ու անվանը վնասե:

Այդ պատճառով նա գրեթե միշտ առիթ էր որոնում զգուշացնելու երիտասարդ ազգակցին հեռու պահել իրեն յուր հին ծանոթներից:

— Այդ մարդիկ անսիրտ ու անխիղճ արարածներ են. նրանց մոտեցողը միշտ կվնասվի. եթե հազարներ ունենա ծակ գրպաններով կվերադառնա. թե պաշտոն ունենա՝ կկորցնե, եթե խելք ունենա՝ նրանից կզրկվի եթե ազնիվ լինի՝ կստորանա. միով բանիվ այդ մարդկանց մոտեցողը բացի վնաս ուրիշ բան ստանալ չի կարող:

Այս խրատների հետ միասին Թորոսյանը խորհուրդ էր տալիս Վահանին մշտական ընկեր և բարեկամ ընտրել իրեն Սիմոն Թաղարյանին՝ յուր ազնիվ, առաքինի և հավատարիմ գանձապահին, որի անունը հարգանքով էին հիշում բոլոր վաճառականները, և, որի համար, մինչև անգամ, նախանձում էին իրեն յուր հակառակորդները:

Վահանը լսում էր այդ խրատներն ու խորհուրդները, բայց նրանց հետևելու իրավունքը վերապահում էր իրեն, որովհետև իր առաջին հիասթափությունից ետ հաստատուն կանոն էր դրել նա յուր համար՝ «շատերին լսել, բայց քչերին հավատալ», և, նամանավանդ, չընդունել իբրև իսկություն այն, ինչ որ սեփական աչքով չէր տեսել, ականջով չէր լսել և ձեռքով չէր շոշափել: Սարյանի կարծիքով ճշմարտության հասու լինելու համար, թեպետ դժվարին, բայց միակ հաստատուն և ուղիղ ճանապարհն էր սա:

Որովհետև երիտասարդ Սարյանի բարոյական սկզբունքներից մեկն էլ այն էր, որ իրեն տրված խորհուրդներից ոչ մեկը չարհամարհե, այլ որին հնարավոր է հետևել առանց վնաս կրելու հետևե փորձառություն ձեռք բերելու համար, ուստի նա ավելորդ չհամարեց մոտենալ Թորոսյանի փառաբանած գանձապահին և չափել նրա բարոյական արժանիքը:

— Ով գիտե, գուցե հենց նրա մեջ եմ գտնում այն անձը, որին որոնում եմ առևտրական աշխարհի այս ամայության մեջ,— մտածում էր նա: Սիմոն Թաղարյանը, արդարև, ուշադրության արժանի երիտասարդ էր, բայց, իհարկե, ոչ այն կողմից, որից ճանաչում էր նրան Թորոսյանը: Նա նշանավոր էր նրանով, որ տասը երկար տարիներ ծառայելով

Թորոսյանի նման զգույշ և աչալուրջ մարդու մոտ, կարողացել էր բոլոր այդ ժամանակ փակած պահել, նրա աչքերը և չերևալ նրա առաջ այն, ինչ որ էր իսկապես:

Վահանը, որ արտաքին գեղեցկության հետ միասին քաղցր ու բարեխառն բնավորություն ուներ և յուր շնորհալի պաշտոնակատարությամբ գրաված էր արդեն ընկերների հարգանքը, մեծ հաճույք պատճառեց Թաղարյանին, երբ սկսեց մոտենալ և բարեկամանալ նրա հետ:

Սկզբում, իհարկե, այդ բարեկամությունն արտահայտվում էր լոկ քաղաքավարական հարաբերությամբ: Բայց որոշ ժամանակից ետ Թաղարյանը կարիք զգաց ավելի մոտենալու և մինչև անգամ մտերմանալու այդ քաղցրաբարո երիտասարդի հետ: Նա հաճախ հրավիրում էր Վահանին յուր մոտ, պատիվներ էր տալիս նրան, զբոսարաններն էր շրջեցնում և աշխատում էր կարելվույն չափ սիրելի անել նրան յուր ընկերությունը:

Վահանը անզգալի եղանակով հետզհետե անձնատուր էր լինում յուր նոր բարեկամին և կարծես սկսում էր համոզվել, որ արդարև, այդ Թաղարյանը մի ազնիվ և օրինակելի անձնավորություն է:

Երիտասարդի այդ տրամադրությունից օգտվելով, Թաղարյանը սկսեց ավելի և ավելի մտերմանալ նրա հետ և երիտասարդական գաղտնիքների մասին խոսել, կամ այդ գաղտնիքներով հետաքրքրել նրան: Որքան էլ այդ տեսակ զրույցները համեմված են լինում անպարկեշտ ակնարկություններով և ազնիվ ճաշակը վիրավորող հայտնություններով, որքան էլ որ այդ զրույցներին անսովոր մարդը արտաքին տհաճությամբ է լսում նրանց, այսուամենայնիվ այդ զրույցների մեջ կա մի բան, որ կարծես խաղում է երիտասարդ մարդու թաքուն զգացմունքները և ներքին հաճություն է պատճառում նրան: Վահանը, իբրև արևելցի երիտասարդ, չէր կարող զուրկ լինել այդ տեսակ զրույցները հաճությամբ լսելու կարողությունից. հետևապես առանց Թաղարյանի յուր վերաբերմամբ ունեցած մտերմական տրամադրությունը խանգարելու, լսում էր նրան և զվարճանում: Իհարկե, եթե Վահանը հավատար. թե այդ զրույցները կարող են երբևիցե յուր բարոյականին վնասել կամ հաստատակամությունը խախտել, նա թույլ չէր տալ իրեն լսել նրանց: Բայց նա այդ մտերմական զվարճախոսությունների վրա նայում էր այնպիսի աներկյուղությամբ, ինչպես խրոխտ քարաժայռը ծովի զայրացած կոհակներին. որոնք մռմռալով մոտենում են իրեն և յուր կողերին զարնելով փշրվում են ու անհետանում:

Այսուամենայնիվ, այդ քարաժայռը այնքան էլ ամուր չէր: Երիտասարդական հաստատակամության արմատը նույն ինքը բնությունն է փորում: Հետևապես ով որ կարծում է, թե երիտասարդ լինելով կարող է իբրև ծեր գործել, չարաչար սխալվում է: Երիտասարդը, արդարև, կարող է իբրև ծեր մտածել և ծերը՝ իբրև երիտասարդ, բայց երբ հերթը գործելուն է գալիս, նրանցից յուրաքանչյուրը յուր դերն է կատարում: Դա բնության անհեղլի օրենքն է, որը միայն բացառությունները կտրող են լուծել:

Եվ որովհետև Վահանը բացառություն—երիտասարդ չէր, ուստի սիրով ու զվարճությամբ լսեց մի օր Թաղարյանի այն հայտնությունը, թե երկու գեղանի օրիորդներ, որոնց հետ բարեկամություն հաստատելու համար շատ էին աշխատել թե ինքը և թե՛ յուր ընկերները, բայց անհաջողության էին հանդիպել, անցյալ օրը տեսնելով Վահանին յուր հետ զբոսնելիս, այնքան էին հավանել նրան, որ մինչև անգամ խոսք էին տվեք բարեկամություն հաստատել յուր հետ, եթե ինքը Վահանին կտաներ և կծանոթացներ նրանց հետ:

Երիտասարդը, արդարև, հաճությամբ լսեց այս պատմությունը, բայց, իհարկե, չէր հաճիլ գնալ այդ գեղանի օրիորդների մոտ և ծանոթանալ նրանց հետ այն նպատակով՝

թե՝ ինչ է Թաղարյանի բարեկամուհիների թիվը երկուսով պիտի ավելանա: Նա այդ չէր անիլ. չէր կարող անել, նա համոզված էր:

Բայց... ափսոս, որ նա իբրև ծեր մտածեց և սակայն իբրև երիտասարդ գործեց, Թաղարյանի խնդիրքներն ու թախանձանքը, իբրև բարեկամի և մտերիմի, նա չկարողացավ մերժել:

— Ի՞նչ պիտի պատահի ինձ. բարեկամ տղա է, խնդրում է, ինչո՞ւ սիրտը կոտրեմ. արի գնամ. հետաքրքիր է այդ կյանքի հետ էլ ծանոթանալ: Փորձության աշխարհն եմ մտել, թող առաջ գնամ: Նորից հո չի պիտի սայթաքեմ, թող այս մարդկանց գաղտնիքներն էլ ուսումնասիրեմ, այդ ինձ օգուտ կարող է բերել և ոչ թե վնաս: Վերջապես թող տեսնենք, թե մեր Թորոսյանը ի՞նչ տեսակ մարդու խնամքին է հանձնում ինձ..

Այս խորհրդածություններով յուր սիրտը ամրացնելով, մի երեկո նստեց Թաղարյանի առաջարկած կառքի մեջ և նրա հետ միասին սլացավ դեպի Կուկիա կոչված քաղաքամասի այգիները:

Ձմեռային Ժամանակ էր. երկինքը մութ և ամպամած. ձյունը մեղմով տեղալով հալչում էր հետզհետե և ջրի լճակներ կազմում. փողոցների ոտով գնացողների անցուդարձը նվազել էր արդեն և միայն կառքերն էին ետ ու առաջ սլանում, և ջրի ու տիղմի ցայտյունները ցրվում աջ ու ձախ:

Այդպիսի խոնավ ու անհաճո եղանակներին Վահանը սիրում էր փակվել սենյակում և ընթերցանությամբ պարապել: Նա չէր հավատում, թե կգտնվին մարդիկ, որոնք այդպիսի եղանակներում էլ զվարճության տեղեր կամ զբոսարաններ կհաճախեն: Բայց այժմ տեսնելով իրեն երիտասարդ գանձապահի հետ կառքի մեջ նստած՝ զարմանում էր յուր անմտության վրա և ինքն իրեն նախատում: Եվ որովհետև ճանապարհի երկարությունը ավելի էր գրգռում նրա դժգոհությունը, ուստի չկամենալով յուր ընկերոջը խանգարել, որոշեց վերադառնալ տուն:

— Սա արդեն չափազանց է, բարեկա՛մ, այսպիսի ժամանակ փողոցային սրիկաները միայն կարող են զվարճության ետևից ընկնել, ես չեմ կամենում քեզ ընկերանալ...— ասաց Վահանը Թաղարյանին և հրամայեց կառապանին կառքը կանգնեցնել:

— Ի՞նչ պատահեց քեզ, ա՛յ մարդ, հո չգժվեցա՞ր. զվարճության համար ապա ի՞նչ ժամանակ է հարկավոր. լավ ժամանակը գործ ենք կատարում, վատ ժամանակն էլ պիտի զվարճանանք. սրա դեմ ի՞նչ ունիս,— ասաց Սիմոնը և հրամայեց կառապանին ձիաները մտրակել:

— Չէ, չէ. պիտի վերադառնամ, ի՞նչ կասեն մարդիկ, եթե այսպիսի եղանակին և օրվա այս Ժամին ինձ զվարճության տեղում տեսնեն:

— Ովքե՞ր. ի՞նչ մարդիկ:

— Այ, հենց ինքը Թորոսյանը. նրա բարեկամները, ծանոթները...

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, Թորոսյանը, նրա բարեկամները... մի մտածիր, ի՞նչ ես ասում, խելքդ որտե՞ղ է,— ուրախ-ուրախ ծիծաղելով նկատեց գանձապահը:

— Ի՞նչ եմ ասում, չի՞ կարող պատահել:

— Ինչո՞ւ չի պատահիլ. բայց ախար այն էլ մտածիր թե՝ եթե Թորոսյանը յուր սպիտակ մազերով ու մորուքով կարող է զվարճության տեղում գտնվել, ինչո՞ւ դու նրանից առաջ

չպիտի գտնվես. կամ եթե նա այդպիսի տեղում քեզ պատահե, մի՞թե գլուխը մկան ծակում չի թաքցնիլ:

— Այսպես թե այնպես, գալուս վրա զղջացել եմ. կամենում եմ վերադառնալ:

— Ուշ է, բարեկամ, ուշ է. կամուրջը ետևիցդ վերցրին,— ասաց գանձապահը ծիծաղելով:

Եվ արդարև, այդ միջոցին բացվեցան ճանապարհի վրա գտնվող մի այգու դռները, կառքը արագությամբ ներս մտավ և սկսեց առաջանալ դեպի ընդարձակ ծառուղին, իսկ լայնափեղկ դռները նրա ետևից ճռնչալով փակվեցան:

— Այս ո՞ւր եկանք,— հարցրեց Սարյանը հետաքրքրությամբ և գլուխը հանեց կառքից՝ տեսնելու համար, թե ի՞նչ ճանապարհ էր այն, որի վրա այնպես կակուղ ու անձայն գլորվում էին կառքի անիվները:

— Զգույշ կաց, ծառի ճյուղերը երեսիդ չդիպչեն, այգու միջով ենք գնում,— հայտնեց գանձապահը:

— Այգի՞.— զարմացավ Վահանը.— այս ցուրտ ձմռանն ի՞նչ պիտի շինենք այգում:

— Տաք տեղ կտանեմ քեզ, միամիտ կաց,— ասաց գանձապահը ծիծաղելով:

— Ա՜խ, ինչպես հիմարացա, ինչպե՜ս զղջում եմ,— դժգոհությամբ խոսեց Սարյանը, երբ կառքը կանգնեց այգու խորքում գտնվող տան մուտքի առաջ, որ լուսավորված էր փոքրիկ լամպարի աղոտ լուսով:

— Կես ժամից ետ կզղջաս այդպես խոսելուդ համար.— նկատեց Սիմոնը ծիծաղելով և ընկերոջ ձեռքից բռնելով քաշեց յուր ետևից:

— Կառքին չի՞ պիտի վճարենք,— հարցրեց Սարյանը:

— Կառքը կարող է սպասել,— ասաց գանձապահը հարուստ մարդու անհոգությամբ և բարձրացավ սանդուղքներից այնպիսի համարձակությամբ, որ ասես թե այդ տան տերն էր:

Վահանը հետևեց նրան:

Նախասենյակում սպասող ծառան ողջունեց գանձապահին այնպիսի մի ժպիտով, օրից երևում էր թե վաղուց է ճանաչում նրան և թե ծանոթ է նրա շատ գաղտնիքներին: Գանձապահը, իբրև պատասխան նրա ողջույնին, մտերմաբար խփեց նրա ուսին և հարցրեց.

— Այստե՞ղ են նրանք:

— Հրամել եք, աղա. էստեղ են:

Այս ասելով նա շտապեց բանալու այն սենյակի դուռը, որտեղից ուրախ խոսակցության և կանացի ծիծաղի ձայներ էին լսվում:

Ընդարձակ և շքեղ կերպով լուսավորված սենյակում հավաքված էին մի քանի երիտասարդներ և երիտասարդուհիներ, որոնք շրջան կազմած խոսում, ծիծաղում և կատակներ էին անում: Գանձապահ Թաղարյանին և նրա ընկերոջը տեսնելուն պես երիտասարդներից մի քանիսը ուրախ բացականչություններով ողջունեցին նրանց, իսկ մյուսները բողոքեցին նրանց ուշանալուն համար և սպառնացին, որ չի պիտի

թողնեն մի կաթիլ շամպայն խմելու: Գանձապահը քաղաքավարությամբ ներողություն խնդրեց բողոքողներից և առաջ անցնելով ողջունեց. երիտասարդուհիներին և ծանոթացրեց Վահանին թե՛ նրանց և թե՛ յուր ընկերների հետ:

Մի քանի խորհրդավոր ակնարկներ և պայմանական խոսքեր փոխանակելուց ետ, գանձապահը թևն առավ Սարյանին և մոտենալով երկու գեղանի օրիորդների, որոնք զույգ տատրակների նման նստած էին սենյակի անկյունում դրված բազմոցի վրա, ռուսերեն լեզվով ասաց.

— Այժմ, կարծեմ, կարող եք համոզվել, որ Սիմոն Պետրովիչը ազնիվ ու յուր խոսքին հավատարիմ մարդ է: Ձեզ խոստացա իմ գեղեցիկ ընկերոջ հետ ծանոթացնել և ահա նրան բերել եմ ձեզ մոտ: Պետք է շնորհակալ լինեք ինձանից այսքան անձնվիրությամբ ձեզ ծառայելու համար:

— Օ՛, շնորհակալ ենք, շնորհակալ ենք. բայց դուք ազնիվ լինելուց առաջ շատ անքաղաքավար եք,— գեղեցիկ ժպտալով նկատեց գեղեցկուհիներից մեկը:

— Ե՞ս: Առաջին անգամն եմ այդ տեսակ նկատողության արժանանում. ի՞նչ հանցանք եմ գործել:

— Ա՛յ, ինչ հանցանք: Եթե մենք մինչև անգամ խնդրած լինեինք, որ ծանոթացրեք մեզ ձեր ընկերոջ հետ, դուք այդ չի պիտի ասեիք նրան, և այն, մեր ներկայությամբ: Դա մեր արժանապատվության համար վիրավորական է, հասկանո՞ւմ եք,— ասաց գեղեցկուհին և ընկերուհու հետ միասին ծիծաղեցին:

— Ներողություն, հազար ներողություն, երևի ինչ որ պիտի ասեի, հակառակն եմ ասել: Ես կամենում էի ասել, թե ընկերս շատ խնդրել է ինձ, որ ես ծանոթացնեմ իրեն ձեզ հետ և այդ պատճառով բերել եմ նրան ձեզ ներկայացնելու,— ուղղեց յուր սխալը Սիմոն Պետրովիչը:

— Ա՛յ, հիմա քաղաքավարի խոսեցիք, այժմ կխնդրենք, որ ձեր ընկերոջ հետ միասին նստեք մեր բազմոցի վրա,— խոսեց երկրորդ գեղեցկուհին և տեղ պատրաստեց երիտասարդների համար:

Վահանը, որ սկզբում անծանոթ բարեկամների ու բարեկամուհիների հանդիպելով շփոթվել և շառագունել էր, սկսեց հետզհետե հանդարտվել, բայց գանձապահի և գեղեցկուհիների խոսակցության չէր խառնվում:

Շուտով մյուս երիտասարդներն էլ հավաքվեցան զույգ գեղեցկուհիների գտնված անկյունը: Եկան այդտեղ և երեք ուրիշ աղջիկներ, որոնք մինչև այն զբաղեցնում էին բողոքող երիտասարդներին: Խոսակցությունը, կատակը և ծիծաղը ընդհանրացավ: Երիտասարդները գովություններ էին շռայլում երիտասարդուհիներին, դրվատում էին մեկի գեղեցիկ աչքերը, կամար հոնքերը, մյուսի բարակ շրթունքը և անուշ ժպիտը. երրորդի՝ հասակը, ճապուկ իրանը և հարուստ կուրծքը, չորրորդի ձայնը և գողտրիկ լեզուն, միով բանիվ երիտասարդուհիների մարմնի բոլոր մասերը գովության ու կատակի նյութ էին դարձել: Իսկ աղջիկները իրենց կողմից սրախոսություններ էին անում, ծաղրելով երիտասարդներից մեկի քիթը, մյուսի բերանը, երրորդի ճակատը, չորրորդի խելքը և այլն, և այլն:

Մինչդեռ այստեղ բարեկամներ ու բարեկամուհիներ աշխարհի ցավերը մոռացած զվարճախոսում էին, սենյակի մեջտեղը բացվում էր փառավոր սեղան, բազմազան ուտելիքներով և առատ ու գույնզգույն գինիներով: Սպասավորները սկզբնական ծառայությունը ավարտած՝ սպասում էին երիտասարդների հրամանին, որ ներս բերեն համադամները:

Բայց երիտասարդները այնպիսի քաղցր ինքնամոռացության մեջ էին, որ չէին մտածում ուտելու վրա: Այսուամենայնիվ, գեղեցկուհիները, որոնք ինքնամոռացության մեջ էլ չէին մոռանում թե՛ գրպանի և թե՛ ստամոքսի շահը, հիշեցրին երիտասարդներին իրենց պարտքը և նրանց հետ միասին վեր կենալով տեղերից, բոլորեցին Սիմոն Պետրովիչի փողով և նրա մտերիմների ճաշակով պատրաստած փառավոր սեղանը:

— Մա՛րիա Իվանովնա, դուք Սիմոն Պետրովիչի մոտ պիտի նստեք, իսկ դո՛ւք, մադմուազել Ռոզա, Վահան Իոսիֆիչի մոտ. այս իրիկվա կարգը այսպես է պահանջում,— կարգադրեր միջին հասակով, գրավիչ դեմքով և կաթոտ աչքերով մի երիտասարդ, որը, ըստ երևույթին, այդ ընկերության մշտական սեղանապետն էր:

Մարիա Իվանովնան և մադմուազել Ռոզան, որոնք բազմոցի վրա նստած զույգ գեղեցկուհիներն էին, հնազանդվեցան սեղանապետի հրամանին և նստեցին մինը պարոն գանձապահի և մյուսը՝ Սարյանի կողքին:

— Գեղեցկուհիներից մինն էլ թող ինձ մոտ նստի, որ եռանդ ներշնչե ինձ, իսկ մնացյալները՝ որտեղ կամենում են,— կարգադրեց կրկին սեղանապետը և կանանցից մինը, որ ամենից տարիքովը ու բարձրահասակն էր, և որը, ըստ երևույթին, շատ այդ տեսակ ընթրիքների փայլ ու շուք էր տվել, տեղավորվեց սեղանապետի կողքին:

Երբ մյուս հյուրերն էլ իրենց տեղերը բռնեցին, սեղանապետը պաշտոնական եղանակով հայտարարեց.

— Այժմ ամեն բան կարգին է. կարող ենք մեր գործը սկսել: Բայց ամենից առաջ մի պայման՝ ոչ ոք թող չհամարձակվի կիսատ թողնել յուր բաժակը, հակառակ դեպքում Սոֆիա Պավլովնան, որին այժմյանից օգնականուհի եմ կարգում, բաժակը կթափե կիսատ թողնողի գլխին:

Հյուրերը համաձայնվեցան. Սոֆիա Պավլովնան, որ բարձրահասակ ու տարիքով կին էր, մատով սպառնաց երիտասարդներին, իսկ վերջիններից մինը մինչև անգամ ծափահարեց, որ սեղանապետը այդպիսի գեղեցիկ առաջարկություն արավ:

— Սատանան տանե ձեզ. որտե՞ղ են սազանդարները,— գոռաց հանկարծ երիտասարդներից մինը, որ առանց սեղանապետի հրամանին սպասելու կոնծել էր կենաց ջուրը գինու բաժակով:

— Վա՛, իրա՛վ, որտե՞ղ են սազանդարները, Է՛յ, Իլա՛րիոն, այս ի՞նչ անկարգություն է,— բացականչեց սեղանապետը և ճաշարանի տերը յուր կարճ ու հաստ վզով և ուռած փորով բուսավ սենյակի դռներում:

— Ուկացրավոտ, բա՛տոնո...— ասաց թե չէ, հանկարծ երիտասարդներից մինը ընդհատեց նրան:

— Հայեվար խոսի, տո, մունդռեկ, էստի վրացի ո՞վ կա:

— Կուբաշխիք, աղա ջան. սազանդարնիրը մե քիչ ուշացան. իրիք ջեր փայտոն իմ ղրկի. հորես ուր որ է գուքան:

— Հինգ րոպե կսպասեմ, ա՛յ. հասկանո՞ւմ ես. եթե հինգ րոպեից ետ չեկան, գլուխդ կջարդեմ,— սպառնաց սեղանապետը:

— Պարունիս, աղա ջան, պարունիս,— ասաց Իլարիոնը ժպտալով և դուրս գնաց սենյակից:

Դեռ կես ժամ չէր անցել և խորտիկներից առաջին բաժինն էին վերջացրել, բայց շշերը դատարկվել էին արդեն:

— Գինի՛... կարմիր և սպիտակ...— գոռում էր սեղանապետը և սպասավորները մի կողմից փայլուն շշերն էին շարում, իսկ մյուս կողմից նոր կերակրի սկուտեղները պտտեցնում:

Սազանդարները, որոնք որոշյալ ժամին հասնելով Իլարիոնի գլուխը ջարդելուց ազատել էին, թնդացնում էին սենյակը իրենց երգերով ու կնդնդոցով: Հյուրերի տրամադրությունը հետզհետե փոխվում էր. զվարթ աչալրջությունը տեղի էր տալիս ծայրահեղ ուրախության, կատակներին և սրախոսություններին հաջորդում էին շաղակրատությունը, աղմուկն ու շփոթը: Խոսողներից շատերը միմյանց չէին լսում, հարցերը անպատասխան էին մնում. առաջարկությունները չէին կատարվում, երգողներին խանգարում էին, միով բանիվ բաբելոնյան խառնակությունը ընդհանրանում էր:

Սեղանապետը, որը փորձառու արբեցող էր և դեռ բավական ուժ ուներ ուրախությունը կանոնավորելու, երգող երիտասարդներին ու սազանդարներին լռեցնելով, առաջարկեց Մարիա Իվանովնային երգել մի բան:

Վերջինս, որ օպերային խմբերգչուհիներից էր, հարգեց սեղանապետի խնդիրը և մեղմ ու գողտրիկ եղանակով երգեց «Ռուսալկա»-ից՝ Նատաշայի տրտունջը.

Ах, прошло то время.
Время золотое,
Как меня любил ты
Сердцем и душой!
У тебя, бывало,

Мысли нет другой,
Нет других желаний—
Только быть со мной,
Нет другой отрады
Как во мне одной...

— Բրավո՛...

— Ուռռա՛...

— Բի՛ս...— գոռացին գրեթե միաբերան բոլոր հյուրերը և որոտաձայն ծափահարությամբ սենյակը թնդացրին:

Մադմուազել Ռոզան, որ նույնպես խմբերգչուհի էր, ընկերուհու հաջողությունը տեսնելով, ինքն էլ հետևեց նրան: առանց հյուրերի առաջարկության սպասելու: Նա երգեց «Ֆաուստ» օպերայից սիրելի հետևյալ մենախոսությունը.

Скажите о любаи ей, вы цвегочки.

Скажите, что она мне—

Сокровище одно.

Скажите, что томит любовь мне сердце.

Я вам, цветы

Мои. вверяю вздохи;

Про муки ей скажите.

Скажите, что ее ношу я в сердце

.

Մադմուազել Ռոզան, որ յուր ձայնի քնքշությամբ գերազանցում էր Մարիա Իվանովնային, և որը ինքնաբերաբար երգեց, ավելի շատ ծափահարություն ստացավ:

Հյուրերը երկու երգչուհիներին իրենց երախտագիտական զգացմունքները արտահայտելու համար հոտնկայս խմեցին նրանց թանկագին (ինչպես անվանեց սեղանապետը) կենացները: Իսկ այդ զգացմունքների արտահայտությունը ավելի հանդիսավոր անելու համար սազանդարները մի տուշ նվագեցին:

Այսուհետև երգելը ընդհանուր դարձավ կանանց մեջ: Երգում էր մինչև անգամ Սոֆիա Պավլովնան, որը այնքան էր խմել, որ գլուխը ուղիղ բռնել չէր կարողանում և շարունակ թեքվում էր դեպի սեղանապետը կամ հանգչեցնում էր նրա ուսի վրա: Մյուսները դեռ բավական զվարթ էին և երիտասարդների անպարկեշտ կատակներին կարողանում էին դիմադրել:

Բայց ինչ էր անում այդ ժամանակ մեր Վահան Սարյանը, ազգային ցավերի ողբերգուն: նրա դրությունը, արդարև, ծիծաղելի էր: Սկզբում նա շարունակ լուռ էր. նույնիսկ կանանց հարցերին հազիվ էր պատասխանում: Իրեն անհանգիստ էր զգում, իսկ երիտասարդների անպարկեշտ կատակների վրա նայում էր վայրենու աչքով:

Պարոն գանձապահը այդ նկատելով խնդրել էր մադմուազել Ռոզային գործ դնել բոլոր ուժը նրան ուրախացնելու համար: Նորատի աղջիկը շատ աշխատեց, բայց իզուր: Երիտասարդը չէր ուրախանում: Նա նմանում էր մի ճգնազգյաց կրոնավորի, որին զվարճասեր բարեկամները ստիպել էին Մեծ պասը լուծելու: Պարոն գանձապահը, իհարկե, հանգիստ չի պիտի թողներ նրան: Նա յուր տեղը տվավ Մարիա Իվանովնային, որպեսզի ձախ կողմից էլ սա զբաղեցնե նրան: Վերջինս ավելի ճարպիկ գտնվեցավ: Յուր սրախոսություններով ծաղրելով շարունակ երիտասարդի լռությունը՝ գրգռեց նրա ինքնասիրությունը և նրա հետ վիճաբանության մտավ: Վիճաբանության հաջորդեց հաշտությունը, իսկ հաշտության՝ ուրախ տրամադրությունը: Հենց որ Սիմոն Պետրովիչը տեսավ, թե յուր պաշտոնակիցը ոչ միայն ծիծաղում է, այլ և գեղանի դրացուհիների հետ կատակներ է անում (որովհետև Կախեթու գինին էլ մյուս կողմից էր ազդել խեղճի վրա), հրամայեց շամպայն բերել:

Սիմոն Պետրովիչի հրամանը լսելով՝ սեղանապետը գոռաց.

— Լուի Ռե՛յդեը. Կա՛ռտ Բլանշ, շո՛ւտ: Տղերք բաժակներդ մաքրեցեք: Չէ, չէ. բոկալներ բերեք,— հրամայեց նա ծառաներին:

Մի քանի վայրկյանից բոկալները շարվեցան և հինգ շիշ շամպայն, սպիտակ անձեռոցներով փաթաթած, դրվեցան սեղանի վրա:

— Վահան Իոսիֆիչի կենացը,— բացականչեց սեղանապետը,— լցրեք բոկալները օրինակելի առատությամբ:

Հյուրերը լցրին բոկալները շամպայնով և մտերմական անձնվիրությամբ խմեցին Վահան Սարյանի կենացը, որը այդ երեկո Վահան Իոսիֆիչ էր դառել: Սազանդարները իրենց կողմից դարձյալ տուշ նվագեցին:

— Պետք է ձեր կենացի վրա մի երգ երգեք,— հայտարարեց սեղանապետը:

— Երգել չգիտեմ,— ասաց Վահանը ժպտալով:

— Անկարելի է, պետք է երգեք:

— Այո՛, այո՛, պետք է երգեք,— գոչեցին այս ու այն կողմից երիտասարդները:

Վահանը ցանկություն չուներ երգելու, այդ պատճառով ընդդիմանում էր, թախանձում էր, բայց ոչ ոք չէր լսում նրան:

Այդ միջոցին մադմուազել Ռոզան, որ սկսել էր գաղտնի զգացումներով համակրել երիտասարդին, պատրաստակամություն հայտնեց յուր վրա առնել նրա պարտքը:

— Անկարելի է. սիրող տղամարդի երգ պիտի լսենք. Վահան Իոսիֆիչը պիտի երգե,— պնդեց սեղանապետը:

— Ես էլ նրա լեզվից կերգեմ. սիրող տղամարդու երգ կերգեմ,— ծիծաղելով հարեց Ռոզան:

— Եթե այդպես է, համաձայն ենք.— որոշեց սեղանապետը:

Գեղեցկուհին սկսեց երգել «Հրեուհի» օպերայից հետևյալ մրմունջը (ռոմանս):

О, как ужасно
В разлуке с милой
Тоской томиться,
К ней беспрестанно
Душой стремиться,
Не знать покоя!
Но вот сияет
Мне день блаженный,
Когда я снова
К груди горячей
Челом приникну

...

Վերջին տողերը երգելու ժամանակ գեղեցկուհին գլուխը թեքելով՝ հանգչեցրեց երիտասարդի ուսի վրա և խանդոտ աչքերը նրա աչքերին ուղղելով, կարծես սրտի բաղձանքը այդ սիրազեղուն հայացքով կամեցավ հաղորդել նրան:

Վահանը նայեց քնքշաբար գեղեցկուհու աչքերին, քաղցր ժպտաց, և ապա հանկարծ երեսը մյուս կողմը դարձրեց: Նրա մարմնով մի ցուրտ, բայց հազիվ զգալի դող անցավ և սառը քրտինքի ցողը ճակատը պատեց:

Ի՞նչ պատահեց նրան, ինչո՞ւ նա այլայլվեց: Ոչ ոք չիմացավ: Նույնիսկ գեղանի Ռոզան նրա դեմքի փոփոխությունը չնկատեց: Բայց ի՞նչ էր նրա այլայլության պատճառը:

Երիտասարդը գեղեցկուհու աչքերի մեջ տեսել էր յուր սիրած օրիորդի, մաքուր և անարատ Աշխենի աչքերի նմանությունը: Հաճության աղջիկը, հենց այն վայրկենին, որ խանդոտ աչքերով նայել էր նրա վրա, այդ նայվածքի հետ միասին զարթեցրել էր նրա սրտում սիրած աղջկա հիշատակը և զգայուն խղճի անողոք խայթը, որը և սկսեց տանջել երիտասարդին: Նա հազիվ էր զսպում իրեն: Նրան թվում էր, թե բացակա սիրելին տեսնում է այժմ իրեն հաճության աղջկերանց և անբարոյական երիտասարդների շրջանում բազմած, տեսնում է և խորը սրտից վշտանում, մտածելով, որ ամենից ազնիվ և ամենից ողջախոհ երիտասարդն անգամ անարժան է, ուրեմն, անարատ սիրո վստահության:

Այնպիսի մի շրջանում, ուր ոչ միայն ողջախոհության, այլև հասարակ չափավորության վրա գաղափար չունեին, Վահանի այլայլությունը, հարկավ, աննկատելի պիտի մնար: Ուստի երբ նա գեղեցկուհիներից հեռանալու մտքով բարձրացավ աթոռից առարկելով թե՝ գլխացավի պատճառով կամենում է բազմոցի վրա մի փոքր հանգստանալ, նրան արգելք չեղան:

Երիտասարդը քաշվելով սենյակի անկյունը, սկսեց անողոք կերպով կշտամբել իրեն այսպիսի հասարակության մեջ գտնվելուն համար: Կատարյալ զղջման հաջորդեց տխրությունը: Գեղեցիկ կանանց իրեն ուղղած խորհրդավոր հայացքները ոչ միայն չէին ցրում նրա թախիծը, այլև ավելացնում էին: Նա ճակատը բռնեց ձեռքերի մեջ և աչքերը ծածկելով, աշխատեց ոչինչ չտեսնել, եթե հնար ունենար, ականջներն էլ կխցեր, որպեսզի անպարկեշտ զրույցները չհասնեին նրանց:

Մեր այս ապականված ժամանակում, երբ ճշմարիտ առաքինությունը հնասիրության համանիշ է դարձել, երբ լուսնոտ ազատամտության շնորհիվ բարոյական սկզբունքները խախտվել և անուշադրության են մատնվել, երբ դպրոցական համբակների վարք ու բարքն անգամ շրջապատի ապականությունից չէ ապահովված, Սարյանի նման անհատների գոյությունն անբնական և անհասկանալի երևույթ է ներկայանում մեզ: Ինչպե՞ս կարող է արբունքի հասած երիտասարդն անտարբեր մնալ հեշտության հրապույրներին մանավանդ, երբ նրանց վայելելու համար ձեռք բերելու աշխատություն չէ պահանջվում, մտածում ենք մենք:

Բայց գավառական աշխարհի նահապետական հարկերի տակ որքա՜ն այդպիսի որդիներ են ապրում... Ափսո՜ս միայն, որ տասնյակ տարիներից ետ այդ հազվագյուտ գոհարների վերջին պաշարը ևս պիտի սպառի, որովհետև մեր անձնվեր գործողների շնորհիվ, այդ նահապետական հարկերը ևս սկսել են արդեն լուսավորվել քաղաքակրթության այն արտաքին փայլով, որ բուն քաղաքակրթությունից ոչինչ չունի յուր մեջ և որի միակ զորությունը տկար աչքերին կուրություն շնորհելն է...

Մինչդեռ Սարյանը յուր խղճի ու հիշողությունների հետ հաշտություն էր կայացնում, սեղանապետը շամպայնով խմելու համար թանկագին կենացներ էր առաջարկում: Այդ կենացները առաջարկում էին մինչև անգամ հյուրերը, և ով որ ավելի արժանավորն էր առաջարկում, ծափահարության հետ միասին շամպայնի մի ավելորդ բաժակ էր ստանում:

Վահանը, որ ինչպես ընդհանուր աղմուկով նույնպես և առաջարկված կենացներով այլևս չէր հետաքրքրվում, այսուամենայնիվ, չկարողացավ անուշադիր թողնել պարոն գանձապահի ճառի նմանող մի տարօրինակ առաջարկությունը:

— Խմենք, պարոններ,— ասաց նա,— այն երիտասարդների կենացը, որոնք իրենց պարոններին անձնվիրությամբ ծառայելով, ազատում են նրանց ավելորդ բեռներից, ծանրություններից...

— Ձեր միտքը չենք հասկանում, պարզ խոսեցեք,— հրամայեց սեղանապետը:

— Խմենք այն երիտասարդների կենացը,— կրկնեց գանձապահը,— որոնք տեսնելով, որ իրենց հարուստ պարոնները ստամոքսի տկարության պատճառով իրենց աշխատած փողը չեն կարողանում ուտել, իրենք են այդ փողը մաքրազարդում և ձեզ նման լավ տղերանց ու այս տեսակ հրեշտակներին (այդ միջոցին նա քնքշությամբ բռնեց Ռոզայի շառագունած թուշը) ուրախություն ու զվարճություն են պատճառում...

— Ուրեմն, ամենից առաջ ձեր թանկագին. կենաց ուռռա՛...— բացականչեց սեղանապետը և շամպայնի բաժակը չխկացրեց գանձապահի բաժակի հետ:

Բոլոր հյուրերը հետևեցին սեղանապետի օրինակին, օրիորդները սկսան երգել, իսկ սազանդարները տուշը վերջացնելով՝ լեզգինկա ածեցին:

Ամենից առաջ սեղանապետը սկսեց պարել, հետո Սոֆիա Պավլովնան, որը սակայն երկու պտույտ միայն արավ և ապա օրորվելով երիտասարդների գիրկն ընկավ: Նրան հետևեցին մյուս աղջիկներն ու հյուրերը: Պարոն գանձապահը նույնպես կամեցավ վեր կենալ, բայց ընկավ Մարիա Իվանովնայի վրա:

Սարյանը տեսնելով, որ երիտասարդը կորցրել է իրեն, մոտեցավ նրան և թևն առնելով հեռացրեց դեպի սենյակի անկյունը և սկսեց համոզել, որ գնան տուն:

Բայց գանձապահը, որ սիրով տվավ նրան յուր թևը, կարծելով թե կամենում է յուր հետ պարել, երբ տուն գնալու առաջարկություն լսեց, բարկացած գոռաց.

— Կորի՛ր, հիմար, շամպայնն ու այս սիրուն աղջիկները թողած ո՞ւր պիտի գնամ. ես չեմ գալիս, գնա՛ Թորոսյանին էլ ասա, որ գա այստեղ, ասա՛, հիմար, սրանից լավ տեղ ո՞ւր կգտնես... տա՛շ-տաշի, ծափ տվեք, տղերք, պար եմ գալիս...

Այս ասելով գանձապահը խլվեցավ Վահանի ձեռքից և օրորվելով սկսեց պարել: Բայց մի երկու պտույտներ անելուց ետ գլորվեցավ հատակի վրա:

Սեղանապետը իսկույն առաջ վազեց և գրկելով երիտասարդին հեռացրեց նրան պարողների խմբից և բազկաթոռներից մեկի մեջ նստեցրեց: Վահանը նույնպես մոտեցավ նրան և սկսեց քաղցր խոսքերով ամոքել պաշտոնակցի սիրտը, աշխատելով, միևնույն ժամանակ, համոզել նրան տուն վերադառնալու: Բայց իզուր: Գանձապահը բացեիբաց մերժում էր:

— Է՛. ինչեր ես խոսում: Դեռ քեֆեր ունինք անելու, գործեր ունինք ավարտելու,— ասաց նա ծիծաղելով և սազանդարներից թառ ածողին կանչելով, հրամայեց նրան մի բաժակ շամպայն բերել:

Սազանդարը իսկույն կատարեց նրա հրամանը: Գանձապահը հանելով ծոցից մի կարմիր տասնանոց, թրջեց շամպայնով, կպցրեց սազանդարի ճակատին և շամպայնը նրան խմեցնելով՝ հրամայեց.

— Գնա մի այնպիսի մահուռ ածա՛, որ ես ուրախանամ, իսկ այս մղդսին (ցույց տալով Վահանի վրա) լաց լինի:

Սազանդարը խորը գլուխ տալով հեռացավ և սկսեց գողտրիկ մահուռը նվագել:

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, գժվել ե՞ս,— շշնջաց գանձապահի ականջին Վահանը: Վերջինս պատասխան չտվավ, այլ դառնալով դեպի դուռը կանչեց այնտեղ կանգնած սպասավորներին:

Նրանցից երեքը միասին եկան:

— Ասացեք, ձեզանից ո՞րն է գնացել Ռոզայի և Մաշայի ետևից:

— Ես,— պատասխանեց նախասենյակում դիմավորող ծառան:

Գանձապահը հանեց ծոցից մի կապույտ հնգանոց և տալով նրան ասաց.

— Գնա ինձ ու այս պարոնի համար քնելու տեղ պատրաստիր:

Ծառան հասկացավ հրամանի միտքը և խորը գլուխ տալով ու ժպտալով հեռացավ:

— Ա՛յ տղա, ինչո՞ւ համար ես քեզ քանդում, ինչո՞ւ համար ես այդ փողերը ցրում,— նախատեց Սիմոնին Վահանը:

— Վնաս չունի՛, Թորոսյանը լավ մարդ է. նրա գանձարանը ապրի՛...— երգելու եղանակով պատասխանեց գանձապահը:

Այդ միջոցին ճաշարանատեր Իլարիոնը մոտեցավ երիտասարդին և խորը գլուխ տալով մի ինչոր ծալած թուղթ հանձնեց նրան:

Դա ընթրիքի հաշիվն էր:

Գանձապահը բացավ, նայեց և ճմրթելով՝ բաճկոնի գրպանը խրեց: Ապա հանելով ծոցից մի ծիածանագույն հարյուրանոց, շարժեց նրան օդի մեջ և, խփելով Իլարիոնի ճակատին, ասաց.

— Առ, հիմար, դու միշտ թանկ ես նստեցնում. մնացորդը թե շատ չէ, ծառաներին բաշխիր:

Իլարիոնը խորը գլուխ տվավ, վրացերեն մի համառոտ ուղերձ ասաց և ժպտալով հեռացավ:

Վահանը այլևս ավելորդ համարեց խորհուրդներ շշնջալ պաշտոնակցի ականջին, այլ կամացուկ հեռանալով՝ թե՛ հյուրերից և թե գանձապահից ծածուկ փախավ տուն:

Ե

ՄԻ ՈՒՐԻՇ ԴԱՍԱԿԱՐԳ

Հետևյալ առավոտ Վահանը սաստիկ հուսահատության մեջ էր: Նրան թվում էր, թե մեծ հանցանք կամ ոճիր է գործել՝ մասնակցելով անբարոյական երիտասարդների ընթրիքին: Նա իրեն նախատում ու անիծում էր՝ չկարողանալով զգայուն խիղճը

հանգստացնել: Որքան էլ այնուհետև հեռու պահեր իրեն այս տեսակ շրջաններից, այնուամենայնիվ, այս միակ դեպքը բավական էր արդեն, որ նա այլևս չկարողանար ազատ ճակատով պարծենալ թե՝ ինքը երբեք չէ մտել անպատիվ շրջաններ, կամ չէ ընկերացել անբարոյական մարդկանց: Այս միտքը տանջում էր ազնվասիրտ երիտասարդին, մանավանդ, երբ հիշում էր յուր անմեղ ու անարատ Աշխենին, որին սիրում էր այնքան ջերմությամբ և որին պարտավոր էր նվիրվել անբիծ ու առաքինի կյանքով: Նա զգում էր, որ այլևս արժանի չէ անմեղ ժողովրդի սիրույն, որովհետև ինքը դավաճանել է արդեն այդ սերը՝ խանդավառ հայացք ձգելով հաճության մի աղջկա աչքերին... Իսկ Սիրո Վարդապետը ինքն էր որոշել թե՝ այդ հայացքը արդեն բավական է, որ մարդ շնացող համարվի...

Բացի ներքին աշխարհի հետ ունեցած կռիվը: Վահանը արտաքին աշխարհին էլ հաշիվ ուներ տալու: Նա մտածում էր, որ այս դեպքը գաղտնի չի մնալ Թորոսյանից, որ այնտեղ գտնվող երիտասարդներից մեկը անշուշտ կհաղորդե նրան գիշերային զվարճության մանրամասնությունները և այդ նորությունը բավական կշինի արդեն, որ Թորոսյանը նայե յուր վրա իբրև մի փչացած մարդու վրա, կամ առաջարկե նրան հեռանալ յուր գործից:

Իսկ թե ոչ ոք այդ մասին չխոսի նրա հետ, այսուամենայնիվ, ինքը, կրկնակի հանցանք գործած չլինելու համար պարտավոր է հայտնել Թորոսյանին եղելությունը ե հասկացնել նրան, թե այն մարդը, որին դու միամտաբար վստահացել ես քո գանձը և պատիվը և որին ամենից ազնիվ և առաքինի մարդն ես համարում, ոչ այլ ինչ է, եթե ոչ անբարոյական, հոգով և մարմնով ապականված և շռայլող ու վատնող մի սրիկա:

Սակայն այսպես վարվելով էլ նա կդառնար մատնիչ, կամ ընկերոջ դավաճան: Ի՞նչ անել ուրեմն:

Նրան մնում էր դեռ լռել և համբերել:

Երթ առաջին անգամ երիտասարդը գրասենյակի շեմքը կսիրեք՝ նրան թվաց թե բոլորը այդ րոպեին կարդացին յուր դեմքի վրա գիշերային զվարճության պատմությունը: Առանց գլուխը վեր բռնել կարողանալու, նա ներս մտավ և յուր տեղը նստեց: Գանձապահին գրասենյակում չտեսնելով, վախեցավ, թե չլինի մի դժբախտություն է պատահել նրա հետ, որը հայտնվելուց, հարկավ, յուր գաղտնիքն էլ պիտի բացվեր: Բայց հենց այդ միջոցին ներս մտավ նրա ծառան և հանձնեց Թորոսյանին մի տոմսակ, որի մեջ պարոն գանձապահը հայտնում էր թե՝ հանկարծ հիվանդանալու պատճառով չի պիտի կարողանա ծառայության գալ, ուստի ներողություն էր խնդրում պարոն Թորոսյանից, որ այդ օրը ակամա պիտի բացակայե գործից:

— Խեղճ տղա,— ասաց Թորոսյանը տոմսակը կարդալով,— երևի գրասենյակում երկար նստելը վնասում է նրա առողջությանը: Պետք է աշխատենք գործն այնպես հարմարեցնել, որ նա մի կամ երկու ժամով առաջ թողնե յուր պարապմունքը: Չե՞նք կարող այդպես անել,— հարցրեց նա հաշվապահին:

— Ինչո՞ւ չէ. եթե ինքներդ հանձն կառնեք ամեն օր դրամարկղը ստուգել, կարելի է. այդ աշխատությունը պարոն Թաղարյանից առնվազն երկու ժամ ժամանակ է խլում,— պատասխանեց հաշվապահը:

— Այդ մի փոքր դժվար է. ամեն օր միևնույն Ժամին ես գրասենյակում գտնվել չեմ կարող, — նկատեց Թորոսյանը, — բայց և այնպես,— ավելացրեց նա,— ես կմտածեմ այդ մասին. կարելի է այնպես կարգադրել, որ նա առավոտները երկու ժամով ուշ գա ծառայության:

Թորոսյանի այս աստիճան հոգածությամբ Թաղարյանի մասին մտածելը տեսնելով, Վահանը մի որոպե որոշեց հայտնել նրան գանձապահի հիվանդության պատճառը, որովհետև նրա հոգին վրդովվում էր, տեսնելով թե այդ սրիկան որպիսի՞ անխղճությամբ է խաբում այդ պատվավոր և հավատացող մարդուն: Սակայն մտածելով, որ ավելի լավ է մի հոգի փրկել քան կորցնել, որոշեց լռել առժամանակ և գործ դնել յուր բոլոր ուժը և շնորհքը երիտասարդ գանձապահին կորստյան ճանապարհից հեռացնելու: Այս որոշումը հանգստացրեց Վահանին և, մինչև անգամ, սեփական հանցանքի ծանրությունն էլ թեթևացրեց յուր աչքում: Որովհետև, նա մտածում էր, որ եթե ինքը այդ երեկո ընկերացած չլիներ Թաղարյանին, չէր կարող երբեք նա գաղտնիքներին ծանոթանալ և, հետևապես, առիթ էլ չէր ունենալ մոլության ճանապարհից նրան հեռացնելու մասին մտածել:

Հետևյալ օրը, երբ Վահանը գանձապահին հանդիպեց, վերջինս այնպիսի անհոգ ու ուրախ դեմքով ողջունեց նրան, որ երիտասարդը մի որոպե շվարած մնաց: Նա կարծում էր թե գանձապահը կհիշե յուր արած հիմարությունները, անհաշիվ փողեր վատնելը, ամբողջ գիշերը անպատիվ հասարակության հետ անցնելը և այլն, և կամաչե իրենից: Բայց գանձապահը ոչ միայն չամաչեց, այլև առաջին խոսքը, որ ուղղեց իրեն, այն էր թե՝ հիմար, ինչո՞ւ խայտառակեցիր ինձ:

— Դու դեռ չե՞ս զգաստացել,— հարցրեց նրան Սարյանը:

— Ես միշտ էլ զգաստ եմ եղել,— պատասխանեց գանձապահը ծիծաղելով,— բայց դու, ինչպես երևում է, միշտ էլ հիմար կմնաս. ինչո՞ւ այն երեկո ծածուկ փախար մեզանից:

— Կնշանակե դեռ չե՞ս զղջացել գործածներիդ համար:

— Զղջացե՞լ, ինչո՞ւ պիտի զղջամ, դու զղջացի՞ր, հիմար, որ մադմուազել Ռոզի արհամարհանքին արժանացար: Երթ դու ծածուկ հեռացար նրանից, գիտե՞ս ինչ ասաց ինձ:

— Չեմ հետաքրքրվում գիտենալ:

— Չէ, չէ լսիր. հետաքրքիր է. ասում է քո այս բարեկամը, անշուշտ իդիոտ է. կերպարանքին նայողը կարծում է թե՝ հոգի և սիրտ ունի, բայց ինքն, իսկապես, անզգա արձան է, լավ կլինի, որ նրան զմռսեք և մուզեյում դնեք:

— Շատ չեմ մտածում, թե մի փողոցի աղջիկ ինչ կարծիք ունի իմ մասին,— նկատեց Վահանը արհամարհանքով:

—Բայց պետք է մտածես. Ռոզան ուշադրության արժանի աղջիկ է:

Ես մտածում եմ ավելի ուշադրության արժանի անձի վրա:

— Ո՞րը նրանից ավելի գեղեցիկ է:

— Ո՛չ. կնոջ մասին չէ խոսքս:

— Հապա ո՞ւմ մասին:

— Քո:

— Ի՞մ. խեր լինի ի՞նչ կա:

— Դու կորստյան անդունդի վրա ես կանգնած, գիտե՞ս, թե՞ ոչ:

— Ի՞նչ է պատահել,— զարմացած հարցրեց գանձապահը:

— Ի՞նչ պիտի պատահեր: Ա՛յն դրությունը, որի մեջ տեսա քեզ անցյալ երեկո, դեպի կատարյալ կորուստ է տանում քեզ: Պետք է աշխատես ետ դառնալ այդ ճանապարհից:
— Հա՛, հա՛, հա՛, խելքդ սիրեմ, ա՛յ Վահան, ի՞նչ միամիտն ես. քեֆ անելը մե՞ղք է:

— Մեղք չէ, եթե մարդավարի անես, բայց այն քեֆը, որ դու էիր անում, ոչ թե մեղք, այլ չարագործություն է:

— Իստակ մղդսի ես ա՛յ. ինչո՞ւ Մուղնու եկեղեցում պաշտոն չես պտրտում. հաշվապահությունը քո ի՞նչ գործն է:

— Կատակը մի՛ կողմ դիր. ես կամենում եմ փրկել քեզ ապագա վտանգներից: Թե ինձ չլսես, իմացիր, որ կթշվառանաս:

— Չեմ լսիլ. ես միայն Մարիա Իվանովնային կլսեմ մեկ էլ մադմուազել...

— Եթե այսօրվանից չես երդվիլ, որ վերջին անգամ ես այդ կանանց անունը տալիս, թե չես խոստանալ, որ այսուհետև անառակ կյանք չես վարիլ, այսօր ևեթ կհայտնեմ պարոն Թորոսյանին այն բոլորը, ինչ որ այն երեկո այգու ճաշարանում տեսա և լսեցի,— սպառնաց Վահանը:

— Օ՛, հո՛. ուրեմն դուք մատնություն անել էլ գիտեք. երևի «Փնջիկ»-ի խմբագրատանն եք սովորել այդ արհեստը,— նկատեց գանձապահը հոգնակի խոսելով և դեմքը խոժոռելով:

— Մի՛ վիրավորիր ինձ, ես քեզ չարություն անելու մտքով չասացի այս խոսքերը:

— Գիտեմ, ոչ էլ ձեզ բարիք անելու մտքով ասացիք...որովհետև Թորոսյանը ինձ արտաքսելուց ետ դրամարկղի բանալին ձեզ չպիտի հանձնի:

Վահանը հասկացավ պաշտոնակցի հեգնության նշանակությունը և խորը վիրավորվեց, զղջալով միևնույն ժամանակ, որ իզուր տեղը խառնվեցավ օտարի հաշիվներում:

— Իբրև, բարեկամ, կամեցա մի բարի խորհուրդ տալ ձեզ,— ասաց նա գանձապահին վշտացած սրտով,— ինձ համար, արդարև, ցավալի է տեսնել ձեզ նման երիտասարդին ընկած անառակության և անպատվության ճանապարհի վրա: Ցավալի է նույնպես տեսնել Թորոսյանին այդ աստիճան քեզանից խաբված: Իմ աչքում դուք մի չարագործ հանցավոր եք. անկեղծությամբ եմ ասում, սակայն ես հույս ունեի, թե կարող եմ օգնել ձեզ, որ դադարիք այդպիսին լինելուց: Այժմ տեսնում եմ, որ չեք կամենում իմ խորհուրդներից օգտվել: Ես էլ, իհարկե, խորհուրդներ չեմ տալ, ոչ էլ Թորոսյանի հետ ձեր մասին կխոսեմ:

Բայց մի անգամ արդեն ձեր տգեղ գաղտնիքներին ծանոթ լինելով, չեմ կարող Թորոսյանի մոտ ծառայել և նրա կարողության և պատվին սպառնացող վտանգը նրանից ծածկել: Այդ պատճառով, որքան էլ ինձ համար ծանր լինի, այսուամենայնիվ, ես ստիպված կլինեմ թողնել պաշտոնս, որպեսզի ոչ ընկերոջ մատնիչ լինեմ և ոչ տիրոջ դավաճան:

Գանձապահը, որ, ըստ երևույթին, գորովվեցավ Վահանի վերջին խոսքերով, բռնեց նրա ձեռքը, մտերմաբար սեղմեց և ասաց.

— Շնորհակալ եմ քո իմ վերաբերմամբ ունեցած հոգածության համար: Դու մի ազնիվ երիտասարդ ես. թույլ չեմ տալ, որ իմ պատճառով պաշտոնդ թողնես: Որովհետև բարեկամական խորհուրդ ես տալիս ինձ, քո խորհուրդը կընդունեմ և կաշխատեմ այսուհետև հեռու մնալ իմ հին բարեկամներից:

Վահանը սևեռեց յուր հայացքը գանձապահի աչքերին, կամենալով կարծես կարդալ նրանց մեջ նրա խոսքերի ճշմարտությունը: Բայց այդ աչքերն այն տեսակից էին, որ լավ հոգեբանին անգամ կմոլորեցնեին: Նրանց մեջ այդ րոպեին փայլում էր և՛ բարություն, և՛ անկեղծություն, և՛ զղջման արտասուք:

— Չգիտեմ թե որպիսի՞ վստահության են արժանի քո խոսքերը,— ասաց Վահանը երիտասարդին:— Բայց ես հավատում եմ՝ նրանք անկեղծ են. այդ պատճառով առայժմ միայն շնորհակալություն կարող եմ անել քեզ իմ բարեկամական խորհուրդը չմերժելու համար:

— Անկեղծ, կատարյալ անկեղծ են իմ խոսքերը, և դու դրանց ապացույցը կտեսնես,— ասաց գանձապահը լրջությամբ:

Եվ այն օրից ետ նա այլևս քեֆերի կամ բարեկամուհիների մասին չխոսեց Վահանի հետ: Ընդհակառակը, նա սկսեց հետաքրքրվել Վահանի սիրած ազգային նորություններով և հավատացնում էր, որ այժմ կարծես թե նոր մարդ է դարձել: Մի քանի օրից ետ գանձապահը ծանոթացրեց Վահանին դրացի գրասենյակում ծառայող Տիրան Նադիրյանցի հետ:

— Սա էլ քեզ պես ազգասեր մարդ է, միմյանց շատ կսիրեք,— ասաց գանձապահը Վահանին և ապա սրա առավելությունները դրվատեց Նադիրյանցի առաջ:

Վերջինը մի պատվական երիտասարդ էր, որ նույնպես հաշվապահի պաշտոն էր վարում: Ծանոթանալով Վահանի անձի և գաղափարների հետ, շատ սիրեց նրան և շնորհակալություն արավ Թաղարյանին, որ իրեն այդպիսի բարեկամ հանդիպեցրեց:

Առևտրական աշխարհում կա ծառայողների մի որոշ դասակարգ, որը, առհասարակ, նույն պաշտոններն է վարում, ինչ որ մյուս ընդհանուր ծառայողները, բայց զանազանվում է նրանցից նրանով, որ բացի յուր ծառայությունը, հետաքրքրվում է նաև հասարակական խնդիրներով՝ լրագրությամբ, գրականությամբ և եռանդուն մասնակցություն է ունենում ազգային ընկերական կամ եկեղեցական գործերում:

Այդ դասակարգի երիտասարդները, որոնց առհասարակ քեֆերի սիրահար ընկերները ազգասեր ծաղրական անունով են կանչում, առևտրական աշխարհի ամենաընտիր հայերն են:

Դժբախտաբար նրանք ամեն դեպքում զրկանքների են Ենթարկված թե՛ տերերի և թե՛ ընկերների կողմից: Պատճառն այն է, որ նրանք սիրում են ա՛յն, ինչ որ իրենց տերերը կամ ընկերները ատում են և ընդհակառակն, ատում ու արհամարհում են ա՛յն, ինչ որ սիրում են վերջինները: Դրանք մի տեսակ օտար սերմեր են, որոնց բախտի հողմը ցրել է առևտրական հողի վրա: Այդտեղ նրանք բուսնում, մեծանում են, բայց տված պտուղները առևտրական աշխարհի համար օտար լինելով, այդ աշխարհի մարդկանցից անարգվում են:

Նույնիսկ իրենք, այդ երիտասարդները, առևտրական հողի վրա աճել և արմատ բռնել չեն կարողանում, որովհետև ա՛յն ինչ որ առևտրականի համար միս և արյուն է դարձած, նրանց համար անհասկանալի է: Հասարակական խնդիրներում կամ ազգայինների բախտով հետաքրքրվելու կամ դրանց համար գործել կամենալու բուռն ցանկությունն արգելում է նրանց շատ անգամ ստանձնած պաշտոնը անթերի

կատարելու: Նրանք տերերից և ընկերներից ծածուկ՝ գիրք կամ լրագիր կարդալու, հոդվածներ շարադրելու, ազգային կարևոր գործերի համար այս կամ այն բարեկամին նամակներ գրելու վրա գործ են դնում այն ժամանակը, որը նշանակված է պաշտոնավարության համար: Այդ շատ անգամ առիթ է տալիս, որ գործի տերը ծանր նկատողություններ անե ազգասեր ծառայողին: Մի անգամ արդեն այդ տեսակ նկատողություններ անելուն սովորելով, գործի տերը նախատում է ծառայողին և այն ժամանակ, երբ խեղճը յուր բոլոր գործը ավարտած պարապ նստած է և ժամանակն անօգուտ չանցնելու համար գիրք կամ լրագիր է կարդում:

Առևտրականներից շատերին ավելի սիրելի է տեսնել յուր գործակատարը պարապ նստած, կամ անգործ ընկերների հետ շաղակրատելիս, քան տեսնել նրա առաջ մի բաց լրագիր, որի տեսքն անգամ վրդովում է յուր հոգին: Դրա պատճառն այն է, որ ներքին բնազդումը և ոչ թե փորձառու խելքն ասում է նրանց թե՝ այն մարդը, որ պաշտոնից դուրս գործելով էլ է հետաքրքրվում, չի կարող բոլորանվեր կերպով ծառայել ձեր գործին:

իսկ առևտրականի համար հարկավոր է, որ երեսուն ռուբլի ռոճիկ ստանող երիտասարդը մարմնական աշխատության հետ միասին՝ սիրտն ու հոգին դնե յուր գործի մեջ:

Փչացած, անհավատարիմ և Վատնող գործակատարները՝ օգտվելով գործատերերի այդ տրամադրությունից և արտաքուստ նրանց սիրած շավղով ընթանալով, ոչ միայն սիրելի են դառնում նրանց, այլև շատ անգամ գրավում են գործատիրոջ վստահությունը ա՛յն աստիճան, որ մյուս ընկերների բախտի կառավարն էլ իրենք են հանդիսանում: Ահա՛ այստեղից սկսվում են ազգասեր ծառայողների և վատնող գործակատարների ներքին հակառակությունները, որոնք շատ անգամ վերջանում են խեղճ ազգասերների պարտությամբ:

Տիրան Նադիրյանը այս դասակարգի արժանավոր ներկայացուցիչներից մինն էր: Յուր ուսումը ավարտել էր ռեալական դպրոցում, իսկ հայերեն սովորել էր յուր ծառայության միջոցին՝ շարունակ հայերեն գրքեր կամ լրագիրներ կարդալով, որի համար և շատ նախատինքներ ու զրկանքներ էր կրել: Բայց հաստատուն բնավորության տեր և միևնույն ժամանակ ընտիր հաշվապահ լինելով, նա վերջիվերջո իրավունք էր ձեռք բերել յուր գաղափարները ազատ պաշտելու: Նրա պարոնը «ձվածեղի համար թավի կոթը կպաչեն» ասելով հաշտվել էր նրա ազգասիրության հետ՝ հմուտ հաշվապահից չզրկվելու համար:

Նադիրյանին ճանաչում էին բոլոր առևտրականները և հարգում էին արտաքուստ: Շատերը մինչև անգամ վախենում էին նրանից, որովհետև մի-մի անգամ իրենց բարի գործերի մասին լրագիրներին լուր էր հաղորդում և դրանով սրտնեղություն պատճառում իրենց: Պարոն Թորոսյանը նույնպես անուշադիր չէր դեպի այդ երիտասարդը: Պատահած ժամանակ ոչ միայն հարգանքով ողջունում էր նրան, այլև սիրում էր երկար Ժամերով խոսել նրա հետ և վիճել զանազան խնդիրների մասին: Բայց և այնպես նա չէր ցանկանում, որ յուր ծառայողներից մեկը խոսե կամ մտերմանա Նադիրյանի հետ, որովհետև, հավատացած էր, որ անպատճառ մի վատ բան կսովորեցնե նրան:

Սարյանն այդ բանը չգիտեր, ուստի ազատ հարաբերություն սկսեց նրա հետ: Նադիրյանի մեջ նա գտավ յուր ցանկացած բարեկամին, ազնիվ մարդուն և անկեղծ հայրենասերին, այդ պատճառով էլ սրտանց սիրեց նրան: Երկու երիտասարդները հաճախ իրար հետ տեսակցում և խոսում էին երկուսին միատեսակ հետաքրքրող նորությունների և միատեսակ վշտացնող ցավերի վրա: Շուտով նրանց

բարեկամությունը փոխվեցավ մտերմության, որի հետևանքը եղավ այն, որ Սարյանը փոխադրվեցավ Նադիրյանի բնակարանը՝ նրա ընտանիքում ապրելու համար:

Երբ պարոն Թորոսյանը իմացավ, որ Վահանը Նադիրյանի հետ բարեկամանալու վտանգին է ենթարկվել (նա, առհասարակ, առևտրական մարդու բարեկամությունը գրական աշխարհին մոտ եղող անձանց հետ վտանգավոր բան էր համարում), շատ վշտացավ և յուր ծառայողների ներկայությամբ հայտնեց նրան յուր դժգոհությունը, պահանջելով միևնույն ժամանակ, որ Վահանը հեռանա այդ պարոնից:

— Ես այդ երիտասարդի մեջ ոչ մի վատ կողմ չեմ նկատել, ընդհակառակը, նա մեր շրջանի տղերանց մեջ ամենից խելոքն ու ազնիվն է,— նկատեց Վահանը համեստությամբ ժպտալով:

— Խելքի և ազնվության մասին թող որ ինձ նման փորձառու մարդը դատե,— խոսեց Թորոսյանը լրջությամբ,— դու իմ ազգականն ես և ստորադրյալը, քեզ համար ես չար բան չեմ ցանկանալ, հետևապես, ինչ խորհուրդ որ տալիս եմ քեզ, պետք է ընդունես և հետևես նրան:

— Բայց, թույլ տվեք, որ ես էլ սեփական կամք ու ցանկություն ունենամ. ես էլ խելքի հասած մարդ եմ և իրավունք ունիմ բարեկամ ընտրելու և թշնամի ճանաչելու: Նադիրյանի հետ բարեկամացել եմ, որովհետև նրան արժանավոր երիտասարդ եմ ճանաչել: Այժմ ի՞նչ հարգելի պատճառ ունիմ, որից ստիպված նրանից հեռանամ:

— Հարգելի պատճառն այն է, որ այդ բանը ես եմ պահանջում:

— Դո՞ւք եք պահանջում..— հարցրեց Վահանը զարմացած:

— Այո՛, պահանջում եմ, և դուք պարտավոր եք այդ պահանջը կատարել: Վահանը մեծ բացավ աչքերը և ապշած նայում էր Թորոսյանի վրա, չկարողանալով հասկանար թե ինչու՞ այդ մարդը, որ իրեն խելոք ու փորձառու է անվանում, այդ տեսակ անմիտ և անիրավ պահանջ է անում իրենից: Նա, արդարև, շատ տարօրինակ պատմություններ է լսել հայ վաճառականների կյանքից. շատ հետաքրքիր բաներ էր իմացել նրանց մտածելու և գործելու եղանակների մասին, բայց այն, ինչ որ այժմ էր լսում, գերազանցում էր բոլորին:

— Ձեր պահանջը, կարծեմ, իրավացի չէ. Նադիրյանի հետ բարեկամ եմ թե թշնամի այդ իմ պաշտոնին, հետևապես, և ձեզ չէ վերաբերում,— նկատեց Վահանը համեստությամբ: — Շատ մոռացկոտ ես, ա՛յ, չէ որ քեզ ա՛յն պայմանով ընդունեցի պաշտոնի մեջ, որ հեռու մնաս գրական շրջաններին մոտ եղող անձերից,— աչքերը երիտասարդի վրա սևեռելով հարցրեց Թորոսյանը:

Վահանը նոր հիշեց յուր խոստումը և պարտաճանաչ մարդու ամոթխածությամբ գլուխը խոնարհեց:

— Այժմ, կարծեմ, իրավացի է իմ պահանջը, այնպես չէ՞,— հարցրեց Թորոսյանը կրկին:

— Իրավացի է, բայց ի՞նչ վնաս կարող է հասնել ձեզ իմ այս բարեկամությունից:

— Այդ ուրիշ հարց է. և ես դրա մասին կարևոր չեմ համարում խոսել: Առևտրական աշխարհում փիլիսոփայություններ չեն անում, այլ ասում են երկու անգամ երկու կլինի չորս: Գիտե՞ս ինչ կնշանակե այդ:

— Ոչ:

— Շատ վատ է, որ՛ չգիտես: Այդ կնշանակե թե՝ պա՞րտք ունիս՝ պիտի վճարես, պահանջ ունիս պիտի ստանաս, պայման ես դրել՝ պիտի կատարես:

— Հասկանում եմ:

— Շատ լավ. ուրեմն քո դրած պայմանը պիտի կատարես. այդ տեսակ մարդկանցից պիտի հեռանաս:

— Բայց ես, ընդհակառակը, փոխվել եմ Նադիրյանի բնակարանը, նրա հետ միասին եմ ապրում:

— Ինչպե՞ս. դու Նադիրյանի հե՛տ ես ապրում, այդ անպատիվ, այդ անբարոյական երիտասարդի հետ...— բացականչեց հանկարծ Թորոսյանը և տեղից վեր կենալով մի կողմ ձգեց աթոռը և մոտենալով գանձապահին բարկացած ձայնով հարցրեց.

— Ի՞նչ ես շինում դու այստեղ, չէի՞ր կարող հասկացնել սրան, որ Նադիրյանի նման փչացած մարդկանց հետ բարեկամացող մարդուն ես չեմ կարող իմ գործի մեջ պահել:

— Ներեցեք. ես չգիտեի թե Վահանը բարեկամացել է նրա հետ,— հայտարարեց գանձապահը:

— Տեսնո՞ւմ եք. դուք մինչև անգամ խորհուրդ չեք հարցրել սրանից,— դարձավ Թորոսյանը Վահանին.— իսկ ես ձեզ առաջուց ասել էի, որ մշտական ընկեր ու բարեկամ ընտրեք իմ գանձապահին, այդ կնշանակեր թե ուրիշ մարդու հետ ծանոթանալու համար էլ պետք է սրանից խորհուրդ հարցնեիք:

— Ընդհակառակը, դա ինձանից հեռու է փախչում. երևի իմ բարեկամությունը դուր չի գալիս իրեն,— ասաց գանձապահը ցինիկական լրջությամբ և ապա երեսը մյուս կողմը շրջելով ակնարկեց Վահանին և քթի տակ ծիծաղեց:

— Տե՛ս, եթե իմ գանձապահը այդպիսի մի ցանցառություն արած լիներ, կարտաքսեի նրան, չնայելով որ շատ գոհ եմ նրա ծառայությունից,— շարունակեց Թորոսյանը,— բայց դու իմ ազգականն ես և ես չեմ կամենում առաջին սխալմունքիդ համար պատժել քեզ: Հեռացի՛ր Նադիրյանից և մոռացիր նրան. հակառակ դեպքում ստիպված կլինեմ մեր պայմանի համաձայն վարվել քեզ հետ:

Սարյանը գրեթե ապշած նայում էր մերթ գանձապահի և մերթ Թորոսյանի վրա, չկարողանալով խելամտել, թե ի՞նչ կատակերգություն է այս, որ կատարվում է յուր առաջ: Չէ՞ որ գանձապահը ինքն էր ծանոթացրել իրեն Նադիրյանի հետ: Ինչո՞ւ համար էր ծածկում այդ բանը Թորոսյանից: Եվ եթե նա առաջուց գիտեր, որ այդ ծանոթությունը կարող է անհաճո լինել յուր տիրոջը, ինչո՞ւ համար էր ծանոթացնում, Արդյոք դա մի սխալմո՞ւնք էր, որ նա գործել էր անգիտակցաբար, թե՞ մտածած չարություն: Վահանը չէր կարողանում որոշել: Բայց մի բան պարզ էր: նա տեսնում էր, որ գանձապահը անամոթաբար հարստահարում էր յուր տիրոջ հավատը և որ վերջինս կուրորեն անձնատուր է եղել այդ սրիկային: Նրա մեջ զարթնում էր ցանկություն մի կողմ թողնել ազնվությունն ու մեծանձնությունը և հայտնել Թորոսյանին ամեն բան:

Բայց տեսնելով, որ գանձապահը այնպիսի մեծ վստահություն ունի յուր խորհրդապահության վրա, որ մինչև անգամ յուր ներկայությամբ չարախոսում է իրենից Թորոսյանի առաջ, հավատացած լինելով, որ նույնիսկ այդ դեպքում ինքը չի հայտնիլ նրա գաղտնիքը, նա լռում էր:

Մյուս կողմից էլ Սարյանը զայրանում էր տեսնելով, որ այդ փողի ու հաշվի երկրպագուներն այդքան նեղսրտությամբ ու նախապաշարմունքով են նայում հասարակական գործերով հետաքրքրվող անձի վրա, այդքան կասկածով ու ատելությամբ են վերաբերվում դեպի այն ամենը, ինչ որ մարդուն, գեթ մի փոքր, բարձրացնում է ստորաքարշ կյանքի մակերևույթից... մինչդեռ դեպի փողն ու հաշիվը այնքան հավատ ու ջերմեռանդություն ունին, որ ոչ միայն նրանց հարգողին, այլև հարգել կեղծողին սեփական գույքն ու պատիվն են վստահանում:

Այս հանգամանքը սրտմտեցնում էր երիտասարդին և նրա սրտի մեջ վրեժխնդրություն բորբոքում:

«Պիտի ծածկեմ այն բոլորը, ինչ որ գիտեմ. թող այդ մարդիկը պատժվին իրենց կուրության համար: Պիտի լռեմ, մինչև որ ազնիվ ու հավատարիմ ճանաչված մարդկանց դիմակը ինքն իրեն պատռվի և ամոթի գունով շառագունե ինչպես վստահացողի, նույնպես և վստահացյալի երեսը... այդպիսի փաստը միայն կարող է խելքի բերել այս նյութապաշտ արարածներին, երբ նրանք խելքի կգան, այն ժամանակ, ես կխոսեմ իմ իրավունքների մասին...»,— մտածում էր երիտասարդ Սարյանը և ինքն իրեն այդ մտքերով մխիթարում:

Բայց ինչո՞ւ համար էր գանձապահը ծանոթացրել Վահանին Նադիրյանի հետ: Դա յուր խորհրդավոր պատճառն ուներ, որը, սակայն, Վահանը գուշակել չէր կարող:

Գանձապահը սկզբում մտերմանալով Սարյանի հետ, ցանկացավ յուր թաքուն քաջագործություններին մասնակցող մի մշտական ընկեր պատրաստել նրանից: Թեպետև նա այդպիսի ընկերների պակասություն չէր զգում, բայց Վահանի ընկերությունը ուրիշ նշանակություն ուներ նրա համար: Այդ այն էր, որ Վահանը ծառայում էր Թորոսյանի գրասենյակում հաշվապահի օգնականի պաշտոնով: Իսկ երբ մի առևտրական տան մեջ գանձապահն ու հաշվապահի օգնականը մտերիմ և խորհրդակից են միմյանց, այդ արդեն հաստատուն գրավական է նրանց երկուսի երջանկության (գանձապահի սիրած խոսքն էր այս):

Հաշվապահի օգնականի պաշտոնը միշտ զբաղեցրել էր պարոն Թաղարյանին, որովհետև այդ պաշտոնի մեջ եղող անձի կամքից էր կախված զվարճությունների համար մեծ կամ փոքր գումարներով փողեր վերցնելու հնարավորությունը: Փողը, իհարկե, միշտ գանձապահի ձեռին էր լինում, նա կարող էր վերցնել նրանից որքան և երբ կամենար: Բայց դրանով գործը չէր վերջանում. պետք է հաշվապահի օգնականն էլ այդ վերցրած փողերը կանոնավոր ձևով հաշիվների մեջ արձանագրեր և հանձներ հաշվապահին, որպեսզի նա էլ յուր կողմից գլխավոր գրքերի մեջ փոխադրելով սխալն ու ուղիղը հաշիվների ծովի մեջ անհետացներ...

Այն երիտասարդը, որ Սարյանից առաջ միևնույն պաշտոնի մեջ էր գտնվում, մտերիմ և հավատարիմ էր Թաղարյանին: Բայց ի բնե զգույշ և հեռատես լինելով, մի երկու տարի գանձապահի հետ քեֆեր անելուց և առանձին յուր համար փոքրիկ ապահովություն կազմելուց ետ, որոշեց թողնել պաշտոնը, որպեսզի վտանգավոր գաղտնիքը հայտնված ժամանակ (որը, նրա կարծիքով, շատ չի պիտի ուշանար) ինքը պաշտոնի մեջ չգտնվեր և գանձապահի հանցանքներին մասնակից չճանաչվեր: Այդ երիտասարդը յուր հեռանալու հայտարարությունն արդեն արել էր, երբ Սարյանը Թորոսյանի մոտ պաշտոն խնդրելու եկավ, և բարեհաջող հանգամանքի շնորհիվ էլ հաշվապահի օգնականի պաշտոն ստացավ:

Պարզ է, որ պաշտոնակից բարեկամի հեռանալուց ետ գանձապահը պիտի աշխատեր նրա հաջորդի հետ բարեկամություն հաստատելու, որպեսզի յուր երջանկությունը հարատև լիներ: Այս նպատակով էլ, ինչպես տեսանք, նա մտերմացավ Սարյանի հետ

և, մինչև անգամ, կարողացավ մասնակից անել նրան յուր սովորական զվարճություններից մեկին: Բայց երբ տեսավ, որ Վահանը յուր ճանաչած փայտից չէ տաշված և նրա մի քանի նկատողություններից արդեն հասկացավ, որ նոր պաշտոնակիցը յուր մտերիմն ու հավատարիմը լինել չէ կարող, զղջաց յուր սխալմունքի վրա, բայց արդեն ուշ էր, նրան մնում էր կամ բոլորովին ետ կանգնել մոլորության ճանապարհից, կամ աշխատել հեռացնել պաշտոնից Սարյանին և նրա տեղ մի ուրիշը նշանակել տալ: Այս վերջին միջոցը նա բանավոր համարեց: Այդ նպատակին հասնելու համար, նա այնպես ձևացրեց, որպես թե, Սարյանի՛ նկատողություններն ուշադրության առնելով հեռանում է մոլորության ճանապարհից և զբաղվում է նրա սիրած գործերով:

Այդ գործերից մինն այն էր, որ նա ծանոթացրեց Սարյանին ազգասեր Նադիրյանի հետ: Իսկ այդ արավ այն նպատակով, որպեսզի Վահանը բարեկամանալով նրա հետ գրգռե Թորոսյանի դժգոհությունն ու զայրույթը: Այդպիսով խախտելով Թորոսյանի՝ դեպի յուր ազգակիցն ունեցած հավատը, նա հեշտությամբ կարող էր նաև զանազան հանցանքների մեջ զրպարտել նրան և գրգռել Թորոսյանին՝ հեռացնել պաշտոնից այդ «ազգային» և «գրական» ցավերով ախտացած երիտասարդին:

Գանձապահը կիսով չափ հասել էր յուր նպատակին. մնում էր մի փոքր ևս աշխատել, որպեսզի գործը կատարելապես հաջողվեր:

Երբ Թորոսյանը դուրս գնաց գրասենյակից, գանձապահը մոտեցավ Սարյանին, որը տխուր և ձեռքը ծնոտին հենած նստած էր սեղանի առաջ և մտերմաբար խոսեց նրա հետ:

— Սիրելիս, պիտի ներես ինձ, որ այդ գազանից վախենալուս համար ոչ միայն սուտ խոսեցի, այլև չարախոսեցի քո մասին: Հավատացիր, որ թե քո կողմը բռնեի, նա իսկույն կարտաքսեր ինձ: Տեսա՞ր, ինքն անգամ ասաց թե՝ «եթե իմ գանձապահը այդպիսի ցանցառություն աներ, կարտաքսեի նրան»: Բայց քեզ խնայեց, որովհետև յուր ազգականն ես: Այսուամենայնիվ, մի գաղտնիք ասեմ քեզ օգուտ քաղիր նրանից: Թորոսյանի սիրտը յուր լեզվի նման չար չէ: Նրա բարկանալուն կամ սպառնալուն մի՛ նայիր: Դու շարունակիր քո բարեկամությունը Նադիրյանի կամ նրա ընկերների հետ, որպեսզի այդպիսով ինձ էլ օգնես այս ստոր դրությունից դուրս գալու: Ես հիմար էի, սկզբում գլուխս խոնարհեցի սրա անիրավ պահանջների առաջ և այդպես էլ խոնարհած մնացի մինչև վերջը: Դրա հետևանքը եղավ այն, որ սկսեցի թաքուն զվարճությունների ետևից գնալ և վատ ընկերները փչացրին ինձ: Նադիրյանը, ընդհակառակը, սկզբից իսկ ընդդիմացավ յուր պարոնին և շարունակ հակառակելով նրան՝ քո սիրած ճանապարհներովն առաջ գնաց: Այսօր նա բանը այնտեղ է հասցրել, որ յուր պարոնի հետ միասին մյուս վաճառականներն էլ սկսել են քաշվել նրանից: Եթե դու էլ միևնույն քաջությամբ գործդ շարունակես, Թորոսյանը կխոնարհվի քո հաստատուն կամքի առաջ: Մենք և մեզանից առաջ այստեղ ծառայողները վատ ենք սովորեցրել նրան: Շարունակ հնազանդվելով, շարունակ խոնարհվելով՝ կատարյալ բռնակալ ենք շինել նրան: Այժմ եթե դու կամենաս, մեր բոլոր սխալները կուղղես: Թորոսյանի նման քանի՛-քանի՛ անգութներ կան մեր այս առևտրական պարոնների մեջ և ինձ նման քանի՛-քանի՛ ստրուկ գործակատարներ, որոնք անպիտան ընկերների ձեռք ընկնելով փչանում են: Եթե դու և Նադիրյանը հաստատապես դնեք ձեր մտքում, կարող եք միանգամից կերպարանափոխել այս բռնակալներին և մեզ էլ ազատել այս ստոր դրությունից:

Մի՞թե, կարծում ես, ես կամ իմ ընկերները, չենք հետաքրքրվում այն բաներով, ինչով որ դուք եք հետաքրքրվում: Մի՞թե մենք չենք կամենում թատրոն հաճախել, լրագիր կարդալ, ընկերությունների մեջ անդամ գրվել, իբրև հայ՝ երևալ այս կամ այն ժողովներում, խոսք լսել, խելք սովորել և այլն, և այլն: Բայց չենք կարողանում անել,

որովհետև միանգամից ստրկացրել են մեզ: Բայց եթե դուք ձեր սկսածը քաջությամբ շարունակեք, մենք էլ սիրտ կառնենք և ձեր ետևից կգնանք: Այդպիսով դու և Նադիրյանը կդառնաք մեր այս ստրուկ գործակատարների փրկիչը. իսկ Թորոսյանն այդ բանի համար քեզ ոչ մի զրկանք չի պատճառել, որովհետև ամոթ է մի առևտրականի համար զրկել յուր ազգակցին այդպիսի դատարկ բաների պատճառով:

Երիտասարդ Սարյանին խիստ բանավոր երևեցավ գանձապահի այս ճառը, որի մեջ թաքնված էր Թորոսյանի աչքում իրեն ավելի ատելի դարձնելու գաղտնի նպատակը: Միամիտ երիտասարդը չկասկածեց բնավ, թե գանձապահի այդ հորդորի մեջ կարող էր լինել որևէ գաղտնի դիտավորություն՝ ուղղված յուր նյութական և բարոյական շահերի դեմ: Նա ազնվաբար հավատաց նրան և ձեռքը բռնելով՝ մտերմաբար սեղմեց և զգացված բացականչեց.

— Երդվում եմ պատվովս, որ ես ձեր բոլորի իրավունքի պաշտպան և ձեր վիճակի բարելավության պատճառ պիտի դառնամ: Թո՛ղ ինչ ուզում է պատահի, ես առաջ կերթամ իմ ընտրած ճանապարհով, և, հույս ունիմ, որ բախտն ինձ չի դավաճանիր մնում է միայն, որ դուք հետևեք ինձ, որպեսզի կռվի դաշտում միայնակ չմնամ:

Գանձապահը հավատացրեց երիտասարդին, որ բոլոր գործակատարները կաջակցեն իրեն, հենց որ նա կռվի դրոշակը կպարզե:

Զ

Գանձապահի խոսածները Սարյանը հաղորդեց Նադիրյանին: Վերջինս ոչ միայն համակրեց առաջարկված խնդրին, այլև հայտնեց, որ ինքը սիրով կաջակցե նրան:

— «Գործակատարների ճնշված դրությունը և նրանց ստրկական վիճակը վաղուց գրավել են իմ ուշադրությունը,— ասաց նա,— վաղուց ես մտածում էին կազմել մի ուժ կամ ընկերություն, որ կարողանար կռվել հայ վաճառականի՝ հին դարերից ժառանգած այն բռնապետական օրենքների դեմ, որոնցով նա, առհասարակ, չափում է յուր ստորադրյալների պարտքի և իրավունքի սահմանը, անարգելով հաճախ նրանց մարդկային արժանապատվությունը և զրկելով այն բարոյական բարիքներից, որոնցից յուրաքանչյուր մարդ արարած օգտվելու իրավունք ունի: Բայց որովհետև մինչև այսօր միայնակ էի, ուստի հազիվ սեփական իրավունքներս պաշտպանելու միջոց ունեցա, հետևապես ընդհանուր գործակատարների վիճակը բարվոքելու մասին ոչինչ չկարողացա գործել: Բայց այժմ, քանի որ դու կաս, և գործակատարների մեջ էլ ինքնապաշտպանության զգացումը զարթնում է, ես կարող եմ միանալ քեզ հետ և միացնել գործակատարներին: Այսպիսի հավաքական ուժով մենք փառավոր գործ կկատարենք:

Նադիրյանի խոսքերը եռանդ ներշնչեցին երիտասարդ Սարյանի մեջ, նա սկսեց ծրագիրներ կազմել մոտիկ ապագայում սկսելիք գործի համար: Եվ որպեսզի այդ գործը հաստատուն հիմքերի վրա դնե, նա որոշեց ուշադրությամբ ուսումնասիրել գործակատարների գրությունը և փաստեր ժողովել ապագա պաշտպանության գործը օրինավոր կացուցանելու համար:

Այդ բանի մեջ Նադիրյանից զատ օգնում էր նրան նաև գանձապահը (որը, իբրև թե, արդեն, օրինավոր մարդ էր դարձել) և մի քանի ուրիշ գործակատարներ, որոնք ազգասերների կարգին էին պատկանում:

Հենց այս պատրաստությունների ժամանակ Վահանը ստացավ հորից մի նամակ, որ նրա աշխույժն ու եռանդը սառեցրեց: Փորձառու հայրը, ի միջի այլոց, գրում էր որդուն հետևյալը:

«Քանի ժամանակ առաջ շնորհավորեցի նոր պաշտոնդ, բայց չգիտեի, թե աշխատության այդ նոր ասպարեզը ընտրելուդ համար կարո՞ղ եմ ուրախանալ, թե՞ ոչ: Որովհետև «Փնջիկ»-ի խմբագրության մեջ պաշտոն ստանձնած ժամանակ էլ հիացմունքով էիր խոսում քո հաջողության մասին. բայց հազիվ մի քանի շաբաթ անցավ և դու հուսահատված պաշտոնդ թողեցիր: Վերջին նամակներիդ մեջ միակ մխիթարականը ինձ համար այն էր, որ դու խոստովանում էիր քո անփորձությունը և դատապարտում երիտասարդական սխալանքներդ: Այդ ինձ ուրախացնում էր ո՛չ թե նրա համար, որ ես էլ դատապարտում էի այդ սխալները, ո՛չ, սխալվիլը ամենից ավելի երիտասարդությանն է հատուկ. այլ նրա համար, որ տեսնում էի, թե քո անհաջողությունները սովորեցրել են քեզ ճանաչել փորձառության և խոհեմության արժեքը: Այժմ ուրախ եմ, որ ամիսներ անցնելուց ետ հուսահատական ոչինչ չիս գրում, ընդհակառակը, հույս ես տածում թե, օրըստօրե վիճակդ պիտի բարելավվի և թե ակներև հաջողություն պիտի ունենաս:

Բայց որովհետև անցյալ անհաջողություններից առած դասերը միշտ մոռացվում են հաջողության ժամանակ և շատ խելոք մարդիկ հենց այդ մոռացության շնորհիվ միևնույն սխալը կրկնել են իրենց կյանքում մի քանի անգամ, ուստի ավելորդ չեմ համարում զգուշացնել քեզ, որ դու չվստահանաս քո հիշողության վրա և մեծ բան չկարծես այն փորձառությունը, որ ձեռք ես բերել քո առաջին անհաջողությամբ: Իմացի՛ր, որ գործունեությանդ նույնիսկ այժմյան ասպարեզում դեռ շատ փորձանքներ են սպասում քեզ: Զգույշ կաց, որ առիթ չունենաս նորից քո անփորձության վրա գանգատվելու: Պաշտոնիդ ու պարտավորությանդ հավատարիմ լինելուց զատ, դու պարտավոր ես, նաև, հնազանդ լինել պարոն Թորոսյանին, ինչպես քո հորը և պատվավոր ազգակցին: Նրա խորհուրդներից շատերը կարող են քո հասկացողության և գաղափարներին հակառակ լինել, բայց իմացիր, որ դու ավելի օգուտ կունենաս այդ խորհուրդներին հետևելով, քան նրանց հակառակելով: Երիտասարդների ընկերությունը գրավիչ է և սիրելի, բայց նրա տված խորհուրդները լինեն սխալանքներով: Աշխատիր, որ այդ ընկերություններին սիրելի լինես, բայց ոչ հլու, հպատակ: Նրանց տված տասը խորհուրդներից մեկին հետևիր, այն էլ քո անցյալ անհաջողությունների պատմությունը հիշողությանդ մեջ նորոգելուց ետ»:

Հոր նամակի այս տողերը կարծես սթափեցրին երիտասարդին մի արբեցողությունից, որի մեջ ընկել էր նա գանձապահի և Նադիրյանի հորդորները լսելով: Մի քանի անգամ կարդաց նա այդ տողերը և ինքն իրեն մտածեց.

— «Արդյոք սա բախտի ազդարար ձայնը չէ՞, որ հասնում է ինձ ի դեպ և զգուշացնում է վտանգավոր ճանապարհի վրա ոտք կոխելուց, արդյոք չի՞ պիտի հարգեմ այս ձայնը և ետ կանգնեմ իմ դիտավորությունից: Մի քանի անգամ արդեն ես պատժվել եմ իմ հոր փորձառու խրատները չլսելով: Ի՞նչ պատճառաբանությամբ կարող եմ արդարացնել ինձ, եթե կրկին անգամ փորձանքի ենթարկվեմ: Մի՞թե այնուհետև իմ սխալները խոստովանելով, կամ արածիս վրա զղջալով, կարող եմ հանգստություն գտնել: Մի՞թե այնուհետև իրավունք կունենամ ես հորս աչքին երևալու կամ նրա երեսին ուղիղ նայելու: Ավելի լավ չի՞ լինիլ եթե այսուհետև գոնե խոհեմությունը լինի իմ առաջնորդը և համբերությունը՝ իմ խորհրդականը, որպեսզի նորեն առիթ չունենամ հուսահատվելու»:

Այս խորհրդածությունից ետ անցան մի քանի օրեր: Նադիրյանը շարունակում էր խոսել Վահանի հետ գործակատարների վիճակը բարվոքող խնդիրների մասին: Երբեմն առաջարկում էր նոր ծրագիրներ, երբեմն հաղորդում էր նրան մեր

գրականության մեջ հայտնի անձանց սույն խնդրի մասին հայտնած կարծիքները, որոնց նա լսում էր «Մանգաղ» լրագրի խմբագրատանը. երբեմն ազգասեր գործակատարների բարոյական տանջանքների նկարագիրն էր անում, հորդորելով Վահանին շուտով գործ սկսել և այլն:

Բայց վերջինս փոխանակ առաջվա նման այդ խնդրով գրավելու և Նադիրյանի հորդորներով ոգևորվելու, կամ լռում էր, երբ նա խոսում էր, և կամ գործի հաջողությունը կասկածելի էր կացուցանում՝ Նադիրյանի կարծիքներին հակառակելով:

Նադիրյանը, վերջապես, նկատեց Վահանի հոգեկան աշխարհում տեղի ունեցած փոփոխությունը և մի երեկո, երբ միասին նստած էին, պատճառը հարցրեց:

Երիտասարդը չծածկեց նրանից յուր որոշումը, որ էր՝ ետ կանգնել մտադրյալ գործից, և, մինչև անգամ, կարդաց նրան յուր հոր նամակը, որ պատճառ էր դարձել այդ որոշման:

— Կորա՛ծ մարդիկ ենք, կորա՛ծ,— բացականչեց Նադիրյանը,— ի՞նչ իրավունք ունինք մեզ երիտասարդ անվանելու, կամ երիտասարդական իդեալներով ոգևորվելու: Դեռ պատանեկան հասակներս չառած արդեն ծերունիներ ենք, և այն, ոչ թե խելքով ու փորձառությամբ, այլ ժառանգական անշարժությամբ և երկչոտությամբ: Վա՛յ այն ազգին, որի հառաջադիմության կարապետները մենք պիտի լինինք...— Այս ասելով նա վեր կացավ տեղից և սկսեց սենյակում ետ ու առաջ գնալ:

— Ձեր ակնարկությունը ի՞նձ է վերաբերում,— հարցրեց Սարյանը ժպտալով: — Ոչ միայն ձեզ, այլև ինձ, այլև իմ մյուս ընկերներին,— վշտացած պատասխանեց Նադիրյանը: — Մի՞թե կարծում եք թե մենք այսքան ստորացած և ստրկացած կլինեինք, եթե մեզանից յուրաքանչյուրը յուր կարողության չափով մաքառած լիներ հին օրենքների ու սովորությունների դեմ՝ նույնիսկ ծառայության մտնելու օրից սկսած:

— Այսքան ստորացած չէինք լինիլ, արդարև, եթե յուրաքանչյուրը յուր կարողության չափով մաքառած լիներ, բայց ոչ ոք այդ չէ արել մինչև այսօր:

— Ուրեմն մենք պիտի անենք. լավ է ուշ, քան երբեք:

— Երկու հոգի կարո՞ղ են կռվել ամբողջ դասակարգի դեմ:

— Մենք միայնակ չենք լինիլ. մեզ կաջակցեն բոլոր գործակատարները:

— Իսկ դրանց բոլորի ուժը բավակա՞ն կլինի արդյոք դարերով հաստատված բռնությունը միանգամից խորտակելու:

— Ի՞նչ հարկավոր է միանգամից խորտակել: Հզոր հարձակման դեմ հզոր էլ պաշտպանություն կլինի: Մենք աստիճանաբար կգործենք:

— Աստիճանաբար և հեռատեսությամբ... դրա դեմ ես ոչինչ չունիմ:

— Հեռատեսությամբ բառը ես չասացի:

— Ի՞նչ վնաս, եթե գործելու ժամանակ հեռատեսություն էլ ունենանք:

— Այն՝ որ հեռատեսությունը հառաջադիմության թշնամին է: Հեռատեսությամբ մտածողը մեծ գործ կատարել չի կարող: Հեռատեսությունը պահանջում է փախչել

վտանգներից ու վնասից, իսկ մենք, ընդհակառակը, ամեն վտանգ ու վնաս աչքի առաջ պիտի ունենանք, եթե, իսկապես, կամենում ենք գործել:

— Տեսնո՞ւմ եք. անփորձ երիտասարդի խելքով եք դատում: Ինչպե՞ս կարելի է գործելու ժամանակ չմտածել գալիք վտանգի ու վնասի մասին: Ի՞նչ արժեք կարող է ունենալ այն փոքրիկ օգուտը, որ ձեռք պիտի բերվի ամենամեծ վնասով: Ահա՛, այդ տեսակ խորհուրդներին հետևելուց է զգուշացնում ինձ իմ հայրը, և արդյոք նա իրավունք չունի՞:

— Ձեր հոր նամակը կարող եք կախել մուզեյումում իբրև հնություն: Իսկ ձեզ ես խորհուրդ կտամ մի փոքր ավելի երիտասարդանալ: Այն օրից ի վեր, որ ծանոթացա ձեզ հետ, դուք շատ եք ծերացել: Այդ սիրուն հասակին, այդ շենք ու շնորհքին չէ վայել այն հոգին, որ կրում եք ձեր մեջ: Երկչոտությունը կանանց և տկար ծերերի բաժինն է, իսկ դուք, հավատացած եմ, չեք կամենալ պատկանել ոչ առաջինների և ոչ վերջինների կարգին:

Նադիրյանի այս նկատողությունը ազդեցություն արավ Վահանի վրա, նա լռեց և գլուխը կախելով ընկավ մտածության մեջ:

Այնուհետև, մի քանի օր շարունակ նրանք այլևս չխոսեցին այս խնդրի վրա, մինչև որ մի անակնկալ առիթ կրկին անգամ հուզեց Սարյանին: Այդ առիթը օրիորդ Աշխենի մի նամակն էր:

Այն օրից ի վեր, որ Վահանը հայտնել էր օրիորդին «Փնջիկ» թերթի խմբագրությունից յուր հեռանալու և առևտրական գործի մտնելու նորությունը, վերջինից այլևս ընդարձակ գրություններ չէր ստանում: Յուր նամակներին նա պատասխանում էր համառոտ և մինչև անգամ մի տեսակ պաշտոնական ոճով: Օրիորդի այս վարմունքը մտածել էր տալիս Վահանին: Նա աշխատում էր պատճառը գուշակել, բայց չէր կարողանում. զանազան ենթադրություններ էր անում և, սակայն, այդ ենթադրությունները ինքն էլ հերքում էր: Յուր սիրտը հանգստացնելու համար նա վերջապես որոշեց բացատրություն խնդրել օրիորդից: Վերջինս, իբրև պատասխան, հետևյալն էր գրում յուր ուսուցչին:

— «Սրանից առաջ, քանի որ դուք հասարակական գործի պաշտոնյա էիք, ձեր նամակները նվիրված էին լինում հասարակական հարցերին, բնականաբար, ես ևս, ինչպես կարդում, նույնպես և գրում էի այդ հարցերի մասին: Այդ ժամանակ ես շատ բաներ էի ունենում ձեզ հաղորդելու կամ ձեզնից հարցնելու ու տեղեկանալու: Արդեն ձեր հոդվածները որոնք հաճախ լույս էին տեսնում «Փնջիկ» թերթի մեջ, և որոնց ես այնքան սիրով ու հիացմունքով կարդում էի, բավական էին իմ գրությանը անսպառ նյութ մատակարարելու: Իսկ այժմ, քանի որ դուք առևտրական աշխարհին եք ծառայում և ձեր նամակներում գլխավորապես տեղեկություններ եք հաղորդում առևտրական դասակարգի, նրա աշխարհայեցողության, դավանած սկզբունքների, ձեր նոր արհեստի և այլ այս տեսակ նյութերի մասին, որոնց վրա ես ամենևին գաղափար չունիմ, իմ պատասխանները համառոտ և անբովանդակ են լինում, որովհետև չգիտեմ թե ի՞նչ կարելի է գրել առևտրական մարդուն, ի՞նչ բաներով կարելի է հետաքրքրել նրան: Ինձ թվում է թե դուք, որ գաղափարական աշխարհում ճշմարտություն ու ազնվություն որոնելով չգիտիք նրան և տխուր հիասթափության գալով՝ առևտրական աշխարհի պաշտպանության ապավինեցիք, այլևս չեք հետաքրքրվում այն մտքերով և իդեալներով, որոնց պաշտում էիք առաջ և որոնց ինձ ևս սովորեցրիք երկրպագել... Որովհետև եթե այդպես չլիներ, գեթ մի անգամ կհիշեիք թե՝ դեռ հուսահատված չեք և թե մի օր նախկին գործունեության ասպարեզը պիտի իջնեք, ուր դուք այնքա՜ն հաջողությամբ փայլում էիք, պատճառելով ձեր բարեկամներին հաճույք և ուրախություն... Այս պատճառով ես զգուշանում էի

հասարակական հարցերի մասին գրելուց, որովհետև կարծում էի, թե դրանով կարող եմ վրդովել ձեր հոգեկան հանգիստը, որը այնքան շատ վրդովվել է ձեր ծանոթ ազգային գործիչների խարդավանքներից: Ես չէի գրում ձեզ նույնիսկ ուսուցչական ասպարեզում ունեցած իմ հաջողությունների մասին, որոնք այժմ զբաղեցնում են ինձ, գոնե այն չափով, որ փոխարինում են այն բարիքները, որոնցից զրկված եմ այժմ...

Սակայն, ի՞նչ մեղքս թաքցնեմ, հենց իմ այդ լռությունն ու զգուշությունը տանջում է ինձ: Վշտանում եմ, որ ձեր ընդարձակ և բազմաբովանդակ նամակներին պատասխանում եմ այդքան համառոտ և, ինչպես դուք ասում եք, պաշտոնական ոճով, և այդ նրա համար, որ չեմ կարողանում խոսել իմ սրտին ու հոգուն օտար խնդիրների մասին: Բայց որովհետև դուք ինձ իրավունք եք տվել ամեն մի տարակուսանքի ժամանակ ձեր խորհուրդներին դիմել, ուստի այս անգամ օգուտ քաղելով իմ իրավունքից, կամենում են մի անկեղծ խոստովանություն անել ձեզ.— Ձեր այժմյան սահմանափակ գործունեությունը, հարգելի բարեկամ, վիատեցնում է ինձ: Ասացե՛ք, մի՞թե, արդարև, դուք այլևս այն եռանդոտ, գործունյա և հոգով ու սրտով ազգային շահերին նվիրված երիտասարդը չեք, որ ամենքին հորդորում, քաջալերում էիք գործել, աշխատել, արգելքները խորտակել և առաջ գնալ... Այժմ ի՞նչ է պատահել ձեզ. առաջին արգելքներից իսկ նկուն եղած՝ քաշվել եք դուք ասպարեզից և լուռումունջ նստած ոմն Թորոսյանի շահերն եք խնամում: Մի՞թե, արդարև, առաջին արգելքներն այդքան զորավոր են լինում, և երկաթի ճանաչված կամքը այդպես շուտ խորտակվում, փշրվում է նրանց առաջ... Եթե այդպես է, ապա ուրեմն հայտնեցեք ինձ, որ ես ևս դադարեմ իդեալներով ոգևորվելուց, ես էլ վախենամ հասարակական գործունեության նվիրվելուց, որովհետև եթե այդ արգելքները իմ քաջ ուսուցչին այդպես ճնշեցին, ինչպե՞ս չեն ճնշիլ նրա տկար աշակերտուհուն...»:

Այս խոսքերը, որոնց մեջ թաքնված էին սիրող աղջկա վշտերն ու ցանկությունները, որոնք պարունակում էին իրենց մեջ և՛ հանդիմանություն և՛ խրախույս, խորը խոցեցին երիտասարդ Վահանի սիրտը, նա զգաց, որ, արդարև, յուր հպարտ գլուխը խոնարհել է արդեն հանգամանքների առաջ, որ վաղուց մոռացել է յուր ուխտը, ապա ուրեմն արժանի է յուր աշակերտուհու հանդիմանության:

— Ինչպե՜ս հեշտ է քարոզել և որքան դժվար կատարել...— շշնջում էր ինքն իրեն երիտասարդը,— մի օր հորս առաջ կանգնած որոտում էի թե՝ «եթե մեր երիտասարդական ուժն ու կորովը դրամ վաստակելու աշխատության մեջ վատնենք, էլ այնուհետև ի՞նչը պետք է նվիրենք մեր ազգին, մի թե մեր անկարող ծերությունը», և այս խոսքերն ասող երիտասարդը, արդարև, չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ թե՝ կարող է երբևիցե նյութական ապահովության համար յուր ձեռքերն ու ուղեղը աշխատեցնել: Իսկ այժմ, ի՞նչ եմ անում ես. ո՞ւր մնացին իմ ուխտը, իմ ոգևորությունը, իմ ծրագիրները... Այդ բոլորը հիշում է իմ աշակերտուհին, իսկ ես մոռացել եմ... ամո՜թ ինձ, հազար անգամ ամոթ... Այս խորհրդածությունները կենդանացրին նրա հիշողության մեջ մոտիկ անցյալը, նրա առաջ պատկերացավ Երեմյանների տունը, այն խաղաղության սիրելի օթևանը, ուր ինքը շատ անգամ, առօրյա հոգսերից ու վշտերից հանգիստ և մխիթարություն էր գտել, ուր այնքան շատ խոսել ու պատմել էր հայտնի ցավերի և նրանց հնարավոր դարմանների մասին և ուր գեղեցիկ Աշխենի անուշ հայացքը, անմեղ ժպիտը և հայրենասիրական ձգտումները ծնեցրել էին նրա մեջ սիրո, զգացմունքների հետ միասին նաև դյուցազնական առաքինություններ, որոնք և ոգևորել էին իրեն նվիրման ուխտ դնելու խոստումներ անելու... Այժմ այդ ուխտը և խոստումներն անկատար էին մնացել, այդ միտքը տխրեցնում էր Վահանին. նա, արդարև, ամաչում ու շառագունում էր աներևույթ սիրուհու աներևույթ պատկերի առաջ: Բայց մի՞թե ամեն հույս կորած էր, մի՞թե ինքը դեռ երիտասարդ չէր, և յուր ուժն ու կորովը առաջվա նման անսպառ ու զորավոր չէին:

Այս միտքը նորեն աշխույժ ու եռանդ ներշնչեց Վահանին, նա ինքն իրեն քաջալերելով, որոշեց անուշադիր թողնել հոր նամակը, որը սառեցնում էր երիտասարդական սրտի խանդն ու ավյունը և դյուցազնասիրտ մարդուց մի երկչոտ ու փոքրոգի արարած էր շինում իրեն: Այդ որոշման հետ միասին նա ուխտեց եռանդով ձեռք զարկել գործի և առաջին անգամ գործակատարների պաշտպանության խնդրից սկսել, որովհետև, յուր կարծիքով, դա էլ հասարակական կյանքի ուշագրավ խնդիրներից մինն էր:

Սարյանը հայտնեց Նադիրյանին յուր վերջին որոշումը, որով և կրկին ուրախություն պատճառեց նրան: Ապա երկուսը միասին կազմեցին մի ծրագիր, որի համաձայն պետք է սկսեին առաջ տանել գործակատարների իրավունքը պաշտպանող «նշանավոր գործը»:

Այդ ծրագրով նրանք որոշում էին նախ՝ հրապարակ հանել գործակատարների աննախանձելի դրությունը, պարբերաբար հոդվածներ գրելով այդ մասին լրագրության մեջ և հասարակության ուշադրությունը այդ խնդրի վրա դարձնելով:

Երկրորդ կազմել գործակատարներից մի ընդհանուր միություն, և, ներշնչելով նրա մեջ ինքնօգնության ու ինքնապաշտպանության գաղափարը, պարտավորեցնել միության անդամներից յուրաքանչյուրին՝ կռվել առևտրական տերերի բռնապետական ոտնձգությունների դեմ, չխոնարհել նրանց անարդար պահանջների առաջ և ամեն դեպքում պաշտպանել սեփական իրավունքն ու արժանապատվությունը:

Վերջին կետի, այն է՝ գործակատարների միության համար, նրանք խմբագրեցին մի ընդարձակ հրահանգ, որպես գործունեության ուղեցույց, որից բազմաթիվ օրինակներ արտագրել տալով, պետք է ցրեին գործակատարների մեջ:

Իսկ ինչ հարցը հրապարակ հանելուն է վերաբերում, այդ պաշտոնը ամբողջապես յուր վրա առավ Սարյանը իբրև լրագրական գործին ավելի լավ ծանոթ անձն և իբրև լավ հայերեն գրող:

Առաջին հոդվածի մեջ, որի վերնագիրն էր՝ «Մի մոռացված դասակարգ», Սարյանը, ծանոթացնելով ընթերցողներին գործակատարների դասակարգի հետ, նկարագրում էր նրանց մտավոր, բարոյական և նույնիսկ նյութական վիճակը խիստ տխուր գույներով, թվում էր այն զրկանքները, տառապանքները և բարոյական հարստահարությունները, որոնց ենթարկվում էին նրանք գործատերերի կողմից, խիստ լեզվով հարձակվում էր վերջինների անարդարության և անգթության վրա և գործակատարների բարոյական անկումը վերագրում էր այն բռնապետական հնավանդ օրենքներին, որոնցով վարվում էին դրանք խեղճ գործակատարների հետ: Ի վերջո Սարյանը հրավիրում էր հասարակության զարգացած դասակարգի ուշադրությունը այս «մոռացված դասակարգի» թշվառ վիճակի վրա և նրա օգնությունն էր խնդրում:

Հոդվածը գրված էր խիստ գեղեցիկ, ազդու և սրտաշարժ լեզվով, այնպես որ լրագրի մեջ լույս տեսնելուց հետո մեծ տպավորություն պիտի աներ ընթերցողի վրա:

Այժմ մնում էր որոշել, թե հայոց թերթերից որի՞ն պետք էր հանձնել այդ հոդվածը: «Փնջիկ»-ից զատ, որի անունը Սարյանը այլևս չէր կամենում լսել, կային դեռ ուրիշ երեք թերթեր էլ «Մանգաղ», «Փայլածու» և «Փեթակ», որոնք թե՛ հռչակով, թե՛ արժանավորությամբ և թե՛ ընթերցողների բազմությամբ գերազանցում էին «Փնջիկ»-ին: Նադիրյանը ցանկանում էր, որ հոդվածը «Մանգաղին» հանձնվի, ասելով, որ այդ թերթը հարվածող ուղղություն ունի և մյուսներից ավելի շատ ընթերցողներ,

հետևապես այդպիսի շնորհքով դրված մի հոդված ավելի արժեք կստանար, եթե այդ թերթում հրատարակվեր:

Սարյանը, ընդհակառակը, չէր կամենում «Մանգաղին» հանձնել, որովհետև դեպի այդ թերթի ուղղությունը մի ներքին հակակրություն էր տածում, թեպետև այդ հակակրությունը անցողականի տեսակիցն էր: Որովհետև նրա խմբագրի և աշխատակիցների հետ ի մոտո ծանոթ չլինելով, ծանոթ չէր նաև նրանց անձնական համոզմունքների և հայացքների հետ: Իսկ երիտասարդ ընթերցողների մեջ քիչ չեն պատահում այնպիսիները, որոնք այս կամ այն թերթին համակրում կամ հակակրում են անցողական տպավորություններից առաջնորդված, և սակայն հակառակ համոզմունքի են գալիս հենց որ ծանոթանում են թերթի խմբագրի կամ աշխատակիցների հետ և որոշ հարցերի վերաբերմամբ լսում են նրանց բացատրությունները: Այդպես կարող էր պատահել և Սարյանի հետ: Դա ապագայի հարց էր: Բայց այդ միջոցին նրա համակրությունը «Փեթակ»-ի կողմն էր, որովհետև հիշում էր, որ իրենց տեսուչն էլ, որի հիշատակը մինչև այդ րոպեն իսկ սիրելի էր իրեն, «Փեթակի» ուղղությանն էր համակրում, ասելով, որ այդ ուղղությունը թե շինող չէ, քանդող էլ չէ:

Այս առթիվ երկար վիճաբանություն բացվեցավ Սարյանի և Նադիրյանի մեջ: Սակայն վերջինս այնպիսի համառությամբ պաշտպանն «Մանգաղ»-ի ուղղությունը, գաղափարները և հայացքները, որ Սարյանը ստիպվեցավ վերջապես զիջանել նրա ցանկությանը, մանավանդ որ, ինչպես ասացինք, ինքը դեռ հաստատ գաղափար չուներ ոչ մեկի և ոչ մյուսի ուղղության վրա:

Այժմ մնում էր Սարյանին որոշել թե՝ հոդվածը անստորագի՞ր հրապարակե, թե՞ յուր սեփական ստորագրությամբ: Ինքը, իսկապես, անստորագիր հրատարակելու կողմն էր, որովհետև այդպիսով նա ազատ կմնար Թորոսյանի և նրա նմանների զայրույթը գրգռելու վտանգից: Նադիրյանը, ընդհակառակը, պնդում էր, թե ստորագրությունն անհրաժեշտ է, որովհետև ստորագրություն չկրող հոդվածի վրա կասկածով ու թերահավատությամբ են նայում:— Ձեր առաջ բերած փաստերը,— ասում էր նա, — կարող են ինքնահնար զրպարտություն համարել և առևտրականները ուշադրություն չեն դարձնիլ այդ հոդվածի վրա, եթե տեսնեն, որ իրենց դեմ հարձակվողը երկչոտությամբ ծածկում է յուր անունը: Մեզ համար անհրաժեշտ է դուրս գալ կռվի դաշտը աներկյուղ սրտով և բաց ճակատով, որպեսզի եթե այդ կռվի մեջ ընկնելու էլ լինինք, աշխարհը իմանա, որ ազնիվ գործ պաշտպանելու համար ընկանք, իսկ եթե հաղթենք և մեր սկսածը հաջողությամբ պսակենք, հաղթության դափնին միայն մերը կլինի:

Նադիրյանի պատճառաբանությունը Սարյանը բանավոր էր գտնում: թացի այդ, մի գաղտնի պատճառ էլ կար, որ ստիպում էր նրան համակերպել Նադիրյանի առաջարկության. այդ այն էր, որ Վահանը ցանկանում էր կողմնակի ճանապարհով հասկացնել օրիորդ Աշխենին, որ ինքը դեռ չէ դադարել ազնիվ մտքերով և իդեալներով ոգևորվելուց, որ ինքը դեռ գործում է հասարակության համար և հավատարիմ է յուր ուխտին: Օրիորդը տեսնելով նրա ստորագրությունը այն գեղեցիկ և համարձակախոս հոդվածի տակ, որը լույս տեսած կլինի «Մանգաղ» հանրածանոթ թերթում, թե՛ կուրախանա՝ տեսնելով, որ յուր սիրած երիտասարդը այդպիսի լուրջ նշանավոր խնդիր է հրապարակ հանում և թե՛ կհամոզվի, որ իզուր է յուր խորհրդավոր ակնարկություններով հանդիմանել նրան:

Այսպես դատելով, Վահանը ստորագրեց յուր հոդվածը և տվավ Նադիրյանին: Վերջինս առանց ուշանալու ներկայացավ «Մանգաղ»-ի պարոն խմբագրին և հանձներ նրան այդ հոդվածը, ծանոթացնելով նրան նաև ծրագրի հետ, որը կազմել էին իրենք՝ գործակատարների աննախանձելի դրությունը բարվոքելու համար:

Պարոն խմբագիրը հոդվածը կարդաց, հավանեց, համակրեց հարուցանելի խնդրին և խոստացավ հոդվածը հրատարակված համարում նաև մի առաջնորդող նվիրել այդ հարցին:

Երկու երիտասարդներն անհամբերությամբ սպասում էին այն օրվան, երբ լույս պիտի տեսներ հոդվածը: Նրանք երևակայում էին թե ի՜նչ աղմուկ, ի՜նչ իրարանցում պիտի հարուցաներ նա առևտրական դասակարգի մեջ, ինչպես շատերը պիտի զայրանային իրենց դեմ. ի՜նչ անարգ խոսքեր, ի՜նչ հայհոյանքներ պիտի տեղային իրենց հասցեին: Սարյանը մեկ վախենում, դողդողում էր այդ հոդվածի պատճառով իրեն հասանելի վտանգները գուշակելով. մերթ արիանում, հպարտանում էր՝ մտածելով, որ այդպիսի կարևոր և ուշադրության արժանի խնդիրը առաջին անգամ ինքն է հրապարակ հանում, որ գործակատարների բռնաբարված իրավունքների պաշտպանը ինքն է հանդիսանում:

Երբ Վահանը յուր հոդվածը տպագրության տալու մասին հայտնեց Թորոսյանի գանձապահին, վերջինս ուրախությամբ բացականչեց,— այժմ ուրեմն փրկված ենք մենք: Գործակատարները այսուհետև քեզ իբրև բարերար կճանաչեն, իսկ Թորոսյանը, ես հավատացած եմ, յուր ստորադրյալներին պատահելուց, այսուհետև առաջին անգամ ինքը գլխարկը կհանե:

Այս խոսքերը, ճշմարիտ է, չգգվեցին Վահանի ինքնասիրությունը, որովհետև նա գանձապահի գովություններին նշանակություն չէր տալիս, բայց փարատեցին այն երկյուղը, որը նա կրում էր Թորոսյանից:

Վերջապես մի գեղեցիկ օր լույս տեսավ «Մանգաղ» օրաթերթում «Մի մոռացված դասակարգ» վերնագրով Վահան Սարյանի գեղեցիկ հոդվածը: Այդ առթիվ «Մանգաղ»-ի խմբագիրը, նույնպես, համաձայն յուր խոստման, գրել էր մի առաջնորդող, դնելով նրա ճակատին միևնույն վերնագիրը, և կրկնելով նրա մեջ միևնույն մտքերը, կարծիքները և փաստերը, որոնք շարահարված էին Սարյանի հոդվածում, առանց, սակայն, յուր կողմից մի խելոք խոսք ասելու, մի նոր միտք հայտնելու, և կամ ազդու եզրակացություն անելու: Պարոն խմբագրի առաջնորդողի գլխավոր արժանիքն այն էր, որ նա խիստ և անքաղաքավարի լեզվով հարձակվում էր առևտրական դասակարգի վրա՝ անվանելով նրանց գողեր, հափշտակողներ, վաշխառուներ, բռնակալներ և այլն:

Նադիրյանը վաղ առավոտից ստանալով թերթը, հիացմունքով կարդաց թե՛ առաջնորդողը և թե՛ Վահանի հոդվածը և ապա մտնելով վերջինի սենյակը, ավետեց նրան հոդվածի հրատարակվիլն:

Վահանը շտապով աչք անցրեց յուր հոդվածի վրա, տեսնելու համար թե նրա մեջ տպագրական սխալներ չկա՞ն: Որովհետև «Փնջիկ»-ի խմբագրության մեջ արդեն սովորել էր նա վախենալ այդ սխալներից, որոնք շատ անգամ հեղինակի բառերը և խոսքերը փոխելով՝ այլանդակում են, նաև, արտահայտած միտքը և ընթերցողների առաջ (որոնցից շատ քչերն են գրաշարների և սրբագրչի սխրագործություններին ծանոթ), ծիծաղելի են դարձնում խեղճ հեղինակին: Հոդվածը, փառք աստուծո, տպագրված էր անսխալ: Այդ լավ տպավորություն արավ Վահանի վրա: Բայց երբ նա խմբագրի առաջնորդողը կարդաց, յուր ամբողջ մարմնով մի անհաճո դող անցավ:

— Օ՜հ, այս առաջնորդողը ամեն բան պիտի փչացնե,— բացականչեց նա, ճակատին խփելով.— ինչ որ մենք մտածել ենք շինել, սա անպատճառ կքանդե. ես իզուր չէի այս թերթից վախենում...

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել, — զարմացած հարցրեց Նադիրյանը:

— Ի՞նչ պիտի պատահեր. մի՞թե այս լեզվով կարելի է խոսել լրագրի մեջ: Չէ՞ որ ընթերցողները բանական մարդիկ են և ոչ վայրենիներ:

— Այդ առաջնորդողը ուրեմն չե՞ք հավանում:

— Ոչ միայն չեմ հավանում, այլև շատ ցավում ու վշտանում եմ, որ իմ հոդվածի առիթով է գրված, որովհետև դա խմբագրական առաջնորդող չէ, այլ հայհոյանքների մի ժողովածու:

— Զարմանում եմ, մի՞թե կարծում եք թե ուրիշ լեզվով կարելի է խոսել առևտրականների հետ:

— Ամեն մարդու հետ էլ պետք է մարդավարի խոսել: Հայհոյանքը ոչ ոքին չի համոզիլ, բայց ամենքին կզայրացնե: Իսկ մեր նպատակը ոչ թե մարդկանց զայրացնել այլ նրանց սիրտը ամոքել, մտքի և հոգու վրա ազդել և այդ ազդեցությունից որոշ օգուտ ձեռք բերելն է:

— Ձեր հոդվածը, ընդհակառակը, շատ մեղմ լեզվով է գրված, նա մեր սպասած ազդեցությունը չէր անիլ ընթերցողի: Եթե այս հարուցված խնդիրը հաջողություն չունենա, որի մասին կասկած չունիմ, այդ հաջողությունը պետք է վերագրել «Մանգաղ»-ի այս օրվա առաջնորդողին:

—Իսկ ես կարծում եմ, որ եթե անհաջողության հանդիպի, դրա պատճառը այդ առաջնորդողը պիտի լինի:

— Կտեսնեք:

Այս վերջաբանով բաժանվեցան երկու բարեկամները, և նրանցից յուրաքանչյուրը ուղղվեցավ դեպի յուր պաշտոնատեղին:

Սարյանը Թորոսյանի գրասենյակում գտավ միայն հաշվապահին, որը գլխակոր յուր հաշիվներն էր գրում: Թորոսյանը դեռ չէր եկել, նա շատ անգամ էր ուշանում, բայց գանձապահ Թաղարյանի բացակայությունը երիտասարդի ուշադրությունը գրավեց, որովհետև նա ավելի ճշտապահ էր և ամեն օր միևնույն ժամին նստած էր լինում դեղնագույն փայտե սեղանի և երկաթե մոխրագույն սնդուկի առաջ՝ ի բացառյալ այն օրերը, երբ հիվանդ էր լինում... շատ քեֆ անելուց:

— Չլինի՞ թե նա դարձյալ հիվանդացավ,— մտածում էր Վահանը,— չլինի՞ ճանապարհը մտաբերեց. բայց վերջին ժամանակ նա օրինավոր էր պահում իրեն, թե հիվանդացած էլ լինի, անշուշտ քեֆ անելուց չլինիլ այդ:

Եվ երիտասարդը որպե առ որպե սպասում էր նրա գալստյան, կամ գոնե այն ծառային, որը նրա հիվանդ լինելու լուրը պիտի բերեր:

Բայց ինչո՞ւ նա այսօր այդքան տենչանոք սպասում էր գանձապահին, մի՞թե, արդարև, նրա անձնավորությունը կամ առողջ ու հիվանդ դրությունը հետաքրքրում էր իրեն. բնա՛վ:

Նա շտապում էր լսել նրա կարծիքը յուր հոդվածի և խմբագրական առաջնորդողի մասին: Նրա սիրտը պաշարել էր մի գաղտնի երկյուղ, նա կարծում էր թե՝ Թորոսյանը անպատճառ պիտի զայրանար յուր դեմ, և, ո՞վ գիտե, ինչ վնասավոր որոշում պիտի անե յուր համար: Ուստի ցանկանում էր ժամ առաջ լսել գանձապահի կարծիքը: Չէ՞ որ նա տասը երկար տարիներ էր, ինչ ծառայում էր Թորոսյանին և նրա բնավորությունը քաջ ուսումնասիրած էր: Հետևապես այս դեպքում կարող էր ուղիղ գուշակություն

անել թե՝ արդյոք Թորոսյանը պիտի՞ զայրանա յուր դեմ, թե՞ լռության պիտի տա այդ օրվա հրատարակությունը, անվանելով նրան «լրագրական վայրախոսություն», ինչպես սովոր էր անվանել բոլոր ա՛յն լրագրական հարձակումները, որոնք երբեմնապես ուղղվում էին առևտրական աշխարհի զանազան գործիչների դեմ:

Սակայն ո՛չ գանձապահը և ո՛չ նրա ծառան չէին երևում:

Ինչո՞վ էր ուրեմն զբաղված պարոն Թաղարյանը: Չէ՞ որ նրան էլ խիստ հետաքրքրում էր Վահանի հոդվածը. նա էլ անշուշտ կարդացած պիտի լիներ նրան և, հավանական է, որ շտապեր յուր շնորհակալությունը Վահանին հայտնելու:

— Ինչպե՞ս չէ, կարդացել էր, և ա՛յն՝ «Մանգաղ»-ի բոլոր բաժանորդներից վաղ: Եվ հենց այդ րոպեին էլ նա զբաղված էր Վահան Սարյանին՝ իրենց դասակարգի դատը պաշտպանելու համար՝ գեղեցիկ հատուցումն անելով: Այդ հատուցումը հետևյալն էր:

Նա գիտեր, որ Թորոսյանը առավոտները թերթ չէր կարդում, թեպետ ստանում էր: Ուստի «Մանգաղ»-ի այդ օրվա համարը ծոցը դնելով շտապեց նրա մոտ, աշխատելով տանը պատահել նրան:

Թորոսյանը յուր փառավոր սեղանատանը նստած թեյ էր վայելում: Նրա տրամադրությունը, հայտնի չէ ինչո՞ւ, խիստ լավ էր այդ առավոտ: Այդպես մի-մի անգամ պատահում էր նրա հետ. մանավանդ, երբ հանկարծ մտածում էր, որ գործերը հաջող են գնում և աշխարհում վիշտ ու ցավ չունի: Այս պատճառով խիստ սիրալիր կերպով ընդունեց գանձապահի ողջույնը, միևնույն ժամանակ զարմանք հայտնելով, որ նա այդ րոպեին յուր տանն էր գտնվում և ոչ գրասենյակում:

— Զարմանալու իրավունք ունիք,— ասաց գանձապահը ժպտալով,— որովհետև ես էլ հենց եկել եմ զարմանալի նորություն հայտնելու:

—Զարմանալի լինի, միայն թե ցավալի չլինի,— նկատեց Թորոսյանը և աթոռը առաջ քաշելով, պատրաստվեց գանձապահի նորությունը լսելու:

Թաղարյանը, որ գիտեր թե ի՞նչ մեծ նշանակություն ունի Թորոսյանի համար ոչ միայն յուր խոսքը, այլև դեմքի խաղը, ժպիտը, կամ խորհրդավոր հայացքը. աթոռը սեղանի մոտ քաշելով նստեց և ձեռքը ծնոտին տալով մի քանի րոպե շարունակ մնաց լուռ, որպես թե բերած նորությունը դժվարանում էր հայտնել:

— Է, ի՞նչ պատահեց, պատմի՛ր, է.— անհամբերությամբ խոսեց Թորոսյանը:

— Ի՞նչ պատմեմ, մնացել եմ շվարած. ո՞վ կարող էր կարծել, թե նա այսպես սխալմունք կարող էր անել. խեղճ տղա, ափսո՜ս տղա.

— Ի՞նչ սխալմունք. ի՞նչ տղա, ո՞վ է ինչ արել, ասա՛, է՛:

— Մեր Վահանը:

— Նա ի՞նչ է արել. կռվե՞լ է, գողությո՞ւն է արել, բռնե՞լ են...

— Երանի չէ՞ր լինիլ թե կռված կամ գողություն արած լիներ:

— Ուրեմն ի՞նչ, մա՞րդ է սպանել, ասա՛ է՛,— համբերությունը կորցնելով գոռաց Թորոսյանը:

— Սա էլ մարդ սպանելու նման բան է, Է՛լի,— այս ասելով նա հանեց ծոցից «Մանգաղ»-ի համարը և դրեց սեղանի վրա:

— Ի՞նչ լրագիր է այդ. ինչո՞ւ համար ես բերել,— հարցրեց Թորոսյանը աչքը թերթի վրա ձգելով:

— Դուք այն պայմանով չվարձեցի՞ք Վահանին, որ նա լրագրական շրջաններից հեռու պահե իրեն և, մինչև անգամ, պահանջեցիք, որ Նադիրյանից հեռանա՞:

— Այո՛. ի՞նչ է պատահել, մի՞թե նա էլի Նադիրյանի մոտ է բնակվում:

— Ինչպես չէ. նրանք միասին են բնակվում: Բայց դեռ այդ ոչինչ: Դուք տեսեք, թե մեկը մյուսի խորհրդով ի՞նչ խայտառակ գործեր են ուզում կատարել:

— Ի՞նչ խայտառակ գործեր:

Գանձապահը մի առ մի պատմեց Թորոսյանին այն բոլորը, ինչ որ Նադիրյանն ու Սարյանը մտածել էին գործակատարների համար անելու, ավելացնելով յուր կողմից նաև այնպիսի պատմություններ, որոնք Թորոսյանի զայրույթը վառեցին: Բայց վերջինս, որովհետև խնդիրը յուր ազգակցի մասին էր, աշխատում էր խաղաղ բռնել իրեն և այնպես էր ձևացնում, որպես թե դժվարանում է հավատալ գանձապահի պատմածներին:

— Դուք գիտեք, որ ես երբեք սուտ չեմ խոսացել, և այժմ էլ պատմածներս զուտ ճշմարտություններ են, թեպետ կցանկանայի, որ սուտ լինեին, որովհետև Վահանին ես սիրում եմ սրտանց և չէի ցանկանալ, որ նա այս գործերի մեջ խառնված լիներ: Բայց որպեսզի խոսածներս լոկ ենթադրություններ չհամարեք, ահավասիկ ապացույցը: — Այս ասելով նա հանեց ծոցից այն ծրագրի օրինակը, որը Սարյանն ու Նադիրյանը կազմել էին գործակատարներին բաժանելու համար, և որից մի օրինակ Վահանը տվել էր գանձապահին:

— Ի՞նչ բան է սա, կարդա՛ տեսնեմ,— հրամայեց Թորոսյանը:

Գանձապահը բարձր ձայնով և պարզ առոգանությամբ կարդաց ծրագիրը, որ կազմված էր մի քանի հոդվածներից, որոնք գլխավորապես սովորեցնում էին «գործակատարների միության» մեջ մտնող անդամներին՝ պաշտպանել իրենց իրավունքները և անհաշտ կռիվ մղել առևտրականների՛ պապերից ժառանգած՝ բռնապետական սովորությունների և կարգերի դեմ:

Քանի գանձապահը կարդում էր ծրագիրը, այնքան Թորոսյանի դեմքը մթնում և զայրույթ էր արտահայտում: Նրա ճաղատ ճակատի վրա կուտակվում էին կնճիռները. թավամազ հոնքերը խոժոռելով ծածկում էին յուր սուր և թափանցող աչքերը, որոնք հետզհետե վառվում էին մի տեսակ վայրենի կրակով: Իսկ ռնգունքները լայնանալով աշխատում էին ազատ ճանապարհ տալ ներքին հուզմունքին, որը, կարծես, գոլորշիացնելով արտաշնչում էր Թորոսյանը:

Երբ գանձապահը ծրագրի ընթերցումը ավարտեց, Թորոսյանը վերցրեց գրվածքը և սկսեց ուշադրությամբ դիտել:

— Այս ձեռագիրը Վահանինը չէ,— բարկությունը զսպելով խոսեց Թորոսյանը.— սա ուրիշ մարդու շարադրություն է. երևի մեր այդ տղան մի թշնամի ունի, որն այս ճանապարհով ուզում է ատելի անել նրան մեր աչքում: Ո՞վ տվավ քեզ այս թուղթը:

Այս խոսքերով Թորոսյանը կամենում էր թե՛ արդարացնել Վահանին (որը վերջին ժամանակները հետզհետե գրավել էր յուր համակրությունը) և թե՛ ցանկանում էր իսկությամբ հասու լինել գործին:

— Այդ թուղթը, դժբախտաբար, ինքը՝ Վահանը տվավ ինձ,— ժպտալով պատասխանեց գանձապահը,— և հայտնեց, որ յուր պատրաստածն է:

— Կատակ կլինի արած:

— Չէ, շատ լրջությամբ ասաց:

— Հապա ինչո՞ւ համար պիտի տար քեզ, մի՞թե չգիտեր, որ դու հավատարիմ ես ինձ և այսպիսի մի գրվածք չէիր ծածկիլ ինձանի՞ց:

— Այս թղթերից նա բոլոր գործակատարներին է բաժանել. ինձ էլ տվավ իբրև մի գործակատարի: Ես, իհարկե, դրանց «միության» անդամ չէի դառնալու, բայց ի՞նչ մեղքս թաքցնեմ, այս թուղթը մտադիր չէի ձեզ հանձնելու, որովհետև աշխատում էի հեռացնել Վահանին այս տեսակ անկարգ գործերից: Բայց երբ այսօր նրա հոդվածը կարդացի «Մանգաղ»-ի մեջ...

— Ի՞նչ, հոդվա՞ծ, նա հոդվա՞ծ է գրել...— տեղից վեր թռչելով հարցրեց Թորոսյանը:

— Ահա՛, այստեղ, այսօրվա համարումն է,— այս ասելով գանձապահը բացավ թերթը և ցույց տվավ նրան թե՛ խմբագրի առաջնորդողը և թե՛ Վահանի հոդվածը:

Թորոսյանը խլեց գանձապահի ձեռքից լրագրի համարը, շտապ-շտապ հանեց ծոցից յուր ոսկե կողերով ակնոցը և անհանգստությունից գողացող ձեռքով հարմարեցնելով քթի վրա, սկսեց կարդալ: Բայց հազիվ թե կարդաց մի քանի տող, նորեն դեն ձգեց լրագիրը, ակնոցը վերցրեց և սև երիզը վրան փաթաթելով ու ծոցը դնելով՝ ասաց գանձապահին:

— Չեմ կարողանում կարդալ, աչքերս ցավում են. հապա, ինքդ կարդա տեսնեմ ի՞նչ է գրել այդ հիմարը:

Գանձապահը վերցրեց լրագիրը և սկսեց կարդալ նախ առաջնորդողը: Երբ հասավ այն տեղը, ուր խմբագիրը վաճառականներին անվանում էր գողեր, հափշտակողներ, վաշխառուներ և այլն, Թորոսյանը վեր թռչելով տեղից, բացականչեց.

— Այդ խոսքերը Վահա՞նն է մեզ ասում... — Ո՛չ, «Մանգաղ»-ի խմբագիրը:

— Հա՛ «Մանգաղ»-ի խմբագիրը, ուրեմն շարունակիր. նա մարդավարի խոսել չի կարող. նրա գրվածքների համն ու հոտը յուր հայհոյանքներն են, այդ բանին մեր ականջները վաղուց են սովորել, բայց ասած է. «շունը կհաչի, քարվանը կքոչի», շարունակիր:

Գանձապահը շարունակեց: Երբ առաջնորդողը վերջացավ, այժմ Վահանի հոդվածն եմ կարդում,— հայտարարեց նա և սկսեց «Մի մոռացված դասակարգ» խորագրով հոդվածը կարդալ:

Թորոսյանը աչքերը չորս բացած և ականջները սրած լսում էր: Երիտասարդ գրողի ամեն մի խոսքը, նկատողությունը, բերած փաստերը, մերկացումները, կարծես սուր սլաքի պես ծակում, խոցոտում էին հին վաճառականի հիվանդոտ վերքերը: Նա զայրանում, կատաղում էր, աչքերը լցվում էին արյունով և դեմքը պատում էր կատաղության կարմրությունը:

Մինչև այդ օրը քանի՛-քանի՛ այդպիսի հարձակումներ էր կարդացել նա «Մանգաղ»-ի մեջ բոլոր վաճառականների հասցեին ուղղած, բայց դրանցից և ոչ մեկը նրան այնպես չէր վրդովել, չէր զայրացրել, նա մինչև անգամ խմբագրի առաջնորդողի ընթերցումը մի քանի րոպե առաջ արհամարհանքով լսեց, ինչպես որ արհամարհանքով կարդացել էր նրա շատ այդպիսի առաջնորդողները, բայց Վահանի այդ հոդվածը նրա հոգին վրդովում, ալեկոծում էր, որովհետև նա գրում էր այն, ինչ որ կար իսկապես, մերկացնում էր այն, ինչ որ տարիների ընթացքում ծածկվել, անտեսանելի էին մնացել լուսամիտ մարդկանց աչքերից, ինչ որ կարող էր վրդովել ազնվասիրտ մարդուն և ինչ որ աղմուկ ու բողոք պիտի հարուցաներ ամբողջ լրագրության մեջ... եթե իսկապես լրագրության կառավարների սրտին մոտ լիներ այդ պատվո և իրավունքի պաշտպանության խնդիրը:

— Ահա՞ թե ինչ կնշանակե անարժան մարդուն տան մեջ ընդունել, հավատարիմ ճանաչել և գաղտնիքները հայտնել...— գլուխը շարժելով և մորուքը ձգելով խոսեց Թորոսյանը, երբ գանձապահը յուր ընթերցումն ավարտեց:— Երբ նա առաջին անգամ հայտնեց ինձ թե՝ ծառայել է խմբագրության մեջ, թե ծանոթություն ունի լրագիր մրոտողների հետ, իսկույն պետք է արտաքսեի նրան իմ գրասենյակից: Բայց թույլ գտնվեցա. ազգականս է ասելով՝ օձը ծոցս առա տաքացնելու, իհարկե Նա վերջի վերջո պիտի շանթեր յուր բարերարին...

— Ափսո՜ս, պատվական երիտասարդ էր, շատ պիտանի կարող էր լինել մեզ. երևի Նադիրյանը մոլորեցրեց նրան,— ցավակցաբար հարեց գանձապահը:

— Կարող էր պիտանի լինել թե ոչ, այլևս ուշ է դրա մասին խոսել: Հենց որ կերթաս գրասենյակ, հաշվապահին կասես, որ նրա հաշիվը տեսնե. իսկ դու, ինչ որ հասնելի է նրան յուր ռոճկից՝ կվճարես և կասես, որ իսկույն մեր գրասենյակը թողնե. ես չեմ կամենում այլևս տեսնել նրան այնտեղ:

— Օ՜, ձեր վճիռը շատ խիստ է, մի փոքր մեղմացրեք. նա կարող է փոխվել, անփորձ երիտասարդ է. այդպես խիստ մի՛ պատժեք խեղճին,— սկսեց բարեխոսել գանձապահը, ցույց տալու համար, որ շատ է ցավում պաշտոնակցի վերաբերմամբ այդպիսի վճիռ լսելով:

— Ես քեզանից ավելի եմ ցավում նրա համար, որովհետև թե՛ ազգական է և թե՛ պատվական մարդու որդի է. կկամենայի, որ մնար ինձ մոտ. մարդ դառնար և մի կտոր հացի տիրանար, բայց ասած է՝ «սևին սապոնն ի՞նչ անե»: Այդ տղան, որ մի անգամ մոլորվել է, էլ չի փրկվիր այդ մասին մտածելն ավելորդ է, գնա՛ և արա այն, ինչ որ պատվիրեցի:

Գանձապահը վեր կացավ տեղից և խոնարհությամբ գլուխ տալով Թորոսյանին, դուրս գնաց սենյակից: Բայց մի րոպեից ետ կրկին վերադառնալով խնդրեց նրան, որ ազատե իրեն այդ վճիռը գործադրելուց:

— Ինչ մեծ հանցանք էլ որ Վահանը գործած լինի, այնուամենայնիվ այսքան ժամանակ նա ինձ պաշտոնակից է եղել, ես չեմ կարող ձեր վճիռը հայտնել նրան.— ասաց նա կեղծ բարեսրտության ժպիտով:

— Լա՛վ. ինքս կգամ և կարտաքսեմ նրան, թող այդ քարոզներ գրողն իմանա, թե ում հետ ունի գործ,— ասաց նա սպառնական եղանակով գլուխը շարժելով:

— Բայց ես կկամենայի...

— Ի՞նչ,— զայրացած ընդհատեց նրան Թորոսյանը:

— Որ դուք ներեիք նրան. նա կարող է ուղղվել. նա դեռ երիտասարդ է...

— Անկարելի է. իմ վճիռը վճիռ է. գնացեք ձեր գործին: Գանձապահը հեռացավ արտաքին դժգոհությամբ և ներքին գոհունակությամբ:

Երբ նա գրասենյակը մտավ, Վահանը դիմավորեց նրան և ներքին անհանգստությամբ հարցրեց, թե արդյոք չէ՞ կարդացել «Մանգաղ»-ի այդ օրվա հոդվածը:

— Ինչպե՞ս չէ, կարդացի,— պատասխանեց նա,— մեծ ուշադրությամբ կարդացի:

— Ինչպե՞ս գտաք:

— Հիանալի, հրաշալի:

— Ի՞նչ եք կարծում, Թորոսյանը նույնպես կարդացած չի՞ լինիլ: —

— Չգիտեմ. չեմ կարծում:

— Իսկ եթե կարդա, ինչպե՞ս կվերաբերվի դեպի ինձ:

— Ես կարծում եմ, շատ հասարակ ձևով, նա լրագրական հոդվածների վրա ուշադրություն չէ դարձնում:

— Ուրեմն ինձ վրա չի՞ բարկանալ:

— Չեմ կարծում. ինչո՞ւ պիտի բարկանա. լրագրում տպված հոդվածները մի՞թե յուր գործին են վերաբերում:

Վահանը մի փոքր հանգստացավ, բայց դարձյալ կամենում էր նոր հարցեր անել, որովհետև չէր կարողանում գործով զբաղվել: Իսկ գանձապահը, որպեսզի ստիպված չլինի նրա հարցերին սուտ պատասխաններ տալու, իսկույն ձեռն առավ դրամ արկղի տետրակը և սկսեց նախընթաց օրվա ել ու մտի գումարները ստուգել, թեպետ նախընթաց երեկոյան արդեն ստուգած և համագումարը մյուս երեսն էր փոխադրած:

Վահանը դարձյալ մնաց միայնակ յուր մտածմունքների հետ: Բայց ինչո՞ւ նա այդքան անհանգստանում ու տանջվում էր: Մի՞թե նա արդեն զղջացել էր յուր արարմունքի վրա, մի՞թե նա գիտակցաբար և խոր համոզմունքով չէր ձեռնարկել այդ գործին:

Ինչպես չէ. նա գիտակցաբար և համոզմունքով էր ձեռնարկել գործին և չէր էլ զղջում յուր արածի վրա. բայց որովհետև սկսել էր արդեն ճանաչել այն աշխարհը, որի մեջ

Է

ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՎՃԻՌԸ

Սարյանի հոդվածը գրգռել էր նաև ուրիշ վաճառականներին: Նրանցից գլխավորները հավաքվելով առևտրականներից մեկի մոտ՝ խորհուրդ էին անում, թե ի՞նչ ձևով պատժեն հոդվածագիր գործակատարին, կամ ի՞նչ պատասխան գրեն իրենց դեմ հրատարակած անբաստանության:

Այդ ժողովին հրավիրվեցավ նաև պարոն Թորոսյանը՝ յուր գրասենյակը գնալուց առաջ: Վերջինս, չնայելով յուր հուզված տրամադրության, մտավ ժողով արտաքին հանգստությամբ և սովորական ժպիտով ողջունեց յուր դասակիցներին:

— Այս ի՞նչ արշավանք եք սկսել մեր դեմ. ինչո՞վ ենք ձեր առաջ մեղավոր,— ժպտալով հարցրեց Թորոսյանին առողջակազմ և հաստամարմին առևտրականներից մեկը, որ եղածների մեջ ամենից հարուստն էր և որը, երևի այդ պատճառով, նախագահի դեր էր կամենում կատարել:

— Ի՞նչ է պատահել, ինչի մասին է ձեր խոսքը,— նույնպես ժպտալով հարցրեց Թորոսյանը և աթոռը վերցնելով նստեց նախագահի կողքին:

— Ինչո՞ւ այդ ձևով եք խոսում. պարոն Թորոսյանը հո չէ՞ հոդված գրողը,— դարձավ նախագահին մի ուրիշ վաճառական, որ եղածների մեջ ամենից նիհարն էր և ընթացիկ հաշվով փող էր պարտ Թորոսյանին:

— Մարտին Յակուլիչը գիտե թե ի՞նչ է հարցնում, դու ի՞նչ ես մեջը խառնվում,— նկատեց նիհար վաճառականին մի կարճահասակ, կարմրերես, տակառաձև կազմվածքով պարոն, որ ամեն մի դեպքում առիթ էր որոնում Մարտին Յակուլիչին մի հաճոյախոսություն անելու:

— Հարցը ինչի՞ վրա է, առաջ այն ասացեք,— ընդհատեց Թորոսյանը տակառաձև պարոնին:

— Այ, սրա վրան:— Այս ասելով նախագահը «Մանգաղ»-ի համարը բացավ և դրավ Թորոսյանի առաջ, մատով ցույց տալով նրան թե՛ առաջնորդողը և թե՛ յուր գործակատարի հոդվածը, որոնք չորս կողմից գծված էին կարմիր մատիտով:

Թորոսյանը ցույց տալու համար, թե ոչինչ տեղեկություն չունե, հանեց ոսկե կողերով ակնոցը և խնամքով քթի վրա ամրացնելով այն, սկսեց կարդալ առաջարկված հոդվածները:

Մինչդեռ սա ընթերցանությամբ էր զբաղված, երկու ուրիշ վաճառականներ, որոնցից մինը խիստ ճաշակով հագնվել գիտենալուն համար՝ ինքն իրեն ինտիլիգենտ էր համարում (և այդ պատճառով վաճառականներին՝ Միջին փողոցում կամ քարվանսարայում պատահած ժամանակ՝ հարգանքով բարևում էր, իսկ Դվորցովի փողոցում կամ Պրոսպեկտի վրա հանդիպելիս աշխատում էր չտեսնել նրանց), և մյուսը, որ տասը տարի շարունակ միևնույն սյուրտուկով Նիժնայի տոնավաճառը գնալու համար հաստատամիտ մարդու հռչակ էր վայելում, սկսան շարունակել իրենց վիճաբանությունը, որ ընդհատվել էր Թորոսյանի ներս մտնելովն:

— Հա՛, ես այն էի ասում թե՝ երբ առևտրականների շրջանում ծառայող մարդը առևտրականների վրա չարախոսում կամ նրանց վատաբանում է,— ասում էր ինտելիգենտ պարոնը,— պետք է միանգամից արտաքսել նրան այդ շրջանից, որովհետև մի հատ փտած խնձորը հարյուր առողջ խնձորներ է փտեցնում: Ուզում եմ ասել թե՝ չպետք է սպասել, որ մի փչացած գործակատար մյուս լավերին էլ փչացնե. իմ այս խոսքի մեջ դուք ի՞նչ սխալ եք գտնում:

— Այն, որ փտած խնձորն ու փչացած երիտասարդը միևնույն բաները չեն: Փտած խնձորը առողջացնել անկարելի է, նրան պետք է դեն գցել, դրա դեմ խոսք չունեմ: Բայց փչացած երիտասարդին կարելի է ուղղել, ճանապարհ բերել:

— Մենք խո վարժապետներ չե՞նք, մեր գրասենյակները դպրոցներ չե՞ն. ի՞նչ պարտավորություն ունենք փչացած մարդկանց ուղղելու վրա մտածելու, ով որ լավ է, պարկեշտ է, ազնիվ է, մենք նրան կպահենք,— նկատեց նախագահը:

— Իհարկե, ի՞նչ պարտավորություն ունենք,— հարեց տակառաձև վաճառականը և ժպտադեմ նայեց նախագահի աչքերին:

— Այն պարտավորությունը, որ մենք ավելի հասակավոր և ավելի փորձված ենք. մեզանից փոքրերին մենք պարտավոր ենք սովորեցնել այն, ինչ որ նրանք չգիտեն: Մեզանից ո՞րը չէ սխալներ արել յուր երիտասարդության ժամանակ:

— Սխալներ արել ենք, ո՞վ է ուրանում,— խոսեց նախագահը,— սուտ ենք խոսել, գողություն ենք արել, թուղթ ենք խաղացել, անառակ կանանց ետևից ենք ընկել, միով բանիվ, ջահելություններ ենք արել, բայց մեզանից ո՞րն է այսպիսի անամոթ գործ կատարել, ո՞վ է համարձակվել լրագիրներում ամբողջ վաճառականության անունը խայտառակել:

— Ախր մեր ժամանակ լրագիրներ չկային, խմբագիրներ չկային. ինչե՞ր եք խոսում. այս անպիտան լրագիրները մեր օրով լինեին, մենք էլ հիմիկվա տղերանց պես կգժվեինք,— նկատեց հաստատամիտ վաճառականը և աչքերը շրջեցրեց ժողովականների վրա, կամենալով նրանց կարծիքն իմանալ:

— Ես հո դեռ երիտասարդ եմ, «Մանգաղ»-ը իմ աչքի առաջ է սկսել հրատարակվել, ապա ե՞րբ եմ ես այդ լրագրում մի տող բան գրել,— պարծենալով խոսեց ինտելիգենտ պարոնը.— ես, մինչև անգամ, ոչ մի հայերեն լրագիր չեմ կարդում:

— «Փեթակ»–ն էլ իմ օրով է լույս տեսել, բայց մինչև օրս նրա ո՛չ մի համարը չեմ կարդացել, մինչև անգամ չեմ էլ հետաքրքրվել իմանալու, թե ո՞վ է նրա խմբագիրը,— խոսեց նիհար վաճառականը:— Տասնուհինգ տարի սրանից առաջ, իսկի չեմ մոռանում, գնացել էի Էնֆիաջյանցի մոտ մի քանի սնտուկ ծխախոտ գնելու: Նա, հո գիտեք, մեկ գլուխ ազգային գործերով է զբաղված: Ինձ բռնեց, թե պետք է մի օրինակ «Փեթակ» ստանաս.— չեմ կարող ասացի.— չէ՛, պիտի ստանաս. — չեմ ստանալ.— չէ՛, պիտի ստանաս.— չեմ ստանալ ու չեմ ստանալ,— ասացի և գիժ կովի պես դուրս պրծա խանութից: Այն օրից ի վեր էլ ես նրա մոտ ծխախոտ չեմ գնել:

— Ա՛յ վաճառականի վայել վարմունք,— գովեց նիհար առևտրականին պարոն նախագահը.— այդպիսով դու Էնֆիաջյանցին զրկել ես մի քանի հարյուր ռուբլու օգուտից, որը այս տասնևհինգ տարվա ընթացքում կարող էր ստանալ քեզանից և շատ լավ էլ արել ես: Մի՞թե առևտրականին կվայելե վատնել յուր թանկ րոպեները՝ լրագրի կամ այլ այդ տեսակ բաների մասին մտածելով:

— Փառք աստուծո, որ Էնֆիաջյանցը միակն է մեր առևտրականների մեջ, ապա թե ոչ, մի տասը նրա նմանները լինեին, բաներնիս բուրդ կլիներ, էլ ո՛չ խելքը գլխին վաճառական կմնար, ո՛չ յուր պարտքը ճանաչող գործակատար,— տրամաբանեց տակառաձև առևտրականը:

Այս միջոցին Թորոսյանը յուր ընթերցումը վերջացնելով «Մանգաղ»-ի համարը դրավ սեղանի վրա և ոսկե կողերով ակնոցը քթի վրայից վերցնելով՝ սկսեց դարձյալ սև երիզովը փաթաթել նրան՝ առանց ժողովականներին նայելու:

— Հա՛, ինչպե՞ս գտաք ձեր գործակատարի հոդվածը,— Ժպտալով հարցրեց նախագահը:

— Շատ լավ. շնորհքով է գրել,— պատասխանեց Թորոսյանը՝ կրկին յուր ակնոցով զբաղվելով:

— Ասում են, որ ձեր խորհրդովն է գրել,— հեգնաբանեց նախագահը:

— Սուտ չեն ասում:

—Ի՞նչ վարձատրություն եք կամենում նշանակել դրա համար այդ երիտասարդին:

— Ինչ որ դուք հրամայեք:

— Կատակը մի կողմը. ի՞նչ տպավորություն արավ ձեզ վրա այն բոլորը, ինչ որ կարդացիք:

— Ինչո՞ւ համար եք ինձանից հարցնում. դուք էլ մի վաճառական եք:

— Ինչպես ինձ, նույնպես մեր այս բարեկամների վրա շատ տգեղ տպավորություն է արել: — Ինձ վրա՝ դեռ մի քանի աստիճան էլ ավելի:

— Շատ բնական է, որովհետև գրողը ձեր գործակատարն է:

— Այդ միևնույն է. եթե ձեր գործակատարը լիներ, դարձյալ նույն տպավորությունը կաներ:

— Իհարկե. պարոն Թորոսյանը հո այդ տղայի հայրը կամ խնամակալը չէ՞. ինչպես մեզ, նույնպես էլ նրա համար նա մի օտար է, — խոսեց նիհար վաճառականը և աչքերը ուղղեց Թորոսյանի վրա, ցանկանալով կարծես, ասել նրան «ես ձեր խոնարհ ծառան եմ, հրամայեցեք ինձ կատարել ինչ կամենում եք, միայն թե ընթացիկ հաշվի պարտքս մի հիշեք»:

— Այսպես թե այնպես, մեր պատիվը «Մանգաղ»-ի մեջ շոշափված է. իբրև անուն ու կշիռ ունեցող վաճառականներ, մենք պարտավոր ենք մեր պատիվը պաշտպանել,— խոսե նախագահը:

— Ոչ թե պաշտպանել, այլ վերականգնել.— հարեց ինտելիգենտը:

— Ի՞նչ ճանապարհով եք կամենում պաշտպանել կամ վերականգնել,— հարցրեց Թորոսյանը:

— Ամենից առաջ ձեզ պետք է խնդրենք, որ գործակատարը արձակեք,— ասաց նախագահը:

— Հետո՞:

— Հետո մի օրինավոր հերքում կգրենք «Մանգաղ»-ի առաջնորդողի դեմ և կղրկենք հենց իրեն, պարոն Պոչյանին, և կխնդրենք, որ հրատարակե յուր թերթում:

— Ո՛չ, չենք խնդրիլ, այլ կպահանջենք,— հարեց ինտելիգենտը:

— Պոչյանը ձեր հոդվածը չի տպիլ, եթե նրա մեջ «պահանջել» բառը դնեք: Ես նրան ճանաչում եմ. նա կոշտ ու կոպիտ մարդ է և միայն այդ բառի համար այնպես կգժվի, որ հոդվածը մինչև անգամ տանողի երեսին կխփե: Իսկ այնուհետև էլ չեք պրծնիլ նրա ձեռքից. նա կսկսե ավելի խայտառակ բաներ գրել մեզ վրա,— զգուշացրեց ժողովականներին հաստատամիտ վաճառականը:

— Ուրեմն խոնարհաբար կխնդրենք,— հարեց նիհար պարոնը: — Պարոն նախագահն էլ հենց այդպես էր ասում,— հաստատեց տակառաձևը:

— Իսկ եթե ինձ հարցնեք «Մանգաղ»-ին ու նրա խմբագրին մենք հանգիստ կթողնենք,— խոսեց լռակյաց ժողովականներից մեկը, որին գործակատարների թշնամի էին անվանում.— վաճառականին ինչ վայել է խմբագիրների հետ ընկնել, հոդվածներ գրել, հերքումներ հրատարակել: Եթե մի անգամ մեր օձիքը Պոչյանի ձեռքին դնենք, հավատացեք, որ էլ նրանից չենք ազատվիլ: Այդ մարդը չարաճճի

երեխայի նման պատճառներ է պտրտում սրա ու նրա հետ կռվելու, ընկերին շանթելու, հարևանին հայհոյելու: Մենք ինչպե՞ս կարող ենք ընկերանալ նրան, կամ նրա ՞որ մեկ հայհոյանքին պետք է պատասխանենք. չէ՞ որ բոլոր տարին նա մեկ գլուխ հայհոյում է թե մեզ և թե մեզանից ու իրենից շատ բարձր մարդկանց:

— Ուրեմն ի՞նչ պետք է անենք,— ընդհատեց նախագահը գործակատարների թշնամուն:

— Մենք պետք է մեր կեղտերը մաքրենք:

— Ինչպե՞ս, մենք ուրեմն կեղտե՞ր ունինք, դո՛ւք էլ Պոչյանի լեզվով եք խոսո՛ւմ,— զարմացած բացականչեց նախագահը:

— Այդ ի՞նչ է. դուք էլ ե՞ք գժվել,— ձայնակցեց նախագահին տակառաձևը:

— Ոչ, ես ո՛չ գժվել եմ, ոչ էլ Պոչյանի լեզվով եմ խոսում: Մեր կեղտերը մեր գործակատարներն են, նրանցից պետք է ազատվենք,— բացատրեց գործակատարների թշնամին:

— Հա՛, այդ ուրիշ խոսք է, շարունակիր,— ասաց նախագահը, կարծես հանգստանալով, որ ճառախոսը իրենց չէ մեղադրում:

— Ի՞նչ եք կարծում, մի՞թե Պոչյանը առիթ կունենար մեզ անպատվելու, եթե պարոն Թորոսյանի գործակատարը այդպիսի հոդված չտար նրան հրատարակելու:

— Հանցանքը միայն իմ գործակատարինը չէ, նրան էլ ուրիշներն են փչացրել,— գրգռված նկատեց Թորոսյանը:

— Ովքե՞ր, ովքե՞ր,— հարցրին այս ու այն կողմից: — Մեկը հենց պարոն Սոլարյանի հաշվապահը. Նադիրյա՞ն է, ի՞նչ ցավ է:

— Իմ հաշվապա՛հը, չէ՛, չէ՛, մեղք եք անում, նա այդպես բաների չի խառնվում,— անհանգստանալով խոսեց տասնևչորս տարի միևնույն սյուրտուկով Նիժնի գնացողը:

— Այո՛, այո՛, սրանից առաջ էլ, նա էր լրագիրներին լուրեր հաղորդում,— հաստատեց նիհար առևտրականը:

— Ի սեր աստուծո, ինձ ու իմ գործակատարին ձեր բաներում մի՛ խառնեք, ա՛յ, ես գնում եմ, ինչ ուզում եք արեք,— այս ասելով հաստատամիտ Սոլարյանը պատրաստվեցավ ժողովից դուրս գնալու, վախենալով, թե չլինի՞ իրենից պահանջեն, որ յուր միակ հաշվապահին հեռացնե պաշտոնից, բայց Նրան արգելեցին:

— Այստեղից հեռանալով ոչինչ լավ բան չեք առաջացնիլ ձեզ համար,— սպառնալու եղանակով նկատեց նախագահը.— անպատվությունը բոլոր վաճառականներին է վերաբերում. ուրեմն մեր պատիվը վերականգնելու համար բոլորս միասին պիտի աշխատենք: Եթե բանը ջոկ-ջոկ գործելուն գա, ես այնպես գործ կբռնեմ, որ բոլորիդ էլ դժգոհություն կպատճառե:

Ամենից հարուստ ու զորավոր վաճառականի այս սպառնալիքը ժողովականներին զգաստացրեց, նրանք, առանց դժգոհության, նորեն ուշադրությունները լարեցին դեպի գործակատարների թշնամին, որը սկսել էր խոսել:

— Ասացի, որ մենք խմբագիրների հետ գլուխ չի պիտի դնենք և, կարծում եմ, վատ բան չեմ ասում,— շարունակեց ճառախոսը,— որովհետև ինչպես որ դատարանին

դիմողը դատարանից չի ազատվում, մինչև որ վերջին կոպեկները փաստաբաններին չէ բաժանում, այնպես էլ լրագիրների միջոցով անուն ու պատիվ վերականգնել ուզողը մրոտողների ձեռքից չի պրծնիլ, մինչև որ նրանց ձեռքով մինչև յոթը պորտը չխայտառակվի: Որպեսզի ընդմիշտ ազատ մնանք անվանարկությունից, պետք է դուրս հանենք մեր միջից այն ծառայողներին, որոնք որևէ հարաբերություն ունին լրագիր մրոտողների հետ, որովհետև դրանք են, իսկապես, մեր գաղտնիքները հրապարակ հանում, մեր թերությունները մերկացնում, մեզ զրպարտում և անվանարկում, ապա թե ոչ՝ խմբագիրները մեր ինչի՞ն են ծանոթ, որ ինչ կարողանան գրել մեր մասին: Այդ տեսակ ծառայողները վաճառականության համար միշտ ցեցեր են եղել և ցեցեր էլ կմնան: Նրանց չեք կարող գոհացնեի ո՛չ սիրելով, ո՛չ նվերներ տալով, ո՛չ մեծ ռոճիկներ հատկացնելով, որովհետև ուսումնարանից արդեն սովորեցրել են իրենց ատել մեր արհեստը, չնայելով, որ թե՛ եկեղեցի, թե՛ ուսումնարան և թե՛ ազգ ու ազգանդան պահողը մենք ենք:

— Ուրեմն ի՞նչ ձևով սկսենք գործել,— հարցրեց նախագահը:

— Ձև, բան հարկավոր չէ. ուղղակի պետք է վռնդել պաշտոնից նրանց, որոնց տեսնում ենք, որ արդեն հարաբերություն ունին խմբագիրների հետ. հետո նրանց, որոնք առաջինների օրինակին կհետևեն. այսպես՝ երրորդին, չորրորդին, մինչև որ բոլոր ցեցերը մեկ-մեկ դուրս կգնան, և մեր շուրջը կմաքրվի հիշածս կեղտերից: Այս բանը որքան շուտ կատարվի, այնքան օգուտ է մեզ, որովհետև մեր լավ ծառայողները, գոնե, չեն վարակվիլ վատերից:

— Ես իմ հաշվապահին չեմ հեռացնիլ, թեկուզ Պոչյանը ամեն օր իմ մասին զրպարտություններ գրե,— խոսեց հաստատամիտ Սարյանը և նստած աթոռից վեր կենալով նստեց մի ուրիշի վրա, աշխատելով խույս տալ նախագահի հայացքից:

— Այդպես էլ ես կարող եմ խոսել. այն ժամանակ ո՞ւր կմնա պատվի վերականգնումը,— նկատեց Թորոսյանը:

— Ի՞նչ անեմ. իմ հաշվապահը ոչնչում խառը չէ:

— Դուք այդ չեք կարող հաստատել:

— Կհաստատեմ:

— Չեք հաստատիլ:

— Ասում եմ կհաստատեմ. ուզո՞ւմ եք երդվեմ:

— Ի սեր աստուծո, Օսիֆ Յակուլիչ, մի՛ երդվեք. ես կհաստատեմ, որ խառն է,— մեջ մտավ «ինտելիգենտ» վաճառականը, որը խիստ վիրավորվել էր հագուստ փոխելու մասին Սոլարյանի արած նկատողությունից,— իմ գործակատարին նա տվել է կարդալու մի գրվածք, որը սա չկարողանալով պահել յուր մոտ, հանձնել է կնոջս: Այդ գրվածքից երևում է, որ նրանք մի ինչ- որ սարսափելի բան են պատրաստում բոլոր վաճառականների դեմ:

— Ի՞նչ, ի՞նչ,— հետաքրքրությամբ հարցրեց նախագահը:

— Կամենում են բոլոր գործակատարներին գրգռել և վերկացնել մեր դեմ:

— Ի՞նչ եք ասում...

— Մի՞թե...

— Ա՛յ անօրեններ... սկսեցին բացականչել այս ու այն կողմից:

— Ո՞ւր է այժմ այդ թուղթը,— Թորոսյանը՝ կամենալով՝ հավաստիանալ, թե որքան ճիշտ էին յուր գանձապահի տված տեղեկությունները:

Ահա՛, այստեղ. — այս ասելով «ինտելիգենտը» հանեց Նադիրյանի և Սարյանի կազմած ծրագրի մի օրինակը և տվավ Թորոսյանին:

Վերջինս դիտեց ծրագիրը, համոզվեց, որ մի քանի ժամ առաջ գանձապահի բերած թղթի օրինակն է. մի գաղտնի հոգոց հանեց, որին հաջորդեց ներքին վրդովմունքը և ապա ծրագիրը հանձնեց նախագահին:

Բոլորը հետաքրքրությամբ վրա թափվեցան տեսնելու համար, թե ի՞նչ թուղթ է այդ, որով գործակատարները «սարսափելի բան» պետք է պատրաստեին վաճառականների դեմ:

Որպեսզի գրվածքի բովանդակությունը բոլորին հասկանալի լիներ, նախագահը հանձնեք ծրագիրը «գործակատարների թշնամուն»՝ խնդրելով կարդալ ի լուր ամենի: Վերջինս կարդաց ծայրե ի ծայր. մութ կետերը բացատրեց և իրենից էլ մի քանի լուսաբանություններ ավելացնելով՝ ամենքի վրա երկյուղ ու սարսափ ազդեց:

Աղմուկն ու շշուկն ընկավ ժողովականների մեջ: Նախագահը սպառնալիքներ էր որոտում. «տակառաձևը» ձայնակցում էր նրան. Թորոսյանը երդվում էր, որ երկու րոպեից ետ պիտի վռնդե Սարյանին. «նիհար» առևտրականը աշխատում էր սփոփել նրան. «ինտելիգենտը» ձեռքերը շփում էր՝ խոստանալով, որ դեռ ուրիշ գաղտնի թղթեր էլ պիտի գտնե. «գործակատարների թշնամին» խորհուրդ էր տալիս գտնել գաղտնի ընկերության անդամների ցուցակը և նրանց բոլորին միանգամից արձակել պաշտոններից. խոսել ու դատել չիմացող վաճառականները բերանները բացած, ապուշ-ապուշ նայում էին նրանց, որոնք ավելի բարձր էին գոռում, իսկ «հաստատամիտ» Սոլարյանը, գլուխը կորցրած, գույնը նետած և ամբողջապես զարմացական նշան դարձած, նայում էր այս ու այն կողմը՛ առանց մեկի կամ մյուսի հետ խոսել կարողանալու:

Վերջապես նախագահի աչքն ընկավ նրա վրա:

— Հա՛, հիմա ի՞նչ ունիք ասելու,— բացականչեց նա.— Թորոսյանը յուր գործակատարին արձակում է. դուք էլ ձեր Նադիրյանին արձակո՞ւմ եք, թե՞ ոչ:

— Ե՞ս... ի՞նչ ասեմ. դե որ ասում եք, պետք է փոխեմ էլի, տասնուչորս տարի է, որ հագնում եմ...— շփոթված խոսեց Սոլարյանը:

— Ձեր սյուրտուկի մասին չէ խոսքը, ա՛յ մարդ, ինչե՞ր ես խոսում,— սրտանց ծիծաղելով նկատեց «ինտելիգենտը»:

— Հա՛, ներողություն, սխալվեցա: ի՞նչ անեմ, խոսողներն այնքան շատ են, որ մարդ գլուխը կորցնում է:

— Ուրեմն կարձակե՞ք ձեր հաշվապահին,— նորեն հարցրեց նախագահը՝ աչքերը անողոք կերպով խեղճ «հաստատամիտի» վրա ուղղելով:

— Որ ասում եք, կարձակեմ, ի՞նչ անեմ, երևի դուք ինձ համար հաշվապահ կգտնեք:

—Ինքս կգտնեմ ձեզ համար, միայն թե այդ ապականության սերմը հեռացնեք այս փողոցից,— մեջ մտնելով խոսեց Թորոսյանը, որի ամենամեծ ցանկությունն էր հեռացնել Նադիրյանին յուր դրացությունից:

Սոլարյանը վերջնականապես խոստացավ: Վաճառականները գործակատարների ապստամբության գործը ճնշելու համար մի քանի կարևոր խորհուրդներ անելուց ետ ցրվեցան:

Երբ Թորոսյանը մտավ յուր գրասենյակը, Սարյանը գլխակոր գրում էր: Մյուսների հետ միասին նա էլ վեր կացավ տեղից ընդունելու յուր տիրոջ ողջույնը, որը նա այսօր խիստ կոշտ ձայնով արտահայտեց:

Հասնելով յուր սեղանին, Թորոսյանը կանգ առավ նրա մոտ և ձեռքը աթոռի թիկնատեղի վրա կռթնելով, հանդիսավոր դիրք բռնեց:

— Այն հոդվածը դո՞ւք եք գրել «Մանգաղ»-ի մեջ,— հարցրեց նա Սարյանին այնպիսի մի ձայնով, որ խեղճ երիտասարդի մարմնով սարսուռ անցավ:

— Այո՛,— շփոթվելով և կակազելով արտասանեց Սարյանը:

— Շատ լավ եք գրել, ապրիք, աստված Է՛լ ավելի շնորհք տա,— ասաց Թորոսյանը և մի վայրկյան լռեց: Սարյանը կարծելով, թե նա անկեղծությամբ է խոսում, պատրաստվեցավ, կարծես, ուրախանալ, և ժպիտը խաղաց նրա շրթունքների վրա:

— Հա՛, որովհետև այդպես լավ բաներ եք գրում, արժան չէ, որ դուք այս խավար տեղը նստեք, ձեր ժամանակը անօգուտ վատնեք,— շարունակեց Թորոսյանը.— գնացեք «Մանգաղ»-ի խմբագրատունը և ծառայեցեք այնտեղ պարոն Պոչյանին ձեր գրական աշխատություններով:

— Ինչպե՞ս. չեմ հասկանում,— շփոթված շշնջաց Սարյանը:

— Չե՞ք հասկանում. ուրեմն վաճառականի կոպիտ լեզվով ասեմ, որ հասկանաք, դո՛ւրս գնացեք իմ գրասենյակից, ես ձեզ չեմ կամենում պահել ինձ մոտ:— Հաշվեցեք այս պարոնի մնացորդ ռոճիկը և տվեք իրեն,— դարձավ նա հաշվապահին:

Կոպիտ ձայնով արտասանված այս հայտարարությունը կայծակի հարված իջեցրեց խեղճ Սարյանի գլխին: Ամենածանր հանդիմանության նա կարող է սպասել, բայց այնպիսի անպատվություն, որ արտաքսեին իրեն պաշտոնից, երբեք: Պատվասիրության զգացումը, ամոթը և զայրույթը, կարծես միախառնված, մի խուլ փոթորիկ հարուցին երիտասարդի հոգու մեջ: Վարդագույնը պատեց նրա ամոթված դեմքը, և ազնիվ ճակատը քրտինքի ցողով ծածկվեցավ: նա աշխատեց խոսել, սակայն լեզուն չհնազանդվեց իրեն. մի ինչ-որ գաղտնի զորություն, կարծես, փակում էր յուր բերանը:

Բայց երբ հաշվապահի հայտնելով գանձապահը բերավ հանձնելու նրան յուր մնացորդ ռոճիկը, Սարյանը նայեց վերջինի աչքերին և նրանց մեջ նշմարելով, կարծես, մի գաղտնի ուրախություն, որը, սակայն, նա աշխատում էր ծածկել հոնքերը խոժոռելով, գուշակեց, որ ինքը չարաչար խաբված է այդ սուտ ճգնավորից: Բայց էլ ի՞նչ կարող էր անել. կամուրջը յուր ետևից քանդված էր արդեն:

Նա դարձավ դեպի Թորոսյանը և աչքերը սևեռելով նրա վրա, ասաց.

— Ինձ արտաքսում եք նրա համար, որ մի քանի ճշմարտություններ եմ գրել լրագրում, որ բարի խորհուրդներ եմ տվել ձեզ և ձեր դասակիցներին: Շնորհակալ եմ: Դուք դրանով ապացուցանում եք, որ արդարև, ես անկարող եմ ապրել այն մթնոլորտում, ուր դուք այնքան բախտավոր ու երջանիկ եք զգում ձեզ՝ նույնիսկ անմեղ մարդկանց զրկանք ու դժբախտություն պատճառած ժամանակ: Արդարև, ես արժանի չեմ ձեզ, բայց դուք արժանի եք Թաղարյաններին. վայելեցեք նրանց հավատարմության ու անձնվիրության պտուղները, մինչև որ կգա այն օրը, երբ կհիշեք ինձ... Իսկ ձեզ,— դարձավ նա գանձապահին,— խորհուրդ կտամ օգուտ քաղել այն հավատից ու վստահությունից, որ այս մարդիկը ունին ձեզ վրա: Աշխարհը ուզում է խաբվիլ, խաբեցեք նրան և հավատացեք, որ ոչ ոք չի մեղադրիչ ձեզ…

Այս ասելով Սարյանը վերցրեց գլխարկը և դուրս գնաց:

Հետևյալ օրը հեռացրին պաշտոնից նաև Նադիրյանին:

(Կշարունակվի)

Երկրորդ մասի վերջ